ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ժողովածուն նվիրվում է Գրիգոր Ղափանցյանի
ծննդյան 130-ամյակին

Երևան
«Ասողիկ»
2017

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Գ 602

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ՝
բ.գ.դ. Վ.Լ.Կատվալյան (նախագահ)
բ.գ.դ., պրոֆ. Գ.Կ. Խաչատրյան
բ.գ.դ., պրոֆ. Վ.Գ. Համբարձումյան
բ.գ.դ., պրոֆ. Լ.Շ. Հովհաննիսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ.Ս. Հովսեփյան
բ.գ.դ. Ռ.Մ. Թոխմախյան
բ.գ.դ. Գ.Գ. Գևորգյան
բ.գ.թ. Ա.Ա. Աբրահամյան
բ.գ.թ. Գ.Մ. Մխիթարյան

Գիտական հոդվածների ժողովածու: – Ե., «Ասողիկ»
Գ 602 հրատ., 2017, 420 էջ:

Ժողովածուում զետեղված են հայ լեզվաբանության տարբեր ոլորտներին վերաբերող հոդվածներ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-395-0

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2017

Ասոյան Թաթուլ
(Հայաստան, Գավառի պետական համալսարան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԳՐԱՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԷՋԵՐՈՒՄ

19-րդ դարի կեսերին գրականության լեզվի վերաբերյալ բորբոքված բանավեճի մասին, որը հայտնի է գրապայքար անունով, շատ է գրվել: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գրապայքարի մասին ամեն ինչ արդեն ասվել է, և ավելացնելու բան այլևս չկա: Սակայն այդպես չէ: Իրականում կան խնդիրներ, որոնք անհրաժեշտ լուծում են պահանջում: Փաստերը ճշգրտելու և անկողմնակալ մեկնաբանելու, համակարգելու, ի վերջո՝ գրապայքարի պատմությունը ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտություն է զգացվում: Դրա համար պետք է առանձնացնել խնդիրների հետևյալ խմբերը.

1. Պետք է որոշարկել «գրապայքար» երևույթի ընդգրկման սահմանները: Բանն այն է, որ այսօր «գրապայքար» հասկացությունն արդեն ընկալվում է և՛ լայն, և՛ նեղ առումներով: Նեղ առումով գրապայքարը 19-րդ դարի 2-րդ կեսին ծավալված բանավեճն է գրականության լեզվի մասին: Լայն առումով գրապայքար է ընկալվում տարբեր ժամանակներում հայերենին առնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հունաբանությունն ու լատինաբանությունը հայերենում: Գրապայքարի այսպիսի ըմբռնումը ենթադրում է, որ հարցը չպետք է դիտարկել միայն նշված բանավեճի սահմաններում: Վերջին հաշվով նշված դեպքերում էլ գործ ունենք գրական լեզվի՝ իբրև գործառվող լեզվի մաքրության, կանոնավորու-

թյան և գործածության արտահայտությունների հետ[1]: Իհարկե, կարևոր է նաև երևույթը նման ընդգրկումով քննության առնել, սակայն որոշակիացնելով ուսումնասիրության ուղղվածությունն այնպես, որ հասկանալի լինի, թե գործ ունենք ընդհանուր երևույթի տարբեր դրսևորումների հետ:

2. Մյուս խնդիրը կապված է լեզվական իրավիճակը ներկայացնող փաստերի մեկնաբանման հետ: Չնայած հարցի վերաբերյալ բազմաթիվ ու բազմաբնույթ նյութի առկայությանը՝ այնուամենայնիվ որոշ դեպքերում դեռևս պահպանվում են քարացած պատկերացումներն ու ոչ ճիշտ մեկնաբանությունները: Այն ուսումնասիրողները, որոնք զբաղվել են նշված դարաշրջանի հոգևոր-մշակութային կյանքի քննությամբ, որի մի բաղկացուցիչն էլ լեզվական իրողություններն են, տարբեր պատճառներով կա՛մ շրջանցել են, կա՛մ խեղաթյուրել են որոշ փաստեր: Այս առումով գրապայքարի նկատմամբ շատ են մեղանչումները խորհրդային շրջանի հայ լեզվաբանության մեջ: Միտումնավոր և միակողմանի քննությունը ոչ միայն աղքատացնում և խեղաթյուրում է իրողությունը, այլ թույլ չի տալիս ըստ արժանվույն գնահատելու մեր մշակութային գործիչների ծավալած գործունեությունը ազգային գրապատմական զարգացման գործընթացում: Այսօր արդեն գաղտնիք չէ, թե ինչպիսի կարևոր դեր է խաղացել Մխիթարյանների գործունեությունը հայ մշակույթի, մասնավորապես հայագիտության մեջ, սակայն նրանց տրված գնահատականները մեծ մասամբ բացասական են: Նույնիսկ այնպիսի մտավորականներ, ինչպիսիք են Լեոն և Մ.Նալբանդյանը, նրանց արածը ոչ միայն քննադատում, այլև համարում են հետադիմություն[2]: Խորհրդային հայագիտու-

---

[1] Տե՛ս **Վ. Գ. Համբարձումյան**, *Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դարերում*, Երևան, 1990:

[2] Տե՛ս **Լեո,** *Երկերի ժողովածու*, Երևան, 1986, **Մ.Նալբանդյան**, *Երկերի ժողովածու*, հ. 2, Երևան, 1980:

թյունն էլ կուսակցական-քաղաքական հայեցակետից էր դիտարկում հարցը, մինչդեռ լեզվական հարցերին նման մոտեցմամբ լուծում տալը, ինչպես փաստերն են ցույց տալիս, պատմականորեն չի արդարացվում[3]: Այսպես է և այլ դեպքերում: Ուրեմն շատ բաներ պետք է վերանայել նոր չափանիշներով:

3. Երրորդ խնդիրը կապված է լեզվական, մասնավորապես գրապայքարին առնչվող հարցերում պարբերական մամուլի խաղացած դերի գնահատման հետ:19-րդ դարում հրատարկվող հայերեն պարբերականները բավական ակտիվորեն մասնակցել և անդրադարձել են այդ բանավեճին՝ արտահայտելով որոշակի դիրքորոշում: Երկար ժամանակ ճիշտ չէր գնահատվում առանձին պարբերականների դերը բանավեճի ընթացքում: Նոր շրջանի ուսումնասիրություններում ուշադրություն է դարձվել այս հանգամանքի վրա և նոր մոտեցում դրսևորվել[4]:

Նշված խնդիրների լուծումը, որոշակի չափանիշների հաշվառմամբ, կապահովի ուսումնասիրվող նյութի թե՛ համակարգայնությունը, թե՛ համակողմանիությունը: Այս հոդվածում անդրադառնալու ենք «Բազմավէպ» հանդեսի էջերում հայոց լեզվին և մասնավորապես գրապայքարին առնչվող հարցերին և արտահայտված կարծիքներին ու տեսակետներին:

Սեբաստացու ծրագրերում կար նաև պարբերական ստեղծելու գաղափարը՝ միաբանության գործունեության, անելիքների վերաբերյալ մարդկանց հետ անմիջական շփում

---

[3] Տե՛ս, օրինակ, **Մարգարյան Ալ.**, *Խ. Աբովյանը և աշխարհաբարը*, Երևան, 1958, **նույնի՝** *Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը,* Երևան, 1957:

[4] Տե՛ս **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, Երևան, 1948, **Ռ. Իշխանյան**, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Երևան, 1978:

ապահովելու նպատակով: Այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ տարվել են, սակայն Մխիթարի օրոք գաղափարը չիրականացավ և միայն 1799 թ. լույս աշխարհ եկավ «Տարեգրութիւնքը» (1799-1802)՝ Ղ. Ինճիճյանի խմբագրությամբ: Այնուամենայնիվ, թե՛ դա, թե՛ հաջորդ երկուսը («Դիտակ Բիւզանդեան», «Եղանակ Բիւզանդեան») չկարողացան միաբանության գործունեությունը ներկայացնող լիարժեք պարբերականներ դառնալ[5]: Այդ գործառույթը վերապահված էր «Բազմավէպին», որը, իր անվանը համապատասխան (հունարեն polyhistory-ի նմանությամբ), տարաբնույթ նյութեր էր հրապարակում և մեկնաբանում այնպես, որ սկզբնական շրջանում մտավախություն կար, թե հանդեսը կարող է արժանանալ նախորդների ճակատագրին[6], սակայն պարբերականը դիմացավ ժամանակի փորձությանը և դարձավ ամենաերկարակյացը[7]:

Բազմաբնույթ տեղեկատվությունը հասարակությանը հասկանալի դարձնելու նպատակով «Բազմավէպը» ճիշտ լուծեց լեզվի՝ որպես ընթերցողների հետ հաղորդակցման միջոցի հարցը՝ այն հրատարակելով արևմտահայերեն: Եվ դա այն դեպքում, երբ աշխարհաբարի «հակառակորդներ» կային հենց միաբանության ներսում: Ինչպես գրում է Ս.Շտիկյանը, քիչ չէին այն մեծությունները, որոնք ««հորդորում-համոզում էին» հայրենակից հայազգիներին «ի գիր արկանել» միայն գրաբարը, քանզի աշխարհաբարը ընդամենը «ռամկորեն» էր, և գրաբարի այդպիսի կրքոտ պաշտպաններ ու ջատագովներ ամենևին էլ հազվագյուտ չէին հենց

[5] Տե՛ս **Ս.Շտիկյան**, *«Բազմավէպ» հանդեսը*, ԼՀԲ, 4, 1993:

[6] Տե՛ս *«Արշալոյս արարատեան»*, 1845, թիվ 166:

[7] Տե՛ս **Լ.Զեքիյան**, *Հայագիտական հանդեսներու նահապետը (նվիրված հանդեսի 150-ամյա հոբելյանին)*, Պատմաբանասիրական հանդես, 1, 1995:

Մխիթարյան միաբանության ներսում»[8]: Այդպես արևմտահայերենը մաքրվում և մշակվում էր նաև «Բազմավէպի» էջերում:

«Բազմավէպը» հայ մամուլի պատմության մեջ առանձնանում է իր երկարակեցությամբ և «հնագույններից մեկն է ամբողջ աշխարհում»[9]: Հրատարակման առաջին շրջանում հանդեսն ավելի շատ կրոնաբարոյախոսական, գիտական, տնտեսական, աշխարհագրական, հնագիտական բնույթի նյութեր էր տպագրում, ավելի ուշ գրական-գեղարվեստական, հայագիտական նյութերը դառնում են գերակշռող: Մասնավորապես «Յառաջաբանում» ասվում է. «Եւ որովհետև ճշմարիտ ազգասիրութիւնն է մեր առաջին յորդորողը ու քաջալերողը նաև աս աշխատանքիս մէջ, հարկաւ կիմացուի, որ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, դպրութեան ու մատենագրութեանը վրայ տեղեկութիւններ շատ պիտի գտնուին աս մեր օրագրիս մէջը»[10]: Բնական է, որ հանդեսի էջերում պետք է արծարծվեին նաև հայերենին վերաբերող հարցեր, մանավանդ որ այդ շրջանում լեզվական իրավիճակը բավականին բարդ էր և որոշակի հանգուցալուծում պահանջող: Բացի դրանից՝ խիստ կարևոր հանգամանքներ էին պետականություն չունենալը և Թուրքիայի ու Ռուսաստանի քաղաքական գերիշխանության տակ գտնվելը, որը կարող էր աշխարհով մեկ սփռվելու և ընդհանրապես լեզվի կորստյան պատճառ դառնալ: Այնուամենայնիվ, լեզվական խնդիրներին վերաբերող հոդվածներն այնքան էլ շատ չեն, բայց պետք է նշել, որ լեզվական երևույթների քննարկման շրջանակը բավական լայն է: Այդպիսի առաջին հոդվածը պատկանում է հանդեսի

---

[8] Տե՛ս **Ս.Շտիկյան**, *«Բազմավէպ» հանդեսը*, ԼՀԲ, 4, 1993:

[9] **Անթաբյան Փ.**, *Վենետիկի Մխիթարյանների հայագիտական գործունեությունը*, ՊԲՀ, 1968, 4, էջ 32:

[10] *«Բազմավէպ», Յաջաբան*, թ. 1, 1843, էջ 5-6:

հիմնադիր խմբագիր Գ. Այվազովսկու գրչին /հանդեսը խմբագրել է 1843-48թթ./: Առաջին ծավալուն հոդվածը, որն ունի «Ազգային լեզուն պահելու վրայ» վերնագիրը, շոշափում է այնպիսի հարցեր, որոնք խիստ արդիական են նաև այսօր:

Հոդվածագիրը նախ և առաջ փաստում է լեզվի՝ որպես ազգային հատկանիշներից ամենագլխավորը լինելու հանգամանքը: «Թէ որ մէկ բան մը կայ աշխարհքիս վրայ, որ մարդուս ինչ ազգէ ըլլալը յայտնի կիմացնէ ամէն տեղ ու ամէն ատեն, իր ազգային լեզուն է: Քանի որ ազգ մը իր լեզուն կըպահէ, թէպէտև ուրիշ ամէն ազգային յատկութիւններն ալ կորսունցընէ, ազգութիւնը չըկորսունցըներ, իսկ լեզուն մէկդի ձգելուն պէս ազգութիւնն ալ խիստ շուտ կըկորսուի»[11],- ասվում է հոդվածում: Զարգացնելով իր միտքը՝ հեղինակը նշում է, որ հայրենիքից դուրս՝ օտար երկրներում ապրելը, օտար սովորություններին հետևելը նոր բան չէ, սակայն ազգը կպահպանի իր ազգային պատկանելությունը, որովհետև միայն լեզուն բավական է դա հասկանալու համար: Նման իրավիճակում պետք է հոգ տարվի լեզվի մասին, որ նա պահպանի իր հատկությունները, թեև ժամանակի ընթացքում կամաց- կամաց, լավ թե վատ կփոխվի, այլապես այն կձուլվի այլ լեզուների և «աներևոյթ կըլլայ»: Ըստ հեղինակի՝ հայերը ցրված են աշխարհով մեկ և երբեմն չափից դուրս հարմարվել են ուրիշներին, սակայն «իր ազգութեան գլխաւոր նշանը ինչուան հիմայ գրեթէ ամէն տեղ պահած է, այսինքն՝ հայերէն լեզուն»[12]: Այնուհետև արվում է երկու կարևոր եզրահանգում. «Լեզուն մէկ կերպով մը ազգին ազնուութեանը վկայականն է. աս վկայականը ձեռքէն ելածին պէս տարակոյս չըկայ, որ ազնուութեանն ալ հաւտացող չըլլար»[13], և ապա՝ «Ազգային լեզուն գիտնալն ու բանեցնելը լեզ-

[11] «*Բազմավէպ*», 1843, թ. 5, էջ 76:
[12] Նույն տեղում, էջ 77:
[13] Նույն տեղում, էջ 76:

վագէտ մարդուն առաջին պարծանքն է. իր ազգային լեզուն բանեցնելուամընչալրորևիցէ քաղաքական մարդու առաջին ամընչալու բանն է»[14]:

Լեզվի և մասնավորապես հայերենի վերաբերյալ այսպիսի ընդհանուր դիտարկումներ անելուց հետո հեղինակն անդրադառնում է լեզվական իրավիճակի և լեզվական հարցերի ներկայացմանն ու քննությանը: Առաջինը, որի վրա ուշադրություն է դարձնում հոդվածագիրը, հայերենի վիճակի գնահատականն է: Նա փաստում է, որ ա/ հայերենը ժողովրդի «բնակած երկրին լեզուներովը քիչ շատ խառնուած աւրուած է, ինչպէս Տաճկաստանի հայերէնը, որուն գրեթէ կէսը տաճկի բառ է », մի բան, որ հետագայում նշում է նաև Հր.Աճառյանը[15], բ/ կան իրենց լեզուն մոռացած հայեր, որոնք խոսում են արաբերեն, վրացերեն, այլ լեզուներով, իսկ ամենից շատ այդ երևույթը տարածված է Փոքր Ասիայում, հատկապես Կ.Պոլսում: Առաջարկվում է լեզվական իրավիճակը շտկելու ուղիներ. ա/ հայերեն չխոսողները նորից հայերեն սովորեն, բ/բառապաշարը մաքրել օտար բառերից: Առաջին դեպքում կարծես ամեն ինչ պարզ է. եթե մեծերն այլևս չեն կարող, գոնե տանը պիտի հետևեն, որ երեխաներն իրենց մայրենի լեզուն սովորեն, մանավանդոր դպրոցում արդեն սովորում են: Սակայն այս պարագայում անհրաժեշտ էր հաղթահարել մի մտայնություն, որ իրեն խիստ զգացնել է տալիս նաև այսօր վերջին երկու-երեք տասնամյակներում ձևավորված սփյուռքահայության շրջանում. պետք է միայն սովորել և տիրապետել այն ժողովրդի ուերկրի լեզուն, որտեղ ապրում ես: Այնուամենայնիվ, իսկապես պետք է սովորել տվյալ պետության ու ժողովրդի լեզուն, սակայն չմոռանալով իր ազգային լեզուն. սա է, ըստ հեղինակի, միակ ընդունելի ու ճիշտ դիրքորոշումը: Հայերենով խոսելուց խուսափելու մյուս

[14] *«Բազմավէպ»,* 1843, թ.5, էջ 80:

[15] Տե՛ս **Աճառյան Հր.,** *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 255-296:

պատճառը օտարաբանությունների առատությունն է այնքան, որ ավելի լավ է նման հայերենով չխոսել: Այս մոտեցումը համեմատում է անմշակ թողած բարեբեր երկրի հետ, որը մշակելու փոխարեն «երեսի վրայ թողու ան սիրուն երկիրը, ու ինքը մուրալով ապրի, երբեմն նաև պարծենայ իր մուրացկանութեանը վրայ»: Ուրեմն «նայելու է, որ ըստ կարի մաքրուի օտար բառերէն»[16]: Մաքուր հայերենով խոսելու համար պետք է պարզապես օտար բառերը փոխարինել հայերեն համարժեքներով, որոնք կարելի է վերցնել կա՛մ «բառգիրքերէն», կա՛մ «մաքուր ոճով գրուած աշխարհաբառ գիրքերէն»: Ահա այստեղ է, որ ինքնըստինքյան ծագում է նաև աշխարհաբարի նկատմամբ որոշակի վերաբերմուք դրսևորելու խնդիրը, որի առնչությամբ արդեն տարբեր մոտեցումներ են երևան գալիս: Հեղինակի մոտեցումը հետևյալն է. «Եւ թէ որ աշխարհաբառ լեզուին համար ալ համառօտ բառգիրք ու քերականութիւն շինուէր, աս բանս (բառապաշարի մաքրումը օտար բառերից-Ա.Թ.) շատ կըդյուրանար: Ասկէ բնական կերպով կըհետևի, թէ ուրեմն աշխարհաբառին ալ կանոն մը պէտք է դնել»[17]:

Միանգամայն պարզ է, որ հեղինակը, հայերեն ասելով, բոլոր դեպքերում նկատի ունի աշխարհաբարը՝ որպես ժամանակի հիմնական հասարակական հաղորդակցման միջոց: Լեզվական իրավիճակի վրա հասարակական-քաղաքական իրադարձությունների ազդեցության հետևանքները ներկայացնելուց և որոշակի լուծումներ առաջարկելուց հետո հոդվածագիրը տրամաբանական անցում է կատարում՝ քննարկման նյութ դարձնելով բուն լեզվական հարցերը, որոնք մեծ մասամբ վերաբերում են աշխարհաբարի և գրաբարի առանձնահատկություններին, նրանց փոխհարաբերություններին, կիրառության ոլորտներին ու նպատակահար-

[16] *«Բազմավէպ»*, 1843, թ. 5, էջ 78:
[17] Նույն տեղում:

մարությանը: Պետք է ասել, որ հեղինակը, արտահայտելով իր դիրքորոշումը, անկողմնակալ մոտեցում է ցուցաբերում նշված հարցերի վերաբերյալ: Խոսելով գրաբարի առավելությունների մասին՝ նա հետևյալ դիտարկումն է անում.«Իրաւ է, որ աշխարհաբառը գրաբառէն շատ պակասաւոր, աղքատ ու խառնակ է, բայց աս բանս բաւական չէ՝ իբրև անպիտան մէկդի ձգելու զանիկայ, պէտք է մաքրել, կոկել և ըստ կարի գրաբառին մօտեցընել, որով թէ՛ գրաբառը իր յարգին ու ազնուութեանը մէջ մնայ և թէ՛ աշխարհաբառը ազնուանայ, անով գրաբառը դիւրաւ հասկընալու ալ ճամբայ կըբացուի»[18]: Ինչպես երևում է, հեղինակը աշխարհաբարը համարում է նաև միջոց, «դուռ»՝ գրաբարը հասկանալու համար: Ասենք, որ այս գաղափարը հետագայում արտահայտում էին նաև այլ Մխիթարյաններ: Աշխարհաբարը «տեսքի բերելու» համար առաջարկվում է ստեղծել բառգիրք և քերականություն, ընդ որում վերջինս պետք է լինի շատ պարզ, կանոնները խստորեն սահմանված չլինեն, դուրս հանել օտար բառերն ու արտահայտությունները, ոճային հատկանիշներով և ուղղագրությամբ մոտեցնել գրաբարին, և այդ ամենը «մեծ զգուշութեամբ, որ ոչ խրթնութիւն մտնէ մէջը և ոչ իմաստակութիւն»:

Հոդվածում արծարծվող մյուս կարևոր խնդիրը, որ շոշափվում է նաև այլ Մխիթարյանների կողմից՝ սկսած Մ.Սեբաստացուց, կապված է հայոց մեջ ընդհանուր հաղորդակցություն ապահովող հայերենի չգոյության հետ: Պետք էր ձևավորել հայերենի մի այնպիսի լեզվառրակ, որը ընդունվեր բոլորի կողմից և ծառայեր իբրև համընդհանուր հաղորդակցման միջոց ոչ միայն արևմտահայոց, այլև այլ երկրներում բնակվողների համար: Փաստորեն հեղինակը բարձրացնում է գրական լեզվի բարբառային հիմքի հարցը. պետք է ընտրել «զանազան աշխարհաբառներուն (բարբառներից -

[18] «*Բազմավէպ*», 1843, թ.5, էջ 79:

Ա.Թ.) մէկը» և կանոնարկել: Եվ դա պետք է արվի «անաչառ քննութեամբ»: Ահա, թե ինչ է գրում հեղինակն այդ մասին. «Նախ՝ ան լեզուն պէտք է ընտրել, որ մեր ազգին գլխաւոր մասը կամ շատը կըհասկընայ և կըխօսի, և ուրիշ երկիրներու հայերէնները, մանավանդ բուն Հայաստանիները անոր կըմօտենան: Երկրորդ՝ ան լեզուն այնպիսի լեզու մը ըլլայ, որ ուրիշ աշխարհաբառներէն ալ քիչ խորթ գայ ուրիշ երկրի ազգայնոց ականջին: Երրորդ՝ ան լեզուն ինչուան հիմայ քիչ շատ գործածուած, մաքրուած ու գրաբարին մօտեցած ըլլայ, ու հետզհետէ մաքրուելու վրայ ըլլայ»[19]: Բարբառների ակտիվացման պայմաններում արևմտահայոց մեջառավել տարածվածություն է ձեռք բերում կենտրոնի՝ Կ.Պոլսի բարբառը, որն իսկապես դառնում էր գրական արևմտահայերենի բարբառային հիմքը:

Հաջորդ հոդվածն ունի «Աշխարհաբար լեզուին վրայ» վերնագիրը, ուր հեղինակը նորից իր տեսակետներն է արտահայտում աշխարհաբարի և հարակից հարցերի մասին: Այս կարգի հոդվածների առատությունը ժամանակի պարբերական մամուլում պատահական չէր: Պատմականորեն այս ժամանակաշրջանը հայոց ազգային ինքնագիտակցության ձևավորման ու զարգացման շրջանն է: Ազգային ինքնորոշման, միասնության հարցերը մղվում են առաջին պլան: Այս տեսակետից ուղղակի կապ է ստեղծվում լեզվական և քաղաքական իրավիճակների միջև, մի բան, որ կարող է անհավանական թվալ: Մինչդեռ հասարակական գիտակցության մեջ ամրակայվում էր լեզվի՝ ազգային ինքնության գլխավոր նշան լինելու գաղափարը: Ժամանակի պարբերական մամուլում 19-րդ դարի 40-ական թվականներին շատ հաճախադեպ են լեզվի մասին նման տեսակետի արծարծումները, ընդ որում ազգային լեզուն դիտվում էր

[19] Նույն տեղում, էջ 80:

որպես ինքնապահպանության ամենակարևոր գործոնը[20]: Ուրեմն լեզվին վերաբերող հարցերը առաջնահերթ լուծում էին պահանջում, մինչդեռ դրանք բազմաբնույթ և բազմազան էին: Այս առումով լարվածությունն ավելի զգալի էր արևմտահայոց մեջ: Այստեղ պետք է լուծվեր ոչ միայն գրականության լեզվի հարցը:

Հիշեցնելով նախորդ հոդվածում արտահայտված տեսակետները՝ Գ. Այվազովսկին ավելի շատ ծանրանում է գրաբարի ու աշխարհաբարի վերաբերյալ ձևավորված հասարակական հակադիր կարծիքների վրա՝ միաժամանակ արտահայտելով իր կարծիքը: Սակայն ինչքան էլ կարևոր,այնուամենայնիվ դժվար է նպատակադրումն իրագործել, քանի որ իրավիճակն այնքան էլ միանշանակ չէր: Պարզվում է՝ «երկու կարծիք կա իրարու անհամաձայն»: «Ոմանք աշխարհաբառին ծաղկիլը ամենևին չեն ուզեր,-գրում է հեղինակը,-վասն զի անով գրաբառը վայր կիյնա, կըսեն»: Նա գրաբարն համեմատում է լատիներենի հետ[21], որն անկում ապրեց ժամանակակից եվրոպական լեզուների զարգացմանը զուգընթաց:

Մտավորականության մի հատվածի կողմից երևույթի պատմականությունը չի ընկալվում, և արվում է սխալ հետևություն. ինչո՞ւ անարգենք գրաբարը, ինչո՞ւ «զարդարենք» աշխարհաբարը, եթե մինչև հիմա «շէնք շնորհք չէ առած»:

Մտավորականների մի մասն էլ հակված է աշխարհաբարը «հասարակաց ընդունելի լեզու մը ձևացնելուն»: Սրանք ճիշտ են հասկանում լեզվի զարգացման ընթացքը, որակական փոփոխությունները, որը հատուկ է բոլոր լեզուներին: Ասել է, թե բոլոր լեզուներն էլ ունեն գրաբար և աշխարհաբար լեզվաոակներ, և լավ կլինի, եթե բոլորն էլ կա-

[20]Տե՛ս **Վ.Ամեմյան**, *Գրական արևմտահայերենի ձևավորումը*, Երևան, 1971, էջ 108-109:
[21]Նույն տեղում, էջ 79:

րողանան հին լեզվառրակով խոսել ու գրել, մի բան, որ գործնականում հնարավոր չէ: Այնուհետև կատարվում է ճիշտ դիտարկում. հասարակ ժողովուրդը իրեն պետք եղած գիտելիքները իր բնական լեզվով է սովորում, ուստի «մենք ալ ուրեմն թէ որ կուզենք դիւրաւ ծաղկեցնել մեր ազգին մէջ ամեն տեսակ գիտութիւնները պէտք է որ իրեն հասկցած լեզուովը խօսինք հետը»:

Միաժամանակ ընդունելի է համարում ցանկացողին գրաբարն էլ սովորեցնել, որը «եզական լեզու է և շատ աղուոր հատկութիւններ ունի»: Հեղինակը, շարունակելով շոշափել նախորդ հոդվածում արծարծված հարցերը, ասում է, որ «խօսքը հոն եկաւ, թէ մաքուր խօսակցության համար աշխարհաբառ լեզունիս կանոնի մը դնել պետք ըլլայ նէ, արդեօք որ աշխարհաբառը ընտրելի է»[22]: Պետք էր ճիշտ կողմնորոշվել բարբառային հիմքի ընտրության մեջ: «Զանազան աշխարհաբառներուն մեկն ընտրուի ու հաստատուն կանոնի մը դրուի, - գրում է հեղինակը և ավելացնում, -ան լեզուն/=բարբառը/ պէտք է ընտրել, որ մեր ազգային գլխաւոր մասը կամ շատը կըհասկնայ ու կըխօսի և ուրիշ երկիրներու հայերէնները, մանավանդ բուն հայաստանցիները, անոր կըմօտենան»[23]: Այսքան ճիշտ դատողություններից հետո Գ. Այվազովսկին նաև նշում է, «թէ մեր միտքը ոչ միայն գրաբառ լեզունիս հետ ձգել կամ աշխարհաբառը գրոց լեզու դարձընել չէ, հապա ընդ հակառակն՝ գրաբառը դիւրաւ ծաղկեցընելուն հնարքը գտնել ու սորվեցընել է», ուստի այն «աշխարհաբառը» պետք է ընտրել, որը «ինչուան հիմայ քիչ շատ գործածուած, մաքրուած ու գրաբառին մոտեցած ըլլայ ու հետզհետէ մաքրուելու վրայ ըլլայ»: Այս ցանկության իրական դրդապատճառը բացահայտվում է հոդվածի վերջում. նա ներկա-

[22] «*Բազմավէպ*», 1843, էջ 108:
[23] Նույն տեղում:

յացնում է մի քանի «գաւառական լեզուներու» նկարագիրը, իսկ վերջում արտահայտում իր «փափաքը».

«ա/ ամէն մարդ ջանայ իր ազգային հայերէն լեզուովը խօսիլ
բ/ ջանայ լեզուն մաքրել օտարազգի բառերէն ու ոճերէն
գ/ջանայ գրաբառին մօտեցնել իր խօսուածքը ու գրուածքը
դ/**ռամիկներու և տղոց համար պէտք եղած գրքերէն զատ ուրիշ ամէն գիրք մէր բուն հայրենի ազնիւ և պատուական լեզուովը շարադրէ, որ է գրաբառը** (ընդգծումը մերն է- Թ.Ա.)»[24]:

Այսպիսով, լեզվական ճիշտ պահանջներ առաջադրելով, այն է՝մաքրել, մշակել, կանոնավորել և զարգացնել աշխարհաբարը՝ իբրև «հասարակաց լեզու», միաժամանակ հակվում է դեպի գրաբարը, որը «եզական հնութիւն» է: Այսպիսի մոտեցումը, ինչպես արդեն նշել ենք,մասամբ նաև պայմանավորված էր նրանով, որ գրաբարի միջոցով կապ էր հաստատվում փառավոր անցյալի հետ, որը խիստ կարևոր ազդակ էր ազգային ինքնագիտակցության բարձրացման և պայքարի գաղափարախոսության ձևավորման գործընթացում:

«Բազմավէպի» հաջորդ համարներում մինչև 1870-ական թվականները նման ծավալուն հոդվածներ աշխարհաբարի և գրաբարի փոխհարաբերությունների վերաբերյալ չեն հանդիպում: Պատճառը թերևս այն էր, որ Մխիթարյաններն այդ շրջանում հիմնականում զբաղված էին գրաբարի մաքրության հարցերով: Մյուս համեմատաբար ընդարձակ հոդվածը լույս է տեսնում 1878թ. «Աշխարհիկ կամ նոր լեզու» վերնագրով: Հոդվածում աշխարհաբարին վերաբերող հարցերի շրջանակը բավականին լայն է: Քննվում են ծագման, գործածության, կանոնավորման, գրաբարի հետ ունեցած փոխհարաբերության և այլ հարցեր:

[24] «Բազմավէպ», 1843, էջ 111:

Սկզբում հոդվածագիրն արծարծում է աշխարհաբարի՝ «հասարակաց լեզու» լինելու տեսակետը, որը նոր բան չէր, և եթե այն միայն խոսելու համար էր, ապա գրաբարը՝ գրելու և կարդալու. «Թէպէտ և այլևայլ դարերէ ի վեր է հայերէն աշխարհիկ սեպուած լեզուին սովորական կիրառութիւնը ազգերնուս մէջ, բայց վրան եղած ուսումնական տեսութիւնք և քննութիւնք՝ միայն վերջի քանի մը տասը տարիներու հետազօտութեանց արդիւնք: Ասոր ալ պատճառն ալ յայտնի է: Դեռ մեզմէ քիչ յառաջ կըկարծուէր թէ աշխարհիկ լեզուն միայն խօսելու համար է, գրելու և կարդալու յատուկ է գրաբարը»[25]: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ աշխարհաբարը հետզհետե դառնում էր անհրաժեշտություն թեկուզ և ուսուցման ընդհանրացման առումով: Գրվում էին այլևայլ դասագրքեր աշխարհաբարով: Բնականաբար պահանջ է առաջանում քննելու աշխարհաբարի կառուցվածքը և աշխատելու նրա կատարելագործման վրա. «Բայց երբ այս կարծեաց դէմ սկսաւ մաքառիլ ժամանակը, և կրթութիւնն և ուսումը ժողովրդական ընելու գովելի ջանք մը աշխարհիկ լեզուով յօրինուած այլևայլ գրքեր երևցուց, բնական հետևանք մըն էր նոյն բարբառոյն կազմակերպութիւնն քննելը և անոր կատարելաագործութեան վրայ աշխատիլը»[26]: Այնուհետև քննության է առնվում աշխարհաբարի ծագման հարցը. Կամ ունի իր սկիզբն ու ծագումը՝ անկախ գրաբարից, կամ հանդիսանում է գրաբարի աղավաղության և ժողովրդական լինելու արդյունք: Երևում է, որ հարցադրումը պայմանավորված է եղել լեզվի ծագման և զարգացման վերաբերյալ ունեցած տարբեր պատկերացումներով: Ոմանք կարծել են, որ հայոց միակ լեզուն եղել է գրաբարը, իսկ աշխարհիկը նրա «անկերպարան ծնունդն է, մտաւորական խաւարի, տգիտութեան ու քաղաքական գերութեան արդիւնք մը և հետևանք»:

[25] «Բազմավէպ», 1878, էջ 213:
[26] Նույն տեղում:

Ուրիշներն էլ տարբերակել են «գրաւոր և խօսուած լեզուներ», որոնք միմյանցից անկախ են եղել, և ժամանակն էլ ազդել է նրանց վրա: Առաջիններն աշխատում են մաքրել աշխարհաբարը և մոտեցնել գրաբարին, իսկ երկրորդներն աշխատում են, որ երկուսն էլ ունենան իրենց առանձնահատկությունները: Ըստ հեղինակի՝ գրավոր և խոսված լեզուների աղավաղումը արդյունք է ժողովրդի կրած տառապանքների և օտար միջամտությունների: Հոդվածում փորձ է արվում ներկայացնել աշխարհաբարի «պատմությունը»:

Այս հոդվածում թերևս կարևորը ոչ թե լեզվի զարգացման ընթացքի հաճախ միակողմանի և ոչ պատմական մեկնաբանություններն են, այլ աշխարհաբարի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը: Այս դեպքում արդեն ճիշտ մոտեցում է ցուցաբերվում: Ըստ հեղինակի՝ «ընդունայն ու վնասակար ջանք մը պէտք է սեպուի» նոր լեզվի՝ ազգային կրթությունը մատուցած ու մատուցելիք ծառայությունների ժխտումը ու վերադարձը գրաբարին. «…անանկ որ նոր լեզուին ազգային կրթութեան արդէն մատուցած կամ ասկէ ետքը մատուցանելի կարևոր ծառայութիւնը ժխտելը և հին լեզուին դառնալ կամ ազգը դարձընել ուզելը, նոր լեզուները խափանելու համար, ընդունայն և վնասակար ջանք մը պէտք է սեպուի»,-գրում է հեղինակը[27]: Միաժամանակ նշում է, որ չպետք է աչքաթող արվի գրաբարը, քանի որ դա կնշանակի սերունդների միջև եղած կամրջի ավերում, որը թշնամու սրից էլ վատ է: «Բայց որովհետև աշխարհիկ լեզուաց կարօտութիւնն ալ անհրաժեշտ է, արժան է հաւասարապէս ջանալ մշակել թէ հին, թէ նոր լեզունիս և ոչ իսկ մտքէ անցնել մէկը մէկալին զոհելու անտեղի և վնասակար խորհուրդն ու ջանքը»[28],- գրում է հոդվածագիրը: Այսպես լուծելով գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցը՝ հեղինակը

[27] Նույն տեղում, էջ 224:
[28] Նույն տեղում:

առաջադրում է լեզվի ընտրության և մշակման խնդիրը: Նա գնահատում է Մ. Մեբաստացու ջանքը, որը ոչ միայն մտածել, այլև ձեռնարկել է կանոնավորել աշխարհաբարը, գրել քերականություն և մաքրել օտարամուտ տարրերից: Այս գործում կարևոր դեր խաղաց նաև լրագրության զարգացումը: Հղում է արվում «Մասիսին», ուր առաջարկվում էր աշխարհաբարը համաձայնեցնել գրաբարին: Ի վերջո «հայ աշխարհիկ լեզուի՝ մեծագոյն ծառայութիւն ընող հմտական երկասիրութիւն փափաքելի էր բանասիրաց: Այս կարևոր պէտքն լեցընողը Այտընեան հ. Արսէն վարդապետի հմուտ գրիչն եղաւ՝ Քննական քերականութիւն արդի հայ լեզուի կոչուած գրքովը»[29],- եզրակացնում է հոդվածագիրը:

Հանդեսում 1878թ. տպագրված մեկ այլ հոդվածում այն տեսակետն է արտահայտվում, թե խառնակ վիճակը ավելի շատ ազդում է լեզվի վրա, սակայն լեզվի անկումը կապում է տպագրության սկզբնավորման հետ. Լեզվին անհմուտ մարդիկ հրատարակեցին գրքեր, թարգմանություններ արեցին, հայերենը «ձուլեցին» լատիներենին՝ թույլ տալով բազմաթիվ սխալներ: Ուրեմն լեզուն պետք է մաքրել՝ գիտությունը և կրթությունը ժողովրդականացնելու համար:

Չնայած գրապայքարի հարցում արդեն շատ բան պարզ էր դարձել, սակայն 1890-ական թվականներին էլ հոդվածներ էին տպագրվում՝ վիճարկելով ժամանակավրեպ դարձող մի շարք հարցեր: Բ. Սարգիսյանի հոդվածում բարձրացվում են աշխարհաբարը գրաբարի միջոցով զարգացնելու, կանոնավորելու և դրանով իսկ գրաբարը աշխարհաբարի մեջ կենդանացնելու խնդիրները: Լեզուն հոդվածագիրն արժևորել է ազգային միասնությունը ապահովելու տեսակետից. լեզվի կորուստը ազգային միասնության կորուստ է նշանակում: Վերլուծելով իրավիճակը՝ մտավորականներին բաժանում է

[29] Նույն տեղում, էջ 227:

գրաբարյանների և աշխարհաբարյանների, որոնց հակադիր կարծիքները համարում է ծայրահեղություններ: Գրաբարն իրեն ավելի սիրելի ու հարգելի համարելով՝ ընդունում է նաև աշխարհաբարի իրավունքները, որն ընդունվել է հասարակության կողմից և բավական զորացել: Սրանով հանդերձ՝ աշխարհաբարն էլ գրաբարի կարիքն ունի, վերջինիս միջոցով պետք է մաքրվի ու կատարելագործվի: Բ. Սարգսյանն էլ իր նախորդների նման կարծում է, թե աշխարհաբարը գրաբարի աղավաղումն է:

Մ.Ավգերյանի և Սայաթ-Նովայի ստեղծագործությունների օրինակով ցույց է տալիս, թե ինչ չափով է աշխարհաբարը հագեցել օտարամուտ լեզվատարրերով, անուշադրության է մատնված գրաբարը: Ժամանակի մտավորականներից շատերն են առաջարկել և աշխատել աշխարհաբարը կանոնավորել, մշակել և հարստացնել գրաբարի օգնությամբ, սակայն տվյալ դեպքում գործ ունենք այլ իրողության հետ: Բանն այն է, որ 19-րդ դարի հատկապես առաջին կեսին շատ ուժեղ էր թուրքերենի ազդեցությունը հատկապես արևմտահայերենի վրա, այդպիսի հայերենն էր հասկանալի հայ մարդուն: Նույն իրավիճակն էր նաև արևելահայոց մեջ, և մեծ մասամբ դրանով պետք է բացատրել մեծ քանակությամբ պարսկաթուրքական փոխառությունների առկայությունը Խ. Աբովյանի ստեղծագործություններում: Գրաբարի միջոցով հենց միայն աշխարհաբարի բառապաշարը հարստացնելն ու հայացնելը ժամանակ էր պահանջում:

Հեղինակը փաստում է, որ արևմտահայերենը բավականին առաջադիմել և մշակվել է, քան 20-30 տարի առաջ էր: Այնուհետև անդրադարձ է կատարվում դեպի արևելահայերենը,սակայն առավել կարևոր էր արևելահայերենի և արևմտահայերենի միության խնդիրը, որի վերաբերյալ անում է իր առաջարկությունները:

Դարավերջի համարներում տպագրված նյութերում արդեն ակնառու է աշխարհաբարի առաջընթացի հանգամանքը: 1897թ. 55-րդ համարում հրապարակված է « Աշխարհաբարի և գրաբարի խնդիր» հարցադրումը «Հարցմունք» վերնագրի տակ: Հեղինակը կատարված փաստ է համարում աշխարհաբարի համագործածական դառնալը, որը մշակվում է գրագետների կողմից, և որով նորանոր գրքեր են հրատարակվում: Արդյունքում անգործածական է դառնում գրաբարը: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ արվում է երեք հարցադրում.

ա/ գրաբարը թողնե՞լ անխնամ, թե՞ ջանալ ծաղկեցնել և «գործածական ընել»,

բ/ինչպե՞ս զտել աշխարհաբարը սխալ և խորթ բացատրություններից ու ծաղկեցնել,

գ/արդյո՞ք հնարավոր չէ վերացնել անջրպետը «ռուսահայոց և տաճկահայոց» միջից և երկկողմանի ընդունելի պայմաններով դրանք միավորել[30]:

Հարցադրողը ցանկություն է հայտնում, որ հարցերին պատասխանեն ձեռնհաս մարդիկ: Առաջին պաասխանում /ստորագրված է՝ Բանասեր/ գրաբարը արժևորված է պատմականորեն, այն աշխարհաբարի հիմքն է և պետք է սովորել որպես մեր «նախնեաց բարոյական, պատմական և մատենագրական երկասիրութեանց ճիւղ»: Այս առումով գրաբար կարող են սովորել դրանով հետաքրքրվողները, իսկ մյուսների համար դա կլինի զուր ժամավաճառություն. «գրաբար լեզուն փափաքիլ այսօր *յարուցանել իբրև կենդանի բարբառ և գրելու լեզու ընել*այնպիսի գաղափար մէ, որ կարելի է ներկայէս դար մի յառաջ ներելի լինէր ունենալ, բայց աշխարհաբարի այսքան կատարելագործուելէն վերջը այդպիսի փորձ մի մտաբերել անգամ չէ կարելի, թող թէ

[30] «*Բազմավէպ*», Վենետիկ, 1897, էջ 46:

գործնականապէս մղել, որ պիտի լինի թէ՛ ծաղրելի, նահանգին թէ՛ վնասակար և թէ՛ անկարելի»[31]: Աշխարհաբարը մաքրելու և մշակելու համար կարևորում է քերականությունների, բառարանների, վարժապետների առկայությունը: Իսկ ինչ վերաբերում է «լեզուների» միավորմանը, ապա դա անհնարին ու անկարելի է. «Ռուսահայոց և Տաճկահայոց /կամ ըստ ոմանց՝ Այրարատեան նահանգին և Փոքր-Ասիոյ և կամ ըստ այլոց՝ արևելեան և արևմտեան հայոց/ հայերէն գաւառականները իրարու հետ ձուլելու խնդիրն /առանց մին միւսին զոհուելու բնական իրաց ընթացքով/ ոչ միայն ամենադժուարին, այլ և տեսականապէս գրեթէ անհնարին, իսկ գործնականապէս բոլորովին անկարելի է»[32]:

Հաջորդ պատասխաններում /Ս. Իսրայելյան, Ոմն, Յ.Տ.Կ. Հորդանանյան, Գ. Բալասյանց/ տեսակետները և՛ համընկնում են, և՛ տարբերվում: Ոմն-ը, բանավիճելով Բանասերի կտրուկ ձևակերպումների շուրջ, հետևյալ տեսակետն է արտահայտում. «բայց չկարծուի, թէ մենք կը պնդենք ամէն ինչ գրաբար գրել, մենք համոզակից ենք Իսրայէլեանի՝ աշխարհաբար շարադրելու «առօրեայ գրուածները», և «գրաբար՝ զանոնք, որ ամէն դարոց մէջ գործածելի պիտի լինին»[33]: Համակերպվելով գրաբարի՝ գործածությունից դուրս գալու փաստի հետ՝ պատասխանողներն այնուամենայնիվ պնդում են, որ գրաբարը պետք է ուսուցանվի անխտիր բոլոր վարժարաններում: Նման մոտեցում է ցուցաբերում Յ.Տ.Կ. Հորդանանյանը. «Արդի լուսաւորեալ դարուս ոգւոյն համեմատ ակընկալելի և ցանկալի է, որ բոլոր հայ վարժարանաց և դպրոցաց մէջ ուսուցուէր գրաբար լեզուն, և ուսուցուէր լաւ կերպով, որով թէ՛ մեր գեղեցիկ և վսեմ եկեղեցական ու

[31] Նույն տեղում, էջ 80:
[32] Նույն տեղում, էջ 82:
[33] Նույն տեղում, էջ 188:

կրօնական գրքերն, և թէ՛ մեր պանծալի պատմութիւնն և այլ տեսակ ազգային դասական մատեանները դիւրամատչելի կը լինէին շատ շատերի»[34]: Աշխարհաբարի մասին հետևյալ միտքն է արտահայտում. «Իսկ աշխարհաբար լեզուի վերաբերութեամբ շատ ցանկալի է, որ հմուտ և բանգէտ հայեր, մանաւանդ հրապարակագիրք ձեռք առնէին զայն և ամենայն խղճմտութեամբ ջանք գործ դնէին՝ արդի խառնաշփոթ և տարբեր տարբեր լեզուներին վերջ դնել և մի ընդհանուր կապ հաստատել, որով սէր և համակրութիւն անշուշտ պիտի յաւելանայ»[35]: Գ.Բալասյանցը գրականության լեզվի հարցը լուծում է հետևյալ կերպ. «Ես կը դառնամ միայն այն հարցին, թէ *գրաբարը պէտք է գործածական անել գրականության մէջ:* Այդ հարցի մասին մեր համոզմունքն այս է, թէ միանգամայն վնասակար է գրաբար լեզուն ի գրականութեան գործածել ներկայիս մէջ: Գրաբար լեզուն յաւակնութիւն ունենալ այսօր յարուցանել իբրև կենդանի բարբառ և գրականութեան մէջ ընդհանուրին գործածական լեզու դարձնել, դա ծաղրալի, նոյնիսկ անկարելի մի գաղափարի անհեթեթութիւն է, ուր մնաց թէ նրան գործնականապէս առաջ մղել»[36]:

Այսպիսով, «Բազմավէպի» էջերում 19-րդ դարի երկրորդ կեսին ծավալված բանավեճը ժամանակի լեզվական խնդիրներին վերաբերող ընդհանուր երևույթի մի մասնավոր արտահայտությունն էր, դրա միջոցով կարելի է պատկերացում կազմել ընդհանրապես գրապայքարի մասին, մանավանդ որ արտացոլում է հակադիր տեսակետներն ու պատկերացումները:

---

[34] Նույն տեղում, էջ 397:

[35] Նույն տեղում:

[36] Նույն տեղում, էջ 606:

Assoyan Tatul - Literary Struggle in the Pages of ’’Bazmavep’’- In the mid-19th century there was a discussion about the language of fiction, which brought together prominent thinkers of that time, In the periodicals were published a number of articles representing different views.

The Mkhitarian’s Journal „Bazmavep” also took part in this discussion. The article presents the authors of articles on the language of literature and provides generalizations and conclusions that the autor of the article has come to.

Асоян Татул - Литературная борьба на страницах „Базмавеп” - В середине 19-го века идет дисскусия вокруг языка художественной литературы, в которой участвуют известные мыслители того времени. В переодике печатаются статьи, представляющие разные мнения.

Орган мхитаристов журнал „Базмавеп” тоже принимал участие в этой дискуссии. В статье приводятся точки зрения авторов статей о языке литературы и даются общения и заключения, к которым приходит автор статьи.

Աւետիսեան Լուսինէ
(Հայաստան, ԳԱԱ գրականութեան ինստիտուտ)

ԵՐԲ ՅԱՅՏԱԾՈՒՈՒՄ Է ՄԱՇՏՈՑԵԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

(առաջնորդող սահմանումներ ի նպաստ դասական ուղղագրութեան կանոնարկման)

Մաշտոցեան ուղղագրութիւնը մի համակարգ է, որ ճշգրտօրէն, մաթեմատիկական կուռ տրամաբանութեամբ գործում էր մինչեւ առաջին խեղումները։ Ժամանակի ընթացքում ուղղախօսական փոփոխութիւնները որեւէ կերպ չպիտի ազդէին ուղղագրութեան վրայ. բոլոր ժամանակներում բառապատկերները պէտք է մնան անփոփոխ եւ ճանաչելի։ Հայնագրութեան անթերի համակարգով անցած իւրաքանչիւր բառ տեսանելի խորհրդանշան-կաղապարն է որեւէ գաղափարի. հէնց այդ համակարգով էլ անխախտ ու կառուցիկ է ժամանակների միջով սուրացող ազգային լեզուամտածողութիւնը։

Յոյները, օրինակ, նախանձախնդրօրէն պահպանել են իրենց նախնական բոլոր լեզուավիճակների համար այնպիսի վաղնջական ուղղագրութիւն, որն անգամ մ. թ. ա. 5-րդ դարի դասական շրջանում արդէն չէր համապատասխանում կենդանի արտասանութեանը... Այսպէս են վարուել սեփական լեզուի նկատմամբ յարգանք ունեցող բոլոր ազգերը, նոյնիսկ եթե նրանց ուղղագրութիւնները կանոնարկուել են հայերէնի ուղղագրութիւնից անհամեմատ աւելի ուշ, եւ անգամ եթե դրանց կանոնարկումը չունի պատմաստուգաբանական պատշաճ մակարդակ։ Ուղղագրութիւն փոխելու հանրային ձգտումը ժամանակագրօրէն ձեւակերպուել է՝ որպէս հակահամակարգային ձախական շարժումների յեղափոխակա-

նութեան դրսեւորում, որից, բարեբախտաբար, խուսափել են քաղաքակիրթ շատ ազգեր, բայց ոչ բոլշեւիկեան լծի տակ յայտնուած տարաբախտ ազգերը...

Դասական եւ բոլշեւիկեան ուղղագրութիւնների մերձեցման այսօր նկատելի միտումն անընդունելի եւ աններելի է։ Ուղղագրութիւնը մի եւ նոյնն է հայերէնի բոլոր լեզուավիճակների համար, եւ գրականացուած երկու լեզուների ուղղագրութիւններն էլ ժամանակների հոլովոյթում շատ կամ քիչ հեռացել են նրանից։ Երկու «ուղղագրութիւնների» մերձեցումը արդիւնք չի տալու, աւելին, ստեղծելով երրորդ մի անհիմն ու անստոյգ, յարմարեցուած (ադապտացուած) «ուղղագրութիւն»՝ սեպելու է վերջնական խզումը սեփական լեզուական տրամաբանութիւնից, հրաժարումը հայերէնի լեզուամտածողութեան ամրագրման մաշտոցեան անխոցելի համակարգից... Պատնէշները խորտակողն ու բաժան-բաժան եղած հայութեանը մերձեցնողը ո՛չ այդ երրորդ՝ յարմարեցուող (ադապտացուող) «ուղղագրութիւնն» է լինելու, ո՛չ աղաւաղ բոլշեւիկեանը, ո՛չ էլ սփիւռքում գործածուող բազմանմուշ (ոչ ստանդարտ) «դասականը»։ Եթե սկզբունքի հարց է լուծուում, եւ երկուստեք ընդունելի միակ տարբերակ է ընտրուում փոխզիջումը, ապա պէտք է յուշել, որ կա՛յ այլընտրանք։ Եւ չկայ աւելի ազնիւ տարբերակ, քան միասին դէպի վեր՝ դէպի ընդհանուր մաքուր ակունքը քայլելը։ Փաստ է, որ այսօր արեւմտահայերէնի համար դասական ուղղագրութեան մեկ համօրինակ (ստանդարտ) չկայ, արեւելահայերէնի համար՝ առաւել եւս։ Ուստի, ժամանակն է համարձակ քայլ կատարել մաշտոցեան վերծանելի բանաձեւերով կանոնարկելու, տեսական հիմնաւորումներով ամրացնելու եւ գործնականում վերահաստատելու այն ուղղագրութիւնը, որ տրուել է Հայոց լեզուին մեկընդմիշտ, ինչպէս տրամաբանութեան օրէնքները՝ մարդկութեանը։

Մաշտոցեան ուղղագրութիւնը չի կարող ընդունել ոչ մի արհեստականօրէն պատուաստուած «կանոն», որովհետեւ նրա կուռ տրամաբանութեան համար այդպիսի երեւոյթները սոփեստութեան են նման, իսկ դրանց հիմնաւորումների փորձերը՝ 2+2=5 անհեթեթ «հաւասարութեան» ապացուցման...

Ուստի, անտեղի չէ յիշեցնելը, որ գրելով մաշտոցեան ուղղագրութեամբ՝ պահպանում ենք աշխարհի հնագոյն լեզուներից մեկի նիւթեղինացած կերպարանքը, որ հրաշագործ մի ձայնագրիչով՝ Մաշտոցով, հաստատագրուեց՝ ի պահ եւ ի սպաս տրուելով սերունդներին։ Այդ կերպ հարիւրաւոր սերունդների չընդհատուող շղթայով ելեկտրական հոսանքի պէս լոյսի արագութեամբ հաղորդուում են բառային անաղաւաղ մտապատկերները, դրանց՝ ա՛յդ եւ ոչ այլ ձեւ ունենալու համակարգային տրամաբանութիւնը, ազգային իւրայատուկ լեզուամտածողութիւնը...

Պէտք է մեկընդմիշտ ընդունել երկու իրողութիւն. նախ՝ հնարաւոր չէ եւ չի կարելի յարափոփոխ հնչաբանութեանը ուղղագրութեամբ հետեւել, այլապէս ստիպուած կը լինենք մեր բառերի մի մասն անճանաչելիօրէն փոխել. չէ՞ որ ժամանակի ընթացքում արտասանութեան մէջ բաղաձայնների հնչման աւելի ակնյայտ փոփոխութիւններ ենք գրանցել, որոնք, բարեբախտաբար, չեն արտացոլուել գրութեան մէջ, ասենք՝ [ուրփաթ], [ընթառաչել], [հառաչաբան], [սրփանվեր] եւ այլն, եթե չխօսենք արեւմտահայերէնի բաղաձայնական համարկարգի պակասութիւնից եւ տեղաշարժ-տեղափոխութիւնից: Դրանից բացի՝ պարտաւոր չենք մեր ուղղագրութիւնը յարմարեցնել նորայայտ ու այլահունչ անուններին՝ մեր լեզուատրամաբանութեան զեղչման ու կորստեան գնով ապահովելով նրանց անկորուստ հնչումը նաեւ մեր լեզուում:

Բոլոր լեզուներն ունեն տառադարձման իրենց օրէնքները։ Իրեն յարգող ազգին քիչ է յուզում օտար բառերի եւ անունների ձայնային կատարեալ պատճէնումը սեփական լեզուի հնչիւնական հնարաւորութիւններով։

... Եւ կարեւոր մի սկզբունք է գործելու. եթե վերականգնուելու է ուղղագրութիւնը, իսկ վաղ թէ ուշ դա լինելու է, ապա՝ միայն անխաթար կերպով։ Մաշտոցեան ուղղագրական համակարգի հիմնարար սկզբունքներից ամենափոքր խոտորումն իսկ հետզհետէ յանգեցնում է խեղագրութեան, որի անտրամաբանականութեան մէջ արդէն օրինաչափութիւնները սկսում են ընկալուել որպէս բացառութիւններ...

Պայմանական նշաններ

[] - հնչումը,
« » - գրառումը,
> - հետեւաբար,
>=< - փոխանցում

Ա. Ալեւր, աղբեւր, եղջեւր...

Հայերէնում երկու երկբարբառներ՝ «իւ» եւ «եւ», այսօր նոյն կերպ են արտասանուում՝ [յու] ([yu])։ Սակայն դժուար թե միեւնոյն հնչիւնական միաւորի համար Մաշտոցը երկու նշանային տարբերակ ստեղծէր։ Հաւանաբար, դրանք հնչական ինչ-որ նուրբ տարբերութիւն ունէին, որը աւելի ուշ շրջանում աստիճանաբար վերացել է, եւ երկբարբառներից մեկը, միւսի փոխարէն գործածուելով, ապա առաւել յաճախ կիրառուելով՝ աւանդոյթի ուժով դուրս է մղել երկրորդը։ Կարելի է հանդիպել զուգահեռ՝ «եղջիւր» եւ «եղջեւր», «ալիւր» եւ «ալեւր», «աղբիւր» եւ «աղբեւր», «գիւղ» եւ «գեւղ» գրութեան ձեւերին։ Այսօր ակնյայտ է [yu] հնչմամբ բառերի ուղղագրութեան միօրինակացման փաստը. տիրապետող է դարձել «իւ» երկբարբառը։ Սակայն ոչ միայն լեզուում գոյութիւն ունեցող գրառման ձեւի տարաշխարհիկ հմայքը պահպանելու

(եթե նոյնիսկ միայն սա լինէր նպատակը, դարձեալ արդարացուած կը լինէր ձգտումը), այլեւ կարեւոր մի իրողութիւն չանտեսելու համար անհրաժեշտ է բառային որոշակի շերտի համար վերականգնել եւ պահպանել «իւ»-ի փոխարէն «եւ»-ի գրութիւնը։

Թե ինչպէս որոշել՝ ո՛ր բառերը գրել «իւ»-ով, որոնք՝ «եւ»-ով, կարող են օգնել ստուգաբանութիւնը եւ հնչիւնաբանական օրինաչափութիւնները։ Բացի նրանից, որ ըստ Աճառեանի՝ «աղբիւր» բառի հնագոյն տարբերակն է «աղբեւր», յետնաբար՝ «աղբեր», հոլովման ժամանակ այդ բառի սեռականը նոյնպէս լինում է «աղբեր»։ Նոյնն է «ալեւր», «եղջեւր», «գեւղ» բառերի դէպքում։ «Եւ» երկբարբառի վերածումը «ե»-ի՝ ալեր, եղջեր, գեղջ, յուշում է, որ Մաշտոցի ուղղագրական համակարգում հէնց այդ բառերն են, որ գրուել են «եւ»-ով, մինչդեռ «իւ»-ով գրուող բառերի սեռականն այդ երկբարբառը վերածում է «եա»-ի՝ *արիւն>արեան, սիւն>սեան* եւ այլն։ Այսպիսով, անհրաժեշտ է ոչ միայն վերականգնել փոքրաթիւ բառերի համար կիրառելի երկբարբառի գոյութեան իրաւունքը (դա պէտք էր անել անգամ մեկ բառի համար), այլեւ բառերին վերադարձնել նրանց ճշմարիտ պատկերը, միաժամանակ վերահաստատել, որ որեւէ երկգրութիւն լեզուում անցանկալի, անտրամաբանական ու անիմաստ երեւոյթ է, ի վերջոյ, վերագտնել ժամանակների հոլովոյթում մաշտոցեան ուղղագրական համակարգի կորսուած եւս մեկ հիմնաւորում...

Բ. Մոռացուում է, յիշուում է, լրատուութիւն...

Կրաւորական ածանցը գրաւոր խօսքում, հայերէնի ուղղագրական կանոնների համաձայն, արտայայտուում է «ու»-ով ոչ միայն անորոշ դերբայում՝ *պարտուել*, այլեւ բոլոր միւս անդէմ եւ խոնարհուած ձեւերում, ինչպէս՝ *պարտուող* (ենթակայական), պարտուած (հարակատար), պարտուելիս

(համակատար), *պարտուել* (վաղակատար), *պարտուի* (ժխտական), *պարտուելու* (ապակատար)։ Նշուած դէպքերում «ու»-ի գրութիւնը պահպանող դասական ուղղագրութեան արեւելահայ հետեւորդներն անգամ շրջանցում են սկզբունքը եւ այդ բայերի անկատար դերբայում ու նրանից կազմուած ժամանակաձեւերում կրկնակ «ուու» գրութեան թուացեալ անպատշաճութիւնից խուսափելու համար «ու»-ն փոխարինում են «ւ»-ով՝ պարտւում են։ Այս խնդրին չի բախուում արեւմտահայերէնի կրողը, որի գրական լեզուում այդ ժամանակաձեւերը կազմուում են այլ կերպ (*կը պարտուին*), քան արեւելահայերէնում (*պարտուում են*), ներգոյական հոլովը կազմուում է այլ կերպ (*լեզուին մէջ*), քան արեւելահայերէնում (*լեզուում*)։ Սակայն նաեւ արեւմտահայերէնի կրողն է շրջանցում «ու»-ի գրութիւնը հետեւեալ բառերում՝ պատասխանատուութիւն, լրատուութիւն, թողտուութիւն։

Ըստ ուղղագրական օրէնքի՝ բաղաձայնայաջորդ եւ ձայնաւորանախորդ [վ] հնչիւնը գրառուում է «ու»-ով (*նուէր, կատուի, արտասուել*)։ Այս կանոնին չեն ենթարկուում դասական հայերէնի Ո եւ Ո-Ա հոլովումներին պատկանող այն բառերի հոլովուած ձեւերը, որոնք վերջանում են Ո-ից առաջ «ւ»-ի եւ Ա-ից առաջ «ե»-ի հնչիւնափոխուող «ի»-ով՝ հոգի-հոգւոյ, թագուհի-թագուհւոյ-թագուհեաց։

ԺԹ դարավերջին Ղազարոս Աղայեանի ջանքերով մամուլում («Մշակ», «Հորիզոն») լայնօրէն տարածուեց «ւ»-ագրութիւնը («հիւնագրութիւն»), որը «վ»-ագրութեամբ («վեւագրութիւն») եւ ուղղագրական այլ խոտորումներով ուղեկցուելիք զանգուածային «բարեփոխումների» ծիծեռնակն ու նախադէպն էր եւ համարձակ ճանապարհ հարթողը դէպի դրանց նոր յաղթարշաւ։ Պէտք է ճիշտ հասկանալ, թե արդիւնքում ինչ է տեղի ունեցել։ Երբ ԺԱ դարից յետոյ այբուբենում յայտնուած «օ» տառը եկաւ փոխարինելու փակ վանկի «աւ» երկբարբառին, դրանով սկզբնապէս չխարխլուեց

ուղղագրական գործող կուռ համակարգը, սակայն յետագայում բառասկզբում լսուող [օ]-ն գրառելով «օ»-ով՝ լեզուում փաստօրէն ներմուծուեցին կեղծ «աւ»-ով բազմաթիւ բառեր՝ օրգանիզմ, օքսիդ, օվալ (այս մասին՝ **Զ** կէտում), եւ յետագայ այդ զարտուղութիւնները սրբագրելուց յետոյ միայն «օ»-ի մուտքը ուղղագրական համակարգ թերեւս վերապահօրէն եւ ժամանակաւորապէս ընդունելի լինի։ Մինչդեռ «ու»-ն «ւ»-ով փոխարինելու քայլը սկզբից եւեթ ոչ միայն թուլացրեց համակարգը, այլեւ կազմալուծեց «վ» հնչիւնի ձայնագրութեան այնքան ճշգրտօրէն գտնուած տրամաբանութիւնը։

Գ.Կարդա, համարեա, սա, դա, ահա, ապա, այո, Ելենա եւն...

Դասական ուղղագրութեան կանոններից մեկը, ըստ որի՝ բառավերջում «ա»-ից եւ «ո»-ից յետոյ գրուում է «յ», ունի բացառութիւններ։ Ներկայացնելով մաշտոցեան ուղղագրական համակարգում հանդիպող այդ բացառութիւնները՝ փորձեմ տալ առայժմ, իմ պատկերացմամբ, միակ հիմնաւորումը, ըստ որի՝ խմբաւորուում եւ հիմնաւոր բացատրութիւն են ստանում բացառութիւնները՝ փոխելով իրենց կարգավիճակը եւ գուցէ վերահաստատելով ուղղագրական մոռացուած մի օրէնք։ ***Դեռեւս չբացատրուած ուղղագրական (եւ ոչ միայն) երեւոյթնե՛րն են որակուում «բացառութիւն», եւ հէնց նրանք են ի յայտ բերում եւ ապագայում էլ դեռ բացայայտելու են լեզուական հետաքրքիր օրինաչափութիւններ։***

Եւ այսպէս, բոլոր դասագրքերում որպէս բացառութիւն ներկայացող եւ այդպիսի ուղղագրութեան համար հիմնաւորում չգտած այս բառերը բաժանել եմ չորս խմբի՝ հիմք ընդունելով նրանցում առկայ աներեւոյթ այն շեշտերը, որոնք, ըստ երանգի, պայմանականօրէն կոչել եմ հրամայական, ցուցական, հաստատական եւ կոչական շեշտեր։ Այդ շեշտերից որեւէ մեկի առկայութեամբ հիմնաւոր կերպով

հերքուում է «անկանոնութիւնը» եւ յայտնաբերուում է ժամանակների փոշու տակ ծածկուած մաշտոցեան տրամաբանութեան գեղեցիկ կանոնը։ Եւ այսպէս՝

1. Հրամայականութեան շեշտակիրներ

Այս խմբում են բոլոր այն բառերը, աւելի ճիշտ՝ բայերը (նաեւ նրանք, որոնք այսօր չեն գիտակցուում որպէս բայեր), որոնք ունեն հրամայականութեան ներքին լսելի շեշտ, որը գրաւոր խօսքում յաճախ կարող է չդրուել՝ մնալ աներեւոյթ։ Դրանք են՝

ա. Գրաբարում Ա եւ Ե խոնարհումների (արդի հայերէնի Ա խոնարհման) պարզ բայերի բուն հրամայականի եզակին։ Այն առանց «յ»-ի է գրուում՝ գրաւոր խօսքում անշեշտ հանդէս գալու դէպքում եւս՝ *խաղա, ասա, կարդա* եւ այլն (չշփոթել ըղձական ներկայի հետ, որ գրուում է «յ»-ով՝ խաղայ, ասի, կարդայ)։

բ. Նախորդ կէտի տրամաբանութեամբ՝ նաեւ *«համարեա»* բառն է գրուում առանց յ-ի՝ որպէս գրաբարեան «համարել» բայի բուն հրամայականի եզակին։

գ. «Ողսաննա». այս բառը եբրայերէնից է փոխառուած եւ նշանակում է «փրկեա՛, ազատեա՛ զիս», այստեղ նոյնպէս ակնյայտ է հրամայական եղանակաւորումը։

2. Ցուցականութեան շեշտակիրներ

Այս խմբում բոլոր այն բառերն են, որոնք կրում են անտեսանելի, բայց ներքին ունկին հասանելի ցուցական շեշտ։

ա. Ցուցական *սա, դա, նա* դերանուններն ու նրանց հոլովուած ձեւերը՝ *սորա, դորա, նորա, սմա, դմա, նմա։*

բ. *«Ահա», «ապա», «հապա»,* աշխարհաբարեան *«հիմա»* բառերը. սրանք, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս ցուցականութեան իմաստային դաշտից են, մանաւանդ, եթե յիշենք «ահա»-ից կազմուած *ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ* ձեւերը, որոնք նշանակում են՝ «ահա սա», «ահա դա», «ահա նա»։

✓ Որպէս եղանակաւորող՝ *«ապա», «հապա»* բառերը յաճախ կրում են հրամայական-յորդորական երանգ՝ նայիր, ուշադրութիւն դարձրու, ցոյց տուր, ասա, կատարիր եւ նման այլ իմաստներով.

«**Հա՛պա**, ժի՛ր քզ լերուք» (Մակ. Ա, Ե:32)։

«**Հա՛պա** նախ զայդ ա՛ր» (Ես., Թ:1)։

«**Հապա** առաքինի՛ք, եհաս ժամ պսակման մերոյ» (Եղիշէ)։

«**Ապա՛**, տեսնեմ քո կազմած ծրագիրը» (ցո՛յց տուր)։

«**Հապա՛**, բոլորդ՝ դասասենեակ» (անցէ՛ք)։

«- Դու այդպէս չպիտի վարուէիր։ - **Հապա՞**» (ասա՛, ինչպէ՞ս)։

«**Ապա՛**, ձեզ տեսնեմ» (կատարէք)։

«**Հապա՛**, տեսնո՞ւմ ես այն կապոյտ նշանը» (ուշադի՛ր եղիր կամ ուշադրութիւն դարձրո՛ւ)։

✓ *«Ապա»* բառը, որպէս ժամանակի մակբայ, հոմանիշ է «այնժամ» մակբային, ուստի եւ նոյնպէս ունի «հէնց այն ժամանակ», «այդ պահին» իմաստները.

«Եւ **ապա** ուրեմն Յոբ եբաց զբերան իւր եւ անէծ զօրն իւր»- (*Յոբի գիրքը, Գլ. Ա) - Եւ այնժամ Յոբը բացեց իր բերանը եւ անիծեց իր ծնունդը։*

«Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք երեւէին, **ապա** բառնայր ամենայն յոյս» - *(Ներսէս Լամբրոնացի «Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի») - Երբ արեւն ու աստղերը չէին երեւում, այդժամ վերանում էր ամէն յոյս։*

✓ Այն ունի նաեւ «այդ դէպքում» իմաստը.

«Եթե կարիցէ ոք թուել զաւազ երկրի, ապա եւ քո զաւակ ընդ թիւ մտցէ» (Գիրք ծննդոց, ԺԳ:ԺԶ) - Եթե մեկը համրել կարողանայ երկրի աւազը, ապա (այդ դէպքում) քո սերունդը եւս կը համրի։

✓ *«Հիմա»* աշխարհաբարեան բառը, որ ժամանակի մակբայ է, մատնանշում է խօսելու կամ պատմելու պահին ամենամօտ ժամանակահատուածը, որի ընթացքում կատարուում կամ կատարուելու է գործողութիւնը, այսինքն՝

դարձեալ դրսեւորուած է ինքնին ցուցականութիւն՝ հէնց այս պահին, այժմ, արդ։

3. Հաստատականութեան շեշտակիրներ

Այս խմբում են *«այո»*, խօսակցական «հա» եղանակաւորողները եւ գրաբարեան *«նա»* (նա՛ մանաւանդ, նա՛ եւ) շաղկապը, որոնք հաստատում եւ զօրացնում են խօսքը՝ ներքին հաստատական շեշտով։

4. Կոչականութեան շեշտակիրներ

Այս խումբը ներառում է «ա»-ով եւ «ո»-ով վերջաւորուող հայերէն եւ օտար անձնանուններն ու տեղանունները։ «Ա», ինչպէս նաեւ «ո» վերջնահնչիւն ունեցող անձնանունները մաշտոցեան ուղղագրական համակարգում չեն ստանում վերջնադիր «յ»՝ Եղենա, Իրինա, Մարինա, Աննա, Յուդա, Սիլուա, նաեւ անունների կրճատ ձեւերը՝ Մարո, Կարո, եւ տեղանունները՝ Մոսկուա, Բարաշեւո, Զուիցերիա, Վոլգա եւ այլն։ «Յ»-ով գրուում են միայն անձնանունների վերածուած հայերէն հասարակ անունները՝ Հրաչեայ, Ընծայ։

Ա-ով եւ ո-ով վերջացող եւ որպէս ուղղագրական կանոնից բացառութիւն ներկայացող անձնանունների եւ տեղանունների առնչութեամբ ակնյայտ է դառնում լեզուական հետաքրքիր այն օրինաչափութիւնը, որով յայտածուում է մաշտոցեան համակարգի անխոցելի տրամաբանութիւնը։ ***Անուանումը բոլոր միւս անուններից տարբերուում է իր ենթադրեալ կոչականութեամբ։ Իւրաքանչիւր անձնանուն եւ տեղանուն ինքնին կոչական է, որոյն կերպով հանդիսադրուած պատասխան այն հարցին, թե ինչ են կոչում, ինչպէս են կանչում տուեալ մարդուն, վայրը, ... տառը, երաժշտական հնչիւնը։*** Ուստի, անձնանուններն ու տեղանունները, բառային շեշտից բացի, որը իւրաքանչիւր լեզուի հնչաբանական առանձնայատկութիւններից մեկն է, ունեն նաեւ այլ՝ կոչական շեշտ, որը հայերէնում ընկնում է վերջին վանկի ձայնաւորի վրայ, այսինքն՝ բառավերջի՝ բնա-

կանօրէն շեշտուող «ա» եւ «ո» հնչիւնները կարիք չունեն «յ»-ի՝ Տորոնտո, Չիկագո, Հիւգո, Աբո, Ժանո, Սաքո, Ոսլո եւ այլն։ Եւ որեւէ անուն արտաբերելով՝ ամէն անգամ վերստին արթնացնում ենք անունը՝ կոչելով, կանչելով մարդուն, վայրը, ... տառը։

Այբուբենի տառերի անունները նոյնպէս, անուանումներ լինելով, ինքնին կոչականներ են, ուստի եւ նոյնպէս ներքին անուանական առանձնայատուկ շեշտի առկայութեան հիմնաւորմամբ՝ գրուում են առանց «յ»-ի՝ Դա, Զա, Թո, Ծա, Հո, Ձա, Շա, Չա, Ռա, Ցո։ Այդպէս են գրուում նաեւ ձայնանշանների անունները՝ *Դո, Ֆա, Լեա։*

Արա՛, աղա՛ (գ.), ծո՛ եւ այլ ձայնարկութիւններ, ըստ էութեան, դիմելաձեւեր են, որ փոխարինում են անձնանուններին։

Դ. Նախորդ՝ **Գ** կէտի ***4***-րդ ենթակէտից բխում է, որ [ե] ([e]) հնչիւնով վերջացող յատուկ անունները՝ որպէս կոչականութեան շեշտակիրներ, միեւնոյն տրամաբանութեան ուժով՝ նոյնպէս ուղղական հոլովում պէտք է գրառուէին «ե»-ով՝ առանց եզրափակիչ յ-ի յաւելագրման։ Սակայն թեք հոլովներում հետզհետէ տիրապետող դարձող «ի» հոլովիչի ազդեցութեամբ՝ «ե»-ը օրինաչափօրէն փոխուում էր «է»-ի, քանի որ երկու ձայնաւորների միջեւ հայերէնը դնում է յ (ե+յ+ի>էի)։ Այս հանգամանքով եւ [ե] ([e]) հնչիւնով վերջացող հասարակ բառերը «է»-ով գրառելու կանոնի գործառութեան ընդարձակմամբ՝ յիշեալ խմբի յատուկ անունները ուղղականում նոյնպէս համանմանութեան սկզբունքով սկսել են գրառուել «է»-ով։ Ի տարբերութիւն «թե» եւ «եթե» շաղկապների՝ որոնց նախնական ուղղագրութիւնը լիովին փաստուած է հնագոյն ձեռագրական վկայութիւններով, [ե] ([e]) հնչիւնով վերջացող յատուկ անունների համար բաւարար չափով համապատասխան վկայուած օրինակներ չունենք։

Այդ իսկ պատճառով, հպատակուելով փաստացի գերակայ աւանդոյթին՝ մեզ առայժմ իրաւասու չենք համարի փոխել այդ անունների գրութիւնը՝ խնդրի վերջնական կարգաւորումը վերապահելով հայերէնի ուղղագրութեան լիակատար կանոնարկման պարտականութիւնները ստանձնելիք ապագայ իրաւասու մարմնին։

Ե. Թե, եթե...

Հնագոյն ձեռագրերի վկայութեամբ՝ «թէ» եւ «եթէ» շաղկապների նախնական, բնիկ գրչութիւնը «թե» եւ «եթե» է։ Այս՝ առաջին հայեացքից անսովոր ուղղագրութիւնը բացատրուում է եղանակաւորող բառերի եւ շաղկապների, ինչպէս նաեւ ձայնաւորայանգ յատուկ անունների, դերանունների եւ բայի բուն հրամայական ձեւերում «եզրափակիչ» յ-ն չգրառելու՝ **Գ** կէտում հիմնաւորուած կանոնով։ Ինչպէս եւ «ահա», «այո» եղանակաւորող բառերի եւ ըստ էութեան երկու սայր ունեցող պայմանական կամ ենթադրական նախադասութեան մի սայրը **ցոյց տուող** «ապա», «նա» (նա եւ, նա մանաւանդ) շաղկապների պարագայում, «թե»-ի եւ «եթե»-ի դէպքում նոյնպէս չի գործում թե+յ=թէ եւ եթե+յ=եթէ ուղղագրական օրինաչափութիւնը, եւ նոյնպէս եզրափակիչ յ-ն չպէտք է գրուի։ Այս բառերը է-ով գրելու սովորութիւնը անկասկած ընդհանրացել է յետին դարերում՝ վերոյիշեալ՝ շեշտայեն ուղղագրական կանոնի մասնակի մթագնմամբ։ Մաշտոցեան ուղղագրական համակարգից այս խաթարումը նոյնպէս ենթակայ է սրբագրման։ Տե՛ս նաեւ **Գ** կէտը։

Զ. Ովկիանոս, Ողիմպոս, Որենբուրգ, Ովսիենկո, Ոկուջաւա...

Կանոն. եթե **օ ≠ ա+ւ**, ապա՝ **օ = ո**

Մաշտոցը, որ բացի գրերից՝ ստեղծել է նաեւ հայերէնի ուղղագրական համակարգը, այսօր [օ] հնչիւնով սկսուող հայերէն բառերը գրառել է «ա+ւ» տառակապակցութեամբ,

ամենայն հաւանականութեամբ՝ իր օրերի հնչմանը համապատասխան՝ *աւրէնք, աւտար, աւգնել,* որ ԺԱ դարից ի վեր փակ վանկում փոխարինուեց նորամոյծ «օ» նշանով՝ աւր>օր (բայց՝ սեռ.-աւուր), աւձ>օձ, աւդ>օդ։ Միեւնոյն ժամանակ, [օ] հնչիւնով սկսուող փոխառեալ յատուկ եւ հասարակ անունները բնականօրէն գրառուել են «ո» նշանով՝ *ովազիս*[1], *ովսաննա, ովկիանոս, Ողիմպիա, Ողիմպոս, Որոգինէս,* որն այդ ժամանակ բոլոր դիրքերում (բացի «ու» հնչիւնը արտայայտող երկտառ կապակցութիւնից) հնչում էր որպէս պարզ «օ», ինչպէս *ոսկի, որդի, որոնել* եւ այլ բառերում։ Այդ մասին են այսօր վկայում «ով» դերանունը, կոչականի «ո՛վ»-ը, «ո՛հ» ձայնարկութիւնը: Հաւատարիմ լինելով Մաշտոցեան ուղղագրութեանը եւ օտար բառերի ու անունների տառադարձման օրինաչափութիւններում եւս լինելով սկզբունքային՝ պէտք է «ո»-ով տառադարձել բոլոր այն օտար անունները, որոնք սկսուում են [օ] հնչիւնով՝ *Ոկուջաւա, Ոլեխնովիչ, Որենբուրգ, Ոռլով, Ոմարի, Ոսիպեան, Ոռլէան, Ոհայո, Ոսկար, Ոսլո:* Դրանց թուում են [ov] հնչումով սկսուող հասարակ եւ յատուկ անունները, որոնցում ակնյայտ եւ ակնբախ անհեթեթութիւն է հայերէնի ուղղագրութեանը բոլորովին անյարիր «օ+վ» կապակցութիւնը, որ է՝

[1] Մեր հայրերը յունարէնի ոմեգան, որպէս կանոն, տառադարձում էին «ով»-ով։ Մինչդեռ «ովազիս» բառը յունարէնում գրուում էր՝ Ὄασις, իսկ ոմիկրոնը՝ Ὄ-ն, պէտք է որ տառադարձուէր «ո»-ով։ Սակայն նրանից յետոյ «ա» ձայնաւոր կայ, իսկ հայերէնը խուսափում է ձայնաւորների կուտակումից՝ նրանց միջեւ հնչեցնելով-գրելով «յ»։ Հայերէնում յաճախ այդ «յ»-ն հերթափոխուում է «ւ»-ով եւ հակառակը՝ մայր-մաւր, թողուի-թողոյր, Գեւորգ-Գէորգ (է=ե+յ)։ «Ովազիս» բառում «ո»-ն «յ»-ի հետ կը տար ոչ պատշաճ երկբարբառային հնչում, իսկ «ո»-ի հետ «ւ»-ը կը կազմէր [ու] հնչիւնը, եւ ուստի երկու ձայնաւորները ուղղագրօրէն միմեանց անջատակցող նշան է ծառայել «վ» տառը։

«ա+ւ+վ», եւ անառարկելիօրէն պէտք է գրուեն *ովազիս, ովկիանոս, Ովիդիոս, Ովսաննա, Ովսիենկո, Ովա* (գիւղ Արեւմտեան Հայաստանի Ծոփք նահանգի Խարբերդ գաւառում) եւ այլն։

Ոնիկ անունը կրճատ ու մտերմիկ ձեւն է «Յովհաննէս»-ի, որ կրել է Յոհան>Ոհան>Ոն+իկ ձեւափոխութիւնները, եւ անկախ հնչումից էլ պարզ է, որ ամբողջական անուան գրութիւնը թելադրելու է «ո»-ով գրառում։ Նոյնն է *Ոսիպեան* ազգանուան պարագայում, որը եբրայական Յովսէփ անուան ռուսերէն *Իոզիֆ* տառադարձման ժողովրդախօսակցական Ոսիպ տարբերակից է կազմուած։

«Օ»-ով գրութիւնը կարող է պայմանականօրէն եւ ժամանակաւորապէս արդարացուած լինել միայն այն դէպքում, եթե անունը սկզբնապէս գրուել է «ա+ւ» կապակցութեամբ, ինչպէս՝ *Աւգոստոս, Աւգոստինոս* եւ այլն։

Է. Գրել «Ա՞Ի» թե՞ «Օ»

Առաջնորդուելով ընթերցողներին յանպատրաստից սկզբնապէս մեծ դժուարութիւնների չենթարկելու նպատակայարմարութեամբ՝ մաշտոցեան ուղղագրական համակարգին հարազատ եւ ներկայումս փակ վանկում «օ» հնչող «աւ» երկբարբառը ընդհանրացած սովորութեան համաձայն առայժմ որպէս զիջում նպատակայարմար է փոխարինել դիւրընկալելի «օ» գրութեամբ՝ անխախտ եւ հետեւողականօրէն պահպանելով օ=աւ ստուգաբանական եւ ուղղագրական համապատասխանութիւնը։

Ը. Եմմա, Եդուարդ, ելեկտրական, Երեբունի...

Հայերէնում «է»-ով գրառուել են մի քանի միավանկ բառեր, ընդ որում, բառակազմութեան եւ թեքման ժամանակ այդ բառերի *է*-ն հնչիւնափոխուում է *ի*-ի՝ էշ-իշուկ, էջ-իջնել, էգ-իգական...

Մինչդեռ [ե] ([e]) հնչիւնով սկսուող օտար բառերն ու անունները, ըստ մաշտոցեան ուղղագրական համակարգի, գրառուել են «ե»-ով։ Օրինակ՝ Ելեկտրա, Եփեսոս, Եզովպոս, Եդեմ, Եսքիլէս, Եւրիպիդէս, Երատո, Ենէական, եթեր։ Ուստի, այսօր էլ փոխառուող օտար բառերն ու անունները պէտք է տառադարձել «ե»-ով՝ ելեկտրոն, ետապ, եկրան, Ելեն, Եդգար, Եդիկ...

Թ. Մարո, Կարո, Բալո...

Անձնանունների՝ [ո]-ով վերջացող կրճատ ձեւերի՝ այսօր աւանդոյթ դարձած «օ»-ագրութիւնը անհեթեթութիւն է, քանի որ որեւէ կերպ չի մեկնաբանուում մեսրոպեան ուղղագրութեան տրամաբանութեամբ, որը «օ»-ն արդարացնում է միայն նրա յետահայեաց պատճառաբանութեամբ եւ հիմնաւորումով, այսինքն՝ բաց վանկերում «ա+ւ» կապակցութիւնը արտասանուում է [av]՝ *ծարաւ, հարաւ, հաւ, գրաւ,* եւ չի կարող փոխարինուել ԺԱ դարում ներմուծուած «օ» տառով, եւ միայն փակ վանկի «աւ» երկբարբառն է «օ» տառով փոխարինելի՝ տ*աւ*ն-տ*օ*ն, պաշտ*աւ*ն-պաշտ*օ*ն, առաւ*աւ*տ-առաւ*օ*տ՝ բացառութեամբ *նաւթ, աղաւնի* բառերի։ Փաստօրէն, կանոնը չի գործում այս դէպքում՝ Մարո≠Մարաւ, Կարո≠Կարաւ, Սաքո≠Սաքաւ, եւ հնչաբանական-ուղղագրական հակասութիւնն ակնյայտ է, քանի որ մի կողմից մեր ունկերի լսած [o]-ն փակ վանկում չէ (ուստի, չի կարող գրուել «օ»), միւս կողմից՝ լինելով բաց վանկում՝ չի կարող հնչել [o], բայց եւ չի հնչում [av] (ուստի չի կարող գրուել «օ»), իսկ ուղղագրութեան համար այլ տարբերակ ուղղակի չի մնում։ Տրամաբանութիւնը յայտնուում է փակուղում։ Ուստի, երրորդենք. բառավերջում հնչող [ո]-ն պարզապէս չի կարող գրուել «օ»։ Դրանից բացի, գոյութիւն չունի աւ>օ>ո(յ) հնչիւնափոխութիւն. այս անունների սեռականը լինում է Մարոյի, Կարոյի, Սաքոյի... Հարցը կը լուծուի ինքնաբերաբար, երբ հա-

տուեն ուղղագրութեանը պատուաստուած՝ համակարգը խարխլող բոլոր «նորամուծութիւնները», եւ ուղղագրութեան պատմութեան անիւը վերսկսի իր անբռնազբօս երթը. այդժամ, անկասկած, ոչ ոք այդ անունները վերոբերեալ անհաւասարութեան երկրորդ անդամի ձեւով չի գրառի՝ *Մարաւ, Կարաւ, Սաքաւ*, եւ անգամ նախանձախնդիր մաշտոցեան ուղղագրութիւնը միառժամանակ կարող է հանդուրժել «աւ»-ի փոխարէն «օ» գրառումը, բայց՝ բացառապէս եւ միայն ուղղագրական համակարգի տրամաբանութեամբ հիմնաւորուած դէպքերում. եթե առկայ է օ=ա+ւ յետահայեաց հիմնաւորումը (արդեօք=արդեաւք, օր=աւր)։

Ժ. Անդրէ, Սերգէ, Ֆադէ...

Բոլոր լեզուներն ունեն տառադարձման իրենց օրէնքները։

Բնականօրէն, օտար անունները տառադարձելիս անհրաժեշտ է հաւատարիմ մնալ հայերէնի հնչիւնական առանձնայատկութիւններին եւ ուղղագրական կանոններին, եթե անգամ դրանք լիարժէքօրէն չեն ձայնապատճենելու օտար անուան հարազատ հնչումը։ Հայերէնի ուղղագրական համակարգում բացառուում է բառավերջի «ի»-ից եւ «է»-ից յետոյ «յ»-ի գրութիւնը։ Անունների դէպքում «յ»-ագրութիւնը գրեթե բացառուում է «ո» եւ «ա» նշաններից յետոյ եւս (միայն լսուող Խոյ, Նոյ)։ Ուրեմն, որքան էլ հնչական մակարդակում ռուսական Դմիտրի, Գէորգի, Եւգենի, Վասիլի, Արկադի, Իւրի անուններում լսենք [յ] հնչիւնը, միեւնոյն է, հայերէնում այն չենք արձանագրելու։ Եւ «ի»-ի պարագայում սա արդէն օրէնքի ուժ ունի։ Այդ անունները հոլովուելիս կամ որոշեալ յօդ ստանալիս նոյնպէս «յ» չեն ստանում՝ Դմիտրիի, Գէորգիի, Վասիլիի եւ այլն։ Անհարժեշտաբար հարկ է, որ այդպէս լինի նաեւ Անդրէ, Ալեքսէ, Ֆադէ, Ֆարադէ, Սերգէ, Հալէ եւ այլ անունների դէպքում, բնականաբար՝ նաեւ դրանց որոշեալ

առման եւ հոլովուած տարբերակներում՝ Անդրէն, Ալեքսէն, Ֆադէն, Սերգէն, Ալեքսէի, Անդրէի, Ֆադէի, Ֆարադէի, Սերգէի: Եւ քանի որ տեսականօրէն «է»=[եյ], ուստի, որպէս ժամանակաւոր «փոխզիջում»՝ ցանկացողները կարող են հնչեցնել աներեւոյթ եւ հազիւ լսելի [յ]-ն:

ԺԱ. Քանի որ է=ե+յ, ուրեմն ոչ մի դիրքում, որքան էլ բառի մէջ յստակ հնչի [եյ], չի կարող գրառուել «էյ» տառակապակցութեամբ, այն պարզ պատճառով, որ կը ստացուի էյ=է+յ+յ, ինչպէս օրինակ՝ Ռէյգան, լէյտենանտ, Հէյֆեց, թէյ, լակէ (лакей) եւ այլն: Հայերէնում չկայ նաեւ «եյ» առերեւոյթ կապակցութիւնը, որն ինքնաբերաբար վերածուում է պարզ «է» գրութեան: Ուստի, օտար բառերը եւ անունները տառադարձելիս պէտք է համապատասխանեցնել հայերէնի ուղղագրական կանոններին, եւ քանի որ «է» տառը պարզ նշանն է երբեմնի երկբարբառակերպ հնչիւնի, նշուած բառերը պէտք է տառադարձել՝ Ռէգան, լէտենանտ, Հէֆեց, թէ (tea)...

ԺԲ. Յատուկ անունների ուղղագրութեան միօրինակացման քայլերից

Այսօր անհրաժեշտութիւն կայ յատուկ անունների ուղղագրութեան միօրինակացման: Խորհրդային շրջանում տառադարձումը կատարուում էր ռուսերէնի միջնորդաւորութեամբ: Այսօր երկու հայ միեւնոյն տեղանունը գրում են երկու տարբեր տառադարձումներով, ինչպէս՝ Զուիցերիա եւ Շուէյցարիա: Ուստի պէտք է առաւելապէս ընդունելի մեկ սկզբունք որդեգրել, ըստ որի՝ յատուկ անունները հայերէնում ճիշտ է տառադարձել ըստ անուանատու ազգի լեզուական հնչիւնական համակարգի: Այս մօտեցման դէպքում, որքան էլ վերջին շրջանում, քաղաքական պատճառներով, միտում կայ խուլ բաղաձայններից հրաժարուելու՝ յօգուտ շնչեղ խուլերի, Կալիֆոռնիա անունը հարկ չկայ «ք»-ով տառադարձելու, քանի որ անուանումն առաջացել է լատիներէն calida fornax,

հին իսպաներէն՝ Calit Fornay (տաք վառարան) բառակապակցութիւնից, որով իսպանացի գաղութարարները բնութագրել են տարածաշրջանի կլիման: Իսկ իսպաներէնում, ինչպէս եւ լատիներէնում, «c»-ն ոչ մի դիրքում չի հնչում [ք], այլ՝ խուլ [կ]:

ԺԳ. Հայերէնի հնչիւնաբանական առանձնայատկութիւններից մեկը եւ Հայոց գրերի ընձեռած հնարաւորութիւնը

Հայերէնի հնչիւնաբանական օրինաչափութեամբ՝ [ն]-ից, նաեւ [լ]-ից առաջ [ր]-ն կոշտանում է, ինչպէս՝ *դուռն-դրկից, ամառն-ամարան, դառնալ-դարձ, եղեռն-եղերական, ամբառնալ-ամբարձիչ* եւ այլն: Անշուշտ, նշուած օրինաչափութիւնը չի նշանակում, թե «ն»-ից առաջ եղած բոլոր «ռ»-երն են հեռանալով վերածուում «ր»-ի, քանի որ արմատական «ռ»-ն մնում է բոլոր դիրքերում՝ *զառն>զառին, նուռն>նռան, բեռն>բեռին:* Եւ այսպէս, այս երեւոյթը անհրաժեշտաբար կիրառելի է նաեւ օտար բառերը տառադարձելիս՝ հիմնաւոր եւ տիրաբար օգտուելով նաեւ այն առաւելութիւնից, որ ընձեռում է հայերէնի այբուբենը՝ հնարաւորութիւն տալով փափուկ եւ կոշտ արտասանուող այդ հնչիւնները գրել երկու տարբեր նշաններով՝ ի տարբերութիւն միւս այբուբենների: Ուրեմն՝ *Կալիֆոռնիա, Նիդեռլանդներ, Իռլանդիա, Բեռն, Բեռլին, Թեռլեմեզեան, Կառլ, Շառլ, Մառլէն, Չոռնովիլ* եւ այլն:

ԺԴ. Շփոթեցնող երկգրութիւնը

Նկատի ունենալով, որ դասական հայերէնի շրջանում եւս «յետոյ» բառը ոչ միայն ժամանակային, այլեւ տարածական նշանակութեամբ է կիրառուել, եւ խուսափելու համար անցանկալի, շփոթեցուցիչ երկգրութիւնից՝ նպատակայարմար է արդի գրական արեւելահայերէնում հրաժարուել «հետքից եկող», «յաջորդ» իմաստներով արդարացուող «հե-

տագայ» բառից եւ անցնել բոլոր դէպքերի համար կիրառելի «յետագայ» գրութեանը:

ԺԵ. Աշխարհաբարեան «մեկ» բառը կազմուել է գրաբարեան «մի» բառից եւ «ակ» մասնիկից եւ չպէտք է տար գրութեան այնքան տարածուած «մէկ» ձեւը, քանի որ ի+ա > ե:

ԺԶ. Օտար անձնանունների եւս մեկ խմբի տառադարձման կանոնարկումը

Անդրէ անուան փաղաքշական ձեւը ռուսերէնում Андрюша [անդրյուշա] է, հայերէնի տառադարձման կանոնով՝ «Անդրեւշա»: Տառադարձումը ոչ թէ «իւ», այլ «եւ» երկբարբառով հիմնաւորուում է հայերէնի հնչիւնագրային օրինաչափութեամբ. Գեւորգ>Գե[յ]որգ>Գէորգ անուան նմանութեամբ՝ յ>=<ւ փոխանցմամբ առաջանում է Անդրէ=Անդր[եյ]>Անդրեւ, որին աւելանում է ռուսական «շա» փաղաքշական-փոքրացուցիչ մասնիկը, որի պատճառով «եւ» հնչիւնակցութիւնը վերածուում է երկբարբառի: Նոյն կերպ են տառադարձուում Алёша, Пётр անունները.

Ալեքս>Ալ[եյ](ոս)>Ալեւ(ոս)>Ալեւ+շա=Ալեւշա,
Պետրոս>Պե[յ]ոտր>Պեւ(ո)տր>Պեւտր:

Յաւելուած

1. Որպէս կանոն, ձայնարկութիւնները եւ բնաձայնական բառերը չեն տառադարձուում, իւրաքանչիւր լեզու իր համարժէք ձայնարկութիւններն եւ բնաձայնութիւններն ունի: Հայերէնի «հարա՛յ», «ուխա՛յ», «ծո՛», «թո՛ւհ», «չըրը՛խկ», «ըհը՛», «թը՛մփ», «վա՛խ», «եհէ՛», «վա՛յ» եւ այլ ձայնարկութիւններ եւ բնաձայնութիւններ թարգմանելիս անհրաժեշտ է գտնել թարգմանիչ լեզուի համապատասխան նմանակը: Ասածը հաստատում են նաեւ անիսկական բարդութիւնները՝ դարձուածքները, որոնց մաս է ձայնարկութիւնը, օրինակ՝ «ախ քաշել», «հարայ տալ», «հարայ-հրոց գցել», «վայ-վույ կանչել» եւ այլն... Եթե ինչ-որ մեկի դիմելիս,

ռուսերէնում, օրինակ, գործածուել է «эй» ձայնարկութիւնը, նրա փոխարէն հայերէնում կիրառուում է «ա՛յ»-ը։ Սակայն եթե այնուամենայնիւ սկզբունքային խնդիր է դրուել տառադարձել ձայնարկութիւնը, ենթարկուելով ուղղագրական կանոններին՝ ուշադրութիւն հրաւիրող «hey» ձայնարկութիւնը սկզբունքօրէն պէտք է գրել «հէ՛», «эй»-ը՝ «է՛»՝ նկատի ունենալով, որ «է»-ն [եյ] բաղադրեալ հնչիւնի գրանշանն է:

2. Օտար բառերը փոխառելիս պէտք է հաշուի առնել հայերէնի հնչիւնական եւ ուղղագրական կանոնները։ Բաղաձայնայաջորդ-ձայնաւորանախորդ [վ] հնչիւնը գրուում է «ու»։ Ուստի՝ Սուետլանա, Սուէն։ Երկու ձայնաւորների միջեւ լսուող [վ]-ն գրառուում է «ւ»-ով՝ Իւան։

3. Օտար բառերը փոխառելիս պէտք է յիշել հայերէնի հնչիւնական եւ ուղղագրական կանոնները։ Ուստի՝ актив, пассив եւ նման այլ բառեր կը գրուեն՝ օբյեկտիւ (առարկայական), սուբյեկտիւ (ենթակայական), պասիւ (կարաւորական), ակտիւ (ներգործական), մասիւ (զանգուած, զանգուածեղ), շտատիւ (կացոց, ամրակալան) եւ այլն:

4. Youtube, Andrew, Sue, Юрий, Юля, Yukatan...
Հայերէնի տառադարձման կանոնները պէտք է գործեն նաեւ այստեղ։ Ուրեմն, բառասկզբի փակ վանկում «յու» լսելիս պէտք է գրել կա՛մ «իւ», կա՛մ «եւ»՝ Իւթուբ (եւթուբ), Իւրի (Եւրի), Իւլեա (Եւլեա): Կայ եւ երրորդ տարբերակ՝ բառասկզբում գրառել «յու»-ով եւ կարդալ ինչպէս յունիս, յունուար բառերում՝ յութուբ, Յուրի, Յուլեա, Յուկատան:

Իւրաքանչիւր լեզու օտար անունները տառադարձում է իրեն յարմար կերպերով։ Օրինակ՝ լատ. Danuvius գետանունը ռուսերէնը տառադարձել է Դունայ, բուլղարերէնը՝ Դունաֆ, գերմաներէնը՝ Դոնաու, հորուաթերէնը՝ Դունաւ, հունգարերէն՝ Դունա, ռումիներէն՝ Դուներէա, հայերէնը՝ Դանուբ։ Յունարէնի միջոցով հայերէնին անցած Մաթայոս անունը տառադարձուել է Մաթեւոս։ Ջեղչելով «ո»-ն՝ կը

ստանանք «Մաթեւս» [matyus] ձեւը։ Անգլիական Matew անուան հնչողութեանը շատ մօտ լինելու համար կարող ենք տառադարձել Մեթեւս [metyu] ձեւով։ Այդ եղանակով՝ նաեւ Andrew անունը՝ Ենդրեւս կամ Անդրեւս։ Այս տարբերակը միաժամանակ Sue անուան (եւ ոչ միայն) ստուգաբանութիւնն է տալիս՝ Սիւս (յուն., լատ. Սուսաննա, Սիւսաննա)։ Գրառման այս եղանակը ոչ միայն նախընտրելի է «իւ» եւ «եւ» տառակապակցութիւններից, որոնք բառավերջի բաց վանկում արհեստականօրէն որպէս երկբարբառ հնչելով՝ կարող են շփոթեցնել [iv]-ով վերջացող անունների արտասանութեան ժամանակ, ինչպիսին է, օրինակ՝ «Պլովդիւ»-ը, այլ նաեւ հաստատում են հայերէնի ուղղագրութեան եւս մեկ կարեւոր օրինաչափութիւն. «աս», «ոս», «էս» մասնիկներով վերջացող յունարէն անունները տառադարձելիս այդ մասնիկները հայերէնում ուղիղ ձեւերում պահպանւում են՝ ի տարբերութիւն դրանք փոխառած լեզուների մեծ մասի, եւ քանի որ այս նորահունչ անունները ստուգաբանօրէն յունարէնից կամ նրա միջնորդութեամբ են վերցուել, հայերէնը անվերապահօրէն իրաւունք ունի հաւատարիմ լինել հազարամեակների որդեգրած սկզբունքին եւ աւելացնել հնչիւնաբանական ճշտման եւ ճշգրտման գործակից «ս»-ն։ Եւ ուրեմն՝ Մաթեւս (իր տարբերակներով՝ Մաթեւոս, Մատթէոս...), Անդրեւս (Անդրէաս, Անդրիաս, Անդրէ...), Թադեւս (Թադէոս, Թադեւոս, Թադէ...) եւ այլն։

5. [Են] հնչումով վերջացող բառերը եւ անունները պէտք է գրառել «է»-ով, եւ սա ոչ թէ հնչաբանական-հնչիւնափոխական օրէնքով է հիմնաւորուում, այլ զուտ ուղղագրական կանոնով. բառավերջի «ն»-ից առաջ լսուող [ե] հնչիւնը գրառուում է «է»-ով։ Օրինակ՝ ամէն, մէն, ծուէն, արդէն, հայերէն,ոսկեղէն, ծակոտկէն, պատճէն, գազպէն եւ այլն։ Նոյն ուղղագրական սկզբունքին են ենթարկուում անձնանունները՝ Արմէն, Արսէն, Կարմէն, Կարէն, Խորէն եւ այլն։

Ուստի եւ՝ Sven - Սուէն, Stephen - Ստեֆէն (Ստեփէն, Ստիւէն), Damien - Դամիէն, Chen - Շէն։

[Եգ]-ով վերջացող բառերը հիմնականում գրառուած են «էգ»-ով՝ մէգ, սէգ, հէգ, վէգ, տէգ, եղէգն։ «Ե»-ով գրառուած է «արեգ» բառը, որ ծագում է հնդեւրոպական նախալեզուի «rev» ձեւից, որտեղ կարճ ձայնաւոր «ե» է։ «Մէգ», «տէգ», «վէգ» բառերը պահլաւերէնում եւ զէնդերէնում «է»-ի դիմաց ունեն aē։ Կարելի է ենթադրել, թե հնչիւնաբանօրէն «գ»-ն արտասանութեան համար պահանջում է երկար [e]։ «Ժանեթ»-ը, [թ]-ից առաջ լսուող [ե] հնչիւնի ուղղագրական կանոնով հարկ է գրառել «ե»-ով՝ փաթեթ, անհեթեթ եւ այլ բառերի նմանութեամբ։

6. Եթե Չինաստանի մայրաքաղաքի անունը տառադարձել ենք «Պէկին», նրա դրամական միաւորը շատ չի տուժի, եթե նրա անունը տառադարձենք կա՛մ «եուան» (բաց վանկում «իւ», «եւ» տառակապակցութիւնները հնչելու են [iv], [ev], այդ պատճառով անյանձնարարելի են), կա՛մ «յուան»՝ համապատասխան հնչմամբ...

7. Համոզուածութեան մեծ բաժինով ենթադրուել է, թե Մաշտոցի լսած հնչիւնները ժամանակի ընթացքում որոշակի փոփոխութիւնների են ենթարկուել։ Այսօր [վ] հնչիւնի ամրագրման երեք տարբերակները՝ «վ», «ւ», «ու», գուցէ համոզում են, թե ժամանակին երեք տարբեր հնչիւնների համար են կիրառուել դրանք։ Սակայն պէտք չէ խորը եւ լուրջ ուսումնասիրութիւն կատարել՝ համոզուելու համար, որ հնչումից աւելի էական հանգամանք կայ՝ ուղղագրական կանոնը, որ գործում է անխախտ կերպով եւ անխափան.

• «վ»-ն դրուում է ո-ից յետոյ,

• «ւ»-ը՝

ա. բաց վանկում՝ ձայնաւորներից յետոյ (բացի «ու»-ն ձեւաւորող «ո»-ից),

բ. փակ վանկում՝ երկբարբառների կազմում,

գ. գրաբարեան Ո եւ Ո-Ա հոլովումներին ենթարկուող *ի*-ով վերջացող բառերի թեք հոլովներում (որդւոյ),

• «ու»-ն՝ բաղաձայնայաջորդ-ձայնաւորանախորդ դիրքում:

8. Եթե «ա»-ից եւ «ո»-ից յետոյ «յ»-ն օգնում է խուսափել ձայնաւորների կուտակումից, ապա «ի», «էի» եւ «ուի» գրութիւնները բացատրելի են զուտ ուղղագրօրէն, եւ այս զոյգ ձայնաւորների միջեւ «յ»-ի գրութիւնն անընդունելի է: Առաջինում («ի») «ի»-ն եւ «յ»-ն միեւնոյն հնչոյթի՝ դիրքից կախուած գրային տարբերակներն են՝ «ի սրտէ», «յաշխարհէ», ուստի «յ»-ն, երկու «ի»-երի միջեւ հնչելով հանդերձ, չի գրուում՝ Անիի, Շուշիի, կամ՝ այգիի, թշնամիի (արեւմտ.), եւ թուարկածս բոլոր ձեւերը յետին են: «Էի» դէպքում «յ»-ն չի գրուում, քանի որ «է»=«ե+յ»՝ գրե+յի, տեսանե+յի: «Ուի» պարագայում գործում է ոչ թէ «ու» ձայնաւորի, այլ «ւ»-ի ուղղագրական կանոնը, որից յետոյ երբեք չի գրուում «յ». «ւ»-ը եւ «յ»-ն միմեանց հերթափոխող գրեր են, «ո»-ից յետոյ ուղղագրական միեւնոյն արժէքն ունեն եւ գործածուում է կա՛մ մէկը, կա՛մ միւսը, եւ երբեք՝ միասին, ինչպէս՝ թողուի-թողոյր, ով-ոյր-ում, Լեւոն-Լ(ե+յ)ոն-Լէոն:

9. Ոնորէ, Ոսլո անունները երբեք չեն հնչի [vonore], [voslo], քանի որ այդպէս հնչելու համար հարկ կը լինէր գրել «վ»-ով՝ Վոնորէ, Վոսլո, ինչպէս՝ Վոլգա, Վորոնէժ, վոկալ: «Վոհմակը» (որը հաւասարապէս վկայուած է նաեւ «ոհմակ» եւ «յոհմակ» ձեւերով), Վոսփորը օտար բառեր են, որոնք պիտի բառասկզբում «վ» հնչէին, ինչպէս փոխատու լեզուներում, ուստի պիտի գրուէին «վ»-ով, այլապէս կը հնչէին «օ», ինչպէս «Ոսլո»-ն:

Մաշտոցեան մի քանի բանաձեւեր

1. [օ]=«աւ»: **Աւ**գսէն, **Աւ**գոստոս, **Աւ**գոստինոս...
2. Բաց վանկում «աւ»≠[օ]>=[ավ]: Հար**աւ**, կ**աւ**, **աւ**անակ
3. Միայն փակ վանկում «աւ»=[օ]: Աղ**աւ**թք, **աւ**ձ, **Աւ**գսէն...
4. Եթե [օ]≠«աւ», ապա [օ]=«ո»: **Ո**ղիմպիա, **Ո**ղգա, **Ո**սկար...

5. Բաց վանկում «օ»-ն դուրս է բոլոր կանոններից: Մար**ո**...
6. Օտար [վօ]=«վո»: **Վո**լգա, **Վո**րոնեժ, **վո**կալ
7. [օվ]≠«օվ»>≠«աւվ», [օվ]=«ով»: **Ով**սաննա, **ով**կիանոս...
8. «է»=[եյ], «եյ»=>«է»: Եմ, ես, [**եյ**]>**է**, ենք, [**եյ**]ք>**էք**, են (ինչպէս՝ ամ, աս, այ, ամք, այք, ան), րոպ[եյ]=>րոպէ (ինչպէս՝ երեխայ):
9. «էյ»=«եյյ» - անհնարին, ուստի [եյ]=«է»: Սերգ[եյ]=Սերգէ, թէ (tey), Անդրէ, Բէրութ...

Лусине Аветисян - Внутренняя логика маштоцевской орфографии (руководящие принципы для возвращения к изначальной форме маштоцевской орфографии).- Маштоцевская орфография является всесторонне продуманной и досконально регламентированной системой, которая с математической точностью и строгой внутренней логикой функционировала до появления и постепенного распостранения ряда орфографических отклонений, некоторие из которых с течением времени стали оформляться в нарушающие изначальную логику системы формы. Произошедшие в последующие столетия значительные фонетические сдвиги привели к созданию дополнительной нагрузки на орфографическую систему ввиду появления дополнительного пласта графических несоответствий между письмом и устным произношением. С середины 18-ого века, в связи с широким распространением книгопечатания, в основном, руководящими усилиями ордена Мхитаристов, была введена во всеобщее употребление адаптированная редакция свода орфографических правил, которая, в отдельных случаях, отклонялась от исходного орфографического канона. В данной статье мы рассмотриваем основной корпус упомянутых поздних отклонений от изначальной орфографической нормы и вводим в практический оборот для всех литературных стандартов армянкого языка искомый орфографический канон, восходящий к создателю армянкой письменности Месропу Маштоцу.

Lusine Avetisyan - Intrinsic logic of the orthography of Mesrop Mashtots (Guidelines for repristination to the original form of Mashtots Orthography). - Mashtots's orthography is a comprehensively thought-out and thoroughly regulated system that with mathematical precision and strict internal logic functioned until the appearance and gradual spreading of a number of orthographical deviations, some of which in the course of time began to violate the original logic of the above mentioned system. Significant phonetic changes in subsequent centuries led to the emergence of an additional burden upon the orthographican system because of an additional stratum of graphic discrepancies between the written world forms and oral pronunciation. Since the 18th century, due to the widespreading of typography, mainly by the guiding efforts of the Order of Mekhitarists, an adapted version of the orthographical canon was introduced into general use, which, in some cases, deviated from the original orthographical norms. In this article we consider the main body of these late deviations from the original orthography and introduce into the practical circulation for all literary standards of the Armenian language the pristine orthographic canon, which goes back to the creator of the Armenian script Mesrop Mashtots.

Բառնապյան Ջեմմա
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Կարնո բարբառն առայսօր կենդանի, գործուն է և որպես հաղորդակցման միջոց է ծառայում Գյումրիում, Շիրակի մարզի բազմաթիվ բնակավայրերում, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի մի շարք հայաբնակ գյուղերում: Հանգամանքների բերումով գտնվելով Շիրակի մարզի Գետք, Ազատան և Մարմաշեն գյուղերում՝ բարբառախոս անձանցից գրառել ենք Կարնո բարբառին առնչվող իրողություններ՝ թեմատիկ քննության կատարելու նպատակով: Աշխատանքը կատարելիս հենվել ենք նաև Կարնո բարբառով ավանդված բանահյուսական հարուստ ժառանգությունից և Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառը» աշխատությունից քաղված տեղեկությունների վրա[1]:

Համառոտակի ներկայացնենք Կարնո բարբառի խոսվածքներում առկա բառակազմական միջոցներին առնչվող որոշ հատաքրքիր իրողություններ: Ածանցումը միշտ եղել և մնում է բառակազմական ամենակենսունակ միջոցներից մեկը հայերենում: Սակայն առկա են նաև նոր բառեր կազմելուն արդեն չմասնակցող ածանցներ, որոնք արմատի հետ արդեն որպես մի ամբողջություն պետք է դիտարկել: Այս առումով հետաքրքիր դիտարկում է անում նշանավոր լեզվաբան Լիանա Հովսեփյանը: Անդրադառնալով հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում բառերի ստուգաբանական և

[1] Տե՛ս **Հ.Մկրտչյան**, *Կարնո բարբառը*, Ե., 1952, էջ 191:

բառակազմական վերլուծությունների խնդրում առկա իրողություններին՝ նա գտնում է, որ հայերենի բառակազմությանը նվիրված աշխատություններում բառերը վերլուծելիս հաճախ առանձնացվում են միավորներ, որոնք արդեն կորցրել են իրենց բառակազմական իմաստային և գործառական որոշակիությունը. «Ժամանակակից հայերենի որևէ այլ մակարդակի նկարագրության մեջ վաղուց արդեն հաղթահարված է համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերը շփոթելու վտանգը, սակայն նույնը չի կարելի ասել բառակազմության մասին»[2]:

Այդ առումով՝ հայերենի բարբառներում ***-ի*** ածանցն արդեն կենսունակ չէ և դրանով նոր բառեր կազելու միտում չկա: Այդ և մի շարք այլ վերջածանցներ ուղղակի մի ամբողջություն են կազմում արմատի հետ և տրոհելն անիմաստ է: Ասենք, Կարնո բարբառի՝ Շիրակի տարածքի գյուղերի խոսվածքներում առկա են մի շարք բառաձևեր, որոնցում կարելի է տեսնել այդ *–ի* ածանցը, ինչպես՝ *թատարի, վիրի*, և դրանց հատուկ է արդեն կայունացած բառիմաստը: Այսպես՝ ***թատարի*** (թաթարի) բառն ունի *շատ արագ, հապճեպ, ոտքի վրա* իմաստները: Այլ կերպ ասած՝ *թաթարի նման, թաթարավարի:* Զևի մակբայի արժեք ունեցող ածանցավոր այդ բառը շատ գործածական է Կարնո բարբառի խոսվածքներում: Օրինակ բերենք Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի խոսվածքով.

Թատարի *ձ՛ըվաձէղըմ կէրանկ ու հ՛ընգանկ ճամպա:* ***Թատարի*** *լօղծա:*

Կամ, ասենք, ***վիրի, վիրունի*** բառերի գործառույթը բառակապակցություններում՝ *վիրի* կամ *վիրունի էձ*:
Կարնո բարբառով գրառված բանահյուսական նյութերում հաճախադեպ է ածական և մակբայ կերտող ***–անակ*** ածանցը: Օրինակ՝ *Էս ախճիգը հակնի գը* ***մառտընագ*** *շօրէր ու կէրտա:*

---

[2] Տե՛ս *Ջահուկյանական ընթերցումներ,* Ե., 2006, էջ 127:

Անդրադառնանք նաև -***ութ*** ածանցին, որը ժամանականիշի արժեք է հաղորդում բառին: Օրինակ՝ *Էդիգ խո մորութ* (ի ծնե) *էր թոպալ*:

Նոր բառեր կազմելու այլ գործուն, կենսունակ վերջածանցներից, մենք գրառել ենք այդ խոսվածքներում հանդիպող ինքնատիպ ածանցները միայն:

Բառաբարդման խնդիրներին նույնպես անդրադարձել ենք ընտրողաբար: Հավաքչական աշխատանքներ կատարելիս մեզ նախապես հետաքրքրում էին վերոհիշյալ խոսվածքներում առկա դերանվանական ձևերը, որոնց ուսումնասիրության ժամանակ առանձնացրինք նաև բառակազմական հետաքրքիր իրողություններ: Կարնո բարբառում գործառում են քարացած բարդություններ, որոնց բաղադրիչները այնքան են ձուլվել, որ վերածվել են պարզ բառերի (արդի լեզվազգացողությամբ գիտակցվում են իբրև պարզ բառեր), ինչպես, ասենք, ցուցական դերանունների արժեքով գործառող ***դ՛էն*** (ընդ+այն), ***դ՛էս*** (ընդ+այս), ***դ՛էդ*** (ընդ+այդ) ձևերը:

Օրինակ՝ *Գ՛ուզէս՝ դ՛էսն արի, գ՛ուզէս՝ դէդը գ՛ընա:* Քարացած բարդության լավ օրինակ է նաև ***ի՞նչըդ*** հարցական դերանունը: Վերոհիշյալ խոսվածքներում լայնորեն գործառող այս դերանունը, հավանաբար, առաջացել է ***ի՞նչ*** և ***ցեղ*** բառերի կցումով՝ ***ի՞նչ ցէդ*** > ***ի՞նցըդ*** > ***ի՞նչըդ***:

Ինչպես գիտենք, գործառական մեծ հաճախականություն են դրսևորում հայերենի բարբառներում անվանական և բայական հարադրությունները, երբ հարադրվում են բառային հոմանիշներ՝ առարկան կամ երևույթն առավել ընկալելի դարձնելու նպատակով: Նկատելի է, որ բառաբարդման նախընտրելի ձևեր են կրկնավորները, որոնց բնորոշ են հնչյունների հավելման և անկման երևույթները՝ կրկնաբանությունն աննկատ դարձնելու և խոսքին լրացուցիչ արտահայտչականություն հաղորդելու միտումով: Ասենք՝ ***ավար-ա՛ավար խոսիս կը***, կամ՝ ***անուշ-չանուշ խօրատա էրինք*** և այլն: Շատ

դեպքերում բառիմաստին որոշակի նրբիմաստ հավելելու նպատակով հարադրության կազմում հայերեն բառաձևի հետ կիրառելի են նույնիմաստ փոխառյալ բառեր, ասենք, Կարնո բարբառի Շիրակի տարածքի խոսվածքներում շատ գործածական են ***սէր-սավդա, խօսկ-խօրատա*** և հայաբանության արժեք ունեցող նմանատիպ այլ ձևեր։

Բայական հարադրությունների ամենագործածական տեսակը բայի և այլ խոսքի մասի (գոյական, ածական, դերանուն, մակբայ) համադրությունն է։ Այսպես՝ ***լսել*** հասկացության դիմաց Կարնո բարբառի Մարմաշեն, Ազատան, Գետք գյուղերի խոսվածքների գրանցումներում առկա է ***հ՛անգաջ էնէլ*** հարադրությունը՝ ***ուշադրություն դարձնել*** նրբիմաստով։ Շատ գործածական է հայաբանության արժեք ունեցող ***յօլա էրտալ*** հարադրությունը՝ ***հարմարվել, համակերպվել*** նրբիմաստով։ Ընդ որում՝ թուրքերենից փոխառյալ ***յօլ*** (ճամփա) բառն այլ բառով փոխարինելիս կորչում է նրբիմաստը։ Դրանով է պայմանավորված այդ և նմանատիպ ձևերի գործառական հաճախականությունը։ Նույնը կարելի է ասել նաև ***օսյաթ էնէլ*** հարադրության մասին, որին հատուկ է ***վերջին պատվերը տալ*** կամ ***կտակել*** իմաստը։ Հարադրական և կրկնավոր բարդությունները Կարնո բարբառում շարունակում են մնալ կենսունակ։

Բաղադրյալ բառերի յուրօրինակ տիպ են ներկայացնում *կայուն բառակապակցությունները*, որոնք իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ, այսինքն՝ նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ և հետագայում, գործածվելով փոխաբերաբար, աստիճանաբար ստացել են բառային իմաստ հենց այդ փոխաբերական նշանակությամբ։ Այլ խոսքով՝ կայուն բառակապակցություններն արտահայտում են մեկ բառիմաստ, ունեն անվանողական դեր և նախադասության մեջ հանդես են գալիս որպես մեկ անդամ՝ առաջացած լինելով հիմնականում շարահյուսական

կապակցություններից բառերի՝ երկարատև միասին գործածվելու, պարբերաբար կրկնվելու հետևանքով՝ նպաստելով սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն[3]: Բերենք նմանատիպ բառաձևեր Շիրակի տարածքի հիշյալ գյուղերի խոսվածքներից: Ասենք, օրինակ, ***շուտով*** ժամանականիշ մակբայի արժեքով գործածվում է ***հ՛ուրօրա*** բառաբարդումը՝ որպես ***ուր որ է*** կապակցություն: Ընդ որում՝ *հ՛ուր+օր+ա* բառում վերջին ***ա***-ն օժանդակ բայն է՝ ոչ օրինաչափ այս բարբառի համար: Իսկ նախադասության մեջ մեկ բառիմաստ ունենալով՝ դրան կից գործառում է տվյալ բարբառին բնորոշ՝ ***է*** օժանդակ բայը: Օրինակ՝ *Պարբս* ***հ՛ուրօրա*** *է, գ՛ուկա*:

Կարնո բարբառի Շիրակի տարածքի խոսվածքներով գրառված բանահյուսության մեջ *դժոխք* իմաստով գործառող ***հ՛անատագ*** բառը սովորաբար գործածվում է ***սէվ հ՛անատագ*** կայուն բառակապակցության կազմում՝ *անդունդ*, *վիհ* բառիմաստով: Շատ տարածված է անեծքներում, ինչպես՝

Սէվ ***հ՛անատագն*** *էրտաս, չըդառնաս:*

Ակնհայտ է բառի **ան+հատակ** կազմությունը՝ այդ տարածքի խոսվածքներին բնորոշ՝ հավելական ձայնեղ ***հ***-ով: Հիշյալ խոսվածքներում առկա բազմաթիվ հետաքրքիր ձևերից ներկայացնենք առաջին հայացքից տարօրինակ թվացող մի արտահայտություն, որ բնորոշ է միայն կանանց: Ասենք, զարմանք, վախ, հիասթափություն արտահայտելիս մի տեսակ կոչականի արժեքով գործածում են ***անժաժ քարեր*** բառակապակցությունը, ինչպես՝ *Քա յամա՛ն,անժաժ քարեր…* Այսինքն՝ խոսում են մի բանի մասին, որից անշարժ քարերն անգամ կշարժվեն:

Անվանական կայուն բառակապակցությունների հետաքրքիր օրինակներ կարելի է գտնել նաև քարտեզագրման

---

[3] Տե՛ս **Հ.Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 138:

համար կուտակված նյութերում: Բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում[4] հայերենի բարբառների բառապաշարի տարածքային տարբերություններին որոշակի տեղ է հատկացված, որը համեմատություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Սակայն բառակազմական խնդիրներն այդ ծրագրում հարցման հատուկ առարկա չեն դարձել, թեև բառանվանողական նյութերի գրանցումներում կարելի է գտնել որոշ տեղեկություններ նաև բառակազմության վերաբերյալ: Ասենք, տասներկուերորդ բառահոդվածի պահանջով՝ *Արև եղանակին բարակ անձրև*, արևմտյան բարբառների շատ խոսվածքներում գրանցվել է ***գ՛ելցրոտուգ*** կամ մի ամբողջ նախադասությամբ՝ *Գ՛էլ սար գըցրոտէ* (Մշո Մկրագոմ գյուղի խոսվ.): Շիրակի տարածքի գյուղերի խոսվածքներում այդ հասկացության համար առկա է կայուն բառակապակցություն՝ ***գ՛իլու հարսնիկ***: Օրինակ՝ *Հէմ ամբ չըկա, հըմը գիլու հարսնիկ է* (գ.Մարմաշեն):

Միածան հասկացության համար հայերենի շատ բարբառներում գործառում է ***ծիրանի գոտի*** բառակապակցությունը: Շիրակի տարածքի խոսվածքներում առկա է ***Ասու գ՛օղիգ*** կայուն բառակապակցությունը: Օրինակ՝ *Ասու գ՛օղիգի տըգօվ անծի՝ տըղա դ՛առնաս:*

Իբրև գրաբարաբանություն կարելի է ընկալել անեծքներում հանդիպող *Ասու բ՛էպէլագան կըրագ* (պատժիչ կրակ) բառակապակցությունը, ինչպես՝

Ասու բ՛էպէլագան կըրագ թապի գ՛ըլխուդ, անաբու՛ռ կընիգ:

Շատ գործածական է չարաճճի և վնասարար երեխային բնութագրող՝ ***Ասու կըրագ*** կամ ***Ասու կըրագ ու պաղիջ*** (պատիժ) արտահայտությունը, ինչպես՝

---

[4] Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր,* Ե., 1977:

Խո էրէխա չէ՛, *Ասու կըրագ ու պաղիջ* (պատիժ)։

Ծրագրի 279-333 կետերը հարցում են պարունակում ածականների վերաբերյալ՝ նպատակ ունենալով պարզել դրանց գործառույթը հայերենի բարբառներում։ Այստեղ արդեն կարելի է գտնել առատ նյութեր՝ ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության մասին վկայող։ Սովորաբար նկարագրական եղանակով առարկան մատնանշելիս ***ածական + գոյական*** կաղապարն է գերակշռում հայերենի բարբառներում։ Շիրակի տարածքի գյուղերի խոսվածքներում մարդու արտաքինը նկարագրելիս հետաքրքիր կապակցություններ են ի հայտ գալիս, ասենք, ***ճոռտած բ՛էրան*** (մեծախոս), ***ճրպխած քիտ*** կամ ***պոտտո քիտ*** (կճատ քիթ ունեցող)։ Գյումրիում մեկ դար անց էլ բոլորը հիշում են նշանավոր զվարճախոսների անունները՝ *Պոլոզ Մուգուճ, Ծիտրո Ալէկ* և այլն։ Կարող են մարդուն երբեք տեսած չլինել, բայց մեծերից լսածով այդ մարդուն բնորոշող հատկությունը միշտ հիշատակել։ Ասենք, մեկի ժլատությունը դատապարտելիս կարող են ասել՝ *Դ՛առէլ էս Վասվասա Գ՛էվոլան։*

Քանի որ անորոշությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը, բարբառներում կան բառակազմական ձևեր ու միջոցներ՝ բառն առավել ճանաչելի, բառիմաստն առավել ընկալելի դարձնելու, իմաստային նրբերանգներ արտահայտելու համար՝ ստեղծելով պատկերավոր լեզվամտածողության հիանալի նմուշներ։

Barnasyan Jemma - Several word-formative realities in Karno dialect. - As in the Armenian language in general, among the word-formative means affixation and stem-composition were constantly used in Armenian dialects as well. Armenian language belongs to the number of Indo-European languages that have advanced stem-composition with two and more language notional units (basic types, words, verb frames).

Stem-compositions in the Armenian language are basically originated in three ways: syntactic combinations, word-formative

patterns that exist in the language and word naturalization. The appearance of stem-compositions from syntactic combinations occurs as a result of long-term joint usage and recurrent word repetition that gives the expression more close and consistent meaning and helps in the formation into a single lexical unit.

Our object of study among word-formative means in Karno Dialects is especially interesting realities related compounding. Making the work we relied on the materials written from the dialect speakers during our dialectical expeditions as well as on the informations from rich folklore heritage of Karno dialect.

Барнасян Джемма - Некоторые словообразовательные факты идиом Каринского диалекта. - Как в армянском языке в целом, в армянских диалектах из числа словообразовательных способов постоянно использовались в том числе аффиксация и словосложение. Армянский язык принадлежит к числу индоевропейских языков, которые развивали словосложение с помощью двух и более языковых единиц (основные типы, слова, формы глаголов).

Словосложение в армянском языке в основном происходит в трех формах: синтаксические комбинации, словообразовательные формы, которые существуют в языке, и натурализация слов. Появление словосложений из синтаксических комбинаций является результатом продолжительного совместного использования и регулярных повторений слов, что дает выражению более близкое и согласованное значение и помогает формированию одной лексической единицы.

Объектом нашего исследования являются наиболее интересные факты касающиеся словосложения среди способов словообразования в Каринских диалектах. В процессе работы мы основывались на материалах, написанных говорящими на этом диалекте во время наших экспедиций по изучению диалектов, а также на информации, полученной из богатого фольклорного наследия Каринского диалекта.

Գյուրջինյան Դավիթ
(Հայաստան, Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ)

ՀԱՅ ԱՌԱՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի բարդությունները բաժանվում են երկու տիպի՝ վերլուծական և համադրական[1]: Վերլուծական կազմությունների մեջ առանձնանում են հատվածական բաղադրությունները՝ իբրև յուրատեսակ բարդություններ[2]:

Հատվածական բաղադրությունների բաղադրիչները «նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են, որոնք առաջանում են առաջին անդամի ածանցի

---

[1] **Ա. Ա. Աբրահամյան**, Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում, Պատմա-բանասիրական հանդես, 1972, թ. 3, էջ 44 (ավելի վաղ՝ **Ա. Ա. Աբրահամյան**, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք 1, Երևան, 1962, էջ 47):

[2] «Հատվածական բաղադրություն» եզրույթը գիտական շրջանառության մեջ է մտցրել Էդ. Աղայանը (տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան, Վ. Դ. Առաքելյան, Է. Բ. Աղայան, Վ. Ա. Քոսյան,** *Հայոց լեզու,* I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 402-408): Եզրույթի հատկապես «հատվածական» բաղադրիչն ընդունվել է հայերենագիտության մեջ (տե՛ս, օրինակ, **Ա. Մ. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1982, էջ 302-303, **Հ. Զ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Երևան, 1987, էջ 140, **Լ. Մ. Խաչատրյան**, *Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում*, Երևան, 2011, էջ 34, **Լ. Հովսեփյան**, *Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը*, Երևան, 2016, էջ 26 և այլն):

կրճատումով»[3] (կամ հատումով), ինչպես նաև **և** շաղկապի վերացումով (ոչ բոլոր դեպքերում), ինչպես՝ **չին-տիբեթական, հայ-ռուսերեն, բուլղարա-հունական, պարսկա-հայկական, գերմանա-ֆրանսիական, հյուսիս-ատլանտյան**[4]:

Այս կարգի բաղադրությունների սերող հիմքը ածականի կամ գոյականի հատված[5], կրճատված մասն է, բաղա-

---

[3] Տե՛ս **Էդ. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984, էջք 239, 241:

[4] Առաջին նկատողներից է Տ. Ավետիսյանը, որը գրում է այդ մասին՝ առանց անվանելու. «Վերջին տասնամյակներում հայերենի բառակազմության մեջ նկատելի տարածում գտավ հետևյալ երևույթը. միևնույն ածանց ունեցող բառեր, որոնք միևնույն լրացյալն ունեն, միավորվում են գծիկով և նրանցից առաջինը կորցնում է իր ածանցը, իսկ երկրորդի ածանցը տարածվում է երկուսի վրա», ինչպես՝ **վարչա-քաղաքական** (**Տ. Ավետիսյան**, Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը / Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975, էջ 61):

Ակադեմիական քերականության մեջ Ս. Էլոյանը այս կարգի կազմությունները կոչել է «նոր տիպի համադասական հարադրություններ» (տե՛ս **Վ. Դ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, Երևան, 1979, էջ 269): Ս. Աբրահամյանը դրանք անվանում է «անվանական կիսահարադրական բարդ բառեր» (տե՛ս **Ս. Գ. Աբրահամյան**, *Ժամանակակից գրական հայերեն*, Երևան, 1981, էջ 98): Ա. Մարգարյանը խոսում է սրանց մասին՝ առանց անվանապես տարբերակելու. «Հարաբերական ածականներով կազմված հարադրության տեսակ պետք է համարել նաև այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչը առանց ածանցի կամ կրճատաբար է գործածվում» (տե՛ս **Ա. Մարգարյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1990, էջ 71): Ի տարբերություն մյուսների՝ Ֆ. Խլղաթյանը սրանք (**պատմական-գեղարվեստական, առևտրական (և) արդյունաբերական** և այլն) կոչում է «հատվածական համադասական բառակապակցություններ» (տե՛ս **Ֆ. Հ. Խլղաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ա մաս, Երևան, 2009, էջ 280):

[5] Այստեղից էլ ծագել է անվանման «հատվածական» բաղադրիչը:

դրող հիմքը միշտ բաղադրյալ է, **-ական, -յան, -ային** վերջածանցներով ածական[6] կամ **-երեն (-արեն)** վերջածանցով գոյական:

Ստորադասական հարաբերության դեպքում բաղադրիչներից առաջինը մյուսի լրացումն է, ինչպես **ռազմածովային** (նավատորմ), որտեղ **ռազմական**-ը լրացնում է **ծովային նավատորմ** բառակապակցությանը: Համադասական հարաբերության դեպքում բաղադրիչները միմյանց չեն լրացնում, այլ համազոր են, ինչպես՝ **պատմաբանասիրական** (ուսումնասիրություններ), որտեղ **պատմական**-ը և **բանասիրական**-ը միասին **ուսումնասիրություններ** որոշյալի որոշիչներն են: Այս տեսակի կազմությունները, մասնավորապես **ա** հոդակապ ունեցողները, ժամանակի ընթացքում վերլուծականությունից հաճախ անցում են կատարել համադրականության կամ նման միտում են դրսևորում[7]:

Հատվածական շատ բաղադրություններ արտահայտում են փոխադարձության հարաբերություն՝ տարբեր ժողովուրդների, երկրների, լեզուների քաղաքական, աշխարհագրական և այլ առնչություններ (փոխադարձություն, զուգադրություն և այլն), գրվում են գծիկով, ինչպես՝ **ֆրանսագերմանական** (պատերազմ), **ռուս-հայերեն** (բառացանկ):

---

[6] Տե՛ս **Հ. Զ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Երևան, 1987, էջ 140:

[7] Հմմտ. *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ **Հ. Խ. Բարսեղյան**, Երևան, 2006, էջ 210, **Դ. Գյուրջինյան**, *Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր,* 6-րդ հրատ., Երևան, 2008:

Քանի որ համադասական և ստորադասական հարաբերության հիման վրա կազմված հատվածականները[8] միտում են և հաճախ դառնում համադրական, փոխադարձություն արտահայտող կազմությունները համարվում են բուն հատվածական վերլուծական բաղադրություններ[9]: Դրանք միշտ գրվում են գծիկով, նույնիսկ **ա** հոդակապով սերող հիմքի դեպքում, ինչպես՝ **ռումինա-հունգարական** (առնչություններ), **աղրբեջանա-ղարաբաղյան** (շփման գիծ):

20-րդ դարի սկզբում հատվածական բառակապակցությունները շատ չէին, 20-30-ական թվականներին դրանք տարածվեցին, խորհրդային ժամանակաշրջանում, հատկապես 50-60-ականներից, սրանց թիվը շեշտակի մեծացավ հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինաբանության մեջ[10]: Սրանք տարածվեցին մամուլում և գիտական գրականության մեջ, քանի որ խնայողական՝ կարճ էին:

Առավելապես ռուսերենի ազդեցությամբ հայերենում յուրացվեց բառակազմական (բառակապակցական) այս եղանակը, ձևավորվեց կաղապար, որի միջոցով հարյուրավոր վերլուծական նորակազմություններ սկսեցին գործածվել հայերեն մամուլում, գիտական գրականության մեջ, սովորական դարձան հայախոս հանրության համար:

Երբ փոխադարձ առնչությունների կամ հարաբերությունների մի կողմը Հայաստանն է, հայությունը կամ հայերենը, կրճատվող բաղադրիչը **հայ**-ն է: Այս հատվածականները, բնականաբար, առնչվում են հայությանը, Հայաստանին կամ հայերենին: Դրանք հայելու նման արտացոլում են (հայրենիքում և սփյուռքում ապրող) մեր ժողովրդի և երկրի պատ-

---

[8] Խնայողության նպատակով **հատվածական բաղադրություններ** բաղադրյալ անվանման փոխարեն հաճախ կգործածենք մենաբառ տարբերակը՝ **հատվածականներ**:

[9] Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 244:

[10] Հմմտ. **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 240:

մության շատ դրվագներ, հարաբերությունները հարևան և հեռավոր ժողովուրդների ու երկրների հետ, ինչպես նաև հայերենի առնչությունները ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ:

Հատվածական բաղադրություններում **հայ**-ը նշանակում է՝

ա) «հայկական». կրճատվում է -**ական** վերջածանցը (**հայկ**- բառակազմական հիմքի փոխարեն հանդես է գալիս **հայ** ազգանվանումը), ինչպես՝ **հայ-վրացական** (հարաբերություններ) < հայկ**ական** և վրաց**ական** (հարաբերություններ).

բ) «հայերեն». կրճատվում է -**երեն** վերջածանցը, ինչպես՝ **հայ-ռուսերեն** (բառարան) < հայ**երեն** և ռուս**երեն** (բառարան):

Հարկ է տարբերակել, որ բաղադրություններում «հայկական» նշանակող **հայ**-ը տարբեր կերպ է ընկալվում: Մի դեպքում այդ **հայ**-ը հայությունը (հայերը), հայ ազգն է, ինչպես՝ «**Հայ-թուրքական** ընդհարումները .... քայքայեցին ժողովուրդների տնտեսութիւնը, անբարոյականացրին նրանց» («Կայծ», 01.04.1906), «**Հայ-թուրքական** կոտորածների ժամանակ Նախիջևանի հայոց գյուղերից էլ լավ տուժեցին, բայց էլի գյուղ ու շեն մնացին» («Գլաձոր», 06.11. 1992): Մյուս դեպքում **հայ**-ը Հայաստանն է, ինչպես՝ «Թուրքիան օգտագործում է **հայ-թուրքական** սահմանի փակ լինելը» («Առավոտ», 17.01.2008) և «Ճանապարհի բացումը առանց **հայ-թուրքական** դիվանագիտական հարաբերությունների հաստատման սխալ մոտեցում է» («Առավոտ», 21.12.2004): Խոսքը Հայաստանի և Թուրքիայի սահմանի և դիվանագիտական հարաբերությունների մասին է:

Հայ-ը երբեմն կարող է մեկնաբանվել որպես թե՛ մեկը և թե՛ մյուսը միասնաբար, այսինքն՝ աշխարհասփյուռ հայությունը և Հայաստանը, ինչպես՝ «Ո՞րն է **հայ-թուրքական** հարաբերությունների զարգացման գլխավոր խոչընդոտը» («Ազգ», 08.09. 2004), «Նրանք խոսում են իրենց կյանքի, հույզերի, խնդիրների,

հայ-թուրքական՝ պետք է շեշտեմ ժողովրդական հարաբերությունների մասին» («Առավոտ», 16.07.2004):

Հայ առաջնաբաղադրիչով կազմությունները լինում են երկանդամ և եռանդամ:

Երկանդամ բաղադրություններն ըստ արտահայտած իմաստի բաժանվում են երկու խմբի:

1. Բաղադրություններ, որոնք ցույց են տալիս հայերի՝ հայության կամ Հայաստանի և մեկ այլ ազգի կամ պետության երկկողմ հարաբերություններ, ինչպես՝ **հայ-ասորական** (առնչություններ), **հայ-ֆրանսիական** (կապեր), **հայ-իրանական** (համագործակցություն): Բաղադրության երկրորդ բաղադրիչն առավելաբար –**ական** ածանցով կազմված բառ է, սակայն հանդիպում են նաև -**յան** ածանցով կազմություններ՝ **հայ-ամերիկյան, հայ-լիբանանյան, հայ-իրաքյան** և այլն:

2. Բաղադրություններ, որոնք ցույց են տալիս հայերենի և ուրիշ լեզուների առնչություններ, ինչպես՝ **հայ-անգլերեն** (բառարան), **հայ-գերմաներեն** (զրուցարան): Սրանք նախորդների համեմատ սահմանափակ կիրառություն ունեն:

Հանդիպում են նաև եռանդամ կազմություններ, որոնք ցույց են տալիս՝

ա) մի կողմից հայերի (հայության կամ Հայաստանի) և մյուս կողմից՝ երկու այլ ազգերի (կամ պետությունների) եռակողմ հարաբերություններ, ինչպես՝ **հայ-ռուս-ադրբեջանական** (բանակցություններ), **հայ-ռուս-իրանական** (գործընկերություն), **հայ-ռուս-վրացական** կամ **հայ-վրաց-ռուսական** (փոխհարաբերություններ)[11],

[11] Հատվածական բաղադրության առաջին և երկրորդ բաղադրիչների –**ական** ածանցը սովորաբար կրճատվում է: Ավելի վաղ կազմություններում կրճատվում է միայն առաջին բաղադրիչի ածանցը, ինչպես՝ «Դրանից հետո **հայ-վրացական-աղվանական** միացյալ բանակը արշավում է դեպի Ալանաց դուռը» (Ս. Սարգսյան, Հայ ռազմա-

բ) հայերենի և ուրիշ լեզուների առնչություններ, ինչպես՝ **հայ-ռուսերեն-լատիներեն** բառարան:

Եռանդամ բաղադրությունները քիչ են ոչ միայն **հայ** բաղադրիչի դեպքում, այլև առհասարակ. հմմտ. **վրաց-աղրբեջանա-թուրքական** համաժողով: **Հայ** առաջնաբաղադրիչով քառանդամ հատվածականներ չեն հանդիպում[12]:

Բառակապակցական (բառակազմական) այս եղանակը՝ ածանցի հատումով բաղադրության ստեղծումը, հայոց լեզվում համեմատաբար նոր իրողություն է (ինչպես հապավումը). նրա պատմությունը հարյուրամյակից քիչ ավելի ժամանակ է ընդգրկում:

Քսաներորդ դարի սկզբի հայկական մամուլում արդեն հանդիպում են **հայ** առաջնաբաղադրիչով հատվածականներ: Բնագրային հետևյալ օրինակը հստակ ցույց է տալիս, որ **հայ-թուրքական** կազմությունը նոր է եղել դարասկզբին. «.... ինչպէս սկսվեց և ինչպէս շարունակվեց XX դարի այն զարհուրելի չարագործութիւնը, որ արդէն յայտնի է լրագրութեան մէջ **հայ-թուրքական** անունով» («Մշակ», 12.02. 1905): Հմմտ. նաև «Հաղորդում եմ **հայ-թուրքական** կոտորածի փետրվարի 9-ի մանրամասնութիւնները» («Մշակ», 19.02. 1905), «Հ. Նախիջեւան.- **Հայ-թուրքական** թշնամութիւնը շարունակւում է, տեղի են ունենում հատ-հատ սպանութիւններ» («Նոր խոսք», 27.08.1906), «Մարդասիրական Ընկերութեան դահլիճում նշա-

---

կան արվեստի պատմություն, Երևան, 1969) (ըստ ԱՐԵՎԱԿ-ի՝ Արևելահայերենի ազգային կորպուսի. www.eanc.net):

[12] Քառանդամ հատվածականներն առհասարակ խիստ սակավադեպ են: Հմմտ. «Մառը մեկնում է Պետերբուրգ, որպես կովկասյան թոշակառու և ընդունվելով տեղի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը, գրանցվում չորս բաժնում (**արաբա-պարսկա-թուրք-թաթարական**, արաբա-հրեա-սիրիական, հայ-վրացական և սանսկրիտ-պարսկա-հայկական» (**Է. Բ. Աղայան**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, էջ 85):

նակւած էր ժողով **հայ-թուրքական** յանձնաժողովի չորս անդամներ ընտրելու» («Կայծ», 12.05.1906):

Թվում է՝ հենց **հայ-թուրքական**-ն է **հայ** սկզբնաբաղադրիչով առաջին հատվածական կազմությունը:

Հատվածական բաղադրությունների թիվը զգալապես ավելացավ անկախ պետականության հաստատումից հետո, երբ Հայաստանը սկսեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել աշխարհի տարբեր (անգամ ամենահեռավոր) պետությունների հետ: Նախկինում գործածության մեջ եղած հատվածական մի շարք բաղադրություններ նոր բովանդակությամբ սկսեցին հանդես գալ. եթե նախկինում **հայ**-ը նշանակում էր «հայեր, հայություն», ապա պետականության վերահաստատումից հետո նաև «Հայաստան, Հայաստանի Հանրապետություն»: Այսպես՝ «Բեռլինում կայացավ այդքան սպասված **հայ-գերմանական** տնտեսական ֆորումը, որի աշխատանքներին մասնակցելու ժամանակ պատվիրակությունը ղեկավարեց ՀՀ վարչապետը» («Ազգ», 19.08.2005), «Այսօր Ազգային ժողովում ձևավորման փուլում է **հայ-բրազիլական** պատգամավորական խումբը» («Ազգ», 29.11.2007):

Նախորդ տասնամյակներին անհնարին էր պատկերացնել փոխադարձության հարաբերությամբ մի շարք հատվածականների կազմումը: Բազմաթիվ կազմություններ նորագույն ժամանակի ծնունդ են, քանի որ հայերը տվյալ երկրի և ժողովրդի հետ առանձնակի առնչություն չունեին, իսկ Խորհրդային Հայաստանը որոշ երկրների հետ ուղիղ կապեր շատ դեպքերում չուներ: Օրինակ՝ «Թե ինչպիսի արդյունք տվեց **հայ-կորեական** գործարար հանդիպումը...» («Ազգ», 28.12.2004), «Հայերի մասին նորվեգացիները տեղեկացել են երկրաշարժից հետո, երբ նրանք հայտնվել են Կարմիր խաչի ճամբարներում: Այդ ժամանակ Կարմիր խաչի հետ հիմնեցինք **հայ-նորվեգական** մշակութային միություն» («Առավոտ», 05.11.2005):

Կան **հայ** սերող հիմքով հատվածական կազմություններ, որոնք պատմական բնույթ ունեն: Երկրորդ եզրում գործածված ածականը հաճախ վերաբերում է երկրի և ժողովրդի, որոնք հեռացել են պատմական թատերաբեմից: Այսպես՝ Հայկական սովետական հանրագիտարանում (հ. 6, Երևան, 1980) հանդիպում են՝ **հայ-հոնական դաշինք 450** (էջ 196), **հայ-պոնտական դաշինք մ.թ.ա. 94** (էջ 197): Հմմտ. նաև «**Հայ-բյուզանդական** հարաբերությունները և «Մարաց իշխանը» 646 թ.» («Պատմա-բանասիրական հանդես, 1983, հ. 4, վերնագիր»), «.... 1268 թ. Անտիոք քաղաքում կնքված **հայ-մամլուքյան** հաշտության պայմանագիրը և դրա բովանդակային դրույթները» (Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, 1-2, էջ 126):

Անդրադառնանք **հայ** առաջնաբաղադրիչով հատվածականների հաճախականությանը: Դա պարզելու համար դիմենք արևելահայերենի 110 միլիոն բառագործածություն ունեցող կորպուսին, որի տրամադրած նյութը որոշակի գաղափար կարող են տալ:

Ամենաշատը գործածվել է **հայ-թուրքական**-ը, որը հանդիպում է 3093 համատեքստում: Սրանց պիտի գումարել տարբերակային **հայ-թրքական**-ը՝ 115 գործածությամբ (ի դեպ, ունենք նաև **հայ-տաճկական**, որը գործածվել է ընդամենը 1 անգամ): Այս ցուցանիշը լիովին հասկանալի և բացատրելի է, հարյուրամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանը գտնվել է Թուրքիայի տիրապետության ներքո, Թուրքիան Հայաստանի հարևան պետությունն է, և Օսմանյան Թուրքիան է իրականացրել մեծագույն ոճրագործությունը հայության նկատմամբ՝ 1915-1922 թվականների ցեղասպանությունը՝ իր հայրենի հողի վրա բնաջնջելով արևմտահայությանը և հայրենազրկելով նրան: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը օրակարգային է երկու հարևան ժողովուրդների և միջազգային հանրության համար:

Երկրորդ տեղում **հայ-ռուսական**-ն է (1175 գործածություն): Սա բնական է, քանի որ Արևելյան Հայաստանի վերջին երկու հարյուրամյակների պատմությունը սերտորեն առնչվում է Ռուսաստանին և ռուս ժողովրդին:

Երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցնում են հարևան մյուս ժողովուրդների անուններից կազմված հատվածականները՝ **հայ-վրացական** (772 գործածություն) և **հայ-ադրբեջանական** (707 գործածություն): Հինգերորդը **հայ-ամերիկյան**-ն է (364 գործածություն). երկրորդ եզրում աշխարհի առաջատար երկրի անունն է. այս երկրում է գտնվում հայ սփյուռքի ամենազորավոր և ստվար համայնքը: Ամենահաճախականների ցանկը եզրափակում է Հայաստանի հարավային հարևան երկրի անվամբ բաղադրված **հայ-իրանական**-ը (364 գործածություն, սրան կարող ենք գումարել **հայ-պարսկական**-ը, որը, թեև զարմանալի է, կորպուսում բարձր հաճախականություն չունի՝ 24):

Ըստ նվազող հաջորդականության հետևյալ պատկերն ենք ունենում.

հայ-թուրքական - 3093	**հայ-կորեական** - 31
հայ-ռուսական – 1175	**հայ-չինական** – 28
հայ-վրացական – 772	**հայ-սիրիական** - 28
հայ-ադրբեջանական – 707	**հայ-քրդական** - 25
հայ-ամերիկյան - 364	**հայ-պարսկական** – 24
հայ-իրանական – 326	**հայ-լեհական** - 22
հայ-իտալական - 128	**հայ-հռոմեական** - 19
հայ-գերմանական - 111	**հայ-մոնղոլական** - 17
հայ-ֆրանսիական - 103	**հայ-հունգարական** - 16
հայ-արաբական – 77	**հայ-ռումինական** - 16
հայ-եգիպտական – 72	**հայ-բելգիական** - 16
հայ-եվրոպական – 67	**հայ-շվեյցարական** - 15
հայ-բուլղարական – 54	**հայ-ղազախական** - 13

հայ-ուկրաինական - 51	**հայ-պոնտական -** 12
հայ-հնդկական - 51	**հայ-բրիտանական -** 12
հայ-պարթևական - 42	**հայ-իսպանական -** 12
հայ-բյուզանդական – 37	**հայ-լիտվական** - 12
հայ-լիբանանյան - 32	**հայ-հրեական –** 10
հայ-թաթարական - 32	**հայ-ավստրիական -** 10
հայ-չեխական - 31	**հայ-կիպրական** - 10

41 հատվածական կազմություններ ԱՐԵՎԱԿ-ում ներկայացվել են մինչև 10 գործածությամբ: Դրանք են (այբբենական կարգով ներկայացնում ենք նվազող հաջորդականությամբ)՝ **հայ-իրաքյան, հայ-սլավոնական, հայ-ուրարտական** – 8, **հայ-էստոնական, հայ-խեթական**– 7, **հայ-աբխազական, հայ-սլովակյան, հայ-պորտուգալական** - 6, **հայ-ասորական, հայ-ասորեստանյան, հայ-թաիլանդական / թայլանդական, հայ-իսրայելական, հայ-հոլանդական, հայ-ղփչաղական, հայ-սերբական, հայ-ֆիննական**– 5, **հայ-անգլիական** – 4, **հայ-եթովպական, հայ-նորվեգական, հայ-ռուսաստանյան, հայ-սելջուկյան, հայ-տաջիկական** – 3, **հայ-իռլանդական, հայ-շումերական հայ-վիետնամական** – 2, **հայ-աֆղանական, հայ-բասկյան, հայ-դանիական, հայ-էմիրաթյան, հայ-լատվիական, հայ-խորվաթական, հայ-կուբայական, հայ-ղրղզական, հայ-մոլդովական, հայ-նեպալական, հայ-չեխոսլովակյան, հայ-չերքեզական, հայ-սկանդինավյան, հայ-տաճկական, հայ-ուրուգվայական, հայ-օսմանական** – 1:

ԱՐԵՎԱԿ-ում չկան մասնավորապես **հայ-ալբանական, հայ-ավստրալական, հայ-բիրմայական / հայ-մյանմայական, հայ-թուրքմենական, հայ-ինդոնեզական, հայ-հորդանանյան, հայ-մեքսիկական, հայ-չիլիական, հայ-պաղեստինյան, հայ-սինգապուրյան, հայ-սուդանյան, հայ-վենեսուելական, հայ-ուզբեկական, հայ-քուվեյթյան** հատվածականները: Հատվածականներ կազմությունները հուշում են՝ ա) տվյալ (բաղա-

դրության երկրորդ եզրի բառակազմական հիմք երկրանուն-ների նախատիպ) երկրներում հայեր են ապրում (կամ ապրել են), այդ երկրանուններով և **հայ** վերջնաբաղադրիչով բառեր ունենք, ինչպես՝ **ալբանահայ, ավստրալահայ, ինդոնեզահայ, հորդանանահայ** և այլն, բ) Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ ունի այդ երկրների հետ: Սրանք վկայում են, որ գոյություն են ունեցել (կամ ունեն) տարատեսակ հարաբերություններ: Ուստի ենթադրելի է փոխադարձության իմաստով հատվածական բաղադրությունների գոյությունը:

Թվարկված հատվածականները, ինչպես սպասելի էր, իրականում կան հայոց լեզվում (դրանք կա՛մ ուշ են կազմվել, կա՛մ էլ ուղղակի չեն հայտնվել կորպուսում՝ ընդգրկված նյութի մեջ գործածված չլինելու պատճառով): Ահա օրինակներ տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներից՝ «Նախարարները ստորագրեցին **հայ-ավստրալական** առաջին երկկողմ փաստաթուղթը» (http://hetq.am/arm/news/17508), «Կարճ **հայ-թուրքմենական** հարաբերությունների մասին» («Առավոտ», 24.08.2017), «**Հայ-ինդոնեզական** հարաբերությունները խորացել են» («Առավոտ», 16.09.2017), «Մահմուդ Աբբասը .... հանդիպման ընթացքում խոսել է **հայ-պաղեստինյան** բարեկամության մասին» (www.arevelk.am/am/content/8/682):

Այդպիսիք կան նաև պատմագիտական աշխատություններում (չկան ԱՐԵՎԱԿ-ում), ինչպես՝ «**Հայ-հաբեշական** հարաբերությունների հնության մասին է վկայում արևելյան մի ավանդություն» (Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 146), «**Հայ-եթովպական** հարաբերությունները հիմնականում սկզբնավորվել են կրոնական հիմքի վրա» (Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Երևան, 2003, էջ 343): Բաղադրության երկրորդ եզր են դարձել երկրի տարբեր անունները՝ Հաբեշստան և Եթովպիա: Վերոբերյալ բնագրային օրինակները որոշակի գաղափար են տալիս **հայ**

առաջնաբաղադրիչով կազմությունների կապակցելիության մասին:

Հայ առաջնաբաղադրիչով հատվածականների կապակցելիությունը քննելիս նկատելի է, որ դրանք ամենից շատ կապակցվում է **հարաբերություններ** բառաձևին, որն ստանում է **միջպետական**, **քաղաքական**, **տնտեսական**, **առևտրատնտեսական**, **բարիդրացիական**, **բարեկամական**, **եղբայրական**, **եկեղեցական**, **ազգամիջյան**, **բարդ**, **պատմական**, **գրական**, **թշնամական** և նման այլ լրացումներ: Առհասարակ փոխադարձության իմաստի թելադրանքով լրացյալը հաճախ հոգնակի թվով է դրվում՝ **կապեր, առնչություններ, շփումներ, փոխշփումներ, աղերսներ:**

Սահմանակից պետությունների առնչությամբ կապակցվող բառերի մեջ հաճախական է **սահման** բառը, այսպես՝ **հայ-թուրքական, հայ-իրանական, հայ-ադրբեջանական, հայ վրացական սահման**: Բարեկամ ժողովուրդների անուններից բաղադրված հատվածականների հետ գործածվում են բարեկամություն, եղբայրություն բառերը (օրինակ՝ **հայ-ռուսական բարեկամություն**), թշնամիների և հակառակորդների հետ՝ **հակամարտություն, պատերազմ, ընդհարում** (օրինակ՝ **հայ-ադրբեջանական հակամարտություն**) և այլն:

Ըստ բովանդակության կապակցվող լեզվական միավորները կարող ենք բաժանել երկու խմբի՝ ա) դրական (և չեզոք) իմաստ արտահայտողներ և բ) բացասական իմաստ արտահայտողներ: Օրինակ՝ **հայ-վրացական** հատվածական բաղադրությանը կապակցվող բառերն արտահայտում են՝

ա) դրական (և չեզոք) իմաստ՝ **միացյալ բանակ / զորքեր / զորագունդ / ուժեր / աշխարհազոր, միավորյալ թագավորություն / պետություն, առնչություններ, բարեկամություն, եղբայրություն, ռազմական դաշինք, սահման, տնտեսական / գործարար / մշակութային / գիտական / համագործակցություն, նախաձեռնություն, դպրոց, համատեղ ձեռնարկություն,**

բանակցություններ, գրական / մշակութային / առևտրատնտեսական կապեր, միջկառավարական / միջխորհրդարանական հանձնաժողով, գործարար համաժողով, խորհրդակցություններ, համաձայնություն, ընկերություն, աշխատանքային խումբ և այլն,

բ) բացասական՝ **բախումներ, դիմակայություն**[13], **հակամարտություն, պատերազմ, անհաշտություն, ընդհարում, սահմանային / եկեղեցական վեճ(եր), վիճահարույց խնդիրներ, հերթական կոնֆլիկտ, հակասություն:**

Դրական (և չեզոք) բովանդակություն ունեցող միավորներն անհամեմատ շատ են և հաճախական: Դրանք իրապես արտացոլում են հայ-վրացական դարավոր առնչությունները: Հարկավոր է նկատի ունենալ, որ հիշյալ հատվածականները ցույց են տալիս ոչ միայն փոխադարձության, այլև որոշ դեպքերում միասնություն:

Բացասական բովանդակություն ունեցող միավորները փոքրաթիվ են և սահմանափակ գործածություն ունեն: Այսպես, օրինակ **հայ-վրացական ընդհարում(ներ)** բառակապակցությունը ԱՐԵՎԱԿ-ում հանդիպում է 10 անգամ, **հայ-վրացական բախումներ**-ը՝ 4, իսկ **հայ-վրացական հակամարտություն**-ը և **առճակատում**-ը՝ ընդամենը 1-ական[14]:

Եզրակացություններ:

1. 20-րդ դարի սկզբի մամուլում արդեն գործածվում էին **հայ** առաջնաբաղադրիչով հատվածական կազմություններ. ամենայն հավանականությամբ առաջինը **հայ-թուրքա-**

---

[13] Այն կարող է նաև չեզոք իմաստ ունենալ. «Երևանում կկայանա **հայ-վրացական ֆուտբոլային դիմակայությունը**» («Հայկական ժամանակ», 09.07.2005)

[14] **Հայ** առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունների կապակցելիությանը և բառարանային մշակմանը հանգամանորեն կանդրադառնանք առանձին:

կան-ն է (այս կարգի բաղադրությունների մեջ սա ամենահաճախականն է):

2. Արևելահայերենում այսօր շրջանառության մեջ են **հայ** առաջնաբաղադրիչով 100-ից ավելի հատվածական բաղադրություններ: Դրանք արտահայտում են հիմնականում փոխադարձության հարաբերություն, ինչպես նաև միասնություն, զուգադրություն:

3. Երկբաղադրիչ և եռաբաղադրիչ հատվածական կազմություններում **հայ**-ը նշանակում է «հայկական» (մեկնաբանվում է հայություն, Հայաստան, նաև երկուսը միասնաբար) և «հայերեն»:

4. **Հայ** առաջնաբաղադրիչով հատվածական կազմությունների միջոցով կարելի է որոշակի գաղափար կազմել հայ ժողովրդի ու Հայաստանի և այլ ժողովուրդների ու երկրների ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հարաբերությունների, հայերենի և ուրիշ լեզուների առնչությունների մասին:

5. **Հայ** առաջնաբաղադրիչով հատվածականները կապակցվում են դրական (և չեզոք) և բացասական իմաստ արտահայտող բառերի հետ, ամենից հաճախ՝ **հարաբերություններ, առնչություններ, կապեր, համագործակցություն, սահման, համաձայնագիր, պայմանագիր, բարեկամություն, եղբայրություն** ... (դրական և չեզոք) և **հակամարտություն, կոտորած, ընդհարում, բախում, պատերազմ, թշնամություն** ... (բացասական):

Гюрджинян Давид - Усеченные сложные образования с первым компонентом *հայ* (“армяно-”, “армянско-”).- В статье исследуются усеченные аналитические сложные образования (сочетания) армянского языка с первым компонентом *հայ* (“армяно-”, “армянско-”): Հայ-թուրքական “армяно-турецкий”, հայ-ռուսերեն “армянско-русский” и т.д., которые широко употребляются в научных текстах и в языке прессы.

Модель образования данных сложных слов в армянском языке появилась в начале XX века по всей вероятности под влиянием аналогичных образований русского языка, а ее развитие и распространение связаны с советским периодом и периодом независимости Армении. В настоящее время насчитывается более ста таких образований, в которых четко отражаются связи армянского народа и Армении с другими народами и странами мира.

Изучаемые сложные образования с первым компонентом *հայ* подвергаются структурно-семантическому анализу. Выявляется и анализируется также частотность их употребления.

Gyurjinyan Davit - Truncated compounds with the first component *հայ* (“armenian”).- This article studies the truncated analytical compound formations of the Armenian language with the first component *հայ* (“Armenian”), such as հայ-թուրքական “Armenian-Turkish”, հայ-ռուսերեն “Armenian-Russian”, etc., which are widely used in the scientific texts and media language.

The model of formation of the following compound words appeared in the beginning of the 20th century in the Armenian language, most likely under the influence of analogical formations of the Russian language, and its development and spread are related to the Soviet period and the period of independence. At present, there are more than 100 such entities, which clearly reflect the ties of the Armenian people and Armenia with the other nations and countries of the world.

The studied compound formations with the first component *հայ* are analyzed structurally and semantically. The frequency of their use is identified and analyzed, too.

Գրիգորյան Գայանե
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԵՐԴԻ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՆԹԱԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՄՊԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

(փորձառական հետազոտություն)

Սույն փորձառական հետազոտության նպատակն է համեմատել Բերդի և Գյումրու ենթախոսվածքների արտասանության տեմպը, ինչպես նաև գրական արևելահայերենի և նշված բարբառների տևողության տվյալները՝ բառի, նախադասության և տեքստի սահմաններում: Այս պարագայում հնչաբառը, հնչադասությունը և հնչատեքստը դիտարկում ենք որպես տեղեկատվական միավորներ: Այդ նպատակով ընտրել ենք գրական լարևելահայերենով երկու տեքստեր, որոնք վերածել ենք նշված 2 բարբառների: Հաղորդավարները և բարբառախոսները կարդացել են տեքստերը, որոնք ձայնագրվել են: Այնուհետև դրանք մտցվել են «Պռաատ»[1] ծրագրի մեջ, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության և համադրության (սինթեզի)համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչամիավորների՝ հնչյունների, հնչաբառերի, հնչադասությունների և հնչախոսքի տևողությունը, ուժգնությունը, հիմնական տոնի հաճախականությունը, ֆորմանտները, տեսնել սպեկտրները և կատարում է այլ ֆունկցիաներ:

---

[1] *Պռաատ (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել)* ծրագիրը մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

Ի դեպ, մի շարք հարցումներից պարզվել է, որ ամենից շատ այժմ փորձառական հնչյունաբանական լաբորատորիաներում օգտագործում են «Պռաատ» ծրագիրը:

Ձայնագրությունները կատարվել են ոչ մասնագիտական լաբորատորիայում (տնային պայմաններում, գրասենյակում և այլն), նյութը կարդացել են բարձրագույն կրթությամբ, հայերենին և նշված բարբառներին լավ տիրապետող 15 հաղորդավարներ՝ 5 գրական և 5-ական յուրաքանչյուր բարբառից: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել է բառի, նախադասության և տեքստի տևողության հաշվարկներ և տվյալների մշակում:

Վերլուծվել է ավելի քան 945 [(2+13+6)x3x15] միավոր՝ գրական և բարբառային 2 տարբերակների տեքստերը, բառերը և նախադասությունները՝ ընդհանուր 15 հաղորդավարների ընթերցմամբ: Փորձարկման են ենթարկվել 2 տեքստեր, որոնք միասին կազմում են մոտ 200 բառ: Վերլուծվել են 39 բառեր (13-ական 3 տարբերակներում), որոնք նույնն են գրական և բարբառային տեքստերում: Փորձարկման ենթարկված տեքստերից առանձնացվել են 6 նախադասություններ, միասին՝ 18, որոնք բառապաշարային առումով գրեթե նույնն են: Տեքստերից մեկը ժամանակակից գրական արևելահայերենով է, մյուսը՝ Աստվածաշնչից վերցված Աբելի և Կայենի պատմությունը:

Տեքստերը, բառերը և նախադասությունները վերլուծելիս սկսեցինք տեքստերից՝ նպատակ ունենալով պատկերացում կազմել տեղեկատվության տեմպի ընդհանուր վիճակի մասին, այսինքն՝ հաշվարկել, թե որքան է տևում նույն տեղեկատվական միավորը հաղորդելու ժամանակը նշված բարբառներում և արդի գրական արևելահայերենում: Տեքստերի վերլուծությունից հետո անցանք բառերին: Ենթադրվում էր, որ նույն օրինաչափությունը կգործի նաև բառերի պարագայում: Փորձառական հետազոտության արդյունքները հաստա-

տեցին մեր ենթադրությունները: Բառերից հետո անցանք նախադասությունների տևողության հաշվարկներին և տվյալների մշակմանը: Նույնկերպ, տեղեկատվության ժամանակը գրականում և 2 բարբառներում ընթանում էր նույն օրինաչափությամբ:

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել տեքստի տևողության փորձառական ինչյունաբանական հաշվարկների միջինացված տվյալները:

Տեքստի տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով

	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1	30.15	35.17	36.39
Տեքստ 2	42.69	50.59	52.69



Տվյալներից երևում է, որ տեքստի տևողության ամենամեծ ցուցանիշները գրանցվել են Բերդի ենթախոսվածքի

համար, որը նշանակում է, որ նրանք խոսում են ամենից դանդաղը՝ համեմատած գրական արևելահայերենի և առավել ևս՝ Գյումրիի ներկայացուցիչների հետ:

Նախադասության տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով

	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1	7.95	9.32	10.18
Տեքստ 2	5.76	6.77	7.12



Նույն օրինաչափությունը գործում է նաև նախադասության պարագայում: Արագ՝ Գյումրի, միջին՝ գրական, դանդաղ՝ Բերդ:

Բառի տևողության միջինացված տվյալները միլիվայրկյաններով

	Գյումրի	Գրական	Բերդ
Տեքստ 1 և 2	0.41	0.43	0.51

Բառի տևողության տվյալների համեմատությունը գրականի և 2 բարբառների միջև ևս հաստատում է այն փաստը, որ գյումրեցիները բառն արտասանում են ավելի արագ, քան բերդցիները. այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը:

Այսպիսով, մեր փորձառական հետազոտությունը հանգեցրեց հետևյալ եզրակացություններին.

1. Քննարկելով գրական արևելահայերենի, ինչպես նաև Բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի Շամշադնի խոսվածքի Բերդի ենթախոսվածքի և բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Կարնո բարբառի Շիրակի խոսվածքի Գյումրու ենթախոսվածքի տեմպի հարցը՝ եկանք այն եզրակացության, որ ամենից արագ խոսում են Գյումրու ենթախոսվածքի ներկայացուցիչները, իսկ ամենից դանդաղ՝ Բերդի ենթախոսվածքի կրողները: Այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը: Օրինակ, ընդհանուր տեքստի տևողությունը Գյումրու ենթախոսվածքում 30.15 մ/վրկ է, գրականում՝ 35.17, իսկ Բերդի ենթախոսվածքում՝ 35.95 մ/վրկ առաջին տեքստում և համապատասխանաբար՝ 42.69 մ/վրկ, 50.59 մ/վրկ և 52.69 մ/վրկ երկրորդում:



2. Տրամաբանական էր ընդունել այն փաստը, որ քանի որ տեքստերի տևողություններն ունեն որոշակի օրինաչափություն բարբառների և գրական խոսքի տևողության պարագայում, ապա նույն բանը պետք է տեղի ունենար նաև նախադասության և բառի տևողությունները համեմատելու պարագայում: Քննարկելով գրական արևելահայերենի և երկու բարբառների ենթախոսվածքների տեմպի հարցը նախադասության սահմանում՝ եկանք այն եզրակացության, որ կրկին ամենից արագ խոսում են Գյումրու ենթախոսվածքի ներկայացուցիչները, իսկ ամենից դանդաղ՝ Բերդի ենթախոսվածքի կրողները: Այս երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրական արևելահայերենը: Օրինակ, նախադասության միջին տևողությունը Գյումրու ենթախոսվածքում 7.95 մ/վրկ է, գրականում՝ 9.32, իսկ Բերդի ենթախոսվածքում՝ 10.18 մ/վրկ առաջին տեքստում և համապատասխանաբար՝ 5.76 մ/վրկ, 6.77 մ/վրկ և 7.12 մ/վրկ երկրորդում:



«Այսօր երեկոյան ինձ զանգահարեց իմ վաղուցվա ընկերը։» նախադասության ձայնապատկերը:

3. Առանձին բառերն ուսումնասիրելիս կրկին առկա է նույն օրինաչափությունը. բերդցիների արտասանած բառերի տևողությունը շիրակցիների համեմատ 0.1 միլիվայրկյանով ավելին է: Երկուսի համեմատ միջին դիրք է գրավում գրականը:



«Յէրկար» բառի ձայնապատկերը:

Grigoryan Gayane – The comparison of tempo of Gyumri and Berd speeches. – The purpose of the article is to compare the tempo of Gyumri and Berd speeches, as well as to collate the data of duration of mentioned dialects in frame of the word, the sentence and the text. The experimental research led to the conclusion that the Gyumri people are the fastest speakers, and Berd's people speak slower. The Eastern Armenian literary language occupies an average position in comparison with these two dialects.

Григорян Гаяне – Сравнение темпа говор Гюмри и Берд . – Цель статьи - сравнить темпы говоров Гюмри и Берда, а также сопоставить длительности диалектов в рамках слова, предложения и текста. Экспериментальные исследования привели к выводу о том, что гюмрийцы - самые быстроговорящие, а люди Берда говорят медленнее. Восточноармянский литературный язык занимает среднюю позицию по сравнению с этими двумя диалектами .

Գրիգորյան Սուսաննա
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ» ԶՄԵՐԱՆ ՀԱՏՈՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Տաթևացին դեռ իր օրերում ազգերին և ժողովուրդներին միմյանցից տարբերող բնական հատկանիշների մեջ բացի աշխարհագրական սահմանից, նշում է նաև լեզուն: Սրանց կարելի է ավելացնել պատկերավոր մտածողությունը, որ ժողովրդից ժողովուրդ այնքան տարբեր է, որ բառացի թարգմանությունը ուղղակի զավեշտի կարող է հանգեցնել. ասենք հայերենում շատ տարածված «տնաշենի տղա» դարձվածն օրինակ ռուսերենում կինչի «сын домостроителя», որ ռուսախոս մարդու զարմանքը առաջ կբերի:

Եվ լեզվական ցանկացած երևույթ քննելիս առաջ է գալիս մի հարց, որին ոչ մի կերպ հնարավոր չէ հստակ պատասխանել. խոսքը լեզվական երևույթի առաջացման ժամանակին և դրդապատճառներին է վերաբերում, որին ուսումնասիրողները առանց բացառության միշտ մոտավոր պատասխան են տալիս:

Ինչքա՞ն ժամանակ պետք է մարդը անցներ, որպեսզի ունենար գրաբարի նման բարդ լեզվական համակարգ: Ինչքա՞ն ժամանակ պետք է անցներ, որ այդ համակարգը տարրալուծվեր, ծներ ժառանգորդներ և վերընձյուղվեր բարբառների մեջ: Սրանք փիլիսոփայական հարցեր չեն, որոնց կարելի է երկդիմի պատասխանել, սակայն ճշգրիտ պատասխանել սրանց, նույնպես հնարավոր չէ: Եվ չնայած մարդու բազմաթիվ հայտնագործություններին և քաղաքակրթության

զանազան ձեռքբերումներին, այս հարցերի պատասխանները այսօր էլ հստակ չեն, եթե չասենք՝ անհնարին: Դրանցից մեկը կեսկատակ-կեսլուրջ հաճախ է տրվում. ո՞ր պահից և ո՞ր ավազահատիկից հետո է ավազաբլուրը դադարում բլուր լինելուց: Կա՞ մի ավազահատիկ, որ իր վրա կրում է այդ փոխակերպման որոշակիությունը: Այստեղ փիլիսոփայական լեզվով ասած՝ գործ ունենք դիլեմայի հետ, այսինքն, յուրաքանչյուր ավազահատիկից հետո բլուրն այլևս նախկինը չէ, սակայն արտաքուստ նաև նախկինն է, այսինքն՝ փոփոխության պահը ոչ մի կերպ հնարավոր չէ ճշգրիտ ասել:

Այսքան անորոշ է նաև լեզվական երևույթի առաջացման պահը արձանագրելը, չնայած փորձում ենք քննարկել նրանց ընթացքը, ծագումնաբանությունը կամ դրդապատճառները: Այս անորոշությունը կա նաև դարձվածքի՝ որպես լեզվական երևույթի առաջացման պարագայում, եթե փորձենք դարձվածքի առաջացման կոնկրետ ժամանակ նշել կամ արձանագրել, թե ո՞ր պահին և ի՞նչ հանգամանքներում է ձևավորվել փոխաբերական բառակապակցությունը: Պակաս կարևոր չէ հասկանալ նաև, թե ինչո՞ւ է լեզվի կրողը զգում փոխաբերական խոսքի կարիքը: Ինչո՞ւ, օրինակ, միջնադարի հայ մարդը «մեռնել» փոխարեն ասել է «մահ ճաշակել», աղոթելու փոխարեն՝ «աղօթս նուիրել», մեղքի պատճառի փոխարեն՝ «արմատ մեղաց» և այլն: Որքան էլ որ գիտնականը կոչված է վեր հանելու երևույթների պատճառահետևանքային կապերը, լեզվական երևույթների ճշգրիտ պատասխաններ, սակայն, ոչ միշտ է հնարավոր տալ:

Դարձվածքի պարագայում հստակ է մի հանգամանք. գործ ունենք երևույթների անսպասելի համատեղման հետ, կամ որ ավելի ճիշտ է առարկային մի այլ առարկայի գործողության վերագրման հետ, որտեղ նկատված «ներքին կապի» հիման վրա՝ փորձ է արվում բառն օգտագործել նմանեցված երևույթի իմաստային դաշտում: Ասենք, ունենք «սրտխառ-

նոց» և «փսխել» երևույթները: Ունենք նաև «սիրտ հետ տալ» դարձվածքը, որտեղ կերակուրը ստամոքսից վերադարձնելու գործողությունը վերագրված է սրտին, նկատելով, որ այդ երևույթի ժամանակ զգացողություն է լինում, որ «սիրտը դուրս է գալիս»:

Ինչպես նկատվել է ուսումնասիրողների կողմից, դարձվածքի առաջացման պատճառ են դառնում հիմնականում **փոխաբերությունը, համեմատությունը, չափազանցությունը, շրջասությունը** և այլ ոճական հնարանքներ:

Ծագումնաբանական առումով դրանք հիմականում ունենում են հեղինակային ծագում, սակայն լեզվի խոսակցական ակտիվ շերտում հայտնվում և տարածում են ստանում այն դարձվածքները, որոնք մոտ են ժողովրդական մտածողությանը:

Սրանց մեջ մի զգալի մաս են կազմում **աստվածաշնչյան ծագում** ունեցող դարձվածքները, որոնք ընդհանրական գործածություն են ստացել թերևս վաղ միջնադարից, ինպես՝ **արգելված պտուղ, Նոյի ագռավ, քավության նոխազ**, **Սոդոմ-Գոմոր**, **բարի սամարացի**, **փարիսեցի մարդ**, **խաղաղության աղավնի**, **դրախտի դուռ, դժոխքի բաժին** և այլն: Այս դարձվածքներից յորաքանչյուրի հիմքում աստվածաշնչյան ծանոթ մի պատում կա, որոնց շարունակական պատմելն ու կրկնելը պատճառ է դարձել, որ առաջանան այդ պատմությունների խորհուրդները ընդհանրացնող դարձվածքները:

Դարձվածքների թիվը Գրիգոր Տաթևացու միայն «Գիրք քարոզութեան» Ձմերան հատորում գերազանցում է մի քանի տասնյակը, որոնց մեջ գերակշիռ թիվ են կազմում անվանական և բայական դարձվածքները: Ոճական այս հնարանքի այսչափ առատությունը պայմանավորված է գրքի շարադրանքի ընտրությամբ. «Գիրք քարոզութեան» հատորները կենդանի ունկնդրին ուղղված ոգեշունչ քարոզների ժողո-

վածու են, և հեղինակը խոսքը լսելի, կենդանի, հետաքրքրաշարժ դարձնելու համար հաճախ է դիմել գեղարվեստական այս հնարանքին:

Իմաստաբանական առումով սրանց զգալի մասն իհարկե,ինչպես ասացինք, աստվածաշնչյան թեմաներին է աղերսվում, ինչպես, օրինակ՝ **անմահութեան կերակուր**, **արեգակն արդարութեան, դիւրանցուկ մարմին**, **դիւրասահութիւն ի մեղս, գերազանց յոյթիւն, ի Վերին գաւառն** (արքայություն), **ճանապարհ մարդեղության** (Քրիստոսի երկրային կյանքը), **եկամուտ կիրք** (անհարազատ, ոչ բնորոշ կրքեր), **քաղցր մարդասիրութիւն** (աստվածային սերը մարդու նկատմամբ), **զգեստ սրբութեան**, **ոսկեղէն բնութիւն** (անթերի, կատարյալ, ի սկզբանե տրված բնություն), **զաղոթս նուիրել**, **զմահ ճաշակել**, **ի բոլոր սրտէ դիմել**, **յորովայնէ սրբեցաւ** և այլն:

Փոխաբերական իմաստով են կառուցված **արեգակն արդարութեան, արմատ մեղացն**, **դիւրասահութիւն ի մեղս, ի վերին գաւառն, գարուն հոգւոյ, զանձրև գիտութեան, հեթանոսք ցամաքեալ** դարձվածքները:

Հասարակական կյանքին են վերաբերում **բազմադիմի շնորհօք զընդարձակագոյն գութն զքաղցր մարդասիրութիւն** դարձվածքները:

Կան փոխաբերական դարձվածքներ, որոնց համեմատության եզրը բնության այս կամ այն երևույթն է. **անձրև** գիտութեան (գիտելիքների առատություն), **արմատ** մեղացն (մեղքի պատճառ), **բոյսք** բարեաց (բարի գործեր), **գարուն** հոգւոյ (հոգևոր վերազարթոնք), **լոյսն** գերազանցիկ (շատ ուժեղ լույս), **կաթիլ ջրոյ** մխիթարութեան (մխիթարության չնչին չափ), հեթանոսք **ցամաքեալ** (սին դարձած հեթանոսեր), յիմանալի **ծով** (գիտելիքների ամբողջություն), ոսկեղեն **բնութիւն** (անթերի, կատարյալ բնություն), **պտուղ** առաքինութեան (առաքինի գործեր), **ցօղն** կենաց (կենարար, կենսատու ցող). «Եւ մեծատունն խնդրեց յողորմածէն Աբրա-

համու և **կաթիլ ջրոյ մխիթարութիւն,** ոչ գտաւ»[1]. «մերժէ զմեղս և տայ զշնորհս սակայն մնայ **արմատ մեղացն** և դիւրա-սահութի իմեղս»[2]. «Անձրև է բանն **պըտղաբերեալ ցօղն** հոգին սուրբ զուարթարար և յորդ...»[3]:

Որոշ դարձվածքներ կազմված են չափազանցության կամ իմաստի շեշտադրման ճանապարհով, որտեղ փորձ է արվում անչափելին մարդու համար հասկանալի մեծություններով ներկայացնել. **մեծ խոհեմութիւն**, **մեծագոյն սէր**, **զընդարձակագոյն գութն** և այլն:

Ունենք «գերազանց» բառի հաճախակի կիրառություն, որտեղ առաջնային է դարձել իմաստի շեշտադրումը, ինչպես օրինակ՝ **լոյսն գերազանցիկ** («Այլ յորժամ յաջորդէ զարունն և հնչէ հողմն, հարաւոյ իջանէ լոյսն գերազանցիկ»[4]. **գերազանց յոյութիւն** (կատարյալ հղիություն). **գերազանց խոնարհութիւն** (անթերի, կատարյալ խոնարհությունն), **գերազանց շնորհ** (անգերազանցելի շնորհ):

Ինչպես հայտնի է, շրջասությունը մի բառի կամ արտահայտության փոխարինումն է նույնիմաստ նկարագրությամբ, որի հետևանքով ասելիքն ավելի պատկերավոր է դառնում:

Շրջասության ճանապարհով են կազմված **արեգակն արդարութեան (փոխանակ՝ Քրիստոս)**, **ի վերին գաւառն (փոխանակ՝ երկինք), ցօղն կենաց (փոխանակ՝ հավատ)** դարձվածքները**:**

«Գիրք քարոզութեան» Ճմերան հատոր դարձվածքների մի մասը նույնիմաստ կիրառություն ունի նաև արդի հայերենում, ինչպես օրինակ **լոյսն գերազանցիկ (գերազանց**

---

[1] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան Ճմերան հատոր,* Կ.Պոլիս, 1740, էջ 12:

[2] Նշվ. աշխ., էջ 19:

[3] Նշվ. աշխ., էջ 17:

[4] Նշվ. աշխ., էջ 12:

լույս), արեգակն արդարութեան (արեգակն արդար), ճանապարհ մարդեղության և այլն:

«Գիրք քարոզութեան» Զմերան հատորի դարձվածքներն են.

բազմադիմի շնորհօք - շնորհաշատ, շատ շնորհալի
լոյսն զերազանցիկ - շատ ուժեղ լույս
ջերմն սէրն - լիարժեք, համապարփակ սեր
զգերազանց յոյութիւն - կատարյալ հոլիություն
գերազանց խոնարհութիւն- անթերի, կատարյալ խոնարհություն
արեգակն արդարութիւն - ամենարդար, բացարձակ արդար
զբորբոքեալ սէրն - ուժգին սեր
արմատ մեղացն - մեղքի պատճառ
դիւրասահութիւն ի մեղս - հեշտությամբ մեղքի մեջ ընկնելը
ի վերին գաւառն – երկնային տնօրինություն
գարուն հոգւոյ - հոգու վերազարթոնք
կաթիլ ջրոյ մխիթարութեան - մխիթարության չնչին չափ
ճանապարհ մարդեղութեան - մարդացման ընթացք
ցօղն կենաց - կյանք տվող, կենսատու
անձրև գիտութեան - գիտելիքների առատություն
հեթանոսք ցամաքեալ - սին դարձած հեթանոսներ
հրեղէն լեզուաւն - ազդեցիկ խոսք
եկամուտ կրից -անհարազատ, ոչ բնորոշ կրքեր
մեծ խոհեմութիւն - շատ խոնարհ
զքաղցր մարդասիրութիւն - նվիրական, հաճելի մարդասիրություն
զընդարձակազոյն գութն - ընդգծված խիղճ
յիմանալի ծով - գիտելիքների ամբողջություն
զհուր մեղաց - մեղքի պատճառով առաջ եկած զգացողություն
զզուարթութիւն հոգևոր - ուժգին ուրախություն

զգեստ սրբութեան - աղտերից մաքրող
դիւրանցուկ մարմնով – ժամանակավոր, անցողիկ մարմնով
անմահութեան կերակուր – հոգևոր, հավատանվեր գործ
պտուղ առաքինութեան - առաքինի գործեր
ոսկեղէն բնուութիւն - անթերի, կատարյալ բնություն

Grigoryan Susanna - Semantic Analysis of the Nominal Phraseological Turns of the Winter Volume of “Sermons’ Book” by Grigor Tatevatsi.- The number of nominal phraseological turns in the " Winter Volume " of “Sermons’ Book” by Grigor Tatevatsi, the number of nominal phraseological turns exceeds several dozen. They are based on the Bible, or they are based on social phenomena, but more often on natural phenomena.

Григорян Сусанна - Семантический анализ номинальных фразеологических оборотов "Зимнего тома" ’’Книги проповедей’’ Григора Татеваци.- В "Зимнем томе" "Книги проповедей" Григора Татеваци число номинальных фразеологических оборотов превышает несколько десятков. Они основаны или на Библии, или же на общественных явлениях, но чаще - на природных явлениях.

Գևորգյան Գայանե
(Հայաստան, Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ)

ԱԴԱՓԱԶԱՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ադափազարի խոսվածքը գործածվել է Նիկոմեդիայի շրջանի Ադափազար բնակավայրում: Ըստ «Հայ սփյուռք» հանրագիտարանի տվյալների՝ Ադափազարը Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերից էր և համարվում էր Նիկոմեդիայի շրջանի գյուղերից մեկը: Այն սկզբնապես փոքրիկ գյուղ է եղել: Բնակավայրը ցամաքած լճի տեղում հիմնադրել են XIV դարում Լենկթեմուրի արշավանքի ժամանակ Սեբաստիայից գաղթած հայերը՝ կոչելով Տոնիկաշեն (գյուղի առաջնորդի անունով): Հետագայում Ակնից, Թոխաթից, Պարսկաստանից, Կեսարիայից, Պարտիզակից հայեր են եկել: Թուրքերը Ադափազարում բնակություն են հաստատել, երբ այդ հայկական բնակավայրը շեն գյուղաքաղաք էր, այնուհետև շրջակա վայրերից եկել են հույներ: Կոստանդնուպոլսի գրավումից հետո թուրքերը երկրի վարչական բաժանումը որոշելիս գյուղաքաղաքն անվանել են Ադա (կղզի), իսկ որոշ ժամանակ շատ սխտոր արտադրելու համար՝ նաև Սամըրսագ Ադասը («սխտորի կղզի»): Ավելի ուշ, որպես բանուկ շուկա, անվանել են Ադափազար (Կղզեշուկա): 20-րդ դարի սկզբին Ադափազարն ունեցել է քսանհինգ հազար բնակիչ, որից կեսը հայեր էին, որոնք զբաղվել են արհեստներով,առևտրով, շերամապահությամբ, երկրագործությամբ[1]:

---

[1] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, հ. 1, Ե., 2003, էջ 178:

Ադափազարի՝ 1915 թ. Մեծ եղեռնից փրկված բնակիչները գաղթել և բնակություն են հաստատել աշխարհի տարբեր կողմերում, այդ թվում՝ նաև Արևելյան Հայաստանում: Նրանցից մեկի՝ Հեղինե Մինասի Տերմենջյանի օգնությամբ էլ Երևանում Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով ՀՀԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Հասմիկ Խաչատրյանը լրացրել է Ադափազար բնակավայրի խոսվածքը:

Հ. Տերմենջյանը ծնվել է Ադափազարում 1903 թվականին: Ըստ բարբառախոսի՝ 1915 թվ. թուրքերը նրանց աքսորել են Թուրքիայի խորքերում գտնվող մի գյուղ: Չորս տարուց հետո՝ 1919-ին, վերադարձել են Ադափազար: Այս անգամ կռիվ է սկսվել հույների և թուրքերի միջև, և հույները գրավել են Ադափազարը, հետո նահանջել: Ադափազարում բնակվող հայերը նրանց հետ փախել են Հունաստան և բնակվել հունական Սալոնիկ քաղաքում: 1947թ. ադաբազարցի այլ ընտանիքների հետ Հայաստան է վերադարձել նաև Հ. Տերմենջյանենց ընտանիքը: Ըստ բարբառախոսի՝ ադափազարցիները 1400-ական թվականներին գաղթել են Սեբաստիայից:

Բարբառագիտական գրականության մեջ մասնակիորեն է անդրադարձ կատարվել Ադափազարի խոսվածքին[2]: *Կը* ճյուղի բարբառների ընդհանուր բնութագիրը տալիս Հ. Աճառյանը հիշատակել է Նիկոմեդիայի բարբառը՝ նշելով նաև Ադափազարը՝ որպես նրա քաղաքներից մեկը. «Այս հայաշատ շրջանը, որ Փոքր-Ասիայի հյուսիսարևմտյան ծայրում աննկուն պահել է հայ լեզուն, երկու գլխավոր քաղաք ունի՝ Նիկոմիդիա և Ատափազար: Սրանց շուրջը ցրված են բազմաթիվ մեծ-մեծ գյուղեր, որոնցից հիշատակելի են Յալովա, Ասլանբեկ, Պարտիզակ…: Այս զանազան տեղերից կան

[2] Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայ բարբառագիտութիւն*, 1911, էջ 241, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Երևան, 1950:

մանր-մունր նմուշներ, բայց մի ամբողջական ուսումնասիրություն չկա»[3]:

Խոսվածքին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգում կատարելիս. բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման ենթակա 120 հայախոս վայրերի մեջ ընդգրկված է նաև Ադափազարը: Եվ քանի որ Գ. Ջահուկյանը բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգում կատարել է հարյուր հնչյունաքերականական տարբերակիչ հատկանիշների հիման վրա, որոնց առկայությունը աղյուսակներում նշանակվել է պլյուս (+), իսկ բացակայությունը՝ մինուս (-) նշաններով, ապա ինչպես 120 վայրերից յուրաքանչյուրը, Ադափազարը ևս բնութագրվում է պլյուսների և մինուսների որոշակի քանակով, այսինքն՝ հնչյունաքերականական հատկանիշների առկայությամբ կամ բացակայությամբ[4]:

Ինչպես երևաց վերոնշյալից, Ադափազարի խոսվածքի վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ կան մասնակի դիտարկումներ միայն, մինչդեռ նրա ամբողջական բնութագիրը կարևոր է հայ բարբառագիտության համար: Սույն հոդվածում ներկայացվում է Ադափազարի խոսվածքի բարբառային յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը՝ ըստ ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Ադափազարի խոսվածքը» աշխատանքի:

Ադափազարի խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է Կը ճյուղին, ըստ վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր

---

[3] **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն,* էջ 352-353:

[4] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն,* Երևան, 1972, էջ 52, 71, 83, 109:

Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառին[5]:

Ադափազարի խոսվածքում գործառող ձայնավոր հնչյունները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, համապատասխանում են հինհայերենյան ձայնավորներին: *Ա* հնչյունը գործածվում է հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ*-ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո *(բամբակ*-պամպակ, *բանջար-պանջար, բան-պան, գարուն-կարուն, դաս-տաս, դանակ-տանակ, ձախ-ծախ*), *մ, ն* ռնգայիններից առաջ(*ման-ման, գոքանչ-գօնքանչ, թանձր-թանծըր, մանգաղ-մանկաղ, մանել-մանէլ, քամել-քամէլ, նշան-նըշան* ևն), ինչպես նաև շչականների հարևանությամբ (*աշուն-աշուն, բաժին-պաժին, խաչակնքել-խաչագընքէլ, արժել-արժէլ, կարճ-կարճ, չար-չար* ևն):

Ե և *ո* տառերը խոսվածքում չեն գործառում. *ե*-ի դիմաց բոլոր դիրքերում գործածվում են *է,* մասամբ՝ *ի* հնչյունները, իսկ *ո*-ի դիմաց՝ *օ*-ն: Միավանկ և երկվանկ բառերի սկզբում գործածվող *օ* ձայնավորը համապատասխանում է հին հայերենի *ո* ձայնավոր հնչյունին (*որդ-օրթ, ոչխար-օշխար, որդնել- օրթօտէլ, ոռնալ-օռնալ, ոսկի-օսկի* ևն): *Օ* է առկա նաև հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող *ո*-ի դիմաց, այսպես՝ *բողկ-պօղկ, գործ-կօրծ, դող-տօղ, ձող-ծօղ* ևն: Բառամիջի շեշտակիր, ինչպես նաև նախաշեշտ դիրքում գտնվող *ո*-ին նույնպես համապատասխանում է օ *(թոք-թօք, լող-լօղ, խոզ-խօզ, մոմ-մօմ, խմոր-խըմօր* ևն):

Միավանկ և երկվանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ին համապատասխանում է *է (եզն-էզ, եփ-էփ, ելանել-էլլէլ, երես-էրէս, երկանք-էրգանք* ևն): *է* ձայնավորը է գործածվում նաև բառամիջի շեշտակիր *ե*-ի դիմաց *(թեփ-թէփ, խելք-խէլք, վեց-վէց, դեղ-տէղ, ցեց-ցէց, աներ-անէր, ավել-*

[5] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն,* Երևան, 1972, էջ 133:

ավէլ, ավելցուկ-էվրլցուկ, շերեփ-շէրէփ են): *Ր*-ից առաջ գտնվող բառասկզբի *ե*-ի դիմաց առկա է *է* կամ *ի* ձայնավոր, այսպես՝ *երեկոյ-էրգուն, երեց-էրէց, երկու-էրգու, երինջ-էրինջ* են, բայց՝ *երեք-իրէք, երիցակին-իրիսգին*:

Հինհայերենյան *ու*-ն Ադափազարի խոսվածքում մնացել է անփոփոխ ինչպես ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից հետո *(բուրդ-պուռթ, գութան-կութան, տուն-տուն, դուռ-տուռ, ձուկ-ծուգ, ջուր-ճուր* և այլն), այնպես էլ շեշտակիր դիրքում *(թունդ-թունդ, թուր-թուր, սուգ-սուք, փուշ-փուշ, սուրբ-սուրփ* են): *Ի* ձայնավորը ևս գրաբարյան *ի*-ի համեմատությամբ փոփոխություններ չի կրել, այսպես՝ *կծիկ-գըձիգ, կին-գին, կնիկ-գընիգ, միտք-միդ, սիրտ-սիրդ, խնամի-խընամի* են:

Ադափազարի խոսվածքում հինհայերենյան երկբարբառները պարզեցվել են՝ վերածվելով ձայնավորների: Այսպես՝ հին հայերենի շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց առկա է *ա* ձայնավոր *(այդ-ադ, այն-ան, լայն-լան, ծայր-ծար, մայր-մար* են): Նախաշեշտ դիրքում դրան համապատասխանում են *է (այրիկ-էրիգ, այրել-էրէլ)* և *ա (վայրի-վարի, քայլել-քալէլ, այսօր-ասօր)* ձայնավորները: Հին հայերենի բառասկզբի *աւ* երկբարբառի փոխարեն գործածվում է օ *(աւր-օր, աւծել-օծէլ, աւրէնք-օրէնք, աւրինակ-օրինագ* են*)*: Հինհայերենյան *ոյ* և *իւ* երկբարբառների փոխարեն խոսվածքում գործածվում է *ու* ձայնավոր *(բոյն-պուն, թոյլ-թուլ, լոյս-լուս, ոյժ-ուժ* և *ալիւր-ալուր, աղբիւր-ախպուր, հարիւր-հարուր* են), *եա* երկբարբառի փոխարեն՝ *է* (*լեառն-լէռ, կորեակ-կօրէկ, ցորեան-ցօրէն, սեաւ-սէվ, սիրեաց-սիրէց* են):

Ադափազարի խոսվածքը հատկանշվում է բառասկզբի ձայնեղ պայթականների (*բ, գ, դ, ձ, ջ*) *խլությամբ* (*պ, կ, տ, ծ, ճ*), *այսպես՝ բարեկամ-պարէգամ, բրինձ-պըրինծ, գրկել-կըրկէլ, դողալ-տօղալ, դրացի-տըրացի, ձմերուկ-ծըմէրուկ, ջուր–ճուր* են: Այս հնչյունները, սակայն, ըստ խոսվածքը

գրանցողի, հստակ խուլեր չեն. տատանվում են ձայնեղի և խուլի միջև[6]:

Բառասկզբի խուլ պայթական և պայթաշփական բաղաձայնները (*պ, կ, տ, ծ, ճ*) ևս *Ադափազարի խոսվածքում արտաբերական հստակություն չունեն.* դրանք մերթ ձայնեղ (բ,գ,դ, ձ, ջ*),* մերթ խուլ (պ, կ, տ, ծ, ճ) հնչյուններ են արտաբերվում՝ պայմանավորված հնչյունական շղթայում նրանց նախորդող հնչյունի բնույթով (խուլից հետո՝ խուլ, ձայնավոր, ձայնեղ և ձայնորդ հնչյուններից հետո՝ ձայնեղ), այսպես՝ *Չօրս հատ կօջագ, էրգու գօջագ, հինգ դարվա, վէց դարէգան* ևն:

Ր-ից հետո գտնվող ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները, կորցնելով ձայնեղության հատկանիշը, վերածվել են շնչեղ խուլ *փ, թ, ք, ց, չ* հնչյունների, այսպես՝ *որբ-վօրփ, կարդալ-կառթալ, վարդ-վարթ, փորձանք-փօռծանք, որդնել-օրթընէլ, էգ-էք, խաբել-խափէլ, ոջիլ-օչիլ, օձ-օց* ևն: *Ղ>խ*-ին հաջորդող դիրքում *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղներին բնորոշ է խլացման հատկանիշը, այսպես՝ *աղբյուր-ախպուր, եղբայր-ախպար, խեղդել-խէխտէլ, ողջ-օխճ* ևն:

Բառամիջի միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլերը (*պ, կ, տ, ծ, ճ*), կորցնելով խլության հատկանիշը, վերածվում են ձայնեղների, օրինակ՝ *կապ-կաբ, կոպ-կօբ, շալակ-շալագ, կարկուտ-կարգուդ, կոտոշ-կօդօշ* և այլն: Խուլ շփականներից հետո գտնվող դիրքում դրանք փոփոխության չեն ենթարկվում *(հասկանալ-հասկընալ, բախտավոր-պախտավօր, ոսկի-օսկի, ոսկոր-օսկոր, վաստակել-վաստըկէլ* ևն): Անփոփոխ են մնում նաև բառամիջի և բառավերջի շնչեղ խուլերը *(եփել-էփէլ, խփել-խըփէլ, մութ-մութ, դժոխք-տրժօխք, շաբաթ-շապաթ* ևն):

---

[6] Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր /այսուհետ՝ ՀԲԱՆ/, Նիկոմեդիա, Ադաբազար, 306:

Փոփոխություն չեն կրում նաև շփական *ջ, ճ, չ, ժ, շ* հնչյունները բառամիջի նախաձայնավորական դիրքում (*գիշեր-կիշէր, մշակ-մըշակ, շփել-շըփէլ, շինել-շինէլ* ևն), մինչդեռ բառամիջի նախաբաղաձայնական դիրքում առկա է կիսաշփականների՝ շփականության դրսևորում, այսպես՝ *ամաչկոտ-ամըշկոտ, աչք-աշկ, միջնակ-միշնագ, ինչքան-իշքան, իջանել-իշնալ* և այլն:

Հ և *խ* հնչյունները գործառում են բառի բոլոր դիրքերում՝ չկրելով որակական որևէ փոփոխություն, այսպես՝ *հազ-հազ, հալել-հալէլ, դահիճ-տահիջ, խրատ-խըրատ, ծախել-ձախէլ, ծուխ-ծուխ, նախիր-նախիր* ևն:

Ադափազարի խոսվածքում շեշտակիր է վերջին վանկը, այսպես՝ *մոռանալ-մօռնա՛լ, սատակել-սադգէ՛լ, փաթթաթէլ-փաթթէ՛լ, ցամաքել-ցամքէ՛լ* ևն: Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված *ի* ձայնավորը պահպանվում է, օրինակ՝ *ձիլ-ձիլին, սիրդ-սիրդին, քիթ-քիթին* ևն: Այն փոփոխության չի ենթարկվում նաև բառավերջի բաց վանկում, օրինակ՝ *գոտի-կօդիին, փոշի-փօշիին* ևն: Չեն փոփոխվում նաև փակ և բաց վանկերի շեշտազրկված *ու (թութ-թութին, թուզ-թուզին, թուր-թուրին, ջուր-ջուրին, կաղու-կաղուին, մէղու-մէղուին, փէսացու-փէսացուին* ևն), փակ վանկի շեշտազրկված *է (դէզ-դէզին, սէգ-սէգին, սէր-սէրին, դէր-դէրօջ* ևն) և *ա (դանագ-դանագին, հավադ-հավադին, քաղաք-քաղաքին* ևն) ձայնավորները:

Ադափազարի խոսվածքին բնորոշ է շեշտանախորդ վանկերի ձայնավորների սղում եռավանկ բառերում, այսպես՝ *գողանալ-կօղնալ, թաթախել-թաթխէլ, զարկանել-զարնէլ, բուսանել-պուսնէլ* ևն: Ինչպես նախաշեշտ, այնպես էլ շեշտակիր դիրքերում *ա*-ն փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ *ծամել-ձամէլ, քացախ-քացախ, աջ-աչ, թաս-թաս* ևն:

Խոսվածքում առկա են բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հինհայերենյան *ն* վերջնահնչյունով միավանկ

բառերը գործառում են առանց վերջնահնչյուն *ն*-ի, այսպես՝ *ամառն-ամառ, ատամն-ատամ, թոռն-թոռ, ծունկն-ձունգ, մութն-մութ, մուկն-մուգ* և այլն: *Ինն (ինը)* և *ինքն (ինքը)* բառերում *ն*-ի անկումը ուղեկցվել է գաղտնավանկի *ը*-ի պահպանմամբ: Խոսվածքին բնորոշ է նաև պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում *ն*-ի հավելման երևույթը, այսպես՝ *ամաչել-ամընչալ, կտուց-կընտուց, ճանաչել-ճանչընալ, մեք-մէնք*:

Ադափազարի խոսվածքում գործառում են *-եր (էր)* և *-ներ (նէր)* հոգնակերտները, որոնց զուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով:

-Եր (էր) հոգնակերտ վերջավորություն են ստանում միավանկ բառերը *(խոտ-խոդէր, խոզ-խոզէր, միս-միսէր, պառց-պառցէր, մազ-մազէր* և ևն*)*, կենդանիների՝ միավանկ հիմքով անունները *(արչ «արջ»-արչէր, ծի-ծիէր, էշ-էշէր* ևն*)*, գրաբարյան *-ն* վերջնահնչյունով միավանկ բառերը, ընդ որում՝ դրանց գերակշիռ մասը հատկանշվում է հոգնակերտից առաջ *ն* վերջնահնչյունի անկմամբ *(տուռ «դուռն»-տուռէր, ձունգ-ձունգէր, պէռ «բեռն»-պէռէր, կառ «գառն»-կառէր, մուգ-մուգէր, նուռ-նուռէր, հարս-հարսէր)*, նաև այն երկվանկ բառերը, որոնց վերջին վանկը գաղտնավանկ է, այսպես՝ *ասխ «աստղ»-ասխէր, սանր-սանրէր, մանր-մանրէր: -Եր (էր)* հոգնակերտ են ստանում նաև միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերը, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը, այսպես՝ *սապօնձուր «օճառաջուր»-սապօնձուրէր, մորքուր* «մորաքույր»*-մորաքուրէր, աղձուր* «աղաջուր»*-աղձուրէր* ևն :

Բազմավանկ բառերի հոգնակիի կազմության մեջ Ադափազարի խոսվածքում առաձնացվում է *-ներ (նէր)* հոգնակերտ վերջավորությունը, այսպես՝ *անուն-անուններ, գոմէշ «գոմեշ»-գոմէշներ, իլիգ «իլիկ»-իլիգներ, խընձոր «խնձոր»-*

խընձօրնէր, ձաղիգ «ծաղիկ»-ձաղիգնէր են: Ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը ևս հոգնակին կազմում են *-նէր* թվանիշ վերջավորությամբ, օրինակ՝ *քէնի* «քենի»-*քէնինէր, ճօրի* «ջորի»-*ճօրինէր, գինի-գինինէր, սաղանա* «սատանա»-*սաղանանէր, հարսունցու «հարսնացու»-հարսունցունէր, վրգա* «վկա»-*վրգանէր* են:

Անվանական հոլովման համակարգում ձևային արտահայտությամբ տարբերակվում են ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովաձևերը: Սեռական-տրական հոլովաձևերը, որոնք բնութագրվում են նաև հոդառությամբ, իրենց ձևային արտահայտությունը ստանում են հոլովական վերջավորություններով կամ հնչյունական հերթագայություններով:

Ընդհանրական արժեք ունեցող ամենատարածված հոլովանիշ թեքույթը եզակի թվի հարացույցում *ի* վերջավորությունն է: Այս հոլովական վերջավորությամբ են սեռական-տրական հոլովաձևը կազմում գրաբարյան *ն* վերջնահնչյունով բառերը (*կառ* «գառն»-*կառի(ն), տուռ* «դուռն»-*տուռի(ն), ձունգ* «ծունկն»-*ձունգի(ն), ծուգ* «ձուկն»-*ծուգի(ն), մուգ-մուգի(ն), մադ-մադի(ն), նուռ «նուռն»-նուռի(ն)* և այլն), նախկինում *ք* հոգնակերտ ունեցող բառերը (*խէլք-խէլքի(ն), միտք-միտքի(ն), հարսանիք-հարսանիքի(ն)* են), կենդանիների և թռչունների անունները (կաքավ-կաքավի*(ն)*, կատու-կատուի*(ն)*, հավ-հավի*(ն)*, աղվէս-աղվէսի*(ն)* են), անձնանունները (Նշան-Նըշանի*(ն)*, Անուշ-Անուշի*(ն)*, Սաթիկ-Սաթիկի*(ն)* են) և տեղանունները (Պարտիզակ-Պարտիզակի, Ադափազար-Ադափազարի, Արմաշ-Արմաշի են): *Ի* հոլովանիշ թեքույթը ընդգրկում է նաև փոխանվանաբար գործածվող խոսքի մասերը (*մէնձը «մեծը»-մէնձին, աղվօրը «գեղեցիկը»-աղվօրին, սէվը-սէվին, էփօղը-էփօղին, բրգդիգը «փոքրիկը»-բրգդիգին* են): Ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի գերակշիռ մասը և դրանցով բաղադրված բարդու-

թյունները սեռական հոլովաձևերը կազմում են հոլովանիշ հիմքի և *-ոջ* թեքույթի համադրությամբ, օրինակ՝ *քուր «քույր»-քըրոջ, տէր-տէրոջ, դաքըր «տեգր»-դաքըրոջ, կէսուր «սկեսուր»-կէսրոջ, դալ «տալ»-դալոջ, ընգէր-ընգէրոջ* են:
Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վան* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *ամառ-ամառվան, առդուն «առավոտ»-առդվան, կիշէր «գիշեր»-կիշէրվան, իրիկուն «երեկո»-իրկըվան, շապատ «շաբաթ»-շապատվան, ցէրէկ «ցերեկ»-ցէրէկվան, օր-օրվան* են:

Գոյականների հոգնակի թվաձևերի սեռական հոլովաձևերը կազմվում են *ու* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *շունէր* «շներ»-*շունէրու/ն/, ճուրէր* «ջրեր»-*ճուրէրու/ն/, կօվէր-կօվէրու*, *տունէր* «տներ»-*տունէրուն, քաղաքնէր-քաղաքնէրուն* են:

Ադափազարի խոսվածքին բնորոշ է իրի և անձի առումների տարբերակումը. ուղիղ խնդիրը իրանիշ գոյականների դեպքում դրվում է ուղղականաձև (հաց ուդէլ, դուն շինէլ են), իսկ անձնանիշների դեպքում՝ տրականաձև հայցականով (*հօրը սիրէլ, դրզին ձէձէլ* են): Բացառական հոլովը ձևավորվում է *–էն* վերջավորությամբ, որն ավելանում է հոլովանիշ հիմքին, այսպես՝ *աղվէսէն* «աղվեսից»-*աղվէսնէրէն, թօռէն* «թոռից»-*թօռէրէն, հացէն-հացէրէն, լէրէն* «լեռից»-*լէրնէրէն, խօղէն-խօղէրէն* են: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-ով* հոլովանիշ թեքույթով բաղադրված կազմություններով, այսպես՝ *կէղօվ* «գյուղով»-*կէղէրօվ, աշկօվ* «աչքով»-*աշկէրօվ, ամիսօվ* «ամսով»-*ամիսնէրօվ, քարօվ-քարէրօվ, ծէռքօվ-ծէռքէրօվ* են: Ըստ Գ. Ջահուկյանի՝ ազգակցանիշ բառերի բացառական և գործիական հոլովաձևերում առկա է *մ* հնչյունը, այսպես՝ *եղբօրմէ, եղբօրմօվ*[7]: *Ոջ, վա, ան* արտաքին հոլովումների և ներքին թեքման գոյականների

[7] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 83:

բացառական և գործիական հոլովները կազմվում են ուղղականի հիմքից, այսպես՝ *գընիգ «կնիկ»-գընիգէն-գընիգօվ, մար «մայր»-մարէն-մարօվ, մուգ «մուկ»-մուգէն-մուգօվ, դուն «տուն»-դունէն-դունօվ, թօռ «թոռ»-թօռէն-թօռօվ* ևն: Ներգոյական հոլովի իմաստը Ադափազարի խոսվածքում դրսևորվում է վերլուծական կազմությամբ, որը բաղադրվում է *մէջ* հետադրությամբ և սեռական հոլովաձևերով *(խօղին մէջը, ճուրին մէջը, տաշտին մէջը, աշխարին մէջը, փօրին մէջը* ևն*)*:

Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *ամեն* բառի հոլովված ձևով, այսպես՝ *ամէնէն կէշ «տգեղ», ամէնէն պարս «բարձրը», ամէնէն բըգդիգ, ամէնէն աղէգ «լավ»* ևն: Թվականի բաշխականության իմաստը դրսևորվում է քանակական թվականի կրկնությամբ՝ *էրգու-էրգու, իրէք-իրէք, վէց-վէց, օխտը-օխտը* ևն: Դասական թվականները կազմվում են *–օրդ, -ըօրդ, -էրօրդ* ածանցներով՝ *վէցէրօրդ, չօրօրդ, հինգէրօրդ, յէրգըրօրդ* ևն: *Յոթանասուն* (յօթանասուն), *ութսուն* (ուծուն), *իննսուն* (ինիսուն) թվականների դիմաց փոխառյալ թվականներ չեն գործածվում:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի* վերջավորության բաղադրությամբ, այսպես՝ *ինձի, քէզի, մէզի, ծէզի*[8]: Հայցական հոլովը տրականաձև է (*գըսիրէ ընձի, քէզի, մէզի, ծէզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքից *-մէ* հոլովանիշ թեքույթի բաղադրմամբ, այսպես՝ *ինձմէ, քէզմէ, մէզմէ, ծէզմէ, իրենմէ, իրենցմէ,* իսկ գործիականը՝ տրականի հիմքի և *–մով* վերջավորության զուգադրությամբ, այսպես՝ *ինձմով, քէզմով, մէզմով, ծէզմով, իրմով, իրենցմով*[9]: Եզակի 3-րդ դեմքը (նա) արտահայտվում է *ան* (Ան կընաց «Նա գնաց»), իսկ հոգնակի

[8] Տե՛ս նույն տեղը:
[9] Տե՛ս նույն տեղը:

3-րդ դեմքը՝ *անօնք* (Անօնք կացին «Նրանք գնացին») ձևերով: Անձնական դերանվան եզակի 3-րդ դեմքի սեռական հոլովը կազմվում է *անօր* ձևով *(անօր դունը* «նրա տունը», *անօր անունը* «նրա անունը»*)*: *Ինքը* դերանվան եզակի հայցականը ուղղականաձև է՝ *ինքը (Ինքը զինքը գրսիրէ* «Նա իրեն է սիրում»), իսկ հոգնակին՝ տրականաձև՝ *իրէնց (Անօնք իրէնց գրսիրին* «Նրանք իրենց են սիրում»):

Այս, այդ, այն, ցուցական դերանուններին խոսվածքում համապատասխանում են *աս, ադ, ան* հնչյունափոխական տարբերակները *(աս դունը «այս տունը», ադ ձառը «այդ ծառը», ան մարթը «այն մարդը»)*, որից ենթադրվում է, որ խոսվածքում պահպանված է ցուցական դերանունների եռանդամությունը: Վերջիններս արտահայտում են նաև *սա, դա, նա* ցուցական դերանունների իմաստը, օրինակ՝ *Աս ձառ է* «Սա ծառ է»: *Ադ Հակօփն է* «Դա Հակոբն է»: Վերոնշյալ դերանունների սեռական-տրական հոլովաձևերը կազմվում են *այսր, այդր, այնր* տիպի հիմքով, այսպես՝ *ասօր, ադօր, անօր* դունը, *ասօր, ադօր, անօր* մօտէցավ: Սրանց եզակի թվի բացառական և գործիական հոլովաձևերը կազմվում են հինհայերենյան ուղղականի հիմքից (*ասկէ-ասօվ, ատգէ-ատօվ, անկէ-անօվ)*, իսկ հոգնակի թվի ձևերը՝ հինհայերենյան սեռականի (*ասօնցմէ, ադօնցմէ, անօնցմէ, ասօնցմօվ, ադօնցմօվ, անօնցմօվ*): Հոգնակի թվի ուղղական հոլովի ձևերն են՝ *ասօնք, ադօնք, անօնք*:

Ադափազարի խոսվածքում անորոշ դերբայը հատկանշվում է 2 լծորդությամբ (գրաբարյան 4 լծորդություններից (ա, ի, ե, ու) պահպանվել են 2-ը)՝ *ա, է*, օրինակ՝ *էրթալ, բօռալ, վըլալ, նըստէլ, դէսնալ, առնէլ, խըմէլ, մէռնէլ* են: Վաղակատար դերբային բնորոշ է *–էր* վերջավորությունը՝ *մընացէր իմ, զարմացէր իմ* են, հարակատարին՝ *–աձ*, այսպես՝ *էփաձ, նըշանվաձ, զարմացաձ* են: Գ. Ջահուկյանը նշում է նաև *ուկ-*

ով հարակատար[10]: *Ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալի հիմքով, օրինակ՝ *աղցող, կօղցող, զարմացող, մօտէցող, հասկըցող, վախցող, ուրախացող* են: *Գալ, տալ, լալ* բայերի ենթակայական դերբայը արտահայտվում է *էկող, լացող, դըվող* ձևերով: Ժխտական դերբայը իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և *-էր, -ար, -իր* վերջավորությունների զուգորդությամբ բաղադրված ձևերով՝ *(չիմ) ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր*:

Ադափազարի խոսվածքում, ինչպես արևմտյան խմբակցության բարբառների մի մասում, եղանակային իմաստները արտահայտության պլանում դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի իմաստներն արտահայտելու համար գործածվում են հինհայերենյան ներկայի և անցյալի կազմությունների և *կու* (կը/գը/գ) եղանականիշի զուգորդությամբ կառույցները, այսպես՝ *կըկըրէմ «գրում եմ», կըկըրէս, կըկըրէ, կըկըրէնք, կըկըրէք, կըկըրէն, գուդիմ «ուտում եմ», գուդէս, գուդէ, գուդինք, գուդիք, գուդին*:

Ադափազարի խոսվածքում տարբերակվում են ընդհանրական և շարունակական ներկաները: Շարունակականի իմաստը դրսևորվում է հինհայերենյան ներկայի ձևերի և հայ ժամանականիշ բառ-մասնիկի զուգորդությամբ, այսպես՝ ուտիմ հայ, ուտէս հայ, ուտէ հայ, ուտէնք հայ, ուտէք հայ, ուտէն հայ, գառթամ հայ, գառթաս հայ, գառթա հայ, գառթանք հայ, գառթաք հայ, գառթան հայ:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստը դրսևորվում է *պիտի* (տը/տ) եղանականիշի և բայի դիմա-

[10] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 109:

վոր ձևերի հարադրությամբ՝ *տուտիմ, տուտէս, տուտէ, տուտինք, տուտէք, տուտին* կամ *տրմընամ, տրմընաս, տրմընա, տրմընանք, տրմընաք, տրմընան*: Վերջիններս բազմիմաստ են. արտահայտում են նաև հարկադրական եղանակի ժամանակաձևերի իմաստը:

Անցյալ կատարյալը կազմվում է պարզ ձևերով՝ *խրմէցի, խրմէցիր, խրմէց, խրմէցինք, խրմէցիք, խրմէցին, հասա, հասար, հասավ, հասանք, հասաք, հասան*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի իմաստը դրսևորվում է անցյալի ցոյական հիմքով և ներգործաձև վերջավորություններով բաղադրված կազմություններով, այսպես՝ *սիրէցի, սիրէցիր, սիրէց, սիրէցինք (անք), սիրէցիք, սիրէցին*: Գ. Ջահուկյանը առաջին /ել/ և 3-րդ լծորդության /ալ/ անաձանց բայերի կատարյալի հոգնակի 1-ին դեմքում նշում է *ա* ձայնավորով վերջավորություն՝ գրեցանք և այլն[11]: Վաղակատար ժամանակի իմաստը արտահայտվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ՝ *կրրէր էմ, կրրէր էս, կրրէր է, կրրէր էնք, կրրէր էք, կրրէր էն*: Հարակատար ժամանակի իմաստը ինչպես կրավորական, այնպես էլ ներգործական և չեզոք սեռի բայերի դեպքում դրսևորվում է *-ած* վերջամասնիկն ունեցող հարակատար դերբայով՝ *խափված էմ, խափված էս, խափված է…, կրրած էմ, կրրաձ էս, կրրաձ է…*: Ըստ Հ. Խաչատրյանի՝ վաղակատար ժամանակի նշանակությամբ հաճախադեպ է հարակատար դերբայով բաղադրված կառույցների գործածությունը[12]:

Խոսվածքում ըղձականի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք, կրելով միայն հնչյունական փոփոխություններ, ձևային տարբերակվածությամբ չեն հատկանշվում, այսպես՝ *կրրէյի,*

---

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Տե՛ս ՀԲԱՆ, Ադափազար, 306:

կըրէյիր, կըրէր, կըրէյինք, կըրէյիք, կըրէյին, մընայի, մընայիր, մընար, մընայանք, մընայիք, մընային: Ենթադրական եղանակի իմաստը դրսևորվում է ըղձական եղանակի բայաձևերի և *կը* (կ) եղանականիշի համադրությամբ բաղադրված կառույցներով, այսպես՝ *կըկըրէմ, կըկըրէս, կըկըրէ, կըկըրէնք, կըկըրէք, կըկըրէն, կըսէյի, կըսէյիր, կըսէր, կըսէյինք, կըսէյիք, կըսէյին*, հարկադրականը՝ *պիտի (տը/տ)* եղանականիշ մասնիկներով զուգորդված կազմություններով:

Հրամայական եղանակի եզակի թվի ձևերը կազմվում են *է, ա, իր* վերջավորություններով: *Է* վերջավորություն են ստանում *ե* խոնարհման պարզ բայերը, այսպես՝ *աբրէ, ձամէ, գըրէ, գաբէ, պադմէ, սիրէ, նըստէ, փօխէ, քամէ* ևն, *-ա* վերջավորություն՝ *ա* խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի ձևերը, որը համադրվում է ներկայի հիմքին, օրինակ՝ *մընա՛, խընդա՛, կարթա՛, հավադա՛* ևն: *Աղալ* և *խաղալ* բայերի հրամայականը կազմվում է անցյալի ցոյական հիմքի և *-իր* վերջավորության բաղադրությամբ՝ *ախցի՛ր, խախցի՛ր: Ե* և *ա* խոնարհման ածանցավոր բայերը հրամայական եղանակի ժամանակաձևերը կազմում են *-իր* վերջավորությամբ, այսպես՝ *անցի՛ր, էլի՛ր, իճի՛ր, իմացի՛ր, հասկըցի՛ր* ևն: Հրամայականի հոգնակի թվի ձևերին հատուկ է *–էք* վերջավորությունը, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *խըմէցէ՛ք, մաղէցէ՛ք, բադմէցէ՛ք և պարսըցէ՛ք, իմացէ՛ք, վըլացէ՛ք, հասկըցէ՛ք, մօդէցէ՛ք, մօռցէ՛ք* ևն:

Վերոնշյալից հետևում է, որ Ադափազարի խոսվածքում իմաստային տարբերակվածություն են դրսևորում *կու (գը/գ)* և *պիտի (տը/տ)* եղանականիշ մասնիկներով կազմությունները: *Կու* եղանականիշով բաղադրված կառույցները արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստ-

ներ, իսկ *պիտի*-ով կազմությունները՝ սահմանական և հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի:

Ժխտական խոնարհման կառույցները Ադափազարի խոսվածքում հատկանշվում են նախամասնիկավորմամբ: Խոսվածքում գործառող ժխտական նախամասնիկներն են *չ*-ն և *մի*-ն: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները բաղադրվում են *չ* ժխտական մասնիկով, որը համադրվում է հաստատական խոնարհման ձևերին, այսպես՝ անց. կատ.՝ *չրգբրէցի, չրգբրէցիր, չրգբրէց, չրգբրէցինք, չրգբրէցիք, չրգբրէցին,* ըղձ. ապառնի՝ *չրխբմիմ, չրխբմէս, չրխբմէ, չրխբմինք, չրխբմէք, չրխբմին: Գը* (գ) եղանականիշ մասնիկ ունեցող ժամանակաձևերի ժխտականը կազմվում է ժխտական դերբայի (կամ նրա փոփոխակների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ, այսպես՝ *չէմ սիրէր, չէս սիրէր, չրսիրէր, չէնք սիրէր, չէք սիրէր, չէն սիրէր*: *Պիտի* եղանականիշով բաղադրված կազմությունների ժխտական խոնարհման ձևերում *չ* մասնիկը *չի* ձևով դրվում է եղանականիշին նախադաս, այսպես՝ *չի տրխբմիմ «չպիտի խմեմ», չի տրխբմէս, չի տրխբմէ, չի տրխբմինք, չի տրխբմէք, չի տրխբմին*: Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի* արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ, այսպես՝ *մի խաղա՛ր, մի մընա՛ր, մի էրթա՛ր, մի գարթա՛ր, մի խօսի՛ր* ևն:

Ադափազարի խոսվածքում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով, այսպես՝ *Ճառը ծախկէցավ «*Ծառը ծաղկեց»*: Լէզուն էրգան է* «Լեզուն երկար է»: *Ն* որոշիչ հոդը գործառում է ձայնավորահանգ բառերի դեպքում: Խոսվածքը հատկանշվում է *մը/մըն* անորոշ հոդի հետադաս գործածությամբ, այսպես՝ *էրիգ, գընիգ մըն էն ըղէր «*Մի մարդ ու մի կին են եղել»: *Օր մը մարթը գրիբէվատնա* «Մի օր այս մարդը հիվանդանում է»:

Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ *(ձառին յափրախը «տերև», գէդին ջուրը արդին խօղը, ձիին բօչը)* և որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ *(ձառի յափրախը, գէդի ջուրը, արդի խօղը, ձիի բօչը)*: Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը կարող է դրվել ստորոգյալին նախադաս (Գադուն մուգ բըռնէց) կամ հետադաս (Գադուն բըռնէց մուգ): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը դրվում է տրական հոլովով (*Քիրքորը հազը գընէ Արշակին* «Գրիգորը սիրում է Արշակին»: *Քիրքորը Արշակին հազը գընէ* «Գրիգորը Արշակին է սիրում», իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով *(Մինասը քար գըտաշէ, խօղ կըպէրէ* «Մինասը քար է տաշում, հող է բերում»: *Չամուռ դու՛ր վարպէտին* «Ցեխ տու՛ր վարպետին»): Ուղղականաձև հայցականով է դրվում անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան, այսպես՝ *Մոշ քաղէլ կացին* «Գնացին՝ մոշ քաղելու», *Ախճիգ ուզէլ էգան* «Եկան՝ աղջիկ ուզելու»: Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական *(մէջ* կապ+սեռական հոլովաձև՝ *Ամանին մէջ ճուր կար* «Ամանի մեջ ջուր կա»*: Տաշտին մէջ հաց չըկա* «Տաշտում հաց չկա») և համադրական (հայցական հոլովաձև՝*Այքին կըպանին «Այգում աշխատում են», Կէղը կապրի «Գյուղում կապրի»)* կառույցներով:

ՀԲԱ-ի ծրագրով տրված հասկացական-բառանվանողական զուգաբանություններին Ադափազարի խոսվածքում համապատասխանում են հնչյունական տարբերակներ և բառային տարբեր արտահայտություն ունեցող ձևեր: Ստորև ներկայացվում են հասկացական-բառանվանողական այն զուգաբանությունները, որոնք Ադափազարի խոսվածքում բառային այլ արտահայտություն ունի: Դրանք են՝ գագաթ-դափա, քամի-հօվ, ծիածան-գամար, ցող-չիգ, կաթիլ-բուդ,

սառույց-բուզ, ստվեր-շուք, կողմ-թարաֆ, ծայր-ճօթ, անկյուն-բուջախ, առաստաղ-թավան, երդիկ-բաջա, զուգարան-պէտ-քարան, ջրհորդան-օլուխ, ածուխ-քէմիր, եկեղեցի-ժամ, ցեխ-չամուռ, աթար-թէզէք, կայծ-մօծիր, արմատ-քօք, տերև-յափ-րախ, կեղև-ղաբուխ, կորիզ-գուդ, սերմ-թօխում, եգիպտացո-րեն-միսիր, լոբի-ֆասուլյա, դեղձ-շաֆտալու, կաղին-ֆուն-դուխ, նուշ-պատէմ, ցոգոլ-ղայխիսի, սածիլ-ֆիդէ, գազար-քա-շիր, դանդուռ-փըրփըրէմ, ուրց-քէբաբօթի, փիփերթ-բաղըր-ջուգ, ծղոտ-կուլաշ, կողով-սափաթ, փոցխ-տըրմըխ, հեսան-մասատ, թթխմոր-մայա, փլավքամիչ-սուզգաշ, կարաս-բօ-ղուգ, կճուճ-քուփ, խցան-մանթար, ձագար-հունի, պարան-չուվան, առասան, ակնոց-գօզլիգ, համրիչ-թըզբէխ, ձեռնոց-ալդիգ, քղանցք-փէշ, տրեխ-չարուխ, տրեխի քուղ-սըռըմ, բա-ռուր-ղունդախ, օժիտ-ճըհէզ, նոր տարի-գաղանդ, ծննդկան-դըղասական, սկեսրայր-պարընդատ, անորորդի-ղայինչի, ամուսին-էրիգ, տագերկին-նէր, արու զավակ-մանչ, հարևան-տըրացի, որսորդ-ավջի, հովիվ-չօբան, անասուն-հայվան, կրիա-թօսպաշի, չղջիկ-կիշէրհավուգ, մողես-ղարդաշիլ, սարդ-մամուգ, անձրևորդ-սօղըլճան, խխունջ-քառթօշ, հնդկահավ-կուլու, բու-ղուլուղուլու, կաչաղակ-թավակօթիկ, աքաղաղ-խօրօզ, վառեկ-փիլիչ, թուխս-գուռթ, խայթոց-կիծ, ատամ/ն/-արղա, բուռ-ավուշ, բռունցք-յումրուխ, ազդր-պուդ, պարանոց-ճիտ, կոկորդ-բօղազ, մեջք-գըռնագ, եղջյուր-կօ-տօշ, թևատակ-անութ, շրթունք-պըռգունք, արտևանունք-թարթիչ, վերք-յարա, գորտնուկ-կօծիծ, թույն-զէհիր, խաչ-փաչա, աղանձ-ղավուրղա, հոլ-տօպաճ, ճոճանակ-սալընջախ, քարկտիկ-վէգ, սրինգ-ցավալ, ժամանակ-ատէն, գեղե-ցիկ-աղվօր, լավ-աղէգ, նիհար-զայիֆ, թանկ-սուղ, կաղ-թօփալ, համր-դիլսըզ, պեպնոտ-ցանօղ, գանգուր-կըռճիկ, քաղցած-անօթի, փափուկ-կակուղ, ժլատ-կըծծի, մերկ-չըլպախ, կիսարար-օրթախ, քանդել-քակէլ, մտցնել-խօթէլ, պլո-կել-կեղպըլէլ, մեխել-կամէլ, հավաքել-ժօղվէլ, սառչել-պաղէլ,

ավարտել-լրմցընել, փափկել-կակուղնալ, սպիտակել-ճէրմա-գէլ, ամուսնանալ-կարքրվէլ, նվագել-չալէլ, համբուրել-պաք-նէլ, զբոսնել-պըտրտէլ, իզուր-պարապ, կարծես-կըտէսքի, ներքև-վար,այնուհետև-յէտքը, միասին-պարապար, մոտ-քով:

Ներքոբերյալ բառերը Ադափազարի խոսվածքում ունեն ձևային հետևյալ արտահայտությունը.

աղտ-աղտ	աղտոտ-աղդոդ
այգօղք-այգօծ	այս-աս
այդ-ատ	աղաւնի-կէվարջին
այն-ան	անանուխ-աննուխ
անուն-անուն	առաւօտ-առդու
առնել-ընէլ	արտասուք-առցունք
բռնել-պըռնէլ	գիշեր-կիշէր
գրտնակ-ըխլավօր	դգալ-տըկալ
եկեղեցի-ժամ	լնուլ-լէցնէլ
խստոր-սըխտոր	կաթն-կաթ
կորիզ-գուդ	կրեայ-թօսպաղի
հիմա-հիմա	հօրաքոյր-հօրքուր
հօրեղբայր-հօրյէխպար	ճանապարհ-ճանփա
մասուր-մասուր	մրջիւն-մըրչուն
մօրաքոյր-մօրքուր	յորանջել-էրէհտըկալ
նապաստակ-նապաստագ	ներքս-նէրս
նաւթ-կազ	նման-լրման
նմանել-լրմանէլ	շոր-լաթ
շուրջ(ս)-բըլօր(ս)	ոզնի-օզնի
ուղարկել-ղըրգէլ	ուղեղ-ըղէղ
ուղղորդ-օղօրթ	պարապ-պարապ
ջրյորդան-օլուխ	սա-ասիգա
դա-ադիգա	նա-անիգա
սալոր-սալօր	սեամ-շէմ
վիշապ-ուշաբ	տալ-դալ
տեսանել-դէսնէլ	փոխինդ-փօշի

քսան-քըսան օրինել-օրշնել
օրինանք-օրշնէնք

Ստորև տրվում է Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը Ադափազարի խոսվածքով:

Սըդախսոսը

Կա ու չիկա թաքավոր մը կը կէնա: Աս թաքավորը իր յէրգըրին մէջ ամէնուն կըտարաձայնէ. «Օվ ան տէսագ նըշանավոր սուդ մը ըսեհե, քի էս ըսիմ սուդ է, թաքավորութանըս կէսը անօր տի տամ»:

Չօբան մը կու քա: Կըսէ.

-Թաքավորն աբրաձ կէնա, հարըս էրգան փադ մը ունէր, ադօվ յէրգընքի ասղէրը կըխառնէր:

-Կըպատահի,-կըպատասխանէ թաքավորը,- մէնձ հարըս չըբուխ մը ունէր, մէկ ծարը պէրանին կըտընէր, մյուս ծարն ալ արէքակէն կըվառէր:

Սըդախսոսը կըլօխը քէրէլօվ տուրս կէլլէ: Կուկա թառզի մը: Կըսէ.

-Նէրօղութին, թաքավո՛ր, էս շուտ տի քայի (պիտի գայի), ուշացա: Էրէգ շադ արզէվ էգավ, կայձագնէրը չախմիշ ըղան, յէրգինքը պադռէցավ, քացէր էի կարկըտէլ:

-Հա, աղէգ էս ըրէր,-կըսէ թաքավորը,-համա աղէգ չէիր կարգըդաձ, աս առդու քիշ մը արզէվ էգավ:
Թաքավորը չըհավադաց, աս ալ տուս էլավ:

Նէրս կըմը(տ)նէ ախկատ կէղացի մը՝ շինիք մը անութին տագը:

-Տու ի՞նչ կուզէս, այ մառթ,-կըհարցընէ թաքավորը:

-Ինձի շինիք մը օսկի պառտք էս, էկա տանեմ:

-Շինիք մը օսկի՞,-կըզարմաննա թաքավորը:-Սութ կըսէս, էս քէզի օսկի պառտք չէմ:

-Քի սուտ կըսիմ, թաքավորութանըտ կէսը ինձի տու՛ր:

-Չէ՛, չէ՛, իրավ կըսիս,-խօսքը կըփօխէ թաքավօրը:
-Էհէր շիդաք գըսիմ նէ, շինիք մը օսկին դու՛ր[13]:

Геворкян Гаяне - Общее описание особенностей диалектических характеристик Адапазарского говора– Говор Адапазара использовался в поселке Адапазара Никомедского района. Адапазар был одним из армянонаселенных мест в Западной Армении и считался одной из деревень Никомедского района. В диалектической литературе есть частичное наблюдение на счет Адапазарского говора, тогда как его полная характеристика важна для армянской диалектологии. В данной статье представленно общее описание особенностей диалектических характеристик Адапазарского говора, выполненное в соответствии с программой армянского диалектного атласа “Адапазарский говор”.

Gevorgyan Gayane - General description of the dialectic features of Adapazar's speechю. – Adapazar's speech was used in the Adapazar settlement of the Nicomedia district. Adapazar was one of the armenian-populated places in Western Armenia and was considered one of the villages in the district of Nicomedia. There is partial observation in the dialectical literature on Adapaza's speech, whereas his full character is important for Armenian dialectology. In this article is presented the general description of the dialectic features of Adapazar's speech, which is done according to the Armenian Dialectal Atlas 's program "Adapazar's Speech".

[13] Տե՛ս ՀԲԱՆ, Ադափազար, 306:

Դալալեան Տորք
(Հայաստան, ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ)

ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑԵԱՆԸ ԵՒ ՄԱՌԻ «ՅԱԲԵԹԱԿԱՆ» ՏԵՍՈՒԹԻՒՆԸ. ՀԱՅ-ՔԱՐԹՈՒԵԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Հայերէնի ձեւաւորման վարկածը

Ինչպէս յայտնի է, Գ. Ղափանցեանը կողմնակից էր հայերէնի «խառնակ» ծագման տեսութեան, այսինքն՝ հայոց լեզուն համարում էր երկու հիմնական՝ հնդեւրոպական եւ ոչ-հնդեւրոպական բաղադրիչների միախառնման արդիւնք[1]: Ամփոփելով իրեն նախորդած համեմատաբանների՝ Հ. Հիւբշմանի, Ն. Մառի, Ա. Մեյէի, մասամբ նաեւ՝ Ֆ. Միւլլերի, Ք. Բարթոլոմաէի, Ս. Բուգգէի, Հ. Պեդերսէնի ուսումնասիրութիւնները, նա գտնում էր, որ «*համեմատական լեզուաբանութեան տեսութեամբ մեր «հայա-արմենական» լեզու ները հանդիսանում են տարբեր եւ մինչեւ անգամ հակապատկեր լեզուական սիստեմների եւ տարրերի մի զանգուածք, այդու ներկայացնելով մի տիպիկ «խառն լեզու» (Mischprache)*»[2]:

Յատկանշական է, որ նա հայերէնը կամ վաղնջահայերէնը դիտարկում էր իբրեւ լեզուների մի խումբ եւ ոչ թէ

---

[1] **Գ.Ա.Ղափանցեան**, *«Հայա-արմենական» լեզուախմբի ազգակցական բովանդակութիւնը*, Ս. Էջմիածին, 1917, էջ 3-4, ծան. 2, էջ 29; **Գ.Ա.Ղափանցյան**, *Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)*, Երեւան, 1961, էջ 11-12:

[2] **Ղափանցեան 1917**, էջ 4-5:

մէկ միասնական լեզու։ Այդ խմբի մէջ էր Ղափանցեանը մտցնում «*գրաբարը եւ միջնադարյան ու արդի հայերենները իրենց բարբառներով*»[3]։ Իր ամենավաղ աշխատանքներից մէկում՝ «մեր այդ լեզուների» վերոնշեալ երկու հիմնական բաղադրիչ մասերը նա կոչում էր «արիո-եւրոպական» եւ «յաբեթական»՝ հետեւելով Ն. Մառի տեսութեանը։ Ըստ Գ. Ղափանցեանի մեկնաբանութեան՝ երկու նշուած լեզուական ընտանիքներին բնորոշ կաղապարուած որոշ ձեւեր, «հարկադրաբար ներկապակցուելով եւ ձուլուելով», առաջացրել են «հայա-արմենական» լեզուախումբը[4]։

Հայերէնի բնիկ հնդեւրոպական (հ.-ե.) բաղկացուցիչի մէջ նա գերակշիռ տեղ էր յատկացնում սկիւթական ներդրմանը, թեեւ ընդունում էր նաեւ Հայասայի լեզուում հ.-ե. տարրերի գոյութիւնը[5]։ Երբեմն հ.-ե. շերտի առաջացումը հայերէնում նա բացատրում էր նաեւ կելտական (գաղատական) եւ աքայական (յունական) ներխուժումներով[6]։ Հայերէնի բնիկ յաբեթական տարրերի մէջ Գ. Ղափանցեանը ներառում էր նաեւ «խալդա-ուրարտականը». այդ երեւոյթն, ըստ նրա, մէկ անգամ եւս ցուցում է հայերէնի «խառն» լեզու լինելը[7]։ Գ.

---

[3] **Գ.Ա. Ղափանցյան**, *«Հնէաբանական» մի քանի մնացորդներ հայերենում. Ստուգաբանություններ – «առիւծ», «մորմ», «խլէգ»*, Յերեվան, 1927, էջ 1։

[4] **Ղափանցեան 1917**, էջ 5։

[5] **Ղափանցյան 1961**, էջ 11-12, 31, 62-63, 223։ Հայերէնում «սկիւթական» ներդրման մասին մանրամասնօրէն գրել ենք՝ **Տ.Ս. Դալալյան**, *iš-qi-gu-lu-ú երկիրը և սկյութները* // Խալդյան զորությամբ... Հոդվածների ժողովածու՝ նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան, 2010, էջ 37-40, 43-46։

[6] **Г.А. Капанцян**, *К происхождению армянского языка*, Ереван, 1946, էջ 39-40։

[7] **Ղափանցյան 1927**, էջ 1։ Ընդ որում, Ղափանցեանը նշում էր, որ համամասնական յարաբերութեամբ հ.-ե. համարուող բառարմատները թուով մօտ 350-400 են, մինչդեռ աւելի քան 4000 չստուգա-

Ղափանցեանի կարծիքով՝ հայերէնի ծագումնաբանական քննութեան մէջ հ.-ե. գերազանցութեան օգտին առաջադրուած թէզը միակողմանի է, դրան հակառակ՝ նա մեծապէս կարեւորում էր տեղական՝ «ասիանիկ» նեդրումը[8]: Այդ հիմքը նա անուանում էր փոքրասիական լեզուական ենթաշերտ, որն, ըստ նրա, շփումների մէջ էր խեթական, խուռի-ուրարտական եւ նախաքարթուելական միջավայրերի հետ[9]:

Յաբեթական տեսութիւն

Եթէ առաջին շրջանի իր աշխատանքներում Գ.Ղափանցեանը գործածում էր «յաբեթական լեզուական ընտանիք» եզրոյթը եւ այն հակադրում հնդեւրոպական լեզուաընտանիքին, ապա Ն. Մառն իր ուսումնասիրութիւնների սկզբնական շրջանում հակուած էր գործածելու «յաբեթական լեզուաճիւղ» բառեզրը, որն իր հերթին մտցնում էր աւելի մեծ մի լեզուաընտանիքի մէջ (ոչ-հնդեւրոպական): Յաբեթական լեզուների մասին Ն. Մառի եւ Գ. Ղափանցեանի վերլուծութիւններն ու դատողութիւնները ցոյց են տալիս, որ սխալական եւ պարզունակացուած է մերօրեայ այն տեսակէտը, թէ նրանք «յաբեթական» եզրոյթն օգտագործում էին իբրեւ «կովկասեան»-ին համարժէք: Իրականում «յաբեթական լեզուաընտանիք» (ըստ Գ. Ղափանցեանի) կամ «յաբեթական լեզուաճիւղ» (ըստ Ն. Մառի) բնորոշմանը նրանք վերագրում էին շատ աւելի ընդգրկուն աշխարհագրական եւ լեզուաբանական յատկանիշներ ու բովանդակութիւն:

Ըստ Ն. Մառի՝ «յաբեթական ճիւղի» լեզուները ցեղակից էին սեմական լեզուաճիղին եւ միասին կազմում էին մէկ լե-

---

բանուած բառարմատներ, որոնք փոխառեալ չեն՝ եւ ուստի նոյնպէս բնիկ, պէտք է որ դասուեն «յաբեթական» շերտին [**Ղափանցյան 1961**, էջ 28]:

[8] **Ղափանցյան 1961**, էջ 223-224:

[9] **Капанцян 1946**, էջ 39-40:

զուարնտանիք[10], Գ.Ղափանցեանի կարծիքով՝ յաբեթական լեզուները ժամանակին տարածուած էին առաւելաբար Փոքր Ասիայի հիւսիս-արեւելեան մասում եւ Կովկասում[11]: Ն. Մառի տեսութեան համաձայն՝ քարթուեալական եւ արեւմտակովկասեան լեզուները յաբեթականի միայն առանձին խմբեր են կազմում, ինչպէս եւ, օրինակ, յաբեթական լեզուների հետ առընչութիւններ ունեն մարին, սուոմին, ուդմուրտերէնը, մինչեւ իսկ չուվաշերէնը: Ինչպէս արձանագրում է Գ.Ղափանցեանը՝ առանց, սակայն, իր կարծիքը ուղղակիօրէն յայտնելու, Մառը 1920-ին հրատարակած իր մենագրութեան մէջ յաբեթական լեզուների տարածական ընդգրկումը հասցնում էր մինչեւ Առաջաւոր Ասիա, Հարաւային Աֆրիկա եւ հարաւային Եւրոպայի որոշ շրջաններ[12]:

Իր առաջին լեզուաբանա-ծագումնաբանական աշխատանքի հրատարակումից (1917) մօտ մէկ տասնամեակ անց Գ. Ղափանցեանն առանձին ուսումնասիրութիւն է նուիրում Ն. Մառի հիմնադրած «յաբեթական լեզուաբանութեան» տեսութեանը եւ դրա զարգացման համառօտ պատմական ակնարկ է տալիս: Այստեղ նա նշում է, որ Մառն արդէն 1910-ականների կէսին յաբեթա-սեմական «յեղբայրական ազգակցություն»-ը փոխարինել էր «արյունակցականով», այն է՝ աւելի հեռաւորով: Ըստ Ղափանցեանի՝ «*նախկին բանաձեվումին՝ հաբեթական լեզուները սեմականի եւ քամիտականի հետ մի ընտանիքի յերեք ճյուղեր են, տրվում է հետեվյալ վերապահությունը. «Թերեվս այդ այդպես եվ լինի իր ժամանակին, բայց այժմ այնպես է աճել հաբեթական*

---

[10] **Н.Я. Марръ**, *Осоновныя таблицы къ грамматикѣ древнегрузинскаго языка (с предварительнымъ сообщеніемъ о родствѣ грузинскаго языка къ семитическим)*, С-Петербургъ 1908, էջ 1 :

[11] **Ղափանցեան 1917**, էջ 5:

[12] **Գ.Ա. Ղափանցյան**, *Հաբեթական լեզվաբանությունն ու տեսությունը*, Յերեվան, 1926, էջ 4:

լեզուների կազմը, վոր ստիպված ենք դրանց բաժանել յերկու մեծ ճյուղերի եւ միացնել մի անկախ լեզվաընտանիքի մեջ՝ հաբեթական»»[13]: Այսպիսով, Մառն ինքն էլ, գիտական նոր տուեալների ի յայտ գալով, ժամանակի ընթացքում որոշակիօրէն փոփոխել է իր տեսակէտները՝ «յաբեթական լեզուները» համարելով առանձին լեզուաընտանիք:

Գ. Ղափանցեանը նկատում է Մառի յաբեթական տեսութեան վրացակենտրոնութիւնը, որի շուրջ խմբաւորւում են արեւմտակովկասեան, վայնախական եւ արեւելակովկասեան լեզուները: Նա նշում է, որ այդ յաբեթական ընտանիքին են դասւում կովկասեան «խառն» հայերէնը (յաբեթա-հնդեւրոպական), «խառն» թաբասարաներէնը (յաբեթա-թիւրքական), իսկ «արտակովկասեան» յաբեթական լեզուները բաժանւում են երկու խմբերի. արեւելեանի մէջ մտնում են շումերերէնը, էլամերէնը, խաթերէնը, լիւդերէնը, կարիերէնը եւն, իսկ արեւմտեանի մէջ՝ բասկերէնը, իբերերէնը, պիկտերէնն ու էտրուսկերէնը[14]:

Որդեգրելով Ն. Մառի մօտեցումները՝ Գ. Ղափանցեանը գործածում է նաեւ նրա՝ շրջանառութեան մէջ դրած եզրոյթները, ինչպէս, օրինակ՝ *լեզուական հնէաբանութիւն* բառեզրը, որի տակ հասկացւում էր լեզուի «մեռած» երեւոյթների յայտնաբերումն ու հետազօտումը: Այս «հնէաբանական» աշխատանքի մէջ Գ. Ղափանցեանը կարեւոր էր համարում ոչ միայն իմաստաբանական ուսումնասիրութիւնները, այլեւ ձեւաբանութեան եւ հնչիւնաբանութեան հետազօտումը[15]:

---

[13] **Ղափանցյան 1926**, էջ 3:
[14] **Ղափանցյան 1926**, էջ 4-5:
[15] **Ղափանցյան 1927**, էջ 1:

Յաբեթական տեսութեան փոխակերպումները Ղափանցեանի հայեացքներում

Իր ուշ շրջանի աշխատանքներում Գ. Ղափանցեանն արդէն փոքր-ինչ զգուշաւորութեամբ է վերաբերւում Ն. Մառի «յաբեթական» տեսութեանը եւ հայերէնի խառնակ ծագման վարկածին: Կարծես թէ նա աւելի հակւում է հայերէնը հնդեւրոպական «աղճատ» լեզու համարելու տեսակէտին, որն ապացուցելու համար վկայակոչում է Ա. Մեյէի հետեւեալ տողերը. *«ընդհանուր առմամբ, հայերէնի հնչիւնական եւ ձեւաբանական համակարգերը խորապէս տարբեր են հնդեւրոպականից»*[16]:

Այդուհանդերձ, Ղափանցեանը հիմնականում մնում է հայերէնի երկբնոյթ էութեան իր տեսակէտին՝ այն պարզապէս եզրաբանական փոփոխութեան ենթարկելով, «յաբե-թական» լեզուները կոչելով «ասիանիկ»: Ըստ նրա՝ «*Հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական, թեեւ բառակազմական միջոցներով կարծես թե հավասար դրության մեջ է (հնդեվրոպական թե ասիանիկ), իսկ արմատների (բառերի) քանակի տեսակետից գերազանցորեն ասիանիկ կամ տեղական է*»[17]:

Ինչպէս երեւում է, սխալական է մերօրեայ այն տեսակէտը, թէ Գ. Ղափանցեանը չի ընդունում հայերէնի հնդեւրոպական ծագումը: Անգամ իր վաղ շրջանի աշ-խատանքում նա գրում է, որ «*հնդկա-եւրոպական «մորֆեմականութիւնը» մեր լեզուներում բաւականին ստուար քանակութեամբ է մնացել, թէեւ յաբեթական մասն էլ, ինչպէս կտեսնենք, նուազ չափով չի ներկայացուած: …պահուել են*

---

[16] **Ղափանցյան 1961**, էջ 28; **A. Meillet**, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique* (seconde édition entièrement remaniée), Vienne, 1936, էջ 144, § 112 :

[17] **Ղափանցյան 1961**, էջ 31:

անտարակոյս շատ բնորոշիչ հնդ.-եւր. Պատկանելիութիւններ, որոնք իսկ բաւական են մեր լեզուների ազգակցականութիւնը բովանդակապէս որակելու»[18]: Այլ հարց է, որ Ղափանցեանը հնդեւրոպական համեմատական լեզվաբանութիւնը համարելով «բուրժուական գիտություն»՝ կողմնակից էր նոր վերամշակումների ու տեսութիւնների համար իւրացնել նրա միայն դրական տարրերը, այն դրույթները, որոնք կասկած չեն հարուցում[19]:

Աւելորդ չէ նշել, որ լեզուների միախառնման տեսութիւնները ներկայումս համարւում են հնացած, եւ 20-րդ դարի կէսերից առաւել տարածում է ստացել լեզուաբանական այն մօտեցումը, որ կամայական լեզուի մէջ տարասեռ տարրերի գոյակցումը պէտք է բացատրուի ենթաշերտի, մակաշերտի եւ այլ շերտերի առկայութեամբ, որոնցից զերծ չէ աշխարհի եւ ոչ մի լեզու: Ըստ որում, պէտք չէ շփոթել ենթաշերտը փոխառեալ տարրերի հետ, քանի որ առաջինը կազմում է իւրաքանչիւր լեզուի հարազատ մասը եւ նուազ բնիկ չէ, քան նախալեզուի դրած հիմքը: Ինչեւէ, չնայած ձեւակերպումների տարբերութեանը, այնուամենայնիւ մինչ օրս արդիական է հնչում Գ. Ղափանցեանի այն միտքը, որ հայկական լեզու-նեբի «*յաբեթական շերտը ստոյգ եւ բովանդակ կերպով տակաւին չի ուսումնասիրուած՝ ինչպէս հնդկա-եւրոպականը*»[20]:

Հայ-քարթուելական բառային զուգաբանութիւնների հարցը

Գ.Ղափանցեանի կարծիքով՝ մեր հայկական լեզուների «յաբեթական շերտը» ցեղակցօրէն առաւել մօտ է ոչ թէ վրացերէնին, այլ ինչպէս նա է կոչում՝ «իվերական» ճիւղին, որի մէջ նա մտցնում է մեգրելերէնը եւ ճաներէնը (լազերէ-

---

[18] **Ղափանցեան 1917**, էջ 25:

[19] **Գ.Ա. Ղափանցյան,** *Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը* // Նոր ուղի, 1931, № 5, էջ 107:

[20] **Ղափանցեան 1917**, էջ 16:

նը)[21] (ընդունուած է նաեւ դրանց ընդհանուր՝ «զանական խումբ» անուանումը)։ Այստեղ Գ. Ղափանցեանը հետեւում է Ն. Մառի դասակարգմանը, ով քարթուելական «այսպէս կոչուած» խումբը տրոհում էր քարթական, իվերական եւ սուանական խմբերի[22]։ Իբրեւ անառարկելի հիմնադրոյթ՝ Գ. Ղափանցեանն ընդունում է, թէ հայերէնում գրեթէ բոլոր բուսանուններն ու ծառանունները, ինչպէս եւ մետաղների անուանումները «յաբեթական» ծագման են[23]։

Գ. Ղափանցեանը հայ-զանական առկայ զուգահեռները չի մեկնաբանում իբրեւ պարզ փոխառութիւններ, այլ դրանք համարում է լեզուական ցեղակցութեան արդիւնք։ Հայերէնում նկատուող զանաբանութիւնները նա անուանում է «իվերականութիւն»[24]։ Այս երեւոյթի՝ ինչ եզրոյթով էլ որ այն կոչենք, ամենայայտնի օրինակներից մէկը հայ. *ոչխար* բառն է, որ դեռեւս հնուց համեմատուել է վրաց. *ցխովարი* [ցխովարի, cʻxovari], հին վրաց. *ցխૂარი* [ցխուարի, cʻxuari] բառի հետ, որի դիմաց լազերէնում ունենք *ჩხუვარი* [չխու-վարի, čʻxuvari], *ჩხૂრი* [չխուրի, čʻxuri] կամ *მჩხૂრი* [մչխուրի, mčʻxuri] հոմանիշները։ Հայերէնն իր պայթաշփական երկֆոկուս միջնալեզուային բաղաձայնով նույնանում է լազական ձեւին, մինչդեռ վրացերէնն ունի միաֆոկուս ատամնալեզուային պայթաշփական։ Դրանով հանդերձ, ո՛չ լազերէնը, ո՛չ հայերէնը միմեանցից փոխառեալ չեն (այդ պարագային պիտի ունենայինք հայ. *չխուար եւ կամ լազ. *ოჩხარი,

[21] **Ղափանցեան 1917**, էջ 14-15։ Հետաքրքրական է, որ մօտ կէս դար անց հայերէնի եւ օսերէնի զանաբանութիւններին ընդհանրական մօտեցմամբ անդրադառնում է Վ. Աբաեւը [**В.И. Абаев**, *Типология армянского и осетинского языка и кавказский субстрат* // Sprache und Gesllschaft, Hrsg. H. Spitzbardt, Universität Jena, 1970, S. 16-28]։

[22] **Марръ 1908**, էջ 1 :

[23] **Ղափանցեան 1917**, էջ 27։

[24] **Ղափանցեան 1917**, էջ 15։

*ոչեխարո [oč‘xari, uč‘xari] ձեւերը), այլ ծագում են ենթաշերտային ընդհանուր մի նախաձեւից[25]:

Հայերէնի եւ լազ-մեգրելական խմբի միւս անկնայոյտ զուգաբանութիւններից են՝ հայ. *ճանճ/ճանջ* եւ մեգրել. *ჭანჯი* [ճանջի, č’anži] (> *ჭანდი* [ճանդի, č’andi]), լազ. *ჯაჯი* [ջաջի, žaži], *მჯაჯი* [մջաջի, mžaži], *მჭაჯი* [մճաջի, mč’ažži] (*m-č’ažži) «ճանճ», որին, համարւում է, որ համապատասխանում է վրաց. *მწერი* [մծերի, mc’eri] «ճանճ» բառը (Գ. Ղափանցեանը չի նշում մեգրելական զուգահեռները, մէջբերում է միայն լազ. *მჭაჯი* [մճաջի] եւ վրաց. *წერი* [ծերի]՝ առանց նախայաւելուած m-ի[26]); հայ. *շունչ* եւ մեգրել. *შური* [շուրի, šuri], բարբռ. *შუნჯი* [շունջի, šunži] «հոգի», որոնց համապատասխանում է վրաց. *სული* [սուլի, suli] < *suri «հոգի» բառը (Ղափանցեանը բերում է միայն մեգրելական առաջին ձեւը՝ չնշելով բարբառայինը)[27]; հայ. *կինճ/կինջ* «արու վարազ» եւ մեգրել. *ღეჯი* [ղեջի, ǧeži], վրաց *ღორი* [ղորի] «խոզ, վարազ»; հայ. *ականջ* եւ մեգրել. *კუჯი* [կուջի, k’užži]; վրաց. *ყური* [կղուրի, quri] «ականջ»[28]:

---

[25] Հակառակ Հ. Աճառեանի տեսակէտի, որը հայերէնը համարում է փոխառեալ «հարաւային կովկասեան մի լեզուից» [**Հ.Յ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան* (1-4), Երեւան, 1971-1979, հ. 2, էջ 562]: Ի դէպ, Աճառեանը նշում է հայերէնից կրկին ետ վերցրած վրաց. *ოჩხარი* [օչխարի, oč‘xari] ձեւի մասին, որն ուշ վկայուած եւ քիչ հանդիպող բառ է:

[26] **Ղափանցեան 1917**, էջ 15:

[27] **Ղափանցեան 1917**, էջ 15; **Ղափանցյան 1961**, էջ 74:

[28] **Ղափանցյան 1927**, էջ 9; **Г.А. Капанцян**, *О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков*, Ереван, 1952, էջ 15-16: Վերջին երկու օրինակներում, սակայն, անբացատրելի է մնում հայ. /կ/-ի դիմաց մեգրելերէնում մե՛րթ կոկորդային /ღ/-ի [ղ, ǧ], մե՛րթ քմալեզուակային /ყ/-ի [կղ, q] առկայութիւնը: Նաեւ յատուկ հետաքննութեան կարօտ է հայ. *ականջ* բառի հ.-ե. ծագման վարկածը, որը թէեւ ընդունւում է հնդեւրոպաբանների կողմից, սակայն բաւական

Այստեղից նա հետեւեցնում է, թէ հայերէնում, ինչպէս եւ արեւմտեան ու արեւելեան քարթուելական լեզուներում, գործել է *ջ /ր* հերթագայութիւնը. որպէս ապացոյց բերում է, օրինակ, *մրմունջ* եւ *մրմուռ* բառերը, որոնք, սակայն, իրականում տարբեր աճականներով կազմուած բնաձայնական բառեր են, կամ *ճառ- (*ճառ-ա-գայթ) եւ *ճաճանչ* բառերը[29], սակայն այստեղ էլ անյստակ են արմատները, երկրորդը կրկնաւոր կազմութիւն է՝ բայց դժուար վերականգնելի արմատով:

Միւս զուգաբանութիւնները, որ նշում է Գ.Ղափանցեանը, հետեւելով Ն.Մառին[30], կասկածելի են ինչիւնաբանական պատճառներով. այսպէս, օրինակ, *տառ* բառը, որի համար նրանք վերականգնում են *ճառ ձեւը, իրականում ծագում է *տարր* ձեւից[31], որի համար Գ. Ջահուկյանը ենթա-

---

դժուար բացատրելի է համարւում՝ ինչիւնական վիճայարոյց անցումների եւ նախաձեւի վերականգնման խրթին խնդրի պատճառով [**Աճառեան 1971-1979**, հ. 1, էջ 104; **Գ.Բ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երեւան, 2010, էջ 29; **H.K. Martirosyan**, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Leiden-Boston, 2010, էջ 21-22]: Բացի այս բառից՝ միւս վերոբերեալ օրինակներն, ամենայն հաւանականութեամբ, անմիջականօրէն յանգում են բնաձայնական եւ ինչագաղափարային ծագման ընդհանուր նախաձեւերի: Հետեւաբար, սրանց է յարում նաեւ հայ. *բարբաջ*-ել եւ մեգրել. *ցարցանճՀo* [բարբանճի, barbanč'i] «աղմուկ», լազ. *ցարցալ-* [բարբալ-, barbal-] «ցնդաբանել»; հայ. *խրխինջ* եւ լազ. *ԽoրԽoճ-* [խիրխին-, xirxin-] «խրխնջալ», մեգրել. *ԽՄրԽoճ-/ԽoրԽoճ-* [խուրխին-/խիրխին-, xurxin-/xirxin-] «խռմփալ» շարքերը, որոնք բերում է Գ. Ղափանցեանը [**Капанцян 1952**, էջ 14; **Ղափանցյան 1961**, էջ 77]:

[29] **Ղափանցյան 1927**, էջ 9:

[30] **Н.Я. Марръ**, *Яфетическіе элементы въ языкахъ Арменіи-II*, С-Петербургъ, 1911, էջ 470-471.

[31] **Աճառեան 1971-1979**, հ. 4, էջ 376:

դրում է հ.-ե. ծագում՝ *der- «քերթել, ճեղքել» նախաձեւից[32]; *տարի* բառի համար վերականգնուող *ճարի ձեւի համար որեւէ հիմնաւորում չունենք; *տաւն* «տօն» բառի համար վերականգնուող *տան ձեւի քմայնացուած տարբերակ է դիտւում *ճան-* առանձին անգործածական արմատը, որը հանդիպում է *խրախճան*-ք բառում եւ որի զուգահեռ ձեւեր են համարւում հին վրաց. *ჩანა* [ծանա, c'ana] «խնջոյք» բառը եւ մեգրել. *ჭან-* [ճան-, č'an-] «հրաւիրել» արմատը[33]. Այդուհանդերձ, որեւէ հիմնաւորում չունենք հայ. *տօն* բառի առաջին բաղաձայնի քմայնացման համար, եւ այդ բառն էլ հաւանական հ.-ե. զուգահեռներ ունի ցեղակից լեզուներում[34]:

Նմանապէս, հիմնաւորում չկայ հայ. *ջին* «գաւազան, մահակ» եւ մեգրել. *ჭინუ* [ճինու, č'inu], լազ. *ჭინუ* / *ჭუნუ* [ճինու / ճունու, č'inu / č'unu] «ճիպոտ» բառերի մօտաւոր ցեղակցութեան համար, մանաւանդ որ հայերէնն ունի վստահելի հ.-ե. ստուգաբանութիւն[35]: Նոյն հայ. *ջ* [ǰ] ≠ մեգր. *ჭ* [ճ, č'] հնչիւնական անհամապատասխանութիւնն ենք տեսնում հայ. *ջամբ* «ուտելիք, կերակուր» եւ մեգրել. *ჭამა* [ճամա, č'ama] «սնուցանել» բառերում, որոնք համեմատում է Գ. Ղափանցեանը[36]: Եթէ անգամ այս օրինակներում ունենք հեռաւոր ցեղակցութիւն կամ առնընչութիւններ, ապա դրանք պէտք է հանգամանօրէն բացատրուեն:

Այստեղ քննութեան չենք առնի հայերէնում եւ զանական խմբի լեզուներում առկայ այն բազմաթիւ ընդհանուր բառերը, որոնք միմեանցից կամ այլ աղբիւրներից փոխառեալ

---

[32] **Ջահուկյան 2010**, էջ 725:
[33] **Ղափանցյան 1927**, էջ 4:
[34] Տե՛ս **Աճառեան 1971-1979**, հ. 4, էջ 441:
[35] Տե՛ս **Աճառեան 1971-1979**, հ. 4, էջ 127:
[36] **Капанцян 1952**, էջ 13; **Ղափանցյան 1961**, էջ 75:

են կամ այդպէս են համարւում, կամ որոնց ստուգաբանութիւնները բաւական վիճահարոյց են[37]:

Հայ-քարթուելական հնչիւնաբանական, ձեւաբանական եւ բառակազմական համապատասխանութիւնների հարցը

Հետաքրքրական եւ առաւել մանրազնին ուսումնասիրութեան կարօտ է վրաց. *ց* [g, c‘] - հայ. *խ* [x] հաւանական համապատասխանութեան հարցը, որը հաւանաբար երեւան է գալիս մի շարք բառերում՝ վրաց. *ցբա* [gբա, c‘ba] «խաբէութիւն, նենգութիւն» եւ հայ. *խաբ*-ել, վրաց. *ցլա* [gլա, c‘la] «հանել, զատել, քերթել» եւ հայ. *խլ*-ել, վրաց. *ցոբա* [gոբա, c‘oba] «խցանել» եւ հայ. *խուփ* (*խուբ), վրաց. *ցինգլի* [gինգլի, c‘ingli] եւ *ցվինտլի* [gվինտլի, c’vint’li] «խլինք» եւ հայ. *խլինք*-ք, բարբռ. *խնլ*-ոտ, վրաց. *ցոմի* [gոմի, c‘omi] «խմոր» եւ հայ. *խմոր* (< *խում-որ ?)[38]: Փոքր-ինչ աւելի վիճահարոյց է վրաց. *ճ* [ճ, c’] - հայ. *կ* [k] համապատասխանութիւնը, թէեւ որոշ օրինակներ հետաքրքրական են թւում[39]: Յաւելեալ ուսումնասիրութեան կարօտ են վրացերէնում նախադիր պայթական եւ շփական բաղաձայների «երկփեղկման» արդիւնքում առաջացած հետեւեալ հաւանական համապատասխանութիւնները. հայ. *ծով* եւ վրաց. *ճզվա* [gզվա, zğva] «ծով», հայ. *ցռուկ* «դունչ, քթամաս» եւ վրաց. *ցխցորո* [gխվիրի, c‘xviri] «քիթ, դունչ», հայ. *սովոր*-ել եւ վրաց. *սճաւցլա* [sճավլա, sc’avla] «սովորեցնել»[40]:

Գ. Ղափանցեանն անդրադառնում է նաեւ հայերէնի «լիաձայնաւորութեան» յատկանիշին, ինչպէս *խորով*-ել բայում, որին վրացերէնում համապատասխանում է *ծորցեցա*

---

[37] Տե՛ս **Капанцян 1952**, էջ 16-21, 22-33; **Ղափանցյան 1961**, էջ 78-90, 92-95:

[38] **Ղափանցյան 1927**, էջ 15:

[39] Տե՛ս **Ղափանցյան 1927**, էջ 16-17:

[40] **Капанцян 1952**, էջ 9 :

[խուրվեբա, xurveba] «այրոցք» բառը[41]: Այս շարքին է նա առընչում նաեւ հայ. *սովոր*- բայարմատը՝ դրա դիմաց դնելով վրաց. *სწავლა* [սծավլա, sc'avla] «սովորել, սովորեցնել» բառը եւ նրա համար վերականգնելով *sawl- նախաձեւը, որն էլ իր հերթին, պէտք է համապատասխանէր արեւմտեան (լազ-մեգրելական) բարբառների *sowor- չպահպանուած ձեւին[42]: Նոյն շարքին են դասւում հայ. *գորով* եւ վրաց. *კვარ*- [կվար-, k'var-] «սիրել» արմատները[43]: Այս երեւոյթը բացատրւում է նրանով, որ ի տարբերութիւն քարթուելական արեւելեան ճիւղի լեզու վրացերէնի, արեւմտեան մեգրելերէնին յատուկ է բառերի լիաձայնաւորութիւնը[44]:

Գ.Ղափանցեանը գտնում է նաեւ, որ հայ. *կուտր* / *կտուր* / *կոտր* / *կտոր* / *կոտոր* տարաձայնաւոր արմատական շարքը հետեւանք է հնդեւրոպական *e* / *o* / *zero* հերթագայութեան ազդեցութեան: Յաջորդ հետաքրքիր դիտարկումն այն է, որ *m*- նախայաւելուած ձեւոյթը, որն ամենաբնորոշիչն է քարթուելական եւ սեմական լեզուների համար, բնաւ յայտնի չէ հայերէնում[45]:

Գ. Ղափանցեանը յատուկ անդրադարձ է կատարում նաեւ հայերէնի եւ վրացերէնի (հարկ է ընդհանրացնել՝ բոլոր «քարթուելական» լեզուների - Տ.Դ.) հնչիւնական համակարգերի նոյնականութեանը՝ նշելով, սակայն, հայերէնում եռաշարք բաղաձայների հնչարտաբերման («արտիկուլացիա») տարբերութիւնը, վրացերէնում քմայնացման բացակայութիւնը եւ, միեւնոյն ժամանակ, այն փաստը, որ այդ նոյնական հնչիւնական համակարգերը բնորոշ են նաեւ օսերէնին ու քրդերէնին (պէտք է հասկանալ քրդերէնի հիւսի-

---

[41] **Ղափանցեան 1917**, էջ 15; **Ղափանցյան 1961**, էջ 76:

[42] **Капанцян 1952**, էջ 9-10; **Ղափանցյան 1961**, էջ 73, 76 :

[43] **Капанцян 1952**, էջ 10-11; **Ղափանցյան 1961**, էջ 76 :

[44] **Ղափանցյան 1927**, էջ 26, ծան. 1:

[45] **Ղափանցեան 1917**, էջ 20:

սային՝ կուրմանջի բարբառախումբը -Տ.Դ.), ուստի դրանք հարկ է դիտարկել ընդհանուր [Հայկական լեռնաշխարհի եւ յարակից տարածքների - Տ.Դ.] տարածաշրջանային միջավայրի համապատկերում[46]: Նշուած լեզուներին, հնչիւնական համակարգի նոյնականութեան տեսանկիւնից, անհրաժեշտ է աւելացնել նաեւ զազայերէնը եւ հայ-առաներէնը:

Ըստ Գ. Ղափանցեանի՝ հայերէնի հոլովական եւ խոնարհման համակարգերը ներկայացնում են հնդեւրոպականի եւ յաբեթականի խաչասերում եւ փաստօրէն փոխզիջումային մի տարբերակ են, որի մէջ առկայ են երկու լեզուաընտանիքներին բնորոշ թեքական եւ կցական (Գ. Ղափանցեանի գործածած եզրոյթով՝ «լծորդական») տարրեր[47]: Նա հայ-սուանական անջատ զուգաբանութիւն է համարում «կրկնակի յոգնակիի» ձեւաբանական կարգը, օրինակ՝ սուան. *თხილამ* [թխիլամ, tʻxilam] «դահուկ» > *თხილმარ* [թխիլմ-ար, tʻxilam-ar] «զոյգ դահուկ» > *თხილმარალ* [թխիլմ-ար-ալ, tʻxilm-ar-al] «դահուկի զոյգեր» եւ հայ. բարբռ. *կնկտիներ*, *ձիանիք*, *ախպէրտինք* շարքերում[48]:

Ըստ Ղափանցեանի՝ «յաբեթական յոգնակի» *-նի* [-ni] մասնիկի հետքերը պահպանուել են հայոց որոշ տեղանուններում՝ *Գառնի*, *Արզնի*, *Պարնի*, *Պտղնի*, *Բջնի*, *Մուղնի*, եւն[49]: Ուշագրաւ է Ղափանցեանի աշխատութիւնը վրացիների *ქართველი* [քարթվելի, kʻartʻveli] ինքնանուան ստուգաբանութեան վերաբերեալ. այդ ցեղանուան երկրորդ մասում նա տեսնում է Հայկական լեռնաշխարհի որոշ գաւառանունների եւ նահանգանունների երկրորդ մասում պահպանուած *բեր*ան արմատը, որը նա բացատրում է որպէս «ազգ, ցեղ,

---

[46] **Ղափանցեան 1917**, էջ 17-18; **Ղափանցյան 1961**, էջ 72:
[47] **Ղափանցեան 1917**, էջ 20:
[48] **Ղափանցեան 1917**, էջ 21, ծան. 1:
[49] **Ղափանցյան 1926**, էջ 19, ծան. *:

տուն»[50]: Նշենք, որ նոր ուսումնասիրութիւններով այս ստուգաբանութիւնը չի հաստատւում, սակայն, ամէն դէպքում, նշուած աշխատութեան մէջ բազմաթիւ հետաքրքրական մտքեր եւ զուգահեռներ կան:

Հայ-զանական բառակազմական ընդհանրութիւնների թուին են պատկանում՝ m- մասնիկի յաւելումը նախաձայնաւոր կրկնական գոյականների մէջ, ինչպէս՝ լազ. *ჭიანური-მიანური* [ճիանուրի-միանուրի, č'ianuri-mianuri] «վաղուց-վաղուց» (հմմտ. հայ. *հին-մին*), կամ էլ՝ բառամիջեան ձայնաւորի փոփոխութիւնը նման կազմութիւններում, ինչպէս՝ *მჯვეში-მჯვუში* [մջվեշի-մջվուշի, mǯveši-mǯvuši] «հին-հին, շատ հին» (հմմտ. հայ. *մանր-մունր*)[51]: Հետաքրքրական է լազ. *კო* [կո, k'o], մեգրել. *ოკო* [օկո, ok'o] «պէտք է» մասնիկի համեմատութիւնը հայ. *կը* / *կու* մասնիկի հետ[52]: Ակնյայտօրէն սխալական է, սակայն, հայերէնի անկատար դերբայի *-ում* վերջաւորութեան բխեցումը լազական համապատասխան ձեւից[53], քանի որ ապացուցուած է, որ հայերէնի անկատար դերբայի քերականական ձեւը ծագում է ներգոյական հոլովի նշանակութիւնից եւ ձեւից: Դրան հակառակ, միանգամայն հաւանական է հայ. *ուտուշ-խմուշ* բայանուան ծագումը Համշէնի բարբառի միջոցով մեգրել. *-uš* դերբայական վերջաւորութիւնից, ինչի մասին գրում է Գ. Ղափանցեանը[54]:

---

[50] **Г.А. Капанцян**, *К происхождению грузинского национального имени Kharthveli*, Ереван, 1939; տե՛ս նաեւ **Ղափանցյան 1961**, էջ 50-53:

[51] **Капанцян 1952**, էջ 43:

[52] **Капанцян 1952**, էջ 43-44; **Ղափանցյան 1961**, էջ 83:

[53] Տե՛ս **Капанцян 1952**, էջ 45:

[54] **Капанцян 1952**, էջ 46-47:

Մառի տեսութեան քննադատութիւն

Ն.Մառի մահուանից յետոյ, երբ «մառականութիւնը» խըստօրէն քննադատուեց եւ հերքուեց խորհրդային գիտութեան մէջ, Գ.Ղափանցեանը որոշակիօրէն փոխում է իր մօտեցումները: Այսպէս, հայ-զանական զուգաբանութիւնները նա սխալմամբ համարում է փոխառեալ՝ զաներէնից հայերէն: Նրա կարծիքով՝ գրաբարում եղած լազ-մեգրելական «ընդհանուր տարրերը (մօտ 30 բառարմատ)» մնացել են Հայասայի ժամանակից. դրանք Ճորոխի աւազանի կոնտակտային գօտում փոխառուելով՝ մտել են «Հայասայի հայերէն», իսկ յետագայում ներթափանցել են Մեծ Հայքի բոլոր բարբառները[55]: Այդ նոյն ժամանակներին եւ մշակութային միջավայրին է նա վերագրում, օրինակ, հայ. *բալ* պտղանուան ծագումը, որի բազմաթիւ տարածաշրջանային զուգահեռներից մէկն է վրաց. *ბალი* [բալի, bali] համանիշը[56]: Այսուհանդերձ, իր ռուսերէն աշխատութեան մէջ Ղափան-ցեանը հնարաւոր է համարում հայերէնի զանաբանութիւն-ներից որոշների ոչ թէ փոխառեալ, այլ ընդհանուր ծագումը[57]:

Իր վաղ շրջանի աշխատանքներում նոյնպէս, հետեւելով հանդերձ Մառի տեսակէտներին, Գ.Ղափանցեանը յաճախ նաեւ քննադատում է նրա ծայրայեղ մօտեցումները. այսպէս, օրինակ, նա գրում է, որ «*Մառը յուր ազգաբանական պալեոնտոլոգիական ստուգաբանություններով հաճախ հանգում է, ըստ իս, անհեթեթությունների եւ nonsense-ների*»[58]:

---

[55] **Ղափանցյան 1961**, էջ 30, 69:

[56] Այդ բառի ծագումը նա կապում է *Bala* (*Pala*) պոնտական երկրամասի հետ, ինչպէս «Կերասունտ քաղաքանունից ունենք *կեռաս*, pontic «պոնտական» անունից՝ *պնդուկ* («ֆընդրկ»), persic «պարսկական» անունից ռուս. *персик* «դեղձ» [**Ղափանցյան 1961**, էջ 39, ծան. 1]:

[57] **Капанцян 1952**, էջ 3-4:

[58] **Ղափանցյան 1926**, էջ 17:

Մառի տեսութեան ամենամեծ թերութիւններից մէկը Գ. Ղափանցեանը համարում է հաստատուն հնչիւնական օրէնքների բացակայութիւնը, ինչի պատճառով յաճախ ենք Մառի աշխատանքներում տեսնում տարբեր հարեւան եւ նոյնիսկ շատ հեռաւոր լեզուներում վկայուած նմանահունչ բառերի բռնազբօսիկ ստուգաբանական բռնակցումներ՝ առանց երբեմն հաշուի առնելու տուեալ լեզուների ներքին պատմական օրինաչափութիւնները եւ այդ բառերի հին ձեւերը[59]:

Ամփոփելով յաբեթական տեսութեան վերաբերեալ իր յօդուածը՝ Գ.Ղափանցեանը նշում է, որ «*Հաբեթականութիւնը, իբրեւ նոր ուսմունք, իր խոշորագոյն նվաճումներով եւ արժանիքներով հանդերձ ունեցավ եւ կունենա անշուշտ իր սխալները եւ թերությունները, վորը մասամբ եւ բնոյթագրվեց մեր կողմից։ Յեվ այդ շատ բնական է, քանի վոր այդ հսկա նյութի բոլոր կողմերի գեթ սխեմատիկ տեսաբանումը մի մարդու կարողությունից վեր է, վորքան էլ նա լինի տաղանդավոր ու աշխատունակ*»: Կարծես թէ փորձելով արդարացնել իր ուսուցիչ Մառի սայթաքումները եւ արդէն հնացած գիտական տեսակէտների մի մասը, Ղափանցեանը գրում է. «*Չմոռանանք հիշատակել, վոր, որինակ, հնդեվրոպագիտությունն իսկ իր հազարավոր սպասավորներով եւ հարյուրավոր համալսարանական ամբիոններով հազիվ կարողացավ մի ամբողջ դարում հասնել իր վորոշակի ձեվակերպմանը, այն էլ, թերեւս, կարոտ շտկումների*»[60]:

Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ Գ. Ղափանցեանը լեզուի ծագման եւ զարգացման, հարեւան լեզուների հետ փոխառընչութիւնների հարցերը դիտարկում էր լայն համայնապատկերով՝ օգտագործելով նաեւ յարակից ուղղու-

---

[59] **Ղափանցյան 1926**, էջ 21:

[60] **Ղափանցյան 1926**, էջ 23:

թիւնների տուեալները՝ տեղանուանագիտութիւն, սեպագրագիտութիւն, առասպելաբանութիւն, մշակութաբանութիւն։ Իր գիտական ձիրքի եւ համընդգրկուն գիտելիքների կիրառմամբ՝ Գ.Ղափանցեանը հսկայական փաստական նիւթ է վերլուծել իր բազմաթիւ աշխատութիւններում։ Այս նիւթի քննադատական վերամշակումն ու գործածութիւնը գիտական նոր ուսումնասիրութիւններում կարող է լոյս սփռել ծագումնաբանական եւ ստուգաբանական այլեւայլ վիճայարոյց խնդիրների վրայ[61]։

Далалян Торк - Григор Капанцян и «яфетическая» теория Н. Марра: интерпретация армяно-картвельских языковых связей.– В статье, путем комплексного обсуждения работ Гр. Капанцяна, опубликованных в разные годы, представляется его гипотеза о формировании армянского языка. Затем в общих чертах описывается капанцяновское восприятие и интерпретация «яфетической» теории языка, основанной Н. Марром. В работах второго периода творческой деятельности Гр. Капанцян значительно меняет свое отношение к «яфетической» теории, что и обсуждается нами в следующем подразделе. Затем мы детально касаемся армяно-картвельских лексических изоглосс, приведенных Гр. Капанцяном, критический анализ которых дает возможность определить степень обоснованности данных параллелей в свете современных научных данных. В следующем подразделе кратко представлена проблема армяно-картвельских фонетических, морфологических и словообразовательных соответствий. Последний подраздел касается критики Гр. Капанцяном теории Марра. В современных исследованиях весьма важным является критическая переработка и использование того огромного материала, который анализируется Гр. Капанцяном.

---

[61] Հմմտ. **Լ.Ս. Հովսեփյան**, *Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում*, Երեւան, 1982, էջ 42։

Dalalyan Tork - Grigor Kapantsian and "Japhetic" Theory of N. Marr: Interpretation of the Armenian-Kartvelian Linguistic Isoglosses. – In this paper, the hypothesis of Gr. Kapantsian concerning the formation of the Armenian language is presented through a comprehensive discussion of his works published in different years. Then, it is described in coarse lines Kapantsian's perception and interpretation of Marr's "Japhetic" linguistic theory. In the works of the second period of his activity, Gr. Kapantsian changed definitely his attitude and approach towards the "Japhetic" theory, this is discussed under the following headline. Then, we touch in detail the Armenian-Kartvelian lexical isoglosses brought by Gr. Kapantsian, the critical analysis of which allows us to identify the degree of their justification in the light of contemporary scientific data. The next subsection gives a brief overview of the Armenian-Kartvelian phonological, morphological, and word-formation correspondences. The last subsection broaches the criticism of Marr's theory by Gr. Kapantsian. In modern studies, it is very important to critically recycle and to use the huge material analyzed by Gr. Kapantsian.

Զաքարյան Հովհաննես
(Հայաստան, «Տաթև» ԳԿՀ)

ԱՆՁ ՄԱՏՆԱՆՇՈՂ *ՈՎ* ԵՎ *ՈՐ* ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի գրական արևելահայերենում մինչ այժմ գրեթե կանոնակարգված չէ անձ մատնանշող **ով** և **որ** շաղկապական բառերի բաշխումը: Այդ խնդրի շուրջը պարբերաբար վեճեր ու քննարկումներ են լինում (վերջերս՝ նաև ընկերային ցանցերում), սակայն արդյունքում չեն հայտնվում գիտականորեն հիմնավորված եզրակացություններ ու հանձնարարականներ:

Գիտական գրականության պրպտումները բացահայտեցին, որ խնդրին թռուցիկ անդրադարձ ունի միայն Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ[1]: Նա նախ նշում է, որ առաջադաս դիրքում կարող է լինել միայն **ով**-ը, իսկ մյուս դիրքերում **որ**-ն ու **ով**-ը կարող են փոխարինել միմյանց: Ապա որպես ծանոթություն նշում է, որ այդ տարբերակների միջև կա նաև իմաստային տարբերություն. **ով**-ը ցույց է տալիս «բոլորովին անորոշ անձ», «իբրև՝ ինչ մարդ որ», իսկ **որ**-ը «ցույց է տալիս խոսքի մեջ հիշված կամ առաջուց ծանոթ առարկաներից որևէ մեկը կամ մի քանիսը»: «Օրինակ՝ իմաստի խոշոր տարբերություն կա ասել՝ ***Ով*** *որ խաղա, նա կկաղա* և ***Որը*** *որ խաղա, նա կկաղա:* Առաջին խոսքն ընդհանրացական նշանակությամբ է, իբրև ինչ մարդ, ինչ մարդ կուզի լինի, իսկ երկրորդի մեջ առնվում է ծանոթ անձերից որևէ մեկը: Այս պատճառով **որը** հարաբերականն առաջից հաճախ ունենում է սովորաբար մի

[1] Տե՛ս **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Զ, էջ 510-511:

սեռական կամ բացառական խնդիր. ինչպես՝ «*Ուխտավորների* ***որը*** *երևելի մարդ է, առաջուց իրեն տեղ կպատրաստի,* ***որն*** *աղքատ է, պարսպի միջին կամ դուրսը մի տեղ վեր կգա*»:

Իհարկե, ակնհայտ է, որ Մ. Աբեղյանի երկու դիտարկումներն էլ խիստ ընդհանուր են և կարիք ունեն մի շարք վերապահումների (տե՛ս ստորև):

Այլ հեղինակներ խնդրին անուղղակիորեն անդրադարձել են ստորադասական տարաբնույթ նախադասությունների՝ գլխավորի հետ կապակցման միջոցների թվարկման առիթներով՝ մեծ մասամբ չնշելով տարբերակների բաշխման կանոններ և գրեթե նոր բան չավելացնելով Մ. Աբեղյանի նկատառումներին:[2] Հետևաբար խնդիրը բավականաչափ ուսումնասիրված չէ:

Ի մի բերելով գիտական աղբյուրներում ներկայացված փաստական նյութը և դրա վերաբերյալ դիտարկումները, այլև ներգրավելով զգալի քանակով նոր նյութ, դասակարգելով դրանք՝ խնդրի վերաբերյալ ստացանք հետևյալ պատկերը:

Երբ ենթակա (կամ ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, հազվադեպ՝ պարագա) երկրորդական նախադասությունների՝ շաղկապական բառով արտահայտված ենթական (կամ հատկացուցիչը, բացահայտիչը, խնդիրը) անձ է (կամ անձնավորված է), ապա շաղկապական բառը

---

[2] Տե՛ս, օրինակ, **Գ. Գարեգինյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, Ե., 1976, **Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձեռնարկ)*, Ե., 2003, **Ն. Պառնասյան**, *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում*, Ե., 1961, **Վ. Առաքելյան**, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, Ե., 1964, **Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 1975:

կարող է լինել **ով(քեր)** կամ **որ(ը), որոնք**՝ ուղիղ կամ թեք ձևերով:

Երբեմն **ով** և **որ** տարբերակները միմյանց ազատ փոխարինում են, ուրիշ դեպքերում դրանցից մեկը նախընտրելի է, այլ դեպքերում դրանցից մեկը բացառվում է, երբեմն էլ դրանք իմաստատարբերակիչ արժեք ունեն:

Տարբերակների այս բաշխումը կախված է մասամբ այդ շաղկապական բառերը պարունակող երկրորդական նախադասության գործառույթից և դիրքից, մասամբ էլ՝ շաղկապական բառի հոլովից ու միջավայրից, հարաբերյալի առկայությունից կամ բացակայությունից և այլ գործոններից:

1. Երկրորդականի ցանկացած դիրքում ցանկացած հոլովով **ով**-ը և **որ**-ը մասնավորվող որոշիչից[3] հետո (հարաբերյալի բացակայության դեպքում) կարող են միմյանց փոխարինել՝ հաճախ արտահայտելով համապատասխանաբար ընդհանրականության (անորոշության) կամ որոշակիության իմաստ.

Զինվորներից ***ով*** *վիրավոր չէր, պատվի առավ և զեկուցեց: [ենթ.]*[4]

---

[3] Մասնավորվող որոշիչը գոյականական անդամի լրացում է, որ արտահայտվում է բացառական հոլովով (մեծ մասամբ՝ հոգնակի թվով) և ցույց է տալիս լրացյալով մասնավորվող մի ամբողջություն (տե՛ս նաև **Ռ. Իշխանյան**, *Արդի հայերենի շարահյուսություն*, Ե., 1986, էջ 163-164):

[4] Ուղիղ փակագծերում նշված է երկրորդական նախադասության բնույթը (պաշտոնը): Համառոտագրությունները պիտի կարդալ այսպես. **ենթ.** (ենթակա), **ստ.վ.** (ստորոգելիական վերադիր), **մ.որ.** (մասնավորվող որոշիչ), **հատկ.** (հատկացուցիչ), **ու.խ.** (ուղիղ խնդիր), **հ.խ.** (հանգման խնդիր), **ա.խ.** (անջատման խնդիր), **մ.խ.** (միջոցի խնդիր), **վ.խ.** (վերաբերության խնդիր), **ն.խ.** (ներգործող խնդիր), **տ.պ.** (տեղի պարագա, **ձ.պ.** (ձևի պարագա), **չ.պ.** (չափի պարագա),**պ.պ.** (պատճառի պարագա), **ն.պ.** (նպատակի պարագա):

Այդ կանանցից ***որին*** *մոտեցա, ինձ վանեց չոր խոսքերով: [ենթ.]*

Լուսանկարում էր, աղջիկներից ***ում*** *գեղեցիկ էր համարում: [ու.խ.]*

2. Երկրորդականի առաջադաս դիրքում՝

2.1. չթեքված (ուղղական հոլովով) **որ**-ը բացառվում է[5] (անկախ հարաբերյալի առկայությունից)[6].

Հիմա ***ով*** *վեր է կենում, գլխին էս տեսակ գդակ է դնում: [ենթ.]*

Ով *՝չուստ, նա՝ կուշտ: [ենթ.]*

Ով *շուտ կհասնի վերջնակետին, մրցույթի հաղթողը նա է: [ստ.վ.]*

Ով *նրա անունը կտա, գլուխը կտրել կտաս: [հատկ.]*

Դուք չեք մտնում, և ***ովքեր*** *էլ մտնում են, նրանց չեք թողնում: [ու.խ.]*

Ովքեր *քրտինքով են հաց վաստակում, նրանց հավատում եմ: [հ.խ.]*

Ովքեր *ականատես էին եղել, նրանցից էլ ճշտեցի տեղեկությունը: [ա.խ.]*

2.2. թեք հոլովներով **ով**-ը և **որ**-ը մեծ մասամբ կարող են միմյանց փոխարինել (անկախ հարաբերյալի առկայությունից)՝ երբեմն արտահայտելով համապատասխանաբար ընդհանրականության (անորոշության) կամ որոշակիության իմաստ.[7]

---

[5] Տե՛ս նաև **Գ. Գարեգինյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, էջ 144:

[6] Խիստ վերապահությամբ կարելի է բացառություն նկատել որոշիչ երկրորդականի համար, թեև դա առաջադաս դիրքում, որպես կանոն, չի լինում: Միայն ժողովրդական խոսքում հազվադեպ հանդիպում են առաջադաս որոշիչ երկրորդականով նախադասություններ՝ ոճական որոշ թերությամբ, օրինակ՝ ***Որ*** *մարդուց դաս ես առել, այն մարդուն մի՛ մոռացիր:*

__Ում__ խիղճը մաքուր է, նա միշտ էլ լավ է քնում: [ենթ.]

__Որի__ մուրազը կատարվում էր, նրա գլխին մի կաթ ընկնում էր: [հատկ.]

__Որին__ հավանես, նրան էլ ա՛ռ: [ու.խ.]

__Ումից__ վերցրել եք, նրան էլ տվեք: [հ.խ.]

__Ում__ գործն անում ես, գնա նրանի՛ց խնդրիր: [ա.խ.]

__Ումից__ էլ մեզ զրկենք մտովի, կորուստը կլինի մեծ, բայց հատուցելի: [հարակցական 2-րդական]

3. Երկրորդականի միջադաս և վերջադաս դիրքում՝

3.1. **որ**-ը (անկախ հոլովից) բացառվում է հարաբերյալի բացակայության (անհնարինության կամ զեղչման) դեպքում[8] (բացառությամբ որոշիչ երկրորդականի).

Համաճարակը վերապրել են, __ովքեր__ քար առողջություն են ունեցել: [ենթ.]

Դավաճան է, __ով__ իր մայրենին չի ուզում սովորել: [ենթ.]

Ջիգյարին գյուլլա դիպչի, քեզ __ով__ որ սիրի, աղջի՛կ: [հատկ.]

Տեսնելով [նրան], __ում__ փնտրում էի, ուրախացա: [ու.խ.]

Ա՛խ, երանի՜ [նրան], __ով__ մարդ կգա ու մարդ կերթա անարատ: [հ.խ.]

---

[7] Մասնավորապես **ով**-ը ցույց է տալիս անորոշ անձ, իսկ **որ**-ը՝ խոսքում արդեն հիշատակված կամ նախապես ծանոթ անձ (տե՛ս նաև **Մ. Աբեղյան**, *նույն տեղում*): Օրինակ՝ *__Ումից (/ որից)__ էլ երեխա բերես, մեկ է, խոզի պոչով է ծնվելու* Այս նկատառումով **որ**-ը **ով**-ով փոխարինելը ցանկալի չէ, օրինակ, հետևյալ նախադասության մեջ, որտեղ համապատասխան անձինք ըստ երևույթին հայտնի են. *__Որին__ կուզես, ընտրի՛ր, մեկը մյուսից գեղեցիկ է:*

[8] Տե՛ս նաև **Գ. Գարեգինյան**, *նշվ. աշխ.*, էջ 144: Այստեղ հեղինակը գրում է, որ անձ մատնանշող **որ**-ը «գլխավորում պարտադիր հարաբերյալ է պահանջում, առանց որի խախտվում կամ թուլանում է կապը գլխավորի բայ-ստորոգյալի հետ»:

3.2. **ով**-ը բացառվում է սաստկական (ավելադրական) ստորադասության[9] դեպքում, քանի որ այդտեղ **որ**-ը ոչ թե դերանուն է, այլ զուտ շաղկապ է և նախադասության անդամ չէ.

*Դու ես, **որ** ոչինչ չես հասկանում:*

*Այդ ջահե՞լն է, **որ** պիտի մեզ խելք սովորեցնի:*

*Քո այդ ինքնահավան ընկերոջն է, **որ** ես տանել չեմ կարողանում:*

3.3. եթե երկրորդականը **բացահայտիչ** է[10], ապա՝

3.3.1. առաջին կամ երկրորդ դեմքով բացահայտյալի դեպքում՝

3.3.1.1. չթեքված **ով**- ը բացառվում է[11], քանի որ այդտեղ **որ**-ը ոչ թե դերանուն է, այլ զուտ շաղկապ է և նախադասության անդամ չէ[12].

*Իսկ մենք, **որ** ունենք հոգի ու սիրտ քաջ, Եկ անվախ ելնենք թշնամու առաջ:*

*Գալիս են որսալու մեզ, **որ** մարդ ենք իրենց նման:*

*Դա արված է ինձ համար, **որ** նոր էմ ապաքինվել հիվանդությունից:*

*Քեզ, **որ** միշտ աչքի ես ընկել պարտաճանաչությամբ, վայել չէ անպատրաստ ներկայանալ դասի:*

*Մի՛ իջիր դրանց մակարդակին դու, **որ** ուսուցիչ ես:*

3.3.1.2. թեքված **ով**- ը և **որ**-ը իրար ազատ կարող են փոխարինել, քանի որ դեմքով չեն համաձայնում իրենց լրացյալի հետ (գլխավոր նախադասության մեջ).

---

[9] Ավելադրական ստորադասության մասին տե՛ս, օրինակ, **Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, Ե., 1976, էջ 624-625:

[10] Բուն բացահայտիչ երկրորդականները առաջադաս չեն լինում:

[11] Տե՛ս նաև **Ս. Աբրահամյան և ուրիշներ**, *նշվ. աշխ.*, էջ 645-648:

[12] Տե՛ս նաև **Վ. Առաքելյան**, *Հայերենի շարահյուսություն*, հ. Բ, Ե., 1964, էջ 92:

*Բայց մենք ի՞նչ ենք անում, մենք՝ ժողովրդյան առաջնորդներս, **որոնց** ձեռքը աստված սուր է տվել և կառավարելու ու պաշտպանելու իրավունք:*

*Երևա՛ն, դու, **որին** սիրեցի առավել, բացեցիր քնքուշ քո գիրկը իմ դեմ:*

*Եկել եմ ես՝ որպես նա, **ում** կարիքը դուք ունեք:*

3.3.2. **որ**-ը նախընտրելի է երրորդ դեմքով բացահայտյալի դեպքում.

*Նեսոն, **որ** իմ ընկերն էր, կարող էր ինձնից մեծ բանաստեղծ դառնալ:*

*Մերոնք, **որ** հին գյումրեցիներ էին, ցրվեցին երկրով մեկ:*

*Սրանք, **որ** խաղաղ զրուցում էին, ոտքի ելան միանգամից:*

3.4. եթե երկրորդականը **որոշիչ**[13] է, ապա՝

3.4.1. **որ**-ը (անկախ հոլովից և հարաբերյալի առկայությունից) միշտ նախընտրելի (երբեմն էլ պարտադիր) է[14] (բացառությամբ 3.4.2. ենթակետի).

*Այն տղան, **որ** փոշոտ ու կեղտոտ էր, պառկեց մաքուր անկողնու վրա:*

*Մարդ կա՝ [**որ**] հազար արժե, մարդ էլ կա՝ [**որ**] մին չարժե:*

*Նա դառնում է Վասակին, **որն** իրեն մենակ էր զգում:*

*Տարբեր մարդիկ կան. կան, **որ** բարի են, կան, **որ** չար են:*

*Այն մարդու ոգին, **որ** արվեստով է ապրում, անգամ կենցաղը չի սպանի:*

*Նա գտավ կապավոր մի բանակայինի, **որի** դեմքը ծանոթ թվաց:*

*Ուսուցչանոց կանչեցին այն աշակերտին, **որին** բոլորը ճանաչում էին, **որից** բոլորը գոհ էին, և **որով** բոլորը հպարտանում էին:*

---

[13] Որոշիչ երկրորդականը առաջադաս դիրքում օրինաչափորեն լինում է միայն մասնավորվող որոշիչով սկսվելու դեպքում (տե՛ս նաև Ծան. 3 և 6):

[14] Տե՛ս նաև **Վ. Առաքելյան**, *նշվ. աշխ.*, էջ 138:

*Բոլոր նրանք, **որ** դրա կարիքն ունեն, կարող են դիմել ինձ:*
*Ամբողջ գյուղում չկար մեկը, **որ** խելքը գլխին մի բան ասեր:*
*Է՛յ, տղա՛, **որ** կանգնած ես վերջում, մոտեցի՛ր բեմահարթակին:*

3.4.2. **ով**-ը (անկախ հոլովից) այլընտրանք չունի, եթե գլխավոր նախադասության մեջ չկա հարաբերյալ, և անձնանիշ որոշյալին հաջորդում է (թեկուզ ոչ անմիջապես) իրանիշ գոյական (կամ գոյականաբար առնված բառ), որը **որ** հարաբերականի դեպքում կդառնա որոշյալ.

*Սա մեր դպրոցից մի **տղայի** պայուսակն[15] է, **ով** երեկ կորել էր:*

*Մարգագետնում քաղաքացիական պատերազմի մի **գեներալի** բրոնզե խոշոր արձանն էր, **ում** մասին Ջեքը երբևէ չէր լսել:*

3.5. մյուս բոլոր դեպքերում հարաբերյալի առկայությամբ և ցանկացած հոլովով **ով**-ը և **որ**-ը կիրառվում են հետևյալ կարգով[16].

3.5.1. **ով**-ը այլընտրանք չունի, եթե դատողությունն ընդհանրական բնույթի է, և կամ շաղկապական բառի նշանակելին անորոշ է.

*Յուրաքանչյուրը, **ում** հայտնի է դա, գովեստով է խոսում նրա մասին: [ենթ.]*

*Թող շատերից վախենա նա, **ումից** շատերն են վախենում: [ենթ.]*

*Գիշերները չի քնում նա, **ում** խիղճը հանգիստ չէ: [ենթ.]*

*Ուխտ կանեմ, որ **ում** տուն երեխա ծնվի, նրա դռան առաջ խնձորի ծառ տնկեմ: [հատկ.]*

---

[15] Ընդգծված է այն իրանիշ գոյականը, որը լրացյալ կդառնա **որ**-ի դեպքում:

[16] Նույն դասակարգումը կարելի է կիրառել նաև 1., 2.2. կետերի նկատմամբ:

*Երանի՜ նրան, **ում** մի մայր գթոտ օրորում է իր երգով հնամյա: [հ.խ.]*

*Վա՛յ նրան, **ով** նահանջի: [հ.խ.]*

*Սովորում են նրանցից, **ում** հարգում են: [ա.խ.]*

*Շատերն են ընկել սուսերի սայրից, բայց ոչ նրանց չափ, **ովքեր** ընկել են լեզվի երեսից: [չ.պ.]*

*Հայաստանը կապրի նրանց շնորհիվ, **ովքեր** կարողացան առանց ստորանալու փրկել իրենց մարմինն ու հոգին: [պ.պ.]*

3.5.2. **որ**-ը նախընտրելի է, եթե դատողությունը մասնավոր բնույթի է, և կամ շաղկապական բառի նշանակելին որոշակի է.

*Նա, **որ** մի ամիս առաջ իր իշխանության տակ հազիվ ուներ մի աղախին, այժմ կանգնած էր մի ամբոխի գլուխ: [ենթ.]*

*Ինձ ոչ թե սենյակն էր հետաքրքրում, այլ նրանք, **որ** ներս մտան: [ենթ.]*

*Կային այնպիսիները, **որ** ծառայում էին տասը տարի: [ենթ.]*

*Դուք նա եք, **որի** նմանը չկա մեր քաղաքում: [ստ.վ.]*

*Մեր նոր տնօրենն այնպիսին է, **որից** բոլորը պատ-. կառում են: [ստ.վ.]*

*Նրանից, **որ** այան վրա գործ է անում, կփորձեմ մի բան իմանալ: [ա.խ.]*

*Սարսափում է նրանից, **որին** առաջ իր բարեկամն էր կարծում: [ա.խ.]*

*Հիանում էի նրանցով, **որ** տրվում էին այդ խորությունների հերոսությանը, բայց նրանց օրինակին հետևել չէի կարող: [մ.խ.]*

*Զինվորների մյուս խմբերը կտրում էին նրա ճանապարհը և հետ փախցնում դեպի նրանք, **որոնք** ոլորում էին նոր օղակ: [տ.պ.]*

3.5.3. **ով**-ը և **որ**-ը կարող են հերթագայվել՝ արտահայտելով համապատասխանաբար ընդհանրականության (անորոշության) կամ որոշակիության իմաստ, եթե դա այլ միջոցներով արդեն արտահայտված չէ.

*Նա, **ով/որ** գերի չէ իր կրքերին, տեղ ունի իմ սրտի մեջ: [ենթ.]*

*Տները քաշվեցին նրանք, **ում/որոնց** համար զենքը ծանր բեռ էր: [ենթ.]*

*Ուրեմն խմենք նրա կենացը, **ով/որ** ճանապարհին է այս գիշեր: [հատկ.]*

*Սխալ կա թերևս և նրանց արարքում, **ովեր/որ** անկեղծ ձգտում են շտկելու սխալը: [հատկ.]*

*Հիշեցե՛ք նրանց, **ովքեր/որ** ընկան՝ արդարության խոսքը շուրթերին: [ու.խ.]*

*Ինչպե՞ս չվստահես նրան, **ում/որին** միակամ ընտրել է ժողովուրդը: [հ.խ.]*

*Հիանում եմ նրանով, **ով/որ** միշտ սթափ է: [մ.խ.]*

*Կմերժվես նրանցից, **ում/որոնց** ինքդ ես մերժել: [ն.խ.]*

*Այդպես դու կլինես նրանց նման, **ովքեր/որոնք** մի բան կորցրին: [ձ.պ.]*

3.5.4. **ով**-ը և **որ**-ը կարող են ազատ փոխարինել միմյանց, եթե ընդհանրականության (անորոշության) կամ որոշակիության իմաստի արտահայտման կարիք կամ հիմք չկա.

*Ամեն մի կանխատեսումից մեծ է նրանց թիվը, **ովքեր/որոնք** արտագաղթել են վերջերս: [հատկ.]*

*Կանչի՛ր բարեկամներիդ կամ նրանց, **ովքեր/որ** կարող են մեզ օգնել: [ու.խ.]*

*Նրան, **ում/որին** բարևեցիր, ես չեմ ճանաչում: [ու.խ.]*

*Միշտ ուզում էի՝ պապս խոսեր նրանց մասին, **ովքեր/որոնք** կռվել էին Անդրանիկի դրոշի տակ: [վ.խ.]*

*Պատմում էր նրանցից, **ովքեր/որ** գերի ընկան ու գնացին Ամերիկա: [վ.խ.]*

*Հայտնում եմ ի գիտություն նրանց, **ում/որոնց** վերաբերում է: [և.պ.]*

Ով և **որ** տարբերակների իրական բաշխման այս պատկերի մեջ փորձենք գտնել օրինաչափություններ:

Ընդհանուր առմամբ **ով** և **որ** տարբերակների մասին կարելի է ասել հետևյալը: **Ով**-ը անձնանիշ դերանուն է, **որ**-ը՝ իրանիշ, այսինքն՝ դրանց հիմնական գործառույթներից մեկը «անձ / իր» հակադրության արտահայտումն է: Սակայն **որ**-ը, հաճախ այս կամ այն չափով ձեռք բերելով շաղկապի նշանակություն[17], կարող է փոխարինել **ով**-ին հատկապես այն դեպքերում, երբ «անձ / իր» հակադրությունը հարաբերական դերանվան համար չեզոքանում է (տվյալ խոսքաշարում դառնում է ոչ էական, կամ շաղկապական բառի նշանակելիի՝ անձ լինելը ակնհայտ է՝ անկախ հարաբերական դերանունից, արտահայտված է այլ միջոցներով): Իսկ որոշ դեպքերում էլ, երբ «անձ / իր» հակադրության չեզոքացման պարագայում էական է դառնում «ընդհանուր / մասնավոր» հակադրությունը, **որ**-ը՝ որպես հակադրության երկրորդ եզրի արտահայտություն, լինում է պարտադիր (այլընտրանք չի ունենում), քանի որ հարցահարաբերական դերանվանը բնորոշ է ամենաընդհանրական նշանակությունը ոչ միայն խոսքից դուրս (ի տարբերություն, օրինակ, անձնական դերանվան), այլև հենց խոսքաշարում: Մինչդեռ շաղկապները զուրկ են այդպիսի նշանակությունից (չեզոք են այդ առումով): **Ով** դերանունը կարող է շաղկապական բառ լինել, սակայն շաղկապի նշանակություն ձեռք չի բերում՝ ի տարբե-

[17] Մանավանդ որ **որ** հարաբերական դերանունը իր ուղիղ ձևով (առանց հոդի) համանուն է **որ** ընդհանրական շաղկապին: **Որ** դերանվան շաղկապական արժեքի մասին տե՛ս **Լ. Թելյան**, ***Որ** շաղկապ, թե դերանուն*, «Լեզու և լեզվաբանություն», հմ. 2 (15), եր., 2016, էջ 23-32:

րություն **որ** դերանվան (մանավանդ ուղիղ ձևով): **Որ** դերանվան՝ շաղկապի նշանակություն ձեռք բերելու այս հատկությունն է, որ թույլ է տալիս նրան հակադրվելու **ով**-ին՝ բացառման սկզբունքով (որպես հակադրության ոչ նշութակիր անդամ) արտահայտելով «ընդհանուր / մասնավոր» հակադրության երկրորդ եզրը: Այնուամենայնիվ, «ընդհանուր/մասնավոր» հակադրությունը տվյալ պարագայում թույլ հատկանիշ է և մեծ մասամբ դժվար է զգացվում ու լեզվական միջոցներով տարբերակվում:

Որ դերանվան թեք հոլովաձևերում ավելի թույլ է արտահայտված շաղկապական նշանակությունը, ուստի դրանք ավելի դժվար են դառնում «ընդհանուր / մասնավոր» հակադրության եզր. այդ հակադրությունը լրիվ կամ մասնակի չեզոքանում է, և թեքված **ով**-ն ու **որ**-ը հաճախ դառնում են ազատ տարբերակներ:

Այս ընդհանուր օրինաչափությունները գործնականում արտահայտվում են հետևյալ կերպ:

Այն դեպքում, երբ «անձ / իր» հակադրության ճշտումը խոսքաշարի պարտադրանքով վերապահված է հենց շաղկապական բառին (կետ 3.4.2.), անձնանիշ **ով**-ը չի կարող **որ**-ով փոխարինվել առանց խոսքի իմաստը փոխելու:

Չթեքված **ով** դերանունը իր անձնանիշ արժեքով այլընտրանք չունի նաև հարաբերյալի բացակայության (կետ 3.1.)[18] և առաջադաս երկրորդականի (կետ 2.1.)[19] դեպքում:

---

[18] Անձնանիշ **նա** դերանվան բացակայությունը փոխհատուցվում է **ով** անձնանիշ դերանվան պարտադիր առկայությամբ:

[19] Նախադասության սկզբում **որ**-ը ինքնին բավարար չէ անձ նշելու համար, այդ պատճառով իրենից առաջ պահանջում է մասնավորվող որոշիչ *(Երեխաներից **որը** ձեռքն ընկներ, ծեծում էր մինչև լացեցնելը),* կամ էլ իր տեղը զիջում է **ով**-ին *(**Ով** ձեռքն ընկներ, ծեծում էր մինչև լացեցնելը):*

Մնացած դեպքերում, երբ «անձ / իր» հակադրության ճշտումը վերապահված չէ շաղկապական բառին (արտահայտված է այլ միջոցներով), այսինքն՝ շաղկապական բառի համար «անձ / իր» հակադրությունը չեզոքացած է, **ով / որ** տարբերակումը ստանձնում է այլ գործառույթ՝ արտահայտելով «ընդհանուր / մասնավոր» հակադրությունը:

Չթեքված **որ**-ը իր որոշակիության արժեքով այլընտրանք չունի ավելադրական (սաստկական) ստորադասության դեպքում (կետ 3.2.) և երբ նրա լրացյալը (բացահայտյալը, որոշյալը) գլխավոր նախադասության մեջ առաջին կամ երկրորդ դեմքով է (կետ 3.3.1.1. և այլն) (այս երկու դեպքում էլ, ինչպես նշվել է վերը, **որ**-ը փաստորեն վերածվել է զուտ շաղկապի՝ կորցնելով իր դերանվանական արժեքը)[20]:

Չթեքված **որ**-ը իր որոշակիության արժեքով նախընտրելի է որոշիչ (կետ 3.4.1.) և երրորդ դեմքով բացահայտիչ (կետ 3.3.2.) երկրորդականների դեպքում, քանի որ դրանցում շաղկապական բառի նշանակելին որոշակի է, տվյալ խոսքաշարի համար անհրաժեշտ չափով մասնավորված:

Մնացած դեպքերում «ընդհանուր / մասնավոր» հակադրությունը չի հարաբերակցվում ստորադաս նախադասության բնույթի հետ, այլ կախված է խոսքաշարից: Հետևաբար նույնաբնույթ նախադասությունների մեջ կարող են փոխնիփոխ տեղ գտնել թե՛ **ով**-ը, թե՛ **որ**-ը: Երբ այդ տարբերակները կարող են միմյանց փոխարինել (կետ 1., 2.2., 3.3.1.2., 3.5.), դա նշանակում է, որ խոսքաշարում կա՛մ կարիք չկա (կետ 3.3.1.2.), կա՛մ էլ կարելի է (կետ 1., 2.2., 3.5.) շեշտել շաղկապական բառի նշանակելիի ընդհանրականության կամ որոշակիության իմաստը համապատասխանաբար **ով** կամ **որ** տարբերակի ընտրությամբ: Այսպես, երբ շաղկապա-

[20] Բացի այս դեպքերից՝ **որ** շաղկապական բառը այլ դեպքերում ևս կարող է հարաբերյալի հետ չհամաձայնել ո՛չ թվով, ո՛չ էլ առավել ևս դեմքով, չունենալ սպասված հոդը:

կան բառի նշանակելիի որոշակիությունը արձանագրված է նախադասության այլ անդամներով (*Խաչեն էր նա, **որ** աղբյուրից ջուր առավ*) կամ պարզ է խոսքաշարից (*Երկու տարի զնդանվեց նա, **որ** պաշտված էր մի ամբողջ ազգի կողմից*), ապա **որ**-ի պարտադրականությունը մեծանում է: Երբ դատողությունն ինքնին ընդհանրական բնույթ ունի (*Մրիկա է նա, **ով** հայր է լինում*), կամ ընդհանրականությունն արձանագրված է բառային միջոցներով (*Ամեն որ, **ով** սիրում է, բանաստեղծ է*), ապա պարտադիր է դառնում **ով**-ի գործածությունը: Երբ շաղկապական բառի նշանակելիի որոշակիությունը կամ ընդհանրականությունը այլ միջոցներով արտահայտված չէ, բայց էական է, ապա այդ տարբերակման գործառույթն ամբողջովին դրվում է շաղկապական բառի **որ** կամ **ով** տարբերակի ընտրության վրա (*Նա, **որ** / **ով** թերագնահատում է քննադատությունը, իրեն նախօրոք դատապարտում է ձախողման*): Այս վերջին օրինակում **նա** հարաբերյալը խոսքաշարով որոշակիացած անձ է առաջին (**որ**-ով) տարբերակում և ընդհանրական արժեք ունի երկրորդ (**ով**-ով) տարբերակում:

Պետք է նկատել, որ «ընդհանուր / մասնավոր» հակադրությունը ոչ միշտ է գիտակցվում՝ անհարկի իր տեղը զիջելով «անձ / իր» ավելի ուժեղ հակադրությանը: Դրա հետևանքով լինում են շեղումներ ընդհանուր օրինաչափությունից: Մասնավորապես նախընտրելի **որ**-ը հաճախ փոխարինվում է **ով**-ով (*Մարյանը, **ով** մեր տնօրենն է, հաճախ է անձամբ ստուգայցի գալիս արտադրամասեր: Մոտեցա խաղի հերոսին, **ով** քրտինքի մեջ կորած էր: Նա այնպիսի մարդ չէ, **ով** մեզ խաբի*): Հակառակը, երբ նախընտրելի **ով**-ը փոխարինվի **որ**-ով, սովորաբար չի լինում:

Այս բոլոր տարբերակումները, ինչպես տեսնում ենք, առավել ցայտուն են ուղղական հոլովի դեպքում (ուժեղ դիրք): Թեք հոլովների դեպքում (թույլ դիրք), երբ չեզոքանում

է ոչ միայն «անձ / իր», այլև երբեմն մասամբ կամ լիովին՝ «ընդհանուր / մասնավոր» հակադրությունը (այսինքն՝ շաղկապական բառով դրա արտահայտման կարիքը չի լինում) (կետ 3.3.1.2. և այլն), **ով**-ը և **որ**-ը հանդես են գալիս որպես ազատ տարբերակներ (*Իսկ ի՞նչ անենք մենք՝ անօգնականներս, **ում / որոնց** մասին ոչ ոք չի մտահոգվում: Ահա նա, **ում / որին** ես փնտրում էի: Երնե՛կ նրան, **որ/ով** իր գործով Կապրի անվերջ, անդադար*): Նման դեպքերում տարբերակների նախընտրելիության հարցում երբեմն դեր են խաղում մի շարք ոճական նրբերանգներ, որոնք, սակայն, գործնականում կանոնարկման ենթակա չեն:

Այս ամենից հետևում է, որ չի կարելի հախուռն կերպով հայտարարել, թե **ով** հարաբերյալից պիտի հրաժարվել ու ամեն դեպքում **որ** գործածել, կամ հակառակը, քանի որ, ինչպես տեսանք, ամեն տարբերակ գործածության իր պայմաններն ունի և որոշ դեպքերում անփոխարինելի է: Դրանցից ամեն մեկի համար էլ կան մի շարք բացառվող դեպքեր:

Այնուամենայնիվ պիտի նշել, որ երբ խոսքը նախընտրելիության մասին է, ապա դա նշանակում է, որ այդ դեպքերի վերաբերյալ հանձնարարականները միայն կողմնորոշիչ արժեք ունեն, քանի որ տարբերակների ընտրության վրա ազդող գործոնները այդպիսի դեպքերում շատ են ու երբեմն հակասական: Լեզուն ինքը տվյալ դեպքերում դեռ չի հստակեցրել իր արտահայտչամիջոցների բաշխումը, գործ ունենք անցումային վիճակի հետ, իսկ արտաքին միջամտությունները կարող են գործին ոչ այնքան օգնել, որքան վնասել: Ավելի մանրակրկիտ հետազոտություններ են անհրաժեշտ այս խնդրում լեզվի միտումները բացահայտելու և զարգացման ընթացքը կանխատեսելու համար: Հուսանք, որ այս խնդրով ավելի խորությամբ զբաղվողներ կգտնվեն:

Закарян Оганес – Распределение указывающих лицо союзных слов *ով* и *որ* в армянском языке. – В современном восточноармянском языке до сих пор почти не кодифицировано распределение указывающих лицо союзных слов **ով** и **որ**. Исследование показывает, что это распределение коррелируется частично с функцией и позицией придаточного предложения, содержащего эти слова, частично также с падежом и окружением союзного слова, наличием или отсутствием соотносительного слова и другими факторами.

Выбором варианта **ով** или **որ** может выражатся противопоставление "лицо / вещь", а при его нейтрализации — противопоставление "общее / конкретное". При нейтрализации также последнего, **ով** и **որ** могут быть свободными вариантами.

Zakaryan Hovhannes - Distribution of Conjunctive Words *ով* and *որ* Indicating Person in the Armenian Language. – In modern Easern Armenian there is almost no standardization of distribution of conjunctive words **ով** and **որ** indicating person. The study shows that this distribution partly correlates with the function and position of the subordinate clause containing these words, and partly with the case and the environment of the conjunctive word, the presence or absence of correlative word and other factors.

The choice of **ով** or **որ** can express the opposition "person / thing", and when neutralized – the opposition "general / concrete". When neutralized also the latter, **ով** and **որ** can be free variants.

Թադևոսյան Հասմիկ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՆՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ XII ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ (Մ. ՀԵՐԱՑԻ, ԱԲՈՒՍԱՅԻԴ)

Ինչպես գիտենք, միջնադարյան հայ բժշկագիտության վերելքը սկսվել է XII դարում՝կապվելով Կիլիկիայի բժշկագիտական դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ Մխիթար Հերացու անվան հետ: Քաջածանոթ լինելով հունական, արաբական ու պարսկական բժշկությանը՝ Հերացին *«Ջերմանց մխիթարութիւն»* գրքի առաջաբանում ներկայացնում է ոչ միայն բժշկության համակողմանի զարգացման իր ծրագիրը, այլ նաև շեշտում է իր գրվածքը ժողովրդին հասկանալի լեզվով մատուցելու կարևորությունը. «Եւ արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ընթերցողաց»[1]: Ինչպես իրավացիորեն նկատում է Ղ. Հովնանյանը, ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լինելու խնդիրն այս շրջանում ամենից ավելի ուներ բժշկությունը՝իբրև կյանքի և առողջության պահպանությանը ծառայող գիտություն[2]: Եվ ահա Հերացու այս բժշկարանը ժամանակի խոսակցական լեզվով շարադրված առաջին գիտական աշխատությունն է, որը նաև անփոխարինելի սկզբնաղբյուր է միջին հայերենի բառապաշարը, ինչպես նաև հնչյունական ու քերականական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար:

---

[1] **Մ.Հերացի**, *Ջերմանց մխիթարութիւն,* Վենետիկ, 1832, առաջաբան, էջ Ա:

[2] **Ղ. Յովնանեան**, *Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ*, հ. Ա, Վիեննա, 1897, էջ 112:

Հերացու նախաձեռնած կարևոր գործում իր լուրջ դերակատարումն է ունեցել նաև նրա ժամանակակից և հետևորդ ասորի բժիշկ Աբուսայիդը, որի *«Յաղագս կազմութեան մարդոյն»* գիրքը[3] հայերեն ստեղծված առաջին կազմախոսական աշխատությունն է[4], որտեղ ներկայացված են մարդու մարմնի կառուցվածքի՝ ուղեղի և նյարդային համակարգի, զգայարանների, ներքին օրգանների, ոսկրերի, հոդերի, մկանների, անոթների մասին պատկերացումները:

Արաբական բժշկության հզոր ազդեցության ներքո չխուսափելով օտար փոխառություններից՝ Հերացին և Աբուսայիդը, օգտագործելով մեր լեզվի բառակազմական գրեթե բոլոր հնարավորությունները, միաժամանակ ստեղծեցին ու կիրառեցին զգալի թվով նորակազմություններ (այդ թվում՝ նաև բժշկական տերմիններ), գործածեցին նաև ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին բնորոշ շատ ոճեր և դարձվածքներ: Հետագա դարերի բոլոր բժիշկները օգտվեցին ոչ միայն նրանց ստեղծած հարուստ բժշկագիտական ժառանգությունից, այլև բառապաշարից:

Ինչպես արդեն նշեցինք, XII դարի վերոհիշյալ բժշկարանները շարադրված են ժողովրդին հասկանալի լեզվով, իսկ լեզվի ժողովրդայնության հետ սերտորեն կապված են վերահմաստավորված կայուն կապակցությունները՝ դարձվածքները. «…որքան լեզուն ժողովրդային է, այնքան այն հարուստ է նման արտահայտություններով»[5]:

---

[3] **Աբուսայիդ,** *Յաղագս կազմութեան մարդոյն*, Ե., 1974: Ս. Վարդանյանի աշխատասիրությամբ և ռուսերեն թարգմանությամբ տպագրված այս բժշկարանը հայագիտական և բժշկական գրականության մեջ հայտնի է նաև *«Մարդակազմութիւն»* խորագրով:

[4] Տե՛ս **Ս.Վարդանյան**, *Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Ե., 2000, էջ 125:

[5]. **Ա. Մուրվայան**, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Ե., 1959, էջ 62:

Ինչպես ժողովրդախոսակցական, այնպես էլ *«Ջերմանց միխիթարութիւն և «Յաղագս կազմութեան մարդոյն»* բժշկարանների լեզվում զգալի թիվ են կազմում կազմախոսական բառերով դարձվածքները, որոնք, մարդու օրգանիզմում կատարվող ֆիզիոլոգիական տարբեր երևույթներ առավել պատկերավոր նկարագրական ձևով ներկայացնելով, անգամ բժշկագիտական նյութին յուրահատուկ համ ու հոտ են հաղորդում: Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք ներկայացնել կազմախոսական բառերով ձևավորված այն *նոր* դարձվածքները («նոր» ասելով նկատի ունենք այն դարձվածները, որոնք կիրառություն չունեն գրաբարում և միայն միջին հայերենում են հանդես գալիս), որոնք կիրառվել են նշված բժշկարաններում (23 դարձվածք): Դրանք հիմնականում բաղադրված են *գլուխ, խելք, միտք, ուղեղ, երես, երակ, բերան, հոգի, սիրտ, փոր* գոյականներով:

Կազմախոսական բառերից ամենից շատ դարձվածքներ են գործածվել *սիրտ* բառով: Մենք առանձնացրել և քննել ենք յոթը: Անդրադառնանք դրանց:

Սիրտն անուշացնել դարձվածքով Հերացին արտահայտել է *«հանգստացնել»* իմաստը, ինչպես՝ «և զքո զամենայն ջանք վասն սրտին արա՝ որ *անուշացնես զսիրտն* և խաղաղեցնես զտրտմութիւն»: «Եւ իւր ստածումն այս է, որ ամենայն դիմօք *անուշացնես և խաղաղես զսիրտն*»[6]: Պետք է նշել, որ *սիրտն անուշացնել* դարձվածքը արձանագրված չէ ինչպես «Միջին հայերենի բառարան»-ում [7], այնպես էլ մյուս բառարաններում[8]:

---

[6]. **Մ. Հերացի**, *Ջերմանց միխիթարութիւն,* էջ 16: Այսուհետև էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀՋՄ համառոտագրությամբ:

[7] **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, այսուհետև՝ ՄՀԲ:

[8] Դարձվածքների համար նայել ենք **Ս. Ամատունի**, *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ*, 1912, **Հ. Աճառյան**, *Հայերէն գաւառական*

Երկու բժշկարաններում էլ հաճախակի կիրառությամբ աչքի են ընկնում ***սիրտն ելնել*** և ***ի սիրտ ելանել*** դարձվածքները, որոնք հանդես են գալիս երկու իմաստով՝ 1. «*հուզվել*» և 2. «*զայրանալ*», ինչպես՝ «*Սիրտ ելնելն* և բարկութիւնն և ուժ բռնաւորութեան ի լեղոյն է:»[9]: «Իսկ զներքսէ պատճառն լինի որպէս տրտմելն կամ *ի սիրտ ելնելն* կամ սգալն» (ՄՀՋՄ, 6): «Որ *ի սիրտ է ելե՝* անուշացո»: Եւ այլ լինի պատճառ հոգալն և տրտմելն, ահ և երկիւղն, և *սիրտ ելնելն*» (ՄՀՋՄ, 15): «Վասն միօրեայ ջերմանն որ պատճառն *ի սիրտ ելնելոյն* լինի»: «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն *ի սիրտը ելնելուն* լինի» (ՄՀՋՄ, 16): «…իւր պատճառն լինի տրտմութիւն և հոգս և ի *սիրտ ելանելն*» (ՄՀՋՄ, 38):

Նշվածները ըստ էության նույն դարձվածքի տարբերակներն են, թեև ՄՀԲ-ն առանձին է տալիս. նախդրով ձևի համար նշվում է «զայրանալ, բարկանալ», իսկ աննախդիր ձևի համար՝«վրդովվել, հուզվել, զրգռվել, բարկանալ» իմաստները, ընդ որում առաջինի դեպքում նշվում են 13-րդ դարի բժշկարանների օրինակները, իսկ երկրորդի դեպքում չի արձանագրված Աբուսայիդի բժշկարանը[10]: *Սիրտն ելնել* դարձվածքը գտնում ենք բարբառային բառարաններում. սրանից կարելի է եզրակացնել, որ վերջինս բարբառներից պետք է անցած լինի[11]:

բառարան, Թիֆլիս, 1913, **Ստ. Մալխասյանց,** *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944, **Ա. Սուքիասյան, Ս.Գալստյան**,*Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հհ. Ա- Զ, Ե., 2001-2010, **Պ. Բեղիրյան**, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, Ե., 2011:.

[9] **Աբուսայիդ**, *Յաղագս կազմութեան մարդոյն*, էջ 216: (Այսուհետև էջերը կնշվեն փակագծերում՝ Աբուս. Համառոտագրությամբ):

[10] Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *ՄՀԲ*, էջ 274 և էջ 703:

[11] Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ե, Ե., 2008,էջ 338:

Հերացու բժշկարանում մեկ անգամ գտնում ենք **ի սիրտ հանել** դարձվածքը, որը նշանակում է «*անհանգստացնել, հուզել*». «Եւ կամ իրք ասեն՝ որ հիւանդին դժար թուի, կամ *ի սիրտ հանեն* կամ վախցնեն հիւանդն» (ՄՀՋՄ, 136): Այս դարձվածքը նշված եզակի օրինակով գտնում ենք ՄՀԲ-ում:

Օրգանիզմին բնորոշ երևույթներից մեկի՝ սրտխառնոցի համար Հերացին գործածել է ***սիրտն խառնակել*** «սրտխառնոց զգալ» և ***սրտին շարժել*** «սրտխառնոց» դարձվածքները. «Այս հիւանդիս սկիզբն հիւանդութեան խափական դիպի և *սիրտն խառնըկի*» (ՄՀՋՄ, 70): «Այլ այս ջերմս ծարաւ լինի խիստ, և նեղհոգութիւն շատ. *սրտին շարժել* լինի, և վերաբերութիւն մաղձի» (ՄՀՋՄ, 91): Երկու դարձվածքներն էլ իբրև միջինհայերենյան արձանագրված են ՄՀԲ-ում, սակայն *սիրտն խառնակել*-ի համար օրինակները բերվում են 15-րդ դարի բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններից («Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ»), իսկ Հերացու «Ջերմանց մխիթարութիւնը» չի հիշատակվում, ՄՀԲ-ն վկայակոչում է Հերացուն միայն *սրտին շարժել*-ի համար:

Սրտնեղ լինել դարձվածքը՝ «*նեղվել, սրտնեղել*» մեկ անգամ կիրառել է Հերացին. «Իսկ թէ ընդ յառաջի օր ընդ մէջ ջերմ է կալել… և *սրտնեղ լինի*, գիտացիր որ այն ջերմն ի խարտեշ մաղձին այրելոյն լինի» (ՄՀՋՄ, 115): Նկատենք, որ գրաբարում ունենք սրան համարժեք համադրական *սրտնեղել* բայը[12], միջին հայերենում՝ *սրտնեղ* ածականը՝ «վշտացած, սրտնեղած» իմաստով[13], սակայն վերոնշյալ դարձվածքը արձանագրված չէ ՄՀԲ-ում, ինչպես նաև մյուս բառարաններում:

---

[12] Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենտիկ,1836-1837, հ. Բ, էջ 765;

[13] Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *ՄՀԲ*, էջ 722:

Սիրտ բառով վերջին դարձվածքը՝ ***տանուտեր սրտին,*** դարձվածք-շրջասություն է, որ վերաբերում է *ուղեղ* հասկացությանը: Վերջինս կիրառել է Աբուսայիդը. «Վասն զի ըղեղն հրամայող է և *տանուտեր սրտին* և սիրտն է թագաւոր ամենայն անձինն» (Աբուս.,122): Նշենք, որ Աբուսայիդի բժշկարանը աչքի է ընկնում դարձվածք-շրջասություններով, երբ այս կամ այն օրգանի անվանումը տալու փոխարեն բժիշկը կիրառել է վերաիմաստավորված բառակապակցություն: Նման դարձվածքները դիպվածային բնույթ ունեն, և տրամաբանական է, որ բառարաններում չեն ընդգրկվել:

Հերացու բժշկարանում *գլուխ* բառով կիրառվել է 2 դարձվածք՝ մեկը անվանական, մյուսը՝ բայական:

Ելանել ի վեր ի գլուխն դարձվածքը, որը մեկ անգամ է միայն գործածվել, նշանակում է «*գլխին խփել, հարբեցնել*». «և ի գինւոյ պատրաստել, մանաւանդ ի հին գինւոյ, զի շուտ *ելանէ ի վեր ի գլուխն* » (ՄՀՋՄ, 16): Գրաբարում ունենք *ի գլուխ ելանել* դարձվածքը, բայց այլ իմաստով՝ «հասնել, գլուխ գալ, ավարտվել»[14], մինչդեռ «Ջերմանց մխիթարութիւն» գրքում գործ ունենք նոր դարձվածքի հետ: Նշենք, որ այս դարձվածքը ՄՀԲ-ից բացի մյուս բառարաններում արձանագրված չէ:

Հերացու բժշկարանում առատորեն գործածվել է ***հիւանդութեան գլուխ*** անվանական դարձվածքը, որով բժիշկը փորձել է արտահայտել «*ախտահարված մաս, հիվանդության օջախ*» հասկացությունը: Բերենք օրինակներ. «Իւր նշանն այն է, որ այն տեղիքն, որ *հիւանդութեան գլուխք* լինի, այտոց առնու» (73), « և տես եթէ բաղանիքն օգտէ, գիտացիր որ *հիւանդութեան գլուխքն* կայ և արձակի» (14), «այլ քիչ քիչ *զհիւանդութեան գլուխն* պարկեշտ դեղերով լուծմամբ ի մար-

[14] Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 1836-37, հ. Ա, էջ 562: **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Ե., 2012, էջ 114:

մնոյն յարտաքս հանէ» (33), «Եւ իւր ստածումն խիստ դժար է վասն այն, որ *հիւանդութեան գլուխն* բնութեանն յաղթեալ լինի» (33), «Իւր նշանն այն է որ այն տեղիքն, որ *հիւանդութեան գլուխք* լինի, այտոց առնու» (73), «Ապա թէ *հիւանդութեան գլուխն* ի ներքս ի յերակսն լինի, տուր զդեղերն որ զգոզն յորդորեն» (108), «և ի յամենայն շաբաթ աֆթիմոնին զհապն ի բանի պահէ, որ *զհիւանդութեան գլուխքն* ի մարմնոյն սրբէ» (128):

Հիվանդության գլուխ դարձվածքը չի հանդիպում բառարաններից և ոչ մեկում, այդ թվում նաև՝ ՄՀԲ-ում:

Բժշկարաններում զգալի թվով դարձվածքներ են գործածվել *ուղեղ* և դրան հոմանիշ *խելք, միտք* գոյականներով: Եվ այսպես.

Ուղեղից ջուր խմել՝ «*սնուցվել*». «Հանապազ ուղեղն զսիրտն տեսանէ և երբ այն փակուի, տնկի ցաւն, որ կոչի սքթայ, որ *սիրտն յուղեղէն ջուր չկարէ խմել*» (Աբուս., 156):

Խելքն աւերել դարձվածքը գործածվել է *«ուշագնաց լինել»* իմաստով. «զերդ որ ոմանց ի ջերմերն գլխացաւութիւն հանդիպի, և ոմանց *խելքն աւերի*» (138), իսկ ***խելքը ցրուած***-ը՝ «*անուշադիր*». «և այլ որ լեզուն սև լինի, և *խելքն ցրուած*» (ՄՀՋՄ, 90):

Ման խելաց դարձվածքը-շրջասություն Աբուսայիդը կիրառել է «ուղեղ»-ի փոխարեն. «Արար աստուած զգլուխն մարդոյ գ մասն. զառաջինն արար *ման խելաց*, զերկրորդն արար ման յիշողութեան անդիճելեացն և զերորդ մասն արար ման պահողութեան, որ ամենայն ինչ տեսանէ և իմանայ» (Աբուս., 121):

Վերոնշյալ չորս դարձվածքներն էլ արձանագրված չեն ՄՀԲ-ում, այնպես էլ դարձվածաբանական և բարբառային բառարաններում:

Միտք գոյականով գործածվել են ***մտաւ վարժիլ*** «*չափից դուրս մտավոր աշխատանքով զբաղվել*». «*Մտաւ*

վարժիլն հոգւոյն ահոկէ» (ՄՀՋՄ, 18), և ***մտիկ դնել*** «*նայել*» բայական դարձվածքները՝ «Այլ դու մի՛ *մտիկ դնես* իւր նուպային» (ՄՀՋՄ 88), որոնցից առաջինի համար ՄՀԲ-ն դարձյալ հղում է Հերացուն, իսկ *մտիկ դնելը* գործածվել է Ադանայի բարբառում[15] և հետագա դարերի բժշկարաններում[16]:

Կերակրի միտք դարձվածք-շրջասությունը՝ «*ախորժակ*» իմաստով գտնում ենք Հերացու բժշկարանում. «Եւ *կերակրին միտքն* փակին և ողջութիւն դժար ընդունի» (ՄՀՋՄ 54): «Եւ իւր նշանն այն է՝ որ ջերմ ի յար և *կերակրին միտքն* փակին» (ՄՀՋՄ 54): ՄՀԲ-ն վերջինիս համար վկայաբերում է հենց Հերացու աշխատանքը:

Ուշագրավ են հատկապես *հոգի*[17] բաղադրիչով ստեղծված անվանական դարձվածքները, որոնք գործածվել են և՛ Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» և՛ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ»[18] բժշկարաններում: Առանձին օրգանների և զգայարանների անվանումների փոխարեն բժշկապետը կիրառել է հետևյալ դարձվածք - շրջասությունները.

Հոգի բնութեան - *յարդ*. «Եւ այն շոգին, որչափ ի լերդն է, անուանեն զնա *հոգի բնութեան*» (Աբուս., 187): «…*հոգի բնութեան*, իւր տեղի և բնակարան լերդն է» (ՄՀՋՄ, 3):

---

[15]Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 801:

[16] Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *ՄՀԲ*, էջ 540:

[17] *Հոգի* բաղադրիչով դարձվածքները ևս պայմանականորեն ներառել ենք մեր քննության մեջ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանով կազմվել են կազմախոսական հասկացություն արտահայտող շրջասություններ:

[18] Աբուսայիդի բժշկարանում է զետեղված Մխիթար Հերացուն պատկանող *«Վասն շինուածոյ և յորինուածոյ աչացն»* պատառիկը, որտեղ էլ բժշկապետը կիրառել է *հոգի*-ով բաղադրված նույն դարձվածքները:

Հոգի կենդանութեան – *սիրտ.* «Ապա յիրմէն ի սիրտն երթայ և անդ անուանի *հոգի կենդանութեան*» (Աբուս., 187): «Բագարատ ասէ, թէ շատ տապելովն և խոնճելովն հոգւոյն տաքութիւնն իւր չափէն անցնի, և *հոգի կենդանութեան* և հոգի զգայութեան դատին և ահոկին» (28): «Ապա տաքնայ արիւնն ի հոն՝ և տաքցնէ զերակսն … և երթայ ի սիրտն՝ և տաքցնէ *զհոգի կենդանութեանն*, որ ընծայէ զջերմն» (22):

Տեսողական հոգի - *տեսողության զգայարան.* «Այժմ յիշեմ *զտեսողական հոգին,* եթէ ուստից ընծայի և որպէս լինի իրովն տեսանելն» (Աբուս., 187): «Երթայ ի յաչսն և անդ անուանի *հոգի տեսողական* և կատարի տեսանելին» (Աբուս., 188):

Վերոնշյալ դարձվածք-շրջասություններից միայն *հոգի բնութեանն* է արձանագրված ՄՀԲ-ում, սակայն վկայակոչված է ոչ թե Աբուսայիդի աշխատանքը, այլ 15-րդ դարի բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան»-ը[19]:

Երկու բժշկարաններում էլ առատ կիրառությամբ աչքի է ընկնում գրաբարի *երակ հատանել* -ին[20] համարժեք ***երակ առնել*** դարձվածքը, որը միջին հայերենում բժշկական տերմինի արժեք է ստացել և ունի «*արյուն վերցնել*» իմաստը: Բերենք օրինակներ. «Իսկ իւր ստածումն այս է, որ *երակ առնու* իւր դիմացի հակառակէն» (ՄՀՋՄ, 23), «Ապա թէ այս հիւանդութեանս սկիզբն լինի …ի բասիլիկէն *երակ առնու*»(ՄՀՋՄ, 53), «Փոլոս ասէ ի նոյն պատճառդ, եթէ *երակ առնուլն* և արիւն հանելն մեծ և օգտակար դեղ է այդ հիւանդութեանդ (ՄՀՋՄ, 71),«Վասն որոյ բժշկապետքն հրամայել են ի գարնան աւուրքն *երակ առնել*» (Աբուս., 173):

---

[19] Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *ՄՀԲ,* էջ 432:

[20] Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, էջ 78:

Հայերենի դարձվածքների ձևավորման գործում կազմախոսական գոյականներից աչքի է ընկնում նաև *երես-ը*, որով Աբուսայիդը կիրառել է ***երեսաց գոյնը երթալ*** *«գունատվել»* դարձվածքը. «Եւ մարդն, որ սքթայ հանդիպի, որպէս մեռած լինի, և *գոյն երեսացն երթայ*» (Աբուս., 122): Նշենք, որ դարձվածքը լայն գործածություն ունի հայերենի բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում[21], սակայն ՄՀԲ-ում տեղ չի գտել: Հերացու բժշկարանում մեկ անգամ կիրառված ենք գտնում միջին հայերենին բնորոշ[22] ***յուլանց տալ*** հարադիր բայը՝ *«հրել»* իմաստով, որն ակնհայտորեն դարձվածքի արժեք ունի: Վերջինիս հիմքում ընկած է *ուլն (ուղն, ոլն)* արմատը, որն ըստ Աճառյանի բնիկ հայերեն բառ է՝ հնխ. ōlen ձևից և նշանակում է «վիզ, պարանոց»[23], իսկ *յուլանց տալ* հարադրավոր ձևը հանդես է գալիս նոր իմաստավորմամբ՝ *«հրել, դուրս մղել»* (հավանաբար սկզբում վզին տալով հրելն է նկատի առնվել): Նկատենք, որ այս բառակապակցությունը կա Զուղայի բարբառում՝ *«թևով հրել, բոթել»* նշանակությամբ[24], իսկ Կարնո բարբառում վերջինս նույն իմաստով գործածական է *ուլաս տալ* տարբերակով[25]:

«Ջերմանց մխիթարութիւն» երկում *յուլանց տալ* դարձվածքով արտահայտվում է օրգանիզմից վնասակար մաղձը *հրելու, դուրս մղելու* իմաստը. «Եւ թանձրութեան և

---

[21] Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, Ե.,1944 հ. 1, էջ 579, **Ա. Սուքիասյան, Ս.Գալստյան**, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, էջ 211, *Հայոց լեզվի բարբառայի բառարան*, հ. Ա, Ե., 2001, էջ 382:

[22] Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերէն արմատական բառարան*, հ.3, Ե., 1977, էջ 592: *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1972՝ էջ 252:

[23] Տե՛ս **Հ. Աճառյան**, նույն տեղում:

[24] Տե՛ս **Հ. Աճառյան**, նույն տեղում:

[25].Տե՛ս *Հայոց լեզվի բարբառայի բառարան*, հ. Զ, Ե., 2010, էջ 293:

պղտորութեան պատճառն այն է, որ բնութիւնն զհաստ և ղորկուտ պալղամն, որ զխցկումն արար, *յուլանց տայ* և հանէ ընդ գոզն» (ՄՀՋՄ 81):

ՄՀԲ-ն չի արձանագրում նշված դարձվածքը, փոխարենը միայն բերում է *ուլանս տալ ձևը՝ «վոնդել, հրել, մերժել»* իմաստներով՝ հղում անելով Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ին[26]:

Փոր բառով Հերացին կիրառել է ***փորն կապ լինել / փորն կապել***՝ «*փորկապություն ունենալ*» բայական դարձվածքը. «Ապա թէ *փորն կապ լինի* , տուր պատատկի ջուր կէս լիտր» (ՄՀՋՄ 117): «Նշանն այն է, որ *փորն չկապի*» (ՄՀՋՄ 147): «Այլ պարտ է գիտենալ զդկին տէրն և զսլին յանկարծ ժամ մի ուրդի որ *կապի փորն* » (52):

Նշված դարձվածքը արձանագրված է ՄՀԲ-ում, սակայն օրինակը բերված է ոչ թե Հերացուց, այլ 13-րդ դարի բժիշկ Գրիգորիսի «Քննութիւն յաղագս մարդոյ և նորին ցավոց» բժշկարանից[27]:

Այսպիսով, 12-րդ դարի բժշկարաններում կիրառվել են կազմախոսական բառերով ձևավորված զգալի թվով նոր դարձվածքներ, որոնք, լինելով ժողովրդական մտածողության արտահայտություն, արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվի և բարբառների պատկերը: Բժշկարաններում հանդիպում են նաև հեղինակային մի քանի նորաստեղծ դարձվածք-շրջաններ՝ *հիվանդության գլուխ, հոգի բնության, հոգի կենդանության, տեսողական հոգի* (Հերացի), *ման խելաց, տանուտեր սրտին* (Աբուսայիդ), որոնք, դիպվածային բնույթ ունենալով, չեն ընդգրկվել բառարաններում: Նշենք, որ մեր դիտարկած 23 դարձվածքներից 11-ը տեղ չեն գտել ՄՀԲ-ում:

---

[26]. Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *ՄՀԲ*, էջ 616:

[27]. Տե՛ս նույն տեղում, էջ 791:

Тадевосян Асмик - Новые фразеологические обороты с анатомическими компонентами в лечебниках XII века (Мхитар Гераци, Абусаид). – В статье рассматриваются новые фразеологические обороты, возникшие с помощью анатомических слов *голова, сердце, мозг, лицо, живот* и другие (23 слова), которые употребляли врачи XII века Мхитар Гераци и Абусаид в своих лечебниках “Утешение при лихорадках” и “О строении человека”. Эти фразеологизмы в основном отражют картину среднеармянского разговорного языка и диалектов. Половина этих фразеологизмов (11) не нашли место в “Словаре среднеармянского языка”.

Tadevosyan Hasmik – New stable-phrases with Anatomical component in the Medical Books of XII Century (Mkhitar Heratsi, Abusaid).– This article studies new stable-phrases composed with anatomical words *head, heart, brain, face, stomach* and others (23 words), used by XII century doctors Mkhitar Heratsi and Abusaid, in their medical books "Relief of fevers " and "About the human structure".These stable-phrases reflect the essence of middle Armenian spoken languages and dialects. Half of these phrases (11) are not found in the “Dictionary of Middle Armenian”.

Թոխմախյան Ռոբերտ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ա) Ց բաղաձայնի մասին

Ցանկացած գիտակարգ ունի իր եզրաբանությունը (տերմինաբանությունը), բացառություն չէ նաև լեզվաբանությունը: Եզրույթը (տերմինը) տվյալ գիտակարգում դիտարկվող հասկացություն է: Նույն երևույթի մեկնաբանման համար երբեմն գործածվող ոչ լիարժեք նշանակություն ունեցող եզրույթները կարող են խաթարել այդ հասկացության ընկալմանը՝ առաջացնել թյուրըմբռնումներ: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում գործածվող հասկացությունների համար եզրույթների միասնական, միօրինակ ձևակերպումները: Իհարկե նույն եզրույթը հաճախ գործածվում է ամենատարբեր առումներով՝ կախված նրանից, թե այն ինչպես է գիտակցվել այն գործածողի կողմից: Եզրույթը չի կարող լիովին ծածկել հասկացությունը, և երբեմն եզրույթի մեջ առավելություն տրվում է այս կամ այն հատկանիշին: Հաճախ հասկացության մեջ հանդես եկող այս կամ այն հատկանիշը բնորոշվում է նոր անվանումներով, որոնք կարող են նպաստել կամ խաթարել գիտության այդ բնագավառի եզրույթային համակարգը:

Եթե լեզուն ինքը համակարգ է, ապա նրա հասկացությունների նկարագրության համար գործածվող եզրույթները նույնպես համակարգ են: Այդ համակարգի մեջ մտնող միավորները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Եզրույթները նպաստում են գիտության այս կամ այն բնագա-

վառի համակողմանի ուսումնասիրությանը, բացահայտում են նյութի ընդգրկման սահմաններն ու կառուցվածքը:

Մեր դիտարկումները վերաբերում են հայերենի հնչյունաբանության մեջ կիրառություն ստացած որոշ եզրույթների գործածությանը, որոնք մեր կարծիքով ստեղծում են որոշակի դժվարություններ հնչյունաբանական այս կամ այն երևույթի բացահայտման գործում: Մեր առաջին դիտողությունը վերաբերում է հայերենի *յ* բաղաձայնի գործածության ժամանակ երբեմն նրան տրվող այնպիսի եզրույթի գործածությանը, որը որ ճիշտ պատկերացում է տալիս հայերենի հնչյութային համակարգի մասին: Խոսքը *յ* բաղաձայնին տրվող այսպես կոչված կիսաձայն եզրույթի մասին է: Եթե մենք նկատի ունենանք հայերենի հնչյութային համակարգի այս կամ այն միավորի առանձնահատկությունները, ապա ինչպես ձայնավորական, այնպես էլ բաղաձայնական համակարգում կարող ենք գտնել առանձին հնչյութներին բնորոշ այս կամ այն հատկանիշը: Ամեն մի հնչյութ ունի իր առանձնահատկությունները և հնչյութների դասակարգման հիմքում դրվում են ամենաընդհանուր հասկացությունները: Եթե մենք *յ* բաղաձայնին տալիս ենք *կիսաձայն* հասկացությունը, ապա ստացվում է այնպես, որ հայերենի հնչյութային համակարգը բաժանվում է երեք շարքի՝ ձայնավոր, բաղաձայն և կիսաձայն: Յ-ն հայերենի բաղաձայնական համարգի սովորական միավոր է: Չի կարող լինել կեսով ձայնավոր կամ կեսով բաղաձայն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը սովորաբար հիմնված է նրանց գործառական այն հատկության վրա, որով հնչաշղթայում ձևավորվում են վանկերը: Ճիշտ է՝ բաղաձայնական համակարգում *յ*-ն իր ֆիզիկական հատկանիշներով առավել մոտ է փայնավորներին, բայց նա, ինչպես և ձայնորդական խմբի մեջ մտնող մյուս բաղաձայնները, չունի վանկարար կազմություն: Չկան բառեր, որտեղ *յ*-ն լինի վանկարար. այն վանկարար է դառնում է միայն կից ձայնավորի

առկայության պայմաններում: *Ց*-ի առանձնահատկություններից է նաև ձայնկապ լինելը, և այն հանդես է գալիս կից ձայնավորների արանքում: Հայերենի ուղղագրության մեջ այն գործածվում է *ա* և *ո* ձայնվորներից հետո, մնացած դեպքերում գրության մեջ չի արտահայտվում: Վիճելի է նաև հնչաշղթայում բաղաձայնին հաջորդող *յ*-ն բոլոր դեպքերում հաջորդող ձայնավորին միացնելը, քանի որ կարող ենք տվյալ դեպքերում խոսել նաև բաղաձայն հնչույթների քմայնացման մասին, ասենք՝ *գյոգալ* և *գոգալ, գետ և գյետ*: Բոլոր դեպքերում հնչաշղթայում *յ*-ն կարող է հանդես գալ որպես բաղաձայն և լինել հնչույթային համակարգի լիարժեք անդամ: Եթե մենք խոսում ենք այս կամ հնչույթի քմայնացման մասին, ապա այդտեղ *յ*-ն առանձին հատույթային միավոր չէ և այն կարող է դիտարկվելել որպես այդ հնչույթի հատկանիշ:

Եթե *գյոգալ* և *գոգալ* բառերում չունենք իմաստային տարբերակվածություն, ապա կարող ենք խոսել *գ*-ի քմայնացման մասին, իսկ *հյուր* և *հուր* բառերում ունենք յ+0 հակադրություն: Առաջին դեպքում գործ ունենք քմային բաղաձայնի հետ, երկրորդ դեպքում գործ ունենք բաղաձայն+յ կապակացության հետ:

Հայերենում, ինչպես նաև շատ լեզուներում, հնչյունական համակարգը բաժանվում է երկու խմբի՝ ձայնավորների և բաղաձայնների: Հնչույթային համակարգի միավորները իրարից տարբերվում են հիմնականում նրանով, որ հիմք են դառնում բառերի և բառիմաստների տարբերակման համար: Ձայնավորները և բաղաձայնները հատույթային կարգի միավորներ են, այսինքն՝ հնչական շղթան կարելի է բաժանել ըստ նրանում առկա հնչույթների, որից ավելի փոքր հատկանիշը հատույթային չէ: Հատկանիշները կարող են լինել տարբերակիչ և ոչ տարբերակիչ: Հնչույթի մեջ կան տարբերակիչ և ոչ տարբերակիչ հատկանիշներ: Այն հատկանիշը,

որ մեկ հնչույթը տարբերակում է մեկ այլ հնչույթից կոչվում է տարբերակիչ հատկանիշ, այդ տարբերակիչ հատկանիշը գործում է մի քանի լեզուներում, սակայն ընդհանրական չէ բոլոր լեզուների համար: Օրինակ քմայնացման հատկանիշը հայերենի համար տարբերակիչ հատկանիշ չէ, մինչդեռ ռուսերենում այդպիսին է: Կան լեզուներ, որտեղ ռնգայնությունը կարող է լինել իմաստատարբերակիչ, ուրիշների համար այն էական հատկանիշ չէ: Հայերենի *յ* բաղաձայնը հանդես է գալիս գրական լեզվում միայն ձայնավորական շրջապատում: Այս առումով նրա ֆիզիկական հատկանիշները շատ մոտ են ձայնավորների հատկանիշներին: *Յ*-ն ունի ձայնեղություն, տևականություն, անընդհատականություն: Իր հատկանիշներով *յ* բաղաձայնը կարող է ընդգրկվել ձայնեղ բաղաձայնների մի այնպիսի խմբի մեջ, որտեղ հարմոնիկ ձայները շատ ավելի հստակ են մյուս ձայնեղների համեմատ: Այդ հատկանիշով միավորված խումբը հայտնի է ձայնորդ անվանումով, այսինքն՝ *յ*-ն մտնում է ձայնորդների խմբի մեջ. Եթե առանձին լեզուներում ձայնորդները կարող են հանդես գալ նաև որպես վանկարարներ, ապա հայերենում՝ ձայնորդները վանկարար չեն: Բաղաձայնական կուտակումների դեպքում հայերենում վանկարարության արժեքով հանդես է գալիս *ը* ձայնավորը եթե այդ վանկում այլ ձայնավոր չկա: *Յ* բաղաձայնը իր ձայնային հատկանիշներով շատ մոտ է *ի* ձայնավորին, և այս է պատճառը, որ երբեմն լեզվաբանական գրականության մեջ *յ* բաղաձայնին անվանում են կիսաձայն: Նրան մեկ այլ հատկանիշ վերագրելու դեպքում խոսում են ձայնակապի մասին:

Մեր կարծիքով բաղաձայնական համակարգից *յ*-ի առանձնացումը որպես բաղաձայնի առանձին տեսակ ճիշտ չէ, և կիսաձայն անվանումը կարող է սխալ պատկերացում տալ այդ հնչույթի մասին: Մենք մնում ենք այն կարծիքին, որ հայերենի հնչույթային համակարգը լայն առումով բաժան-

վում է երկու մեծ խմբի և ինչպես մյուս ձայնորդները, այնպես էլ *յ*-ն հայերենի բաղաձայնական համակարգի լիիրավ անդամներ են:

բ) Վանկ հասկացության մասին

Վանկը արտաբերության նվազագույն միավորն է, այսինքն՝ արտաբերության ժամանակ վանկից փոքր միավորներ չեն ստեղծվում: Վանկից փոքր միավորներ փորձում ենք դիտարկել միայն հնչույթային վերլուծության ժամանակ, երբ հնչաշղթայի մեջ առանձնացնում ենք հնչույթները սահմանազատող քիչ թե շատ իրական պատկերները: Սովորաբար փորձառական հնչյունաբանության մեջ նման պատկերների առանձնացումը 10 միլիվայրկյանից փոքր չի լինում: Հայերենի ամենից ավելի կարճ հնչույթային միավորները 40 միլիվայրկյանից փոքր չեն լինում (պայթական բաղաձայններ): Հայերենում ամեն մի վանկում պարտադիր է մեկ ձայնավորի գոյությունը: Ձայնավորական համակարգում հայերենն ունի հնչույթների տարահզորության իր համակարգը, որը սովորաբար ունի հետևյալ շարքը՝ *ա, օ, է, ի, ու, ը:* Ը-ն ամենից ավելի պակաս հզորությամբ հանդես եկող ձայնավոր է: Գրության մեջ այն կարող է մինչև իսկ արտահայտված չլինել: Ընդունված է լեզվաբանության մեջ վանկերը բաժանել երկու մեծ խմբի՝ բաց և փակ խմբերի. այն վանկերը, որոնք ձայնավորով են վերջանում կամ միայն ձայնավորով են կազմված բաց են, իսկ բաղաձայնով վերջացող վանկերը փակ վանկեր են: Հայերենում վանկի կազմության մեջ պարտադիր է վանկարար ձայնավորի առկայությունը: Հայ լեզվաբանության մեջ հաճախ գրության մեջ չնշվող *ը* ձայնավորով կազմված վանկերը կոչվում են գաղտնավանկ: Նման եզրույթի գործածությունը խոսում է ուղղագրության մեջ չնշվող, սակայն գործառվող ձայնավորի մասին: Հնչյունաբանության մեջ, սակայն, հստակորեն չեն տարբերակվում գաղտնավանկ և

կիսավանկ հասկացությունները, քանի որ երկու դեպքում էլ որպես վանկարար հանդես է գալիս *ը* ձայնավորը:

Լեզվաբանական որոշ կարգի հետազոտություններում *ը*-ով կազմվող վանկերի մի մասին անվանում են **կիսավանկ** (սանր, մանր): Արդեն ասացինք, որ հայերենում արտաբերության նվազագույն միավորը վանկն է, վանկից ավելի փոքր միավոր չի արտաբերվում, հետևաբար կիսավանկ հասկացությունը նույնպես մնում է անհասկանալի: Ընդ որում, *ը*-ով կազմվող բոլոր վանկերը չէ, որ դիտվում են կիսավանկ: Կիսավանկ են համարվում այն վանկերը, որոնցով ավարտվում է բառի վերջին վանկը, երբ բառի հոգնակիի կազմությունը չի ստանում *-ներ* վերջավորությունը, այլ ստանում է *-եր,* օրինակ՝ *արկղ-արկղեր, դուստր-դստրեր*: Կիսավանկ եզրույթը այս առումով կապվում է ձևաբանություն հասկացության հետ: Այն հնչյունաբանական արժեք չունի, ծառայում է հոգնակիի կազմության ձևավորման ժամանակ: Հայերենում ընդունված է, որ երկու և ավելի վանկից կազմված բառերը ստանում են *-ներ* հոգնակիակերտ վերջավորություն, մինչդեռ՝ այսպես կոչված կիսավանկերը վերաբերում են այն դեպքերին, երբ բառը կազմված է երկու վանկից, որի երկրորդ բաղադիրչը ձևավորված է *ը* ձայնավորով: Այն, որ նման տիպի բառերը միշտ չէ, որ կազմվում են *-ներ* հոգնակիակերտով, հիմք է տվել այդ վանկերը կիսավանկ անվանելու: Սրան հակառակ, այն բառերը, որոնց առաջին բաղադրիչն է *ը* ձայնավորը, արդեն կիսավանկ չեն, այլ՝ գաղտնավանկ, քանի որ սրանց հոգնակիի կազմությունը նման է բազմավանկ բառերի կազմությանը, ինչպես՝ բժիշկ-բժիշկներ: Խոսքում վանկատման ժամանակ կիսավանկեր կամ գաղտնավանկեր չեն ստեղծվում, քանի որ բոլոր դեպքերում հանդես եկող վանկատիպերը ունեն ընդհանուր օրինաչափություն՝ բաց կամ փակ վանկեր են:

Թերևս չարժէ *ը*-ով կազմված վանկատիպերը մյուս վանկատիպերից առանձնացնել, որով կարծես թե կասկածի տակ է դրվում *ը* ձայնավորի լինել կամ չլինելու և վանկակազմիչ լինելու հատկանիշը: Վերջին ժամանակներս մամուլում հանդիպում ենք *ղրղզ* անվանմանը: Բառ, որը ունի երկու վանկ, և այդ վանկերը չի կարելի առանձնացնել որպես կիսավանկ կամ գաղտնավանկ: Այդ բառի հոգնակին կազմվում է *-ներ* ձևով՝ *ղրղզներ*: Մյուս կողմից հետաքրքրություն է ներկայացնում նաև այն, որ ժողովրդախոսակցական լեզվում երբեմն միավանկ բառերը իրենք կարող են ստանալ հոգնակիակերտ *-ներ* վերջավորությունը՝ ծառ-ծառներ: Ն-ի գործածությունը այդ ձևույթում երբեմն կապվում է ոչ այնքան հոգնակիակերտ մասնիկի հետ, օրինակ՝ ոտ-ոտեր-ոտներ, ձեռ-ձեռքեր-ձեռներ, գործ-գործներ-գործեր, որքան *ն*-ն կապվում է անձնավորման հատկանիշի հետ:

Մեր նպատակն է՝ որքան հնարավոր է խուսափել գաղտնավանկ կամ կիսավանկ եզրույթների անհարկի գործածությունից:

Тохмахян Роберт – Фонетические заметки. В лингвистической литературе по фонетике армянского языка иногда неоправданно применяют некоторые необоснованные термины. Данная статья посвящена анализу термина «полугласный», относящийся гласной *յ* , а также терминам “полуслог” и «неполноценный слог» (слог, образованный при помощи гласной *ը*). Полагаем, что применение данных терминов при анализе речи приводит к смещению понятий и не способствует выявлению реальной картины.

Выделение в системе согласных фонемы *յ* и противопоставление ее другим фонемам мешает четкости фонетической системы. Как и другие сонорные, фонема *յ* так же входит в систему согласных, и определение «полугласная» не обусловлено сущностью данной фонемы. В армянском языке нет ни полугласных, ни сложных согласных. В фонетике часто применяют

термины «полуслог» и «неполноценный слог», посредством которыхвыделяют невыраженные на письме слоги, образованные из гласной *ը*. Подобное выделение приводит к противоречию при осмыслении понятия «слог».

Tokhmakhyan Robert – Phonetic observations. In the phonetic literature of the Armenian language sometimes unspecified terms are unnecessarily used. The article concerns to the semivowel term for vowel, semisyllabic and schwa terms for syllables. We suppose, that the usage of such terms in the commentation of sound chain creates mess, it doesn’t promote the revelation of its real image.

In the system of consonants the separation and contrast of the phoneme [j] to the other phonemes disturbs the specification of thephoneme system. As other sonorants, [j] is also included in the system of consonants, the name semivowel doesn’t emanate from the essence of that phoneme. There are neither semivowel nor complex consonants in the Armenian language. Semisyllabic and schwa terms are often used in phonetics , by which the syllables formed with the vowel [*ə*], which is not expressed in the written form, are separated. That separation creates contradiction in the comprehension of the concept syllable.

Խաչատրյան Հասմիկ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՍԵՆՅԱԿ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ[1]

Դեռևս հին մատենագրության մեջ վկայված է *սենյակ* բառանունը՝ «խուց», «սրսկապան», «ներքին բնակարան», «շտեմարան», «մթերանոց», «մառան», «գանձարան», «կանանոց» իմաստներով: *Սենյակ* բառից են բաղադրված 5-րդ դարում արձանագրված *սենեկապետ, սենեկապան, սենեկիկ* բառանունները: Նշենք, սակայն, որ *սենյակ* բառանունը՝ որպես տան բաղկացուցիչ մաս, հայերենի բարբառներում գրեթե վկայված չէ: Տան բաղկացուցիչ մասերը բարբառային հայերենում ունեն յուրօրինակ այլ դրսևորումներ, որոնցից են *օթախ, օդա, խորթանոց, փօղան, սրախ* և այլն:

Ինչպես հայտնի է, *օթախը*՝ որպես սենյակ հասկացության նշանակելի, դիտարկված է որպես թուրքական փոխառություն: Ըստ «Միջին հայերենի բառարանի» հեղինակների՝ միջին գրական հայերենի զարգացման երկրորդ շրջանի գրավոր հուշարձաններում (14-16-րդ դդ.) ներթափանցել են թուրքերեն բառեր, որոնք նրանք համարում են ամբողջությամբ ժողովրդական փոխառություններ: Դրանք գործածական են եղել խոսակցական լեզվում, և *տուն, տնային իրեր* իմաստային խմբում լեզվաբանները ներառում են *օթաղ*՝ «իջևան»,

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 15T-6B101 «Կոտայքի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

«հանգրվան», *օտայ* ՝ «սենյակ»<oda բառերը[2]: Մեր կարծիքով, *օթախ*-ը կարող է աղերսներ ունենալ հնխ-ի *օթ* արմատի հետ, մանավանդ որ հին հայերենում այն *օթանոց*՝ «սենյակ», «բնակարան», *օթոց*՝ «ննջարան», «սենյակ» իմաստներով գործածվել է: ՆՀԲ-ում *օթ* արմատը նույնիսկ լծորդված է թրք. *օթագ* (otak) «մեծ վրան», *օդա* «սենյակ» բառերին: Հ.Աճառյանը բերում է նաև Սրմագաշյանի կարծիքը, ըստ որի՝ հայերեն *օթևանը* համեմատվում է ռուս. *otel*, ֆրանսերեն *hotel* բառերի հետ[3]:

Բարբառային հայերենում *օթախ* (նաև՝ օտաղ հնչաձևով) բառանունը՝ որպես *սենյակ* հասկացության նշանակելի, գործածական է եղել Կարինում, Բասենում, Նոր Բայազետում, Մակուում, Մուշում, Կարճևանում, Նախիջևանում և այլուր:

Հայերենի բարբառներում առկա է նաև *օդա*-ն, որը, ինչպես վերևում նշեցինք, ծագումնաբանորեն առնչակից է թուրքական նույն *oda* բառանվանը: Սակայն *օթաղ* և *օդա* բառանունները բարբառային հայերենում իմաստային առումով տարբեր բաշխվածություն ունեն: *Օթաղը* բարբառային հայերենում ընդհանրապես *սենյակ* իմաստով է գործառում: *Օդան* հին ժամանակներում եղել է գոմին կից և կոչվել է *թավլի օդա*: Այնուհետև քաղաքային բնակարաններում *օդան*, գոմից անջատվելով, որպես վերնահարկ կառուցվում էր գոմի վրա, և կամ էլ բնակարանի մեջ մի առանձին բաժին հատկացվում էր *օդա*-յին, որը սենյակ էր հյուրերի համար:

Ս.Մալխասյանցի բառարանում վկայված են *օդա* բառանվան հետևյալ նշանակությունները. 1. հին տների մեջ այն բաժանմունքն է, որը հատկացված է որպես ճաշելու, հյուրեր

---

[2] **Ռ.Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, հ. Բ, Ե., 1992, էջ 131-134:

[3] **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 610:

ընդունելու, քնելու սենյակ (*մեծ օդա, պզդի օդա.* Սամավարը տարեք *օդէն,* ես էլ կուգամ եարիս մօտէն), 2. գյուղական տների այն հատվածը, որտեղ օջախ է վառվում, և որտեղ հյուրեր են ընդունում (*Օդան* գոմի կողքին էր. Ձմեռը *օդի* օջախը միշտ վառ է լինում), 3. նաև կտորեղեն ծախող խոշոր առևտրականի գրասենյակ կամ մագազին (Գնա' *օդէն*, աղան այնտեղ է)[4]:

Օդա բառանունը բարբառներում դրսևորված է *օտա՝* Նախիջևան, *էօդա՝* Վան, *ուդօ, ուդա՝* Մուսա լեռ (Քիլէ՛ ուրթունք յէմ *ուդան*, բառգինք /Արի՛ գնանք իմ սենյակը քնենք/, Յաղ շըրէն միչը քառսուն *ուդօ* գ°ր /Այդ ժայռի մեջ քառասուն սենյակ կար/) հնչաձևերով[5]:

Եվդոկիայում *օտա*-ն սենյակն է: Հ.Գազանճյանի բերած նմուշներում այսպիսի օրինակ ունենք. «Օր մը կեսուրը *օտան* աւլելու ատենը՝ հէմէն աղապապան (սկեսրայրը) ոտքի կ'ելլէ, աւելը կը խլլէ, ես պիտ աւլիմ ըսէլով». «Մէ մըն ալ քիշէրը գարթննան քի *օդան* լուսավորվէր է»[6]:

Կարինի բարբառում, որպես *սենյակ* հասկացության նշանակելի, բառը *հօդա* բառազուգաբանությամբ է վկայված[7]: Նոր Բայազետի (Լանջաղբյուր, Գեղարքունիք գյուղեր) և Դիադինի (Վարդենիս ք.) խոսվածքներում *հօդա*-ն գոմ, ինչպես նաև «նախասրահ» նշանակություններով է գործածվում: Օրինակ՝ Գեղարքունիք գյուղում *թալվի հօդա*-ն գոմի նախասրահն է, իսկ Վարդենիսում *հօդէ*-ն գոմն է:

Հայերենի բարբառներում *նախասրահ, միջանցք* հասկացության բառանուն է փաստված *սրահ*-ը, որը վկայված է

---

[4] **Ս.Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 4, Ե., 2010, էջ 601:

[5] *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 16, Ե., 1984, էջ 42, 44:

[6] **Հ.Գազանճեան**, *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Վիեննա, 1899, էջ 6:

[7] **Հ.Մկրտչյան**, *Կարինի բարբառը*, Ե., 1952, էջ 167:

դեռևս հին հայերենում *մեծ սենյակ, դահլիճ, սենյակի մեջ կամ դռան վրա կախված վարագույր, առագաստ, սրահակ* ձևով՝ *փոքր սրահ* կամ *վրան* և այլ իմաստներով[8]: Գ. Ջահուկյանը բառը համարում է իրանական փոխառություն՝ ընդգրկելով իրանական փոխառությունների՝ *բնակարան, տուն, կահ-կարասի* իմաստային թեմատիկ խմբում[9]:

Բարբառային հայերենում *սրահ* բառանունը հանդես է գալիս հետևյալ հնչատարբերակներով՝ 1. *սրրախ* (հ>խ անցումով) Նոր Բայազետում, Դիադինում, Սալմաստում, Մակուում, Վանում, Մուշում, Ալաշկերտում և այլն, 2. *սրրայ*՝ Սևանի Ծովագյուղում (Արծափից եկածներ), 3. *սրրահ*՝ Գորիս, Երևան, Ղարաբաղ և այլն, 4. *սոյօֆ, սօրօֆ*՝ Զեյթուն[10], 5. Քեսաբում բառանունը փաստված է յուրօրինակ *սուրհրվէգ (սուրհունգ)* հնչաձևով: Հիշյալ բառանունը բարբառներում ունի հիմնականում *բակում՝ տան դռան առաջ, վրան ծածկ ունեցող, գետնի երեսին փոքր պատշգամբ, նախագավիթ, անդաստակ* նշանակությունները[11]: Հ.Աճառյանը, ի դեպ, փաստում է, որ Մուշում *սրրայ*-ը նաև մառան, իսկ *սրանոցը* Ղարաբաղում *ձիթհանք* իմաստներով է գործառում[12]: Խոյի բարբառում *սրահի* փոխարեն գործածվել է *չարդաղ* թուրքերեն բառանունը[13]: Հայոց լեզվի բարբառային բառարանում հայկական ժողովրդական հեքիաթներից բերված են բարբառային հայերենում *սրահ* բառի գործածության օրինակներ

---

[8] **Հ.Աճառյան**, ՀԱԲ, հ. 4, էջ 281-282:

[9] **Գ.Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետ՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 572:

[10] **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., , էջ 282:

[11] *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ. Ե, Ե., 2008, էջ 392:

[12] **Հ.Աճառյան**, *Հայերէն գաւառական բառարան* (այսուհետ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 986:

[13] **Մ.Ասատրյան**, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, էջ 250:

(Խինգ կուժ ջուր ի *սրբախն* ա, կբէրէս, կըլըցէս մէջ դազնին. Օղտն էլ մորթըմ, մին շախկան ուրանց *սրբահան* կախ տամ, մըեկալը նի տամ փոսը, թաղըմ)[14]:

Սահակ վարդապետ Ամատունու բառարանում *սրահ, միջանցք* հասկացության բառանուն է արձանագրված նաև *շուաք*-ը, որի առաջնային իմաստն է *շուք, ստվեր*, իսկ երկրորդ իմաստը՝ *տան դռնից մինչև բակի մուտքը ծածկված երկայն, նեղ գավիթ, սրահ, շուագ* (Շիրակի Շիրվանջուղ գ.)[15]:

ՀԼԲԲ-ում ևս վկայված են *շվաք, շվագ* բառանունները՝ որպես տան գավիթ, տան դրսի դռնից մինչև բակի մուտքը ծածկված ու նեղ տարածություն, որ պաշտպանում է արևից, տան առջևի գավիթ: Օր.՝ Աբօն պակաս բանէր չունի՝ գլխատուն, գոմ, *շվաք*, գիուկ. Մտա էդոնց վառելիքի փետերի արանքը, որ *շվաքի* մեջը դարսած էր: Բառանունը գործածական է հետևյալ հնչաձևերով. *շըվաք* ՝Սեբաստիայում, Կարինում (Շիրակ), *շվագ*՝ Կարին (Շիր.), Խոտրջուր, *շըվակ*՝ Մեղրի, Կարին[16]: Այսօր էլ բարբառախոս միջավայրում՝ Ծաղկահովիտի Բերքառատ (նախկին Ախուլա գ.), Ախալքալաքի Վաչիան, Արթիկի մի շարք գյուղերի խոսվածքներում, մեզ հանդիպել է հիշյալ բառանվան գործածությունը՝ *շըվակ* հնչաձևով:

Շվաք-ի՝ *որպես տան դրսի դռնից մինչև բակի մուտքը ծածկված ու նեղ տարածություն, որ պաշտպանում է արևից*, ինչպես նաև *տան առջևի գավիթ* նշանակությունները արդեն իսկ ենթադրել են տալիս, որ հիշյալ բառանունը *շուք, ստվեր* իմաստով *շվաք* բառանվան փոխաբերացմամբ, բառիմաստի ընդլայնմամբ առաջացած բառ է:

Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներից Գ.Ջահուկյանը նշում է արմատներ, որոնք գալիս են հայերե-

---

[14] ՀԼԲԲ, հ. Ե, Ե., 2008, էջ 392:

[15] **Ս.Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 522:

[16] ՀԼԲԲ, հ., Դ, Ե., 2007, էջ 282:

նի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին: Ըստ գիտնականի, որոշ դեպքերում, սակայն, հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև հնչյունական որոշակի անհամապատասխանություններ կան, իսկ որոշ դեպքերում էլ ձայնավորման բնույթը պարզ չէ, և այս շարքում վկայված են նաև *շվակ* «բակ» (Կարինում), *շուագ* «սրահ, գավիթ» (ՆՀԲ), թերևս նաև շվիկ «մի տեսակ կանացի գլխազարդ» (Արաբկիր) բառաձևերը: Եվ *շվակ* բառը, գիտնականի կարծիքով, աղերսներ ունի հայ. *ցիւ, քիւ, խուղ*, հ. իսլ. skjōl «ապաստան, շտեմարան», մ. վ. գերմ. schūr «ապաստան, օթևան», հ. վ. գերմ. hūs «տուն» և այլն (հ.-ե. (s)keu) - «ծածկել, փաթաթել» բառերին[17]:

Փող: Գ. Ջահուկյանը, չստուգաբանված որոշ բառերի մեջ փնտրելով ուրարտական հիմքեր, հնարավոր է համարում նաև *փող* բառի ուրարտական ծագումը[18]: Մեր նախորդ հրապարակումներում արդեն անդրադարձել ենք *փող* արմատին՝ արձանագրելով, որ այն բարբառներում բառիմաստային տարբեր դրսևորումներ ունի: Այսպես. *փող* արմատական բառաձևը Ղարադաղում *աղբանոց* իմաստով է առկա, իսկ *փողանը* (Մոտկան, Երզնկա) թե՛ *աղբանոց* և թե' *փողոց* (Վան) նշանակություններով է վկայված: Վանում *խաչփողան* բարբառային բառանունը *երկու փողոցների խաչվելու տեղ*, այսինքն՝ *խաչմերուկ* իմաստով է գործածվել[19]: Պետոյանը Սասունի բարբառի համար արձանագրել է *փօղանը*՝ որպես *նեղ սրահ, միջանցք* հասկացության բառանուն[20]: Հ.Աճառյանը, ներկայացնելով *փող* արմատը, արձա-

---

[17] **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 316:

[18] **Գ.Ջահուկյան**, ՀԼՊ. ՆԺ, էջ 440:

[19] *Ջահուկյանական ընթերցումներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումներ*, Ե., 2014, էջ 64-66:

[20] **Վ.Պետոյան**, *Սասունի բարբառ*, Ե., 1954, էջ 164:

նագրում է, որ բառի սկզբնական նշանակությունն է եղել «սենյակների առջևի միջանցքը կամ 2 շարք կանգնած մարդկանց միջև բաց թողնված տարածությունը, որով շքաղիր անձը պիտի անցնի»: Ի դեպ, գիտնականը «նեղ սրահ, միջանցք» իմաստը դիտարկում է որպես հիշյալ բառանվան հնագույն իմաստներից մեկը[21], որը և, կարծում ենք, պահպանվել է Սասնո խոսվածքում:

Հաշտ: Բարբառային հայերենում որպես *միջանցք, սրահ* հասկացության բառանուն վկայված է նաև *հաշտ* բառաձևը, որը, ըստ Ս.Մալխասյանցի, արևելյան թուրքերենից փոխառված բառ է՝ *hašt*[22]: *Հաշտ* բառանունը գործածական է Արարատյան, Ղարաբաղի, Նոր Ջուղայի, Բայազետի, Մակուի խոսվածքներում՝ «միջանցք», «նախասենյակ» իմաստով: Բառանունն ունի նաև *նախադուռ, դռան առաջ* իմաստային բաշխումը, իսկ Հավարիկում *հաշտը* անգամ «դուռ» իմաստով է գործառում[23]:

Հ.Աճառյանի, Ս.Ամատունու, ՀԼԲԲ, Ս.Մալխասյանցի բառարաններում *սենյակ* հասկացության բառանուն է դիտարկված նաև *քըցուլակը*: Վերջինս Ղազախում և Օշականում է գործածվել և նշանակում է «փոքրիկ, անշուք սենյակ, խցիկ» (Եասավուլին ո՞րտեղ պըհէմ. մի քցուլակ ունենք, ընտեղ էլ մենք ենք տեղաւորւըմ)[24]:

Կեսարիայում բակից 3-4 աստիճանով բարձրանում ես և մտնում *նախատունը*, որը տեղացիները կոչում են *օրթմէ, չարդախ* կամ *քյօշկ*: Սա ծածկ ունեցող սրահ է՝ պատշգամբ, որի վրա բացվում են հյուրասենյակի (*մուսավիր օդասիի*) և *սուֆայի* (սրահ= արաբ. suffa, թուրք. sufa ձևից) դռները: Ի

---

[21] **Հ.Աճառյան**, ՀԱԲ, հ. 4, էջ 512-513:

[22] **Ստ. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. 3, Ե., 2010, էջ 54:

[23] ՀԼԲԲ, հ. Գ, Ե., 2004, էջ 244:

[24] **Հ. Աճառյան**, ՀԳԲ, 1130, **Ս.Ամատունի**, ՀԲԲ, էջ 353-354, **Ստ. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. 4, էջ 596, ՀԼԲԲ, հ. Է, էջ 157:

դեպ, *սուֆան* Կեսարիայում ծառայել է որպես ամառային ննջասենյակ[25]:

Ինչպես գիտենք, *աչք* բառանունը, բացի տեսողության գործարան բուն նշանակությունից, բարբառային հայերենում փոխաբերացմամբ գործառվում է նաև իբրև այլ հասկացությունների նշանակելի, որոնցից են կահույքի և այլ իրերի դարակ՝ գզրոց, ջրաղացի առանձին բաժանմունք, ծառի բողբոջ, ինչպես նաև տան կամ բնակարանի ամեն մի առանձին բաժանմունքը իր դռնով ու պատուհանով, այսինքն՝ մեր խնդրո առարկա *սենյակ* իմաստով: *Աչք* բառանունը սենյակ իմաստով վկայված է Հ.Աճառյանի (Ախալքալաք, Տրապիզոն՝ Մեկ *աչք* տուն ունիմ)[26], Ս. Մալխասյանցի (Տունը իրէք *աչք* ունի, երկուսում իրանք են ապրում, երրորդում պահում են տավարը)[27] բառարաններում, ՀԼԲԲ-ում (Քաղկումը իրէք *աչք դուքան բաց կօնիմ* (Խաթաբալա)[28]: Հարկ է նշել, որ Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր կատարած գիտարշավների ժամանակ մենք ևս արձանագրել ենք *աչք* բառանունը «սենյակ» հասկացության իմաստով:

Ս.Վարդանյանը Խոփայի համշենահայերի խոսվածքում փաստել է *կօրք, քօրք, գօրք* բառաձևերը *նախասենյակ, կողասենյակ* և *փացխա՝* ճաշասենյակ իմաստներով բառերը[29], որոնց ծագումը մեզ անհայտ է:

Խոհ՝ կերակուր, խորտիկ իմաստով իրանական արմատը վկայված է Մագիստրոսի աշխատությունում, իսկ հին մատենագրության մեջ *խոհ* արմատից ունենք *խոհակեր՝* կերակուր

---

[25] *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 1, , Ե., 1970, էջ 76:

[26] **Հ. Աճառյան**, ՀԳԲ, էջ 117:

[27] **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1, էջ 200:

[28] ՀԼԲԲ, Ե., 2001, էջ 77:

[29] **Ս.Վարդանյան**, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 298:

եփող, *խոհակերոց՝* խոհանոց իմաստով (Խոհակերոցք շինեալք ի ներքոյ պատշգամացն շուրջանակի) բառերը[30]:

Սակայն հայոց կենցաղավարության մեջ խոհանոց՝ որպես այդպիսին, գոյություն չի ունեցել. տան կենտրոնում հիմնականում եղել է թոնիրը, որտեղ էլ պատրաստել են կերակուրը, այսինքն՝ առանձին խոհանոց չի եղել: Այդ է պատճառը, որ բարբառային հայերենում «խոհանոց» հասկացությունը գրեթե չունի հայերեն բարբառային տարբերակներ, կամ էլ դիտարկվել են այլ բառանուններ, որոնք փոխաբերացմամբ կամ բառիմաստի ընդլայնմամբ գործածվել են հիշյալ նշանակությամբ, ինչպես, օրինակ, *թոնդրդրդուն*-ը՝ Տիգրանակերտի բարբառում[31]: «Խոհանոց» հասկացության դիմաց որոշ բարբառներում վկայված են օտար ծագման բառեր: Օրինակ՝ Սասունում՝ *մուտրախ*[32], Տիվրիկում՝ *օջախլրդ,* Բինկյանում՝ *դազանլրխ* և *մութվախ:* Հ. Աճառյանը, ներկայացնելով թուրքերենից փոխառյալ բառերը, փաստում է, որ Պոլիսում, Ն.Նախիջևանում, Ղարաբաղում «խոհանոց» իմաստով նախապես գործածական են եղել *աշխանա* (պրս. asxana), *աշփազխանա* պարսկերենից փոխառյալ բառանունները, այնուհետև այս հին բառերը իրենց տեղը զիջել են Պոլիսում գործածվող *մութվախ* բառանվանը[33]: Ի դեպ, ազգագրագետները փաստում են, որ Խարբերդի Բինկյան գյուղում ժամանակի ընթացքում խոհանոցը ոչ միայն անջատվել է գլխատնից, այլև իր հերթին բաժանվել է երկու մասի՝ բուն

---

[30] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, Ե., 1979, էջ 958, **Հ.Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 387:

[31] **Ա.Հանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 209:

[32] **Վ.Պետոյան**, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 147:

[33] **Հ.Աճառյան**, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ, համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր Նախիջևանի բարբառներուն*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 72:

խոհանոցի, որ կոչվել է, ինչպես նշել ենք, *մութվախ*, և *դազանլրի*-ի (խանգիլնոց), որտեղ հաց էին թխում, դավուրմա պատրաստում, լվացքի ջուրը տաքացնում և այլն[34]:

Այսպիսով, քննվող նյութի դիտարկումից պարզ է դառնում, որ հայերենի բարբառներում տան բաղկացուցիչ մասեր կազմող բառանուններում բնիկ հայերեն բառերը սակավաթիվ են: Դա հավանաբար պայմանավորված է նրանով, որ ավանդական հայկական տներն ունեցել են հիմնականում մեկ սենյակ, որտեղ էլ դրված է եղել թոնիրը: Քննվող բառանուններից բնիկ հայերեն են *աչք, շվագ* բառանունները, որոնք, ի դեպ, որպես *սենյակ* հասկացության նշանակելի, բարբառային հայերենում փոխաբերացմամբ են ձեռք բերել հիշյալ իմաստը: Տան բաղկացուցիչ մասերի բառանունների շարքում մեծ թիվ են կազմում հարևան ժողովուրդներից փոխառյալ բառերը՝ *օթախ, օդա, հաշտ, սրահ* և այլն: Բարբառային հայերենում խնդրո առարկա բառանուններում առ-կա են նաև օտար ծագման բառեր՝ *օրթմէ, չարդախ, քյօշկ, դազանլրի, աշխանա, աշփազխանա, մուտրահ, սուֆա* և այլն:

Khachatryan Hasmik - The Lexical Names of the Concept "Room" in Dialectal Armenian. – This article discusses the lexical names of the concept "room" among which the following are the most applicable ones in the dialects of Armenian: *otakh, oda, srah, hasht, shvag, achk* and so on.

Хачатрян Асмик - Номинации понятия *«комната»* в диалектах армянского языка.- В данной статье рассматриваются номинации понятия *«комната»* в диалектах армянского языка, самымы употребительными из которых являются слова «օթաղ» [отаг^{h}], «օդա» [ода], «սրահ» [сра^{h}], «հաշտ» [hашт], «շվագ» [шваг], «աչք» [ачк] и т.д.

---

[34] *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 1, Ե., 1970, էջ 78:

Խաչատրյան Վալենտին
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ 17-ՐԴ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ (1601-1640 թթ.)

Հոդվածի շրջանակներում դիտարկվել են 1601-1640թթ. գրված հիշատակարաններում[1] արձանագրված այն փոխառյալ բառերը, որոնք, ըստ բառարանային տվյալների, չեն վկայվել մինչև 12-րդ դարը գրված գործերում: Դրանք ենթադրաբար կարելի է համարել հետգրաբարյան լեզվափուլերի փոխառություններ: Նախորդ աշխատանքներում անդրադարձել ենք նաև 13-րդ և 15-րդ դարերի հիշատակարանների՝ միջին հայերենում փոխառված բառապաշարին[2]:

Ինչպես և ուսումնասիրությամբ պարզվում է, համաձայն հիշատակագրության դարավոր ավանդույթի՝ հիշատակագիրները ձգտել են հետևել գրաբարյան օրինաչափությանը, սակայն հիմնականում պահպանելով գրաբարի քերականական համակարգը՝ կամա թե ակամա գրական վկայագիր են հաղորդել ժամանակի խոսակցական լեզվին կամ իրենց բար-

---

[1] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, *ԺԷ դար* (1601 - 1620 թթ.), հ. Ա, Ե., 1974, *ԺԷ դար* (1621 - 1640 թթ.), հ. Բ, Ե., 1978, կազմ. **Վ. Հակոբյան**, **Ա. Հովհաննիսյան**:

[2] **Վ. Խաչատրյան**, *Օտար բառերի գործածությունը 13-րդ դարի հիշատակարաններում*, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու, մաս 3, Ե. , 2016, էջ 965-971, *Միջին հայերենում փոխառված բառերի գործածությունը ձեռագրերի 15-րդ դարի հիշատակարաններում*, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, 7-9 հոկտեմբերի, 2015 թ, էջ 160-169:

բառին հատուկ և հատկապես գրաբարին անծանոթ օտարամուտ բառերի: Սակավ են այն հիշատակարանները, որոնք գրաբարով չեն: Ուղղակի պետք է նկատել, որ գրաբար որոշ հիշատակարաններում համեմատաբար ավելի մեծ չափերի է հասնում հետգրաբարյան իրողությունների գործածությունը: Ընդ որում՝ կանոնավոր կրթություն չունեցող անհատները, որոնց ընդօրինակությամբ է ձեռագրերի զգալի մասը, գրելով մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հիշատակարաններ, առավել հաճախ են գործածել իրենց կենցաղ ներթափանցած և հարազատ դարձած օտար բառեր, մինչդեռ ուսյալ հիշատակագիրները՝ հայ գրականության և մշակույթի կարկառուն ներկայացուցիչներ, հոգևոր տարբեր աստիճաններ ունեցող անհատներ և այլք, ի տարբերություն նախորդների, գրել են ստվարածավալ հիշատակարաններ և գրաբարի հետևողությամբ հնարավորինս զերծ մնացել նման բառերից: Այսպիսով, գրաբարին անծանոթ օտար բառերը, գործածված լինելով բարբառներում, մեծ մասամբ գրաբար չիմացող բարբառախոսների միջոցով են մուտքագրվել հիշատակարաններ:

Պետք է նկատի առնել նաև, որ փոխառությունների մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերաբերում են փոխատու լեզվի մշակութային, կենցաղային զանազան հասկացություններին: Դրանք ազգային տիտղոսներ, կոչումներ, դրամական միավորներ և նույնաբնույթ այլ իրողություններ նշանակող բառերն են, որոնք հայ լեզվաբանության մեջ հայտնի են «էկզոտիկ բառեր» կամ «տարաշխարհիկ բառեր»[3] տերմինով: Բնականաբար, ի տարբերություն օտար ծագման այլ բառերի, որոնք մեծ մասամբ ունեն համարժեքներ, նշվածների գործածությունը անխուսափելի է: Ստորև

[3]Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ա մաս, Ե., 2009, էջ 192:

ներկայացվող բառախմբերում կարելի է նկատել այդպիսի մի շարք օրինակներ:
Քննվող բառերի ծագումը և իմաստները հիմնականում պարզել ենք ՄՀԲ-ի, ՀԱԲ-ի և ՀԼԲԲ-ի միջոցով[4]: Փոխառությունները գերակշիռ մասով արևելյան (արաբերեն, պարսկերեն և թուրքերեն), իսկ մասամբ էլ եվրոպական (հունարեն, իտալերեն, գերմաներեն և լեհերեն) լեզուներից են[5]:

Հիշատակագիրները, անդրադառնալով տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, կառավարման գործընթացին, կրոնաեկեղեցական համակարգին, իրավական, շուկայական փոխհարաբերություններին և այլ բնագավառների, կիրառել են համապատասխան իմաստային դաշտերին բնորոշ օտար անվանումներ:
Այսպիսով, նշված հիշատակարաններում առկա փոխառությունները ընդգրկվում են հետևյալ իմաստային խմբերում:

1. Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ:

1. ***Պաշտոն,անձ,հասարակություն ցույց տվող բառեր***. *խալիֆ* «ամիրապետ» (ա., Բ 330[6]), *նայիպ* «փոխարքա, կուսակալ» (ա., պ., 43, 73), *դայմախան* «կուսակալի տեղապահ» (թ. < ա., Բ 649), *մուսէլիմ* «տեղապահ» (Բ 463), *վաքիլ* // *վէքիլ* «վերա-

---

[4]**Ռ.Ղազարյան**, **Հ.Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009, **Հ.Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1971-1979, *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), Ե., հհ. Ա - Զ, Ե., 2001 - 2010:

[5]Այսուհետև լեզուների անվանումները տրվելու են հետևյալ համառոտագրություններով՝ արաբերեն – ա., պարսկերեն – պ., թուրքերեն –թ., գերմաներեն –գ., հունարեն –հ., պահլավերեն – պհլ., իտալերեն – իտ., լեհերեն – լեհ., թաթարերեն – թթր.:

[6]Փակագծերում միայն էջի նշումով օրինակները 17-րդ դարի հիշատակարանների Ա հատորից են, իսկ Բ նշումովները՝ Բ հատորից, տե՛ս նշվ. աշխ.:

կացու, լիազոր» (ա., թ., 220,Բ 559), *խոնդքար* «թագավոր, արքա» (թ. < պ., 129, 315), *աղսախալ* «գյուղի ավագ» (364, 583), *ջհանգիր* «աշխարհակալ» (պ., Բ 664), *քոխայա* «կառավարիչ, մեծավոր (համայնքի, գյուղի ևն)» (թ. > պ., 18), *քէհէ* «գյուղապետ» (թ. < պ., 43), *չէլէպ* // *չալապ* «ազնվական, իշխան» (թ., Բ 314, Բ 171), *սուպաշի* «1. Ոստիկանապետ, 2. Վերակացու, գավառապետ» (թ., Բ 649), *վոյվոտա* «վարչական միավորման պետ» (լեհ., թ., Բ 799), *վոյթ* «համայնքի ավագ՝ ընտրովի առաջնորդ» (լեհ.< գ., Բ 131), *կրալ* // *գռալ* «թագավոր, կայսր» (լ., Բ 357, Բ 472), *ճումուհաթ* // *ճամահաթ* «համայնք, հասարակություն, բազմություն» (ա., պ., 364, Բ 186), *դաւմ* «ժողովուրդ, ազգ, ցեղ» (թ. < ա.), *ջինս* «տոհմ, ազգատոհմ» (ա., թ., 30), *մալազ* /-իկ/ «երիտասարդ, ջահել» (ա., 10, 641, Բ 240 ևն), *դարդաշ* «եղբայր, հարազատ, բարեկամ» (թ., 56), *խաթուն* «կին, տիկին, տիրուհի» (թթր., 103), *բաննա* «դեռահաս աղջիկ» (լեհ., 77), *փախիր փուխարա* «աղքատ, մուրացկան» (ա., 134), *խազնատար* «գանձապահ» (պ., ա., Բ 327), *տավտարտար* «գանձապահ, հաշվապահ, հարկահավաք» (Բ 522), *ղզըլպաշ* «կարմրագլուխ, պարսիկ» (թ., պ., 294), *աւտապաշի* «իջևանատեր» (թ., 868), *պօստանճի պաշի* «պետական բարձր պաշտոնյա» (թ., Բ 649), *աթմակչի* // *աթմաքչի* «հացթուխ, հացագործ» (թ., 359, Բ 22), *բելիար* «ժանտ, սատանա, չար մարդ» (ե., հ., Բ 463) ևն։ **2.*Տարածք*,*տեղանք*, *կացարան*, *շինություն*՝** *ոլքէ* «նահանգ» (թ., 179, 336 ևն), *մահալ* // *մահլա* «թաղ» (ա., պ., 125, 639 ևն), *սանճախ* «գավառ, շրջան» (թ., 446),*վախմ* «եկեղեցուն նվիրված կալվածք» (ա., պ., 203, 454 ևն), *մօյտան* «հրապարակ» (ա., պ., թ., Բ 126), *մանազուլ* «կայան, օթևան, իջևան» (ա., պ., թ., 453), *քարվանսարայ* «իջևանատուն» (պ., Բ 748), *մէյխանա* «գինետուն, պանդոկ» (թ. < պ., 618), *չարսու* // չարշու «շուկա» (պ., թ., 618, Բ 474 ևն), *պաղչայ* «պարտեզ, այգի» (պ., թ., 247, Բ 675), *պաւստան* «բանջարանոց» (պ., Բ 344), *սարայ* «տուն, շենք»

(պ., Բ 51 ևն), *զօռ* // *կոր* «մահմեդականի գերեզման» (պ., թ., 444, 445, Բ 137), *փազահ* «անասուններին պահելու տեղ, ախոռ, գոմ»(պ., 28), *քօշք* «վերնատուն» (պ., թ., 565), *խան* «իջևան, իջևանատուն» (պ., 247, 618), *դուլա* // *դալա* «ամրոց, բերդ» (ա., թ., 152, 249), *բադան* «պարիսպ» (թ., Բ 614), *դօշամա* «սալահատակ, շարվածք» (թ., 427), *ղըշլա* «ձմեռանոց» (459) ևն:

2. Օրենք. *մահքամ* «դատարան» (Բ 535), *դադի* «դատավոր» (ա., Բ 535 ևն), *սիճիլ* «վճիռ, դատավճիռ» (ա., Բ 542 ևն), *տիւան* «ատյան» (պ., Բ 127), *եասախչի* «պահակ, ոստիկան» (թ., Բ 649),*շաթուր* «ականատես, վկա» (<պ., թ.< ա., 492), *նաւմօս* «օրենք, կարգ, կանոն» (հ., Բ 329), *հուքմ* «հրաման, վճիռ» (ա., պ., թ., 421, 539, 540, 657), *ֆաթվայ* // *ֆէթվա* «պատասխան, վճիռ, որոշում» (ա., թ., Բ 56, Բ 651), *էմր* // *յամր* «հրաման, օրենք, վճիռ» (ա., պ., թ., Բ 56, 316, 539 ևն) ևն:

3. Կրոն, նախապաշարմունք. *մուղրի* «մահմեդական կրոնավոր» (ա., պ., Բ 315), *ուլամայ* «իսլամական կրոնապետ» (Բ 315), *շէխ* «մուսուլմանների կրոնապետ՝ հոգևոր առաջնորդ» (ա., պ., Բ 574), *խամիամ* «կրոնավոր» (ա., Բ 535), *փեղամպար* «մարգարե» (պ., Բ 330), *քաշիշ* «քահանա, երեց» (պ., 126), *ֆրայ* «հոգևոր եղբայր» (ունիթորական միաբաններին տրված կոչում) (իտ., Բ 645), *մոնոզոն* «մենակյաց, աբեղա» (հ., 404, 598 ևն), *թաջալ* ած. «նեռ, հակաքրիստոս» (ա., պ., 367), *մէչիթ* «մզկիթ՝ մահմեդականների աղոթատեղ» (Բ 315 ևն), *նամազ* «մահմեդականների աղոթք» (պ., ա., Բ 315), *դին* «հավատք, կրոն» (պ., Բ 535) ևն:

4. Ռազմական գործ. Ուսումնասիրված հիշատակարանների գրության շրջանում տեղի են ունեցել պատերազմական գործողություններ, արշավանքներ, կամայականություններ, ուստի և դեպքերի նկարագրության բերումով գործածվել են զինվորական կոչում,պատերազմական իրավիճակ, սպանդ ու կողոպուտ նշանակող օտար բառեր: ***1. Զին-***

վոր, ***զինվորական կոչում.*** *ասքար* «զինվոր» (ա., թ., Բ 284), *զօրպայպաշի* «ապստամբության ղեկավար» (թ., Բ 522), *դուլ* «ծառա, զինվոր» (ա., պ., 134, 135, 147), *ասպահի* «ռազմիկ» (պ., Բ 137), *սարդար* «կուսակալ, զորավար» (պ., 264), *եաղի* «թշնամի, ապստամբ» (պ., թ., 134, 246), *ճէլալի // ճէլէլի* «խռովարար, ապստամբ» (թ., 246, 355), *պօլուկպաշի* «զորագլուխ, գնդապետ» (թ., Բ 151), *ենկիչարի* «օսմանյան բանակի քրիստոնյա ծագում ունեցող զինվոր» (ենիչերի, թ., Բ 137 ևն), *չավուշ*«զինվորական պաշտոնյա, ոստիկան» (թ., Բ 316 ևն), *դազի* «հավատի համար պայքարող (զինվոր)» (ա., պ., թ., Բ 522) ևն: ***2.Պատերազմ***, ***զինամթերք***, ***կամայականություն.*** *յիսար // խսար* (Բ 241) «պաշարում» (ա., 147, 290, 448), *սէֆէր* «պատերազմ» (ա., Բ 858), *թուֆանկ //թուբանկ //թուանկ* «հրացան» (պ., 126, 207, Բ 450), *նաղմ* «ական» (պ., Բ 614), *երախ* «սպառազինություն, ռազմ. հանդերձանք, զենք» (թ., 618), *թուփ // թուփ // թոբ* «թնդանոթ» (206, Բ 327, Բ 647), *խանչար* «դաշույն» (պ., 322), *դամ* «վիշտ, թախիծ» (ա., թ., պ., 735), *զարար* «վնաս, վթար» (ա., պ., 241 ևն), *սուրխա* «անիրավություն» (ա., Բ 327), թաղթան «ավար» (պ., 187, 648), *սուրկուն* «աքսոր, տարագրություն» (թ., 329), *զահմաթ* «նեղություն, դժվարություն» (ա., 304), *զուլում* «անիրավություն, անգթություն, զրկում» (թ. < ա., 44, 446), *փաթերակ* «փորձանք, աղետ, չարիք, դժբախտություն» (պիլ., պ., Բ649), *կաֆ* «սպառնալիք» (ա., Բ 329) ևն:

5. Ունեցվածք, սեփականություն և առևտուր:

1. Ունեցվածք. *ըռզակ //ռզակ* «ապրանք, ունեցվածք» (ա., 126, 618 ևն), *տիաթիկ* «կտակ» (հ., Բ 746), *տոլվաթ* «հարստություն, ունեցվածք» (ա.,25 ևն), *մալ* «հարստություն, ունեցվածք, կայք, ապրանք» (ա., պ., թ., 126, 367 ևն), *մութախ* «ապրանք, գույք» (ա., թ., 248), *խազինա // խազնա/յ/ // խզինայ* «գանձ, հարստություն» (ա., պ., 29, 43, 135, 441, Բ 241 ևն)ևն: ***2.Պաշար***, ***ուտելիք.*** *եմ* «ուտելիք, անասնակեր» (թ., 476),

զահրա // *զահերա* «պարեն, մթերք, մթերապաշար» (ա., թ., 194, Բ 230), *փիլաւ* «փլավ» (թ. < պ., Բ 814), *չօրպա* «ապուր, սուպ» (թ., Բ 10) ևն: ***3.Չափ,չափման միավոր,տուրք,հարկ.*** *քիլա* «ընդեղենի չափ» (պ., ա., թ., 143), *հոխկայ* «ծանրության չափ՝ հավասար 1 կգ. 225 գ.» (թ., 207), *աւթմանի* «թուրքական ոսկեդրամ» (133), *թանկա* «արծաթե դրամ» (չաղ., Բ 415), *խարաճ* «հարկ, տուրք» (ա., պ., 315, Բ 326 ևն), *սպէնճ* «հարկի տեսակ» (< պ., 315):

4. Վաճառական. *խոճայ* «վաճառական» (պ., Բ 24 ևն), *դազազ* «մետաքսագործ, մետաքսի առևտրական» (ա., թ., 248), *դասապ* «մսագործ, մսավաճառ» (ա., պ., թ., 27, 104), *պահարչի* «համեմունք վաճառող» (*պահար* «համեմունք», ա., թ., Բ 241), *սօֆչի* «ոչխարի բուրդ վաճառող» (թ., Բ 241): ***5.Շուկա, առևտրական հարաբերություններ.*** *նաղտ* «կանխիկ, առձեռն» (ա., պ., 197), *վերասիայ* «ապառիկ» (թ., Բ 318), *ըռէհին* «գրավական, գրավ» (պ., Բ 866), *հախ* «վարձ» (ա., պ., Բ 12), *պարաթ*«մուրհակ, պարտաթուղթ» (պ., Բ 565), *հիսապ* «հաշիվ» (ա., պ., թ., Բ 539 ևն), *միզան* «կշեռք» (ա., պ., թ., 125, 248), *պազաստան* «ծածկած մեծ շուկա» (թ. < պ., 125), *չարսու* «շուկա» (պ., թ., Բ 721), *բազար* (պ., Բ 721):

6. Արհեստ, արհեստավոր. *սանիաթքար* «արհեստավոր» (ա., պ., 248), *ուսթայ* «վարպետ» (թ., Բ 490 ևն), *սառաջ* «թամբագործ, համետագործ» (ա.., թ., Բ 486), *դարաղ* «կաշեգործ» (ա., Բ 811), *զէրպապչի* «կտավի վրա ոսկեթելերով գործող ոսկերիչ» (թ., Բ 241), *թարզի* // *թերզի* «դերձակ» (պ., թ., Բ 314, Բ 755 ևն), *նալբանդ* // *նալպանտ* «պայտար» (պ., 266, 495), *զառափխանչի* «փողերանոցի[7] վարպետ» (պ., թ., Բ 24), *խօյումչի* «ոսկերիչ» (թ., Բ 241), *դաւուխչի* «գլխարկ կարող» (թ., Բ 535), *չուխաչի* «նուրբ բրդե գործվածքի արհեստավոր»

[7]«Պետական հիմնարկ, որտեղ դրամ են կտրում՝ պատրաստում», տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե. , 1980:

(պ., թ., Բ 241), *քուրքչի* «մուշտակակար, մորթեգործ» (թ., Բ 352), *քուրքչիբաշի* «մուշտակակարների ղեկավար, պետ» (թ., Բ 535), *հալաճ* «բուրդ, բամբակ զզող արհեստավոր, զզրար» (ա., 315): Ըստ ՄՀԲ-ի՝ արաբերենում *halāj*-ը նշանակել է «բամբակ», իսկ *hallāj* «բամբակ զզող արհեստավոր», սակայն երկու իմաստով էլ հայերենում մեկ *լ*-ով է առկայացել բառը: Փոխառյալ բառերի կրկնակ բաղաձայնները հայերենում սովորաբար մեկի են վերածվել[8]:

7. Կտորեղեն, կաշի, գործվածքների տարբեր տեսակներ, հագուստ, կոշիկ. այս խմբի բառերի մեծ մասը տեղ է գտել մեկ-երկու հիշատակարաններում, որտեղ թվարկվում են կտորների, գործվածքների և հագուստի տեսակները, ինչպես մի ընդարձակ բանաստեղծական հիշատակագրության մեջ. «Ծախվէր բեռնով ապուրշումնի…Ղազազի բան ու դերձակի՝ եկթայ, թավթան, վալայ, շարի, չիվթայ, թավթայ պուրուն-ճուկնի, Մուղղատտամներ ւ այլ ղումաշնի» (248). կամ նկա-րագրվում է, թե տվյալ պաշտոնյան ինչպես էր հագնվում. «ինքն յագանէր բեհեզս և ծիրանիս, մախմուր և աթլազ, ներ-քևանց սամուր մորթի կամ վաշախ» (Բ 651): ***1. Կտորեղեն, գործվածք*, կաշի.** *կումաշ* // *ղումաշ* «կերպաս» (ա., 248, 618, Բ 242 ևն), *ղատիֆա* «թավիշ» (ա., թ., Բ 234), *աթլաս* «մետաքսյա նուրբ գործվածք՝ կտոր՝ զգեստ» (ա., Բ 241), *քեսայի* «ձևած կտոր» (թ., 248), *ապուրշում*) // *ապրշում* «մետաքս» (պ., 248, Բ 241), *վալայ* «մետաքսյա նուրբ գործվածք» (պ., 248), *քթան* «կտավ» (պ., 248), *շարի* «քող, շղարշ» (< պ., 248), *թավթան* // *թավթայ* «մետաքսե դիպակ, նրբադիպակ» (պ., 248), *թոբ* «կտորի մեծ կապոց» (թ., Բ 241), *կլապիտոն* «ոսկեզօծ կամ արծաթազօծ թել, կամ այդ թելով գործած երիզ» (թ., Բ 234), *պուրունճուկ* «թափանցիկ, նուրբ գործվածք, շղարշ, գազ» (թ., 248), *զարբաֆ* ա. «ոսկեթել, ոսկեհյուս, ոսկեկար» (պ., Բ 21

[8]Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, նշվ. աշխ., էջ 193:

ևն), *մախմուր* «թավիշ, թավշյա կտոր» (ա., Բ 651), *սախտիան* «սեկ (այծի կամ ոչխարի նուրբ կաշի)» (պ., 248), *քելիմ* «ջեջիմ, կարպետ» (ա., թ., պ., Բ 241), *խալի* «գորգ» (ա., թ., Բ 241), *սարտաւայ* «ուղտի բրդից պատրաստված թաղիք» (պ., Բ 241), *շուշպիէ* «սրբերի մասունքներ, խաչ կամ ավետարան փաթաթելու շոր» (աս., 52), *քեմուխք* «ողորկ բարակ կաշի» (պ., Բ 749), *քօսալա* «հատուկ եղանակով մշակված կաշի՝ մորթի» (թ., 494), *մեշին* «կոշիկի կաշի» (պ., Բ 459) ևն: ***2. Հագուստ,կոշիկ.*** *չուխա* «բրդե գործվածքից կարված՝ տղամարդու երկար փեշերով հագուստ» (պ., թ., 248), *խիլա* «պարգև, ընծա. իբրև նվեր տրվող զգեստ» (աս., 219, 570), *կապա* - «որ եկաւ կապէն կարեց գրագրին», «1.Հոգևորականի զգեստ, պարեզոտ, 2. Ընդհանրապես՝ կանանց երկար զգեստ» (ա., պ., Բ 51, Բ 415), *արախմին* «թասակ, գլխարկ» (պ., 248), *չարուխ* «տրեխ» (պ., թ., 618), *փարթալ* «հնամաշ հագուստներ, հնոտիք» (թ., Բ 388) և (80) ևն:

8. Գրչության արվեստին՝ գրին, գրագրությանը և գիտությանն առնչվող բառեր. *տիֆթար* «տետր, մատյան, գիրք» (ա., պ., Բ 673), *աղաւիտ* «աստղաբաշխական և ախտաբական նյութերի ժողովածու» (453), *ստուղլապ* «աստղաբաշխական գործիք» (թ. < հ., 436), *մաւհր* «կնիք, դրոշմ» (պ., Բ 235 ևն), *կաղամար* // *կաղանպար* «գրչի և մելանի տուփ» (հ., Բ 415, 422), *ճէնտէրէճի* «մամուլի, գիլարանի վրա աշխատող» (թ., 396), *պվետիկոս* «բանաստեղծ, վարպետ, ստեղծագործող» (հ., Բ 408) ևն:

Հիշատակարաններում, բնականաբար, տեղ են գտել նաև առտնին իրեր, երևույթներ, առօրյա փոխհարաբերություններ և տարբեր հատկանիշներ անվանող փոխառություններ, որոնք հատուկ են նշված ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին. *թապախ* «ափսե» (թ. < ա., Բ 318), *թափսի* «ափսե, սկուտեղ» (թ., 248), *դաւղայ* «աղմուկ-աղաղակ, կռիվ» (ա., 61), *տավի* // *դաւի*

«վեճ, պահանջ, հայց» (ա., 197, Բ 455), *իֆտիրա* «զրպարտություն, չարախոսություն» (թ. < ա., 229), *էղիլ* «արդար» (ա., 147, 632), *նաչար* «անճար, խեղճ, անզոր» (պ., Բ 122), *մուխաթարայ* «վտանգավոր» (արաբ., պարսկ., Բ 57), *դարայքէշ* «սև հոնքեր ունեցող, մրահոն» (թ., 134), *սախատ* «հաշմանդամ» (ա., թ., 427), *ույմիշ* «համապատասխան, նման» (< թ. uymak «համապատասխանել», 374, 375), *չպլախ* «մերկ» (թ., 126), *պաշխա* «ուրիշ» (թ., 315), *պեզամայ* «զարդարված» (< թ. bezemek «զարդարել, զուգել», 652), *սաղ սալիմ* «ողջ, առողջ, քաջառողջ» (թ., sağ, թ. salim < ա, Բ 272), *պէյլու* «հայտնի» (թ., Բ 540) ևն:

Կան նաև իմաստային այլ խմբերի պատկանող բառեր, որոնք սակավաթիվ են: Օրինակ, բժշկությանը վերաբերող մի քանի արաբական բառեր վկայվել են Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարանի հիշատակարանում՝ այսպիսի հանգամանքներում. «Ո՛վ ընթերցողք, յորժամ ընթեռնելով զցանկն, և զմարդակազմութիւն, և զճուարիշն, և սֆուֆներն, և զլուուխերն, և զհապերն, և զհուկնաներն, և զմաճուներն, և զպատրոյգներն, և զայլ ազգի ազգի արարողութիւն, զոր իմաստունքն առաջինքն և վերջինքն սահմանեալ են ի պէտս մարդկան: Յիշեցէք զսրբագրողն սորա զայս պատուական մինհաճիս զԱմիրտօլվաթն….» (Բ 596). *ճուարիշ* «մարսողական դեղ, խյուս», *սֆուֆ* «դեղափոշի», *հապ* «դեղահատ», *հուկնա* «կլիզմա», *մաճուն* «զանազան դեղերի բաղադրություն՝ պատրաստված մեղրով կամ շաքարով, դեղախյուս»:

Ներկայացված որոշ օրինակներ այսօր էլ մեր խոսակցական լեզվի անքակտելի մասն են կազմում, նույնիսկ մի քանիսը գործածվում են գրական հայերենում: Մի շարք փոխառություններ վկայվել են հնչյունական բազմազանությամբ[9]՝ պայմանավորված թե՛ հայերենին հատուկ հնչյունա-

[9]Նյութը չծանրաբեռնելու համար շատ քիչ բառեր ենք ներկայացրել տարբերակային ձևերով: Այդպիսի մի քանի օրինակի անդրա-

փոխական երևույթներով, թե՛ տարբեր տառադարձումներով և թե՛ միջնորդավորված փոխառություն լինելու դեպքում միջնորդ լեզվի հնչյունական ազդեցությամբ: Օրինակ, ըստ ՄՀԲ-ում տրված տառադարձության՝ պ.՝ *վազիր* (Բ 195), ա. և թ.՝ *վէզիր* (Բ 127), սակայն հիշատակարաններում արձանագրված է նաև *վազեր* (Բ 51) ձևով, ա. *հիսար* «պաշարում» (Բ 195), հիշատակարաններում նաև՝ *հսար* (Բ 571) // *հասար* (Բ 230) // *խսար* (Բ 570), նույնպես՝ *ֆաթվայ* (Բ 56) // *ֆէթվա* (Բ 651)՝ ըստ ՄՀԲ-ի՝ ա. fatua, թ. fetua «պատասխան, վճիռ, որոշում»: Իհարկե, առկա տարբերակային որոշ ձևեր էլ անգրագիտության, հետագա աղավաղումների և այլ պատճառներով են:

Որոշ փոխառյալ բառեր, հոմանիշ լինելով այլ փոխառյալ կամ բնիկ հայերեն բառերի, գործածվել են վերջիններիս հետ կողք կողքի. «*Հուքմ հրաման* ի թագաւորէն առեալ…» (Բ 329), *չարշու-պազար* (Բ 474), *չարսուբազար* (Բ 721), «*Զպազաստան* և *զչարշուներն* նախ թալանեցին» (125), «….զամէն առ այլազգիսն *ըռէիին* և *գրաւ* էին եդեալ….» (Բ 866), «ի *հալալ* և *յարդար* վաստակոցն» (586), «….*թալան* (թթ.) և *թաղթան* (պ.) արարին» (648), «Ձեր Աստուծոյ սիրուն համար *թամիզ* և *փաք* պահեցէք զսբ. գիրքս» (152)՝ *թամիզ* «մաքուր, ջինջ, անարատ» (պ.), *փաք* «մաքուր, անաղարտ կերպով» (պ., թ.), «….այսմ ժամանակիս վերըստին նորոգեաց ի վանքն Ս. Թումայի գեղեցիկ *կումբեթով* և *դուբայով* ….» (Բ 737). վերջին երկու օրինակները նույն ծագումն ունեն՝ հնչյունական որոշ փոփոխություններով: Ըստ բառարանային տվյալների՝ առաջինը հատուկ է պարսկերենին, երկրորդը՝ արաբերենին, այսինքն՝ տարբեր աղբյուրներից են:

դարձել ենք մեկ այլ հոդվածում. տե՛ս **Վ. Խաչատրյան**, *Բառային տարբերակներ հայերեն հիշատակարաններում* (17-րդ դարի առաջին կես), «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ», Ե., 2011, էջ 29-38:

Մի խումբ փոխառյալ բառեր մասնակցել են բառակազմությանը. մի հանգամանք, որը վկայում է նշյալների՝ ժողովրդախոսակցական լեզվի մեջ տարածվածության մասին:Մեծ թիվ են կազմում հատկապես բայակազմության դրսևորումները, ինչպես՝ ***համադրական բայեր՝*** *դալատիմ* «սխալվել» (Բ 55, Բ 563 ևն), *դալպել* «կեղծել» (ա., պ., Բ 358), *թամամել* (ա., Բ 414), *հաւասիմ* (ա., պ., թ., Բ 609), *խելաթել* «խալաթ տալ, որևէ զգեստ ընծայել՝ նվիրել մեկին, մեծարել» (*խալաթ* «իբր նվեր տրված թանկագին հագուստ», ա., պ., Բ 327), *մոհրել* «կնքել» (հուն., Բ 315, 535 ևն), *պարիշել* «հաշտվել» (Բ 327), *բարիշեցնել* «հաշտեցնել» (թ., Բ 535), *խշլայել* «ձմեռել» (631) ևն. ***հարադրական բայեր՝*** *թաղթան* առնել «կողոպտել» (187), *մանգուլ* անել «պաշտոնից հեռացնել, իշխանությունից զրկել» (թ., Բ 522), *դապուլ* անել «ընդունել, համաձայնել» (ա., պ., 304), *թամահութին առնել* // *թամահ անել* «ազահություն անել» (նույն տեքստում, պ., Բ 790) ևն: Որոշ դեպքերում փոխառյալ բառարմատից և՛ համադրական, և՛ հարադրական բայ է կազմվել. *մարամաթ առնել* (պ., 28) // *մարամաթել* (Բ 867) // *մարմաթել* (Բ 463) «նորոգել», *թալանել* (թթր., 247) // *թալան* առնել (179) ևն:

Այնուհետև, նկատվում են քիչ թվով վերջածանցավոր կազմություններ, ինչպես՝ *-արան՝ հաքիմարան* (ա., պ., թ., Բ 131) // *հէքիմարան* (Բ 566) // *հուքմարան* (3 անգամ, Բ 24) «բժշկարան», *-աւոր՝ տօլաթաւոր* (Բ 863) // *տոլվաթաւոր* (Բ 867) // *դալութաւոր* (68) «ունևոր», *մելան* «թանաք» բառից՝ *մելանաւոր* «հին ձեռագիր արտագրող՝ ընդօրինակող» (հ., Բ 338, Բ 643) ևն:

Վ.Հակոբյանը՝հիշատակարանների հրատարակիչը, հրատարակությունների վերջում ներկայացրել է օտար բառերի ցանկ՝ համապատասխան բացատրություններով: Սակայն, բացի նրանից, որ տասնյակ բառեր չեն ընդգրկվել այդ ցանկերում, ինչպես՝ *սիասաթ* «դիվանագիտություն, քաղաքակա-

նություն» (ա. պ., Բ 329), *տիաթիկ* «կտակ» (հ., Բ 746), *քեմուիք* «ողորկ բարակ կաշի» (պ., Բ 749) ևն, որոշ բացատրություններ, ըստ բառարանային տվյալների և բնագրի, սխալ են: Ի դեպ, Վ.Հակոբյանը նախքան բառացանկը ներկայացնելը նշել է, թե ինչ բառարաններից է օգտվել, և թե ովքեր են ճշտումներ ու լրացումներ կատարել: Այնուամենայնիվ, բոլոր դեպ-քերում հնարավոր են որոշ վրիպումներ:

Եկթա և *չիֆթա* (248) բառերը հիշատակարաններից մեկում գործածվել են իբրև որոշիչ «կտոր, գործվածք» նշանակող բառերին: Ըստ ՄՀԲ-ի՝ նշյալները պարսկերենից թուրքերենի միջոցով են անցել հայերենին, և առաջինը «մեկ հատ, ոչ երկտակ, ոչ կրկնակի ծավալով» իմաստն ունի, իսկ երկրորդը՝ «զույգ, երկտակ», բայց և Վ. Հակոբյանը բացատրում է «կտորի տեսակ»՝ հավանաբար ելնելով բնագրից: Նույնը թերևս կարելի է ասել հենց այդ հիշատակարանում առկա *մուղատտամ* բառի մասին, որը բառացանկում նույնպես «կտորի տեսակ» է ներկայացված, մինչդեռ ՄՀԲ-ն, վկայելով հենց այս գործածությունը, մեկնում է որպես «գերադասելի, նախընտրելի, առաջնակարգ» իմաստով ածական՝ փոխառյալ արաբերենից: Հետևելով կոնտեքստին («Մուղղատտամներ ւ այլ ղումաշնի»)՝կարելի է երկու հետևություն անել՝ կա՛մ նաև կտորի տեսակ է նշանակում, կա՛մ գործածվել է փոխանվանաբար՝ հատկանիշը առարկայի փոխարեն:

Մանագուլ բառը «տեսարան» է բացատրվել, մինչդեռ «կայան, օթևան, իջևան» է նշանակում (ա., պ., թ., 453). «Է *մանագուլի* պատկերն յԻզմիրու բերդի» (453):

Փայդա-ն «մշակ» է ենթադրվել, ամենայն հավանականությամբ, այն պատճառով, որ նախադասության մեջ հաջորդում է *բընայ* (ՀԼԲԲ՝ բնա, բաննա) «որմնադիր» բառին: Սակայն ՄՀԲ-ում բացատրված է «առանց թիկունքի երկար նստարան, իշոտնուկ»՝ նշվելով «թերևս թ. peyke», որը շատ հնարավոր է.

«և ինչ մարդ որ օգնական ելան՝ թէ՛ փայտ տըւին և թէ՛ բընայ և թէ՛ *փայդա* և թէ՛ ուտել տ*ը*ւին» (490):

Հայ միջնադարյան բժշկարաններն արտագրող գրիչները տվյալ աշխատության մասին հիշատակելիս այն ավելի հաճախ անվանում են *հէքիմարան* // *հաքիմարան*, սակավ դեպքերում՝ *բժշկարան*: Բազում օրինակների մեջ չի հանդիպել գոնե մեկ դեպք, որ տվյալ բառը գործածված լինի «հիվանդանոց, բուժարան» իմաստով, որ տրված է Վ. Հակոբյանի բառացանկում:

Անհասկանալի է նաև *պազաստան* //*պէզաստան*–ի «կերպասի արհեստանոց» բացատրությունը: Այն նշանակում է «ծածկած մեծ շուկա» (ՄՀԲ, թ. < պ.). «զպազաստան և զչարշուներն նախ թալանեցին և ապայ զամենեսեան հրով այրեցին» (125), «Կայր պէզաստան մինն գըմպեթի, Բազում խանութք ի յիւր միջի» և «Եւ պազաստան մ ' այլ Հըրէի Մէջն էր ղումաշ և չուխանի» (248):

Խիզան բառի «թշվառ, խեղճ, դժբախտ կին» բացատրությունը նույնպես սխալ է, և հավանական է ՄՀԲ-ի բացատրությունը՝ «ընտանիք, գերդաստան» (<վր. xizani). «գերեաց զազգս քրիստոնէից և խիզանն հայկական ազգին» - ՄՀԲ (332), չնայած որ Մ. Մուրադյանն էլ բացատրում է «պանդուխտ < վր. xizani»[10]:

Ցանկում *էսպապ* բառին կից նշված է «կարասիք, ապրանք, գործիք»: ՄՀԲ-ում *ասպապ* գլխաբառը բացատրված է «շոր, զգեստ, հագուստ»՝ թուրք. espap < արաբ. նշումով:
Ինչպես տառադարձումն է վկայում, հիշատակարանում վկայված տարբերակն ամբողջությամբ համապատասխանում է փոխատու լեզվի տվյալ միավորին. «…ոմանք զթաւանելու տներն ծախէին կես գին, այլք զխանութնին և զ*էս*-

[10]Տե՛ս **Մ. Մուրադյան**, *Բառագիտություն*, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Ե., 1972, էջ 296:

*պապ*նին առանց գնոջ, զհանդէրձս և զագանելիքն, կէսք զտան ինչքն և ապրանքն....» (Բ 653):

Բառացանկում *սովտայ* բառը բացատրված է «կրոնական պաշտոնյա» (ա., 432), իսկ *սօխթայ* // *սօղթայ*՝ «հոգևոր դպրոցի ուսանող» (պ., թ., 529, Բ 653), մինչդեռ դրանք նույն բառերն են՝ ըստ ԹՓԲ-ի[11]՝ *սօֆտա* «տաճիկ կրօնաւոր - պ. soxta, որ թ. եղած է softa», ՄՀԲ՝ *սօխտայ* «մահմեդական հոգևոր դպրոցի ուսանող»:

Մաթարիս-ը բացատրվել է «պատնեշ, պատվար, հողաբլուր», մինչդեռ, ըստ ՄՀԲ-ի, «փակ, նիգ (դռան)» իմաստն ունի. «*Մաթարիսներ* և մահալլի դռներ շինեցաք և յամէն գիշեր պահէաք» (պ., 125):

Մ. Մուրադյանը *մէնհաճ* (մինհաճ) բառը տալիս է արաբերենից փոխառված բառերի շարքում՝ «ծրագիր» բացատրությամբ[12], իսկ ՄՀԲ-ում բացատրված է «մայրուղի»՝ բերվելով հետևյալ միակ վկայությունը 15-րդ դարի հիշատակարանից, որը շատ համոզիչ է. «Ցանկ է գրոցս Ախրապատնին, որ առի ես՝ անպիտան և անարժան ծառայս՝ ի յարապ գրոց և ի *մինհաճի* տուքանէն»[13]: 17-րդ դ. Հիշատակարաններից մեկում էլ ստացել է հետևյալ գործածությունը. «Ցիշեցէք զսրբագրողն սորա զայս պատուական *մինհաճիս* զԱմիրտօլվաթն», «և դարձեալ սկսեցաք զայս պատուական բժշկական հէքիմարանս, որ *մինհաճ* ասեն», «յորժամ ընթեռնոյք զգովելի և զբժշկական *մինհաճ* գիրք»(ա.., պ. Բ 596), որը մասամբ համապատասխանում է Մ. Մուրադյանի «ծրագիր» բացատրությանը: Անգամ կարելի է ենթադրել, որ

---

[11] **Հ. Աճառեան**, *Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

[12] Նշվ. աշխ., էջ 269:

[13] Տե՛ս *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմ. **Լ. Խաչիկյան**, մասն Բ, Ե., 1958, էջ 115:

«մայրուղի» իմաստով բառը փոխաբերաբար է գործածվել՝ վերագրվելով բժշկարանին «ուղեցույց» իմաստով:

Հիշատակարաններում վկայված տասնյակ բառերի ծագումն ու իմաստն էլ առայժմ մնում են անհայտ: Մի հիշատակարանում կա *թալաւ*, որը, ինչպես և նման դեպքերի համար նշել է Վ. Հակոբյանը, բացատրություն չի գտել: Հաշվի առնելով *թալաբ* //*թալաւ* փոփոխակների հնարավորությունը՝ կարելի է այն բացատրել բառարաններում արձանագրված *թալաբ* բառով: Ընդ որում՝ ՀԼԲԲ-ում վերջինս տրված է այսպես՝ *թալաբ* անել «սպանել», *թալաբ* լինել «սպանվել, մեռնել», իսկ հիշատակարանում նույնպես *լինել* բայի հարադրությամբ է գործածվել, ուստի կարող ենք հասկանալ «սպանդ եղավ, կոտորած եղավ»՝ միայն թե կարծելով, որ տեքստից որոշ հատվածներ բացակայում են. «Լ /30/ ղուռուշ բեռ ավելի *թալաւ* էլ եղև ի մէջ սոցա» (Բ 522)[14]: Մյուս կողմից էլ կարելի է կապել ա. talab «պահանջ» բառի հետ:

Քննված փոխառյալ բառերը, համաձայն բառարանային տվյալների, գերակշիռ մասով տվյալ ժամանակաշրջանի համար եզակի վկայություններ են: Որոշ բառատարբերակներ արձանագրված չեն հայերեն բառարաններում, չնայած որ հաճախ ինչյունական տեսանկյունից ավելի են համապատասխանում փոխատու լեզվին կամ լեզուներից որևէ մեկին: Շատ օրինակներ եթե ոչ այդ շրջանում, ապա հետագայում լայնորեն կիրառվել և ամրակայվել են այս կամ այն բարբառում՝ արձանագրվելով ՀԼԲԲ-ում: Մի մասն էլ առանձնակի հարազատությամբ գործածվում է նաև առօրյա խոսակցական լեզվում: Անկասկած, վերհանված նյութը, առանձին օրինակների վերլուծությունը փոքրիկ, սակայն կարևոր ներդրում է հայոց լեզվի պատմության համար:

---

[14] Տվյալ հիշատակարանը շատ աղավաղված է. Վ. Հակբյանը որոշ բաներ վերականգնել է ըստ այլ աղբյուրների, որի մասին նշում է տողատակում (Բ 522):

Хачатрян Валентин - Заимствованные слова в колофонах рукописей 17-ого века (1601 - 1640 гг).- В статье исследуются заимствованные слова, которые употреблялись в рукописях памятников 1601-1640 гг. Дается смысловая классификация этих слов, а также аналитическая и лексикологическая работа по отношению к отдельным единицам.

Khachatryan Valentin – The borrowings in the 17-th century's (1601-1640) colophones of manuscripts.
In the article there are studied borrowings used in the hishataka rans of manuscripts from 1601 to 1640. The semantic classification of these words is given, and also analytical and lexicological work is done towards to the separate units.

Խաչատրյան Օֆելյա
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ՞, ԹԵ՞ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ

Վարդան պատմիչի՝ 1870թ. Երուսաղեմում լույս տեսած «Պատմութիւն թաթարաց» աշխատության և հեղինակի ով լինելու մասին կան տարակարծություններ: Ոմանց կարծիքով Վարդան պատմիչը Վարդան Արևելցին է, և սույն աշխատությունը պատկանում է վերջինիս գրչին, ոմանք էլ կարծում են, որ այդ երկը և Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը նույնն են, այսինքն՝ կասկածում են, որ Վարդան պատմիչ անունով անձնավորություն է գոյություն ունեցել:

Ներկայացնենք փաստեր՝ ճշմարտությունը բացահայտելու համար.

Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի տիտղոսաթերթի առաջին էջի վրա գրված է. «Նշխարք հայ մատենագրութեան, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց, 1870»[1]: Հաջորդ էջում՝ « Պատմութիւն թաթարաց ***Վարդանայ պատմիչի*** հանեալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ , ի տպարանի սրբոց Յակովբեանց, 1870»[2]: Նույն գրքի առաջաբանում կարդում ենք. «Առաջին հատոր նշխարացս Հայ մատենագրութեան փութամք 'ի լոյս ընծայել, որ պատմէ զծագմանէն **և զբարոյից և զպատերազմաց Թաթարաց**: Եւ գրեալ է *Վարդանայ պատմչի* յաշակերտացն Վանականայ Վարդա-

[1] *«Նշխարք հայ մատենագրութեան, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց»*, 1870:
[2] Նշվ. աշխ., էջ 2:

պետի 'ի ժգ դարու. 'ի 1247 և ընդօրինակեալ 1272. և օրինակն զոր ունիմք 'ի ձեռս, ձեռագիր է նորին **Գրիգորի երիցու Ականց անապատի 'ի Կիլիկիա:** Օրինակս չունի առանձին յիշատակարան զգրողէն. սակայն ի լուսանցս օրինակին ուրեք ուրեք տեսանի գրեալ նովին ձեռագրով. « Ողորմեա՛ տէր, Վարդանայ ծառայի քո»: Նա եւս կից է օրինակս Միխայելի Ասորւոյ կաթողիկոսի **ժամանակագրութեանն,** որ յայտնի թարգմանութիւն է ***նորին Վարդանայ*** 'ի յիշատակարանին ծանուցեալ: **Ե՛ւ լեզու , և՛ ընթացք պատմութեանն իսկ վկայեն զսա նորին լինել հեղինակութիւն:** Յորում 'ի պատմութեանս Թաթարաց պատմի և զՀայոց թագաւորութենէ, որով և մասն համարի պատմութեան Հայոց: Զոր 'ի գլուխս գլուխս բաժանեալ ըստ զանազանութեան պարագայիցն 'ի սմա պատմելոց, տամք ի տպագրութիւն»[3]: Փ. Անթապյանը իր՝ Վարդան Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ գրում է, որ Վարդան Արևելցին 1248թ. **Ասորի իշխող քահանայապետի աշխատակցությամբ** է թարգմանել Միխայել Ասորու «**Ժամանակագրութիւնը**»: Բնականաբար Վարդան պատմիչի մասին գրքում ոչ մի տեղեկություն չկա: Վարդան Արևելցու մասին մեծարանքի խոսքեր են արձանագրված իր ժամանակակիցների՝ Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Ակնեցու և այլոց կողմից[4]: Անթապյանը անդրադառնում է 18-րդ դարի 70-ական թթ. Վ. Արևելցու վերաբերյալ քննական-վերլուծական տարբեր կարծիքներին: Մ. Չամչյանը սխալմամբ նրա ծննդավայրը համարում է Կիլիկիայի Բարձրբերդը և շփոթում Վ. Արևելցուն Վ. Բարձրբերդեցու հետ, նաև նրան է վերագրում Վ. Այգեկցու առակները, իսկ **Դիմանջին հեղինակ**

---

[3] Նշվ. աշխ., էջ 3:

[4] **Փ.Փ.Անթապյան**, *Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը*, գիրք Ա, Ե., 1987, էջ 5:

է ճանաչում այլ ոմն Վարդանի , Վահրամի կամ Վարխանի, որոնք անհիմն են[5]:

Մեր կարծիքով այդ կասկածները անհիմն չեն: Մ. Չամչյանին հետևել են Մաղաքա Թեոփիլյանցը, Քերովբե Պատկանյանը, Գրիգոր Զարբհանալյանը, Է. Դյուլորիեն, Ժան Սեն Մարտենը և ուրիշներ: Վարդան Բարձրբերդեցու անունով էլ լույս են տեսել Վարդան Արևելցու « **Մեկնութիւն սաղմոսաց» և «Հավաքումն պատմութեան»** (**վերջինը տպագրված « Պատմութիւն տիեզերական**» վերնագրով) գործերը: Հետագա հետազոտողներ Ղ.Ալիշանի, Ն.Մառի, Ս.Ամատունու, Ն.Ակինյանի, Հ.Ոսկանյանի, Գ.Հովսեփյանի, Հ.Անասյանի ջանքերով ստեղծվում է որոշ հստակություն, սակայն դեռևս պարզաբանման խնդիրներ կան:

Պատմագիր-աշխարհագրագետ Վարդան Արևելցին իր «**Հավաքումն պատմութեան**» ստեղծագործության նյութերը քաղել է հատկապես 13-րդ դարի կեսերի ձեռագիր ընդօրինակողներից… որոնց քաղագրություն լինելը բացահայտ է[6]: Քանի որ երկու Վարդաններն էլ նույն դարաշրջանի հեղինակներ են, ուստի կատարելով ժամանակագրական, պատմական, լեզվական տարաբնույթ համեմատություններ՝ նկատել ենք հետևյալը.

1.Երկու հեղինակների նյութն էլ վերաբերում է մոնղոլ-թաթարների պատմությանը:

2.Ապրել են նույն ժամանակաշրջանում:

3.Երկուսի գործերում էլ կան նույն կամ հնչյունական որոշ տարբերություններով բառեր, սակայն կան և զգալի քանակով անձնանուններ ու տեղանուններ, և դրանցից ոչ մեկը չի կրկնվում մյուսի երկում:

4. Վարդան պատմիչի երկը կազմված է տիտղոսաթերթերից, առաջաբանից և տասնյոթ գլուխներից՝ համապատասխան

[5] Նշվ. աշխ., էջ 11:

[6] Նշվ. աշխ., էջ 39:

վերնագրերով, իսկ Արևելցունը՝ ութսունինը անվերնագիր գլուխներից:
5. Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը թաթարների ծագման, բարոյականության և պատերազմների մասին է, գրի է առնվել 1247-ին, իսկ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկը սկսվում է Բաբելոնյան աշտարակաշինությունից, Հայկի ու Բելի կռվից և հասնում մինչև հայոց կաթողիկոս Վ. Բարձրբերդեցու մահը (1267թ.):
6. Փ.Անթապյանը գրում է, որ **1248թ.** Միխայել Ասորու « **Ժամանակագրութիւնը**» Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ թարգմանել է Վ.Արևելցին, մինչդեռ « Պատմութիւն թաթարաց»-ում ասվում է, որ **1247**-ին վանական վարդապետի աշակերտներից **Վարդան պատմիչի** ձեռքով գրված «Պատմութիւն թաթարաց»-ին կից է Միխայել Ասորի կաթողիկոսի **«Ժամանակագրությունը»,** և հիշատակարանում արձանագրված, որ **այն նույն Վարդանի հայտնի թարգմանությունն է:**[7] **Այստեղ ակներև է և՛ հրատարակման տարեթվերի, և՛ թարգմանիչների** տարբերությունը:
7. Փ. Անթապյանի՝ Վ. Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ արձանագրված հեղինակի բազմաբնույթ ու բազմապիսի վերնագրերի կողքին մեզ չի հանդիպում «Պատմութիւն թաթարաց» խորագրով աշխատանք:
8. Համեմատելով երկու հեղինակների գործածած հատուկ անունների ցանկերը՝ պարզել ենք, որ հիսունչորս անձնանուն և երեսունմեկ տեղանուն Վ. Արևելցու ցանկում չկան: Այդպիսի անձնանուններ են՝ Ադամ, Ամիր Քուրդ, Աթաբակ, Այթանա, Այլթանա խաթուն և այլն, տեղանուններ են՝ Աբլաստ (ի մէջ Աբլստին), Աթլ (գետ), Ալտաղ, Ախշարք, Աղի ծով, Անուանք, Արեւելք, Բենալ և այլն: Իսկ Նետողաց ազգ, Յեսաւ, Յիսուս Քրիստոս, Հագար, Կենդուրա, Իմրան, Եդոմայեցիք, Տա-

[7] *Պատմութիւն թաթարաց,* Երուսաղէմ, 1870, էջ 8:

թար, Գովգ և այլ հատուկ անունները կան երկու հեղինակների երկերում էլ[8]:

9.Վարդան պատմիչի երկը բաղկացած է 76 էջից, 17 գլուխներից՝ առանձին վերնագրերով, մինչդեռ Վարդան Արևելցունը՝ 184 էջից՝ մեկ ընդհանուր «Հաւաքումն պատմութեան» խորագրով, 18 ենթագլխից՝ առանց վերնագրերի: Որոշակի հատվածներ համադրելու և շարադրանքի նմանությունն ու տարբերությունը ճշտելու համար ընտրել ենք հատուկ անուններ և գտել նույն ժամանակաշրջանի և նույն պատմական անձանց նվիրված տողեր, պարզել, որ գործ ունենք միանգամայն այլ բովանդակության և լեզվական տարբեր շարադրանքների հետ: Օրինակ՝ **Փնտուիտար** անձնանվան դիմաց Վ.Արևելցու երկում կարդում ենք նրա չարագործությունների [9], իսկ Վ. Պատմիչի երկում՝ նույն անձի բարության մասին[10]: Նույնը կարելի է արձանագրել Սմբատ սպարապետի և 663թ. պատմական դեպքերի մասին, օրինակները շատ են:

Համադրելով երկու հեղինակների շարադրանքները՝ համոզվում ենք, որ նրանք տարբեր անձինք են:

Ինչ վերաբերում է Հեթում պատմիչին, հայտնի է, որ 1294-1305թթ. եղել է հայոց սպարապետ, 1305-ին մեկնել Կիպրոս, ընդունել լատինադավանություն: 1307-ին Կղեմոս 5-րդ պապի հանձնարարությամբ գրել է թաթար-մոնղոլների պատմությունը: Թեև նրա երկը նույն խորագիրն ունի, սակայն գրել է միանգամայն այլ հանգամանքներում: 1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար՝ նրան կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հա-

---

[8] **Վարդան պատմիչ**, *Համաբարբառ*, Ե., 1979, էջ 553-579:

[9] *Վ. Արևելցի*, նշվ. աշխ. , գլուխ 99, էջ 162:

[10] **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ 62: Վ. Արևելցի, նշվ. աշխ. էջ162:

յաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետություն-ների 1096-1307 թթ. շրջանի պատմությունից[11]:

Անդրադառնալով Վարդան Արևելցու և Վարդան պատմիչի գործերում նկատվող քերականական երևույթներին՝ ասենք, որ.

1. Երկուսի գործերում էլ հոգնակի թվի **ք** հոլովակազմիչով ձևերը շատ են **/այք, եայք, իք, ինք, ոյք, ունք**/, բայց **ան, անի, եան, եար, եր, իկ, ական, նեար, որայ , որեայ, տի, ուտի, ուի, արան** հավաքական հոգնակերտներով օրինակներ գրեթե չկան: Կրկնակի **որեայ+ք, եան+ք** հոգնակերտներով մեկ-երկու օրինակ հանդիպում է երկու հեղինակների երկերում էլ: Վարդան պատմիչի երկում գործածվել են հետգրաբարյան շրջանին բնորոշ **եր** հոգնակերտով ձևեր,իսկ Վարդան Արևել-ցու երկերում՝ ոչ, օրինակ՝ «Իսկ եթէ զի՛նչ նմանութիւն ունէր առաջին Տաթարն, ասասցուք և զայն ևս: Զի ոչ էին իբրև զմարդ առաջինքն, որ եկին ի վերին երկիրն. այլ էին ահա-գինք տեսողաց և անպատմելիք. զի գլուխն մեծ էր իբրև զզո-միշու, աչքերն նեղ՝ **իբրև** զձագու, քիթն կարճ՝ **իբրև** զկատուի. դունչն՝ մռունջ **իբրև** զշան, մէջքն՝ բարակ **զինչ** մրջման. ոտներն՝ կարճ **զերթ** խոզի. մորուս բնաւ իսկ չունէին. տաւ-լաթ (հզորություն) ունէին զառիւծու. ձայնն ճչող **զերդ** արծուի. ուր չպատմէր, անդ գտանէր»[12]: Բերված հատվածը հետաքրքրական է նաև նրանով, որ բացի –**եր** հոգնակերտ մասնիկից՝ հեղինակը զուգահեռաբար գործածել է **իբրև**-ին համարժեք **զերդ, զերթ և զինչ** նախադրությունները, որոնք ոճական արժեք ունեն, **բերդերացն** բառաձևի մեջ առկա են հետգրաբարյան հոգնակերտ **եր** մասնիկը և գրաբարյան **աց** հոլովակազմիչը: **Զինչ**-ն էլ բնորոշ է միջին հայերենին: Ինչ-պես երևում է , բերված հատվածում նույն բառում առկա են հետգրաբարյան շրջանին բնորոշ հոգնակերտ **եր** մասնիկը և

[11] *Հայկական սովետական հանրագիտարան*, հ.6, Ե., 1980:

[12] **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ, էջ 15, 16:

գրաբարյան **աց** հոլովակազմիչը[13] « …և եդեալ ի վերայ բերդ**ե-ր**ա**ց**ն հիսար (պաշարող) անհամար հեծելովք. և առին զառաջինն զՇամքաւր հուպ առ Գանձակ. որ յառաջ առեալ էին» [14]: **Ղան** հատուկ անվան **եր** հոգնակերտով կիրառությանը զուգահեռ առկա է նաև **աց** հոլովակազմիչով տարբերակը, օրինակ՝ «…մինչ զի վասն կարի քաջութեանն Ղան**եր**ն ոսկի սիւն անուանեցին զնա յետ բազում յաղթութեանց և պատերազմացն»[15]: Մի այլ հատվածում հանդիպում ենք նույն բառի *աց*-ով տարբերակի՝ «Եւթն որդիք եւթն Ղան**աց**»[16]:

2. Թեև նշված հեղինակները հանդես են եկել 13-րդ դարում, վերոնշյալ օրինակներից երևում է, որ Վարդան պատմիչի գործում դրսևորվում են նախորդ երկու ենթաշրջանների համեմատ թվի քերականական կարգի բացահայտ տարբերություններ, սակայն այդպիսի կիրառություն չի հանդիպում Վարդան Արևելցու գործերում: «Պատմութիւն թաթարացի» վերոբերյալ հատվածում նկատելի է նաև ոճական կիրառության դրսևորում՝ պեսպիսություն, ուր **իբրև, զինչ, զերդ, զերթ** բառերն ունեն և՛ ձևաբանական, և՛ իմաստային միևնույն արժեքը: «…և տեղի բանակին այլ ոչինչ գտին. բայց միայն **զվրաննին** բազում ռոճկօք լցեալ»: Բերված նախադասության մեջ նշված գոյականը գրաբարին հատուկ չէ, ունի միջինհայերենյան բարբառային կիրառություն[17]:

3.**Դղեակ** գոյականը միևնույն տեքստում նույն թվով ու հոլովով գործածվում է և՛ **դղեակ**, և՛ **դղեկ** ձևերով, այսինքն՝

---

[13] **Վ. Պատմիչ**, նշվ. աշխ., էջ 16:

[14] **Վ. Պատմիչ**, նշվ. աշխ., ՆՀԲ-ում այս բառը չկա, բայց կա **հիսարել.** «Որ և խսարել. Բառ ռմկ. Որպես Պաշարել պատնշաւ: Ոսկիփոր»: «Պատմութիւն թաթարաց», նույն տեղը:

[15] Նշվ. աշխ., էջ 31, 34:

[16] Նշվ. աշխ., գլուխ Ժ, էջ 34:

[17] Նշվ. աշխ., գլուխ Զ, էջ 25:

տեղի է ունենում **եա** երկբարբառի հնչյունափոխություն[18]: Օրինակ՝ «…առին զՍագամ, զՔարհերձ, զՏերեւեն. Զմեծ **դղեկն** թագաւորանիստ… Առին և գործով զամուր **դղեակն** զՏաւուշ, որ էր աթոռ Սուլտանի»[19]:

4. Վարդան պատմիչի երկում հանդիպում է **Բանիազնաց** բայը, որ ՆՀԲ-ում արձանագրված չէ, բայց կա **բանազնաց լինել**[20]. « Եւ ապա ելեալ Չաւրմանն վկայիւ **բանիազնաց** առ մեծ գլխաւորն իւրեանց Չանկըզ Ղանն և պատմեաց զամենայն խորհեալսն զիւրն և զերկուց գլխաւորացն…»[21]: Այսպիսի բառերի մի մեծ խումբ (մոտ 100 բառ), որ ՆՀԲ-ում վկայված չէ, հավանաբար հեղինակի անհատական բառակերտումներից է, արձանագրված է « Պատմութիւն թաթարաց» երկում[22]: Այստեղ նկատելի են հնչյունական մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ երևույթին, բարբառային-խոսակցական ծագում ունեն, օրինակ՝ձայնեղների խլացում. բախտաւոր-**պախտախաւոր** (28), Բաղդադ-**Պաղտատ** (39), Սմբատ-**Սմպատ** (27), Մահմեդ-**Մահմետ** (40), շնչեղ խուլերի խլացում՝ Թաթար-**Տաթար** (26), Սուլթան-**Սուլտան** (25), խուլերի ձայնեղացում՝ խորամնկ-**խորամանգ** (26), երկբարբառի պարզեցում՝ աներկիւղաբար-**աներկեղաբար** (21), դղեակ-**դղեկ** (16), վերջինը բարբառային կիրառություն է[23], **ի>ե** փոփոխու-

---

[18] **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ16:

[19] Նշվ. աշխ. էջ 16

[20] Տե՛ս ՆՀԲ, հ. 1 էջ 433, «Բանազնաց լինել. պատգամաւորք, կամ միջնորդք խօսել»:

[21] Նշվ. աշխ., էջ 19:

[22] Օրինակ՝ *անասախ, իառլախ, սղամիշ, տզղու* և այլն, Տե՛ս **Ա. Մուրադյան, Օ.Խաչատրյան**, *Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի նորաբանությունները,* միջազգային գիտաժողով նվիրված ՀՀ ԳԱԱ 70 ամյակին, Ե., 2014, էջ 228:

[23] Դղեակ, դղեկի, դղեկաց, գ. գրի և իբր ռմկ. դղեկ. բերդ, ամրոց, ամուր. տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 636:

թյուն՝ պիղծ-պեղծ (9,37,69): Նշյալ աշխատության մեջ **վ** հնչյունը արտահայտված է **ու, ւ, վ** գրանշաններով՝ **պատուական-պատական** (22), **թուով-թով** (38), մի օրինակում **ու** երկբարբառի հնչյունափոխություն կատարված չէ, օրինակ՝ **Հեթմաւ-Հեթումաւ** (31), իսկ մի այլ բառում **ի** ձայնավորը ոչ թե հնչյունափոխվել է ւ-ի, այլ սղվել է, ինչպես՝ **Ասորւոց-Ասորոց** (44): **Կոստանդին** հատուկ անվան դիմաց հանդիպում ենք **ա-ը, ու-ա** ձայնավորների փոխարկման, ինչպես՝ **Կոստանդին-Կոստընդին** (31) **և Հուլաւու Ղան-Հալաւու ղան** (18) անվան դիմաց:

5. Հեղինակը բերում է մի հատված, որում ներկայացնում է Վրաստանի թագավորի որդուն՝Դավթին: Ներկայացված հատվածը ոճական առումով ունի գեղարվեստական բարձր արժեք. «Եւ էր Դաւիթ որդի թագաւորին Վրաց երկայն հասակաւ և կորովի, գեղեցիկ պատկերաւ և թուխ մօրուօք. լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ: Եւ ապա հանեալ ի բանտէն, ազուցին նմա հանդերձս պատուականս…և առին հրաման ի մեծ Ղանէն, բերին նստուցին զԴաւիթ յաթոռ հօրն իւրոյ ի Տփխիս: Եւ իշխանքն Վրաց յոյժ ուրախացեալ անուանեցին զնա **Վարհամուլ** թագաւոր. այսինքն **Վարհամ Էդիր** թագաւոր»: Ինչպես երևում է բնագրից, հեղինակը տալիս է նաև բառիմաստի բացատրություն (Նշված անձնանունները Վարդան Արևելցու հատուկ անունների ցանկում չկան): Ահա ևս մեկ այլ օրինակ՝ «Եւ երթեալ ըստ յաջողելոյն Աստուծոյն ետես զՍային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր և բարեսէր: Վասն այնորիկ ազն իւրեանց անուանեցին զնա Սային Ղան. որ է ըստ լեզուին իւրեանց աղէկ և լաւ Ղան»:

Ոճական առումով բերենք հայ ժողովրդի ողբերգական վիճակը արտահայտող ևս մի հատված. «Եւ արդ՝ զո՛ր աղէտ և զպատահումն ժամանակիս գրեցից. զբաժանու՞մն հարց և մարց ի յորդւոցն, թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն. զիւրեանց սեպհական ընչիցն առ-

նու՞մն, թէ զգեղեցիկ ապարանացն ի հրոյ ծախումն. զման-կտոյն ի գիրկս մարցն զենու՞մն, թէ զգեղեցիկ և զփափկա-սնունդ երիտասարդաց և զկուսից բոկ և մերկ գերումն»: Սույն հատվածում հանդիպում ենք ճարտասանական հարցի:

6. Վարդան Արևելցու երկում հաճախ են հանդիպում անց-յալ դերբայի կողքին սեռական հոլովով ենթակայի դեպքեր, որը հատուկ է գրաբարին, իսկ Վարդան պատմիչի երկում՝ ոչ: Օրինակ՝ «Յորում աւուրս **նշկահեալ** /մերժել, անարգել, արհամարհել/ **Արշակայ** զՎաղենտիանոս կայսր, և **նորա բարկացեալ** սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր ի պատանդի: Եւ **գնացեալ** մեծին **Ներսիսի**, պատուի ի կայսե-րէ»[24]: « Իսկ **Արշակայ սպանեալ** զԳնել եղբորորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, և ինքն գնայ ի Յոյնս»[25]:

Այսպիսով, մեր կարծիքով Վարդան Արևելցին ու Վար-դան պատմիչը անկասկած երկու տարբեր անհատականու-թյուններ են. ունեն միանգամայն տարբեր գործեր՝ պայմա-նավորված հրատարակման տարեթվերի, երկերի բովանդա-կության, նրանցում կիրառված նորակազմությունների, անձ-նանունների ու տեղանունների զգալի մասի տարբերություն-ների, հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և ոճա-կան կիրառությունների անհամատեղելիությամբ:

Kachatryan Ofelya - About Vardan patmich's personality and his «Patmutyun Tatarats» work.– In the sphere of science are circulating two different mutually exclusive opinin-ons:
Vardan patmich ,or Vardan Areveltsi? «The Patmutyun Tatarats» of Vardan patmich and the «Havagumn Patmutyun» of Vardan Are-

[24] **Վարան Արևելցի**, *Հաւաքումն պատմութեան*, Վենետիկ, 1862, էջ 47:
[25] Նշվ. աշխ. էջ 48:

veltsi is the same work.The comparative study clarifies that it is wrong to identify Vardan Areveltsi and Vardan patmich or the Patmutyun Tatarats of Hetum patmich with Vardan's same work.

Хачатрян Офелия - О личности Вардана патмича и его «Патмутн татарац» - сравнителъное исследование выявляет что «Патмутюн татарац» написал Вардан патмич Вардана патмич и Вардана Аревелци – разные автори с различными языковыми особенностями «Патмутян татарац» Гетума патмича и «Патмутюн татарац» Вардана патмича однозначно написаны в различных обстоятелъствах и отождествление как авторов так и их произведений ошибочно.

Կատվալյան Վիկտոր
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ[1]

Արդի հայերենի գործառությունը ըստ հնարավորին ամբողջականորեն ուսումնասիրելու և նկարագրելու համար, կարծում ենք, մեծ կարևորություն ունի գրական ու խոսակցական լեզուներից բացի՝ նաև բարբառային լեզվի հանգամանալի դիտարկումը: Ընդ որում՝ բարբառային հայերենի արդի դրսևորումների հետազոտությունը երևան է հանում ինչպես երկրի տարբեր տարածաշրջանների ու բնակավայրերի բարբառային պատկերը, բարբառային զուգաբանությունների տարածագործառական բնութագրերը, այնպես էլ բարբառային լեզվի զարգացման արդի միտումները, առանձին դեպքերում՝ դեռևս ուշադրության չարժանացած բարբառային հատկանիշներ ու բարբառային միավորների յուրահատուկ դրսևորումներ:

Խնդիրն ավելի է կարևորվում, եթե նկատի ունենանք, որ հայության պարբերական տեղաշարժերը խախտել են բարբառային միավորների ու հատկանիշների բնական սահմանները[2], փոխվել են եղեռնից փրկված բարբառների տա-

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 15T-6B101 «Կոտայքի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

[2] Տե՛ս նաև **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, 1972, էջ 13:

բածման շրջանները, բարբառային հայրենազրկված միավորները հայտնվել են լեզվական նոր միջավայրերում, շատ դեպքերում միևնույն բնակավայրում զուգորդվել են տարբեր բարբառային միավորներ, կամ զանազան բարբառների կրողներ մեկտեղվել են նույն բնակավայրում, նույն բարբառային միավորը սկսել է դրսևորվել տարբեր տարածաշրջաններում և այլն: Ցավոք, վերջին շրջանի իրադարձությունները՝ Արցախյան պատերազմն ու Մերձավոր Արևելքի հակամարտությունները, պատճառ դարձան հայության զանգվածների հարկադիր նոր տեղաշարժերի:

Փաստորեն, տասնամյակների ընթացքում ձևավորվել է բարբառային բազմազան ու խառը մի վիճակ, որի հետազոտությունը, հայ բարբառագիտության կարևորագույն խնդիրներից լինելով, մեծ նշանակություն ունի նաև հայոց լեզվի արդի գործառության վերաբերյալ լիարժեք պատկերացում ունենալու առումով: Ինչպես նկատվել է, Հայաստանում «անհամեմատ շատ են այն շրջանները, որոնց համար բնորոշը բազմաբարբառայնությունն ու բազմախոսվածքայնությունն է: Այդպիսի շրջաններում մեկից ավելի բարբառների, տարբեր բարբառների զանազան խոսվածքների ներկայացուցիչներ են բնակվում: Այս խմբի մեջ են մտնում Սպիտակի, Աշտարակի, Վարդենիսի, Էջմիածնի, Աբովյանի, Հրազդանի և այլ շրջաններ»[3]: Ասվածը հատկապես բնութագրական է Աբովյանի նախկին շրջանն ընդգրկող տարածքի համար[4]:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ ներկայացնում ենք բարբառային հայերենի ներկայիս ընդհանուր պատկերը ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում[5]: Այստեղ

---

[3] **Ս.Բաղդասարյան-Թափալցյան**, *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Եր., 1973, էջ 8:

[4] Նույն տեղում:

[5] Ի դեպ, Հայաստանի որոշ տարածաշրջանների վերաբերյալ կատարվել են տարբեր ծավալ ու ընդգրկում ունեցող այս կարգի մի

գտնվող բոլոր բնակավայրերում բարբառային խոսքի տեսաձայնագրություններ ու գրանցումներ կատարել ենք 2016-2017 թթ.[6]: Միաժամանակ, ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք ինչպես ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների կողմից «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» կատարված գրանցումներից, այնպես էլ հրապարակված բարբառագիտական աշխատանքներից:

Աբովյանի տարածաշրջանի ներկայիս բնակիչների նախնիները դեռևս 1604-1605 թթ. Շահ Աբասի կողմից հայաթափված այս վայրերում հաստատվել են 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից սկսած (1826-1828թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո)՝ գաղթելով հիմնականում Պարսկահայքից, Բայազետից, Մուշից, Ալաշկերտից, նաև Վանից, Վասպուրականի այլ շրջաններից: Գաղթականության հաջորդ ալիքը (հիմնականում Վանից, Մուշից, Ալաշկերտից, Էրզրումից, Սասունից) այստեղ է հասել եղեռնի տարիներին՝ 1915 թվից սկսած: Այնուհետև տարբեր բնակավայրերում բնակչության կազմի փոփոխություն են առաջ բերել ներքին տեղաշարժերը, Ջավախքից, Սպահանից, Արցախի հարակից տարածքնե-

---

շարք աշխատանքներ, ինչպիսիք են՝ **Կ.Դավթյան**, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Եր., 1966, 504 էջ, **Ս.Բաղդասարյան-Թափալցյան**, *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Եր., 1973, 356 էջ. **Հ.Մեսրոպյան**, *Արագածոտնի մարզի բարբառային ընդհանուր պատկերը*, «Էջմիածին», Զ, 2005, էջ 108-117 և այլն:

[6] Այդ աշխատանքները «Կոտայքի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում կատարել ենք ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Ժ.Միքայելյանի, Հ.Խաչատրյանի և Գ. Մկրտչյանի հետ:

րից ու այլ վայրերից ևս տեղի է ունեցել հայության որոշ ներհոսք: Փաստորեն, շրջանի բնակիչները հիմնականում ներգաղթյալների սերունդներ են: Թերևս տեղաբնիկներ են Առինջ, Զրվեժ և նախկին Էլար գյուղերի բնակիչների մի մասի նախնիները[7]: Ընդհանուր առմամբ՝ Աբովյանի տարածաշրջանի մոտ երեք տասնյակ բնակավայրերը (բացառությամբ տեղաբնիկներով բնակեցվածների), ըստ բնակիչների նախնիների ծագման, ներկայացնում են հետևյալ պատկերը.

1. Պարսկահայքից եկածների սերունդներով բնակեցված բնակավայրեր. Ակունք, Արամուս, Բալահովիտ, Գառնի, Կամարիս, Մայակովսկի, Նոր գյուղ, Զովք, Զորաղբյուր, Զրվեժ, Պտղնի.

2. Վան-Վասպուրականից եկածների սերունդներով բնակեցված բնակավայրեր. Գեղադիր, Գեղարդ, Զառ.

3. Մուշից և Ալաշկերտից եկածների սերունդներով բնակեցված բնակավայրեր. Գեղաշեն, Կապուտան, Սևաբերդ.

4. Բայազետից եկածների սերունդներով բնակեցված բնակավայրեր. Գողթ, Կոտայք, Հատիս.

5. Տարբեր վայրերից գաղթածների սերունդներով բնակեցված բնակավայրեր[8]. Աբովյան (Իրան, հարևան այլ երկրներ, Հայաստանի տարբեր շրջաններ), Զովաշեն (Վան, Մուշ, Սասուն), Վերին Պտղնի (Գեղամավան, Սարանիստ գյուղեր), Հացավան, Նուռնուս, Ողջաբերդ:

Նկատելի է, որ տարածաշրջանում ավելի շատ են Պարսկահայքից գաղթածների սերունդներով բնակեցված

---

[7] Տե՛ս նաև **Ռ.Մարկոսյան**, *Արարատյան բարբառը*, Ե., 1989, էջ 39, 41-43:

[8] Իհարկե, բոլոր բնակավայրերում էլ բնակչությունը, ըստ նախնիների ծագման, ամբողջովին միատարր չէ, սակայն այս խմբում ընդգրկված բնակավայրերի դեպքում գաղթականության որևէ հատված չի նշվել իբրև բնակչության հիմնական զանգված:

բնակավայրերը: Ընդ որում՝ ներգաղթյալները հիմնականում եկել են Խոյից, Սալմաստից և Մակուից: Այս բնակավայրերի խոսվածքները որոշ դեպքերում ներկայացնում են Խոյի բարբառը, այլ դեպքերում հարում են այդ բարբառին, կան դեպքեր էլ, երբ պահպանել են բարբառի որոշ հատկանիշներ միայն: Կան նաև Մակուի խոսվածքի դրսևորումներ:

Խոյի բարբառին առավել հարազատ են Արամուս, Մայակովսկի, Զորաղբյուր գյուղերի խոսվածքները՝ ունենալով բարբառին հատուկ հնչյունաքերականական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ա) բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց՝ խուլեր, բ) քմայնացած հետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում, գ) հետնալեզվային պայթականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (կ,ք,գ,նք,նգ > յ), դ) կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում, ե) հավելական շնչի առկայություն բառասկզբում, զ) հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ*, է) *ռ*, մասամբ նաև *և* երկբարբառային հնչյուններ, ը) քմայնացած *ա*, թ) *է*-ով բացառական, ժ) դերանունների թեք հոլովաձևերում *ի*-ի առկայություն, ժա) ցուցական դերանունների թեք ձևերում *տ/դ*-ի հավելում, ժբ) դերանվան յուրահատուկ ձևեր (վ°վ, ըտ°, տ°րը, ըտ°րը, ընդ°նք, դ°ր, դ°նք), ժգ) ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակում, ժդ) *լիս* - ով ներկա, ժե) *իր* վերջավորությամբ վաղակատար, ժզ) հիմնականում *ած*-ով հարակատար, ժէ) բաղադրյալ անցյալ ձևերում անցյալ ցույց տվող բառ-մասնիկի առկայություն, ժը) անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի *մ* - ով ձև, ժթ) օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքում՝ *ի*, և այլն[9]: Բարբառային այս երեք միավորները հանդես են բերում խոսվածքային տարբերու-

[9] Խոյի բարբառի և նրա հատկանիշների մասին տե՛ս նաև **Մ.Ասատրյան**, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, 256 էջ, **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, 346 էջ:

թյուններ Խոյի բարբառի շրջանակներում: Այսպես, եթե Արամուսի խոսվածքում ներկան և անցյալ անկատարը կազմվում են *լ*-ով ավարտվող դերբայական ձևով՝ *սիրէլ էմ, ասէլ էր*, ապա Զորաղբյուրի և Մայակովսկիի խոսվածքներում՝ *ս*-ով դերբայական ձևով՝ *իկ՝ս էնք, պէրէս էր*: Զորաղբյուրի խոսվածքում *պիտի* եղանակիչի դիմաց առկա է *կըտի* ձևը՝ *կըտի կ՝ոթաս էր*, անձնական դերանունները ունեն տրականի զուգահեռ ձևեր՝ *իմը / ընձի*, *ք՝ոնը / ք՝էզի*: Արամուսի խոսվածքը դրսևորվում է նաև Զովք գյուղ տեղափոխված արամուսցիների խոսքում:

Խոյի բարբառին հարող խառը խոսվածքներ են գործածվում Նոր գյուղ և Կամարիս բնակավայրերում: Նոր գյուղի խոսվածքում Խոյի բարբառին հատուկ հատկանիշներ են բառասկզբում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի գործածությունը, քմայնացած հետնալեզվայինների առկայությունը, շատ դեպքերում *հ*-ի դիմաց *խ*-ի գործառությունը, *իր*-ով վաղակատարը, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ*-ի առկայությունը, *լ*-ով ներկան (էթալ եմ, կ՝ալ եմ), դերանվանական որոշ ձևեր (ըտ՞նց, ընդ՞րէն) և այլն: Թերևս Բայազետի բարբառի ազդեցություն են ներկայացնում հետևյալ իրողությունները. բառասկզբում նաև շնչեղ ձայնեղների գործածություն, երկբարբառային *է,ո* հնչյունների լայն կիրառություն, շրթնայնացած *ա* հնչյունի որոշ դրսևորում, օժանդակ բայի անցյալի ձևերի գործածություն՝ *է*-ի սղումով (ի, իր, ինք) և այլն: Արարատյան բարբառի ազդեցության մասին են վկայում հինհայերենյան *հ*-ի դիմաց նաև *հ*-ի գործածությունը, *ըմ*-ով ներկայի ավելի հաճախական կիրառությունը և այլն:

Կամարիսի խոսվածքում Խոյի բարբառի հատկանիշներից են բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը, հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունը, հետնալեզվայինների քմայնացումը, դիրքի բերումով՝ հետ-

նալեզվային պայթականների վերածումը *յ*-ի, քմայնացած *ա*-ի առկայությունը, *իր*-ով վաղակատարը, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ*-ի առկայությունը, օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքում *ի*-ի գործածությունը, *ած*-ով հարակատարը, *գալ* բայի ձևերը (իկ՝մ, իկ՝ն), դերանվանական որոշ ձևեր և այլն: Կամարիսում զուգահեռաբար դրսևորվում են նաև Մշո, Բայազետի, Վանի, Արարատյան բարբառներին բնորոշ իրողություններ, ինչպես՝ *է,ո* երկբարբառայիններ (Մուշ, Բայազետ, Վան), շնչեղ ձայնեղներ (Մուշ, Բայազետ), բառասկզբի *դ*-ի դիմաց *կ* (Վան, Բայազետ), շրթնայնացած *ա* (Բայազետ, որոշ առումով՝ նաև Վան), *էր*-ով վաղակատար (Մուշ, Բայազետ), ավելի հաճախ՝ *կը*-ով ներկա (Մուշ, Վան), նաև՝ *ում*-ով ներկա (Արարատյան, Բայազետ), օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձև (Արարատյան, Բայազետ), դերանվանական ձևեր՝ *ըտըրա, ըստուց, ընդուց* (Բայազետ, Արարատյան), *ց*-ով բացառական (Արարատյան, Վան, Բայազետ, Մուշ) և այլն: Հասկանալի է, որ և՛ Նոր գյուղի, և՛ Կամարիսի խոսվածքները հայտնի որևէ բարբառի վստահաբար վերագրվել չեն կարող, սրանցում հնչյունաքերականական հատկանիշների միօրինականացման համար դեռևս որոշակի ժամանակ է հարկավոր:

Պարսկահայքից գաղթածներով բնակեցված բնակավայրերի երրորդ խմբում միայն առանձին հատկանիշներ են պահպանվել Խոյի բարբառից: Սրանցում թերևս մեծ է եղել Արարատյան բարբառի ազդեցությունը, գուցե և Պարսկահայքից եկածները ժամանակի ընթացքում դադարել են լինել բնակչության գերակշռող մասը: Այս խմբում ընդգրկում ենք Բալահովիտ (բնակիչների նախնիները եկել են Խոյից եւ Սալմաստից՝ 1828- 29թթ., մի մասն էլ Բուլանըխից), Ջրվեժ (բնակիչների նախնիների մի մասը 1828-1829 թթ. գաղթել է Խոյի և Սալմաստի գյուղերից, մյուսները տեղափոխվել են Շամքորի, Գանձակի և Ախալքալաքի շրջաններից 1960-

ական թթ.) և Ակունք (նախնիների հիմնական մասը 1829թ. Սալմաստից, Խոյից և Բայազետից գաղթածներ են) բնակավայրերը[10]:

Բալահովիտի խոսվածքը ներկայում բնութագրվում է առավելապես Արարատյան բարբառին բնորոշ հատկանիշներով, որոնցից են, օրինակ, հետևյալները. հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *հ*, բառասկզբում *հ*-ի դիմաց *ֆ*՝ *օ*-ից առաջ (ֆօրթ, ֆօտ), բառասկզբի *խ*-ի դիմաց՝ առնմանական *հ* (հաղալ, հավօղ), երկբարբառայինների բացակայություն, որոշիչ հոդի կիրառություն նաև բացառական հոլովում, հոլովական յուրահատուկ ձևեր (անօր, տէքօր), *ց*-ով բացառական, օժանդակ բայի ներկայի *ա* ձև, *ըմ*-ով ներկա, *ած*-ով հարակատար, *ցն*-ով պատճառական և այլն[11]: Մշո բարբառի ազդեցություն պետք է համարել շնչեղ ձայնեղների առկայությունը, *ռ*-ից առաջ *է* երկբարբառայինի գործածությունը, առանձին բառերում *հ>խ* անցումը, *էր*-ով վաղակատարը և այլն: Այս խոսվածքում սակավ ձևեր են հիշեցնում Խոյի բարբառ, ինչպես՝ քիչ տարածում ունեցող քմայնացած *ա*, ներգոյական հոլովի բացակայություն (սա կարող է նաև Մշո բարբառի ազդեցություն լինել), դերանվանական որոշ ձևեր (ընդ°նք, ըտանք, ըտանց), անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ*: Գրեթե նույն պատկերն է ներկայացնում Զրվեժի խոսվածքը: Այս խոսվածքի՝ առավելաբար Արարատյան բարբառին բնորոշ հատկանիշներից են՝ բառամիջի ու բառավերջի խուլերի դիմաց ձայնեղների առկայություն (պամբագ, տարդագ), երկբարբառային ու քմային հնչյունների բացակայություն, *ոյ*-ի և

[10] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Ակունքի բնակիչների մի մասը եկել էր Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի Ակոռի գյուղից, մի մասն էլ՝ Կոգովիտից. Ակունքում Արարատյան բարբառով խոսում է ավելի քան 1800 մարդ (տե՛ս **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 40):

[11] Արարատյան բարբառի և նրա հատկանիշների մասին տե՛ս նաև **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ.:

իւ-ի դիմաց *ի*-ի առկայություն (զըրից, ալիր), *հ>ֆ* անցում (ֆոռթ, ֆօղ, ֆօտ, ֆօր), *հ*-ի դիմաց՝ *հ*, իսկ *խ*-ի դիմաց՝ առնմանական *հ* (հավօղ, հէխտէլ), *ց*-ով բացառական, որոշիչ հոդի կիրառություն նաև բացառական, ներգոյական հոլովներում, դերանվանական ձևեր (ըստըրա, ըտըրա, ընդըրա), *ած*-ով հարակատար, *լ*-ով վաղակատար, *ըմ*-ով ներկա և այլն: Խոյի բարբառի հատկանիշներից պահպանվել են բառասկզբի ձայնեղների դիմաց խուլերի դրսևորումը, Ե խոնարհման բայերի անցյալի ոչ ցոյական հիմքը, անցյալ կատարյալում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների առկայությունը, այդ ժամանակաձևի եզակի առաջին դեմքում *մ*-ի դրսևորումը: Ի դեպ, վերջին հատկանիշը դրսևորվում է նաև Արարատյան բարբառը հիմնականում հարազատորեն ներկայացնող Առինջի խոսվածքում[12]:

Ինչ վերաբերում է Ակունքի խոսվածքին, ապա այստեղ Բայազետի բարբառին են վերաբերում հետևյալ հատկանիշները. շրթնայնացած *ա*-ի առկայություն, *հ*-ի դիմաց՝ *խ*, երկբարբառային *է,ո* հնչյունների առկայություն, շնչեղ ձայնեղների գործածություն, բառասկզբի *ղ*-ի դիմաց՝ *կ՛* կամ *կ*, բացառականի *ց*-ով ձև, ներգոյականի բացակայություն, *էր*-ով վաղակատար, եզակի հրամայականի *ա* վերջավորություն (գ՛ըրա՛) և այլն[13]: Արարատյան բարբառին բնորոշ հատկա-

---

[12] Առինջի խոսվածքը ներկայանում է Արարատյան բարբառի այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ քմայնացած ձայնավորների ու բաղաձայնների, երկբարբառների բացակայություն, *ոյ>ի, իւ>ի* անցումներ, առաջնավանկի ձայնավորի սղում՝ *պըլանիք, խըրոված*, *հ>ֆ* անցում՝ *ֆոռթ, ֆօղ, ֆօտ, ֆօր, խ>հ՝ անցում հաղ, հավօղ, ա* օժ. բայ, *ըմ*-ով անկատար, *էլ*-ով վաղակատար, *ած*-ով հարակատար, *ցն*-ով պատճառական, *ց*-ով բացառական, *ըմ*-ով ներգոյական և այլն:

[13] Բայազետի բարբառի և նրա հատկանիշների մասին տե՛ս նաև **Վ.Կատվալյան**, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչու-*

նիշներից են՝ *հ*-ի դիմաց՝ *ֆ* (ֆորթ), *ըմ*-ով ներկա, դերանվան որոշ ձևեր (ըտըրա, ըստըրա) և այլն: Խոյի բարբառից պահպանվել են քիչ հատկանիշներ՝ *ած*-ով հարակատարի գերակշռությամբ նաև *ուկ*-ով հարակատար, անցյալի անցոյական հիմք, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում *մ*-ի կիրառություն (բ՛էրիմ, խմամ) և այլն: Այսպիսով, եթե բավարար հիմքեր կան՝ Բալահովիտի և Ջրվեժի խոսվածքները վերագրելու Արարատյան բարբառին[14], ապա Ակունքի խոսվածքը խառը պատկեր է ներկայացնում և, կարծում ենք, հայտնի բարբառներից որևէ մեկին ներկայում վերագրվել չի կարող:

Տարածաշրջանում Մակուից եկածների սերունդներով են բնակեցված Գառնի[15] և Պտղնի[16] գյուղերը: Երկու բնակավայրերի համար հիմնականում ընդհանուր են հետևյալ հատկանիշները. բառասկզբի *ղ*-ի դիմաց՝ *կ* (Գառնիում՝ նաև կ՛), քմայնացած *ա*, միջնավանկի ձայնավորի սղում, *է,ո* երկբարբառայիններ (Պտղնիում՝ ոչ միշտ), հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ* (Պտղնիում այս օրենքը բացարձակ չէ), հետնալեզվայինները հիմնականում քմայնացած չեն, *էր*-ով վաղակատար, անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում՝ *մ*, ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ անցյալ կատար-

---

թյունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016, 534 էջ, **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ.:

[14] Տե՛ս նաև **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 43:

[15] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Գառնիում բնակություն են հաստատել Մակու քաղաքից և նրա շրջակայքից գաղթածներ, որոնց մեծ մասի մայրենին Արարատյան բարբառն է. այնուհետև Գառնիում բնակություն են հաստատել նաև բայազետցիներ, արդյունքում՝ բնակչությունը խոսում է Արարատյան բարբառով՝ Բայազետի բարբառի որոշ ազդեցությամբ (տե՛ս **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 40):

[16] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ Պտղնիի խոսվածքը Արարատյան բարբառի հատկանիշներ է կրում՝ այլ բարբառների ազդեցությամբ (տե՛ս նշվ. աշխ., էջ 43):

յալում, օժանդակ բայի երկձայնավոր ձևերում *է*-ի սղում (էի>ի, էինք>ինք), *ում*-ով ներկա (Գառնիում ավելի հաճախ՝ *ում*-ով), օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* ձև, *ցն*-ով պատճառական, ներգոյական հոլովի բացակայություն, *ց*-ով բացառական (Գառնիում՝ երբեմն *է*-ով), դերանվանական ձևեր (վոր, վիր, ընձի) և այլն: Այս երկու խոսվածքները հանդես են բերում նաև տարբերություններ. Գառնու խոսվածքում, ի տարբերություն Պտղնիի, առկա է *ա*-ի որոշ շրթնայնացում. Գառնիում բառասկզբում գործառում են շնչեղ ձայնեղներ, Պտղնիում դրանց դիմաց դրսևորվում են խուլեր. ի տարբերություն Գառնիի՝ Պտղնիում առկա է *հ>ֆ* անցում. Գառնիում՝ ուկ-ով հարակատար, Պտղնիում՝ ած-ով. Գառնիում՝ *ըստ°, ըտ°, ընդ°, ըստ°նք* դերանվանական ձևեր, Պտղնիում դրանց դիմաց՝ *ըստըրա, ըտըրա, ընդըրա, ըստըրանք* ձևեր: Նկատենք, որ Մակուից եկածների սերունդներով բնակեցված այլ բնակավայրերում (մասնավորապես՝ Սևանի և Հրազդանի տարածաշրջաններում) խոսվածքի դրսևորման էական այլ յուրահատկություններ կան, ուստի պետք է արձանագրենք, որ Մակուի խոսվածքի ամբողջական ուսումնասիրության դեպքում միայն կարելի կլինի պատկերացում կազմել մակվեցիների սերունդներով բնակեցված վայրերի՝ խոսվածքին հարազատության աստիճանի մասին:

Յուրօրինակ պատկեր են ներկայացնում Վան-Վասպուրականից եկածների սերունդներով բնակեցված Գեղադիր, Գեղարդ և Զառ բնակավայրերի խոսվածքները: Սրանցում դրսևորվում են Վանի և Բայազետի բարբառներին հատուկ որոշ հատկանիշներ, ինչիսիք են՝ *է,ո* երկբարբառայինների առկայություն, բառասկզբի *ղ*-ի դիմաց՝ *կ* (Զառում՝ նաև *ղ*), *ր*-ով վաղակատար, նաև՝ Արարատյան և Բայազետի բարբառներին հատուկ հատկանիշներ, ինչպիսիք են՝ *ում*-ով ներկա, օժանդակ բայի ներկայի *ա* ձև (Գեղադիրում՝ նաև *ի*): Ավելի շատ են խոսվածքների միջև առկա տարբերություն-

ները: Այսպես, Գեղարդի և Զառի խոսվածքներն ունեն շնչեղ ձայնեղներ, մինչդեռ Գեղադիրում դրանց դիմաց խուլեր են (երբեմն հնչում են նաև շնչեղ ձայնեղներ). Գեղադիրում հետնալեզվայինների ցայտուն քմայնացում կա, ինչպես նաև՝ քմայնացած *ա*, Գեղարդում նկատվում է հետնալեզվայինների թույլ քմայնացում, իսկ Զառում քմայնացում չի դրսևորվում. Գեղարդի խոսվածքն ունի Բայազետի բարբառին հատուկ շրթնայնացած *ա*, Գեղադիրի խոսվածքը՝ Վանի բարբառին հատուկ թույլ շրթնայնացմամբ *ա*, իսկ Զառի խոսվածքը նման հնչյուններ չունի. Գեղադիրը և Գեղարդը հինհայերենյան *h*-ի դիմաց ունեն *խ* (ինչպես Վանի և Բայազետի բարբառները), իսկ Զառը, որպես կանոն՝ *h* (ինչպես Արարատյանը). ի տարբերություն Գեղադիրի և Գեղարդի՝ Զառն ունի ներգոյական հոլով. Գեղադիրը և Գեղարդը ունեն *ուկ*-ով հարակատար, իսկ Զառը՝ *ած*-ով: Գեղադիրի խոսվածքը Վանի բարբառին հարում է նաև որոշյալ հոդի սահմանափակ կիրառությամբ, բայական համակարգում Ի խոնարհման առկայությամբ: Գեղարդի խոսվածքն ունի նաև Վանի և Բայազետի բարբառներին բնորոշ դերանվանական *քե, մե, ձ՛ե* (Վանի բարբառում՝ *ք՛ե, մե, ծե*) ձևերը: Զառի խոսվածքն ունի Արարատյան բարբառին բնորոշ *h>ֆ* անցմամբ բառեր, *անօր, հընգօր, քրվօր* հոլովական ձևեր, դերանվանական *ընդրրա, ըստրրա* ձևեր, Խոյի բարբառին հատուկ՝ անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում հավելական *ա*, Զուղայի բարբառին բնորոշ՝ անցյալ կատարյալում կրավորաձև խոնարհման գերակշռություն (ասամ, ասար, ասավ, օքնանք, օքնաք, օքնան) և այլն: Ընդհանուր առմամբ, պետք է նկատել, որ Գեղադիրի խոսվածքը, որքան էլ մյուս խոսվածքների համեմատ մոտ է Վանի բարբառին, սակայն այդ բարբառի խոսվածք համարվել չի կարող՝ Արարատյանին բնորոշ էական հատկանիշներ ունենալու պատճառով, սակայն վերջինիս խոսվածք համարվել նույնպես չի կարող՝ դեռևս Վանի բարբառի զգալի հատ-

կանիշներ ունենալով: Ինչ վերաբերում է Գեղարդի և Զառի խոսվածքներին, ապա առաջինը անշուշտ հարում է Բայազետի բարբառին (նկատենք, որ 1933 թվին այս գյուղ են տեղափոխվել Բայազետի բարբառի կրողներ Սարուխան գյուղից), իսկ երկրորդը՝ Արարատյան բարբառին (1946թ. այս գյուղ են ներգաղթել զգալի թվով սպահանցիներ[17]): Ի դեպ, Զառի խոսվածքին շատ մոտ է Հացավան գյուղի խոսվածքը:

Մշեցիների և ալաշկերտցիների սերունդներով են բնակեցված Սևաբերդ, Գեղաշեն[18] և Կապուտան գյուղերը: Սևաբերդի խոսվածքը բավականին հարազատ է Ալաշկերտի խոսվածքին՝ ունենալով այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ շնչեղ ձայնեղների, *է,ո* երկբարբառների առկայություն, բառամիջում ու բառավերջում խուլերի ձայնեղացում, շնչեղների ապաշնչեղացում, բառասկզբի *ղ*-ի դիմաց՝ *խ*, վաղակատարի *էր*-ով ձև, *ուզ*-ով հարակատար, վաղակատարով կազմվող ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքում *ած*-ով դերբայական ձև, անցյալի ձևերում եզակի առաջին դեմքի համար հոգնակիի ձևի կիրառում, *ուծ*-ով պատճառական, օժանդակ բայի *ա* ձև, հոդի կիրառության որոշ սահմանափակություն, հոգնակի թվում Ու հոլովում, *ծ*-ով բացառական, ներգոյականի բացակայություն և այլն[19]: Խոսվածքում *ում*-ով ներկայի կիրառությունը, հնարավոր է, ունի իրադրական բնույթ՝ դրսևորվելով օտարների հետ հաղորդակցման ժամանակ: Ի տարբերություն Սևաբերդի՝ Գեղա-

---

[17] Տե՛ս նաև **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 41:

[18] Ըստ Ռ.Մարկոսյանի՝ գյուղի բնակչության մեծամասնությունը՝ 450 տուն, խոսում է Արարատյան բարբառով՝ Բայազետի բարբառի որոշ ազդեցությամբ, իսկ 150 տուն՝ Խոյի բարբառով (տե՛ս նշվ. աշխ., էջ 41):

[19] Ալաշկերտի խոսվածքի և նրա հատկանիշների մասին տե՛ս նաև **Ք.Մադաթյան**, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, 251 էջ, **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ.:

շենի և Կապուտանի խոսվածքները, հարելով Մշո բարբառին, որոշակիորեն կրում են այլ բարբառների ազդեցություն: Այս երկու խոսվածքների՝ Մշո բարբառին հատուկ հատկանիշներից են, օրինակ, *է,ո* երկբարբառայինների, շնչեղ ձայնեղների առկայությունը, բառասկզբում ձայնավորից առաջ *հ*-ի հավելման դեպքերը, *էր*-ով վաղակատարը և այլն[20]: Գեղաշենի խոսվածքում զգալի է Խոյի բարբառի ազդեցությունը: Այստեղ նկատելի են *ա* ձայնավորի, հետնալեզվային պայթականների քմայնացումը, բառասկզբում ձայնեղների դիմաց երբեմն արտասանվում են խուլեր, բայական անցյալի ձևերի եզակի առաջին դեմքում հանդես է գալիս *մ* (գ՛ալում իմ /էի/, ասիմ) և այլն: Արարատյան բարբառի ազդեցություն են վկայում բառասկզբի *հ*-ի դիմաց *ֆ*-ի գործածությունը (ֆոռթ), *ում*-ով ներկան, *ած*-ով հարակատարը, դերանվանական *ըստրրա, ըտրրա, ըստրրանք, ըտրրանք* ձևերը և այլն: Կապուտանի խոսվածքում, թվում է, Խոյի կամ Արարատյանի ազդեցությունը ավելի թույլ է: Այստեղ *ա*-ի և հետնալեզվային բաղաձայնների քմայնացումն ավելի թույլ է արտահայտվում, իսկ ներկան կազմվում է *կը* մասնիկով: Ինչևէ, եթե Կապուտանի խոսվածքը կարելի է համարել Մշո բարբառի՝ ազդեցություններ կրած խոսվածք, ապա Գեղաշենի խոսվածքը ունի խառը պատկեր և ներկայում որևէ հայտնի բարբառի վերագրվել չի կարող:

Բայազետից եկածների սերունդներով բնակեցված Գողթ, Կոտայք, Հատիս բնակավայրերի խոսվածքներում գերակշռում են Բայազետի բարբառի էական հատկանիշները: Այս խոսվածքների համար ընդհանուր են բարբառիս հետևյալ իրողությունները. շրթնայնացած *ա*, երկբարբառային

[20] Մշո բարբառի և նրա հատկանիշների մասին տե՛ս նաև **Ս.Բաղդասարյան-Թափալճյան**, *Մշո բարբառը*, Ե., 1958, 277 էջ, **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ.:

է,ո հնչյուններ, շնչեղ ձայնեղներ, հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ*, բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ *հ*-ի հավելում, *կ*՝ բառասկզբի *ղ*-ի դիմաց, *ց*-ով բացառական, ներգոյականի բացակայություն, *ր*-ով վաղակատար, *ուկ*-ով հարակատար, *ում*-ով ներկա, օժանդակ բայի ներկայի *ա* ձև, Բայազետի բարբառին հատուկ դերանվանական ձևեր և այլն: Գողթի և Կոտայքի խոսվածքներում նկատվում է հետնալեզվային պայթականների որոշ քմայնացում, որը կարող է նոր ազդեցությունների հետևանք չլինել: Սակայն այդ չի նշանակում, թե դիտարկվող խոսվածքները նոր միջավայրում ազդեցությունների չեն ենթարկվել: Այսպես, Գողթի խոսվածքում, թերևս Գառնու խոսվածքի ազդեցությամբ, երբեմն անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքում դրսևորվում է *մ*, Կոտայքի խոսվածքում բառասկզբում *հ*-ի դիմաց կարող է դրսևորվել *ֆ* (ֆոռթ) Արարատյան բարբառի ազդեցությամբ, նույն պատճառով Հատիսի խոսվածքում *ում*-ի դիմաց կարող է հանդես գալ *ըմ* և այլն: Այնուամենայնիվ, ակնհայտ է՝ երեք խոսվածքներն էլ վերաբերում են Բայազետի բարբառին:

Տարածաշրջանի՝ տարբեր վայրերից գաղթածների սերունդներով բնակեցված բնակավայրերում (Աբովյան, Զովաշեն, Վերին Պտղնի, Նուռնուս, Ողջաբերդ) կա՛մ հաղորդակցման հիմնական միջոցը խոսակցական հայերենն է, կա՛մ խոսողության ընթացում խառը դրսևորվում են տարբեր բարբառային միավորների հատկանիշներ: Այսպես, Աբովյան քաղաքը, որը չունի բնիկ կամ որևէ տարածքից եկած հիմնական բնակչություն, և որտեղ խառը ապրում են տարբեր ծագում ունեցող մարդիկ, բնականաբար չի կարող բնութագրվել բարբառային առանձնահատկություններով. Այստեղ հաղորդակցման ընդհանուր միջոցը խոսակցական հայերենն է: Մինչդեռ գյուղական բնակավայրերում, որպես կանոն, իրավիճակը այլ է: Օրինակ, Կաթնաղբյուր գյուղի խոսվածքում նկատելի է տարբեր բարբառների բնորոշ հատ-

կանիշների խառը գործածություն, ինչպես՝ *է,ո* երկբարբառայինների առկայություն (Մուշ, Վան, Բայազետ), հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ* (Վան, Խոյ, Բայազետ), շրթնայնացած *ա* (Բայազետ, որոշ չափով՝ Վան), շնչեղ ձայնեղներ (Մուշ, Բայազետ), բառասկզբի *ղ*-ի դիմաց՝ *կ* (Վան, Բայազետ), բառասկզբի ձայնեղի դիմաց՝ խուլ (Խոյ, Վան), քմայնացած *ա* և հետնալեզվային բաղաձայններ (Խոյ, Վան), բառասկզբի *հ*-ի դիմաց՝ *ֆ* (Արարատյան), բաղաձայնից առաջ հետնալեզվայինների վերածում *յ*-ի (Վան, Խոյ), *ր*-ով վաղակատար (Մուշ, Վան, Խոյ, Բայազետ), օժանդակ բայի *ա* ձև (Արարատյան, Բայազետ), *ում/ըմ*-ով ներկա (Արարատյան, Բայազետ), անցյալի ձևերի առաջին դեմքում *մ*-ի առկայություն՝ չիմ սօրվի, գիդիմ (գիտեի), վազամ (Խոյ), ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ (Մուշ, Վան, Խոյ, Բայազետ), հոլովական *անօր, հընգօր, տէքօր* ձևեր (Արարատյան) և այլն: Փաստորեն, այս խմբի խոսվածքներում որևէ բարբառային միավորի գերիշխող գործառություն արձանագրել չենք կարող. տարբեր բարբառների կրողները լավագույն դեպքում ընտանիքում կամ նույնաբարբառ անձանց հետ խոսելիս թերևս գործածում են մայրենի բարբառը, բայց այլ դեպքերում դիմում են խոսակցական հայերենին կամ գործածում են տարբեր բարբառների տարրեր պարունակող և խառը պատկեր ներկայացնող խոսվածք:

Այսպիսով, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի շրջանում ներկայում գործառում են Խոյի (Արամուս, Մայակովսկի, Ձորաղբյուր գյուղեր), Արարատյան (Առինջ, Բալահովիտ, Ջրվեժ, Ձառ գյուղեր), Մշո (Կապուտան, Սևաբերդ գյուղեր), Բայազետի (Գեղարդ, Գողթ, Կոտայք, Հատիս գյուղեր) բարբառների խոսվածքներ: Տարածաշրջանի բնակավայրերի մեծ մասը ունի տարբեր ծագում ունեցող բնակիչներ, ուստի բնական է, որ շատ են խառը տիպի խոսվածքներ ունեցող վայ-

րերը, իսկ որոշ դեպքերում էլ հաղորդակցման ընդհանուր լեզուն խոսակցական հայերենն է:

Բարբառային միավորների գործառության՝ տարածաշրջանում առկա խառը իրավիճակը նկատի ունենալով՝ կարելի է անդրադառնալ դրանց հատկանիշների կայունության ու փոփոխականության խնդրին: Ըստ այդմ՝ առանձնանում են հատկանիշների կենսունակ և մարող խմբեր: Կայուն պահպանվող (երբեմն նաև տարածման միտում ունեցող) կենսունակ հատկանիշներից են հետևյալները. շնչեղ ձայնեղների, երկբարբառային *ո,ե* հնչյունների առկայություն, բառասկզբի *դ*-ի դիմաց *կ*-ի գործածություն, դերանունների թեք ձևերում *ի*-ի /ընձի, մեզի/, *տ/դ*-ի առկայություն (ըստու, ընդրա), ներգործաձև և կրավորաձև խոնարհումների արտահայտություն (նըստա, բ՛էրի), *ր*-ով վաղակատար, *ած*-ով հարակատար, անցյալի եզակի առաջին դեմքում *մ*-ի հավելում, օժանդակ բայի *ա* ձև, *ում/ըմ*-ով անկատար դերբայ, *ցն*-ով պատճառական և այլն: Այս կամ այն չափով նահանջող հատկանիշներից են հետևյալները. քմայնացած հետնալեզվայինների առկայություն, բաղաձայնից առաջ հետնալեզվայինների վերածում *յ*-ի, հինհայերենյան *հ*-ի դիմաց՝ *խ*, օտար *կ՛* հնչյունի, շրթնայնացած *ա*-ի առկայություն, բացառականի *է*-ով ձև, *լիս* – ով ներկա, անցյալ ցույց տվող բառ-մասնիկի գործածություն և այլն:

Բարբառային հատկանիշների թե՛ կենսունակությունը, թե՛ մարումը կարող են պայմանավորված լինել արտաբերական, գործառական, հոգեբանական և այլ կարգի տարբեր իրողություններով: Հատկանիշների կենսունակությանը նպաստող գործոններից են, թերևս, բարբառային լեզվում դրանց մեծ տարածվածությունը, արտաբերական կայուն սովորույթները և նպատակահարմարությունը, խոսակցական ու գրական լեզուների հատկանիշների հետ ընդհանրությունը և այլն: Բարբառային առանձին հատկանիշների թուլաց-

ման կամ մարման պատճառ կարող են լինել, թերևս, ընդհանուր հասկանալիություն ապահովելու մղումը, այդ հատկանիշներով պայմանավորված՝ արտասանության համեմատաբար դժվարությունը, շրջապատի խոսքից, խոսակցական ու գրական լեզուներից ընդգծված տարբերությունը և այլն:

Katvalyan Viktor, Manifestations of the Dialectal Armenian Language in Abovyan District of the RA Region of Kotayk. – Some speeches of the dialects of Khoy, Ararat, Mush, and Bayazet are currently in use in Abovyan district of the RA Region of Kotayk. There are many places with speeches of mixed types in that region, and in a number of cases, the dialectal Armenian language is the common language of communication. The dialectal features in those speeches may be either active, or becoming extinct conditioned by the articulation, functional, psychological and other realities.

Катвалян Виктор, Проявления диалектного армянского языка в Абовянском регионе Котайкской области РА.- В настоящее время в Абовянском регионе Котайкской области функционируют говори Хойского, Араратского, Мушского и Баязетского диалектов. Во многих населенных пунктах региона действуют говори смешанного типа, а в некоторых случаях основным средством общения является разговорный армянский язык. Диалектные признаки в говорах могут быть устойчивыми или отступающими, что обусловлено артикуляционными, функциональными, психологическими и разными другими явлениями.

Հակոբյան Ֆրիդա
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀԱՅԵՐԵՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՐԲԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էլեկտրոնային եղանակով տեքստերի կազմումը և դրանց հրապարակումն ու տարածումը համացանցի միջոցով գրեթե լիովին փոխարինել են ձեռագիր տեքստերին՝ աստիճանաբար կարևորելով տեքստի լեզվական որակի բարձրացման խնդիրը: Հետևաբար համակարգչային ծրագրերի՝ լեզվաբանության մեջ տեսական և գործնական տարբեր նպատակներով կիրառություններից ամենահիմնականը կարելի է համարել համակարգչային լեզվաբանների կողմից տեքստի ավտոմատ սրբագրման և խմբագրման համակարգերի ստեղծումը, որոնք ունեն ընդհանրական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ուղղագրական, քերականական, քիչ դեպքերում նաև՝ կետադրական սխալների ուղղումը: Կատարելով գրեթե նույն գործառույթը՝սրբագրման բոլոր համակարգերի ու ծրագրերի տարբերակիչ ամենահիմնական հատկանիշն այն է, որ դրանք տեքստում եղած սխալներն ուղղում են տարբեր կերպ և ոչ ամբողջությամբ՝ պայմանավորված համակարգի զարգացվածության աստիճանով:Օգտատերերի շրջանում առավել մեծ հեղինակություն են վայելում Grammarly[1],Ginger[2], SpellCheckPlus Pro[3], CorrectEnglish Complete[4], WhiteSmoke[5] օտարալեզու սրբագրման համակարգերը:

---

[1] *https://www.grammarly.com/*
[2] *http://www.gingersoftware.com/grammarcheck*
[3] *https://pro.spellcheckplus.com/*
[4] *http://www.correctenglish.com/*

Հայերեն տեքստերի էլեկտրոնային սրբագրման փոքրաթիվ ծրագրեր ևս ստեղծվել են: Դրանցից իրենց տարածվածությամբ և համեմատաբար լայն կիրառությամբ առանձնանում են Armenian PowerSpell համակարգչային ծրագիրը[6] և HySpell.com կայքում գործող HySpell ծրագիրը[7]: Սրանց միջոցով հնարավոր է կատարել տեքստում եղած սխալների ոչ բավարար մակարդակով ուղղում, ուստի կարող ենք ասել, որ հայերեն տեքստերի սրբագրման համակարգերը որակական առումով շատ թերի են: Դա վերաբերում է ինչպես բառապաշարի ընդգրկման ծավալին, այնպես էլ քերականությանը, քանի որ քերականական ոչ բոլոր տեսակի սխալներն է հնարավոր ուղղել դրանց միջոցով:

Այս համատեքստում մեծապես կարևորում ենք էլեկտրոնային սրբագրման նոր՝ առավել լիակատար և ամբողջական համակարգի ստեղծման խնդիրը, ուստի սույն հոդվածում կանդրադառնանք հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգի կազմության՝ մեր կողմից մշակված սկզբունքներին, որոնք վերաբերում են համակարգի ստեղծման նպատակին ու խնդիրներին, կառուցվածքին ու ընդգրկման ծավալին:

Հայալեզու սրբագրման նոր՝ առավել լիակատար համակարգի ստեղծման կարևորությունը պայմանավորված է հայերեն տեքստերի լեզվական որակի բարձրացման անհրաժեշտությամբ: Ընդունված է ասել, որ գրավոր խոսքը բանավորի համեմատությամբ առավել կանոնարկված է, սակայն դա ամենևին էլ չի բացառում ամենատարբեր սխալների առկայությունը, շատ դեպքերում նաև՝ առատությունը տեքստում: Ուստի, նորաստեղծ էլեկտրոնային սրբագրման համակարգի խնդիրը տեքստում եղած սխալների առավելագույն չափով

---

[5] *http://www.whitesmoke.com/*
[6] *http://www.powerspell.am/*
[7] *http://hyspell.com/*

ուղղումն է և, որպես արդյունք, հնարավորինս քիչ սխալներ պարունակող տեքստեր ներկայացնելը:

Ամենից առաջ հարկ է ընդգծել, որ նման բազմագործառույթ համակարգի ստեղծումը բարդ և ժամանակատար խընդիր է, որը պահանջում է համակարգչային ծրագրերի համար կիրառելի դարձնելու նպատակով լեզվի բառապաշարի, ինչպես նաև քերականական համակարգի մշակման, ձևայնացման ուղղությամբ լեզվաբանների և ծրագրավորողների համակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, նմանատիպ գործառույթ իրականացնելու նպատակով ստեղծված այլ ծրագրերի համեմատությամբ այն կունենա մի շարք ընդգծված տարբերություններ, որոնք վերաբերում են ինչպես էլեկտրոնային համակարգի ձևային, այնպես էլ բովանդակային կողմին:

Քանի որ դրա ստեղծման առաջնային նպատակը հայախոս հանրության շրջանում գրավոր խոսքը որակական զարգացման նոր մակարդակի հասցնելն է, նպատակահարմար է՝ այն գործի համացանցային ինքնուրույն կայքում լիովին անվճար և առանց որևէ ծրագրի ներբեռնման անհրաժեշտության: Մինչդեռ հայերեն տեքստերի սրբագրման մյուս ծրագրերի օգտագործման հնարավորությունները շատ սահմանափակ են: Օրինակ՝ PowerSpell համակարգչային ծրագրից օգտվելու համար հարկ է գնել դրա ամբողջական փաթեթը, ավելացնել Microsoft Word, Excel, PowerPoint տեքստային խմբագրիչներին և օգտագործել համակարգչում: Սա ենթադրում է, որ ոչ միայն սահմանափակ թվով մարդիկ միայն կարող են օգտվել դրանցից, այլև ծրագրի ստեղծողներն անգամ չեն կարող այն հաճախակի փոփոխել, համալրել կամ ուղղել ի հայտ եկած սխալները, քանի որ դա անելու միակ եղանակը ծրագրի նոր՝ լրամշակված տարբերակի թողարկումն է: Առանձին կայքում գործելու շնորհիվ՝ էլեկտրոնային սրբագրման նոր համակարգը, սակայն, կայքի հեղինակներին

այն մշտապես թարմացնելու, փոփոխելու, նկատված սխալները կամ ծրագրային թերացումները անհապաղ շտկելու, առավել զարգացնելու ու լիակատար դարձնելու հնարավորություն կտա:

Հայերեն տեքստերի սրբագրման համեմատաբար հաջող ծրագրերից երկրորդը HySpell.com կայքում գործող HySpell համակարգչային ծրագիրն է և համապատասխան ծրագրային հավելվածը: Որպես սրբագրման ծրագիր՝ այն ունի համակարգչային նախորդ ծրագրին բնորոշ բոլոր թերությունները: HySpell ծրագրային հավելվածի հասանելիությունը ևս սահմանափակվում է մի շարք պատճառներով: Այսպես՝ դրա օգնությամբ կարելի է ուղղել միայն համացանցի միջոցով հրապարակվող կամ ուղարկվող տեքստերը (էլեկտրոնային նամակներ, հաղորդագրություններ, սոցիալական կայքերում արված հրապարակումներ): Դրանից բացի՝ ծրագիրը կիրառելի է միայն Firefox դիտարկիչի համար, մինչդեռ համացանցից օգտվողների ճնշող մեծամասնությունն օգտագործում է Google և Yandex որոնողական համակարգերը: Դա նշանակում է, որ նրանք պարզապես չեն կարող օգտվել տեքստի սրբագրման այս հավելվածից: Էլեկտրոնային սրբագրման նոր համակարգը, փոխարենը, հնարավոր կլինի օգտագործել բոլոր դիտարկիչներով և որոնողական համակարգերով:

Հայերեն տեքստերի սրբագրման համակարգի ստեղծման համար նախևառաջ պետք է հստակորեն որոշել դրանում ընդգրկվելիք բառապաշարի ծավալը՝նպատակ ունենալով հայերենի բառապաշարի համաժամանակյա վիճակն արտացոլելը: Որքան մեծաքանակ լինի բառապաշարը, այնքան ամբողջական և լիակատար կլինի տեքստային սխալների ուղղումը: Կարծում ենք՝ նոր ստեղծվելիք համակարգի բառային հենքը պետք է կազմեն հայերենի առավել տարածված և ուղենշային համարվող բառարանները: Տեքստի սրբագրման մյուս ծրագրերի հեղինակները ևս կարևորում են այս

հանգամանքը, սակայն իրականում նրանց ընդգրկած բառապաշարը փոքրաթիվ է: Օրինակ՝ Armenian PowerSpell-ի հեղինակների կարծիքով իրենց համակարգը բավական հարուստ է, քանի որ բաղկացած է *1,400.000* բառից: Հայերենի հարուստ բառագանձը չի հատում կես միլիոն բառի սահմանը, ուստի այս դեպքում, հասկանալի է, որ *1,400,000*-ը ոչ թե բառերի, այլ բառաձևերի քանակն է: Եթե այդ թվից դուրս գան թեքվող խոսքի մասերի դեպքում հարցուցային շարքի մյուս անդամները, կստացվի, որ այս բառաքանակը կրճատվում է մի քանի անգամ:

Համակարգչային ծրագրերի կողմից բնական լեզվի արդյունավետ մշակումն ամենից առաջ պայմանավորված է ոչ միայն մեծածավալ բառապաշարի առկայությամբ, այլև լեզվի մակարդակային բոլոր միավորների առավել ամբողջական ու լիակատար ձևային նկարագրությամբ: Սա նշանակում է, որ լեզվի բառապաշարի, ինչպես նաև քերականության ձևայնացումը առաջին և կարևորագույն նախապայմանն է սրբագրման նոր համակարգի հաջողվածության հարցում: Ներկայացման ձևաչափի և ընդգրկելիք բառապաշարի տեսանկյունից շահեկանորեն տարբերվելով հայալեզու սրբագրման մյուս ծրագրերից՝ լեզվական սխալների ուղղման անհամեմատ բարձր մակարդակն է, որով էլեկտրոնային նոր համակարգը կտարբերվի այս և հետագա շրջանում ստեղծվելիք մյուս ծրագրերից:

Համակարգի առաջնային նպատակը լեզվի մակարդակային տարբեր միավորներում եղած լեզվագործածության տարատեսակ սխալների ուղղումն է:

ա) *Ուղղագրական սխալների ուղղում:* Ընդհանուր առմամբ՝ ցանկացած սրբագրման ծրագրի առաջնային խնդիրը ուղղագրական սխալների ուղղումն է: Գրավոր խոսքում ուղղագրական սխալները բազմաթիվ են, որոնք ընդհանրացնելով կարելի է բաժանել հետևյալ տեսակների. ա) վրիպակ-

ներ, բ) բառի ճիշտ գրության չիմացությամբ պայմանավորված սխալներ, գ) բառի ճիշտ գրության՝ բոլորի կողմից ընդունելի տարբերակի բացակայություն: Հայերենի ուղղագրական սխալների ուղղման հետ կապված խնդիրներն առավելապես պայմանավորված են վերջին հանգամանքով, քանի որ շատ դեպքերում բառերի միասին, անջատ կամ գծիկով գրության, հատուկ անունների դեպքում՝բաղադրիչների մեծատառով կամ փոքրատառով գրության առնչությամբ լեզվաբանների շրջանում չկա բոլորի կողմից ընդունելի մեկ միասնական մոտեցում:

բ)*Քերականական սխալների ուղղում*: Սրբագրման համակարգի լիարժեքության մյուս նախապայմանը տեքստում եղած քերականական սխալների ուղղումն է, որը շատ դեպքերում բավական բարդ կլինի համակարգի համար: Այդ բարդություններն ամենից առաջ պայմանավորված են համակարգչային ծրագրերի՝բնական լեզուն ոչ լիարժեք կերպով մշակելու կարողությամբ և հայերենի լիակատար ձևային նկարագրության բացակայությամբ, որը հիմնականում պայմանավորված է քերականական կարգերի առատությամբ և դրանց արտահայտման ձևերի բազմազանությամբ: Դրանից բացի՝ քերականական սխալ կառույցների բացահայտման ժամանակ լրացուցիչ դժվարություն կառաջացնի այն հանգամանքը, որ շատ դեպքերում բնական լեզվում քերականական միևնույն իմաստը կարող է արտահայտվել մեկից ավելի զուգահեռ ձևերով, իսկ ծրագրավորման լեզվով ոչ միշտ է հնարավոր դա տարբերակել:

գ) *Կետադրական սխալների ուղղում*: Տեքստի լեզվական որակը մեծ չափով պայմանավորված է ոչ միայն բառերի ճիշտ ուղղագրությամբ, քերականական համապատասխան կառույցների ընտրությամբ, այլև կետադրությամբ: Տեքստերում եղած կետադրական սխալները բազմաթիվ են, որոնց պատճառով որոշ դեպքերում նույնիսկ հնարավոր է ոչ ճիշտ

ընկալել նախադասության կամ պարբերության իմաստը: Այս է պատճառը, որ սրբագրման համակարգում մեծապես կարևորվում ենք կետադրական սխալների ուղղման հնարավորությունը:

դ)*Ոճական սխալների ուղղում:* Էլեկտրոնային սրբագրման համակարգի հետագա զարգացման տեսանկյունից առավել հեռահար նպատակ ենք համարում մեքենական եղանակով տեքստի ոճական սխալների ուղղումը, առօրյա-խոսակցական, բարբառային բառերի ու արտահայտությունների փոխարինումը գրական տարբերակներով և այլն:

Էլեկտրոնային սրբագրման համակարգում էապես կարևորում ենք տեքստում լեզվական սխալների ուղղման եղանակը, որը կարելի է անել երկու միջոցով.

ա) համակարգն ավտոմատ կերպով կուղղի տեքստը, այնուհետև այլ ձևաչափով կամ գունավորմամբ կներկայացվեն ուղղված սխալները,

բ) տեքստի մուտքագրումից հետո համակարգը կընդգծի բոլոր սխալները՝ օգտվողին առաջարկելով ուղղման երեքչորս ամենահավանական տարբերակները, որից հետո օգտվողը կընտրի համապատասխան ճիշտ ձևը:

Կարծում ենք՝ երկրորդ միջոցի կիրառությունն առավել նպատակահարմար է, քանի որ քիչ չեն լինի դեպքերը, երբ բառի գործածության համատեքստը օբյեկտիվորեն չհասկանալու կամ բառիմաստը չընկալելու պատճառով համակարգը սխալ կուղղի բառը: Այսպես՝ համանունները, որոնք բնական լեզվում ունեն տարբեր իմաստներ, բայց չունեն ձևային տարբերակվածություն, համակարգչային ծրագիրը որևէ կերպ միմյանցից չի կարող տարբերակել: Ավելին՝ երբեմն բառիմաստային տարբերություններով պայմանավոր ված՝դրանք ձևաբանական փոփոխությունների են ենթարկվում տարբեր եղանակով: Օրինակ՝ **սեր** գոյականը զգացմունք իմաստն արտահայտելիս այլ ձևով է հոլովվում, կաթի **սերը**՝ այլ: Այս դեպ-

քում համակարգը չի կարող ինքնուրույն ընտրել համապատասխան բառաձևը և ուղղել՝ համանուններն ըստ իմաստի տարբերակել չկարողանալու պատճառով:

Էլեկտրոնային սրբագրման համակարգի ստեղծման լեզվաբանական և ծրագրային կողմին առնչվող խնդիրները բազմազան են, դրանց լուծման եղանակները՝ ևս: Համեմատաբար ավարտունության ցանկացած փուլում էլ այն հսկայական նշանակություն կունենա հայախոս հանրության երկու հատվածների համար հավասարապես: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել համակարգի կարևորությունը ամենից առաջ արևելահայերենով գրված ամենատարբեր բնույթի տեքստերը կանոնարկելու, դրանցում եղած լեզվական տարաբնույթ սխալներն ուղղելու համար: Պակաս կարևոր չի լինի դրա նշանակությունը նաև արևմտահայերի համար, որոնք հատկապես ուղղագրական համակարգերի տարբերություններով պայմանավորված, ոչ միշտ են կարողանում ինչպես ճիշտ ուղղագրությամբ արևելահայերեն տեքստեր գրել, այնպես էլ առհասարակ լիարժեք կերպով կիրառել հայերենի քերականական կանոնները: Կարելի է փաստել, որ սրբագրման համակարգից օգտվողների թիվը տեսականորեն որևէ սահմանափակում չի ունենա, քանի որ դա լիարժեք կերպով կարող է սպասարկել ողջ հայախոս հանրությանը, և ավելին՝ այն օտարերկրացիներին, որոնք բավարար լեզվական գիտելիքներ չունենալու պատճառով չեն կարող կառուցել իրենց գրավոր խոսքը պատշաճ մակարդակով:

Տեքստի ավտոմատ սրբագրման համակարգի ստեղծումը էապես կնպաստի ինչպես լեզվաբանական հետազոտությունների բնագավառում համակարգչային տեխնիկայի կիրառությանը, համակարգչային ծրագրերի միջոցով տեքստերում եղած լեզվական սխալների վերացմանը, այնպես էլ լայն առումով հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառնությանը:

Hakobyan Frida – The purpose and objectives of the Armenian Electronic Proofreading Program.– The purpose of the article is to present the principles of creating the Armenian Electronic Proofreading program. The necessity of a new Proofreading program is underlined, because even though there are a few spell and grammar checkers, they are incomplete, as they do not correct all types of mistakes. For the creation of a new Proofreading program, the importance of including rich vocabulary and formal description of the language are highlighted. The newly-created program is supposed to correct spelling, grammar, punctuation, and stylistic errors. The Armenian Electronic Proofreading program will highly contribute to the use of computer technology in the field of linguistic research, elimination of errors in texts through computer programs, as well as to the successful functioning of the Armenian language as a web language.

Акопян Фрида – Цель и задачи программы Армянской электронной корректуры.– Цель статьи представить принципы создания Армянской программы электронного корректуры. Подчеркнута необходимость новой программы корректуры, потому что, несмотря на наличие нескольких контрольных и грамматических программ, они неполны, поскольку они не исправляют все типы ошибок. Для создания новой программы корректуры подчеркивается важность включения богатого словарного запаса и формального описания языка. Предполагается, что новая программа исправит орфографию, грамматику, пунктуацию и стилистические ошибки.

Программа Армянской электронной корректуры будет в значительной степени способствовать использованию компьютерных технологий в области лингвистических исследований, устранению языковых ошибок в текстах с помощью компьютерных программ, а также успешному функционированию армянского языка в качестве веб-языка.

Հեքեքյան Նարինե
(Հայաստան, Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ)

ԳԻՇԵՐ ԵՎ *ՑԵՐԵԿ* ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ)

Բնության երևույթներով պայմանավորված՝ մարդը ժամանակի հատվածները տարբերել է՝ հիմնվելով փուլային պարբերականության վրա: Այսպիսի կարծիք կա. «Եթե տարվա և օրվա շրջափուլը բացառապես բնական երևույթներ են, ապա այդ շրջափուլերը ժամանակի հատվածների բաժանելը մարդու մտքի, ընկալման և փորձի արդյունք է»[1]:

Օրվա շրջափուլի հատվածներին առնչվող լեզվական հարուստ նյութն արտացոլում է մարդկանց գիտելիքն ու պատկերացումները դրանց վերաբերյալ, նաև տարբեր ընկալումները՝ պայմանավորված մշակութային առանձնահատկություններով: Տրոհման առաջին աստիճանում հիմք է ընդունվում մթի և լույսի հակադրությունը, ըստ որի առանձնացվում է երկու հիմնական հատված՝ գիշեր և ցերեկ[2]: Հիշենք Սուրբ Գիրքը. «Աստուած տեսաւ, որ լոյսը լաւ է, եւ Աստուած լոյսը բաժանեց խաւարից: Աստուած լոյսը կոչեց ցերեկ, իսկ խաւարը կոչեց գիշեր»[3]:

---

[1] **Толстой Н.И.** *Времени магический круг (по представлениям славян)* // Логический анализ языка: язык и время / отв. ред. Н.Д. Арутюнова, Т.Е. Янко. – М., 1997, с. 17:

[2] Ցերեկվա և գիշերվա միջև առանձնացվող միջանկյալ հատվածներին կանդրադառնանք մեկ այլ առիթով:

[3] *Աստուածաշունչ, Մատեան Հին և Նոր Կտակարանների*, Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Սբ. Էջմիածին, 1994:

Գիտական մոտեցմամբ՝ գիշերը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում Երկրի մակերևույթի որոշակի կետի համար Արեգակը գտնվում է հորիզոնի գծից ներքև: Իսկ ցերեկը այն ժամանակահատվածն է, երբ Երկրի մակերևույթի որոշակի կետի համար Արեգակը գտնվում է հորիզոնի գծից վերև: Այսինքն՝ գիշերը մայրամուտից մինչև արևածագ, իսկ ցերեկը՝ արևածագից մինչև մայրամուտ ընկած ժամանակահատվածն է: Ըստ այդմ էլ *գիշեր* և *ցերեկ* բառերը հայերենի բացատրական բառարաններում բացատրվում են երկու գործոններով՝ լույս-մութ և արեգակի դիրք:

Գիշեր-ը բնութագրվում է՝

ա) գիտական ըմբռնմամբ՝ արեգակի դիրքով. «օրվա այն ժամանակը, երբ արեգակը *թաքնված է հորիզոնի տակ*»[4],

բ) օրվա երկու միջանկյալ հատվածների ու պահերի (առավոտ-երեկո, արշալույս-արևամուտ) միջոցով. «օրվա այն մասը, որ տևում է *արևամուտից մինչև արշալույս*, *երեկոյից մինչև առավոտ*»[5], «օրվա մի մասը *մայրամուտից մինչև լուսաբաց*»[6],

գ) տարբեր գործոնների զուգորդմամբ (լույս-մութ և արեգակի դիրք կամ առավոտ-երեկո հակադրություն), «կէսն ամբողջ աւուր, *անլոյս,* զորչափ *արեգակն է ընդ կիսագնտիւ*»[7], «*մութ՝ խավար* ժամանակ, *երեկոյից հետո մինչև առավոտյան լուսաբացը*»[8]:

---

[4] **Մալխասեանց Ս**., *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1, Երևան, 1944: Բառարանային այս և հաջորդ օրինակներում ընդգծումները մերն են - Ն.Հ.:

[5] *Ժամանակակից հայերենի բացատրական բառարան*, ՀՍՍՀ ԳԱԱ, հ. 1, Երևան, 1969:

[6] **Աղայան Էդ,** *Արդի հայերենի բացատրական բառարան,* հ. 1, Երևան, 1975:

[7] **Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ.,** *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Երևան, ԵՊՀ հրատ., հ. 1, 1979:

Ցերեկ բառի բացատրությունը հիմնվում է միայն մեկ ծոնի վրա և կապվում է օրվա՝ արեգակի դիրքով պայմանավորված որոշակի հատվածների ու պահերի (առավոտ-երեկո, արևածագ-մայրամուտ) հետ. «օրուայ ժամանակը *արևը ծագելուց մինչև մայր մտնելը*»[9], «օրվա ժամանակը *արևը ծագելուց մինչև մայրամուտ*»[10], «օրվա մի մասը՝ *արևածագից մինչև մայրամուտ, առավոտից մինչև երեկո*»[11], «ժամանակն՝ որ *յայգուէ մինչև ցերեկոյ.* այն է *տիւ*»[12]:

Հետաքրքրական է, որ *ցերեկ* բառը հիշյալ իմաստով գործածվում է առավելաբար գիշերվա հետ հակադրությամբ: Հմմտ. *Օրը բաժանում են երկու մասի՝* ***ցերեկվա*** *և* ***գիշերվա*** (Հ.Խաչատրյան), *Ինչ ուզում ես արա, միշտ էլ օրը պարտաճանաչ բաժանվում է երկու մասի՝* ***ցերեկվա*** *և* ***գիշերվա*** (Ս.Հարությունյան), *Լույսի և խավարի կամ* ***ցերեկվա*** *և* ***գիշերվա*** *կանոնավոր իրար հաջորդելը կարգավորում է .... Ժուկ ու ժամանակը* (Ս.Հարությունյան), *Երբ Արեգակն աստիճանաբար սկսում է դուրս գալ հարավային կողմից և հասնում է երկնային հասարակածին, առաջ է բերում* ***ցերեկվա*** *և* ***գիշերվա*** *հավասարություն* (Ա. Շիրակացի):

Սակայն *ցերեկ* բառը մեր խոսքում հաճախ գործածվում է մեկ այլ իմաստով ևս, որը փաստորեն արձանագրված չէ հայերենի բացատրական (նաև հոմանիշների) բառարաններում[13]: Դա «հետկեսօր» կամ «հետմիջօրե» իմաստն է, այ-

---

[8] **Մալխասեանց Ս.**, նշվ. բառարանը:

[9] Նույն տեղում, հ. 4, 1945:

[10] *Ժամանակակից հայերենի բացատրական բառարան,* հ. 4, 1980:

[11] **Աղայան Էդ,** նշվ. բառարանը, հ. 2, 1976

[12] **Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ.,** նշվ. բառարանը, հ. 2, 1981:

[13] Պետրոս վարդ. Ճիզմեճեանի «Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարանում» (հ. 2, Հալէպ, 1957), որպես *ցերեկ* բառի երկրորդ իմաստ հիշատակվում է *կեսօր*-ը:

սինքն՝ կեսօրից մինչև երեկո ժամանակահատվածը: Այս երկրորդ իմաստով *ցերեկ* բառը հակադրվում է *առավոտ*-ին (հմմտ. *առավոտյան ժ. 9-ին* և *ցերեկվա ժ. 2-ին*)[14]:

Հիշյալ իմաստը վկայված չէ նաև ռուս-հայերեն բառարաններում[15]: Որպես пополудни բառի համարժեք տրված են «կեսօրից հետո, ճաշից հետո» կապային կառույցները և գործածության մեկ օրինակ՝ *в три (два) часа пополудни - ժամը երեքին (երկուսին) կեսօրից հետո*: Մինչդեռ հայերենում, մանավանդ կենդանի խոսքում հաջողությամբ գործածվում է *ցերեկ*-ը:

Այլ է վիճակը անգլերեն-հայերեն բառարաններում[16]:

Ցերեկ բառն այս երկրորդ իմաստով արձանագրված է որպես անգլերեն afternoon բառի համարժեք:

Գիշեր-ցերեկ հակադրության հիման վրա օրվա ժամերը հաշվարկվում են 12-ժամյա երկու շրջափուլերով: Եթե անգլերենում օգտագործվում է ժամերի հաշվարկի հենց այս ձևաչափը, և կեսգիշերից մինչև կեսօր ժամերը նշանակվում են AM (լատ. ante meridiem), իսկ կեսօրից հետո մինչև կեսգիշեր PM (լատ. poste meridiem) հապավումներով[17], ապա

---

[14]Կան առանձին օրինակներ, որոնցում ցերեկվա ժամերը հաշվարկվում են ժ. 11-ից, ինչպես՝ Եվ ահա, նրա գնալուց ընդամենը մի օր հետո, *ցերեկվա* ժամը մոտավորապես *11-ին*, հանկարծ փակեց «Լույսի» գրասենյակը... (Եղ. Չարենց), Սկիզբը՝ *ցերեկը Ժամը 11-30-ին,* երեկոյան 7-30-ին (Բանվոր, 27.08.1959): Հետաքրքրական է, որ ԱՐԵՎԱԿ-ում գտնված այս և նման հատուկենտ օրինակները մինչև 1960-ական թվականների տեքստերից են:

[15] *Ռուս-հայերեն բառարան*, ՀՍՍՌ ԳԱԱ, հ. 3, Երևան, 1957, **Ա. Ղարիբյան**, *Ռուս-հայերեն բառարան*, 1977:

[16] Տե՛ս *Անգլերեն-հայերեն բառարան*, խմբ. Հ. Ասմանգուլյան և Մ. Հովհաննիսյան, Երևան, 1984, **Ն. Բարաթյան**, *Անգլերեն-հայերեն բառարան*, Երևան, 2011:

[17] Չվացուցակներում գործում է ժամերի հաշվարկի 24-ժամյա ձևաչափը:

հայերեն և ռուսերեն խիստ պաշտոնական խոսքում գործում է 24-ժամյա ձևաչափը: Սակայն հայերեն (նաև անգլերեն, ռուսերեն) ոչ պաշտոնական խոսքում ժամերի հաշվարկը կատարվում է չորս շրջափուլով՝ *գիշերվա ժամեր* (կես-գիշերից մինչև մոտավորապես ժ. 4.00-ը), *առավոտյան ժամեր* (ժ. 4.00 - կեսօր), *ցերեկվա ժամեր* (կեսօրից մինչև ժ. 18.00-ը), *երեկոյան ժամեր* (ժ. 18.00- կեսգիշեր)[18]: Ժամային այս բաժանումը, իհարկե, պայմանական է: Այն հաճախ կատարվում է տարբեր հիմունքներով (նույնիսկ մեկ մշակույթի շրջանակներում): Այսպես, բրիտանական և ամերիկյան մշակույթներում, որտեղ հիմնականում գործածվում է 12-ժամյա ձևաչափը, ժ. 2.00-ը սովորաբար ներկայացվում է որպես առավոտյան ժ. 2.00: Հիմնավորումն այն է, որ AM-ով հատկանշվող ժամերը պետք է համարվեն առավոտյան ժամեր[19]: Սա գուցե խիստ պայմանական, բայց հստակ սահմանազատում է[20]:

---

[18] Քանի որ այս բաժանումը հիմնվում է գլխավորապես արևածագի և մայրամուտի վրա, որոնք աշխարհագրական տարբեր գոտիներում ու լայնություններում տարբեր ժամերի հետ են կապվում (կեսօրն ու կեսգիշերը կայուն են), երբեմն որպես առավոտյան և երեկոյան ժամերի ելակետ կարող են տարբեր ժամեր ընդունվել (օրինակ՝ առավոտը ժ. 6.00-ից, երեկոն՝ ժ. 20-ից և այլն):

[19] PM-ով հատկանշվող ժամերը համարվում են ցերեկվա և երեկոյան ժամեր, ընդ որում՝ «երեկո» իմաստով հաճախ գործածվում է *գիշեր* (night) բառը (last night at 7 o'clock – երեկ երեկոյան ժ. 7-ին):

[20] Ոչ պաշտոնական խոսքում այդ նույն ժամը կարող է ներկայացվել նաև որպես գիշերվա ժ. 2.00: Ընդ որում՝ սրա հիմնավորումը մարդկային ընկալման արդյունք է, խիստ սուբյեկտիվ և որոշակիությունից զուրկ: Կարծիք կա՝ եթե մարդն այդ ժամին պառկում է քնելու, ուրեմն գիշերվա 2.00-ն է, իսկ եթե ժ. 2.00-ին արթնացել է քնից, նրա համար կլինի առավոտյան ժ. 2.00-ը: Սա կարող է մեկ այլ պատճառ էլ ունենալ, այն է՝ բազմամշակույթ երկրներում մշակութային տարբեր մոտեցումների միձուլումը:

Ինչպես տեսանք, օրվա շրջապտույտը (24 ժամ) պայմանականորեն բաժանված է երկու հավասար՝ 12-ժամյա մասերի (գիշեր-ցերեկ), սակայն իրականում գիշերային և ցերեկային հատվածների տևողությունը պայմանավորված է աշխարհագրական լայնությամբ, պտույտի ուղեծրի նկատմամբ երկրագնդի առանցքի թեքության աստիճանով և այլն: Մթի և լույսի հարաբերակցությունը տարբեր է երկրագնդի ոչ միայն տարբեր հատվածներում, այլ նաև նույն հատվածում՝ տարվա տարբեր եղանակներին:

Երկրագնդի տարբեր մասերում տարբեր են ոչ միայն գիշերվա և ցերեկվա տևողությունը, այլ նաև օրվա այդ հատվածների բնութագրերը: Օրինակ՝ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են *բևեռային գիշերը* (արեգակը 24 ժամից ավելի և մինչև վեց ամիս հորիզոնից վեր չի բարձրանում) և *բևեռային ցերեկը* (արեգակը 24 ժամից ավելի հորիզոնից ցած չի իջնում), լիակատար մթության կամ լույսի հետ չեն կապվում. օրվա մի մասը աղջամուղջ է: Այդպես էլ *սպիտակ գիշերները,* երբ բնական լուսավորությունն այնչափ չի նվազում, որ լիովին մթնի, և ամբողջ գիշեր աղջամուղջ է լինում[21]:
Հետաքրքրական է, որ *սպիտակ գիշերներ*-ը և *բևեռային գիշեր*-ը արձանագրված են ժամանակակից հայերենի ակադեմիական բառարանում (համապատասխանաբար *սպիտակ* և *բևեռային* գլխաբառերի ներքո), *սպիտակ գիշերներ*-ը՝ էդ.

---

[21] Բևեռային գիշերներն ու ցերեկները հյուսիսային և հարավային բևեռային շրջագծերից մինչև բևեռներ ընկած տարածքներին բնորոշ երևույթներ են, իսկ սպիտակ գիշերները՝ բևեռային շրջագծերին հարող՝ մերձբևեռային շրջաններին: Ու թեև բևեռային ցերեկներն ու սպիտակ գիշերներն արտաքուստ բավական նման են և երբեմն շփոթվում են կամ նույնացվում, սակայն տարբերությունն այն է, որ բևեռային ցերեկների դեպքում արևը հորիզոնի գծից ցած չի իջնում, իսկ սպիտակ գիշերներին իջնում է, բայց ոչ լիովին:

Աղայանի բացատրական բառարանում[22] (*սպիտակ* գլխաբառի ներքո)[23], սակայն երևույթի բացատրությունը հիշյալ բառարաններում այնքան էլ ճշգրիտ չէ: Այսպես, ակադեմիական բառարանում սպիտակ գիշերը մեկնաբանվում է որպես «բևեռային գիշեր, երբ օրը չի մթնում». նույնացվել են բնության երկու տարբեր երևույթներ՝ բևեռային գիշերը և սպիտակ գիշերը[24]: Իսկ Աղայանի բառարանում *սպիտակ գիշեր* երևույթի բացատրության մեջ («հյուսիսային բևեռին մերձավոր տարածություններում գարնան և ամռան՝ *ցերեկվա նման լուսավոր* (ընդգծումը մերն է - Ն.Հ.) կարճ գիշերները») ևս որոշ անճշտություն կա. սպիտակ գիշերներին լուսավորությունը ցերեկվա պայծառությունը չունի, այլ հիշեցնում է երեկոյան և առավոտյան աղջամուղջը:

Դժվար է միանշանակ ասել, թե վաղնջական ժամանակներում մարդկանց պատկերացման մեջ ինչպիսին է եղել

---

[22] *Բևեռային ցերեկ*-ը հիշյալ բացատրական բառարաններում ներկայացված չէ: Բայց երեքն էլ կան Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» (տե՛ս полярный և белый գլխաբառերը):

[23] Բառարաններում այս երևույթի արձանագրումը թերևս պայմանավորված է նրա մշակութային արժեքով. սպիտակ գիշերները Սանկտ Պետերբուրգի խորհրդանիշն են, սպիտակ գիշերներին տարբեր փառատոներ են անցկացվում Ռուսաստանի մի շարք քաղաքներում, սպիտակ գիշերների պատկերը հանդիպում է գրական ստեղծագործություններում (օր.՝ Ա. Պուշկինի «Պղնձե հեծյալ»-ում, Ֆ. Դոստոևսկին էլ «Սպիտակ գիշերներ» վերնագրով վիպակ ունի) և այլն:

[24] Նույն բառարանում *բևեռային գիշեր*-ը բացատրվում է որպես «բևեռային շրջաններում տարվա այն մասը, երբ արևը բոլորովին չի ծագում»: Մինչդեռ հայտնի է, որ սպիտակ գիշերները նախ՝ բնորոշ են ոչ թե բևեռային, այլ մերձբևեռային շրջաններին, երկրորդ՝ բևեռային գիշերներին արևը հորիզոնի գծից վեր չի բարձրանում, իսկ սպիտակ գիշերներին այն հորիզոնի գծից շատ քիչ է ցած իջնում:

լույսի և մթի, ցերեկվա և գիշերվա հարաբերակցությունը, բայց կարելի է ենթադրել, որ թեև մթությունն առաջնային[25] է եղել, սակայն լույսը՝ գերիշխող: Դա թերևս ապացուցում է աստվածաշնչյան հայտնի *եղիցի լույս* արտահայտությունը, որով լույսն[26] ընկալվում է որպես Աստծու պարգև:

Գիշեր - ցերեկ հարաբերակցության մեջ օրվա լուսավոր հատվածն ընդհանուր առմամբ իր ընդգրկմամբ գերազանցում է մութ հատվածին: Դա պայմանավորված է նրանով, որ արևի՝ հորիզոնի գիծը հատելուց առաջ (արևածագից առաջ) և հետո (մայրամուտից հետո) մթնոլորտի վերին շերտերն անդրադարձնում են արևի ճառագայթները՝ լուսավորելով երկրի մակերևույթը: Ուստի մարդու գիտակցության մեջ ցերեկը արշալույսին նախորդող և վերջալույսին հաջորդող աղջամուղջի հետ միասին (ամբողջ ժամանակահատվածը, երբ մարդու աչքը կարողանում է շրջապատում նշմարել ու զատորոշել կամ տեսնել առարկաները) ավելի երկար է, քան գիշերային մթությունը:

---

[25] Ինչպես նկատում է Ե. Դուկովը, «Հին կտակարանի գրքերից առաջինում հիշատակված երրորդ իրողությունը խավարն էր, որն ընդգրկում էր ամեն ինչ: Բայց եթե Երկինքն ու Երկիրը արարման արդյունք էին, ապա խավարն առկա էր ի սկզբանե: Նրանում և նրա հետ կապված՝ Աստվածաշնչի տեքստում հայտնվում է երրորդ արարչագործությունը՝ Լույսը, և տիրող խավարն այդ ժամանակ միայն ստանում է *գիշեր* անվանումը»: Տե՛ս **Дуков Е. В.** *Ночь и город* // От заката до рассвета: Ночь как культурологический феномен. СПб., 2005, էջ 11:

[26] Միջնադարյան քրիստոնեական աստվածաբանությունն Աստծու արարած լույսը մեկնաբանում էր որպես հակադրություն մինչքրիստոնեական խավարին (Տե՛ս **Даяндорж А. Д. А.** *Отношение к времени как выражение целостности мировосприятия: концепт "день" в русском и монгольском языке (на материале письменных памятников)* // Известия РГПУ им. А.И. Герцена. 2008. №80.

Օրվա լուսավոր հատվածը մարդու կողմից կարևորվել է հատկապես նրանով, այդ հատվածում է մարդն ստանում աշխարհի վերաբերյալ գիտելիքի զգալի մասը, և հենց այդ ժամանակահատվածն է առավել նպաստավոր ու արդյունավետ նրա կենսագործունեության համար[27]: Մինչդեռ մթության մեջ մարդը «կորցնում» է տեսնելու կարողությունը, և «գիշերային» գիտակցությունը ծնում է երազներ, երևութականություն, ցնորական և երևակայական պատկերներ[28]: Թերևս դրանով են պայմանավորվում գիշերվան վերագրվող խորհրդավորությունը, անիմանալիությունն ու չարագուշակությունը[29], և զգալիորեն սահմանափակվում նաև մարդու՝ գործելու հնարավորությունները: Վերջին մի քանի տասնամյակներում, սակայն, մեծապես փոխվել է գիշերվա նկատմամբ մոտեցումը: Լույսով ողողված գիշերային քաղաքներում գիշերը կորցրել է իր գլխավոր բնութագրիչը՝ մթությունը, իսկ դրա հետ՝ նաև որոշակի խորհրդավորությունը: Հատկապես մեծ քաղաքներում ակտիվացել է գիշերային կյանքը՝ գիշերային զվարճանքի վայրեր, գիշերային առևտուր (24-ժամյա խանութներ, դեղատներ, գիշերային շուկաներ), առևտրի և թանգարանային գիշերներ և այլն[30]:

---

[27] *Օր* բառի *օրվա լուսավոր հատված* իմաստի մասին տե՛ս նաև **Ն.Հեքեքյան**, *Օրվա ըմբռնումը և* օր *բառի իմաստային վերլուծությունը լեզվամշակութամաբանական տեսանկյունից*, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևանի Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարան, Երևան, 2013, էջ 63:

[28] Տե՛ս **Левин, Л.И**. *Концепт ночи в городской культуре.* //Ночь: Ритуалы, искусство, развлечения. Глубины темноты. М., 2009.

[29] Տե՛ս **Зуева М.** *Ночи черные.* // От заката до рассвета: Ночь как культурологический феномен. СПб., 2005:

[30] Ուշագրավ է, որ ժամանակակից աշխարհում գիշերվա և ցերեկվա սահմաններն ու ընկալումները ոչ միայն խախտվում, այլև որոշ դեպքերում ջնջվում են, և ժամանակի շրջապտույտն ասես «կանգ է առնում» որոշակի կետում: Դա բնորոշ է անլուսամուտ կամ ան-

Օրվա շրջափուլի հիշյալ երկու հատվածներին բնորոշ են վառ արտահայտված որակական բնութագրերը, որոնցով էլ պայմանավորվում են դրանց տարբեր ընկալումները: Վերջիններս կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Գիշերվա խորհրդանիշային ընկալումներ

- լուսային՝ *մթություն, խավար*
- գունային՝ *սև*
- ձայնային՝ *լռություն*
- հատկանշային՝ *մռայլություն, խորհրդավորություն, անիմանալիություն, չարագուշակություն,*
- զգացական՝ *վախ, սարսափ, անհանգստություն*
- խորհրդանշային արժեք՝ *զառամություն, մահ*

Բերենք բնագրային մի քանի օրինակներ:

Մութ, խավարային *գիշեր էր* (Ռաֆֆի), ***Սև գիշե՛ր,*** *և հուշե՛ր, և խոհե՛ր անհամար ...*(Վ. Տերյան), *Ահա և նա... իրար գըտան...****Խորհրդավո՛ր լուռ գիշեր*** *...*(Հովհ.Թումանյան), *Ծանրացել է* ***մռայլ գիշերը*** *հողմերի քաղաքի վրա* (Ռ.Աթայան), *Դեպի* ***գիշերը*** *կը քալեմ* (Գ. Զոհրապ):

Ցերեկվա խորհրդանիշային ընկալումներ

- լուսային՝ *լույս*
- գունային՝ *սպիտակ, ոսկեգույն*
- ձայնային՝ *աղմուկ, թնդյուն*
- հատկանշային՝ *պարզություն, պայծառություն*
- զգացական՝ *ուրախություն, հույս, լավատեսություն*
- խորհրդանշային արժեք՝ *երիտասարդություն, կյանք*

Այսպես՝ *Ամբողջ օրը* ***լույս ցերեկ*** *չի լինի, գիշեր էլ կա....* (Ռ. Պատկանյան), *Նրա դեմքի վարդակարմիրն ավելի վառ*

թափանց և մթնեցված լուսամուտներով շինություններում տեղակայված առևտրի կենտրոններին ու խաղատներին, որտեղ մարդը կորցնում է ժամանակի զգացողությունը, որովհետև այնտեղ օրվա ցանկացած պահի «միևնույն ժամն» է, որովհետև մարդը չի տեսնում լույսից մութի անցումը, ժամերի աստիճանական փոփոխությունը:

էր, և սպիտակությունն ավելի ***սպիտակ, քան ցերեկվա*** *ամենասիրագեղ* ***ժամերին*** (Բալզակ), ***Ցերեկվա սպիտակ լույսը*** *անտանելի այրում էր նրա աչքերը* (Ջ. Լոնդոն), ***Ցերեկվա ոսկի լույսերը*** *մեռան....* (Ավ. Իսահակյան), *Եվ ապա, երբ դառնում է օրը* ***Շառաչուն, թնդացող ցերեկ*** *- Իրարից բաժանվում են բոլորը, Ցրվում են ամենուրեք* (Եղ. Չարենց), ***Պայծառ ցերեկ*** *էր, ջինջ կապույտ երկինք* (Հմ. Սիրաս), *Սակայն* ***ցերեկվա նման պարզ*** *այս գործում ես ոչ մի գաղտնիք չեմ տեսնում* (Մ. Սարգսյան), *Ցերեկը լավ է այնքան,* ***ցերեկը խինդ է բերում*** *....* (Եղ. Չարենց), *....այս արձանախումբը կոչվում է «Գիշեր ու ցերեկ».* ***ցերեկը՝ նորատի աղջկա տեսքով, գիշերը՝ ծերունու*** (Ս. Կապուտիկյան):

Ընդունված է գիշերն ու ցերեկը զուգորդել նաև չարի և բարու, ծածուկի և բացահայտի, մեղքի և անմեղության հետ: Խոսքում առավել հաճախադեպ են ծածուկի և բացահայտի զուգորդումները: Մասնավորապես *օրը ցերեկով* արտահայտությունը նաև «բացահայտորեն, բոլորի աչքի առջև» իմաստն ունի, *գիշերով* բառաձևը հաճախ գործածվում է «ծածուկ, գաղտագողի» իմաստով: Օրինակ՝ *«Գիտնական» Ջ. Բունիաթովը* ***օրը ցերեկով*** (բացահայտորեն-Ն.Հ.) *գողանում է մեր հողն ու մշակույթը* (Ս. Սարգսյան), ***Օրը ցերեկով*** *դաշույններով են հարձակվում մարդկանց վրա* (Գ. Սևունց), *Նիկոդեմոս անունով փարիսեցի մի մարդ կար, մի հրեա իշխան, որ* ***գիշերով*** (ծածուկ, գաղտագողի–Ն.Հ.) Հիսուսի մոտ եկավ (Հովհ. 3.1), *Կասեք, թե՝ «Նրա աշակերտները* ***գիշերով*** *եկան և գողացան մարմինը, երբ մենք քնած էինք»* (Մտթ. 28.13)[31]:

Գիշեր-չարություն և ցերեկ-բարություն զուգորդումներում գերակշռում է առաջինը: Այսպես՝ *Մեր պատմության դառնաշունչ* ***չար*** *ու խորշակ* ***գիշերում....*** (Եղ.Չարենց),

---

[31] *Աստվածաշունչ, Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի,* Աշխարհաբար նոր թարգմանություն, Երևան, ՀԱԸ, 2001:

Գիշերն *ինչ-որ* ***չար*** *է, կարծես թաքնվել, սպասում է* (Ն. Օստրովսկի), *Քանզի կյանքը չարով լի է, ով մշտակա* ***չարի գիշեր*** (Հովհ. Շիրազ): Ցերեկ-բարություն զուգորդումն ավելի հաճախ դրսևորվում է գիշերվա և չարության հետ հակադրամիասնության մեջ, ինչպես՝ *... դրանց երկնամերձ գագաթներով է կարգավորում* ***ցերեկն ու գիշերը, բարին ու չարը*** *աշխարհի վրա* (Զ. Դարյան), *Եթե .... բարության* ***ցերեկներ*** *լինեին* ***չարության գիշերների*** *փոխարեն...* (Հովհ.Մելքոնյան):

Տիպական է նաև գիշերվա զուգորդումը մեղքի հետ: Օրինակ՝ *Ասում են՝* ***գիշերը մեղքի ընկերն*** *է* (Մ.Սարգսյան), *Իր նոր ամուսինը, որ արքա է երկրում այսօր, կմնա իր* ***մեղավոր գիշերների*** *ու հանցավոր մահճի պատասխանատուն* (Վ. Փափազյան),*....երկու երգ ունի, որոնցից մեկը «****Մեղավոր գիշերն****» է* (Առավօտ, 08.02.2003), *Եվ* ***մեղքի*** *հազար* ***գիշերներ*** *նորից Գոռում են նրանց թույլ ոտքերի տակ* (Ռ.Դավոյան): Անմեղություն-ցերեկ կապը թերևս մեղքի հետ գիշերվա զուգորդման հակադրությունն է միայն:

Գիշերվա և ցերեկվա այս հատկանիշներն ու ընկալումները թեև գերիշխող են, սակայն ոչ բացարձակ: Անշուշտ, գիշերները միշտ չէ որ մռայլ են ու մութ, իսկ ցերեկները՝ պայծառ ու խնդուն: Ցերեկը նույնպես կարող է բնութագրվել մռայլությամբ ու տրտմությամբ: Հմմտ. *Էլի անօթևան գիշեր, էլի* ***տառապալից ցերեկ*** (Հմ. Սիրաս), *Նրա կյանքի* ***անուրախ ու մռայլ ցերեկը*** (երիտասարդությունը-Ն.Հ.) *վաղուց էր անցել....* (Ի. Տուրգենև): Սակայն այդ հատկանիշները ցերեկվան ավելի քիչ են բնորոշ, քան գիշերվան՝ անդորրն ու խաղաղությունը, հմայքն ու գեղեցկությունը, պայծառությունն ու լույսը: Օրինակ՝ *Գարնանային* ***պարզ, զրնգուն գիշեր*** *էր* (Ստ. Զորյան), *Տարօրինակ էր թվում այդպիսի* ***խաղաղ ու լույս գիշեր*** *թշնամու, պատերազմի, արյունահեղության հնարավորություն* (Ստ. Զորյան), *Ի՜նչ* ***ուրախ գիշեր*** *էր, ի՜նչ ուրախ գիշեր...* (Հովհ. Թումանյան), ***Լուսնկա պայծառ***

գիշեր** է, աննկարագրելի պայծառություն ...*(Ավ. Իսահակյան), Երկրին իջավ ***արծաթ գիշեր.... (Գ. Սարյան), ...***կապույտ գիշերները** հալվում են անզոր* (Ֆ. Կիրակոսյան):

Ինչպես տեսնում ենք, գիշերվա ընկալումները շատ ավելի բազմազան են ու տարողունակ, քան ցերեկվանը, տարբեր է նաև դրանց գեղագիտական արժեքը: Թերևս սրանով կարելի է բացատրել գեղարվեստական խոսքում գիշերվա հակադրումը ոչ թե ցերեկվան, այլ նրա խորհրդանիշ լույսին (*Ծանրամահ երա՞զ, թե՞ մահ արթնությամբ. **Ո՛չ գիշեր, ո՛չ լույս**...* (Դ. Դեմիրճյան), ***Գիշերվա** ծոցում խորհուրդներ կային, **լույսի** շուրթերին՝ քնքուշ շշուկներ* (Վ. Հարությունյան), ***Գիշերն** անցնում է. **լույսը** մոտենում է* (Շիրվանզադե), ***Գիշերս** մնամ, **լույսին** շարունակեմ ճամփես* (Վ. Անանյան) և այլն) [32], ինչպես նաև գիշերվա պատկերի ավելի հաճախակի[33] օգտագործումն ու գիշերային տրամադրությունների արտահայտումը[34]:

---

[32] *Ցերեկ*-ը երբեմն ոչ միայն փոխարինվում է *լույս*-ով, ինչպես՝ *Ես պիտի այս մարդկանց **լույսով*** (ցերեկով – Ն.Հ.) *տեղ հասցնեի* (Լ. Մանուկյան), այլև զուգադրվում է նրա հետ, ինչպես՝ ***Լույս ցերեկով** պետք է այնտեղ ճրագ վառել, որ աչքդ բան տեսնի* (Ռաֆֆի):

[33] Խոսքում առհասարակ *գիշեր* և *ցերեկ* բառույթների գործածության հաճախականությունը, ըստ ԱՐԵՎԱԿ-ի տվյալների, այսպիսին է. գիշեր՝ 48865 գործածություն, ցերեկ՝ 7132:

[34] Պատահական չէ, որ պոեզիայում ծնունդ է առել գիշերերգությունը, որի ակնառու ներկայացուցիչը հայ գրականության մեջ Միսաք Մեծարենցն է: Նրա ստեղծագործություններում երկու տեսակ գիշեր կա՝ «լուսավետ կամ մթաստվեր»: Առաջինը կապվում է երազանքի, սիրո, սպասումի հետ, իսկ երկրորդը խավարի, ցավի ու մահվան խորհրդանիշն է: Սակայն նրա «գիշերը և գիշերերգությունը միտված են ոչ թե դեպի խավարը, այլ՝ դեպի լույսը և արևը: Գիշերը գրեթե ողողված է շողարձակող լույսերով» (**Հ., Ռշտունի,** *Միսաք Մեծարենց (Ծննդյան 100-ամյակի առթիվ)*, Պատմաբանասիրական հանդես, 1986, № 2):

Գիշեր և *ցերեկ* բառերի պատկերավոր (փոխաբերության ու անձնավորման վրա հիմնված) ընկալումներից են՝

➢ գիշերը / ցերեկը որպես տարածության մեջ շարժվող մի բան

Գիշերը եկավ *վերքերի ցավով...* (Մետաքսե), ... ***Գիշերն անցնում է, գալիս է ցերեկը*** *՝ լույսը* (Ս. Խանզադյան), ***Գիշերը հասավ,*** *ու ես դաղարած «Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին* (Հովհ. Թումանյան), ***Անցավ ցերեկը: Վրա հասավ գիշերը*** (Ա. Հովսեփյան):

Գիշերն ու ցերեկը, որոնք ուղղակիորեն պայմանավորված են երկնային լուսատուների դիրքով, կապվում են երկնքի ու մթնոլորտային երևույթների հետ, հաճախ զուգորդվում են տարածության մեջ ուղղահայաց շարժվող առարկաների հետ: Ընդ որում, քանի որ օրը մթնում է, երբ Արեգակն իջնում է հորիզոնի գծից ներքև, և լուսանում, երբ բարձրանում է հորիզոնի գծից վեր, գիշերը զուգորդվում է վայրընթաց շարժման հետ (*ընկնել, իջնել*), իսկ ցերեկը՝ վերընթաց (*ելնել*):

Ու ***գիշերը իջնում էր*** *մթին ...* (Եղ. Չարենց), ***Գիշերը ընկավ,*** *թանձրացավ մութը, Ու նրվաղեցին ձեները տրրտում....*(Հովհ. Թումանյան), ***Գիշերն ընկավ*** *եթերից. դեռ տաք էր* (Ստ.Ալաջաջյան), ***Ելավ ցերեկը,*** *իր կապտակապույտ թիկնոցը հագավ....* (Վ. Հարությունյան):

➢ գիշերը/ցերեկը որպես կենդանի արարած (անձնավորում է)

Ցերեկը մեռավ *լեռան կատարին* (Հ.Սահյան), *Մռայլ* ***գիշերն է լռում....*** (Վ. Տերյան), ***Գիշերը*** *իջավ ու* ***նստեց*** (Մ. Սարգսյան), *Ցերեկը* ***լռեց*** (Վ. Տերյան), *Երևի այդօր* ***ցերեկը ձգվեց*** *քնից նոր զարթնած կտրիճի նման* (Պ. Սևակ), *Եվ* ***ցերեկը վռնդում է*** *գիշերին* (ֆրանսիական քնարերգությունից), *Սառը* ***համբուրեց*** *նրան* ***գիշերվա սև շրթունքը*** (Դ. Դեմիրճյան):

➢ գիշերը/ցերեկը որպես զետեղարան

Գիշերը լի էր *խոր լռությամբ* (Ա.Կուպրին), *Ճամբարային* ***ցերեկը լցված է*** *մեծ բովանդակությամբ* (Հր. Հովհաննիսյան), *.... ձմռան պարզկա* ***գիշերը լցվեց*** *շան աղեկտուր կաղկանձով* (Մ. Գալշոյան):

➢ գիշերը/ցերեկը որպես անշարժ տարածություն՝ շարժվող առարկայի տեսանկյունից

Սկսվեց *մռայլ* ***ցերեկը*** *....* (Զ. Լոնդոն), *Հունվարյան կարճատև* ***ցերեկը*** *շուտով* ***կվերջանար*** (Հ. Սիրաս), *Շատերի գիտակցության մեջ* ***գիշերը սկսվում է*** *այն պահից, երբ իրենք քնում են* (Առաւօտ, 26.11.2005):

➢ գիշերը/ցերեկը որպես ունեցվածք, արժեք

Այս ընկալումը կապվում է առավելաբար գիշերվա հետ:

Ասում են՝ Փարիզը ***գիշեր չունի*** (Ա. Այվազյան), *Իսկ քո բախտը բերել է, առջևում դեռ* ***երկու գիշեր ունես*** (Է. Հեմինգուեյ), *Դա ի՞նչ կյանք է.* ***ո՛չ գիշեր ունի, ո՛չ ցերեկ*** :

➢ գիշերը/ցերեկը որպես մի բան ունեցող

Անտառային ***գիշերը կորցրել էր*** *իր ավանդական խշշոցն ու հանդարտ շնչառությունը* (Մ. Սարգսյան), ***Գիշերն ունի*** *ամեն բանի թույլտվություն* (Պ. Սևակ), *.... նույնիսկ* ***ցերեկը կորցնում է*** *իր լույսը մարդասպանի ձեռքին* (Ա.Կուպրին):

➢ գիշերը/ցերեկը որպես առաձգականություն ունեցող

Օրերը իրար հետևից գլորվում էին, և ***ցերեկը՝*** *աստիճանաբար* ***երկարում*** (Ատրպետ), ... ***ցերեկը տարի էր դառնում,*** *ու արևը մայր չէր մտնում* (Զ.Դարյան), ... *քեֆ անենք,* ***ցերեկը երկարացնենք, գիշերը կարճացնենք*** (Հովհ. Թումանյան), *Նա կկամենար, որ վերջին* ***գիշերը երկարեր*** *մինչև հավիտյան* (Դ. Դեմիրճյան), *Այս ասելուց հետո Արամազդը* ***ցերեկը կարճացնում*** *է, դարձնում է մի քանի ժամ, իսկ մնացած մասով* ***երկարացնում գիշերը*** (Հ. Խաչատրյան):

➢ գիշերը որպես քաշ՝ կշիռ ունեցող

*Խավար **գիշերը ծանրացավ** ահա դաշտերի վրա* (Հովհ. Թումանյան), ***Գիշերը ծանրացել**, տարի է տարձել* (Վ. Արամյան):

➢ գիշերը որպես քող՝ ծածկոց

*Մութ **գիշերը պատել էր** նրանց, դարձրել անտեսանելի* (Գրական թերթ, 20.08.1965), *Եվ այդ անսահմանության վրա տարածվել է չարիքը, չարիքն ու մահը պատել են այն, ինչպես **գիշերն է պատում** երկինքը* (Ա. Ֆրանս), ***Գիշերը** սև քողի նման **ծածկել էր** շրջակա բլուրները, Դոնի ափերը ...* (Մ. Շոլոխով)

➢ ցերեկը որպես՝ շողշողուն մի բան

*Քիչ հետո արևի ծիրը բացվեց, և ընդհատված **ցերեկը** պայծառորեն **շողաց*** (Խ. Դաշտենց)

➢ ցերեկը որպես աներևութացող մի բան

*Վերջապես **հալվեց ցերեկը**, իջավ երեկոն....* (Մ. Կորյուն), *Հազար գիշեր լուսացավ, **մարեց** հազար **ցերեկ*** (Լ. Միրիջանյան), *Քրիստոնյա **ցերեկներն անէանան** թող անհետ* (Հովհ. Շիրազ):

Այսպիսով, *գիշեր* և *ցերեկ* բառերի իմաստային կառուցվածքի քննությունը ցույց տվեց, որ՝

- *գիշեր* և *ցերեկ* բառերը հայերեն բառարաններում բացատրվում են առավելաբար լույսի և մթի (առավոտ-իրիկուն, արևածագ-մայրամուտ) հակադրությամբ, ավելի սակավ՝ Արեգակի դիրքով,
- *ցերեկ* բառը «հետմիջօրե՝ հետկեսօր» իմաստով արձանագրված է միայն անգլերեն-հայերեն բառարաններում:

Մշակութաբանական տեսանկյունից գիշերվա և ցերեկվա քննությունը ցույց տվեց, որ՝

- օրվա լուսավոր հատվածը՝ ցերեկը, մարդու կողմից ավանդաբար ավելի կարևոր ու արժեքավոր է համարվել որպես իր կենսագործունեության համար նպաստավոր ժամանակահատված, սակայն վերջին մի քանի տասնամյակներում

գիշերային կյանքի աշխուժացման հետևանքով մարդկանց գիտակցության մեջ փոխվել է գիշերվա նկատմամբ վերաբերմունքը.

- ժամերի հաշվարկի՝ տարբեր երկրներում ընդունված պաշտոնական 24-ժամյա կամ 12-ժամյա ձևաչափերից բացի ոչ պաշտոնական խոսքում գործածվում է նաև քառափուլ ձևաչափը (գիշերվա, առավոտյան, ցերեկվա, երեկոյան ժամեր), որով սակայն հստակորեն չեն սահմանազատվում ժամային սահմանները ոչ միայն տարբեր մշակույթներում, այլև նույն մշակույթի շրջանակներում,
- ցերեկն ու գիշերը ունեն իրենց խորհրդանշային համարժեքները, ինչպես նաև տարբեր զուգորդումների վրա հիմնված ընկալումներ,
- *գիշեր*-ը գործածության ավելի մեծ հաճախականություն ունի, քան *ցերեկ*-ը, գիշերվա ընկալումները շատ ավելի բազմազան են ու տարողունակ, ավելի մեծ է նաև նրա գեղագիտական արժեքը:

Hekekyan Narine - Semantic Analysis of the Words գիշեր (“night”) and ցերեկ (“day”) in the Linguistic and Cultural Aspects. - The article contemplates the semantic structures of the words գիշեր and ցերեկ (“night” and “day”), perceptions of the night and day, as well as their time boundaries in different cultures. It singles out the symbols-equivalents of the night and day (e.g., darkness-light, silence-noise, old age- youth, death-life, etc.), associations (e.g., secret and explicit, evil and good, etc.), as well as figurative perceptions (e.g., day and night as living beings - գիշերն է լռում, ցերեկը մեռավ; as receptacles - գիշերը լի էր խոր լռությամբ, ցերեկը լցված է մեծ բովանդակությամբ; as possessing something - գիշերը կորցրել էր .... խշշոցը, ցերեկը կորցնում է իր լույսը; night presented as a veil, cape - գիշերը ծածկել էր բլուրները; day presented as a vanishing thing - հալվեց ցերեկը, etc.).

Экекян Нарине - Семантический анализ слов *գիշեր* (“ночь“) и *ցերեկ* (“день”) в лингвокультурологическом аспекте. - В статье рассмотрены семантические структуры слов *ночь* и *день* (арм. *գիշեր и ցերեկ*), восприятия ночи и дня, их временные границы в разных культурах. Выделены символы-эквиваленты ночи и дня (тьма-свет, тишина- шум, старость-молодость, смерть-жизнь), представлены ассоциации (тайное и явное, зло и добро), а также образные восприятия (ночь и день как живые существа- *գիշերն է լռում*, *ցերեկը մեռավ,* как вместилища - *գիշերը լի էր խոր լռությամբ*, *ցերեկը լցված է մեծ բովանդակությամբ,* как обладающие чем-то - *գիշերը կորցրել էր .... խշշոցը, ցերեկը կորցնում է իր լույսը,* ночь как вуаль, накидка – *գիշերը ծածկել էր բլուրները*, день как исчезающий предмет - *հալվեց ցերեկը* и т.д.).

Միքայելյան Ժաննա
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՔԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ[1]

Քննության ենք առել ներկայիս ՀՀ Կոտայքի մարզի մի քանի գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերը՝ հիմնականում համաժամանակյա կտրվածքով: Դրանք են՝ Գառնի, Էլար, Զառ, Պտղնի, որոնք անցյալ դարի 70-80-ական թթ., երբ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները հատուկ կազմած ծրագրով (ՀԲԱ) հավաքում էին հիշյալ գյուղերի խոսակցական լեզուները, այդ բնակավայրերը մտնում էին Աբովյանի վարչական շրջանի մեջ: Հենց տվյալ ժամանակահատվածի բարբառային պատկերն ունենալով՝ կատարել ենք մեր ներկա հետազոտությունները: Հարկ է նշել, որ հավաքչական աշխատանքները հիմնականում կատարվում էին ընկալողական (պերցեպտիվ) մեթոդով:

Գառնի գյուղի բնակչության մեծ մասը 19-րդ դ. սկզբներին գաղթել է Պարսկաստանի Մակու գավառից, մի մասն էլ՝ Արևմտյան Հայաստանի զանազան վայրերից: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգմամբ, որից սովորաբար օգտվում են բարբառագետները, Գառնիի և մեր խնդրո առարկա մյուս գյուղերի խոսվածքները որևէ խմբակցության մեջ ընդգրկված չեն, այս-

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 15T-6B101 «Կոտայքի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի շրջանակներում:

ինքն՝ մինչ այսօր գիտականորեն ուսումնասիրված չեն: Ինչ վերաբերում է Գառնիի խոսակցական լեզվին, ապա ասենք՝ բարբառային այս միավորն իր հնչյունական և քերականական հատկանիշներով ավելի շատ մոտ է արևելյան խմբակցության բարբառներին: Իսկ նյութերը գրի առնող բարբառագետը այն համարում է Մակուի խոսվածք[2]:

Բարբառների բաղաձայնական ենթահամակարգերն ուսումնասիրելիս սովորաբար քննության են առնվում բառասկիզբը՝ որպես հնչյունահնչութային ուժեղ դիրք: Այս մոտեցումով՝ Գառնիի խոսվածքի[3] բաղաձայնական ենթահամակարգը համաժամանակյա կտրվածքում քառաստիճան է: Բառասկզբում գործառում են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, օրինակ՝ *բ՚ներց, բ՚ըռթʰէլ, բ՚ուր, գ՚ացին, գ՚էտին, գ՚ըլօխ, դ՚ալար, դ՚ընʰէլ, դ՚ուս, ձ՚ուն, ձ՚ուկ, ջ՚աղչբպան, ջ՚ուր*. պարզ ձայնեղներ՝ և՛ փոխառյալ, և՛ հայերեն բառերում. *բիբար, բօղազ, բախտ, գօվիկ, դաղ՚աք, ջուվար, ջրհէգ, զառթ, զանʰէլ, ժամ, վէրցընʰէլ, վառʰէլ*. խուլ՝ *պաքʰէլ, պապ, կօվ, կրճատ, կակուղ, տատ, տուն, ծառ, ճրմրռʰէլ, սիվտակ, շուն, շարժʰէլ, խʰէլք, խրմուկ, խրմար, խʷօղ, ֆանար, ֆայմ*. շնչեղ խուլ՝ *փիտʰէլ, քրցիպ, քիչ, քուֆբր, թամաքար* «ագահ», *թուփ, թօռօմէլ, ցուռտ, չաղ, չʷօր* և այլն, հպական, կիսաշփական և շփական բաղաձայններ: Ձայնորդներով սկսվող բառեր, անշուշտ, նույնպես կան խոսվածքում. ինչպես՝ *մէր, մառթ, մասուր, նրման, նրխշուն, նայʰէլ, յարա, յʰէգ, լացʰէլ, լավրնալ, ռաղ, ռաստ*:

---

[2] Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում պահվող *տետր հ. 207*:

[3] Այս և հետազոտվող մյուս բարբառային միավորները պայմանականորեն անվանում ենք խոսվածք՝ չնայած Գ. Ջահուկյանն ընդունելի էր համարում նաև *ենթախոսվածք* տերմինը:

Դատելով վերը բերված շնչեղ ձայնեղներով օրինակներից՝ եզրակացնում ենք, որ դրանք բառասկզբում հանդիպում են միայն բնիկ հայերեն բառերում: Իսկ ձայնեղ հպականներով՝ *բ, գ, դ, ձ, ջ,* սկսվող օտար բառերը նույնությամբ պահել են բառասկզբի իրենց բաղաձայնները: Հետամուտ չլինելով այն իրողությանը, թե բարբառներում հատկապես երբվանից են շնչեղ ձայնեղ հպականներ ի հայտ եկել (գուցե դրանք եղել են վաղնջական ժամանակներից), այնուամենայնիվ, ենթադրում ենք, որ փոխառությունների՝ գրական, թե օտար լեզուներից, խոսվածք ներթափանցման ժամանակահատվածում ձայնեղից շնչեղ ձայնեղի փոխակերպման օրենքը բարբառային այս միավորում չէր գործում:

Գառնիի խոսվածքում բառասկզբի դիրքում, ինչպես դա հատուկ է շնչեղ ձայնեղներ ունեցող այլ խոսվածքների, գործառում է կոկորդային մի հնչյուն, որը Հ. Աճառյանի բնորոշմամբ՝ թրթռուն, այսինքն՝ ձայնեղ հագագ է[4]: Այսպես՝ *ˇառիք, ˇաշկ, ˇառու ˇառէչ, ˇառչի, ˇէռթիս, ˇիրիկուն, ˇէսօր, ˇիրար, ˇիրʰէս, ˇրաէն, ˇընչի, ˇուր, ˇընգʰէր, ˇէրէվան, ˇարցրկʰէլ* և այլն: Նկատենք, որ այս հագագը բարբառներում մեծամասամբ հնչութային արժեք չունի, այսինքն՝ առանց դրա գործառության էլ տվյալ բառի իմաստը չի աղավաղվում:

Գրի առնված ընդամենը մի երկու բնիկ հայերեն բառերի սկզբում հանդիպում է *հ* խուլ հնչյունը, ինչպես՝ *հայրիկ, հավքʰէլ, հընցընʰէլ* «հանգցնել» և փոխառյալ՝ *հէրվան*: Բառասկիզբը բացառված դիրք է *ղ* և *ր* բաղաձայնների համար: Դրանք հանդիպում են բառամիջում և բառավերջում. *փողոց, գʰէղ, իրʰէք, թունդիր* և այլն:

---

[4] **Հ. Աճառյան,** *Լիակատար քերականություն հայոց լեզվի,* հ. 6, Ե., 1971, էջ 174, 246:

Խոսվածքում գործառող մի խումբ օտար փոխառություններում հանդիպում է *ղ* և *կ* բաղաձայններին արտաբերման տեղով մոտ արաբական մի հնչյուն, որը կկոչենք կատկային բաղաձայն: Խոսքը վերաբերում է ձայնեղ հպական *ղ̂*-ին: Այսպես՝ *ղ̂օնաղ, ղ̂ուրուղան, ղ̂այլան* «ծխամորճ», *ղ̂ուլբ, ղ̂այիմ, ղ̂ույղ̂ա, ղ̂ըֆիլ* «կողպեք», *ղ̂աչաղ, ղ̂էյբաթ* «բամբասանք», *ղ̂ըդի* «խուտուտ», *թաղ̂լա տալ* «գլուխկոնձի տալ» և այլն: Դժվար է ասել, սակայն, թե բերված օրինակներն արաբերենից անմիջական են անցել Մակուի բարբառային միավորին կամ արևմտահայերեն այն բարբառներին, որոնց հետ որոշ աղերսներ ունի Գառնիի խոսվածքը, թե դրանք արդեն իսկ միջնորդավորված կերպով եղել են այս խոսվածք թափանցած այլ փոխառյալ լեզուներում:

Գառնիի բառապաշարում բառի տարբեր դիրքերում օրինաչափորեն քմայնացել են *գ, կ, ք* բաղաձայնները և՛ հայերեն, և՛ փոխառյալ բառերում: Օրինակ՝ *գ̈ինի, գ̈էլ, գ̈ուռ* «թեժ», *ցամքէր ա, մէշկ̈ի, քիչ, կ̈էսօր, շէկ̈, կ̈իսրար* «կիսով չափ», *կ̈էրան* «կերան», *տէքʰէրկընիկ, կ̈էսօր, մէկ̈էլօր, փակ̈ʰէլ, խըրկ̈ʰէլ, շիքʰէլ, քէրʰէլ, քընուկ̈, խաքʰէլ, թամախքաար, խօքի:* Հատկանշական է, որ վերոհիշյալ բաղաձայնները բոլոր օրինակներում քմային երանգ են ձեռք բերել առաջին շարքի միջին բարձրացման *է,* նույն շարքի վերին բարձրացման *ի,* հետին շարքի վերին բարձրացման *ու* ձայնավորներից և *ʰէ* բարձրացող երկբարբառից առաջ:

Գառնիի խոսվածքի *է, ի, ը, օ, ու* ձայնավորներն իրենց արտաբերման տեղով ու ձևով չեն տարբերվում գրական հայերենի նույն հնչյուններից: Նշենք, սակայն, որ հետին շարքի *ա*-ն ունի իր քմային՝ առաջնալեզվային լծորդ տարբերակը, այսինքն՝ առաջնային շարքի ստորին բարձրացման *ա̈*

հնչյունը: Օրինակներ. *գ՚ա̈գա̈թ, գ՚ա̈ցին, դ՚ա̈րմա̈ն, բ՚ա̈զուկ, գ՚ընա̈ց ջ՚ա̈դաչ, ջ՚ա̈րթʰէլ, ձ՚ըմա̈<ծմակ, թա̈փվըմ ա, վա̈գնʰէլ, վա̈րʰէլ, էտդա̈* «այդ աստիճանի», *գա̈նʰէլ, գա̈տիկ, գա̈մբուլ, գա̈րթա̈րʰէլ, մինա̈կ, ձ՚ա̈վա̈ր, ք՚ա̈շʰէլ, ք՚ա̈նի, շա̈փա̈թ, փա̈թըտʰէլ, թուրթա̈գ, լա̈լըմ ա, վա̈ռվʰէլ, լըվա̈ցք, վա̈ռէկ, վա̈ստըկʰէլ, վա̈տ, վա̈խկ՝օտ, խա̈րիր, խա̈զա̈ր, խա̈լիվ՝օր, ա̈քլօր, ա̈լուր, ᶜա̈ռիք, ᶜա̈շկ, ᶜա̈րցըկʰէլ* և այլն:

Նպատակ չունենալով խորանալ հնչյունական համակարգի պատմական քննության մեջ,այնուամենայնիվ, ասենք, որ վերոբերյալ օրինակները փաստում են. Խոսվածքում *ա* ձայնավորը բավական օրինաչափորեն ենթարկվել է Աճառյանի օրենքին: Հարկ ենք համարում հիշեցնել, որ օրենքը հեղինակը հայտնաբերել էր Վանի բարբառի բառապաշարի ուսումնասիրության ժամանակ և նա այն տարածում էր միայն *ա* ձայնավորի վրա: Սակայն բարբառների հետագա ուսումնասիրողները, ընդլայնելով այս օրենքի գործառման սահմաններն այլ բարբառային միավորների ընձեռած փաստերի վրա, գտել են, որ *ա*-ն, նույնը նաև *օ-ն, ու-ն,* շատ բարբառներում քմայնանում են ձայնեղ (*բ, գ, դ, ձ, ջ*), որոշ թվով բարբառային միավորներում՝ շնչեղ ձայնեղ հպականներից (*բ՚, գ՚, դ՚, ձ՚, ջ՚*), ձայնեղ շփական և կիսաշփական հնչյուններից (*ժ, զ, վ, ձ, ջ*), շնչեղ խուլերից (*փ, ք, թ*), *ն* և *լ* ձայնորդներից, խուլ շփական *խ*-ից հետո բառի տարբեր դիրքերում[5]:

---

[5] Տե՛ս **Հ. Աճառյան,** *Քննություն Վանի բարբառի,* Եր, 1953, էջ 19, 20, **Հ. Մուրադյան,** *Ինչպես հասկանալ Աճառյանի օրենքը,* Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 2, Եր., 1973 էջ 161, 165, **Ժ, Միքայելյան,** *Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները,* Եր., 2009, էջ 69:

Հայերենի այլ բարբառային միավորների նման, որոնցում գործում է Աճառյանի օրենքը, և ինչպես երևում է քննության ենթակա խոսվածքի՝ վերոբերյալ վերջին օրինակներից, *ա*-ի քմայնացում է առկա ոչ միայն հիշյալ բոլոր հնչյուններից հետո, այլև բառասկզբում (*ա̈քլօր, ա̈լուր*), նաև հավելական (ˇ) հագագից՝ շնչից հետո (ˇ*ա̈ռիք,* ˇ*ա̈շկ,* ˇ*ա̈րցըկʰէլ*) դիրքերում: Քմայնացման այս երկու դեպքերը ավելի քիչ են հանդիպում բարբառներում: Նույն կերպ էլ՝ շնչեղ ձայնեղ հպականներից հետո ձայնավորի՝ տվյալ դեպքում՝ ա-ի առաջընթաց արտասանություն ձեռք բերելը բարբառներում ո՛չ հաճախ հանդիպող երևույթ է:

Գառնիի խոսվածքի փոխառյալ բառերում, եթե փոխատու լեզվում եղել է քմային *ա̈* ձայնավոր, նույն հնչողությամբ պահպանվել է: Այպես՝ *թամաքա̈ր* «ագահ», *խա̈բա̈ր, թա̈րգʲէլ, նա̈րդի, գա̈հլա̈, դա̈լաք, ղա̈լբ, ղա̈յդա̈* և այլն: Ի դեպ, որոշ բաղաձայնների քմային արտասանություն բարբառային այս միավորում, բնականաբար, առկա է նաև առաջնալեզվային *ա̈*-ից առաջ դիրքում (քմայնության նշանը չենք նշել՝ բառերի գրությունը չծանրաբեռնելու համար):

Աճառյանի օրենքը չի տարածվել հետին շարքի մյուս՝ *օ, ու* ձայնավորների, ᵑᵘo երկբարբառի վրա: Այսպես՝ *անօթի, դ̣ուռ, ջ̣ուր, թունդիր, թուփ, խրմᵑᵘօր, ջ̣ᵑᵘօչ, ւᵑᵘօր:* Ուշագրավ է, որ այս խոսվածքի հնչյունական համակարգում նաև չի գործում ձայնավորների ներդաշնակության օրենքը, այսինքն՝ առաջնային շարքի *ա̈*-ի ազդեցությամբ չի քմայնացել հարևան՝ նախորդող կամ հաջորդող, վանկի ձայնավորը: Այսպես՝ *գ̣ա̈րնան, գ̣ա̈ռուն, ջ̣ա̈դաչ, ա̈լբրմաղ, գ̣ա̈լբմա, ա̈լուր, գա̈մբուլ, ա̈քլօր, աղքա̈տ, թութա̈գ* և այլն:

Համոզված կարող ենք փաստել՝ առաջին շարքի *ü* ձայնավորը խոսվածքում ունի հնչութային արժեք այն հիմնավորմամբ, որ եթե նույնիսկ հասկանալի լինի տվյալ բառի-մաստը, երբ այդ ձայնավորի փոխարեն գործածվի գրական հայերենի հնչումն ունեցող, օրինակ, *ա* լծորդ ձայնավորը, ապա բառն արդեն իսկ չի ընկալվի որպես բարբառային:

Գառնիի խոսվածքի հնչյունական համակարգում, ավելի հաճախ՝ բառի փակ վանկում, գործառում են *ʰէ, ᵐᵘо* բարձրացող երկբարբառները: Այսպես՝ *թինգնʰէց, տաքցընʰէլ, դʿʰէդ, յʰէրգինք, գʿᵐᵘօռծ, ջʿᵐᵘօչնալ, խըմᵐᵘօր, խᵐᵘօրիզ:* Սրանք խոսքի շղթայում բառի աճման ժամանակ, եթե երկբարբառով վանկը բացվում է, չեն վերածվում *է* կամ *օ* պարզ ձայնավորների, ինչպես դա հատուկ է ուրիշ բարբառային միավորների, այլ պահպանվում են նույնությամբ: Օրինակ՝ *փըչʰէլ-փըչʰէլօվ, բʿüնʰէլ-բʿüնʰէլէն, մազʰէր-մազʰէրի, նʰէդ-նʰէդացավ, պʰէծ- պʰէծʰէր, յʰէդ- յʰէդի մէջ, ᶜընգʰէր-ᶜընգʰէրᵐᵘօչ, ջʿᵐᵘօչ-ջʿᵐᵘօչըցավ, խᵐᵘօդ-խᵐᵘօդի, խըմᵐᵘօր-խըմᵐᵘօրի, խᵐᵘօրիզ-խᵐᵘօրիզօվ, պᵐᵘօչ-պᵐᵘօչʰէր* և այլն:

Բարբառային այս միավորի բոլոր պարզ ձայնավորները, բացի միջին շարքի *ը*-ից, որով այստեղ չի սկսվում որևէ բառ, խոսքում բացառված դիրք չունեն: Այսինքն՝ նրանք հանդիպում են և՛ բառասկզբում, և՛ բառամիջում ու բառավերջում:

Հիմնական գծերով սա է Գառնի գյուղի խոսվածքի հնչյունական համակարգի ընդհանուր պատկերը:

Մեր ուսումնասիրած հաջորդ բարբառային միավորը նույն տարածաշրջանի Էլար գյուղի լեզուն է[6]: Ներկայումս Էլարը Աբովյան քաղաքի մի թաղամասն է համարվում: Նյութերը հավաքողի գրառմամբ՝ գյուղի բնակիչների նախնիները ներգաղթել են 19-րդ դարի սկզբներին՝ Տաճկահայաստանից,

[6] Բարբառային նյութերից տետր հ. 238:

իսկ թե հատկապես որ բնակավայրերից են եկել, գյուղացիներից ոչ ոք չէր կարողանում հիշել: Խոսվածքը գրի առնող բարբառագետ Ալբերտ Խաչատրյանի վկայությամբ՝ այնքան էլ միատեսակ չէին տարբեր բարբառախոսների արտասանած՝ նույն բառերի բառասկզբի հնչյունները: Խոսեցնելով շատերին՝ բարբառագետը երբեմն նկատել է նման դիրքերում երկբարբառների համահարթեցում կամ շնչեղ ձայնեղների խուլ արտասանություն:Այնուամենայնիվ, խոսվածքի գրառման համար նյութ են տվել տարեց գյուղացիներից հատկապես երեք անձնավորություն՝ ծնված 20-րդ դարի սկզբներին: Բաղաձայնական ենթահամակարգը, ինչպես Գառնիին էր, քառաստիճան է: Բառասկզբի դիրքը նկատի ունենալով՝ փաստենք, որ խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ: Այսպես՝ *բ՝ազուկ, բ՝աժինք, բ՝արցէլ, բ՝արկ, բ՝էրէլ, բ՝ըշտէլ, բ՝ութ, բ՝օվէլ, գ՝ըլօխ, գ՝ացին, գ՝էլ, գ՝ինծ, գ՝ինի, գ՝ընալ, գ՝ունդ, գ՝էրէզման, գ՝ էդ, դ՝արման, դ՝անդուռ, դ՝առը, դ՝ըրին, դ՝էխծ, դ՝ըթում, դ՝ուռ, դ՝ըրկից, դ՝օղալ, ճ՝ընծաղիկ, ճ՝ու, ջ՝արթվէլ, ջ՝աղաչ, ջ՝ուր* և այլն*:* Բացի այդ, բառասկզբում Էլարի խոսվածքում գործառում են հինհայերենյան մյուս բաղաձայնները. *պաղէլ, պօպօք, պատ, տալ, տախտէդ, ծիրան, զամբիլ, զարթարէլ, կէռ, կօվկիթ, կրճուճ, փարչ, փօցըդ, վրգնօց, քավօր, հավ, հաքցընէլ, հարէվան, վօռփէվէրի, քէռի, թաթման, հիվանդ, խառնըվէլ:*

Հատկանշական է, որ բառասկզբում պարզ ձայնեղ հպականները, ինչպես վերոհիշյալ խոսվածքում էր, հանդիպում են միայն փոխառություններում: Այսպես՝*բուզ* «սառույց», *բէզարէլ, գ՝օզլուկ* «ակնոց», *ջանգ՝ուլում, ջընաղ, ջիգ՝ար* և այլն:

Էլարի լեզվում որոշակի թվով բառեր սկսվում են կոկորդային շփական *հ* բաղաձայնով՝ ի տարբերություն Գառնիի, որում դրանց քանակը սահմանափակ է: Այստեղ, սակայն,

հանդիպում է նաև հինհայերենյան *հ> խ* անցում՝ *խատէլ, խամ* «համ», *խայ* «հայ», *խ*ᵐ*օղ, խաչալ* «հաչել» և այլն: Բերենք բառասկզբի *հ-ի* օրինակներ. *հաքցընէլ, հարէվան, հին, հաստատ, հաշիվ, հայլի, հայաթ, հատ, հանէլ, հարցընէլ, հինգ, հէվալ:* Չենք բացառում, որ գուցե սա գրական հայերենի ազդեցություն լինի: Գրանցված բարբառային նյութերում կա մի քանի բաղադրյալ բառ, որոնք բառամիջում պահպանել են *ջ՝* շնչեղ ձայնեղ կիսաշփական հնչյունը: Դրանք են՝ *սապնաջ՝ըրէր, աղաջ՝ըրէր, պարզաջ՝ըրէլ:*

Բավական թվով բառեր սկսվում են հավելական (ᶜ) հնչյունով (շունչ), որը, մեր կարծիքով՝ այստեղ հնչույթի արժեք ունի. ᶜ*էրթիկ,* ᶜ*առու,* ᶜ*ուլունք,* ᶜ*ալիվօր,* ᶜ*էրէս,* ᶜ*ընգէր,* ᶜ*էրէվան,* ᶜ*առձի,* ᶜ*ըմէն,* ᶜ*իրկուն,* ᶜ*էլնէլ,* ᶜ*ընդրէլ* «ընտրել»:

Մի դիտարկում. եթե որևէ բարբառային միավորի խորթ են քմային ձայնավորները, ապա նման հնչյուններ ունեցող փոխառյալ բառերում սովորաբար քմային արտասանություն ունեն միայն տվյալ առաջնալեզվային ձայնավորի հարևանությամբ գտնվող բաղաձայնները: Սա ակնառու փաստ է: Էլարի խոսովածքից բերենք օրինակներ. *ք̈ուլաշ, չանգ̈ալ, ք̈առէշտ, գ̈օզլուկ, ք̈ամար, ջանգ̈ուլում, ջիգ̈ար, կ̈/ք̈առ* և այլն:

Խոսվածքի ձայնավորներն իրենց արտաբերմամբ չեն տարբերվում գրական հայերենի նույն հնչյուններից՝ *ա, է, ի, ու, օ, ը,* որոնք բոլորն էլ հնչույթներ են: Խոսվածքն ունի բարձրացող երկբարբառներ՝ ᵐ*օ,* ʰ*է:* Օրինակներ՝ *գ*ʷ*օ/օղ, գ*ᵐ*օղնալ, պ*ᵐ*օչ, չ*ᵐ*օր, խ*ᵐ*օ/օգ, ճ*ʷ*օ/օր, փ*ᵐ*օ/օխ փ*ᵐ*օ/օր, վ*ᵐ*օստ, վ*ᵐ*օչխար, վ*ᵐ*օռթ, ֆ*ᵐ*օրթ, թ*ᵐ*օ/օք, խ*ᵐ*օ/օգ, կ*ᵐ*օ/օթ, փ*ᵐ*օ/օշի, բ*ʰ*է/էռ, գ*ʰ*էղ, դ*ʰ*է/էվ, մ*ʰ*է/էղբր, ն*ʰ*է/էղ, վ*ʰ*է/էց, ց*ʰ*է/էց, խ*ʰ*է/էք* և այլն:

Հայերեն բավական թվով բարբառային միավորներում կան նշված հնչյունները, որոնք պատմականորեն *է, օ* ձայնավորներն են՝ վերածված երկբարբառների:

Էլարի խոսվածքը գրանցողը ամենայն բարեխղճությամբ նշել է բոլոր այն դեպքերը, երբ բարբառակիրները նույն երկբարբառները երբեմն որպես պարզ ձայնավորներ են արտասանել: Խոսքը վերաբերում է հատկապես փակ վանկերում գտնվող երկբարբառներին: Այսինքն՝ բառի հիշյալ դիրքում դրանք պարզ ձայնավորի վերածվելու միտում ունեին 20-րդ դարի 70-ականներին: Ուրեմն՝ ^{m}*օ* –ն, ^{h}*է*-ն հնչույթի արժեք չունեին արդեն իսկ այդ ժամանակահատվածում:

Կոտայքի մարզի՝ մյուս՝ Զառ գյուղի բնակիչների նախնիները, վերոհիշյալ թվերին բնակվող գյուղացիների վկայությամբ, ներգաղթել են Պարսկաստանից՝ հատկապես Սպահանից:

Զառի խոսվածքն[7] ունի եռաստիճան բաղաձայնական ենթահամակարգ: Բառասկզբում առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *բ՝անցրանալ, բ՝աց^{h}էլ, բ՝էր^{h}էլ, բ՝ուռ, բ՝էրընկալ, գ՝ըլօխ, գ՝օռալ, գ՝ընալ, գ՝էդին, գ՝էրէզման, գ՝ունդ, գ՝ինի, դ՝ըն^{h}էլ, դ՝ըթում, ջ՝ուր, ջ՝արթվ^{h}էլ, ճ՝ըմէրուկ, ճ՝ընծաղիկ, ճ՝ըք^{h}էլ, ճ՝ու* և այլն: Ուշագրավ է, որ այդ նույն դիրքում շնչեղ ձայնեղ հնչյուններ են գրանցված նաև փոխառյալ բառերում: Ինչպես՝ *գ՝ըռէխ, դ՝ընջանալ, դ՝ըզ^{h}էլ, դ՝օշաբ, ջ՝ուվար, ջ՝այ^{h}էլ* և այլն: Ի դեպ, բառաբարդման ժամանակ շնչեղ ձայնեղ հպականները խոսվածքում պահպանվում են. *կըբ՝ըռնըվ^{h}էմ, չըգ՝ըրա* «չգրեցի», *ամէնաջ^{n}օչ, քոռբ՝ուվ* և այլն: Ըստ գրանցված նյութերի՝ բառասկիզբը բացառված է պարզ ձայնեղ հպական բաղաձայնների համար: Բարբառային այս միավորում կան

[7] Բարբառային նյութերից տետր հ. 272:

գրական արևելահայերենի հնչողությամբ գործառող պարզ խուլ, շնչեղ խուլ, ձայնեղ շփական բաղաձայններով և ձայնորդներով սկսվող բառեր: Օրինակ՝ *կարմրուկ, տաքցընիէլ, հարփուխ, ցիէց, ժամ, վառէկ, պուպու, զատիկ, թէլ, նըշանց, մօղօզիկ, ճըպճըպցընիէլ* և այլն: Իսկ պարզ ձայնեղ հպական հնչյուններ հանդիպում են բառամիջում և վերջում՝ միջձայնավորային, ձայնավորից և ռնգային հնչյունից հետո դիրքերում. *դ՞ադէլ, կօղըրվէլ, բ՞օգ* «բուկ», *աբրամ* «ապրեցի», *ամբ, գ՞էդին, դ՞անդուռ, ճանջ, միէնձ, ջ՞օգ* և այլն:

Փոխառյալ բառերի շարքում քիչ չեն *կ՝* ըմպանային հնչյունով սկսվող արաբերեն բառեր. *կ՝արիբ, կ՝ըֆիլ* «կողպեք», *կ՝օնդախ, կ՝ութի, կ՝ուշ, կ՝ըսմաթ, կ՝ըրաղ, կ՝ալմակալ* և այլն:

Որոշ դեպքերում ձայնավորով սկսվող բառերից առաջ լսվում է (ˀ) շունչը, որն այստեղ, կարծում ենք, հնչյութի արժեք ունի, որովհետև առանց այդ հավելականի իմաստի աղավաղում է տեղի ունենում՝ չեն դիտվում որպես բարբառային բառեր: Օրինակ՝ *ˀըմէն, ˀիչավ, ˀուր, ˀառէչ, ˀընչի, ˀալիվուօր, ˀառու, ˀավուօղ* և այլն:

Զառի խոսվածքի ձայնավորներն իրենց արտաբերմամբ չեն տարբերվում գրական արևելահայերենի նույն հնչյուններից: Բացի *ա, օ, ու, է, ը* ձայնավորներից, խոսվածքն ունի բարձրացող երկբարբառներ: Այսպես՝ *ամբիէր, կապիէր ա, ավիէլ, գ՞իէդ, չօրցիէր ա, կուօձ* «կորիզ», *էփում իէն, ուտում իէն, սիէրմ փիփիէրթ, ուօր, աքլուօր, պուօչ* (բայց՝ *գ՞ըլխավօր, գ՞օրտընուկ, փօցխ, շօր*), *ակնուօց, տէղիէր, ցիէց , կուօպ* (բայց՝ *կօպիէր*), *թուօք, բաքց վանկում՝* նաև *թուօքը, ուօտը* :

Ինչպես Գառնիի և Էլարի բարբառային միավորներում է, Զառի լեզվում միջին շարքի *ը*-ն ունի դիրքային սահմանափակում. չի հանդիպում բառասկզբում, այլ գործառում է բառամիջում և բառավերջում:

Խոսվածքիս հատուկ չէ ձայնավորների քմայնացման երևույթը: Սակայն կան շատ քիչ թվով փոխառյալ բառեր, որոնցում առկա է քմային *ü* ձայնավորը: Այսպես՝ *միրզümի* «աներորդի», *շüշ, թümբül, թüզü:* Իսկ ավելի հաճախ այս խոսվածքի փոխառյալ բառերում առկա քմայնացման երանգն իրենց վրա են կրում բաղաձայնները, հատկապես՝*զ*-ն և *ք*-ն: Օրինակ՝*զ̈ազառ, զ̈ազզ̈ազուկ, զ̈օզլուկ, ք̈արմա* «աթար», *ք̈առ, ք̈ուլ, ք̈անդիր* «պարան», *ք̈ամար* և այլն:

Մեր ուսումնասիրած վերջին խոսվածքը նույն տարածաշրջանի Պտղնի գյուղինն է[8]: Այս բնակավայրի ներկայիս բնակիչների նախնիները այստեղ են ներգաղթել Պարսկաստանի տարբեր վայրերից 1828-1829 թթ.: Խոսվածքը լրացնող բարբառագետի՝ նույն Ալբերտ Խաչատրյանի կարծիքով՝ գյուղի լեզուն միատարր չէր: Սակայն նա աշխատել է հնարավորինս խոսվածքը մաքրել գրական արևելահայերենի ազդեցությունից: Խոսեցրել է շատերին, որոնցից հիմնական բարբառախոսները վեցն էին՝ բոլորը կամ 19-րդ դարի վերջերին, կամ էլ 20-րդ-ի սկզբներին ծնված մարդիկ:

Պտղնիի լեզվի բաղաձայնական ենթահամակարգը եռաստիճան է. բառասկզբում գործառում են պարզ խուլ հպականներ, շնչեղ խուլեր և պարզ ձայնեղներ: Վերջիններս հանդիպում են հատկապես փոխառյալ բառերում: Օրինակներ. *պամբասէլ, պան, պüզուկ, պուռ* «բուռ», *պուրթ, կըլօխ, կընում, կինի, կէտին, կէրէզման, տարման, տէղց, տէղ* «թույն», *տրտում, ծաք* «ձագ», *ծուն* «ձյուն», *ծու* «ձու», *ճարթըվէլ, ճութ, փակʰէլ, փիփէրթ, փըխսʰէլ, ցօգօլ, շիթիլ, բարդու* «բարդի», *բառֆիկ* «փայտյա կոթավոր գործիք», *չրոթէլ, դըրմըղ* «փոցխ»,

[8] Բարբառային նյութերից *տետր h. 239:*

դաՙրման, գաՙզար,վարէլ, վ^{ու}օտ, վ^{ու}օնց, թարաֆ, խընօցի և այլն:

Բառամիջում պարզ ձայնեղ հպական բաղաձայններ են գրանցված միջձայնավորային և ռնգային ձայնորդներից հետո դիրքերում. *օջորք, պաղըրհան, կ^{ու}օդըրվավ, յէդէվ, ամբ, թանգ, թինգ տալ* «թիկնել», *մ^{հ}էնձ* և այլն:

Հավելյալ (ˇ) հագագով սկսվող բառեր խոսվածքումս նույնպես կան, որոնք դարձյալ ունեն հնչութային արժեք. *ˇառէչ, ˇախպուր, ˇուր, ˇէքուց ˇըմէն, ˇէլնէլ, ˇէրգար, ˇիրկուն:*

Վերը նշված բարբառային միավորներում հանդիպող *ղ̂* կամ *կ̂* ըմպանային հնչյուններով սկսվող փոխառյալ բառերը Պտղնիի խոսվածքում արտասանվում են գրական արևելահայերենի *կ* խուլ կոկորդային բաղաձայնի նման. *կազ* «բադ», *կարիբ, կըսմաթ, կայիմ, կըսբր* «ստերջ», *կավուրմա* և այլն:

Փոխառություններում առկա են քմային բաղաձայններ՝ երբեմն՝ կողքի ձայնավորների ո՛չ քմային արտասանությամբ. *քՙիլուգ, քՙառէշտ, քՙամար, քանդիր, շաՙշ, քՙառ, անՙգալ, ՙքօզլուկ, ջանՙգուլում:*

Պտղնիի խոսվածքում գործառում են արևելահայերենի հնչումն ունեցող բոլոր ձայնավորները: Որոշ դեպքերում հանդիպում է հետին շարքի *ա* ձայնավորի առաջնալեզվային տարբերակը՝ թույլ քմայնացմամբ՝ *ա* հնչյունը երբեմն էլ՝ *ա*: Օրինակ՝ *բարդու, դանդուռ, դաՙրման, կընալ* (*բայց՝ կընաց*), *քաՙշէլ, քանդվէլ, վառէլ, թափէլ, գազար, գատիկ, շ^{ու}օր, տրմակ, ծավար, կաթա աՙրաՙժան, ճուր, վախ, տառը, վատ, տանակ, աՙշկ, թալէլ, կալ «գալ», ծրմակ, մուրաՙբա, պաՙզուկ, գաՙրկէլ:*

Բերված օրինակներից ելնելով՝ դժվար չէ ենթադրել, որ այս դեպքում էլ, թեկուզ թույլ երանգով, գործում է Աճառյանի օրենքը, որին ենթարկվել է միայն *ա* ձայնավորը: Ի դեպ, խոսվածքումս նույնպես չի գործել ձայնավորների ներդաշ-

նակության օրենքը: Ի տարբերություն մեր ուսումնասիրած մյուս բարբառային միավորների՝ Պտղնիի լեզվի բառապաշարի բառասկիզբը *ը* ձայնավորի համար բացառված դիրք չէ: Այսպես՝ *ըղորթ, ընչի, ըսէնց, ըտէնց, ըստէղ ըտէղ, ընդէղ, ընդրա, ընձի, ընդոք* և այլն: Այս դիրքում *ը*-ն ունի հնչութային արժեք, այսինքն՝ առանց այդ ձայնավորի արտասանության՝ տեղի կունենա բառիմաստի աղավաղում:

Քիչ դեպքերում գործառում են ի, ու բարձրացող երկբարբառները, որոնք ավելի հակում ունեն պարզեցման:

Այսպիսով, ի մի բերելով վերոշարադրյալը՝ եզրակացնում ենք, որ Կոտայքի մարզի հիշյալ գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերն ունեն և՛ նման, և՛ տարբեր հատկանիշներ: Մի բան, սակայն, ակնհայտ է՝ դրանք արևելյան խմբակցության խոսվածքներ են:

Mikayelyan Zhanna – The Phonetic Systems of the Dialects of Some Villages in the RA Kotayk Region. – Here we have synchronically examined the phonetic systems of the dialects of the villages Garni, Elar, Zar, Ptghni in the RA Kotayk Region.

The materials were written with a perceptive method in the 1970's. However, no scientific research has been done so far. We tried to find out the vowel and consonant systems of these dialects separately and to show the similarities and differences in them. It is worth mentioning that the inhabitants of these villages immigrated from different places in eastern and western Armenia.

Микаелян Жанна – Фонетические системы говоров нескольких селений Котайкской области. – В данной статье изучаем звуковые системы говоров селений Гарни, Элара, Зара, Птгни с синхронным методом.

Материалы этих говоров собраны в 70-е годы прошлого столетия, но до сих пор не подверглись никакому научному исследованию. Мы старались выявить в отдельности в упомянутых говорах гласные и согласные системы, показать их сходство и разногласия.

Մխիթարյան Գայանե
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀԱՅԵՐԵՆ-ՇՈՒՄԵՐԵՐԵՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գիտության յուրաքանչյուր ոլորտում կան հարցեր, որոնք գիտական քննարկումներից և որոշակի լուծումներ ստանալուց հետո, թվում է՝ նոր արծարծումների քիչ առիթներ պետք է ունենան, սակայն գիտական առաջընթացի տրամաբանությունը հուշում է, որ դրանք ժամանակ առ ժամանակ օբյեկտիվորեն կրկին քննարկումների տեղիք են տալիս՝ ակնկալելով վերլուծությունների և լուծումների նոր եղանակներ:

Արևմտյան կամ Առաջավոր Ասիան և Հայկական լեռնաշխարհը մշտապես եղել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: «Հայաստանի պատմություն» աշխատության մեջ Ն. Ադոնցը, քննելով այն ժամանակ հայտնի մի քանի արձանագրությունների տվյալները, գրում է. «Փաստորեն մենք կատարյալ մթության մեջ ենք Հայաստանի՝ շումերաաքադական դարաշրջանի անվան ու ճակատագրի կապակցությամբ»[1]: Այսօր առավել, քան երբևէ մեր պատմության, մշակույթի հանդեպ նոր հետաքրքրություն է նկատվում: Հնագիտական, ազգագրական, մարդաբանական և լեզվաբանական նոր հետազոտությունները հնարավորություն են ընձեռում առաջադրել նոր տեսակետներ հնդեվրոպացիների նախահայրենիքի և հայ ժողովրդի տեղաբնիկ լինելու

[1] **Ն.Ադոնց**, *Հայաստանի պատմություն*, Ե., 1972, էջ 27:

մասին: Այդ ուսումնասիրությունները փորձում են վեր հանել և բացահայտել հայոց հնագույն շրջանի պատմության պատմաքաղաքական և տնտեսական կացությունը, հստակեցնել մշակութային զարգացման պատկերը, ճշտել Հայաստանի աշխարհագրական դիրքը: Եվ այս ամենը գրավոր աղբյուրների հիման վրա: Դրանք, ըստ պատմաբանների, շուրջ հարյուր արձանագրությունների հայերեն թարգմանություններ են և ուսումնասիրվող դարաշրջանի վերլուծություն գիտության տարբեր ճյուղերի տեսանկյունից՝ հնագիտության, աստղագիտության, արվեստագիտության և այլն: Այդ առումով հետաքրքիր են շումերերենի և հայերենի լեզվական առնչությունները: Հայաստանի՝ Ք.ա. III-II հազարամյակների պատմության լուսաբանման համար բացառիկ տեղեկություններ են հաղորդում Միջագետքի հնագույն շումերական և աքադական գրավոր հուշարձանները: Շումերները՝ աշխարհի առաջին քաղաքակրթություններից մեկի ստեղծողները, մինչև Հարավային Միջագետքը յուրացնելը բնակվել են Միջագետքի հյուսիսային և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում: Ուստի պատահական չէ, որ մեր լեռնաշխարհի մասին ամենավաղ հիշատակություններն արձանագրված են շումերական գրավոր հուշարձաններում: Առաջին սեպագիրը Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսին շումերներից փոխառում են սեմական ծագում ունեցող աքադացիները, իսկ հետագայում այն լայն տարածում է ստանում Առաջավոր Ասիայի երկրներում, այդ թվում՝ Վանի թագավորությունում[2]:

Քննելով հնագույն հայերենի բառապաշարի՝ վաղնջահայերենից եկող բնիկ և փոխառյալ շերտերը՝ Գ. Ջահուկյանը

[2] Շումերների մասին տեղեկությունները շարադրված են ըստ **Ա. Մովսիսյանի** «*Հայկական առաջին պետական կազմավորումը. Արատտա*» գրքի, Ե., 1992, էջ 7-9:

առանձնացնում է սեմական լեզուների ու հայերենի միջև զուգադիպությունների մի քանի շերտ[3]:

Առաջին շերտում «տարրական ցեղակցության» բառեր են, որոնք, անկախ ցեղակցական հարաբերություններից ու շփումներից, առկա են գրեթե բոլոր լեզուներում: Դրանք ձայնարկություններ են, բնաձայնություններ, մանկական բառեր: Օր.՝ **աղաղակ**, բրբռ. աղաղել «լալ, գոռալ» (հ.-ե. *alā – բացականչություն), սեմ. *hll, աքադ. alālu «ցնծության երգ երգել, ցնծալ», եբր. hillēl, ասոր. hallel «գովել», արաբ. hallala «ցնծալ»: Կամ՝ բարբռ. մնկ. **բիբի, պիպիկ** «երեխա» - աքադ. bābu, bībû(m), արաբ. babba «փոքր երեխա» և այլն[4]:

Երկրորդ շերտում Գ. Ջահուկյանն առանձնացնում է այն զուգադիպությունները, որոնք սեմական-հնդեվրոպական հեռավոր ցեղակցության արդյունք են: Բառաշարքը տրվում է ըստ Իլյիչ-Սվիտիչի բառարանի: Այդտեղ ևս զգալի թիվ են կազմում բնաձայնական-նկարագրական արմատները: Օր.՝ **բող, բողբոջ** (հ.-ե. *bhel-) – արաբ. ’bl «նորաբույս խոտ, սաղարթ», ասոր. ībel, եբր. ’abal «մարգագետին, հովիտ»: **Կռունկ** (հ.-ե. *ger-) – արաբ. kurkiy, արամ. kurkiā «կռունկ» , աքադ. kurku «հավի տեսակ»: Ջահուկյանը հնարավոր է համարում **կռունկ** բառի շումերերենից փոխառյալ լինելը [5]:

Երրորդ շերտում սեմականից կատարված հնդեվրոպական հնագույն փոխառություններն են: Ընդամենը 24 բառ՝ առանձնացրած Իլյիչ-Սվիտիչի բառարանից: Ջահուկյանը նշում է, որ թեպետ բառարանագիրը չի պարզում նախասեմերենի կրողների և հնդեվրոպացիների տարածական շրջման հնարավորության հարցը և չի անդրադառնում այդ բառերի տարածման ուղիներին, այնուհանդերձ նյութն արժանի

---

[3] **Գ.Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 447:

[4] Նույն տեղում:

[5] Նշվ. աշխ., էջ 448-449:

է ուշադրության, քանի որ այդ բառերի մի մասը գործածվում է հայերենում, ինչպես՝ **կով, եւթն, արտ, ցախ, հանդ, գինի, դուռն, աստղ, տաւն**[6]:

Չորրորդ շերտում զուգադիպություններ են, որոնք անմիջական կամ միջնորդավորված փոխառության հետևանք են: Այս շերտում անդրադառնալով հայերենի և շումերերենի փոխահարաբերության հարցին՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ շումերները՝ որպես Միջագետքի հնագույն բնակիչներ, մեծ ազդեցություն են գործել աքադացիների վրա, որոնք նրանցից փոխառել են մեծ թվով բառեր: Աքադացիների՝ Միջագետքում բնակություն հաստատվելուց հետո շումերները աստիճանաբար դառնում են աքադալեզու: Շումերերենը՝ որպես խոսակցական լեզու, դադարում է գործածվել մոտավորապես Ք.ա. II հազարամյակի կեսերից, սակայն աքադական գրիչները շարունակում էին այն կիրառել որպես գրավոր լեզու: Կասկած չի կարող լինել, որ շումերերենը զգալի ազդեցություն է գործել շրջակա լեզուների, մասնավորապես աքադերենի և աքադացիների միջնորդությամբ այլ լեզուների վրա: Աքադերենն էլ իր հերթին ազդել է շումերերենի վրա[7]:

Գ.Ջահուկյանը չի բացառում հայերենի և շումերերենի միջև առկա բառային զուգադիպությունները, որոնք, սակայն, անհրաժեշտ է համարում դասակարգել ըստ հնարավոր աղբյուրների ու անցման ուղիների և բացառել պատահական զուգադիպումները. շումերական միավանկ բառերի մեծաքանակության և դրանց հաճախակի համանունության դեպքում այդպիսի նմանություններն անխուսափելի են: Առանձնացնում է շումերա-հայկական զուգադիպությունների երեք կարգ՝ ա) բնաձայնական բառեր և մանկական լեզվի բառեր, օր.՝ բրբռ. **աղե – ad, ad - da** «հայր, մայր», մնկ. **մա** - «մայր» - **ama** «մայր», **աղաղակ** - **elalu** «աղաղակել, ոռնալ»,

[6] Նշվ. աշխ., էջ 450:
[7] Նշվ. աշխ., էջ 451:

բուք (հ.-ե. *bhu-k-) - **bu** «փչել», բ) Առաջավոր Ասիայի ժողովուրդների միջև տարածված մշակութային բառեր, որոնց սկզբնաղբյուրը կա՛մ շումերերենն է, կա՛մ աքադերենը, կա՛մ որևէ այլ, երբեմն անհայտ լեզու: Օր.՝ **ագարակ** - **agar** «դաշտ, արտ» -աքադ. ugaru(m), **թոնիր** - **tunur**, tinur - աքադ. tinūru(m) -արամ. tannurā, **կաշի** - **kuš** - աքադ. kušu(m), գ) հավանաբար պատահական նմանություններ, ինչպես՝ **գէզ, գեզ** «արատ, պատռվածք» - **guz** «կտրատել, պատառոտել», **մորճ** «դալար ճյուղ» - **mu**, muduru «ճիպոտ, գավազան» և այլն[8]:

Հետաքրքիր է, որ Գ.Ջահուկյանն առանձնացնում է նաև դժվար բացատրելի զուգադիպություններ: Եթե դրանք պատահական չեն և եթե շումերերենը չի պատկանում նոստրատիկ ընդհանրությանը, ապա կարելի է տեսնել տարբեր կարգի միջնորդող օղակներ: Օր.՝ **գնալ** -**gin** «գնալ, ուղարկել», **ելենել** (հ.-ե. *el-) - **il** «բարձրացնել, տանել, բերել», **ծագ** «ծայր» - **zag** «կողմ, սահման, սկիզբ. դրսի կողմ, բաց դաշտ, անապատ», **պատ** - bad «պատ, ամրոց, բերդ» և այլն [9]:

Կան նաև շումերա-ուրարտական զուգադիպություններ, ինչպես՝ ուրարատ. **du**- «անել» - շումեր. **du** «անել, կառուցել», ուրարտ. **qi(u)ra** «երկիր» - շումեր. **kur** «տեղ, վայր» և այլն[10]:

Այս ամենը, անշուշտ, ենթադրությունների տեղիք է տալիս:

Գ.Ջահուկյանը թեպետ հայերեն-շումերերեն առնչությունները պատահական զուգադիպություններ է համարում և գրեթե նվազագույնի հասցնում հիշյալ լեզուների միջև հնարավոր աղերսների գոյության հավանականությունը, այդուհանդերձ, կուզենայինք նշել հետևյալը.

---

[8] Նշվ. աշխ., էջ 452:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

ա) չի բացառվում ինչպես շումերերենի և հնդեվրոպական ընդհանրության, այնպես էլ շումերերենի և հայերենի անմիջական շփումների հնարավորությունը: Դրա օգտին են վկայում հայերի տեղաբնիկ լինելը կամ էթնիկ տարրի առկայությունը, ժամանակագրական տվյալները, աշխարհագրական դիրքը:

բ) Հայկական լեռնաշխարհի պատմության, աշխարհագրության և լեզվի հետազոտողները զուգահեռներ են փաստել աքադա-շումերական ու հնից ավանդված հայկական անձնանունների, դիցանունների և Հայկական բարձրավանդակի մի շարք տեղանունների միջև[11]: Օրինակ՝ ուշխեթական աղբյուրներում հիշատակված արևմտասեմական մեծ աստված էլ-կունիստան ապրում էր Եփրատ-Մալա «սև» գետի ակունքներում: Եփրատի վերին հոսանքների երկիրը Ք.ա.II հազարամյակի կեսերից խեթական աղբյուրներում անվանվում էր **Հայասա**: **Հայասան,** ըստ մասնագետների, Գ.Ղափանցյան, Բ.Պիատրովսկի, Ս.Երեմյան, Գ.Ջահուկյան, Վ. Իվանով, առնչվում է «հայ» ցեղանվանը: Ասել է թե՝ այդ էլ-կունիստան նույն ինքը՝ Հայասայի մեծ աստվածն է: Հայասայի աստվածների ցանկը գլխավորում են գերագույն աստվածն ու մեծ մայր աստվածուհին՝ **INANNA**-ն: Ընդ որում **INANNA**-ն մայր աստվածուհու շումերական գաղափարագիրն է (աքադական Իշտարը)[12]:

Հայ ցեղանվան հնագույն ակունքների առնչությամբ Վ. Իվանովը նշում է, որ մի հինասորեստանյան (Ք.ա. III-II

---

[11] **Ռ. Իշխանյան**, *Հայերենում եղած շումերական բառերի հարցը*, ԲԵՀ, N 1, 1984: **Գ. Ղափանցյան,** *Ասուրա-բաբելական բառեր հայերենում*, Ե., 1945: **Бомхард А.Р.**, *Очерк сравнительной фонологии так называемых „ностратических" языков*, "Вопросы языкознания", N3, 1989:

[12] **Ա.Պետրոսյան**, *Հայոց ազգածագման հարցերը ավանդական տվյալների լույսի տակ*, ՊԲՀ, 2003, N 2, էջ 212:

հազարամյակներ) արձանագրության մեջ հիշատակվում է **DUMU Ha-a-a** «Հա(յ)այի որդի» արտահայտությունը: Ընդ որում, որոշ աղբյուրներում **HA.A** և **A.HA** տեղանունները նույնացվում են **Ku'ara** – ին, որը հիշեցնում է շումերական **KUR** «լեռ-անդրաշխարհ»-ը և ուրարտական **Kuera** դիցանունը[13] :

Միջագետքի հյուսիսում և Սիրիայում Ք.ա. III հազարամյակից հիշատակվում են **Ar(a)m- և *rēmo- /*room-/ *rHmo-** հիմքի վրա համադրելի անվանումներ, ինչպես՝ **Arame, Aramu, Arami, Arima, Aruma, Arman**, որոնք շումերական, աքադական դարաշրջանների տեղանուններ են, և **Armanum, Armi, Arimu-Arimu, Armalu**՝ տեղանուններ Էբլայի տեքստերից[14]:

Հինարևելյան սեպագիր քաղաքակրթությանը նվիրված հետազոտություններում Գ. Ղափանցյանն առանձնացնում է «ամրոց» բառը, որը սեպագիր արձանագրություններում նշվում է շումերական **É.GAL** գաղափարագրով (տառացի՝ «տուն մեծ») և համապատասխանում է աքադերեն **ekallu** «պալատ» բառին՝ ի տարբերություն **birtu** «ամրոց» -ի, որը նույնանում է հայերեն «բերդ» բառին[15]:

գ) Աքադական պետության մեջ պետք է որ լինեին տարբեր ժողովուրդներ, և չի բացառվում հայերեն կամ մերձավոր լեզուներով խոսող ցեղերի առկայությունը:

դ) Ակնհայտ է, որ հայերենը՝ որպես Հայկական բարձրավանդակի տեղաբնակների հնդեվրոպական լեզու, Ք.ա. II

---

[13] **Վ. Иванов**, *Выделение разных хронологических слов в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну*, ՊԲՀ, 1983, N 4, էջ 33-34: **Ա.Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 218:

[14] **Ա.Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 217: **J. Finkelstein**, *Subartu and Subarians in Old Babilonian Sources*, "Journal of Cuneiform Studies",V 9, 1955, p. 2.

[15] **Г. Капанцян**, *Новая халдская надпись Русы I из Келан-крана*, Ереван, 1931, стр. 7.

հազարամյակի վերջերից մինչև I հազարամյակի կեսերը սերտ շփումներ է ունեցել էրգատիվ կառուցվածքով ոչ հնդեվրոպական ծագման լեզուների հետ: Դրա հետևանքով այդ լեզուներում առաջացել են փոխներթափանցումներ: Ընդ որում, գրաբարում անցյալ դերբայի՝ սեռական հոլովով ենթակայի հետ հաճախադեպ գործածությունը էրգատիվ կառույց է, և կարելի է բնորոշել որպես ընդհանուր լեզվաբանական բնույթ ունեցող տիպաբանական զարգացման հետևանք՝ «**Տեսեալ աւրինացն աստուծոյ, թէ գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ»**[16]: Ուստի պատահական չէ, որ տարբեր ժամանակներում փորձեր են արվել հայերենը առնչակից համարելու շումերերենին և նույնիսկ ցեղակցության եզրեր փնտրելու:

Նյութերն, անշուշտ, հազարամյակների խորքերը ձգվող համադրությունների հնարավորություն են ընձեռում՝ բացահայտելով հնագույն մշակույթների փոխազդեցությունները քաղաքակրթության զարգացման քառուղիներում:

Mkhitaryan Gayane - On the Problem if Armenian and Sumerian Language Interactions. - The investigations of Western Asia and Armenian Highland are of great importance for researchers. It is supposed that there is a direct contact between Armenian and Sumerian languages. Armenian and Sumerian interaction is proved not only by ethnicity of Armenians, but also by chronological data and geographical location. Scientific materials discover the ancient cultures' interactions and give opportunities for combinations going to the depths of millenniums.

---

[16] Սեռական հոլովով դրված ենթակայով կառույցների հնդեվրոպական բնույթին անդրադարձել է **Վ. Համբարձումյանը**. տե՛ս **Հովհաննես Օձնեցի**, *Երկեր*, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Գ.Համբարձումյանի, Ե., 1999, էջ 16-17:

Мхитарян Гаяне - О проблеме взаимодействия армянского и шумерского языков.- Исследования Западной Азии и Армянского Нагорья имеют большое значение для ученых. Предполагается, что между армянским и шумерским языками существовало взаимная связь. Армяно-шумерское языковое взаимодействие подтверждается не только этнической принадлежностью армян, но и хронологическими данными и географическим положением. Научные материалы открывают взаимодействия для сочетаний, идущих в глубины тысячелетий.

Մկրյան Արամ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԻՏԱԼԵՐԵՆԻ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բազմիմաստությունը հնարավորություն է տալիս բնութագրել բառային միավորների նշանակությունների փոփոխության հետ կապված երևույթների ընդհանուր բնույթը: Ըստ Տ.Չերդանցևայի՝ բազմիմաստության ձևական կողմն ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ միաժամանակ գործ ենք ունենում իմաստային տարրերի՝ իմակների վերհանման և վերախմբավորման, ինչպես նաև իմակների և դրանք կրող բառային միավորի՝ դարձվածքի հետ ունեցած հարաբերության հետ: Եթե միիմաստությունը (մենիմաստությունը) նշանակում է նշանակյալի և նշանակիչի լիովին համընկնում, ապա բազմիմաստությունը ենթադրում է, որ մեկ նշանակյալին բնորոշ են մի քանի նշանակիչներ՝ իմաստային տարրեր: Երբ նշանակյալը նույնն է, իսկ իմաստային տարրերը՝ տարբեր, գործ կունենանք համանունության երևույթի հետ, մինչդեռ երբ նշանակյալները տարբեր են, իսկ դրանց նվազագույն իմաստային տարրերը հնարավորինս մոտ, ապա՝ հոմանշության երևույթի հետ[1]: Ա.Սուքիասյանը վերջինիս առնչությամբ նշում է. «*բառային հոմանիշների նման՝ դարձվածաբանական հոմանիշներ պետք է համարել այն դարձվածաբանական միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստ-*

[1] **Черданцева Т. З.**, *Язык и его образы*, изд. «Международные отношения», М., 1977, էջ 111:

ներ, բայց կարող են տարբերվել ոճական և հուզաարտահայտչական տարբեր գունավորումներով»[2]: Իսկ երբ առկա են այս կամ այն շեղումներով իմաստային տարրերի խմբերի նշանակյալներ, իսկ նշանակիչները կազմված են այնպիսի իմակներից, որոնք տրամաբանորեն հակադրվում են մեկը մյուսին և ունենում են ընդհանուր՝ քերականական հատկանիշներ հաղորդող իմակներ (կլասեմաներ)[3], գործ ենք ունենում հականշության երևույթի հետ:

Ըստ Շ.Բալլիի՝ *բազմիմաստությունն* ունի երկու կողմ՝ առաջին, երբ նշանակյալն ունի մի քանի նշանակություն՝ բազմանշանակություն, իսկ մյուսը, երբ մի նշանակիչն արտահայտվում է մի քանի նշանակյալներով[4]: Այսպիսով, լեզվաբանը հակված է ըմբռնել բազմիմաստության երևույթը մի կողմից իբրև բազմանշանակություն, իսկ մյուս կողմից՝ հոմանշություն[5]:

Ռ.Ա.Բուդաղովը բազմիմաստությունը բնութագրելիս նշում է. «Բազմիմաստությունը ընդհանրացման, խմբավորման և մեկ բառի շրջանակներում պայմանականորեն նոր իմաստների ձեռքբերման արդյունք է…»[6]:

Ըստ Բուդաղովի՝ «*բառի իմաստային զարգացման իրական բնույթը հասկանալու համար հարկավոր է դիտարկել այն նույն բառի ներքին տարբեր նշանակությունների տեսանկյունից: Հարկավոր է հայտնաբերել այն գործոնը, որը կբացահայտի այդ բոլոր նշանակությունների զարգացումը: Այդպիսի գործոն են այն հասկացությունները, որոնք իրենց*

---

[2] **Սուքիասյան Ա. Մ.**, *Հոմանիշները ժամանակակից հայերենում*, ԵՊՀ հրատ., Եր., 1971, էջ 263.

[3] **Черданцева Т. З.**, նշվ աշխ., էջ 117.

[4] **Ш. Балли**, *Общая лингвистика и вопросы французского языка,* изд. Иностр. лит., М., 1955, էջ 189.

[5] **Черданцева Т. З.**, նշվ աշխ., էջ 111.

[6] **Будагов Р. А.**, *Человек и его язык*, изд. МГУ, М., 1974, էջ 121.

հերթին կապված են մարդկանց նյութական և սոցիալական կյանքի հետ, որոնց հիմքում սովորաբար ընկած են լինում իրակությունները»[7]:

Բառերի, կայուն բառակապակցությունների բազմիմաստությունների ձևավորման ուղիներն, անշուշտ, շատ ընդհանրություններ ունեն: Բառի բազմիմաստության բնութագրման ժամանակ առանձնացվում է նրա յուրաքանչյուր նոր նշանակությունը՝ ըստ բառի գործածության ուղիղ և փոխաբերական նշանակությունների հնարավորության. մի բան, որ ի հայտ է գալիս տարբեր համատեքստերում: Նոր նշանակության ի հայտ գալու մեկ այլ կարևոր գործոն է բաշխվածության փոփոխությունը: Բառի նշանակության զարգացման վրա կարող են ներգործել արտալեզվական գործոնները, այդ թվում նաև լեզվակիրների կողմից իրականության տրամաբանական և հոգեբանական ընկալումը: Հայտնի է, որ որքան ընդհանուր է բառի հիմնանշանակությունը, այնքան շատ նշանակություններ կարող է ձեռք բերել բառը: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստների հետ կապված են իմակների ընտրության փոփոխության և հատկապես դեմքի իմակի ի հայտ գալը կամ անհետանալը, որն իր հերթին անխուսափելիորեն բերում է կապակցելիության փոփոխության, իսկ նոր կապակցելիությունը ի հայտ է բերում նոր ներհակ իմակներ: Մասնավորապես այնպիսի բառեր, ինչպեսիք են՝ *cosa, roba (բան, իր)* և այլն, բայեր՝ *fare, portare (անել, տանել/կրել)* և այլն, օժտված են առավելագույն բազմիմաստությամբ, նաև այն բանի համար, որ կախված կապակցելիությունից և առավել լայն համատեքստից, նրանք կարող են տարբերվել ոճական տեսանկյունից: Ըստ Ս.Բեդիրյանի՝ «*բառի դարձվածային իմաստը այն նշանակությունն է, որ նա ձեռք է բերում այս կամ այն կայուն կապակ-*

[7] Նույն տեղում., էջ 121:

ցության մեջ ու նրա շնորհիվ... այն երբեմն կոչում են «ոչ ազատ նշանակություն», բայց արդի լեզվաբանական գրականության մեջ առավելապես ընդունված է անվանել «դարձվածայնորեն կապված իմաստ»»[8]

Դարձվածքների բազմիմաստությունը բնութագրելը բավականին դժվար է այն պատճառով, որ նրանց առաջին և գլխավոր նշանակությունը, որպես կանոն, փոխաբերական է:

Ըստ Տ.Չերդանցևայի՝ «*առավել հաճախ բազմիմաստ են լինում այն դարձվածքները, որոնք ունեն ազատ վալենտականություն, երբ գործածվում են խոսքում, այլ կերպ ասած՝ ներփակ դարձվածքները: Դա բացատրվում է նրանով, որ բաց դիրքերը կարող են բերել նոր կապակցելիության՝ ունակ առաջացնելու ներհակ իմակներ*»[9]:

Քերականական ձևի և բաշխվածության փոփոխությունը դարձվածքում անխուսափելիորեն իր հետ բերում է նաև իմաստային փոփոխություն: Առավել հաճախ են բազմիմաստության այն ձևերը, երբ նրանց ընդհանուր իմաստը բավականին լայն է, իսկ լրացուցիչ իմաստները զարգանում են ընդհանուրի մասնավորեցման արդյունքում:

Այսպիսով, դարձվածքի բազմիմաստությունը կարող է առաջանալ.

ա. բաշխվածության փոփոխության

բ. պատկերի ձևավորման տարբեր ուղիների հետևանքով[10]:

Պատկերի ձևավորման տարբեր ուղիներ ի հայտ են գալիս տարբեր նշանակություններով: Դարձվածքների որոշ նշանակություններ առաջանում են բաղադրիչների հիման վրա և որպես կանոն ներառում են իմակներ, որոնք բնորոշ են

---

[8] **Բեղիրյան Պ. Ս.**, *Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն*, «Լույս» հրատ., Եր., 1973, էջ 82, 83:

[9] **Черданцева Т. З.**, նշվ. աշխ., էջ 113.

[10] Նույն տեղում., էջ 115.

դարձվածքի բաղադրիչներին: Որոշ նշանակություններն էլ ի հայտ են գալիս առաջինների փոխաբերացման հիման վրա:

Դարձվածքների բազմիմաստությունը արտահայտվում է համապատասխան գաղափարագրերի (իդիոգրամների)[11] միջոցով, այսինքն՝ չեզոք կամ պատկերավոր բառերով կամ բառակապակցություններով, որոնք հաղորդում են բազմիմաստ դարձվածքի առանձին նշանակություններ: Դարձվածքների բազմիմաստության գաղափարագրերը պետք է գտնվեն իրար նկատմամբ լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ, և դրանց պետք է միավորի ընդհանուր ոճականորեն չեզոք նշանակությունը, որը կարող է վերականգնվել տարբեր համատեքստերի հիման վրա, որտեղ գործածվում է այս կամ այն դարձվածքը:Այսպիսով, «*ընդհանուր վերացական նշանակությունը կարող է դուրս բերվել ոչ թե կոնկրետ համատեքստից՝ շնորհիվ իր չափազանց ընդհանրացված նշանակության: Ամենաընդհանուր նշանակությունը պարզելը անհրաժեշտ է այն բանի համար, որ հնարավոր լինի վեր հանել ներակա նշանակությունները (իմաստները), որոնք կարող են ի հայտ գալ տարբեր համատեքստերում*»[12]: Այսպես, *colpo di mano* (բառացի՝ ձեռքի հարված) միավորը կարող է ունենալ հետևյալ նշանակությունները. 1. *ուժի գործադրում*, 2.*հարձակում, թալան*, 3.*հանկարծակի հարձակում, խուզարկություն,* 4.*օգնություն, օժանդակություն*. *Colpo di testa* (բառացի՝ գլխի հարված) դարձվածքը կարող է նշանակել. 1.*քմահաճույք,* 2.*անմիտ որոշում,* 3.*անմիտ արարք,* 4.*վտանգավոր քայլ,* 5.*արկածախնդրություն,* 6.*անսպասելիություն*.

Անվանական դարձվածքների ուսումնասիրությունը թույլ է տալիս համոզվել կազմախոսական դարձվածքի (ԿԴ-ի) բառային և քերականական նշանակությունների սերտ կապում այնքանով, որքանով, որ հատկապես այս տեսակի

[11] Նույն տեղում., էջ 116.
[12] Նույն տեղում., էջ 115.

միավորներում քերականական գործառույթը սերտորեն կապված է բաղադրիչների նշանակությունների հետ, որն իր հերթին հանգեցնում է դարձվածքի բազմիմաստությանը: Տվյալ տեսակի ԿԴ-ների վերծանումը՝ կապված բազմիմաստության հետ, մատնացույց է անում այդ խնդրի լուծման մի քանի հնարավոր ուղիներ:

Եթե հաջողվում է այս կամ այն դարձվածային միավորում վեր հանել բոլոր հնարավոր համեմատությունները, որոնք դրանք ներուժային ձևով պարունակում են, կարելի է ենթադրել նոր նշանակությունների ի հայտ գալը, այնպիսիք, որ չեն հանդիպել գեղարվեստական գրականության մեջ և արտացոլված չեն բառարաններում: Սակայն նման հնարավոր համեմատությունների ի հայտ գալը զուտ լեզվաբանական վերլուծության շրջանակներից դուրս է գալիս և պահանջում ելք դեպի տրամաբանություն և հոգեբանություն, ինչպես նաև բնազդի գործածություն, որը չպետք է թերագնահատվի լեզվի ծագման ուսումնասիրության ժամանակ, անշուշտ՝ ստուգելով բնազդի տվյալները կոնկրետ լեզվական նյութի մեջ, օրինակ՝ *գլուխ խոնարհել* - 1. ենթարկվել, 2. Հպատակվել, 3. ստորանալ, նվաստանալ, 4. ողջունել, 5. մեծարել, *սիրտը դատարկել* - 1. զայրանալ, 2. հանգստանալ, *աչքն ընկնել (մի բանի)* - 1. նկատել, 2. հավանել:

Կատարել ենք ուսումնասիրություն Մ.Քուարտուի և Է.Ռոսսիի «*Իտալերենի դարձվածաբանական բառարան*»[13]-ից դուրս գրված 921 ԿԴ-ներից 63-ի հիման վրա, որոնք բազմիմաստ են: Ի դեպ, նշված բազմիմաստ ԿԴ-ները կազմված են մարմնի մասերի անվանումներ նշանակող 20 գլխավոր բաղադրիչներից: Հետազոտության նպատակն է եղել դիտարկել դրանց իմաստների թիվը՝ որոշելու համար, թե որքան են նվազագույն և որքան՝ առավելագույն իմաստ արտահայ-

[13] **Quartù M., Rossi E.**, *Dizionario dei modi di dire della lingua italiana*, HOEPLI, M., 2012.

տողները, ինչպես նաև՝ որ կազմախոսություն պարունակող ԿԴ-ներն են առավել կենսունակություն դրսևորում բազմիմաստության տեսանկյունից: Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, բազմիմաստության տեսանկյունից առավել մեծ է *mano* «ձեռք» կազմախոսությամբ կազմված ԿԴ-ների թիվը՝ 19, դասակարգման հաջորդ երկու տեղերում են *occhio* «աչք» և *testa* «գլուխ» բաղադրիչներով կազմվածները՝ 7-ական, իսկ նվազագույն՝ 1-ական արդյունք են դրսևորել հետևյալ կազմախոսություններով ԿԴ-ները. *collo* «պարանոց», *capelli* «մազեր», *faccia* «դեմք», *viso* «երես», *gambe* «ոտքեր (սրունքը և ազդրը ներառյալ)», *ginocchio* «ծունկ», *lingua* «լեզու», *palmo* «ձեռքի ափ», *schiena* «մեջք», *petto* «կուրծք, կրծքավանդակ»: Ըստ իմաստների թվի՝ առավել մեծ խումբ են կազմում երկու իմաստ ունեցող ԿԴ-ները՝ 54, երեք իմաստ ունեցողները 7-ն են, 1-ական են՝ 5 և 6 իմաստ ունեցողները:

Mano «ձեռք» բաղադրիչով ԿԴ-ների թիվը ամենամեծն է, քանի որ գլխավոր բաղադրիչը կարող է խորհրդանշել աշխատունակություն, հմտություններ, շնորհալիություն, նրբագեղություն, գեղեցիկ շարժուձև, ուժ, զորություն, իշխանություն, հարստություն, աղքատություն, ճարպկություն, արագաշարժություն, շռայլություն, ժլատություն և այլն: Ձեռքերի հետ զուգակցվող այս հատկանիշներն էլ հիմք են ծառայում, որպեսզի նշված կազմախոսությամբ կազմված ԿԴ-ներն արտահայտեն մեկից ավելի, երբեմն իրարից տարբերվող, նույնիսկ՝ հակասող իմաստներ, ինչպես նաև՝ առավելագույն թվով իմաստային դաշտերի մաս կազմեն:

Հետազոտության նպատակներից մեկն էլ հայերեն զուգահեռ և ոչ զուգահեռ համարժեքների (Ա. Սուքիասյանի և Ս.Գալստյանի «*Հայոց լեզվի դարձվածաբանական բառա-*

բան»[14]-ի հիման վրա), ինչպես նաև՝ դրանց բազմիմաստության առկայության և բացակայության վերհանումն է: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ իտալերեն 19 ԿԴ-ներին հայերենում համապատասխանում են 6 զուգահեռ համարժեքներ, որոնք թե՛ արտահայտության և թե՛ բովանդակային պլաններում համապատասխանում են: Իսկ ոչ զուգահեռ համարժեք ԿԴ-ների թիվը, որոնք բովանդակային պլանում նույնն են, սակայն ունեն արտահայտության տարբեր ձևեր, 21-ն է: Ի դեպ, հայերեն համարժեքներից 4-ն ունեն երկու իմաստ, մյուս երկուսը՝ 1-ական, իսկ ոչ զուգահեռ համարժեքներից 3-ն ունեն 2-ական, 1-ը՝ 3, մնացած 17-ը՝ 1-ական իմաստ:

Այսպես, *alzare le mani/alzare le braccia* (բառացի՝ ձեռքերը բարձրացնել) դարձվածքը, որն իտալերենում ունի 2 իմաստ (1.անզորությունից ձեռքերը վեր բարձրացնել, հանձնվել, 2. մեկի վրա ձեռք բարձրացնել, հարվածել մեկին), հայերենում ունի մեկ համարժեք՝ *ձեռք բարձրացնել*: Վերջինիս իմաստներն են՝ 1.հարվածել կամ ձեռքի շարժումով սպառնալ՝ հարվածելու, ծեծելու, 2. սպանել, վնասել, ոչնչացնել կամ նման փորձ կատարել և այլն: Փաստորեն հայերեն համարժեքի առաջին իմաստը համապատասխանում է իտալերենի երկրորդ իմաստին:

Mettere mano a (բառացի՝ ձեռքը դնել ինչ-որ բան անելու համար) դարձվածքը՝ 1. սկսել, նախաձեռնել, ձեռնարկել ինչ-որ բան, 2. հանել, դուրս հանել ինչ-որ բան, ձեռքը տանել ինչ-որ բանի, երբ խոսքը գնում է դրամապանակը հանելու մասին (ծագել է կռվելու կամ սպանելու նպատակով սուրը պատյանից հանելու գործողությունից), երկու իմաստներով հայերենում ունի մեկ համարժեք՝ *ձեռքը դնել*, որը համընկնում է արտահայտության պլանում, սակայն արտահայտած իմաստ-

[14] **Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա.**, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, ԵՊՀ հրատ., Եր., 1975.

ներից ոչ մեկը (1. ընտրել, իրենը համարել, սեփականացնել, 2. ձեռքի՝ ափի մեջ դնել) չի համապատասխանում իտալերեն տարբերակի իմաստներին: Մինչդեռ հայերենում առկա է նաև վերը նշված իտալերեն միևնույն դարձվածքի ոչ զուգահեռ համարժեքը՝ *ձեռք զարկել/զարնել*, որի (1. ձեռնարկել, սկսել, ձեռնամուխ լինել, 2. ձեռքով դիպչել, շոշափել) երկու իմաստներից առաջինը համընկնում է իտալերեն տարբերակի առաջին իմաստին:

Mordersi le mani (բառացի՝ կծել/կրծել ինքն իր ձեռքերը) իտալերեն երկիմաստ դարձվածքն ունի հետևյալ իմաստները՝ 1.զայրույթը չկարողանալ արտահայտել, իր մեջ կատաղել, բորբոքվել, 2. անհանգստանալ, տխրել, տառապել: Հայերեն *ինքն իրեն ուտել* համարժեքը, որն արտահայտության պլանում մասնակիորեն է համապատասխանում իտալերեն տարբերակի հետ, քանի որ այնտեղ *ուտելու* գործողությունը վերաբերում է *ձեռքերին* և ոչ թե առհասարակ՝ *ինքն իրեն ուտելուն*, սակայն նրա երկու իմաստները գրեթե լիովին համընկնում են իտալերենի իմաստների հետ (1. զայրույթը չկարողանալ արտահայտել, իր մեջ կատաղել, բորբոքվել, 2.անհանգստանալ, անհանգստություն արտահայտել): Հայերեն համարժեքն ունի նաև իր հոմանիշ տարբերակը՝ *բարկությունից եփ գալ*, որը իտալերեն տարբերակի համար ոչ զուգահեռ հոմանիշ է, քանի որ արտահայտության պլանում այն բոլորովին տարբեր է, իսկ բովանդակության պլանում համընկնում է նրա հետ՝ 1. մեկի կամ մի բանի վրա սաստիկ բարկանալով՝ չկարողանալ արտահայտվել, ինքն իրեն ուտել, 2. կատաղել:

Իտալերեն *mani di fata* (բառացի՝ փերու ձեռքեր) դարձվածքի երկու իմաստներն են՝ 1.խոսելով կանանց մասին՝ մատնանշվում է նրանց մեծ վարպետությունը կանացի գործերում, ինչպիսիք են ասեղնագործությունը, շյուղերով և հելունով հյուսքը, կար ու ձևը, որոնք պահանջում են հմտու-

թյուն, շնորհալիություն, նրբություն և համբերություն, 2. Խոսելով հատկապես բժշկության ոլորտում աշխատող կանանց կամ տղամարդկանց մասին՝ գործն անել մեծ ճշգրտությամբ և նրբությամբ: Վերջինս հայերենում ունի երկու հոմանիշ ոչ զուգահեռ համարժեքներ (1*. ոսկե/ոսկի ձեռքեր ունենալ,* 2. *մատները/ձեռքերը ոսկի լինել*), որոնց արտահայտած երկու իմաստներն են՝ 1. շնորհքով, հմուտ լինել, կարողանալ լավ գործ (գերազանցապես ֆիզիկական) անել, 2. նուրբ և բարձրորակ գործ անող լինել: Վերջիններս լիովին համընկնում են իտալերեն տարբերակի արտահայտած իմաստների հետ, չնայած, որ հայերեն դարձվածաբանական բառարանի իմաստներում ճշգրտորեն չի նշվում բժշկության ոլորտի մասին, սակայն այն ենթադրվում է, քանի որ բանավոր խոսքում հաճախ կարելի է հանդիպել, հատկապես պլաստիկ վիրաբուժության ոլորտում՝ *բժիշկը ոսկի ձեռքեր ունի և նուրբ աշխատանք է կատարել* արտահայտությանը:

A mani nude (բառացի՝ մերկ ձեռքերով) իտալերեն դարձվածքին (1. *առանց զենքի, անզեն,* 2. *առանց գործիքների կամ առանց ձեռքերը պաշտպանելու*) նույնպես հայերենում համապատասխանում է ոչ զուգահեռ համարժեք՝ *դատարկ ձեռքով/ձեռքերով* (1.*առանց փողի կամ ընծայի, առանց հարստության կամ օժիտի,* 2.*դատարկաձեռն, ձեռնունայն, առանց արդյունքի*), որի արտահայտած իմաստներից առաջինը չի կարող համարվել իտալերեն դարձվածքի որևէ իմաստին համապատասխանող, քանի որ հայերենում այն պարունակում է նյութական իմաստային տարր և ոչ թե զենքի կամ գործիքի, ինչպես իտալերենում է: Թերևս կարելի է համարել, որ հայերեն համարժեքի երկրորդ իմաստը կարող է համապատասխանել իտալերեն դարձվածքի թե՛ առաջին և թե՛ երկրորդ իմաստներին:

Allungare le mani (բառացի՝ ձեռքերը երկարացնել*)* 1. *գողանալ, գրպանահատություն անել, 2. ձեռք տալ, ձեռք գցել,*

3.հարվածել (մեկին) իմաստները արտահայտող իտալերեն դարձվածքը հայերենում ունի արտահայտության պլանում համընկնող մեկ մենիմաստ համարժեք՝ *ձեռք երկարացնել*, որի իմաստը չի համընկնում իտալերեն դարձվածքի ոչ մի իմաստի հետ, քանի որ նշանակում է *ձեռք մեկնել*: Սակայն իտալերենի երրորդ իմաստը արտահայտված է հայերենի ոչ զուգահեռ մենիմաստ համարժեքի (*ձեռքերին ազատություն տալ*) միակ իմաստում՝ *հարձակվել, լիովին ազատ զգալ անելու, ինչ ուզում է:* Այսպիսով, այս դեպքում բազմիմաստության մասին չէ խոսքը, այլ առանձին համարժեքների և նրանց արտահայտած առանձին իմաստների մասին:

Essere la mano di Dio (բառացի՝ Աստծո ձեռքը լինել) իտալերեն դարձվածքի իմաստներն են՝ 1.*Աստծու կողմից միշտ պաշտպանված լինել*, 2.*Աստծու կողմից պատժվել*: Նախորդ օրինակի զուգակցությամբ՝ հայերենում այն ունի երեք ոչ զուգահեռ համարժեքներ, որոնք մենիմաստ են, սակայն նրանց արտահայտած իմաստները մասնակիորեն արտահայտում են իտալերեն դարձվածքի իմաստները. օրինակ՝ *Աստծո աջ (ձեռքը)* դարձվածքը նշանակում է «Աստծու ձեռքը, զորությունը իր վրա լինել» և գրեթե իտալերեն տարբերակի զուգահեռ համարժեքն է, եթե հաշվի առնենք, որ այնտեղ պակասում է միայն «աջ» ածականը: *Աստծու (Աստծո) աչքը մեկի վրա քաղցր պահել, լինել կամ մնալ* հայերեն դարձվածքը ոչ զուգահեռ համարժեք է, քանի որ չեն համընկնում գլխավոր բաղադրիչները, և նշանակում է՝*բարի աչքով նայել մեկին, նրան միշտ օգնել՝ թև-թիկունք լինել,* իսկ *Աստծու պահած* ոչ համարժեք դարձվածքը՝ Աստծու կողմից հովանավորված, փորձանքներից զերծ մնացած լինել: Ինչպես կարելի է նկատել, հայերեն համարժեքների իմաստները համընկնում են իտալերեն դարձվածքի միայն առաջին տարբերակին՝ դրական իմաստով: Իսկ երկրորդ իմաստն արտահայտում է հայերեն *Աստծուն փորձել* դարձվածքը, որը նշա-

նակում է՝ հույսը դնելով Աստծու միջամտության վրա՝ մարդկային ուժերից վեր կամ բնական օրենքներին հակառակ բան անել: Վերջինս արտահայտված է նաև իտալերեն մեկ այլ երկիմաստ դարձվածքում՝ *essere nelle mani di Dio* (բառացի՝ Աստծո ձեռքերում լինել), որի նշանակություններն են. 1. *Անելանելի և անհույս կերպով հավատալ, վստահել Աստծուն, մասնավորապես՝ ծանր հիվանդության և լուրջ վտանգի ժամանակ,* 2. *հույսը դնել Աստծու բարի կամքի, ճակատագրի վրա (գործածվում է հատկապես ռիսկային իրավիճակներում)*:

Essere nelle mani di qn (բառացի՝ լինել մեկի ձեռքերում) իտալերեն բազմիմաստ դարձվածքն արտահայտում է հետևյալ երեք իմաստները. 1*. մեկի կողմից գրավվել, գերվել, լայն իմաստով՝ ենթարկվել մեկի որոշումներին,* 2. *հայտնվել այնպիսի պայմաններում, իրավիճակում, որ ստիպված լինել ամբողջությամբ վստահել, հավատալ մեկին,* 3. *վճռորոշ ձայն, զորություն չունենալ, միջամտելու հնարավորություն չունենալ մի իրավիճակում, որտեղ որոշումները կայացնում են ուրիշները*: Հայերենում այս դարձվածքն ունի ոչ զուգահեռ համարժեք՝ *ձեռք/ձեռքը ընկնել,* որի երեք իմաստներն են. 1. ձեռք բերել, գտնել, ճարել, մի բան ստանալ, շահել, 2. *բռնվել, գերվել, գրավվել, օկուպացվել,* 3.*սպառնալիք՝ պատժելու հարմար առիթով, երբ դիմացինը իրենից կախված կլինի*: Ինչպես երևում է, իտալերեն դարձվածքի միայն առաջին իմաստն է, որ առկա է հայերեն դարձվածքի արտահայտած երկրորդ իմաստում:

Իտալերեն *come le dita di una mano* (բառացի՝ ինչպես մի ձեռքի մատներ) դարձվածքի նշանակություններն են. 1. *Հասակի մասին խոսելիս, երբ միևնույն ընտանիքում երեխաները տարբեր հասակի են լինում,* 2.*իրար շատ նման, միևնույն բնավորությամբ*: Հայերենում այն ունի մեկ ոչ զուգահեռ համարժեք, որտեղ այլևս առկա չէ կազմախոսություն պա-

րունակող գլխավոր բաղադրիչը՝ *ինչպես ջրի երկու կաթիլ,* և որը բազմիմաստ չէ: Այն նշանակում է՝ նույն, նման, իրարից չտարբերվող, որը համապատասխանում է իտալերեն դարձվածքի երկրորդ իմաստին:

Այսպիսով, իտալերեն *mano* կազմախոսություն պարունակող ԿԴ-ներին հայերենում միայն մեկ համարժեք է համապատասխանում իր երկու իմաստներով, մինչդեռ մյուս բոլոր դեպքերում առավելագույնը մեկ իմաստն է ընդհանուր երկու լեզուների ԿԴ-ների համար: Հետաքրքրական է այն, որ նկատվեցին նաև այնպիսի դեպքեր, երբ բազմիմաստ ԿԴ-ների իմաստներից մեկը մյուս իմաստի հականիշն է: Առկա են ԿԴ-ներ, որոնց մեկից ավելի իմաստները առաջացել են ամբողջ դարձվածքի վերաիմաստավորման հիման վրա, սակայն կան նաև այնպիսիք, որոնց նոր իմաստը ստեղծվել է առանձին բաղադրիչների հարանշանակությունների կամ փոխաբերական իմաստների հիման վրա:

Mkryan Aram - The Semantic Peculiarities of Phraseological Units Containing a Somatic Term in Italian.

Key words: somatism, denotation, connotation, semantic change, polisemy, synonym, antonym, sema.

The article touches upon the peculiarities of the polisemy noticed in 63 phraseological units containing a somatic term out of 921 found in the Phraseological Dictionary of the Italian language compiled by M. Quartu and E. Rossi.

The article presents an overview of the requisities that have served as a basis of polisemy. The article also dwells upon comparative analysis of the above mentioned phraseological units revealing the level of equivalence in Armenian.

Мкрян Арам - Семантические особенности многозначных соматических фразеологизмов итальянского языка и их армянских эквивалентов.

Ключевые слова: соматизм, означаемое, означающее, денотативное значение, коннотативное значение, семантический компонент, семантическое изменение, переосмысление, многозначный, синоним, антоним.

Статья посвящена изучению явления многозначности и причинам его возникновения на базе 63 соматических фразеологизмов из 921, нашедших отражение во "Фразеологическом словаре итальянского языка" М. Куарту и Э. Росси.

Анализ фразеологизмов итальянского языка и их армянских эквивалентов позволяет выявить случаи наличия, отсутствия многозначности, а также сопоставить значения фразеологизмов двух исследуемых языков.

Մկրտչյան Գարիկ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱԳՄԱՆ ՂԱՓԱՆՑՅԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի ծագման մասին գիտությանը հայտնի չորս տեսություն կա մինչ այժմ: Այդ տեսություններից մեկի հեղինակն անվանի հայագետ, հնագույն լեզուների տեսաբան Գրիգոր Ղափանցյանն է: Նրա տեսությունը կրում է Ն. Մառի, Մարքսի և Էնգելսի համայնավարական գաղափարաբանության սուբյեկտիվ կնիքը: Չնայած նրան, որ ստեղծագործական կյանքի վերջին փուլում Գ. Ղափանցյանը հանդես է գալիս հայերենի ծագման մառյան հիմնադրույթների քննադատությամբ, հայագիտության մեջ ընդունված է հայերենի ծագման հակահնդեվրոպաբանական տեսությունն անվանել որպես «Հայերենի ծագման ղափանցյանական կամ մառյան տեսություն»:

Մեծավաստակ հայագետ Գրիգոր Ղափանցյանի գիտական հետազոտությունները նվիրված են հայ ժողովրդի, նրա լեզվի և մշակույթի ձևավորման, զարգացման տարբեր խնդիրներին: Նրա՝ տքնաջան պրպտումներով ստեղծված ուսումնասիրություններում են ձևավորվել հայերենի ծագման ու առաջացման Գ. Ղափանցյանի հայեցակետերը: Այդ հարցադրումները ժամանակի ընթացքում մերժվել են, քանի որ եղել են սուբյեկտիվ, կրել են 20-րդ դարի սկզբի լեզվաքաղաքականության ազդու դրոշմը: Այդուհանդերձ, Գ.Ղափանցյանի հայագիտական և լեզվաբանական ուսումնասիրությունները, որոնք հիմնականում լույս են տեսնում 1925 թվականից

սկսած, միշտ գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Գ.Ղափանցյանի կարևորագույն աշխատություններն են՝ «Հնդեվրոպական ետնալեզվային բաղաձայնները հայերենում» (դիպլոմային աշխատանք,1913), «Chetto-Armeniaca» (1931), «Ընդհանուր լեզվաբանություն» (1939), «Ուրարտուի պատմություն» (1940), «Խեթական աստվածները հայերի մոտ» (1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» (1940), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (1944), «Հայոց լեզվի ծագման հարցի շուրջ» (1946), «Հայասան՝ հայերի բնօրրան» (1947), «Պատմա-լեզվաբանական աշխատություններ» (1956, հատոր 1) և այլն*:

Գ.Ղափանցյանը, լինելով 20-րդ դարի հնագույն մեռած և կենդանի լեզուների առաջատար տեսաբաններից, նպատակ է հետապնդում տալ հայերենի ծագումը՝ լեզվական առնչություններ գտնելով հայերենի և նրան ազգակից ու ոչ ազգակից բազմաթիվ արևելյան, եվրոպական լեզուների միջև: Այս առումով կարևոր են նրա հայերենի և խուռիտերենի, հայերենի և լազո-մեգրելական լեզուների, հայերենի ու բալայերենի, հայերենի և ասսուրա-բաբելական լեզուների ընդհանրություններին ու տարբերություններին նվիրված հետազոտությունները: Կարևոր են նաև խեթերենի և ուրարտերենի մասին նրա դիտարկումները: Գ.Ղափանցյանն իր աշխատություններում փորձում է ցույց տալ, որ փոքրասիական հնա-

*Ղափանցյանագիտությունը մեզանում ըստ պատշաճի ուսումնասիրված և արժևորված չէ: Գ.Ղափանցյանի գիտական ժառանգության և հետազոտությունների վերաբերյալ փոքրածավալ, բայց արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Էդ.Աղայանը «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ (Երևան, 1962, էջ 198-248): Մեծ հայագետի լեզվաբանական հայացքներին ակնարկային դիտարկումներով անդրադարձել է նաև Գ.Ջահուկյանը «Լեզվաբանության պատմություն» կոթողային աշխատության I (Երևան, 1960) և II (Երևան, 1962) հատորներում:

գույն և մեռած լեզուները բոլորովին անհետ չեն կորել, այլ իրենց մասնաբաժինն ունեն հայերենի կազմավորման ու ձևավորման գործում: Այս առումով կարևոր է «Chetto-Armeniaca» (1931թ.) աշխատությունը, որում հեղինակը քննում է խեթական և հայկական լեզվական ընդհանրությունների հարցը:

Գ.Ղափանցյանի՝ հայերենի ծագման վերաբերյալ տեսությունը, ըստ ամենայնի, բխում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, նրա էթնոգենեզի ու էթնոլեկտի առանձին հարցերի պարզաբանումից: Ժխտելով հայերենի ծագման հնդեվրոպական բնույթը, իսկ հնդեվրոպական լեզվաբանությունը համարելով «բուրժուական գիտություն և կապիտալիզմի ստեղծագործություն»[1]՝ իր գրեթե բոլոր աշխատություններում Գ. Ղափանցյանը որդեգրել է Ստալինի՝ լեզուների ծագման տեսությունները և սկզբունքները: Գ. Ղափանցյանն իր տեսության հիմքում կարևորում է, որ տարբեր լեզվական որակների համատեղ գոյակցումը տալիս է մի նոր լեզվական որակ, իսկ հայերենն այս առումով «կլասիկ մի օրինակ է դիալեկտիկական զարգացման օրենքների դրսևորման մեջ»[2]:

Գ. Ղափանցյանի տեսությունը ներկայանում է Ն. Մառի՝ լեզուների ծագման տեսության հիմնադրույթների մասնակի կամ լրիվ ընդունմամբ և մերժմամբ: Գ.Ղափանցյանը, հետևելով Ն. Մառին, լեզուների ծագման համար առաջ է քաշում լեզուների խաչավորման տեսությունը. «Սկզբնական տնտեսավարական համայնքների և կլանների միավորվելու հետևանքով առաջ է գալիս և մեր այժմյան իմաստով «լեզուն», որի այդ կերպ կազմավորումը, սակայն, գլուխ է գալիս միայն այսպես կոչված «խաչավորման» միջոցով: «Նախալեզուները» (“пра-языки”) այդ հետագա պատմական շրջանի նվաճումն

[1]**Գ.Ղափանցյան**, *Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը*, Նոր ուղի, 1931, համար 5, էջ 107:
[2] Նույն տեղում, էջ 117-118:

են, որոնց թվում և հնդեվրոպականը»[3]: Գ.Ղափանցյանի աշխարհայեցողությամբ՝ լեզվաբանության մեջ այդ «խաչավորումը» ներկայանում է որպես տարբեր լեզվական համակարգերի պատկանող երկու միավորների ձուլում՝ կոնտամինացիա[4]: Ն. Մառի տեսությունը ենթադրում էր, որ աշխարհի բոլոր լեզուները մեզ հասել են տարաբնույթ խաչավորումներով՝ «Երկռասայական խաչավորման («հիբրիդիզացիայի») տիպ հանդիսանում է, օրինակ, հայերենը, իբրև հնդեվրոպական և հաբեթական տարբեր ընտանիքներին պատկանող երկու միավորների ձուլում, կամ տաբասարանական լեզուն, իբրև հաբեթական և տյուրկական լեզուների խառնուրդ…»[5]:

Գ. Ղափանցյանը հայերենը համարում է խառնածին լեզու՝ թյուր համարելով հնդեվրոպաբանական հայագետների՝ գիտական լայն շրջանառության մեջ դրված հայերենի ծագման հիմնավորումները: «Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցական բովանդակութիւնը» աշխատության մեջ գրել է. «…համեմատական լեզուաբանութեան տեսութեամբ մեր «հայա-արմենական» լեզուները հանդիսանում են տարբեր և մինչև անգամ հակապատկեր լեզուական սիստեմների և տարրերի մի զանգվածք, այդու ներկայացնելով մի տիպիկ «խառն լեզու» (Mischsprache): Իսկ մեր այդ լեզուների հիմնական բաղկադրիչ մասերն են կազմել հնդկա-եւրոպական (կամ աւելի ուղիղն՝ արիո-եւրոպական) և յաբեթական լեզուական ընտանիքների) կաղապարուած որոշ ձևեր, որոնք իրենց հարկադրաբար ներկապակցուելով և ձուլուելով առաջ են բերել այդ «խառն լեզու»: Պատմութիւնն ևս իրեն հերթին գալիս է հաստատում մեր լեզուների «խառնակութիւնը», թէև շեղ կերպով, ընդունելով a priori, որ հայ ազգի կազմակերպ-

[3] **Գ. Ղափանցյան**, Հաբեթական լեզվաբանությունը և տեսությունը, Երևան, 1926, էջ 9-10:
[4] Նույն տեղում, էջ 18:
[5] Նույն տեղում:

ման պատմական պրոցեսը (հնդկա-եւրոպական և յաբեթական ցեղերից) անդրադարձած պէտք է լինի և այդ ազգի լեզուի վրա»[6]:

Գ.Ղափանցյանը գտնում է, որ դասական հայերենում քիչ են «հաբեթական»* լեզվի ձևաբանական օրինաչափությունները, իսկ հայերենի բարբառներում դրանք շատ են՝ «…որ մեր լեզուների սկզբնական խմորման և ձևավորման կազմիչներն են եղել հնդկա-եւրոպական և յաբեթական լեզուների որոշ պատմաձևերը, և որ մեր լեզուները, հետևապես, հայտ են եկել որպէս «խառն լեզուներ», անկախ նրանից թէ որ տարրն է զօրեղ իւրաքանչիւրի մէջ՝ հնդկա-եւրոպականը և թէ յաբեթականը….»[7]:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ հայերենում ոչ հնդեվրոպական տարրերը՝ փոխառությունները և ազդեցությունները, անհա-

---

[6] **Գ.Ղափանցյան**, *Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցական բովանդակությունը*, Ս.Էջմիածին, 1917, Արտատպութիւն «Արարատ» ամսագրի 1917 թ. համար 2-3-ից, էջ 5:

* Գ.Ղափանցյանը, արժևորելով Ն. Մառի տեսությունը, նշում է, որ հաբեթական ռասան, որպես մշակութային օջախ, հայտնի է «միջերկրածովական կուլտուրա» անվանումով: Ըստ հնագիտական, պատմագիտական, ազգաբանական ոլորտների ներկայացուցիչների կատարած կենցաղային, հոգևոր, նյութական վերլուծությունների՝ հարավային Եվրոպայի և Առաջավոր Ասիայի որոշ շրջաններում հնագետները երևան են հանել ոչ սեմական, ոչ էլ հնդեվրոպական մի ցեղի ներկայությունը («երրորդ էթնիկական տարր») (**Գ.Ղափանցյան**, Հաբեթական լեզվաբանությունը և տեսությունը, էջ 6): Այս տարը, ըստ նրա, կա Փոքր Ասիայում, Առաջավոր Ասիայում, Միջերկրական ծովի կղզիների վրա, ինչպես նաև Բալկանյան և Ապենինյան թերակղզիների վրա, նաև Եվրոպայի արևմուտքում՝ Պիրենյան թերակղզում, նաև Ռուսաստանի հարավում, Պոնտոսի ափերին:

[7] **Գ.Ղափանցյան**, *Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցական բովանդակությունը*, էջ 8:

մեմատ շատ են: Հայերենում կա և՛ հնդեվրոպական շերտ, և՛ ոչ հնդեվրոպական շերտ, հետևաբար՝ հայերենը խառնածին լեզուն է՝ «Արիո-հաբեթական»՝ հնդեվրոպական և տեղական, ասիանիկ տարրերով ներկայացող լեզու: «Ես իմ “Хайаса-колыбель армян”, ինչպես և “К происхождению армянского языка” աշխատություններում հայերի էթնիկական և լեզվական գոյացման սուբստրատը համարել եմ Հայասա մեծ պետության ժողովուրդը (կամ ցեղախումբը), որ ապրում էր Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ մոտավորապես Էրզրումից մինչև Սվազ, և նրա լեզուն: Այդ լեզուն նման է եղել ասիանիկ (հին փոքրասիական) լեզուներին, թեպետ նրա հիմնական կորիզը հետագայում հարստացել է հնդեվրոպական, վրացական, խուռիտական (արմինական)-ուրարտական և այլ լեզուների բառային կազմի հաշվին: Երբ այդ լեզուն տարածվում է Ուրարտուի տերիտորիայի վրա, նա հաղթահարում է տեղական լեզուներն ու նրանց բարբառները: Այս երկարատև պրոցեսների հետևանքով ձևավորվում են ինչպես այդ հայասական (հայկական) լեզուն, այնպես էլ նրա բարբառները: Գրավոր կերպով 5-րդ դարում հենց այդ հայկական (նախկին հայասայի) լեզուն է, որ մնացել է հետագա «գրաբար» անվան տակ»[8]:

Գ.Ղափանցյանի մոտեցումները հիմնված են Պ.Կրեչմերի՝ ասիանիկ լեզուների մասին տեսության վրա[9]: Գ.Ղափանցյանը հայերենը համարում էր ծագմամբ փոքրասիական կամ ասիանիկ լեզու՝ հիմք ընդունելով խեթական, ուրարտական, խուռիտական և այլ փոքրասիական կամ ասիանիկ լեզունե-

---

[8]**Գ.Ղափանցյան**, *Ստալինյան ուսմունքը լեզվի մասին և հայագիտության մի քանի խնդիրներ*, առանձնատիպ «Լեզվաբանական և հայագիտական հետազոտությունների» հատոր առաջինից, 1951, էջ 13-14:

[9] Տե՛ս **Լ. Հովսեփյան**, *Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում*, Երևան, 1982, էջ 40:

րի* ու հայերենի մեջ եղած լեզվական ընդհանրությունները: Իր այս տեսակետը հիմնավորում էր հայերենում եղած բազմաթիվ բնիկ բառերի գոյությամբ, որոնք ունեին հետևյալ իմաստաթեմատիկ խմբերը՝ արտադրության միջոցներ, մետաղներ, կահ-կարասի, ջուլհակություն և կարելու արհեստ, անասնապահություն, գյուղատնտեսություն, որսորդություն, ընտանեկան և ազգակցական հարաբերություններ և այլն: Փոքրասիական (ասիանիկ) լեզուների հետ հայերենի լեզվական բազմաթիվ ընդհանրություններ ունենալը, ըստ Գ. Ղափանցյանի, չի կարելի փոխառություններ կամ ազդեցություններ համարել հայերենում:

Հայերենի ծագման Գ.Ղափանցյանի այս տեսակետը երբևէ գիտական լայն շրջանառության մեջ չի դրվել, քանի որ հայերենի քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի հնդեվրոպական բնույթը դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսերից հաստատված էր բազմաթիվ անհերքելի, հիմնավոր լեզվական փաստերով*: Գ.Ղափանցյանը երբեք չի ժխտել հա-

---

* Ասիանիկ կամ հին փոքրասիական լեզուները գոյություն են ունեցել Փոքր Ասիայում՝ Ք.ա. 2-3 հազարամյակներում: Այդպիսի համարում ունեցող լեզուներն ութն են՝ խուռիտական (սուբարական, միտանական), ուրարտական (խալդական), հիերոգլիֆ խեթական, մասամբ բևեռագիր խեթական (նշանակալից չափով հնդեվրոպականացած), նախախեթական (պրոտոխեթական), Փոքր Ասիայի հարավային մասի լուվիական, լիկիական, լիդիական լեզուները: Գիտության մեջ հնչել են կարծիքներ, որ ասիանիկ լեզուների թվին է պատկանում նաև էտրուսկերենը: 19-րդ դարի կեսերին մի շարք գիտնականներ որոշակիորեն խոսել են փոքրասիական հին լեզուների մասին և կարծիք հայտնել, որ այդ լեզուները ազգակից են հայերենին: Այդ գիտնականներից են՝ Ռ.Գոշեն, Լասսեն, Բլաուն, Ք. Պատկանյանը և ուրիշներ:

* Հայերենի հնդեվրոպական բնույթի և հայերենի ծագման հարցերին վերաբերող այլ հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Հ. Աճառյան,** *Հայոց լեզվի պատմություն* (հատոր 1, Ե. 1940), **Մ.**

յերենում հնդեվրոպական շերտը, սակայն շրջանառության մեջ է դրել այն տեսակետը, որ հայերենում գերիշխողը կամ հիմնաշերտը փոքրասիականն է, նրա տերմինավորմամբ՝ ասիանիկը: Գ.Ղափանցյանը հայերենը համարում է երկու լեզվական միավորների համաձուլումից ձևավորված լեզու, որտեղ կա հնդեվրոպական և հաբեթական նստվածք: Մեջբերենք մեծ հայագետի հետևյալ դիտարկումները՝ «Մեր լեզուների հնդկա-եվրոպական շերտի «գենոլոգիան» պարզորոշ է. հայկական լեզուախումբը պատկանում է հնդկա-եվրոպական նախալեզուի արևելյան բարբառներին («satam») կան «s» բարբառներին….»[10], կամ՝ «Հաւանորեն մեր այդ լեզուախումբը (նկատի ունի հնդեվրոպական տարրերը) փռուգիականի և թերևս թրակիականի հետ կազմելիս են եղել մի խմբակցություն, իբրև այդ արևելյան բարբառաճյուղի մի ստորաբաժանում, բայց դրա համար ձեռքի տակ չունենք անհրաժեշտ տուեալները»[11]:

Լեզուների ծագման խաչավորման տեսությունը հիմնավորելու համար Գ.Ղափանցյանը տարբեր վարկածներ է առաջ բերում: Տարբեր ծագում ունեցող ազգերի միախառնման մասին գրում է. «…միգրացիան իր գաղթերով ու տեղաշարժերով, կարելի է ասել՝ սովորական էր ժողովուրդների նախ-

---

Մինասեան, *Ծագումն ու նկարագիր հայ ազգին* (Առաջին մաս, Ֆրեզնո, 1922), **Գ. Ջահուկյան,** *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան* (Ե.,1987), **Ռ.Իշխանյան,** *Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր* (Ե.,1988), **Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուոքքր,** Հայերը (Ե.,1992), **Յ. Գաբրիելյան,** *Հայերի և հայերենի ծագման խնդիրներն ըստ լեզվաբանական և գենետիկական տվյալների* (Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 2017, N 1 (22), էջ 3-13):

[10] **Գ.Ղափանցյան**, *Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցական բովանդակությունը*, էջ 13:

[11] Նույն տեղում, էջ 14:

կին վիճակում, երբ նրանք դեռ ապրում էին տոհմական-ցեղային ձևերով և ապրուստի համար, ինչպես և ճնշման տակ ստիպված էին տեղափոխվել հեռավոր տեղերից…»[12]: Այս պարագայում նա հայ ազգի և հայկական լեզուների տարածման օրրանը համարում է պատմական Հայաստանի հարաւային մասը, ավելի ստույգ՝ հարավ-արևմուտքը. «…նախքան «պատմական» հայ ազգի կազմուելը այդ տեղում ապրել են զանազան հաբեթական ցեղեր (ոչ «արամէական», այսինքն՝ սեմական, ինչպէս անուանում է Ադոնցը)՝ ազգակից, ըստ պրոֆ. Մառի, սեմական ժողովուրդների հետ, երրորդ՝ որ եկվոր «փռուգիական հայերի» և այդ տեղացիների ձուլուելուց է առաջացել պատմական հայ ազգը (այդ էթնիկայի երկվութիւնը մասամբ երևան է հանվում և զանգաչափությամբ) և չորրորդ՝ այդ ազգի լեզուն (կամ լեզուները) գոյացել է երկու լեզուական սիստեմների և տարրերի հարկադրաբար բաղադրուելուց և ներկապակցուելուց՝ հնդկա-եվրոպական և հաբեթական, պատմականօրէն մեզ հայտ գալով երկու տարբերակներով՝ «ոստանիկ» բարբառով և «ռամկական»»[13]:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ խառնածին՝ հնդեվրոպական և հաբեթական տարրերով ներկայացող լեզուն, ինչպես նշել ենք արդեն, ի սկզբանե գործածական է եղել Հայկական լեռնաշխարհի որոշակի շրջաններում՝ Հայաստանի հարավ-արևմուտքում՝ հետագայում լայն տարածում ստանալով. «…ասիմիլատիվ հոսանքը բնականաբար եղել է հաջորդական, ըստ տեղի, այսինքն մի որևէ գավառ յուրացրել է (ձևափոխելով) հարևան գավառի «հայ լեզուն», իսկ իրենից վերցրել են ուրիշները, նույնպես ձևափոխության ենթարկելով,- նույնը կատարվել և կատարվում է ուրիշ լեզուներում և հենց արդի մեր

[12] **Գ.Ղափանցյան**, *Ստալինյան ուսմունքը լեզվի մասին և հայագիտության մի քանի խնդիրներ*, էջ 16-11:

[13] **Գ.Ղափանցյան**, *Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցական բովանդակությունը*, էջ 11:

բարբառներում: Այդ զուտ ժողովրդական և բնական եղանակով նախնական «փռուգիա-հաբեթական» լեզուն ավելի էր հաբեթականանում, այլազան կացություններով հատուկ դառնալով այլևայլ «հայացած» վայրերի, մինչդեռ ազնվականության խավերը (առաջացած Տիգրան Մեծի ժամանակից) ավելի ողջ էին պահում սկզբնական «փռուգիա-հաբեթական» հայ լեզուն,- ի հարկե, իրեն զարգացած ձևով (=գրաբարի հին ձևը), որին նպաստում էր և իրենց ուրույն կենցաղավարությունը)»[14]:

Մեկ այլ ուսումնասիրության մեջ Գ. Ղափանցյանը հայ ժողովրդի ծագման բնօրրանը համարում է Հայասան: Այդ երկրի սահմանների մասին գրում է. “Местоположение страны Хайаса-Аззи нужно приурочить в основном к пространству между верховьямы Ефрата (=Кара-су), Чороха и Аракса, иначе говоря, переделам древней Малой и Высокой Армении’’[15]: Խեթերենի, հայերենի, վրացերենի բառապաշարում լեզվական ընդհանրությունների առկայությունը, ըստ նրա, վկայել է այն մասին, որ այս երեք ժողովուրդների բնօրրանը եղել է աշխարհագրական միևնույն գոտում. “…с очевидностью доказывают промежуточное местоположение хайасцев между хеттами и грузинами, что также говорит в пользу расположения Хайаса-Аззи на просторах между верхним Ефратом, Чорохом и Пархарскими гораме с севера”[16]: Կարևոր են նաև Գ. Ղափանցյանի դիտարկումները՝ կապված հայերենի և խուռի-ուրարտական և այլ լեզուների միջև եղած ծագումնաբանական, լեզվական, կառուցվածքային (բառապաշար, քերականություն) ընդհանրությունների մասին: Գ.Ղափանցյանը բազմաթիվ

---

[14] **Գ.Ղափանցյան**, *Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը*, Նոր ուղի, 1931, 5, էջ 117:

[15] **Гр.Капанцян**, *Хайаса-Колыбель армян, этногенез армян и их началная история*, Ереван, 1947, стр. 240.

[16] Նույն տեղում 242.

պատմական, լեզվական փաստերի, աշխարհագրական և հնագիտական տվյալների հիման վրա փորձում էր պարզել հայերի և հայերենի գոյացման, ինչպես նաև բազմաթիվ այլ կարևոր հարցեր՝ նկատի ունենալով Հայասա-Ազզի երկրի մասին խեթական արձանագրություններում եղած տվյալները: Կատարենք մի քանի մեջբերում. “Армянский язык есть живое детище процесса образования своего народа и в древнеийшей стадии своего зачинания несомненно исходит из языка племен Хайасы, родственного протохеттскому и хеттскому, в том числе и иероглифическому хеттскому, затем балайскому, судя по хайасо-балайской этнико-политической участи, и наконец грузинскому, особенно его западным представителям, мегрело-чанским диалектам”[17], նաև այս. “Только ведущие этнические обьединения хайасцев, арминов-хурритов и индоевропейцев при действенном (активном) их культурном и политическом возобладании могли образовать армянскую народность и язык, а остальные народы (племена) и языки позже освоенного обширного Урарту поглощались этими новообразовавшимся историческими армянами, варьируя в лучшем случае образование местных армянских диалектов. Равномерной роли и мозаики участия десятков языков и племен фосударства Урарту не могло быть, ибо они могли только ассимилироваться”[18]:

Համաձայն վերոնշյալ ղափանցյանական դիտարկումների՝ հայասցիները (հայերը), արմենները և նաիրյան-ուրարտական ցեղերն աստիճանաբար ձուլվում են՝ կազմավորելով հայ ժողովուրդը: Աստիճանաբար նրանց միջև հաստատվում են տնտեսական, քաղաքական, մշակութային լայն կապեր, որոնք ամրապնդում են նրանց լեզվական և տարածքային կապերը: Այդ կապերի շնորհիվ է, որ Արածանի գետի հովտում, Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերում և Վանա լճի ավազանում ապրող ցեղերը միավորվում են ու ձուլվում:

[17] Նույն տեղում 247:

[18] Նույն տեղում:

Հայ ժողովրդի կազմավորման գործընթացը հատկապես 5-3-րդ դարերում (Ք.ա.) այնքան է խորանում, որ նախկին ցեղային միությունների միաձուլումից առաջացել էր հայ ժողովուրդը: Գ.Դափանցյանի՝ հայ ազգի ձևավորման ու կազմավորման վերոնշյալ դիրքորոշումները գիտական շրջանառության մեջ են դրվել 21-րդ դարի հայ պատմագիտական գրականության մեջ: Պատմաբան Ա.Մովսիսյանն իր աշխատություններից մեկում գրում է. «…Հայաստանին տրված հնագույն անվանումները՝ Արատտա-Արարատ/Ուրարատ-Ուրարտու, Ս/Շուբուր-Ս/Շուբարտու-Շուբրիա, Արման (ի/ ում)-Արմի/ե-Արմինա-Արմենիա, Հայ(ա)-Հայասա-Հայաստան, իրենց տարբերակներով վկայված են Ք.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսից, երբ, ըստ լեզվաբանության տվյալների, հայերենը դարձել էր ինքնուրույն լեզու, իսկ վաղնջահայերենի կրողները Ք.ա. 3-2-րդ հազարամյակներում բնակվել են Հայկական լեռնաշխարհում»[19]:

Գ.Դափանցյանի բոլոր հնարավոր փորձերը, կարելի է ասել, ձախողվում են հայերենի քերականական կառուցվածքում փոքրասիական տարրեր գտնելու փնտրտուքում: Նա երբևէ չի հրաժարվում իր տեսությունից, սակայն կյանքի վերջին շրջանում նրա եզրակացությունները խուսափողական են դառնում լեզվական փաստերի բացակայության պատճառով: Գ.Դափանցյանն իր գործունեության վերջին շրջանում հետևողականորեն քննադատել է Ն. Մառի ֆորմալիստական, իդեալիստական «նոր ուսմունքը»՝ որպես վուլգար մատերիալիստական մի «տեսություն», քանի որ հայերենը համարվում է խառը տիպի լեզու՝ «հաբեթա-հնդեվրոպական»*: Գ.Դափանցյանը գրել է. «Մենք պետք է քննադատորեն

[19]**Արտակ Մովսիսյան**, *Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում* (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 55:

* Գր.Դափանցյանի քննադատությունները ուղղված են ընդդեմ հաբեթական լեզվաբանության, որը շրջանառության մեջ է դրել Ն.

վերանայենք նաև Ն. Մառի հայագիտական ժառանգությանը: …. հայագետները շահագրգռված են վեր հանելու Ն. Մառի սխալ տեսակետները թե մեր լեզվի և թե մեր պատմության, ճարտարապետության, հնագիտության, ազգագրության, հին գրականության և այլ բնագավառներում»[20]: Ն. Մառի, հետևապես Գ. Ղափանցյանի տեսության հիմնադրույթները մերժվում են 20-րդ դարի կեսերից սկսած իսպառ, քանի որ լեզվաբանական հետազոտությունները վերջնականապես պարզում են մի քանի փոքրասիական լեզուների (խեթական, բալայերեն, լուվիական, ուրարտերեն և այլն) հնդեվրոպական բնույթը: Ուստի՝ այդ լեզուների և հայերենի հնդեվրոպական ընտանիքից կտրելը և ասիանիկ համարելու տեսակետները պետք է համարել ժամանակավրեպ և հնացած: Օրինակ՝ Գ.Ղափանցյանը փաստարկված ստուգաբանություններով ցույց է տվել հայերեն և ուրարտերեն լեզվական ընդհանրությունները. վիճարկման ենթակա չէ, որ բազմաթիվ աշխարհագրական անուններ նույնությամբ կան հայերենում և ուրարտերենում (պատմալեզվաբանական քննարկման այլ հարց է հայերեն-ուրարտերեն շինծու տարբերակումը, որը, կարծում ենք, դիտավորությամբ շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարում ինչ-ինչ քաղաքական ենթատեքստով):

Մառը՝ որպես նրա «հանճարեղ ստեղծագործություն»: Բուն հաբեթական լեզուներ են համարվում բուն վրացական լեզուները՝ ընկալվելով հաբեթաբանության բուն հիմքը, ապա աբխազերենը, չերքեզերենը, թուշերենը, լեզգիերենը, չեչեներենը: «…հաբեթա-սեմական ազգակցության տարրերը Մառը բացատրում է այդ լեզուների նախկին՝ ագգլուտինատիվ՝ դրության ընդհանրությամբ, որից, իբրև սոցիալապես և հոգեբանորեն արդեն անցնող շրջանից, դրանք ստացել են իրենց հետագա ձևավորումը և դեմքը» (**Գ. Ղափանցյան**, Հաբեթական լեզվաբանությունը և տեսությունը, էջ 11):

[20]**Գ.Ղափանցյան**, *Ստալինյան ուսմունքը լեզվի մասին և հայագիտության մի քանի խնդիրներ*, էջ 16-17:

Կարծում ենք, որ Գ. Ղափանցյանի բացահայտումները ոչ թե ցույց են տալիս հայերենի՝ հաբեթական լեզու կամ կովկասյան որևէ լեզվի հետ ցեղակցություն ունենալը, այլ այն, որ հնդեվրոպական ծագման հայերենը որոշակի պատմական էպոխայում դոմինանտ, գերիշխող, հաղթող լեզու է եղել և իր կազմավորման ընթացքում իրեն է ձուլել ցեղակից և ոչ ցեղակից բազմաթիվ լեզուների: Այս դրույթն անձամբ հիմնավորել է Գ. Ղափանցյանը՝ գտնելով, որ հայասացիները, լինելով հաղթող ցեղ հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած ցեղերի մեջ, պահպանում են իրենց ցեղային ինքնանվանումը՝ **խայ/ հայ** զուգահեռ արտաբերությամբ, իսկ իրենց երկիրն անվանում են Հայաստան, երկիր, որին օտարները կոչում են Արմենիա:

Ավելի ընդհանրական գնահատելու համար պետք է ասել, որ Ն.Մառի և Գ.Ղափանցյանի առաջ քաշած՝ լեզուների խաչավորման տեսությունները հիմնավորող լեզվական փաստերը նոստրատիկ (մերային) լեզվաբանության դրոշմն ու հայեցակետերն են կրում, քանի որ նրանք, ինչպես տեսանք և ինչպես փաստերն են ցույց տալիս, փորձում էին ցույց տալ ոչ ցեղակից և տիպոլոգիապես ոչ համասեռ լեզուների միջև եղած ընդհանրական, ազգակցական խորը կապերը:

Mkrtchyan Garik – Ghapantsyan' theory on the origin of Armenian language. In this article the author presents one of the theories on the origin of Armenian language, which was withdrawn by eminent Armenologist Grigor Ghapantsyan. The latter examined the origin of Armenian language and found linguistic contacts between Armenian and various related and not related Eastern and European languages. G. Ghapantsyan considered Armenian a hybrid Asianic language. Later on this approach has been entirely denied.

Мкртчян Гарик - Капанцянская теория о происхождении армянского языка. В статье автор представляет одну из теорий происхождения армянского языка, автором которой является известный арменовед Григорий Капанцян. Изучая происхождение армянского языка, Капанцян находит лингвистические связи между армянским языком и многими другими восточными и европейскими языками. Капанцян считал армянский язык смешанным, азиатским языком. Позже, эта точка зрения полностью отрицается.

Պետրոսյան Արմեն
(Հայաստան, ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտ, Մատենադարան)

ԷԹԻՈՒՆԻՆ ՀԱՅՈՑ ՕՐՐԱՆ

70 տարի առաջ, 1947-ին լույս տեսավ Գրիգոր Ղափանցյանի «Հայասան հայոց օրրան» մենագրությունը[1], որտեղ լեզվաբանական, պատմագիտական և մշակութաբանական հիմնավորումներով պաշտպանվում էր հայոց ազգածագման հայասական վարկածը, առաջ քաշված Ն. Մարտիրոսյանի կողմից 1924-ին[2]: Ղափանցյանը կրկնում էր Յոզեֆ Մարկվարտի 1928-ին լույս տեսած հոդվածի վերնագիրը՝ «Հայոց օրրանը»[3], որով նա թերևս ցանկանում էր բնորոշել հայասական վարկածը որպես նոր քայլ Մարկվարտից հետո:

Գ.Ղափանցյանը հայ և հարևան հին ու նոր ժողովուրդների պատմության, լեզուների ու մշակույթների վերաբերյալ

---

[1] **Капанцян Г.А.**, *Хайаса – колыбель армян*, Ереван 1947 (=**Капанцян Г.А.,** *Историко-лингвистические работы*, Т. 1, Ереван, 1956, 7-265).

[2] **Մարտիրոսյան Ն.**, *Հայերենի հարաբերությունը հեթիդերենի հետ*, Հանդես Ամսօրյա, 1924, №№ 9-10: Հետագայում այդ վարկածի (իր տարբեր ձևակերպումներով)կողմնակիցներ են եղել Կ. Ռոթը, Պ. Կրեչմերը, Ա. Խաչատրյանը, Հ. Աճառյանը, Հ. Տաշյանը, Հ. Մանանդյանը, Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին, Ս. Երեմյանը, Վ. Գեորգինը, Վ. Բընըցյանուն, Ս. Թումանովը, Գ. Ջահուկյանը, Չ. Բըրնին, Դ. Լանգը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Գ. Սարգսյանը և շատ ուրիշներ, տե՛ս **Պետրոսյան Ա.**, *Հայոց ազգածագման հարցեր*, Երևան, 2006, էջ 118:

[3] Markwart, J. 1928. Le berceau des arméniens, Revue des études arméniennes, 8, էջ 210-232 :

բացառիկ գիտելիքների տեր էր, բայց շատ հարցերում լինելով Ն. Մառի դպրոցի հետևորդ՝ անընդունելի հայացքներ ուներ լեզվաբանության վերաբերյալ, ինչը նշանակալիորեն թուլացնում, իսկ որոշ կետերում արժեզրկում է նրա աշխատությունը: Նա հայերենը համարում էր Հայասայի լեզվի հաջորդը, բայց մերժում էր հայերենում հնդեվրոպական ժառանգության էական դերը (նա գտնում էր, որ հայերենը հնդեվրոպական լեզու չէ, այլ ազգակից տեղի հին ոչ հնդեվրոպական լեզուներին՝ խուռիերենին, ուրարտերենին, խաթերեն, վրացերենին նն, որոնց մեջ էր մտցնում նաև հնդեվրոպական խեթերենը): Հայասական տեղանունները, անձնանուններն ու դիցանունները նա մեկնաբանում էր առավելապես խուռիական, ավելի քիչ՝ տարածաշրջանի այլ հին լեզուների հիմքերով:

Այս հարցին անդրադարձած մեր մյուս ականավոր գիտնականը՝ Գևորգ Ջահուկյանը սկզբից փորձել է ցույց տալ, որ Հայասայի լեզուն հնդեվրոպական՝ անատոլիական (խեթալուվիական, հայերենից շատ տարբեր) մի լեզու է[4], իսկ հետագայում՝ գտնել հայկական կապեր և ցույց տալ Հայասայի լեզվից պահպանված անունների որոշ մասի հայկական լինելը, որով և պիտի հաստատվեր Հայասայի հայալեզու լինելու դրույթը[5]:

---

[4] **Djahukian G.B.**, *The Hayasa Language and its Relation to the Indo-European Language,* Archiv Orientalni 1961, 29/3, p. 353-405; **Джаукян Г.Б.**, *Хайасский язык и его отношение к индоевропейским языкам*, Ереван, 1964; **Ջահուկյան Գ.**, *Հայասայի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը*, Պատմաբանահիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ) 1976, 1, էջ 89-110; **Ջահուկյան, Գ.,** *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*,. Երևան, 1987, էջ 322-341:

[5] **Джаукян Г.Б.,** *О соотношении хайасского и армянского языков*, ՊԲՀ, 1988, №1, 60-79; №2, 68-88.

Այսպիսով, եթե նույնիսկ համարենք, որ Ղափանցյանի դիտողությունները և համադրությունները ճիշտ են, ապա, հենց իր ժամանակի գիտության լույսի ներքո նրա աշխատանքը ցույց է տալիս Հայասայի ոչ հայկական լինելը[6]: Իսկ Ջահուկյանը հիմնականում ներկայացրել է անունների թեև լեզվաբանորեն ընդունելի, բայց միայն մտահայեցողական ստուգաբանություններ: Այսպիսով, այդ երկու ականավոր հեղինակների աշխատություններն էլ, չնայած բազում դիպուկ դիտարկումներին, միարժեքորեն համոզիչ համարվել չեն կարող: Իսկ նրանցից հետո Հայաստանում հայասական վարկածի վերաբերյալ հրապարակված շատ աշխատանքներ ուղղակի կրկնում են նրանց դրույթները և եզրակացությունները: Նրանցում երբեմն էական դեր է կատարում նաև ցանկալին իրական համարելու կամ ցանկալին հիմնավորելու ձգտումը, որը հակասում է գիտական մոտեցմանը և բնորոշ է մեզանում բավական տարածված մերձգիտական բնույթի աշխատանքներին: Պետք է հաշվի առնել նաև գիտության զարգացումը և նոր փաստերի ի հայտ գալը, ինչն անխուսափելիորեն իջեցնում է հին աշխատանքների արժեքը, դարձնում դրանց գիտության պատմություն և անհրաժեշտ դարձնում նոր ուսումնասիրությունների հրապարակումը:

Ըստ մեր վարկածի, *հայ* ցեղանունը կապված է ուրարտական աղբյուրների Etiu- երկրանվան հետ (ներկայացված Etiuni կամ Etiuḫi ածանցյալ ձևերով՝ «Էթիուական» (երկիր): Երկրի տարածքը հիմնականում համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ նահանգին: Ցեղանվան հնարավոր նախատիպերից մեկը կարող էր լինել *hat‘i(y)o-, անկախ վերջի-

---

[6] **Джаукян Г.Б.**, *Хайасский язык…*, с. 11-14. **Дьяконов И.М.**, *Предыстория армянского народа*, Ереван 1968, с. 213; **Бэнэцяну В.**, *Некоторые вопросы этногенеза армян*, ՊԲՀ, 1961, 2, էջ 105-106. **Ջահուկյան, Գ**. *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան,* Երևան, 1987, էջ 322-323:

նիս ծագումից՝ հնդեվրոպական *poti-yo-ից, խեթ. ḫatti-ից կամ մեկ այլ ձևից[7]: Սեպագրում չկան նշաններ *o* հնչյունի համար. այն հաղորդվել է որպես *ու,* և ընդհանրապես ուրարտ. սեպագիր *ու*-ն սովորաբար հաղորդում է *o*-ն[8] (Ի. Դյակոնովը, հայոց նախապատմությանը նվիրված իր գրքի անգլերեն տարբերակում Etiu-ն տառադարձում է Etio)[9]: Սեպագրում չկան նշաններ նաև *h* -ի համար, և այն կարող էր չհաղորդվել (ուրարտական սեպագրում ḫ-ի նաև *h* հնչյունը հաղորդելն ընդհանրապես կասկածելի է)[10]: Ուրարտ. e-ն հնչել է հավանաբար, որպես լայն ε կամ նույնիսկ æ: Դա է, թերևս, պատճառը, որ ուրարտ. նախաձայն e-ին հայ-ուրարտական համընկնումներում սովորաբար համապատասխանում է հայ. *ա*-ն[11]: Ինչևէ, հնագույն հայերենում կամ գոնե նրա մի

---

[7] Հայ ցեղանվան ծագման վերաբերյալ տեսակետների քննությունը տե՛ս **Պետրոսյան, Ա.**, *Հայ ցեղանունը.* Բանբեր հայագիտության 2014, 2, էջ 184-199; **Петросян А.Е.**, 2016, *Армянский этноним hay*, Вопросы ономастики 2016, 2, էջ 146-161 :

[8] **Дьяконов И.М.**, *Материалы к фонетике урартского языка,* Вопросы грамматики и истории восточных языков. М.-Л., էջ 50; **Хачикян М.Л.**, *Хурритский и урартский языки*, Ереван 1985, էջ 34:

[9] **Diakonoff I.M.**, *The Pre-History of the Armenian People*, Delmar, New York,1984, p. 134, n. 21.

[10] **Дьяконов И.М.**, *Материалы…*, էջ 42, 52. **Хачикян М.Л.**, *Хурритский и урартский…*, էջ 41. հմմտ. օրինակ Abuni – հայ. Հաւ(ն)ունիք նույնացումը (Арутюнян 1985, 9-10), որը կարող է բացատրվել h-ի՝ սեպագրում չարտացոլվելով:

[11] Հմմտ. ուրարտ. euri՝ «տեր» – հայ. *աւրիորդ*՝ «տիրոջ դուստր» (**Ղափանցյան Գ.**, *Հայոց լեզվի պատմություն. հին շրջան,* Երևան, 1961, էջ 121-122, 134; տե՛ս և Дьяконов И.М., материалы…, էջ 48-49; Ջահուկյան Գ., Հայոց լեզվի..., էջ 428, 431-432, 441: Ընդհանրապես, e/a տատանումը սովորական է այլալեզու անվանումների տառադարձման ժամանակ, այդ թվում՝ սեպագիր հաղորդումներում, հմմտ. Հայկական լեռնաշխարհի տեղանուններից սեպագիր (ասո-

բարբառում *ա*-ն կարող էր ունենալ այնպիսի արտասանություն, որ ուրարտերենում ընկալվեր և հաղորդվեր որպես *է*: Այսինքն՝ հայ. **հաթի(յ)ո*-ն ուրարտերենում կարող էր «տառադարձվել» հենց որպես etiu:

Ընդ որում՝ պարտադիր չէ, որ հայ. *-ti- > -y- անցումը տեղի ունենար Էթիունիի առաջին հիշատակության դարաշրջանից՝ մ.թ.ա. IX դարավերջից հետո: Etio- ձևը՝ որպես լեռնաշխարհի մի նշանակալի մասին տիրող ցեղախմբի անվանում, կարող էր ուրարտերենին անցած լինել գրավոր վկայվելուց դարեր առաջ, երբ հնագույն հայերենում այն հնչում էր *հաթի(յ)ո*-, և մնար ուրարտերենում այդ հին ձևով, մինչդեռ հայերենում կարող էր ուրարտական ժամանակներում արդեն *հայո* ձևը ստացած լինել[12]:

Այսպիսով, ըստ այս վարկածի, հայոց երկիրը՝ ուրարտական ժամանակների Հայաստանը, ուրարտական աղբյուրներում հանդես է գալիս որպես Etiuni/ḫi: Վարկածն առաջ է քաշվել մեր կողմից 1983-ին և հիմնավորվել մի շարք աշխա-

---

ռեստանյան) Enzite-ի և Kullimmeri/Qulmeri-ի համապատասխանությունը հայ. Անձիտին և Քղիմարին (կան և հակառակ օրինակներ): Նման փաստեր կարելի է գտնել այլուրեք, հմմտ., օրինակ, հայ. Եկեղիք-Եկեղեացի (հայց. հոլով՝ Եկեղիս) և հունարեն Ակիլիսենե ձևը:

[12] Ահա նման մի քանի օրինակ եվրոպական լեզուներից. գերմ. Ֆրանկրայխ «Ֆրանկների թագավորություն», ռուս. Ֆրանցիա, ֆրանս.՝ Ֆղանս. գերմ., անգլ. Փարիս, ֆրանս. Պաղի. գերմ., անգլ., ֆրանս. Պրագ, չեխ. Պրահա. ռուս. Վեյմար, գերմ. Վայմար: Այս տարբերությունները բացատրվում են այն բանով, որ Ֆրանսիան առաջ կոչվել է Ֆրանցիա, ապա՝ Ֆրանս և Ֆղանս (ֆրանկ ցեղանունից), Փարիզը՝ Պարիս, Պարի և Պաղի, Պրահան՝ Պրագա, Վայմարը՝ Վեյմար, մինչդեռ հարևան լեզուներում պահպանվել են հնից փոխառված անվանաձևերը:

տություններում (հրատարակված 1984-ից)[13]: Մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին Էթիունին եղել է Հայկական լեռնաշ-

[13] **Պետրոսյան Ա.**, *Նախահայերենի կրողների տեղայնացման հարցի շուրջը,* Երիտասարդ լեզվաբանների 4-րդ կոնֆերանս. զեկուցումների դրույթներ. Երևան 1984, էջ 31-32: **Նույնի՝** *Հայ ցեղանունը որպես հանրության հասարակական կառուցվածքի տերմին,* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր. Երևան 1986, էջ 94-95: **Նույնի՝** *Հայկի և Բելի առասպելի վերլուծության փորձ,* Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջան. Երևան, 1987, 64-66: **Նույնի՝** *Արարատյան դաշտի դիցակիր տեղանունները*, Երիտասարդ գիտնականների հանրապետական վեցերորդ գիտաժողովի նյութեր. Երևան, 1988, էջ 112-113: **Նույնի՝** Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Երիտասարդ գիտնականների 8-րդ կոնֆերանս. Երևան, 1988, էջ 57-60: **Նույնի՝** *Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը,* Երևան1997, էջ 143-147: **Նույնի՝** *Էթիունի-Հայաստան,* Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը. Գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 35-37; **Նույնի՝** *Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ*, ՊԲՀ 2003, 2, 189-224; **Նույնի՝** *Հայոց ազգածագման հարցեր*, Երևան, 2006, էջ 131-142. **Петросян А.Е.**, *Отражение индоевропейского корня *u̯el- в армянской мифологии*, Вестник общественных наук Арм. ССР (далее – ВОНА), 1987, 1, с. 70. **Նույնի՝***Армянские этнонимы в свете мифологических данных*, Междеждисциплинарные исследования культурогенеза и этногенеза армянского нагорья и сопредельных областей, Ереван, 1990, с. 241-242; **Նույնի՝***Армянские этнонимы, древнеармянская модель мира и вопрос локализации древнейших армянских племен*, Вестник Ереванского унивеситета 1991, 2; **Նույնի՝** Самоназвание армян и вопрос локализации протоармянских племен. ВОНА, 1991, 2, էջ 111-115: **Նույնի՝** *Армянский эпос и мифология*, Ереван, 2002, էջ 188-190; **Նույնի՝** *О происхождении армянского народа: проблема идентификации протоармян (критичерский обзор)*, Армянский вестник, 2009, 2/3-1, 2009, էջ 96-101, **Petrosyan A.Y.**, *The Indo-European and Ancient Near*

խարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններն ընդգրկող ցեղերի ամենանշանակալի կազմավորումը՝ համադաշնություն (կոնֆեդերացիա): Ցավոք, Էթիունիի, ինչպես և լեռնաշխարհի մյուս նշանակալի ցեղամիավորումների պատմությունը դեռ սպասում է իր գրողին:

Ի տարբերություն լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների՝ Էթիունիի, այսինքն՝ ներկայիս Հայաստանի հանրապետության տարածքը հնագիտորեն բավականաչափ ուսումնասիրված է: Երկրի՝ որպես հնագիտորեն ձևավորված մի շարունակական էթնոմշակութային հանրույթի մասին կարելի է խոսել սկսած մ.թ.ա. XVդ.:

Eastern Sources of the Armenian Epic, Washington D.C. 2002, էջ 175-177; **Նույնի՝** *The Problem of Identification of the Proto-Armenians: A Critical Review*, Journal of the Society for Armenian Studies 2007, h. 16, էջ 49-54: Մեր հրապարակած գործերից տարիներ անց իր որոշ աշխատություններում էթիունյան վարկածը փորձել է պաշտպանել Հ. Կարագյոզյանը, բայց ցավոք, հիմնականում բացարձակապես անընդունելի փաստարկների հիման վրա և իրեն ներկայացնելով որպես վարկածի հեղինակ (մինչդեռ նա մանրամասն տեղեկացված էր մեր գաղափարներին), առանց հիշելու կամ անհարկի քննադատելով մեր աշխատանքները (տե՛ս **Карагезян О.О.**, *Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам*, Вестни общественных наук, 1988, № 7, էջ 57-761, **Կարագյոզյան Հ.**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում*, Երևան 1998, էջ 216. այդ աշխատանքների քննադատությունը՝ **Սարգսյան Գ.**, *Մի հավելում*, Ուրարտու-Հայաստան, Երևան 1988, էջ 169, **Петросян А.Е.**, *Самоназвание армян и вопрос локализации протоармянских племен*, ВОНА, 1991, 5, էջ 120-129, **Մարտիրոսյան Հ.**, *Համեմատական լեզվաբանության և պատմագիտության խաչմերուկներում (Հովհաննես Կարագյոզյանի աշխատանքների առնչությամբ)*, Բ.Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը, Երևան 2014, էջ 238-258:

Դատելով Վանի արքաների արձանագրություններից՝ Էթիունիի բաղկացուցիչ միավորները («թագավորությունները») նրանց արշավանքների արդյունքում բազմիցս նվաճվել են, ավերվել, իսկ բնակչությունը՝ գերեվարվել: Արդեն Իշպուինին և Մենուան մ.թ.ա. IXդ. վերջին հիշում են իրենց հակառակորդ ցեղերին օգնության եկած «Էթիուխիի արքաներին»[14]: Հաջորդ արքաները պատմում են իրենց նորանոր հաղթական արշավանքների մասին: Այդ տեղեկությունները միակողմանի են. անընդհատ հիշվում են միայն Վանի արքաների հաղթանակները և նվաճումները: Բայց և այնպես, որոշ դեպքերում ի հայտ են գալիս հակադիր փաստեր[15]: Այսպես՝ Ռուսա I-ի ժամանակների (մ.թ.ա. շուրջ 730-710թթ.) ասորեստանյան հետախուզական մի աղբյուրի համաձայն՝

Էթինացիները երկու անգամ ապստամբել են նրա (Ռուսայի - Ա.Պ.) դեմ, նրանք ռազմական կորուստներ են պատճառում նրան, նրանք ավարառության են ենթարկել նրան: Երրորդ անգամ նրանք ելնում են նրա դեմ: Ուրսան (Ռուսան

---

[14] **Арутюнян Н.В.**, *Корпус урартских клинообразных надписей* (այսուհետև՝ *КУКН*), Ереван, 2001, 31.

[15] Ըստ Արգիշթի I-ի տարեգրության մի հատվածի մեկնաբանություններից մեկի՝ էթիունցիներն այդ հզոր արքայի ժամանակներում ողջ տերության միջով արշավել են մինչև լեռնաշխարհի ծայր հարավ և առևանգել Արդինի քաղաքի aštiuzi-ն, որն իմաստավորվում է որպես «կուռք, աստված» և համեմատվում հայ. *աստուած* բառի հետ, տե՛ս **Меликишвили Г.А.**, *К чтению одного места в летописи урартского царя Аргишти I*, Переднеазиатский сборник, М. 1979, էջ 171-176: Եթե ընդունենք այս մեկնաբանությունը, հնարավոր են նոր, հետաքրքիր վերակազմություններ Էթիունիի և լեռնաշխարհի հարավի առնչությունների վերաբերյալ, տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Հայկական շերտը ուրարտական դիցարանում*, ՊԲՀ 1986, 1, էջ 51-52. **Պետրոսյան Ա.**, *Արամի առասպելը...*, էջ 146-147: Սակայն պետք է նշել, որ ներկայումս այս տեքստն այլ կերպ է մեկնաբանվում, տե՛ս *КУКН*, 178, 180, прим. 44:

- Ա.Պ.) եկել է ուղիղ Տուրուշպայից (Տուշպայի ասուրական անվանումն է), գնում է ևս մեկ անգամ էթինացիների դեմ:

Ըստ մեկ այլ՝ հատվածաբար պահպանված աղբյուրի՝ «Ուրարտուն ավերված է», որից հետո հիշվում են «էթունացիները», որոնք և, կարելի է կարծել, ավերել էին երկիրը[16]: Կասկած չկա, որ այս «էթինացիները» և «էթունացիները» (e-ti-ni-a-a, e?-tu?-na-a-a. երկրորդ տեքստը վնասված է) էթիունցիներն են, որոնց անվանումն ասորեստանցիները փոխառել են ուրարտերենից: Այդ դարաշրջանում չկար նման անվանումով մեկ այլ երկիր կամ ցեղ, որ կարողանար մի քանի արշավանք կազմակերպել և ավերել այնպիսի հզորագույն մի երկիր, ինչպիսին էր Ուրարտուն: Սեպագիր Etiu- հիմքն է ակնարկում և գրչության *etina/etuna* տատանումը:

Թվում է, թե հայերի էթիունյան ծագման որոշ արձագանքներ աղավաղված հասել են մինչև ուշ ժամանակներ: Ըստ Խորենացու (Ա.ի, լբ)՝ Ասորեստանի թագավոր Տևտամոսը հայերի Զարմայր նահապետին եթովպացիների զորքով օգնության է ուղարկում Տրոյային, որտեղ և նա զոհվում է հելլենացի քաջերից, բայց հեղինակը կուզեր, որ նա զոհված լիներ հատկապես Աքիլլեսի ձեռքով (այստեղ Զարմայրը համապատասխանում է «Իլիականի» Մեմնոնին): Ինչո՞ւ պիտի հայոց նահապետը դառնար եթովպացիների զորքի առաջնորդ: Հնարավոր է, որ հայոց ցեղանվան ուրարտական etiu- և ասորեստանյան etina/etuna ձևերն ինչ-որ կերպ հասնելով ուշ հեղինակներին՝ վերաիմաստավորվել են Եթովպիա համահունչ անվամբ[17]:

---

[16] **Saggs, H.W.F.**, *The Nimrud Letters, 1952 – Part IV. The Urartian Frontier*, Iraq, 1958, h. 20/2, էջ 212, n. 3; **Նույնի՝** *The Nimrud Letters*, Cuneiform Texts from Nimrud, V. London, 2001, էջ 117, 147:

[17] **Петросян А.Е.**, *Армянские этнонимы…*, s. 114, **Պետրոսյան Ա.**, *Արամի առասպելը…*, էջ 124 (այս միտքն առանց ինձ հղելու օգտագործում է Հ.Կարագյոզյանը՝ տե՛ս նրա *Հայկական լեռնաշխարհը…*,

Արդեն նախաուրարտական դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի սահմաններում տեղի են ունեցել գաղթեր, որոնց հետևանքով լեռնաշխարհի հարավային և արևմտյան որոշ շրջաններ կարող էին արդեն յուրացված լինել հյուսիսարևելյան ցեղերի՝ հնարավոր է՝ էթիունցիների կողմից[18]: Եթե դա այդպես է, ապա այդ տեղաշարժերը կարող էին ստեղծել Հայկական լեռնաշխարհի էթնիկական միավորման (հայացման) նախնական հիմքերը: Եվ հնարավոր է, որ արդեն նախաուրարտական դարաշրջանում լեռնաշխարհի որոշ՝ իրարից հեռու գտնվող տարածքներ էթնիկապես նշանակալի չափով նույնական էին: Եվ ինչպես բազմիցս շեշտել է Ի. Դյակոնովը, Հայկական լեռնաշխարհի հայացման գործում մեծ պիտի լիներ Վանի արքաների՝ երկրի տարբեր շրջաններում նվաճված երկրամասերից գերեվարված մարդկանց վերաբնակեցնելու քաղաքականությունը: Ըստ Ե. Գրեկյանի հաշվարկների (բանավոր հաղորդում) Ուրարտուի պատմության ընթացքում արքաների գերեվարած մոտավորապես մեկ միլիոն մարդուց 700 հազարը եղել է լեռնաշխար-

էջ 215): Հետաքրքիր է, որ ըստ Դիոդորոս Սիկիլիացու (II.14.4) և Հուստինոսի (I.2.8)՝ Շամիրամ-Սեմիրամիսը գրավել է Եթովպիան, ինչն իհարկե չունի որևէ պատմական հիմք:

[18] **Ավետիսյան Պ.**, *Կենսատարածքի կազմակերպման կառուցվածքը և սոցիալ-ժողովրդագրական գործընթացները Հայաստանում Ք.ա. XXII-IX դդ.* Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան. Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2004. բնակչության ավելի հին՝ դեպի արևմուտք տեղաշարժի հնարավորության մասին տե՛ս **Yakar J.**, *Beyond the Eastern Borders of the Hittite Empire: An Archaeological Assessment,* Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp. Ankara, 1992, էջ 514. տե՛ս և **Zimansky P.E.**, *Archaeological Inquiries Into Ethno-Linguistic Diversity in Urartu*, Greater Anatolia and the Indo-Hittite Language Family, Washington D.C. 2001, էջ 18:

հի ներքին շրջաններից: Ճիշտ է, գերիների մեծամասնությունը կազմել են կանայք և դեռահասները, բայց և այնպես, հաշվի առնելով երկրի բնակչության ընդհանուր թիվը (մոտ մեկ միլիոն), նրանք իսկապես ի զորու էին վերափոխելու վերաբնակեցված շրջանների էթնիկական պատկերը: Ընդ որում՝ լեռնաշխարհի հյուսիսային շրջաններից՝ հիմնականում Էթիունիից են տարվել ամենամեծ քանակությամբ գերիներ՝ շուրջ 300 հազար, գուցեև ավելի[19]: Ակնհայտ է, որ վերաբնակեցված գերիների նշանակալի մասը կազմող էթիունցիներն արդեն Ուրարտուի պատմության վերջին փուլում վերափոխել էին երկրի էթնիկական պատկերը հօգուտ իրենց: Էթիունցի գերիների թիվը, այսպիսով, բազում անգամներ գերազանցել է արևմուտքից բերվածներին (մասնավորապես, հնագույն հայերի արևմտյան տեղայնացման կողմնակիցներ Ի.Դյակոնովի, Գ.Սարգսյանի և այլոց կողմից մշտապես հիշվող, Արարատյան դաշտի հայացման գործում իբր մեծ դեր կատարած, Էրեբունիի՝ ուրարտական չափանիշներով ոչ շատ մեծաքանակ 6600 արևմտյան վերաբնակիչներին): Ուրարտուի անկումից քիչ առաջ Ռուսա Արգիշթորդին (մ.թ.ա. շուրջ 685-645) Էթիունին հիշում է թշնամական երկրների շարքում (այդ թվում նշվում են Ասորեստանը, Խաթե-Մելիդը, Խալիտու-Խաղտիքը, Մուշքինին, Ծիլուկու-Սյունիքը և երկու այլուրեք անհայտ երկրներ), որտեղից նա գերիներ է վերաբնակեցրել

[19] Մի արձանագրության համաձայն Մինուա արքան Էթիունիից տարել է 50 atibi՝ «հիսուն բյուր»՝ կես միլիոն մարդ, տե՛ս **Salvini M.**, *Un testo celebrativo di Menua*, Studi Micenei ed Egeo-Anatolici, XXII, 1980, էջ 167, **Նույնի՝** *Corpus dei testi urartei I*, Roma, 2008, A 5-2A3-F3: Այս թիվը համարվում է գրության սխալ՝ հիսուն հազարի փոխարեն: Ինչևէ, դա ևս հսկայական թիվ է:

Վանի շրջանում[20]: Այսինքն՝ Էթիունին նորից բախման մեջ էր Վանի թագավորության հետ, և Էթիունցիներ են բնակեցվել նաև պետության կենտրոնում:

Այսպիսով, Էթիունին, շատ անգամներ ենթարկվելով Վանի արքաների հարձակումներին և ծանր կորուստներ կրելով, ինքն էլ կարողացել է հակադրվել նրանց և մինչև Ուրարտուի անկումը պահպանել իր «հակաուրարտական» ինքնությունը: Ավելին՝ հենց ուրարտական արքաների վարած քաղաքականության հետևանքով արդեն բուն Էթիունիից դուրս, նաև նախկինում այլ էթնիկական կազմ ունեցող տարածքներում, նշանակալի թիվ են կազմել Էթիունցիները:

Այրարատը Մեծ Հայքի կենտրոնական նահանգն էր, նրա միջնաբերդը, իշխող արքայատոհմերի ոստանը, երկրի քաղաքական, կրոնական, մշակութային կենտրոնը: Ազգածին ավանդության մեջ, ինչպես ասվել է, հայոց առաջին նահապետ Հայկը հաստատվում է Հարք գավառում, բայց նրա ավագ որդի և ժառանգ Արամանյակը տեղաշարժվում է Այրարատ՝ Արարատյան դաշտ, որտեղ Հայկից հետո կենտրոնանում է հայոց տիեզերքի արարումը: Արարատյան դաշտի շրջակա լեռները կոչվում են Արամանյակի հաջորդների անուններով, իսկ ողջ նահանգն ու նրա կենտրոնը՝ վերջին ազգածին նահապետ Արա Գեղեցիկի անունով՝ «Դաշտն Արայի», որը և զոհվում է այդտեղ: Սկսած լեգենդար պատմության այդ դրվագներից մինչև այժմ Այրարատը մնում է հայոց ոստան. այստեղ են գտնվել հայոց համարյա բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրից մինչև Երևան:

Արա Գեղեցիկի հայր Արամ նահապետը անունով համապատասխանում է Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուին (մ.թ.ա. շուրջ 860-840թ., անվան վերջին ձայնավո-

[20] *КУКН* 414. **Salvini M.**, *The Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduri-kai)*, Ayanis I. Ten Years Excavations at Rusahinili Eiduri-kai. Roma, 2001, էջ 258, 261:

րի կանոնավոր անկումով): Արամուից հետո Ուրարտուի արքայատոհմը, ինչպես և պետության կենտրոնը ամենայն հավանականությամբ փոխվել է[21]: Ուրարտուի հաջորդ հայտնի արքան է Սարդուրի I-ը՝ Լութիպրիի որդին, որի մայրաքաղաքն էր Տուշպան (Վան): Ազգածին ավանդության մեջ որպես Ուրարտուի էպոնիմ հանդես է գալիս Ասորեստանի Շամիրամ թագուհին: Նա է, որ կառուցում է Վան քաղաքը, որը հայոց մեջ կոչվել է «Շամիրամակերտ», «Շամիրամի քաղաք»: Ուրարտական աղբյուրներում այն կոչվում է Ṭušpa, և Ṭušpuea/Ṭušpuni դիցուհու՝ արևի աստծու կնոջ պաշտամունքի կենտրոնն էր: Դարերի ընթացքում հին պաշտամունքներն անվանափոխվում են, բայց պահպանում իրենց բնութագրերը, այսինքն՝ Շամիրամի կերպարում պիտի պահպանված լինեին Տուշպուեայի հատկանիշները: Շամիրամը զոհվում է Վանա լճի ափին,[22] իսկ առասպելաբանական տրամաբանությամբ՝ հերոսը դառնում է իր զոհված վայրի էպոնիմը: Նա է, որ հաղթում և նվաճում է Հայաստանը՝ Արայի երկիրը, որն «Արայի դաշտն» է՝ Այրարատը: Ավանդության՝ մեզ հասած տարբերակում Վանը կառուցվում է Արային հաղթելուց հետո, և ընդհանրապես պատմվում է Ասորեստանի և Հայաստանի հակադրության մասին, բայց հաշվի առնելով առասպելներում պատմական իրողությունների արտացոլման ոչ միարժեք բնույթը, որպես հակադրության կողմեր կարող են դիտվել Վանի շրջանը՝ Արային հաղթած թագուհու ոստանը, և Այրարատը, ուրարտական անուններով՝ Բիայինիլին և Էթիունին: Ընդ որում հակադրությունն անձնավորված է ու-

[21] **Меликишвили Г.А.**, *Наири-Урарту*, Древневосточные материалы по истории народов Закавказья. Тбилиси 1954, էջ 202; **Salvini M.**, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, S. 35.

[22] Շամիրամի զոհվելու զրույցների վերաբերյալ տե՛ս **Աբեղյան Մ.**, *Երկեր*, հ. Ա, էջ 70-71:

բարտական մայրաքաղաքի և հայոց կենտրոնի դիցաբանական էպոնիմների կերպարներով:

Շամիրամի պատմական նախատիպն է համարվում Շամմուրամաթ թագուհին՝ Ասորեստանի արքա Շամշի-Ադադ V-ի այրին, որն իշխել է մ.թ.ա. IXդ. վերջին, և Շամիրամի ու Արայի հակադրությունը պատմական համատեքստում կարող է դիտվել որպես այդ նույն ժամանակներում (մ.թ.ա. IX դարավերջ) Վանի թագավորության կողմից Էթիունիի նվաճման առասպելաբանական արտացոլումը: Ընդ որում՝ Արայի երկիրը (հմմտ. «դաշտն Արայի»)՝ վաղնջական Հայաստանը, միանշանակ համապատասխանում է ուրարտական աղբյուրների Էթիունիին:

Արան Հայկյան (այսինքն՝ ծագումով հայ) յոթերորդ իշխողն էր Այրարատում: Առասպելում այդ յոթ սերունդներով է կոդավորվել հայոց պատմության ողջ նախաուրարտական փուլը: Ըստ ավանդության՝ Արայից հետո հայերն ընկնում են Ասորեստանի իշխանության տակ, որից դուրս են գալիս շատ սերունդներ անց, այդ երկրի կործանման արդյունքում (Խորենացի, Ա.իա): Ըստ արաբ պատմիչ Մասուդու գրի առած մի լեգենդի՝ Շամիրամից հետո հայերն են երկար իշխել Նինվեի արքաների վրա: Իրականում այդ դարաշրջանում Ուրարտուն էր իշխող դիրք գրավում տարածաշրջանում: Այս տվյալների հակասությունը կարող է վերանալ, եթե ընդունենք, որ Ուրարտուն հյուսիսցիների (հայերի) հետագա բանահյուսության մեջ նույնացվել է Ասորեստանին, իսկ հարավցիների մոտ՝ Հայաստանին[23]:

---

[23]Մասուդու բերած լեգենդը և նրանում Ուրարտուի նվաճումների արտացոլման վերաբերյալ տե՛ս ***Տեր-Ղևոնդյան Ա.***, *«Արա և Շամիրամ» առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուդու մոտ*, ՊԲՀ 1965, 4, էջ 249-253: Հետաքրքիր է, որ Սիրիայի հյուսիսի քրիստոնյաների ժամանակակից բանահյուսության մեջ, որտեղ Շամիրամը հանդես է գալիս որպես իրենց թագուհի՝ հայոց Արամ արքան

Ընդունված է կարծել, որ հայոց ավանդական պատմական հիշողության մեջ Ուրարտուի գոյությունը ջնջվել է: Իրոք, Խորենացու հաղորդած ավանդական պատմության մեջ չեն հիշվում Վանի հզոր արքաները, իսկ նրանց նվաճումներն ու կառույցները վերագրվում են Շամիրամին: Ուրեմն, ժողովուրդների ավանդական հիշողությունը իրական պատմության ճշգրիտ արտացոլումը չէ: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ Խորենացին միշտ առավելություն է տալիս հունական աղբյուրներին, որտեղ Ուրարտուի գոյության մասին ակնարկ չկա: Իմիջիայլոց, նույնն է պատկերը նաև հունական ավանդության մեջ, որտեղ, օրինակ, Կրետեի հին, նախահունական դարավոր պատմությունն ու մշակույթը անձնավորվել են միայն Մինոս արքայի և նրա մերձավորների կերպարներով: Նույն կերպ հայկական ավանդության մեջ, գոնե այն մշակված տարբերակում, որը Խորենացին և Սեբեոսն են մեզ ավանդել, Ուրարտուն անձնավորվել է միայն Շամիրամի կերպարով, իսկ Ուրարտուի գերիշխանության դարաշրջանը ներկայացվել է որպես Ասորեստանի տիրապետության դարաշրջան: Սա նաև ակնարկ է առ այն, որ հայոց ավանդական հիշողության մեջ Ուրարտուն և նրա հզորության պահպանված մնացորդները չեն ընկալվել որպես հարազատ, հայկական մի բան, այլ վերագրվել են թշնամի Ասորեստանին:

Էթիունիի մի շարք անուններ կարող են մեկնաբանվել հնագույն հայերենով: Իհարկե, դա չի նշանակում, որ հայկական են բոլոր անունները. հնագույն հայերը, ըստ ավանդության, Էթիունի են անցել Վանա ծովի շրջանից և հաս-

---

և Շամիրամը պատրաստվում են ամուսնանալ, բայց Արամը դավում է և զոհվում պատերազմում, տե՛ս **Bohas G.**, *Les araméens du bout du monde*, La memoire des chretiens d'Orient. Toulouse 1994, p. 23 sqq.

տատվել տեղական բնակչության մեջ, որոնց լեզվով պետք է լիներ երկրի անվանաբանության գոնե մի մասը[24]:

Տեղանուններ

Abilianiḫi – համապատասխանում է հայ. Աբեղեանք գավառին. համադրվում է ուրարտ. abili՝ «ավելացնել» բառի հետ, որը հնդեվրոպական համատեքստում հայ-հունական ընդհանուր արմատ է (*h$_3$bhel-)[25], ուրարտերենին անցած հայերենից կամ Ուրարտուի իշխող տարրի՝ հունարենին մերձավոր լեզվից: Հնագույն հայերենում այն կարող էր հնչել *աբել-* (= *աբեղ-*), որից և ձևավորվել է տեղանուն՝ Abelia, ուրարտ. սեպագրում արտահայտված որպես Abilia (տեղանուններին բնորոշ հնդեվրոպական *-iyā ածանցով, որոնց հավելվել են ուրարտ. -ni և -ḫi ածանցները): Տեղանունն ինչ-ինչ պատճառներով չի դարձել *Աւելեանք*, այլ հին ձևով քարացած պահպանվել է (տեղական բարբառային արտասանության դրսևորումով):

Abuni – համապատասխանում է հայ. Հաւ(ն)ունիքին. հմմտ. հայ. *հաւ-ն*՝ «պապ» < *h$_2$euH- (հարևան գավառը ևս կոչվում է ազգակցության տերմինով՝ Որդունիք, հմմտ. *որդի*). հմմտ. և *հաւ-ու*՝ «թռչուն» (**h$_2$au-i-*, հիմքի հետագա փոփոխմամբ *ու*-ի):

Erkuaḫi – երկիր Մասիսի շրջանում՝ հմմտ. հայ. *երկու* (ակնարկվում է Մասիսի երկգագաթ՝«երկվորյակ» լեռ լինելու

---

[24] Էթիունիի անունների հայկական ստուգաբանություններ տե՛ս **Պետրոսյան Ա.**, *Նախահայերենի կրոնների...*; ***Նույնի*** *՝Արարատյան դաշտի...*: **Петросян А.,** Армянские этнонимы…; **Նույնի**՝ *Самоназвание армян…* ևն:

[25]**Martirosyan H.**, *The place of Armenian in the Indo-European Language Family. The relationship with Greek and Indo-Iranian*, Journal of Language Relationship, 2013, 10, էջ 110:

հանգամանքը)[26], տեղանվանակերտ *-ա* հիմքով (< *-ā), որին ավելացվել է ուրարտական երկրանուններին բնորոշ ḫi-ն:

Ildarunia – նույնացվում է հայ. Հրազդան գետի հետ. հմմտ. alt- հնդեվրոպական գետանունների հիմքը[27] և հայ. *առու*, ապա՝ Առուն գետանունը, *-iyā ածանցով:

Išteluani – հմմտ. հայ. Աստեղանի գյուղանունը նույն շրջանում, *աստղ* արմատից (*h₂stel- > astel- > *աստղ*): Տեղանունների նույնությունը հիմնավորվում է տեղայնացման նույնությամբ պատմական Շիրակի գավառում, Ախուրյան (Արփաչայ) գետի աջ ափին[28]: Որոշ չափով անհասկանալի է մնում վերջավորության *ու*-ն (սխալ հաղորդման հետևա՞նք):

Ueliku-ni/ḫi – համապատասխանում է հայ. Գեղաքունի-ին (հետագայում՝ Գեղարքունիք). անվան արմատը համադրելի է հնդեվրոպական առասպելական օձ-վիշապի *wel- կոչման հետ (որի կանոնավոր արտացոլումը հայերենում պիտի լիներ *գեղ-*): Գեղարքունիքում և Գեղամա լեռներում են

---

[26] Մասիսն ամենայն հավանականությամբ ծագում է աքքադական առասպելաբանության սրբազան լեռան Mašu (Մասու) «Երկվորյակ» անվանումից, հնդեվրոպական *-iyā ածանցով՝ Masiyā > *Մասիի*, հոգնակի՝ *Մասիք*, հայց.՝ *Մասիս*, տե՛ս **Петросян А.Е.**, *Два Арарата: гора Кордуены и Масис*, Mythical Landscapes Then and Now. The Mystification of Landscapes in Search for National Identity. Yerevan 2006, էջ 261-274:

[27] **Гамкрелидзе Т.В., Иванов В.В.**, *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси 1984, էջ 945:

[28] **Diakonoff I.M., Kashkai S.M.**, *Geographical Names According to Urartian Texts*, Repnrtoire géographique des texts cuneiforms 9. Wiesbaden 1981, էջ 45, **Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, I, Երևան, 1986, էջ 343: Հետաքրքիր է, որ այդ գյուղի նոր, ձևափոխված անվանումը՝ Աստախան, համեմատվել է ուրարտական մեկ այլ տեղանվան՝ Աշտուխինիի հետ, տե՛ս **Пиотровский Б.Б.**, *Ванское царство*, Ереван 1959, էջ 31:

գտնվում վիշապ քարակոթողներն ամենամեծ քանակությամբ, այդ թվում և երկու ամենամեծ խմբերը՝ Գեղ լեռան գագաթին և Գեղի ամրոցի մերձակայքում: Իրենք՝ «վիշապները», և նրանց վրայի պատկերներն էլ պարզորոշ մեկնաբանվում են օձ-վիշապի կերպարի շրջանակներում: Հայ. Գեղաքունի ձևը կազմված է թվում հայ. *-աք* ածանցով[29], որին ավելացել է *-ունի* ածանցը: Օձ-վիշապի հնդեվրոպական անունը փոխառվել է հավանաբար նաև խուռիերեն՝ հմմտ. Ullikummi առասպելական հրեշի անունը, թերևս հնդեվրոպական *weliko-/*welhko- նախաձևից -mmi խուռիական ածանցով (այդ անունը ևս տեսականորեն կարող էր ընկած լինել Uelikuni-ի հիմքում, բայց Գեղ լեռան և Գեղի ամրոցի անվանումները հայկական ձևեր են)[30]:

Uelikuni/Գեղաքունին առանձնահատուկ նշանակություն ունի: Հայոց տիեզերածնության կենտրոն Արարատյան դաշտը և շրջակա աշխարհագրական օբյեկտները կապվում են ազգածին ավանդության նահապետների անունների հետ (Արամանյակ-Արագած, Արա-Արայի լեռ, Գեղամ-Գեղ լեռ, Գեղամա լիճ, Գեղամա լեռներ և Գեղաքունի գավառ): Դրանք մեկ միասնական անվանաբանական համակարգի անուններ են, որոնցից մեկի հին վկայությունը կարող է մատնանշել ողջ համակարգի տեղայնացումն այդտեղ նույն դարաշրջանում: Այսպիսով, Ueliku-ni/ḫi-ի հիշատակությունը կարող է ակ-

---

[29] Այս ածանցի վերաբերյալ տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Հին հայերենի վերջածանցների ծագումը*, ՊԲՀ 1994, 1-2, էջ 82:

[30] Այս մասին մանրամասն տե՛ս **Петросян, А.Е.**, *Отражение индоевропейского...*; **Նույնի՝** *Армянский эпос и мифология*, էջ 88-89; **Petrosyan A.Y.**, *Indo-European *wel- in Armenian Mythology*, Journal of Indo-European Studies, 2016, h. 1-2, էջ 129-146; **Պետրոսյան Ա.**, *Երեսուն տարի անց. վիշապ քարակոթողները և վիշապամարտի առասպելը*, Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 13-52:

նարկել նաև մյուս անունների համաժամանակյա առկայությունը Արարատյան դաշտի մերձակա տեղանուններում:

Անձնանուններ

Հին ժամանակներում մարդկանց էթնիկական պատկանելության լավագույն ցուցիչ կարող է լինել անձնանունների լեզվական պատկանելությունը[31]: Սակայն հնագույն հայերի անվանաբանության մասին մենք շատ քիչ բան գիտենք: Հայկական և այլ հին աղբյուրներում պահպանված հին հայկական անունների մեծագույն մասն իրանական ծագում ունի (Արտաշես, Տիգրան, Տրդատ նն): Հետաքրքիր է, որ այնպիսի մի վաղ աղբյուրում, ինչպիսին Դարեհ I-ի բեհիսթունյան արձանագրությունն է, հիշվող հայերից՝ «արմինացիներից» (Դադարշի, Արախա, Հալդիտա), ոչ մեկի անունը պարզորոշ հայերեն տեսք չունի[32], իսկ վերջինը համեմատվում է ուրարտ. Խալդիի հետ (և պատահական չէ, որ այդ անուններն ուրարտերենով մեկնաբանելու և արմինացիներին ուրարտական՝ ոչ հայկական ծագում վերագրելու փորձ է արվել)[33]: Հին աղբյուրներում սովորաբար հիշվում են իշխանավորների անունները, իսկ հայ ազնվականությունը, սկսած արդեն աքեմենյան ժամանակներից, գտնվում էր իրանական ազդեցության ոլորտում և մի մասով էլ իրանական ծագում ուներ: Հե-

---

[31] **Дьяконов И.М.**, *Предыстория армянского народа*, Ереван 1968, էջ 242, прим. 136; **Նույնի՝** *Типы этнических передвижений в ранней древности*, Древний Восток 4, Ереван, 1983, էջ 15; **Diakonoff I.M.**, *The Pre-History of the Armenian People*, Delmar, New York, 1984, p. 203, n. 135.

[32] Տե՛ս **Աճառյան Հ.**, *Հայոց անձնանունների բառարան* (այսուհետև՝ *ՀԱնԲ*), հհ. Ա-Ե, Երևան 1942-62, հ. Ա, էջ 265. հ. Բ, Երևան 1945, էջ 7, հ. Գ, էջ 12:

[33] **Սարգսյան Դ.**, *Ուրարտացիներ, ալարոդներ, արմեններ հարցի մասին*, ՊԲՀ, 1991, 1, էջ 189-190:

տագա հայկական աղբյուրներում մեծ քանակ են կազմում քրիստոնեական անունները (Հովհաննես, Պետրոս, Մարիամ նն): Մնում են շատ քիչ բնիկ հայկական անուններ՝ Եզնիկ, Զարմայր, Սլաք, Ձագուկ նն[34]: Սրանք էլ ուրարտական անվանաբանության մեջ կարծես չեն հանդիպում:

Ե. Գրեկյանը Ուրարտուի անվանաբանությանը նվիրված իր անտիպ աշխատության մեջ հնարավոր աղբյուրներից հավաքել է ուրարտական և Ուրարտուի հետ կապված անձնանունները: Այնտեղ կան մի քանիսը, որոնք պատկանել են էթիունցիներին: Ահա դրանք՝ Diușini(ni), Murini(ni), Murinu(ni), Nidi(ni), Qapuri(ni), Șinalibi(ni), Uerdai(ni):

Diușini/Ţiușini-ն *(Դիուծինի* կամ՝ *Տիուծինի.* սեպագիր di-ն կարող է ընթերցվել և ţi)[35] որպես ողջ Էթիունի ցեղամիավորման արքա հիշվող միակ անձի անունն է (մ.թ.ա. VIIIդ. կես): Համադրելի է հնդեվրոպական, մասնավորապես՝ բալկանյան *deiwo- (կամ՝ *dhes-)՝ «աստված» + *g'enhı-՝ «ծին, տոհմ» անձնանվանական մոդելին (հուն.՝ Διογένης, Θιογενεις, թրակ.՝ Διυξενι, Diuzenus), հմմտ. և հին հնդ. deva-jana՝ «աստվածների տոհմ», devaja՝ «աստծուց ծնված», որը ցույց է տալիս այդ մոդելի նաև հնդիրանական կապերը (հմմտ. և կելտ.՝ Divogenos)[36]: Ստորև շատ հակիրճ, առանց միարժեք մեկնա-

---

[34] Բնիկ հայկական անձնանունների մասին տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները*, ՊԲՀ 1984, 4, էջ 32-44:

[35] **Дьяконов И.М.**, *Материалы к фонетике...*, էջ 32:

[36] Բալկանյան անունների վերաբերյալ տե՛ս **Гиндин Л.А.**, *Ономастика восточных Балкан*, София 1981, էջ 42, 77. կելտականի համար՝ **MacCulloch J.A.**, *The Religion of the Ancient Celts*, Auckland 2009, էջ 450: Դիուծինիի մոտավորապես նույն մեկնաբանությունը տե՛ս **Капанцян Г.А.**, Историко-лингвистические..., т. II, Ереван 1975, էջ 77: Քանի որ հայոց ակունքները միշտ փնտրվել են լեռնաշխարհի արևմուտքում, այս անունը, թրակյան զուգահեռների համադրությամբ, զարմանալիորեն, երբեմն ոչ հայկական՝ թրակյան է համարվել,

բանությունների հավակնության ներկայացնենք մնացած անունների հայերեն ստուգաբանության հնարավորություններ: Ծինալիբի(նի) անվան առաջին մասը համադրելի է Դիուծինիի երկրորդ մասի՝ հայ. *ծին-* արմատի հետ (որի հնդեվրոպական արմատը «ծնունդ, տոհմ, ծագում» նշանակություն է ունեցել), իսկ երկրորդ մասը կարող է լինել անուն կամ նշանակել մի լավ, դրական բան[37], հմմտ. հուն. Γεννάδιος անունը «ազնվածին» նշանակությամբ: Մուրինի/Մուրինու անվան համար հմմտ. հնդեվրոպական *mor-՝ «սև», *mō(u)-ro-՝ «խենթ», *-ին(ո)* ածանցով, իսկ Նիդի(նի)-ին, որը կարելի է կարդալ նաև *նետը*, համեմատելի է հայ. *նետ(ի)՝ «*նետ» բառի հետ, հնդեվրոպական *nedo-՝ «եղեգ» արմատից (հմմտ. հայ.

տե՛ս **Պետրոսյան Ս.**, *Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1977, 8, էջ 32-34; **Ջահուկյան Գ.**, *Ուրարտական տերությունը և հայերը*, Ուրարտու-Հայաստան. Երևան 1988, էջ 162): Մինչդեռ ուրարտ. ş-ն համապատասխանում է միայն հայ. *ծ*-ին (**Дьяконов И.М.**, *Материалы к фонетике…*, էջ 36. **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի պատմություն…*, էջ 430-431)՝ հնդեվրոպական քմայնացած *g'*-ի միայն հայկական արտացոլմանը, ինչը մատնանշում է անվան հայկական ծագումը (**Петросян А.**, *Армянский эпос…*, էջ 189-190): Հնդեվրոպական *g'-ի թրակյան արտացոլումը այլ թրակյան բառերի ու անունների հունական և լատինական տառադարձություններում ζ և z է (հմմտ. թրակ. aiz-՝ «այծ», bzas՝ «բուծ», arzas՝ «արծ-, սպիտակ» և հենց zenis, zen, *g'enhı- արմատից): Եթե թրակյան հիշյալ անվան մեջ լիներ *ծ* հնչյունը, ապա հունարենում և լատիներենում այն կարող էր արտացոլվել որպես Διυσενι, Diusenes, այսինքն՝ *s*-ով, հմմտ., օրինակ, Արածանիի հուն. Ἀρσανίας (Արսանիաս) ձևը:

[37] Այս անվան ստուգաբանության փորձեր տե՛ս **Փիլիպոսյան Ա., Մկրտչյան Ռ.**, *Գեղհովտի վանտոսպյան (ուրարտական) քարայրդամբարանը*, Երևան 2001, էջ 72-76. **Պետրոսյան Ս.**, *Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները*, ՊԲՀ 2004, 1, էջ 169, ծան. 85:

Սլաք նույնիմաստ անունը): Կապուրի(նի)-ն նույնական է թվում անհայտ ծագման *կափուր՝* «մեծ» բառին[38], իսկ Uerdaini-ի համար էլ դժվար չէ գտնել հնդեվրոպական *wer-dh կամ *wer-t- նախաձևեր, բայց ակնհայտ անվանաբանական զուգահեռ կամ հայկական համապատասխան մի ձև (ասենք՝ *գերդ-*) չի հայտնաբերվում:

Կան անուններ, որոնք կարող են պատկանել էթիունցիներին կամ ունենալ էթիունյան ծագում՝ Abiliuqoni, Aluani, Tata[39]: Սրանցից առաջինը կարող է դիտվել որպես հիշյալ *աբեղ-* արմատի մի ածանցյալ (եթե համապատասխան տեղանունից չէ): Երկրորդը և երրորդը վկայված են Կարմիր բլուրից, այսինքն՝ Էթիունիի տարածքից: Aluani-ն ուղղակի նույնական է հայկական Աղուան անձնանվանը, որը, ինչպես և *աղուան* ցեղանունը, կարող է ունենալ հայկական ստուգաբանություն (ըստ Խորենացի Բ.ը)[40]: Tata-ն, չնայած բազում այլալեզու զուգահեռներին, կարող է համեմատվել հայ. Թաթ անվան հետ (*թաթ* բառից. հմմտ. և նույնարմատ Թաթիկ, Թաթուլ անունները)[41]:

---

[38] Գ. Ղափանցյանը համեմատում է գաբուռ անվան հետ, տե՛ս **Капанцян Г.А.**, Историко-лингвистические..., т. II, էջ 77:

[39] Որոշ անուններ ուղղակի մատնանշում են անձի հայրենի երկիրը՝ Abilianiše-ն նշանակում է «աբեղյանցի», իսկ ’Azaya-ն՝ «’Aza երկրի բնակիչ»:

[40] **Աղաբեկյան Մ.**, *Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ*, ՊԲՀ 1990, 1, 168-177. հմմտ. *ՀԱՆԲ* Ա, էջ 109: Ե. Գրեկյանը բերում է նաև լուվիական զուգահեռ՝ Alauwanni, ըստ **Laroche E.**, 1966. *Les noms des hittites*, Paris 1966, էջ 27 (Կարմիր բլուրում կարող էին լուվիական գաղթականներ լինել):

[41] Նշված հայկական անունների վերաբերյալ տե՛ս *ՀԱՆԲ* Բ, էջ 256-259:

Դիցանուն

Aniqu. սա համարվում է Արարատյան դաշտի ’Aza երկրի տեղական աստվածուհին, որը երկու անգամ հիշվում է ուրարտական աղբյուրներում: Այդ երկիրը Էթիունիի կենտրոնական մի շրջանն էր, և Անիկուն պետք է համարվի հենց Էթիունիի դիցուհին: Համադրելի է հայ. *հանի, հանիկ* «մեծ մայր, տատ» բառերի հետ, հնդեվրոպական h₂an-՝ «տատ» արմատից: Այն, որ «մեծ մայր» դիցուհին կարող է հենց այդպես կոչվել, վկայում է խեթ. Ḫannaḫanna դիցուհու անունը (նույն հնդեվրոպական արմատի կրկնությամբ): Հայկական որոշ դիցանուններ հանդես են գալիս -*իկ* ածանցով, հմմտ. Հայկ և Աստղիկ (սա հենց մայր դիցուհու մի տարբերակն է), որը իրանական նվազական -*իկ*-ից տարբեր, բնիկ հայ. ածանց է, հնդեվրոպական *-kon-ից, վերջին n-ի անկմամբ[42]: Հնագույն հայերենում, մինչև վերջին ձայնավորի անկումը, *հանիկ* կոչումը կարող էր հնչել **Հանիկո* կամ **Անիկո*, որը սեպագրում կարտացոլվեր որպես Aniqu[43]:

---

[42] Այս ածանցի վերաբերյալ տե՛ս **Ջահուկյան Գ.**, *Հին հայերենի վերջածանցների ծագումը*, ՊԲՀ 1994, 1-2, էջ 66:

[43] Ժողովրդական երգերի հոյ Նար, Նարոյ կրկնվող բացականչությունները մեկնաբանվում են որպես *Նար դիցուհու հիշողություններ (հմմտ. Ծովինար), տե՛ս **Капанцян Г.А.**, *Историко-лингвистические...*, с. 295 сл.: Ըստ այդմ՝ երգերի հանիկ Նար բացականչությունն էլ կարող է մեկնաբանվել որպես «մեծ մայրիկ Նար», տե՛ս **Պետրոսյան Ս., Պետրոսյան Ծ.**, *Հնագույն Ծոփքի դիցական գլխավոր եռյակի շուրջ*, Գիտական հետազոտություններ IV, Գյումրի 2001, էջ 87: Ավելացնենք, որ ամպրոպային դիցուհու սիմվոլիկ կերպարը ներկայացնող մի հանելուկի առաջին տողում «հանք մի ունեմ հանա, հանա» կրկնվող *հան*- վանկն անագրամային մակարդակով նույնպես կարող է ակնարկել այդ դիցուհու՝ Ծովինարի աստվածային նախատիպի *հան*- կոչումը (**Петросян А.**, Армянский эпос…, էջ 11, 16):

Մյուս վարկածների հեղինակները հայերի վաղնջական ցեղանվան՝ իրենց առաջարկված ձևերի հետ համադրելի անուններով կոչվող էթնիկական միավորներ չեն կարողանում գտնել ուրարտական արձանագրությունների հսկայածավալ անվանաբանության մեջ, որտեղ հիշվում են լեռնաշխարհի անգամ ամենաերկրորդական ցեղերը: Իսկ ըստ այս վարկածի՝ հայերը և նրանց երկիրը նույնացվում են որպես մի հզոր համադաշնություն, իր ներուժով լեռնաշխարհի երկրորդ էթնոքաղաքական միավորը՝ տեղայնացած հենց այն տարածքներում, որը և՛ ազգածին ավանդության մեջ, և՛ պատմական դարաշրջանում հանդես է գալիս որպես հայոց կենտրոն:

Այս վարկածը շատ ավելի պարզ կարող է բացատրել Ուրարտու-Հայաստան անցումը՝ որպես լեռնաշխարհի հյուսիսային և հարավային երկու էթնոքաղաքական կենտրոնների հակադրության արդյունք: Հարավի՝ շուրջ երկդարյա տիրապետությունից հետո գերիշխանությունն անցնում է հյուսիսին: Ընդ որում՝ այս երկու կենտրոնների բնակչությունը և նույնիսկ վերնախավը կարող էին գոնե մասամբ նույն էթնիկական հանրույթներին պատկանել: Վանի արքաների և Էթիունիի դարավոր հակադրությունն իր մասշտաբներով ուղղակի անհամեմատելի է հնագույն հայերի արևմտյան տեղայնացման կողմնակիցների կողմից երբեմն նշվող Վանի արքաների և լեռնաշխարհի արևմտյան որոշ տարածքների բնակչության հակադրությանը (և նույնիսկ Ուրարտուի և արևմուտքի բոլոր երկրների հակադրությանը):

Ուրարտուի կործանումը, որը նախկինում թվագրում էին մ.թ.ա. VII-VIդդ. սահմանով, ներկայումս տարածված տեսակետի համաձայն տեղի է ունեցել ավելի վաղ՝ մ.թ.ա. VIIդ. կեսից հետո[44]: Կարելի է պնդել, որ մ.թ.ա. VIIդ. վերջին

[44] Տե՛ս **Kroll S.**, *Urartus Untergang in anderer Sicht*, Istanbuler Mitteilungen, 1984, Bd. 34, 165-168; **Salvini M.**, *Geschichte und Kultur…*, S.

քառորդին ուրարտական պետությունն այլևս գոյություն չուներ: Հզոր ավերածությունների հետքեր են վկայված ուրարտական գրեթե բոլոր խոշոր կենտրոններում: Ընդ որում՝ գործ ունենք ուժերի հետ, որոնք օգտագործել են «սկյութական» տիպի նետասլաքներ (վկայված են Հայկաբերդում, Վերին Անձավում, Այանցում, Քայալը-դերեում, Յոնջաթեփեում, Կարմիր բլուրում, Արմավիրում, Արագածում և այլուր): Ովքե՞ր կարող էին տերությանն այդ վերջին հարվածը հասցնել: Պատմական տեղեկությունների և հնագիտական նյութի տվյալները ցույց են տալիս, որ այդ ուժերը պետք է լինեին ոչ միայն սկյութները, այլև էթիունցիները: Նախ, այս տարածքներում չկար որևէ այլ ուժ, որն ի զորու լիներ վերջին հարվածը հասցնելու ուրարտական տերությանը: Հիշենք, որ նրանք էին, որ արդեն շուրջ մեկ դար առաջ ավերում էին Ուրարտուն:

Կարելի է կարծել, որ գործ ունենք սկյութա-էթիունյան դաշնակցության կամ պետական կազմավորման հետ[45]: Եվ իրոք, Խորենացին (Ա.իա) հիշում է հայոց առաջին օծյալ թագավոր Սկայորդու որդի Պարույրին՝ որպես Ասորեստանի կործանմանը մասնակցած հայոց առաջնորդ: Ինչպես ասվեց,

---

117; **Дьяконов И.М.**, *Киммерийцы и скифы на Древнем Востоке*, Российская археология, 1994, 1, էջ 115-116 նն: Երկրի փլուզման վերաբերյալ նոր տեսակետ տե՛ս **Grekyan Y.H.**, *When the Gods Leave People: the Climatological Hypothesis of the Collapse of the Urartian State,* Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies 2013-14, VIII/1-2, էջ 57-84; եղած բոլոր վարկածների քննությունը՝ **Գրեկյան Ե.**, *Բիայնիլի-Ուրարտու. պետություն և հասարակություն (պատմահնագիտական ուսումնասիրություն)*, Դոկտորական ատենախոսություն, Երևան 2016, էջ 467-500:

[45] **Grekyan Y.H.**, *Helmet and Beard: Depicting of Enemies in Urartian Bronze Art*, SCRIPTA. Essays in Honour of Veli Sevin. A Life Immersed in Archaeology, İstanbul 2014, էջ 161. **Գրեկյան Ե.**, *Բիայնիլի-Ուրարտու...*, էջ 500:

հայկական ավանդության մեջ Ուրարտուն անձնավորվել է Շամիրամ թագուհով և ընկալվել որպես Ասորեստան (որի անկումն էլ մոտավորապես համընկնում է Ուրարտուի անկման դարաշրջանի հետ): Սկայորդի անունը, որը նշանակում է «հսկայի որդի», ընդունված է մեկնաբանել որպես վերաիմաստավորված «սակի (սկյութի) որդի»[46], ինչը կարծես հիմք է տալիս հաստատելու Ուրարտուի կործանման դարաշրջանի հնագիտական նյութի հիման վրա արված մեկնաբանությունը:

Ստորև՝ որոշ պարզաբանումներ այս հարցի վերաբերյալ ըստ Տ. Դալալյանի[47]: Ուրարտական մի արձանագրության մեջ հիշվում է Էթիունիի Iškugulu/Iškugulḫi/Iškigulḫi երկրի (տեղայնացվում է ներկայիս Գյումրիից հյուսիս) արքա Šagaputara-ն[48]: Այս անձնանունը կարող է մեկնաբանվել որպես «սակի որդի» (հմմտ. հնդիրան. *putra՝ «որդի») և միանգամայն համապատասխանում է հայ ավանդության Սկայորդի անվանը: Iškugul-/Iškigul- երկրանունը ուրարտական ուղղագրության համաձայն կարող է կարդացվել Iškuyul-/Iškiyul- (-ḫi ածանցով): Սեպագրում այդպես պիտի հաղորդվեր սկյութների ցեղանունը՝ skula (< skuða < skuda)[49], որը կարող էր skūl-/skül- հնչողությամբ մի տարբերակ ունենալ: Այսինքն՝ Խորենացու հիշած հայ իշխան Սկայորդին կարծես ի հայտ է

---

[46] **Ղափանցյան Գ.**, 1940, 217. **Пиотровский Б.Б.**, *Ванское царство*, Ереван, 1959, էջ 127. **Дьяконов И.М.,** *Предыстория…*, էջ 187:

[47] **Դալալյան Տ.**, *Iš-qi-gu-lu-u երկիրը և սկյութները*, Խալդյան զորությամբ…Հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան, 2010, էջ 34-50, գրականությամբ:

[48] **Çilingiroğlu A., Salvini M.** (eds), *Ayanis I (Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998)*, Roma 2001, էջ 262.

[49] **Դալալյան Տ.**, *Iš-qi-gu-lu-u երկիրը…*, էջ 44-45: Սկյութների ցեղանվան վերաբերյալ տե՛ս **Кулланда С.В.**, *Скифы: язык и этногенез*, М. 2016, с. 89 et passim.

գալիս որպես պատմական դեմք, այն էլ իրոք որպես «Սակի որդի» և Iškuguli՝ «սկյութական» կոչվող երկրի արքա Էթիունիում: Սա հաստատում է Ասորեստանի և Ուրարտուի կործանման դարաշրջանում էթիունի-սկյութական, այսինքն՝ հայ-սկութական դաշինքի վարկածը:

Եթե դա այդպես է, և էթիունյան ու սկյութական ուժերն են վերջին հարվածը հասցրել Ուրարտուին, ապա ովքե՞ր պիտի տիրեին այդ երկրին և դառնային Ուրարտուի ժառանգորդը: Ակնհայտ է, որ էթիունցիները և/կամ սկյութները: Զարմանալի բան կլիներ, եթե մի հզոր դաշինք վերջին հարվածը տար Ուրարտուին, բայց երկրին միանգամից տիրանար ինչ-որ ուրիշ մի էթնիկ խումբ (մանավանդ, որ այլ քիչ թե շատ հզոր ուժեր չկային ասպարեզում): Հետաքրքիր է նշել, որ Պիոտրովսկին և Դյակոնովը Խորենացու հիշած Սկայորդու որդի Պարույրի երկիրը՝ հայոց առաջին թագավորությունը, տեղայնացնում են այնտեղ, որտեղ իրենք են պատկերացրել հնագույն Հայաստանը, առաջինը՝ Սասունի շրջանում (որտեղ Պարույրը բնակեցնում է Ասորեստանի արքայի որդիներին), երկրորդը՝ Մալաթիա/Մելիդում[50]: Այս երկու տեղայնացումներն էլ մտահայեցողական են, մինչդեռ Պարույրի հոր՝ Սկայորդու իրական ժառանգական «թագավորությունը» եղել է Էթիունիում:

Էթիունյան վարկածի համատեքստում առավել հասկանալի է դառնում Հայաստանի մասին գրած առաջին ականատես հեղինակ Քսենոփոնի այն տեղեկությունը, որ երկրի մի մասը կոչվում էր «Արևմտյան Հայաստան» («Անաբասիս», IV.4.4, մ.թ.ա. 401թ.): Այդ դեպքում որպես «բուն Հայաստան» պիտի պատկերացվեր երկրի արևելյան մասը[51], իսկ այն հա-

---

[50] **Пиотровский Б.Б.**, *Ванское царство….*, էջ 127; **Дьяконов И.М.**, *Предыстория…*, էջ 187:

[51] Այս մասին տե՛ս **Սարգսյան Գ.**, *Ուրարտական տերությունը և հայերը*, Ուրարտու-Հայաստան. Երևան 1988, էջ 61-64:

մապատասխանում է ուրարտական աղբյուրների Էթիունիին և հարակից շրջաններին: Պարզ է, որ մ.թ.ա. V դ. «բուն Հայաստանը» չէր կարող կոչվել «Արևմտյան Հայաստան», քանի որ այդ անվանումը ծայրամասային երանգ ունի, մինչդեռ հնագույն հայերի արևմտյան տեղայնացման վարկածների (Ղափանցյան, Դյակոնով, Սարգսյան և այլք) շրջանակներում «բուն Հայաստան» պիտի համարվեր հենց «Արևմտյան Հայաստանը»: Այս համատեքստում կարող է հիշվել և Ստրաբոնի (XI.14.15) այն տեղեկությունը, որ «բուն Հայաստանը» Մեծ Հայքն էր՝ հակադրված արևմուտքն ու հարավ-արևմուտքն ընդգրկող Ծոփքին:

Հայոց ազգածագման մյուս վարկածների հեղինակները հայոց ակունքները փնտրել են Հայկական լեռնաշխարհի հարավում և արևմուտքում: Դրա համար կան որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ. հնագույն աղբյուրների տեղեկությունները վերաբերում են լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջաններին, ազգածին ավանդության մեջ հայոց առաջին կենտրոնը տեղայնացվում է Հարքում՝ Վանա լճի հյուսիսում, իսկ հունական ավանդության համաձայն՝ Եկեղյաց գավառում և մերձակայքում (Ստրաբոն XI.4.8, XI.14.12): Էթիունյան վարկածը չի բացառում հնագույն հայերի՝ սկզբնապես լեռնաշխարհի արևմտյան և/կամ հարավային շրջաններում տարածված լինելը: Այսպես, Հայկ նահապետի՝ Հարքում հաստատվելը հուշում են, որ Վանա լճի հյուսիսում և Արածանի գետի հովտում դեռևս Ուրարտուի ձևավորումից կարող էր հայերեն խոսող բնակչություն է ապրել:

Ավանդությունն ասում է, որ Հայկի ավագ որդի Արամանյակը թողնում է Հարքը և գնում հյուսիս՝ Այրարատ, Արարատյան դաշտ: Կարելի է ենթադրել, որ այդ տարածքները զբաղեցրած են եղել հնագույն հայերով, որոնք ինչ-ինչ պատճառներով իրենց կենտրոնը տեղափոխել են Այրարատ: Բայց ո՞ր ժամանակներից: Երբ հայերի նախնիներին ուրարտական

ժամանակներում փնտրում են արևմուտքում, դրանով ենթադրվում է, որ նրանք լեռնաշխարհի տարածքներն են մտել հիմնականում Ուրարտուի անկումից հետո: Իսկ եթե ընդունենք, որ հայերը տարածված են եղել լեռնաշխարհում դեռևս մինչուրարտական ժամանակներում, ինչը երևում է ուրարտերենում հայկական փոխառություններից և ուրարտական անվանաբանության քննությունից (և ինչպես կարծում են վերջին ժամանակների բոլոր լուրջ ուսումնասիրողները՝ Դյակոնով, Ջահուկյան, Սարգսյան և այլք), ապա կարող ենք նախաուրարտական ժամանակներով թվագրել նաև հայերի՝ իրենց կենտրոնն Այրարատը դարձնելը, որն ազգածին ավանդության մեջ ներկայացվում է հայոց երկրորդ նահապետ Արամանյակի (ըստ Անանունի՝ հայոց երկրորդ էպոնիմի) Արարատյան դաշտում հաստատվելով:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ եղած փաստերի տրամաբանության համաձայն, եթե *հայ* ցեղանունը նույնիսկ կապված էլ չի Էթիունիի հետ, միևնույն է, այդ երկիրը պիտի հայերի կենտրոնը լիներ դեռևս նախաուրարտական ժամանակներում:

Այս վարկածի համար կարելի է նշել հետևյալ ուժեղ կետերը.

ա. Տարածական և ժամանակային համապատասխանությունը ազգածին ավանդության տվյալներին, ուր Այրարատը և Արարատյան դաշտը հանդես են գալիս որպես հետհայկյան Հայաստանի կենտրոն: Սա է վարկածի առաջադրման իրական ամուր հիմքը:

բ. Հայերի՝ ուրարտական ժամանակներում բացահայտ նույնացումը որպես լեռնաշխարհի բնակչության մի կարևորագույն հանրույթ, ի հակադրություն մյուս վարկածների, որտեղ հայերը անբացատրելիորեն չեն երևում ուրարտական արձանագրությունների հսկայածավալ նյութում:

գ. Ուրարտու-Հայաստան անցման պատմականորեն պարզ մեկնաբանելիությունը որպես Հայկական լեռնաշխարհում իշխանության կենտրոնի փոփոխություն՝ աշխարհագրորեն հարավից հյուսիս, իսկ էթնիկապես՝ Ուրարտուի իշխող հանրույթից՝ մյուս հզոր հանրույթին՝ հայերին:

դ. Որոշ տեղանունունների, անձնանունների, մեկ դիցանվան, մեկ արքայի անվան պարզորոշ հայկական ստուգաբանությունը և ավանդական պատմության առաջին հայ օծյալ թագավոր Պարույրի հոր՝ Սկայորդու նույնացումը որպես հենց էթիունյան «արքա»: Մյուս վարկածները, հայերին տեղայնացնելով լեռնաշխարհի արևմուտքում և հարավում, այդ շրջաններում չեն կարողանում գտնել հայերենով հուսալիորեն ստուգաբանվող անուն ունեցող գեթ մեկ պատմական անձ:

ե. Էթիունին ակնհայտորեն շարունակել է իր գոյությունը Ուրարտուի անկման և հաջորդ դարաշրջանում որպես հզոր մի կազմավորում: Հայոց ողջ ավանդական և հնագույն պատմությունը, Հայկյաններից մինչև Երվանդունիներ, Արտաշեսյաններ և նրանց հաջորդները, կենտրոնացած է Այրարատում, այսինքն՝ Էթիունիում: Եվ եթե Էթիունին այլ ցեղի և ոչ հայոց երկիրն էր, ապա ինչպե՞ս և որտե՞ղ անհիշատակ կորան նրա ոչ հայ բնակիչները երբ հայերն այն դարձնում էին իրենց ոստանը:

Петросян Армен - Этиуни – колыбель армян.- Согласно нашей гипотезе, самоазвание армян hay связано с этнотопонимом Etiu- урартских источников IX-VII вв. до н.э. Одной из возможных праформ этнонима hay могла быть *hat‘iyo- (вероятно, от индоевр. *poti-yo-, ср. *poti- «хозяин, господин, муж»), которая в урартской клинописи могла быть транскрибирована как etiu-. Территория этой страны в основном совпадает с провинцией Айрарат Великой Армении. Айрарат была центральной провинцией, ее оплотом, доменом царей, политическим,

религиозным и культурным центром страны. В этногоническом мифе прародитель Гайк оседает на севере Ванского озера, но его старший сын Араманеак переходит в Айрарат, Араратскую долину, где и образуется Армения («Армянская вселенная») после Гайка. И до наших дней Айрарат является центром Армении – почти все армянские столицы находились здесь (Армавир, Ервандашат, Арташат, Двин, Ани, Ереван и др.).

В пользу нашей гипотезы можно привести следующие доводы:

a) Пространственное и временное соответствие данным этногонического мифа, где Айрарат и Араратская долина становятся центром Армении сразу после первопредка Гайка.

b) Идентификация армян как одного из главных народов Армянского нагорья в урартские времена, в противоположность другим гипотезам, по которым армяне необъяснимым образом не выявляются в обширном списке племен урартских надписей.

c) Прозрачное историческое толкование перехода Урарту-Армения как перемещения господствующего этнополитического центра Армянского нагорья: географически – с юга на север, этнически – от правящей элиты Урарту к армянам.

d) Очевидная армянская этимология некоторых имен Этиуни (топонимы, антропонимы, теоним).

Petrosyan Armen - Etiuni – cradle of Armenians.- According to our hypothesis, the Armenian self-appellation hay is connected with the ethno-toponym Etiu-ni/hi of the Urartian sources of the 9th-7th centuries BC. One of the possible prot-forms for hay could have been *hatiyo- (probably from Indo-European *poti-yo-, cf. *poti- "master, lord, husband") that in Urartian cuneiform script could be transcribed as etiu-. The territory of this country corresponds with that of the Ayrarat province of Greater Armenia. Ayrarat was the central province, stronghold, domain of kings and political, religious, and cultural center of the country. In the ethnogonic myth the Armenian forefather Hayk settles in the north of the Van lake, but his eldest son Aramanyak moves to Ayrarat, the Ararat valley, where Armenia ("Armenian universe") is formed after Hayk. To the present day Ayrarat remains the center of Armenia: almost all of the Armenian

capitals were built here (Armavir, Yervandashat, Artashat, Dvin, Ani, Yerevan, etc.

In support of this hypothesis,the following arguments may be adduced:

a) Spatial and temporal correspondence with the ethnologonic myth, where Ayrarat and the Ararat valley become the center of Armenia immediately after the forefather Hayk.

b) Identification of the Armenians as one of the main peoples of the Armenian highland in Urartian times, in contrast to other hypotheses, according to which the Armenians are inexplicably not detected in the extensive list of tribes of the Urartian inscriptions.

c) Clear historical interpretation of the Urartu-Armenia transition as the move of the dominant ethno-political center of the highland: geographically – from the south to the north, ethnically – from the ruling elite of Urartu to the Armenians.

d) Obvious Armenian etymologies of several names of Etiuni (toponyms, anthroponyms, teonim).

Սարգսյան Նվեր
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՀԱՐՑԵՐ

Իբրև սկիզբ՝ նախ հիշենք արդեն ամուր հաստատված և համընդունելի մի ճշմարտություն. մեզանում այսօր անհնար է անդրադառնալ հայ գրականության, հայոց լեզվի, պատմության, ոճագիտության, բանահյուսության, բանագիտության, լայն առումով՝ հայագիտության ու հայերենագիտության որևէ էական իրակության և չզգալ մեծավաստակ գիտնական Մանուկ Աբեղյանի մշտական ու տիրապետող ներկայությունը: Մի անպարագծելի և անշրջանցելի բարձունք է նա նաև մեր թարգմանական գրականության հետազոտության ասպարեզում թե՛ տեսության մշակման, թե՛ ուսումնասիրության մեթոդների կիրառության առումով: Դա մի վիթխարի գիտական ժառանգություն է, որ ձգվում է բանավոր-բանահյուսական գրականությունից մինչև գրերի գյուտ, գրավոր թարգմանությունների թագուհուց՝ Ս.Գրքից, առաջին թարգմանիչներից մինչև իր օրերը: Քչերին տրված նրբանկատ դիտողի հատկությամբ տաղանդաշատ գիտնականը քննության ոլորտի մեջ է առնում «թղթեր, կանոններ, ճառեր, ջատագովություններ, մեկնություններ, աղոթքներ ու հոգևոր երգեր, վկայաբանություններ, դավանաբանական ու պատմական գրվածքներ, ինչպես և ճարտասանական, փիլիսոփայական, քերականական և այլ բովանդակությամբ աշխատություններ զանազան հեղինակների, թարգմանություններ, որոնց բնագիրը կորած է, ուստի և այդպիսիների հայերեններն ստանում

են առանձին արժեք»[1]: Այս ամենի հիմքում գիտնականի կայուն համոզմունքն է, որ թարգմանական գրականությունն անանջատ է մեր մտավոր ու հոգևոր զարգացման ընթացքից, մեծապես նպաստում է հայ մշակույթի քայլառաջին, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը: Այսպիսին է նրա գնահատականը:

Թարգմանական արվեստի բարձր մակարդակի հասած և բազմադարյան հարուստ փորձ կուտակած ժողովուրդը չի կարող հեռու մնալ քաղաքակրթությունների շփման այդ առանցքից: Այսօր էլ մեզանում տարբեր լեզուներից կատարվում են տարաբնույթ թարգմանություններ: Ուզում ենք առանձնացնել մերօրյա նմուշներ, որոնք արված են նույն լեզվից՝ պարսկերենից, և կապվում են նույն թարգմանչի գործունեության հետ:

Վաղնջական ժամանակների խորքում են հայ-իրանական առնչությունների ակունքները: Դրանք հազարամյակների հոլովույթով անցած երկու հինավուրց ժողովուրդների համար ծավալվել ու այսօր էլ ծավալվում են ոչ միայն տարածքային առօրյա-տնտեսական հարևանության, այլև հասարակական, քաղաքական, գիտական, մշակութային և այլ ծիրերում: Գրական շփումները չեն կարող բացառություն կազմել և իրականացվում են պետական համապատասխան մարմինների, հասարակական կազմակերպությունների ու միությունների, անհատ ստեղծագործողների ջանքերով, համատեղ քննարկումների, հանդիպումների, գիտաժողովների կազմակերպմամբ, այլ միջոցներով ու ձևերով: Եվ այդ բոլորի հիմքում թարգմանությունն է: Անհրաժեշտ է այս առումով հատկապես շեշտել հայ- իրանական համագործակցության շրջանակներում ծնունդ առած մի կարևոր նախաձեռնություն՝ հայ ընթերցողին ոչ թե դրվագային-դիպվածաբար, այլ

1. **Մ.Աբեղյան,** *Երկեր, հ.Գ,* 1968, էջ 112-113:

պարբերական մատենաշարով ներկայացնել իրանական ժամանակակից գրականությունը: Միանգամայն ճիշտ է ժամանակային փուլի և գրական սեռի ընտրությունը: Բանն այն է, որ իրանական դասական գրականությունը, հատկապես քնարերգությունը, մեզանում վաղուց արդեն ծանոթ է, սիրված ու ճանաչված: Ֆիրդուսու, Հաֆիզի, Խայյամի, Սաադիի, Խաղանու և այլոց քնարական գոհարները մշտաշունչ ու մշտահմա արժեքներ են նաև հայոց լեզվով, մինչդեռ նույնը չի կարելի ասել ժամանակակից արձակի մասին:

Այդ նախաձեռնության առաջնեկներից է «Կապույտ, բայց մայրամուտի կապույտ»[2] ժողովածուն, որ գալիս է իր չափով շտկելու նշված անհամամասնությունը, ընդարձակելու ծանոթության, պատկերացումների շրջանակը իրանական, հատկապես հետհեղափոխական արձակում գործառող միտումների և ուղղությունների, զարգացման օրինաչափությունների, ընդհանրությունների և յուրահատկությունների մասին: Ժողովածուում ընդգրկված են ինը հեղինակների ստեղծագործություններ: Հիմնականում կարճ, նորավեպին բնորոշ ժանրային առանձնահատկություններով արված պատումներն ընթերցվում են չմարող հետաքրքրությամբ, դրանք ժամանակակից իրանցու բազմաձալ ու բազմաշերտ, տարընթաց ու տարամետ կյանքի իրական արտացոլումներն են, կյանքի տարբեր երակների բաբախուն արծարծումները, հերոսների մտածական, հուզական ու հոգեբանական լիցքերի վերհանումները: Եվ կարևոր չէ՝ հավերժական որևէ թեմայի (սեր, պատերազմ) ոլորտից են առնված, թե ներկայացնում են կենցաղային, նույնիսկ աննշան թվացող դրվագ (երթևեկություն ավտոբուսով, զրույց մսի հերթում, ընտանեկան հյուրընկալություն), կարևորն այն է, որ իրական պատառիկները կյանքի փաստից վերածվում են գրականության փաս-

[2] *«Կապույտ, բայց մայրամուտի կապույտ»,* Հետհեղափոխական իրանական պատմվածքների ժողովածու, Երևան, 2006:

տի: Դա է գլխավոր արժանիքը, տարբեր հեղինակների և տարբեր ստեղծագործությունների ընդհանրացման, միավորման հիմնաթելը:

Այսպես, պատերազմը սարսափելի է՝ ինչպես էլ դրսևորվի: Դա միայն ռազմադաշտում կատարվող գործողություն չէ: Ռազմաճամբարում Մասիհի արարքը պատերազմի շարունակությունն է՝ բեկված գերիների մեջ. դա էլ ոգու, հավատի արիություն է, այդ վիճակում գտնվող մարդու խիզախում՝ հանուն ճշմարտության (Իբրահիմ Հասանբեյգի, Մասիհի առեղծվածը): Իսկ փոքրիկ Շիվայի համար պատերազմը ողբալի է դառնում աչքերի առաջ հոր սպանությամբ, մոր ու հարազատների ակնբախ տառապանքով, երազային սպասումների և դաժան իրականության հակադրությամբ, մանկության գույների խաթարմամբ: Կապույտը դառնում է կարմիր՝ արյան գույն, ոչ թե լուսաբաց, այլ մայրամուտ: Հիմնագծին նրբորեն ձուլվում են ավազանում ապրող փոքրիկ ձկան, տանը ապրող ու մոր հետ հորը սպասող Շիվայի, գիշատիչ կատվի, աղավնու և գույների խորհրդանշական ենթահյուսվածքները (Սեյեդ Շոջայի, Կապույտ, բայց մայրամուտի կապույտ): Եթե պատերազմ է, դպրոցը հեռու մնալ չի կարող, ինչ թեմայով շարադրություն էլ գրել տաս՝ աշակերտները պատերազմի մասին պիտի գրեն, ավելին, դասի ժամանակ ռմբակոծումից զոհվածի եղբայր Ղասեմինեժադի պես պիտի մտածեն. «Երանի կարողանայի ռազմիկ եղբորս՝ Ռեզայի հետ ռազմադաշտ մեկնել,… ոչ թե փողոցից հավաքած դատարկ փամփուշտներով աշխատանքի ուսուցման ուսուցչիս համար ոսկեգույն եզրերով նկարի շրջանակ պատրաստել»: Եվ լոկ ցավից ելք գտնելու համար է ողջ մնացած ուսուցչի ուշացած «թույլտվությունը» երեխաներին՝ գրել պատերազմի մասին (Մարիամ Ջամշիդի, Ելք ցավից):

Սերը կյանք է, վայելք, նաև մահ, զոհաբերում: Սերը մրցույթ չէ. սիրո նշանակի հերթական խորհրդավոր զոհն է

միակ կին մասնակիցը՝ Ֆերեշթե Մաղամին (Զահրա Զավարյան, Սիրո նշանակը): Մեկ այլ հերոսուհի՝ Սուրին, որ ամուսին ու երեխա ունի, ամառնամուտի ջերմության մեջ մրսում է ջահել օրերին ապրած ուրիշ մի անձրևի հուշից, պատանեկան սիրո փլուզումը ցավ է տվել նրան, ու այդ ցավը մխում է: Նա, ով մեղավոր է դրա համար և արդեն մեռնում է հիվանդանոցում, վաղուց օտար է իրեն: Բայց Սուրին այցելում է հիվանդանոց, վերջին անգամ տեսնում նրան, իսկ մեռնելուց հետո էլ մանրավաճառ ծերունուց գնում է նրա հարյուր հատիկանոց տերողորմյան և հատիկներից յուրաքանչյուրի խորքում, հուշից դողալով, մի վարդ է տեսնում (Ռազիե Թոջար, Սուրին):

Օջախի, ընտանեկան ջերմության, ամուսնական և ընդհանրապես մարդկային փոխհարաբերությունների բազմաբնույթ խնդիրները ևս բավականաչափ ներկայացված են ժողովածուի տարբեր պատումներում: Հասանի որդի Բասեմ Ռահմաթին զգոն է, թե հոգեկան խանգարում ստացած՝ էականը դա չէ: Էականն այն է, որ չփոխվեն ճշմարտության ու կեղծիքի տեղերը: Ինքը հանցանք է գործել, սպանել է կնոջը՝ Մանիժե Սաբեթիին, պատրաստ է պատիժ կրելու, բայց դա չի կարող առավել ծանր ու ավելին լինել, քան մինչ այդ իր ունեցած վիճակն էր: Իր չափ, նույնիսկ ավելի, սպանության հանցավորն են կինը և ընտանեկան, ամուսնական կյանքի այն գոյաձևը, որ պարտադրվել էր իրեն կնոջ և այլ հանգամանքների պատճառով, մինչդեռ ընտանեկան համատեղ կյանքը ամենից առաջ նվիրում է, բարեգթություն ու բարեսրտություն, իսկ օջախն էլ հյուրանոց չէ, միմյանց օտար մարդկանց գիշերելու տեղ չէ (Շոջայի, Վերջին պաշտպանությունը):

Մինչ փոքրիկ Աֆսանն անընդհատ անհանգստացնում է մորը տիկնիկին զգեստ հագցնելու, ընթրելու, քնելու, խաղալու և մանկական այլ «մանր» մտահոգություններով, այդ հեն-

քի վրա բացահայտվում են ընտանիքի իրական և մեծ մտահոգությունները, դժվարություններն ու ապրումները (Մարիամ Սաբաղզադե, Աֆսանի փոքրիկ մտահոգությունները):

Ծնողների՝ Լեյլայի և Սայիդի հոգսը առաջնեկ աղջիկն է՝ Սահրան, որ կույր է և փոքր գլուխ ունի. կարծես դժբախտության հիմքերը կան: Բայց նրանք ամեն ինչ անում են, որ արատներն այդ չխաթարեն աղջկա ճակատագիրը: Սիրող ու նվիրված ընտանիքներին Աստված էլ է օգնում, և Սահրան նույնիսկ բախտավոր ամուսնություն է ունենում (Մոժգան Շեյխի, Սահրայի ժպիտը): Տրամագծորեն հակառակ իրողությունն է նույն հեղինակի «Սայեն ու քարը» պատումում: Սայեի համար ցավալի է հարազատ ընտանիքն ու հայրենիքը թողնելը, բայց Ջամալի հետ ամուսնանալը և արտասահմանում բարեկեցիկ կյանքով ապրելը անձնական երջանկություն են խոստանում: Կատարվում է հակառակը. պարզվում է, որ «ծնողասեր» ու հարուստ Ջամալն ընդամենը մոր մահին է սպասում և Սայեի հետ ամուսնացել է պարզապես մոր ցանկությունը կատարելու համար: Այսպես հանգիստ այդ «քարը» կարող է դժբախտացնել Սայեին ու նույն հանգստությամբ նաև հեգնել. «Քեզ համար էլ վատ չեղավ: Ուրիշի ծախսով արտասահման եկար: Դեռ աշխատանք էլ ունես, զբաղվում ես: Գնա՛, Աստծուն փա՛ռք տուր, որ լավ բախտ ունես»:

Մսի հերթում կանգնած տարբեր խանումների և աղաների կենցաղային խոսակցությունն ու վեճը ի ցույց են դնում նրանց իրական վիճակն ու իրական դեմքը: Բացահայտվում են արտաքին կեղծ ձևերով ու դիմակներով քողարկված բացասական հատկանիշներ, բայց բախտի ու ցավի անակնկալ խաչաձևմանը նաև իր վարվելակերպով նպաստած մսավաճառ Ասղար աղայի խոսքը նույնքան անակնկալ հանգուցալուծում է դառնում. «Փառք Աստծուն, փառք: Միսը վերջացավ: Անտեղի մի՛ աղմկեք» (Թահերե Իյբոդ, Ասղար աղան):

«Իր հարգն իմացող» կինը, որ ուշացած բարձրացել է ավտոբուս և արդեն զայրացած է, որ իրեն տեղ չեն զիջում, ստիպված նստում է ավտոբուսի վերջում՝ աղքատ մի մուրացիկի կողքին, այլևս չի կարող հանդուրժել այս «անպատվությունը». նախ ինքն է անպատվում, պայուսակով ու ձեռքերով խփում մուրացիկին՝ «Դու մի՞թե նամուս չունես… Հիմա քեզ այնպես կդաստիարակեմ, որ մինչև կյանքիդ վերջը նման բաներ այլևս չանես», ապա ավտոբուսի մյուս ուղևորներն են խառնվում գործին, պարսավում, դաժանորեն ծեծում, դուրս գցում ավտոբուսից և հետո միայն զարմացած նայում կնոջը, որ այնուամենայնիվ տրված հարցին, թե ինչ էր արել աղքատը, բղավում է դեռ. «Ոչի՞նչ: Ի՞նչ էիր ուզում, որ աներ: Այդ տխմար ու կեղտոտ մարդուկը աչքերիս առաջ իր մատը, այ, մինչև այսքանը, մտցրել էր քթի մեջ»: Այսպես: Ոչինչ ավելի (Ահմադ Արաբլու, Մատը): Արաբլուի մյուս նովելը փոքրիկ մի պատմություն է սովորական ընտանեկան այցելության մասին՝ արված հյուրընկալող ընտանիքի երեխայի կողմից: Վերջիններս անտրտունջ ու պատրաստակամ տանում ու հանդուրժում են քաղաքից իրենց այցելած ընտանիքի երեխայի՝ Նադիրի (որին պարտադիր պարոն Նադիր պիտի հորջորջեն) բոլոր քմահաճույքներն ու անկարգությունները, թողնում են, որ նա հավանգով ջարդի տանտիրոջ գլուխը, ժամացույցը, թեյնիկը, հայելին, հաշմի կատվին, ու դեռ պիտի հաճոյանան, բոլորով միասին կատարեն նրա ամեն մի ցանկություն, նույնիսկ գովեն ու խրախուսեն նրան, որպեսզի չխայտառակվեն, պատվատեր ու պատվավոր մարդ համարվեն (Պատվատեր մարդիկ):

Ահա այսպես ժողովածուում մեկ առ մեկ բացվում են կյանքի տարբեր իրողությունների, եղելությունների դռները, և ընթերցողը ոչ միայն դառնում է այդ դռներից այն կողմ գործող մարդկանց հետ կատարվող դեպքերի ականատեսը, հաղորդակից լինում իրենց նույնպես հուզող խոհերին ու ապ-

ռումներին, այլև զգում է գրականության ներգործուն ուժը, տրոփյունն ու շունչը, թարգմանության պարգևը:

Եվ տեղին է շեշտել մի կարևոր հանգամանք. որքան էլ թարգմանությունը ժողովուրդների շփման, մշակույթների և քաղաքակրթությունների փոխհարստացման հիմնական միջոցներից է, միաժամանակ դժվարին ու բարդ աշխատանք է, որ պահանջում է իմացական-ճանաչողական, ստեղծագործական, մասնագիտական և այլ բնույթի բավականաչափ կայուն հատկանիշներ: Գեղարվեստական թարգմանությունը՝ առավել ևս: Այս առումով ժողովածուն շահեկանորեն առանձնանում է: Թարգմանիչը՝ Վրեժ Փարսադանյանը, կարողացել է ապահովել պատշաճ մակարդակ: Նրան ճանաչում եմ դեռևս համալսարանական տարիներից, երբ Իրանից եկած ուսանողը որոշակի շրջանակներում մեր խնդրանքով հնչեցնում էր իրանական քնարերգության նմուշներ բնագրով, երգում էր Հ. Չեքիջյանի երգչախմբում, անհրաժեշտ գիտելիքներ յուրացնելուն զուգընթաց աչքի էր ընկնում արվեստի գործերը սիրելու, սիրել տալու, ընկալելու իր յուրահատուկ մոտեցումներով, վերլուծություններով ու խառնվածքով: Մասնագետներին ծանոթ են նրա լեզվական բառարանները, իրանական ժողովուրդների նիստուկացի, ծեսերի, տոների, սովորույթների ու ավանդույթների, հայ-իրանական աղերսների մասին տպագրած հոդվածներն ու ուսումնասիրությունները: Նա Հայաստանի դպրոցներում ըստ նախասիրության դասավանդվող պարսից լեզվի դասագրքերի համահեղինակներից է, ունի նաև բուհական դասագիրք, տարբեր ժամանակներում թարգմանչական աշխատանքներ է կատարել հայրենիքում և այլ երկրներում: Այս ամենը, անշուշտ, նպաստել է, որ նա կարողանա ստեղծել բնագրերին հնարավորինս համահունչ թարգմանություններ, հարազատորեն վերարտադրել ստեղծագործությունների տեքստային բովանդակությունն ու ենթատեքստային նրբիմաստները, գտնել, դիպուկ

ու տեղին օգտագործել լեզվառճական համարժեք միջոցներն ու հնարները: Նշենք միայն աչքի զարնվող մի հանգամանք. մեր ժողովրդի քաղաքական ճակատագրի բերումով Վ.Փարսադանյանը ծնվել է պարսկահայ ընտանիքում, իսկ աշխատանքի բերումով եղել է նաև Աֆղանստանում:

Տևական կենդանի շփումների արդյունքում նա տիրապետել է նաև դարիի ու պարսկերենի խոսակցական տարբերակներին: Եվ բոլոր այն դեպքերում, երբ պատումների հիմքում խոսակցական պարսկերենն է, թարգմանիչն այդպես էլ վարվել է՝ ընտրելով խոսակցական հայերենին բնորոշ բառեր ու բառակապակցություններ, դարձվածներ ու շարահյուսական կառույցներ:

Մյուս ժողովածուն հասցեագրված է հայ մանուկներին ու պատանիներին և բովանդակում է իրանցի մանկագիրների մի շարք պատմվածքներ[3]:

Մի կողմից՝ գիրքը իրանական մանկական գրականությունը հայ մանուկներին ներկայացնելու առաջին փորձերից է: Մյուս կողմից՝ ակնհայտ են նոր մասնագետ թարգմանիչներ պատրաստելու միտումն ու մտահոգությունը, քանի որ պատմվածքները թարգմանել են այն ժամանակ դեռ գործող «Հրաչյա Աճառյան» համալսարանի արևելագիտության մասնաճյուղի պարսից լեզվի և գրականության բաժնի ուսանողները, իսկ թարգմանիչ դասախոսն ընտրել է պատմվածքները ըստ ճանաչողական, գեղագիտական և դաստիարակչական նշանակության, ղեկավարել, օգնել, անհրաժեշտ տեսագործնական խորհուրդներ է տվել… Թարգմանական գործը շարունակողներ պիտի ունենա:

Երրորդ նմուշը իրանցի ճանաչված գրող, այաթոլլահ Մոհամմադ Մոհամմադի Ռեյշահրիի գիրքն է[4]: Պարսկերեն

---

[3] *Իրանական մանկական պատմվածքներ*, Ե., 2011:

[4] **Մ. Ռեյշահրի**, *Իմաստախոսությունների գիրք Մարիամի որդի Հիսուսի,* Ե., 2015:

բնագիրը լույս է տեսել 2012-ին Թեհրանում, կա նաև արաբերեն տարբերակը, իսկ 2015-ին արդեն ընթերցողի սեղանին դրվեց հայերեն թարգմանությունը: Գրքի ծավալուն առաջաբանում ու յոթ գլուխներում ի մի են բերված, դասակարգված և համապատասխան խմբերով ներկայացվում են քրիստոնեական վարդապետության հիմնական իմացաբանական հիմքերը, Հիսուսի իմաստախոսությունները, առակները, ասույթները Աստված-տիեզերք-մարդ փոխհարաբերության մասին, հավատի և անհավատության, բարու և չարի, մեղքի և ապաշխարության, անցողիկի և մնայունի, հոգևորի ու մարմնականի, պատշաճ-ոչ պատշաճ վարքի ու արարքների, կյանքի ու մահվան և շատ այլ երևույթների մասին, ինչպես բարձրյալ Աստծու խրատները՝ ուղղված Հիսուսին, այնպես էլ մարդկանց ուղղված Հիսուսի խրատները:

Օգտագործված նյութը քաղված է ոչ միայն Աստվածաշնչից ու Ղուրանից, այլև իսլամական կրոնի առաջնորդների ու ներկայացուցիչների, տարբեր գիտնականների մեկնություններից, վկայություններից ու աշխատություններից: Իր ամբողջության մեջ գիրքը յուրատեսակ երկխոսություն է հավատի ու անհավատության, կրոնի ու գիտության, քրիստոնեության ու իսլամի միջև: Եվ այդ ամենն արված է հանրամատչելիության սկզբունքով, առօրյա պարզ լեզվով, հստակ և հեշտ հասկանալի ձևակերպումներով. առանձնահատկություններ, որոնք լավագույնս պահպանել է նաև թարգմանիչը:

Հուսանք, որ լավ նախաձեռնություններն ու գործերը կլինեն անընդհատական: Եվ առիթն օգտագործելով՝ ուզում ենք հայտնել մի քանի նկատառում, որոնք գերազանցապես վերաբերում են ընդհանուր գործին, ոչ թե ներկայացված ժողովածուներին:

Թարգմանության (այդ թվում և գեղարվեստական) գնահատության և արժևորման չափանիշները առաջին հերթին պայմանավորվում են լեզվական, ոճական կողմերով, բնագրի

հետ համարժեքությամբ, նրա բովանդակային և գեղագիտական լիցքերի հարազատորեն վերարտադրմամբ: Բայց կա նաև տպագրական, հրատարակչական գործը պատշաճ որակով կազմակերպելու խնդիրը: Քիչ չեն դեպքերը, երբ խմբագրական-սրբագրական թերացման պատճառով սպրդում են շատ վրիպակներ, ուղղագրական, կետադրական, բառագործածական ու քերականական տարատեսակ սխալներ, ոճական անհարթություններ: Արդյունքում հաջողված թարգմանությունն էլ չի կատարում ակնկալվող գործառույթները, երբեմն էլ պարզապես վերածվում է տպագրական խոտանի: Նման դեպքերում գրիչների ու ծաղկողների ինքնատիպ դպրոց ունենալու, թարգմանության ու տպագրության բազմադարյան մշակույթի տեր լինելու փաստարկները արդարացում չեն:

Կարևոր է և տպաքանակի հարցը: Խոսքը բազմահազարանոց տպաքանակների մասին չէ, բայց շատ աշխատանքներ ընթերցողներին չեն հասնում օրինակների քչության պատճառով (տպագրվում են հազիվ մեկ-երկու հարյուր օրինակով): Առանձին դեպքերում կարծրատիպ դարձած մոտեցումը պետք է վերանայել, տպաքանակը մեծացնել:

Մտահոգիչ է հատկապես անհարկի զուգաձևությունների առատությունը: Նույն անունը, անվանումը գրքից գիրք, ըստ թարգմանչի կամքի ու ճաշակի, ներկայացվում է զանազան ձևերով ու տարբերակներով: Մոհամադ-Մոհամմադ-Մուհամմադ-Մոհամմեդ-Մուհամեդ, Սեյեդ-Սեյիդ-Սեյյիդ, դերվիշ-դարվիշ, Ռեզա-Ռիզա, Աբաս-Աբբաս, նոռուզ-նովռուզ, Խայյամ-Խայամ, Հաֆեզ-Հաֆիզ, մոթաքա-մութաքա, Խաղանի-Խաքանի և այլն, բազմաթիվ են դրանք: Կարծում ենք, եթե ինչ-որ ճշգրտումներ կատարելու անհրաժեշտություն կա, ապա պետք է անել մասնագետների համատեղ քննարկմամբ, գիտական միասնական հիմնավորումով, համընդհանուր օրինական հունի մեջ դնելով: Հակառակ դեպքում նման վի-

ճակը չի կարող բավարար դիտվել ոչ բնագրերի, ոչ էլ թարգ-մանությունների լեզվի համար:

Sargsyan Nver – Present Issues of Translation Literature.
In the present article several examples of translation literature are presented done from Persian language and they are linked to the activities of the same translator – Vrezh Parsadanyan. At the same time various current issues related to translation literature are discussed.

Саргсян Нвер – Современные проблемы переводческой литературы. В статье представляются некоторые переводы – сде¬ланные из современного персидского языка, которые связуются с деятельностью одного переводчика – Врежа Парсаданяна. Одновременно анализируются некоторые важные проблемы современной переводческой литературы, касающиеся их типографии, качестве и языковой культуры.

Սիմոնյան Գևորգ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ժամանակակից ադրբեջաներենի բառապաշարի ստվար մի շերտ ձևավորում են փոխառությունները: Թյուրքական ծագման բնիկ բառաշերտի կողքին առկա են մեծ թվով արաբական, իրանական, ռուսական և այլ լեզուներից փոխառված բառեր, որոնց մեջ ռուսական փոխառությունների քանակը զգալի է:

Սկսած 19-րդ դարի 20-30-ական թվականներից, երբ Արևելյան Այսրկովկասն անցնում է Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, և զուգահեռաբար սկսվում է այդ տարածքի ապաիրանականացումը[1], ադրբեջաներենի գրական ստանդարտի ձևավորումը միանգամից ընթանում է ռուսերենի ուժեղ ազդեցության հենքի վրա: Աստիճանաբար ռուսերենը դառնում է ադրբեջաներենի թե՛ բառապաշարի հարստացման և թարմացման, և թե՛ շարահյուսական նոր կաղապարների ու կառույցների լրացման հիմնական աղբյուր: Ռուսերենից ադրբեջաներեն կատարված բառային փոխառությունները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝

1) Անմիջական կամ ուղղակի փոխառություններ, որոնք ադրբեջաներեն անցած բնիկ ռուսական բառերն են:

---

[1] **Варданян Т.**, *Азербайджанцы: История одного незавершенного этнопроекта,* Москва, 2012, էջ 30.

2) Միջնորդավորված կամ անուղղակի փոխառություններ, որոնք չունեն ռուսական կամ լայն իմաստով սլավոնական ծագում, սակայն հայտնվել են ադրբեջաներենում ռուսերենի միջնորդավորությամբ[2]:

Ռուսական փոխառություններ կարելի է հանդիպել ադրբեջաներենի բառապաշարի բոլոր շերտերում, այդ թվում, բնականաբար, և ռազմական: Սակայն, ի տարբերություն մնացած ոլորտների, ռազմական բառապաշարում ռուսական ծագման բառերը, դատելով ժամանակակից ադրբեջաներենի ռազմական ոլորտին առնչվող եզրերի նախնական քննությունից, համեմատելով արաբական և իրանական բառերի հետ, ավելի մեծ թիվ են կազմում, սակայն աստիճանաբար դուրս են մնում գործածությունից՝ համալրելով ադրբեջաներենի հնաբանությունների շարքը, ինչպես օրինակ՝ rota (վաշտ), serjant (սերժանտ), batalyon (գումարտակ), vzvod (դասակ), polk (գունդ) և այլն[3]:Սա պայմանավորված է, թերևս, այն հանգամանքով, որ ադրբեջաներենի պատմության նոր և

[2]Ռուսերենի միջոցով ադրբեջաներեն են ներթափանցել բազմաթիվ լեզուների բառեր, ինչպես օրինակ՝ լատ.՝ akademiya (ակադեմիա), akt (ակտ), aspirant (ասպիրանտ), assistent (ասիստենտ), auditoriya (լսարան), qlobus (գլոբուս), qonorar (հոնորար), dekan (դեկան), diktatura (դիկտատուրա), diktor (հռետոր), direktor (տնօրեն), dissertasiya (ատենախոսություն), institut (ինստիտուտ), intonasiya (ինտոնացիա) և այլն, անգլ. klub (ակումբ), kombayn (կոմբայն), lift (վերելակ), mitinq (միտինգ), park (այգի), folklor (բանահյուսություն), futbol (футбол), tunel (թունել), rels (ռելս) և այլն, գերմ. abzas (պարբերություն), marka (ապրանքանիշ), ştat (նահանգ), bint (բինտ), qalstuk (փողկապ), komandir(հրամանատար) և այլն, իտալ. balerina (բալերինա), benzin (բենզին), duet (զուգերգ), kvartet (կվարտետ), konsert (համերգ), novella (նորավեպ), pianino (դաշնամուր), solo (սոլո), faşizm (ֆաշիզմ), opera (օպերա), balkon (պատշգամբ) և այլն, հոլ. matros (նավաստի), kompas (կողմնացույց), reyd (արշավ) և այլն:

[3] Տես՝ *Azərbaycan dilinin izahlı lüğəti. Dörd cildde*, Bakı, 2006.

նորագույն փուլերի համար բնութագրական է լեզվի՝ հաճախ արհեստական միջոցների ազդեցությամբ հեռացումը ռուսերենից և սերտ շփումների առաջացումը թուրքերենի հետ հետխորհրդային շրջանում: Կովկասում տարածված թյուրքական լեզուներ ռուսական ծագման բառերի՝ քանակական առումով շոշափելի մուտքի շրջանը սկսվում է 19-րդ դարից, որը պայմանավորված էր Կովկասում ռուսական ազդեցության ուժեղացմամբ: 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրով արդեն Կովկասի հարավարևելյան հատվածն ամբողջությամբ անցավ Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, որի հետևանքով նշված տարածքը դարձավ ինչպես մշակութային, այնպես էլ՝ լեզվական ակտիվ շփումների գոտի ռուսական և տեղի՝ ինչպես բնիկ, անպես էլ եկամուտ տարրի, մասնավորապես թյուրքականի միջև: Ռուսերենից թյուրքական լեզուներ (ավելի ուշ ադրբեջաներեն) կատարված ուղղակի և անուղղակի փոխառությունները, ըստ դրանց անցման պայմանական ժամանակագրության, կարելի է ներկայացնել երեք փուլով՝

1. 11-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի կեսերը,
2. 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները,
3. 20-րդ դարի սկզբից մինչև մեր օրեր:

Առաջին շրջանում թերևս կատարվել են շատ քիչ թվով փոխառություններ, քանի որ տարածաշրջանում ռուսական ազդեցությունը դեռևս շատ թույլ էր: Դրանք հիմնականում այն ռուսական բառերն են, որոնք անցել են վաղ շրջանում ալթայական լեզվաընտանիքի թյուրքական ճյուղին և ապա շարունակվել նաև ադրբեջաներենում, հետևաբար այդ շրջանի փոխառությունները ընդհանուր են թյուրքական մի շարք լեզուների համար: Երկրորդ շրջանում փոխառությունների քանակը կտրուկ աճեց, որը կապված էր Կովկասում ռուսական ազդեցության ուժեղացմամբ: Երրորդ շրջանը կարելի է

համարել ամենաակտիվը՝ պայմանավորված Խորհրդային Միության կազմավորման հետ, երբ ռուսերենը դարձավ տարածաշրջանում պաշտոնական գրագրության լեզու և Խորհրդային Միության ազգերի միջև շփման միակ միջոց:

Ադրբեջաներենում ռուսական և ռուսերենի միջոցով եվրոպական լեզուներից փոխառությունները տարբերակելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հնչյունական և բառակազմական մի շարք առանձնահատկությունների՝ Ռուսական կամ եվրոպական ծագման են

1. այն միավանկ բառերը, որոնք իրենց կազմում ունեն 4 բաղաձայն հնչյուն, ինչպես օրինակ՝

şlang- կաշեփող,
ştamp – դրոշմ,
blank- թերթիկ, ձևաթուղթ
şrift - տառատեսակ և այլն:

2. երկու բաղաձայն հնչյունով սկսվող բառերը՝

traktor- տրակտոր,
klub- ակումբ,
kran- կռունկ,
plan- ծրագիր և այլն:

3. ադրբեջաներենի այն բառերը, որոնք իրենց կազմում ունեն և՛ կոշտ, և՛ փափուկ ձայնավորներ, և որոնցում չի պահպանվում ինչպես օղուզական խմբի թյուրքական մյուս լեզուներին, այնպես էլ ադրբեջաներենին հատուկ ձայնավորների ներդաշնակության կանոնը: Օրինակ՝

ա) i և a ձայնավոր հնչյուններ պարունակող բառերը՝

diametr – տրամագիծ,
diaqram – դիագրամ,
final- եզրափակիչ
prikaz- հրաման
signal- ազդանշան
dialoq – երկխոսություն և այլն:

բ) e և o ձայնավոր հնչյուններ պարունակող բառերը՝
geolog- երկրաբան,
geofizika- գեոֆիզիկա,
geologiya-երկրաբանություն,
rektor- ռեկտոր
eksponat- ցուցանմուշ և այլն:
գ) i և o ձայնավոր հնչյուններ պարունակող բառերը՝
biokimya- բիոքիմիա,
kardiolog- սրտաբան,
biologiya- կենսաբանություն,
filolog- բանասեր,
biolog- կենսաբան և այլն:
դ) e և a ձայնավոր հնչյուններ պարունակող բառերը՝
teatr- թատրոն,
medal- մեդալ,
reaktiv- ռեակտիվ,
reaksiya- ռեակցիա,
real-իրական և այլն:

4. Re-, para-, poli-, por- radi-, rep-, res- , ro-, sem-, ser-, te-, fe-, fo-, fil-, ek-, el-,ep-es-, op-, me-, ko-, ka-, imp-, mak-, mik-, inst-, dis-, de-, ve-, aq- նախածանցներով սկսվող բառերը, ինչպես օրինակ՝
reaktiv- ռեակտիվ,
poliklinika- պոլիկլինիկա,
portfel-պորտֆել, թղթապանակ,
radist- ռադիստ,
respublika-հանրապետություն,
serjant- սերժանտ,
texnika - տեխնիկա և այլն:

5. -iya, -ist, -izm, -iv վերջածանցներով բառերը, ինչպես օրինակ՝
zoologiya- կենդանաբանություն,

leksikologiya- բառագիտություն,
infeksiya- ինֆեկցիա,
maşinist- մեքենավար,
kapitalizm- կապիտալիզմ,
arxiv-արխիվ,
kollektiv-կոլեկտիվ և այլն:

Հաշվի առնելով վերը թվարկված հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները՝ կարելի է տարբերակել ռուսական և եվրոպական փոխառությունները ադրբեջաներենի բառապաշարում:

Ինչ վերաբերում է ադրբեջաներենի ռազմական բառապաշարին, այստեղ ևս մեծ քանակ են կազմում ռուսական փոխառությունները: Ռազմական բառապաշարի իմաստաբանական սահմանները բավական լայն են: Այն իր մեջ ներառում է զենք-զինամթերքի, ռազմական ստորաբաժանումների, գործողությունների, զինվորական հանդերձանքի, կոչումների, պաշտոնների անվանումներ և այլն: Հաշվի առնելով իմաստային առանձնահատկությունները՝ ստորև կանդրադառնանք ադրբեջաներենի ռազմական բառապաշարի շերտերին և դրանց մեջ կիրառվող ռուսական և եվրոպական լեզուներից կատարված փոխառություններին: Ըստ իմաստային առանձնահատկությունների՝ ռազմական բառապաշարը կարելի է բաժանել հետևյալ շերտերի՝

1. *Զենք-զինամթերքի անվանումներ.* Այս շերտը իր մեջ ներառում է ինչպես ժամանակակից սպառազինության, այնպես էլ հնագույն ժամանակների զենք-զինամթերքի անվանումներ: Այստեղ կարելի է հանդիպել ռուսական և եվրոպական բազմաթիվ փոխառությունների, որը պայմանավորված է ռուսական և եվրոպական ռազմական գործի ավելի զարգացած լինելով: Ադրբեջաներենի ռազմական բառապաշարում մինչև օրս ակտիվ կերպով օգտագործվում են *raket, pulemyot,*

avtomat, pistolet, zenit, torpedo, mina, bomba, artilleriya և այլ բառեր:

2. *Ռազմական տեխնիկայի, տրանսպորտի անվանումներ.* Այս շերտում հանդիպող փոխառությունները կարելի է հանդիպել նաև այլ բնագավառների բառապաշարում: Օրինակ՝ այդպիսի փոխառություններից են *avtomobil, aviasiya, aparat, vertalyot, tank* բառերը:

3. *Ռազմական ստորաբաժանումների անվանումներ.* Ստորաբաժանումների անվանումները հիմնականում վերցված են ռուսական բանակից՝ ինչպես օրինակ՝ *Vzvod, rota, batalyon, polk, brigad, divizya, batareya, divizion* և այլն:

4. *Զինվորական կոչումներ, պաշտոններ և մասնագիտություններ.* Այստեղ նույնպես առկա է ռուսական բանակի կոչումների համակարգը, որտեղից էլ փոխառված են բազմաթիվ բառեր, ինչպես օրինակ՝ *serjant, leytenant, kapitan, mayor, polkovnik, podpolkovnik, general, admiral, starşina* և այլն:

5. *Զինվորական հանդերձանք.* Զինվորական հանդերձանքի և դրա տարրերի անվանումներում նույնպես գերակշռում են ռուսական, կամ ռուսերենի միջոցով եվրոպական ծագման բառերը, ինչպես օրինակ՝ *kaska, kitel, forma, furajka, şinel, şlem, pagon, palto* և այլն:

Գոյություն ունեն ռազմական բառապաշարի այլ շերտեր ևս, օրինակ՝ ռազմական գործողությունների, հրամանների անվանումներ, որոնցում սակայն ռուսական և եվրոպական փոխառությունների քանակը աննշան է: Հավանաբար, պատճառը այս բառաշերտի ձևավորված լինելն է մինչև ռուսական ազդեցության տարածումը:

Ստորև կքննենք վերը նշված օրինաչափություններն արտացոլող և թե դրանցից շեղվող ռուսական ծագման որոշ ռազմական տերմիններ, որոնք գործածական են կամ ժամանակին գործածվել են ադրբեջաներենում:

komandir

Ադրբեջաներենի ռազմական բառապաշարում ներկայումս լայն կիրառություն ունեցող komandir բառը, ունի գերմանական ծագում, որը ադրբեջաներեն է անցել ռուսերենի միջոցով: Ըստ ռուսական ծագումնաբանական բառարանների՝ այն սկսել է ռուսերենում կիրառվել Պետրոս Առաջինի ժամանակներից: Բառը ռուսերեն է անցել գերմաներենի kommandeur կամ ֆրանսերենի commandeur ձևից[4]:

Komandir բառը, ադրբեջաներենի բացատրական բառարաններում մեկնվում է որպես հրամանատար, զինվորական ստորաբաժանման առաջնորդ, ղեկավար[5]: Բառը բավական լայն կիրառություն ունի ադրբեջաներենի ռազմական բառապաշարում: Գործածական են նաև քննարկվող բառով կազմված որոշ բառաբարդումներ և արտահայտություններ, ինչպիսիք են komandirliq (հրամանատարություն), gəmi komandiri (նավապետ), bölük komandiri (վաշտի հրամանատար), polk komandiri (գնդի հրամանատար) և այլն[6]:

bomba

Ադրբեջաներենի ռազմական բառապաշարում որպես ռազմամթերքի անվանում օգտագործվող bomba (ռումբ) բառը ևս ռուսերենի միջոցով է անցել ադրբեջաներեն: Ըստ ռուսական աղբյուրների՝ այն իտալերեն bomba բառն է, որը ռուսերեն է անցել լեհերենի bomba կամ գերմաներենի bombe ձևից: Իսկ բառը իտալերեն է անցել լատիներենի bombus ձևից[7]:

---

[4] **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка, II том*, Москва, 1986, էջ 300:

[5] *Azərbaycan dilinin izahlı lüğəti. Dörd cildde.* 2 cild. Bakı, 2006, 725 s..

[6] *Azərbaycan Respublikası Silahlı Qüvvələrinin İntizam nizamnaməsi təsdiq edilsin və 1995-ci il yanvarın 1-dən qüvvəyə minsin.*

[7] **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка, I том,* Москва, 1986, էջ 191:

Բառն այժմ լայնորեն կիրառվում է ադրբեջաներենի ռազմական բառապաշարում և հաճախ է հանդես գալիս բարդ բառերի և հարադրությունների կազմում, ինչպիսիք են օրինակ՝ bombaçı (ռմբարկու), bombadaşıyan (ռմբակիր), əl bombası (ձեռքի նռնակ) bombardman (ռմբակոծություն), bombalamaq (ռմբակոծել) bombardmançı, bombatökən (ռմբակոծիչ) և այլն[8]:

raket

Ադրբեջաներենի՝ ռուսերենից կատարված փոխառություններից է նաև raket բառը: Ըստ ռուսական աղբյուրների՝ բառը ռուսերեն փոխառվել է Պետրոս Առաջինի ժամանակաշրջանում իտալերենի rocchetta ձևից, գերմաներենի կամ հոլանդերենի միջոցով[9]: Այս բառը կարելի է հանդիպել արևմտյան և արևելյան բազմաթիվ լեզուներում: Ադրբեջաներենում raket նշանակում է «հրթիռ, հրթիռային»[10]: Այս բառից են կազմված նաև ադրբեջաներենում այնպիսի ռազմական տերմիններ և կապակցություններ, ինչպիսիք են signal raketi (ազդանշանային հրթիռ), yandırıcı raket (հրկիզող հրթիռ), fugas raketi (ֆուգասային հրթիռ), aparıcı raket (փոխադրող հրթիռ), raketdaşıyan (ռմբակիր) և այլն:

rota

Ռազմական ստորաբաժանումների անվանումներում նույնպես առկա են բազմաթիվ փոխառություններ ռուսերենից և եվրոպական լեզուներից: Այդպիսի փոխառություններից է rota բառը, որը նշանակում է վաշտ: Բառը ադրբեջաներեն է անցել ռուսերենից, իսկ ռուսերեն է անցել դեռևս 18-րդ դարում լեհերենի միջոցով: Բառը լեհերեն և այլ եվրոպական

---

[8] **Բաղրամյան Ռ.Հ.**, *Ադրբեջաներեն-հայերեն բառարան,* Երևան, 1987, 123 էջ:

[9] **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка, III том,* Москва, 1986, էջ 438:

[10] **Բաղրամյան Ռ.Հ.**, նշվ. աշխ., էջ 538:

լեզուներ անցել է միջին բարձր գերմաներենից 13-րդ դարասկզբին[11]: Rota բառը բավականին երկար ժամանակ կիրառվել է ադրբեջաներենի ռազմական բառապաշարում: Այս բառով կիրառվել են նաև բազմաթիվ ռազմական տերմիններ ու կապակցություններ, ինչպիսիք են օրինակ՝ rota komandiri (վաշտի հրամանատար), rota starşinası (վաշտի ավագ), rabitə rotası (կապի վաշտ), tank rotası (տանկային վաշտ), kəşfiyyat rotası (հետախուզական վաշտ) և այլն:

general

Ադրբեջաներենի զինվորական կոչումները հիմնականում վերցված են ռուսերենից: Զինվորական կոչումներում հանդիպող general բառը սերում է գերմաներենի general բառից, որն էլ ծագում է լատ.՝ generālis - «ընդհանուր», «գլխավոր» բառից: Այն ռուսերենում սկսել է օգտագործվել 17-րդ դարից սկսած[12]: Ադրբեջաներեն հավանաբար անցել է արդեն 20-րդ դարասկզբին: Այս զինվորական կոչումից էլ ձևավորվել են բարձրագույն սպայակազմի մի շարք այլ կոչումներ, ինչպիսիք են general-mayor (գեներալ-մայոր), general-leytenant (գեներալ-լեյտենանտ), general-polkovnik (գեներալ-գնդապետ)[13]:

Այսպիսով, քննության առնելով ադրբեջաներենի ռազմական եզրաբանության ռուսական որոշ փոխառություններ, կարելի է նշել, որ ադրբեջաներենի բառապաշարի ձևավորման վրա եվրոպական, հատկապես ռուսական ուժեղ ազդեցությունը հաստատվում է նաև ռազմական տերմինաբանու-

---

[11] **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка, III том,* Москва, 1986, էջ 507.

[12] **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка, I том* ,Москва, 1986, էջ 401.

[13] *Azərbaycan Respublikası Silahlı Qüvvələrinin Qarnizon və qarovul xidmətləri nizamnaməsi təsdiq edilsin və 1995-ci il yanvarın 1-dən qüvvəyə minsin.*

թյան քննությամբ և դրանում ռուսական շերտի վերհանումով:

Simonyan Gevorg – "About Russian Loanwords Used in Modern Azerbaijanian Military Glossary". The article represents the range of Russian loanwords used in modern Azerbaijanian military glossary. Azerbaijanian vocabulary was enriched with Russian loanwords in different historical periods. They may occur in various layers of Azerbaijanian lexicon, and military glossary is not the exclusion.

Presently, the modern Azerbaijanian military glossary, along with the words of Turkic origin, widely uses Russian, European, Arab and Iranian loanwords. Last times, there has been observed the tendency to substitute loanwords by the words of Turkic origin or by neologisms.

This article gives brief summary of the impact of Russian language on modern Azerbaijanian military glossary.

Симонян Геворг – О русских заимствованиях, используемых в современной азербайджанской военной терминологии. В статье представлен ряд российских заимствований, используемых в современной азербайджанской военной терминологии. Словарный запас азербайджанского языка был обогащен российскими заимствованиями в разные исторические периоды. Их можно встретить на разных слоях азербайджанской лексики, и военная терминология также не является исключением.

В настоящее время в современной азербайджанской военной терминологии наряду со словами тюркского происхождения широко используются русские, европейские, арабские и иранские заимствования. В последнее время наблюдается тенденция замещать заимствования словами тюркского происхождения или неологизмами.

В этой статье дается краткий обзор влияния русского языка на современную азербайджанскую военную терминологию.

Սուքիասյան Հենրիետա, Թոռունյան Նաիրա
(Հայաստան, Մ. Հերացու անվան ԵՊԲՀ)

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն դեռևս 1939 թվականից սկսել է հստակեցնել գիտական և գիտատեխնիկական եզրույթների կերտման, ուղղագրության և կետադրության կանոնարկման սկզբունքները: Տերմինաբանական կոմիտեն հետագա տարիների ընթացքում պարբերաբար ընդունել է նոր որոշումներ՝ ելնելով կանոնարկման արդիական մոտեցումների հրատապությունից:

Լեզուն զարգացող երևույթ է, փոփոխվող և նորացող: Տասնամյակների հոլովույթում բնական են ուղղագրության, արտասանության, կետադրության, տառադարձության կանոններում տեղի ունեցող փոփոխությունները: Կանոնարկումը լեզվի մաքրությունը և հասարակության համար միօրինակությունն ապահովող պարտադիր պայման է:

Ի սկզբանե տերմինաբանական կոմիտեի համար լեզվի կանոնարկման բազմաթիվ խնդիրներից մեկն էլ տառադարձությունն է: Տառադարձությունը եզրույթային գիտաբառապաշարի ամբողջության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Անհրաժեշտ են տառադարձության հստակ կանոններ և քաջատեղյակություն՝ դրանք կիրառելու համար:

Իսկ ի՞նչ է տառադարձությունը, և ե՞րբ է տառադարձության անհրաժեշտություն առաջանում:

Ըստ Էդուարդ Աղայանի՝ տառադարձությունը՝ 1.որևէ լեզվի կամ բարբառի հնչյունների գիտական՝ հնչյունական գրությամբ վերարտադրելը՝ գրելն է, 2.այդ տառերի կամ պայմանական նշանների համակարգը, 3. մի լեզվի այբուբենով գրածը մի այլ լեզվի այբուբենով գրելը[1]:

Այսպիսով, տառադարձված օտար բառը գրեթե նույն հնչողությամբ նույն բառն է՝ այլ լեզվի տառերով: Սակայն հայտնի է, որ լեզուները միմյանցից տարբերվում են հնչյունական համակարգով և ուղղագրական կանոններով: Հայտնի է նաև, որ մի լեզվից մի այլ լեզու կատարված տառադարձությունը առաջացնում է մի շարք բարդություններ՝ պայմանավորված երկու լեզուների այդ տարբերություններով: Այդ բարդությունները վերաբերում են տառադարձված եզրույթի թե՛ արտասանությանը, թե՛ գրությանը:

Գիտական եզրաբանության ասպարեզում տառադարձումը կիրառվում է, երբ օտար եզրույթը չի հաջողվում թարգմանել: Այսինքն՝ գլխավոր սկզբունքն այն է, որ օտար եզրույթը նախ պետք է փորձել թարգմանել և միայն դրա անհնարինության դեպքում փոխառություն կատարել, որն էլ ենթադրում է որոշակի սկզբունքներով տառադարձություն:

Անցյալ դարի 80-ական թվականներից հայ գրականության մեջ և մամուլում օտար բառերի և հատուկ անունների տառադարձություն կատարելիս ակնհայտորեն շեղումներ նկատվեցին 1939 թվականին տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված կանոններից: Անհրաժեշտություն առաջացավ հայերենում վերանայելու բաղաձայնների տառադարձման կանոնները, որոնք վավերացվեցին Ա. Ղարիբյանի, Գ. Ջահուկյանի և այլոց նախագծերի հիման վրա: Այսպես՝ ըստ Ա.Ղարիբյանի նախագծի (1957թ. մայիս)՝ որոշվեց «ռու-

[1] **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, էջ 1413:

սերեն **ъе**-ն տառադարձել հայերեն **իե.** օրինակ՝ Въетнам-Վիետնամ, премъер-պրեմիեր և այլն»[2]:

Ըստ Գ.Ջահուկյանի նախագծի, որը հաստատվել է 1983թ. սեպտեմբերի նիստում, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն հանձնարարեց ուղղորդվել որոշ բաղաձայնների, տառակապակցությունների, միջին արտասանություն ունեցող որոշ հնչյունների և որոշ ձայնավորների վերաբերյալ վերանայված ու հաստատված կանոններով[3]:

Բժշկագիտությունը անընդհատ զարգացող և հզորացող գիտաճյուղերից է: Բժշկագիտության բնագավառում նորանում են հիվանդությունների բուժման միջոցներն ու մեթոդները, տեխնոլոգիաները, գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ ստեղծվում են նոր գործիքներ ու սարքավորումներ, ուստի և օր օրի նորանում ու համալրվում են և բժշկագիտական եզրույթները: Ուստի հայոց լեզվի ներկա փուլում ևս արդիական խնդիր է բժշկագիտական եզրույթների տառադարձության կանոնների պահպանումն ու ամրագրումը:

Հայտնի է, որ բժշկագիտական եզրույթները հաճախ կազմված են հունա-լատինական եզրույթատարրերից՝ նախածանցներից, վերջածանցներից, արմատներից: Ըստ մասնագետների գնահատման՝ ժամանակակից բժշկության եզրույթաբանական բառապաշարը գերազանցում է 500 000-ը. ըստ պատմական տեղեկությունների՝ 10-րդ դարում գոյություն ուներ 1000, 1850 թվականին՝ շուրջ 6000, 1950 թվականին՝ ավելի քան 45 000 բժշկական եզրույթ:[4] Բժշկագիտական եզրույթները ներկայումս էլ պետք է տառադարձվեն ամրա-

---

[2] *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու,* Երևան, ԵՊՀ հրատ., 1988, էջ 258:

[3] Նույն տեղում, էջ 259-262:

գրված գործող կանոններով: Սակայն այդ կանոնների թերիմացությունը կամ չիմացությունը բժշկսգիտական մասնագիտական գրավոր խոսքում տեղիք է տալիս ուղղագրական սխալների, որ, իհարկե, անթույլատրելի է:

Մեր կարծիքով՝ ներկայումս ևս անհրաժեշտություն կա բժշկագիտության բնագավառում համակարգելու տառադարձման գործող կանոնները՝ դրանք հասանելի դարձնելով գիտական գործունեություն ծավալող բժիշկներին, բժշկական բուհերի ուսանողներին, թարգմանիչներին և առողջապահության բնագավառի այլ մասնագետների:

Իբրև ընդհանուր սկզբունք՝ նշենք, որ բժշկագիտական օտար եզրույթը տառադարձելիս պետք է առաջնորդվել հայերենի ուղղագրական կանոններով:

Հայտնի է, որ հայերենում ձայնավորների ուղղագրությունը դիրքային-ստուգաբանական է: ***Բառասկզբում*** եթե լսվում է ***է***, գրվում է ***է***:***Բառամիջում*** և ***բառավերջում*** գրվում է ***է***, եթե առանձին արմատի սկզբնատառ է: Նույն կանոնները կարող են կիրառվել նաև բժշկագիտական օտար եզրույթները տառադարձելիս[5]: Օրինակ՝

Բառասկզբում՝ **e**chinococcus /հուն./ - **է**խինոկոկ
eczema /հուն./ - **է**կզեմա
Բառամիջում՝ an**ae**sthesiologia /հուն./ - ան**է**սթեզիոլոգիա
an**e**ncephalia /հուն./ - ան**է**նցեֆալիա

Բժշկագիտական օտար եզրույթներում բառավերջում արմատական **է**-ով բառերի չենք հանդիպել:

Մնացած դեպքերում, եթե *է հնչյունը* բառամիջում արմատի սկզբնատառ չէ, տառադարձվում է՝ համաձայն հայերենի կանոնների, այսինքն՝ **ե**-ով, օրինակ՝

a**e**robia /հուն./ - ա**ե**րոբ

---

[5] Սակայն կա սկզբունք, որ օտար բաղադրյալ բառերը փոխառվում են որպես պարզ՝ արմատական բառեր և հայերենում չեն ստուգաբանվում:

a**e**rophobia /հուն./ - ա**է**րոֆոբիա
encephalopathia /հուն./ - էնց**է**ֆալոպաթիա

Բառասկզբում երբ լսվում է **o**, գրվում է **o:** Բառամիջում երբ լսվում է **o,** գրվում է **o,** եթե առանձին արմատի սկզբնատառ է: Հայերենում բառավերջում o-ի գրության դեպքեր չկան:

Բառասկզբում՝ odontitis /հուն./ - **o**դոնտիտ
oncologia /հուն./ - **o**նկոլոգիա
ontogenesis /հուն./ - **o**նտոգենեզ

Բառամիջում՝ parodontitis /հուն./ - պար**o**դոնտիտ
parotitis /հուն./ - պար**o**տիտ
anopia /հուն./ - ան**o**պիա
panophthalmitis /հուն./- պան**o**ֆթալմիտ
anophthalmia /հուն./- ան**o**ֆթալմիա
enophthalmus /հուն./- էն**o**ֆթալմ
hydrophthalmus /հուն./- հիդր**o**ֆթալմ

Մնացած դեպքերում, եթե *o հնչյունը* բառամիջում արմատի սկզբնատառ չէ, տառադարձվում է, համաձայն հայերենի կանոնների, **n**-ով, օրինակ՝ վերը նշված բառասկզբյան մի քանի օրինակներում առկա է նաև բառամիջի **n**-ի տառադարձման կանոնը՝ համաձայն հայերենի ուղղագրական օրինաչափության.

odontitis /հուն./ - **o**դ**n**նտիտ
oncologia /հուն./ - **o**նկ**n**լ**n**գիա
ontogenesis /հուն./ - **o**նտ**n**գենեզ

Ըստ տերմինաբանական կոմիտեի որոշման[6] (1985)՝ հունական ծագում ունեցող բառերի φ-ը/լատ. ph/հայերենում տառադարձվում է **ֆ**, օրինակ՝

agra**ph**ia /հուն./ - ագրա**ֆ**իա
ble**ph**aritis /հուն./ - բլե**ֆ**արիտ

[6] Նույն տեղում, էջ 262:

di**ph**theria /հուն./ - դի**ֆ**թերիա
ky**ph**osis /հուն./ - կի**ֆ**ոզ

Հունարեն θ տառը (լատ. th) հայերենում տառադարձվում է **թ**, օրինակ՝

a**th**erosclerosis /հուն./ - ա**թ**երոսկլերոզ
apa**th**ia /հուն./ - ապա**թ**իա
as**th**ma /հուն./ - ասթմա
diph**th**eria /հուն./ - դի**ֆթ**երիա

Հունարենի χ տառը (լատ. kh, ch) նոր ժամանակներում հայերենում ռուսերենի օրինակով մեծ մասամբ տառադարձվում է **խ**, օրինակ՝

e**ch**inococcus /հուն./ -է**խ**ինոկոկ
cheilitis /հուն./ - **խ**եյլիտ
cholesterinum /հուն./ - **խ**ոլեստերին
melan**ch**olia /հուն./ - մելան**խ**ոլիա

Մինչդեռ հունարենից եկած ինչպես հին, այնպես էլ նոր մի շարքփոխառություններում **ch** տառակապակցությունը հայերենում տառադարձվում է ոչ թե **խ**, այլ **ք**, օրինակ՝

bio**ch**emia /հուն./ - բիո**ք**իմիա
chromosoma(ta) /հուն./ - **ք**րոմոսոմ(ներ)
chronicus/հուն./ - **ք**րոնիկական

Օտար բառերի կրկնակ բաղաձայնները հայերենում տառադարձվում են մեկ տառով[7]՝ **pp-ռ**

co**rr**elation - ко**рр**еляция - կո**ռ**ել(յ)ացիա
abe**rr**ation - абе**рр**ация - աբե**ռ**ացիա

пп-պ

a**pp**endicitis - а**пп**ендицит - ա**պ**ենդիցիտ
gri**pp**us - гри**пп** - գրի**պ**

cc – u

absce**ss**us - абсце**сс** - աբսցե**u**
glo**ss**itis - гло**сс**ит - գլո**u**իտ

[7] Նույն տեղում, էջ 263:

фф – ֆ

a**ff**ectus - а**фф**ект - ա**ֆ**եկտ

e**ff**ectus - э**фф**ект - է**ֆ**եկտ

кк – կ

a**cc**ommodation – а**кк**омодация - ա**կ**ոմոդացիա

echinoco**cc**us - эхинок**кк** - էխինոկո**կ**

лл – լ

a**ll**ergia - а**лл**ергия - ա**լ**երգիա

co**ll**apsus - ко**лл**апс - կո**լ**ապս

мм – մ

gramma, grammum - грамм - գրամ

immunitas - иммунитет - իմունիտետ

Նմանապես տառադարձվում են նաև մյուս կրկնակ բաղաձայնները (**тт-տ**, **дд-դ**, **гг-գ**, **нн-ն** և այլն):

Հունարենից լատիներենի միջոցով փոխառված բառերում **rrh** տառակապակցությունը հայերենում տառադարձվում է **ռ**, օրինակ՝

haemo**rrh**oides - гемо**рр**ой - հեմո**ռ**ոյ

ci**rrh**osis - ци**рр**оз - ցի**ռ**ոզ

gastro**rrh**agia - гастро**рр**агия - գաստրո**ռ**ագիա

Օտար եզրույթներում **ա** վերջնահնչյունը հայերենում տառադարձվում է հետևյալ կերպ՝[8]

1. **ա**-ն պահպանվում է, երբ դրա սղումը առաջացնում է բառապատկերի աղավաղում, օրինակ՝

angin**a** - ангин**а** - անգին**ա**

hygien**a** – гигиен**а** – հիգիեն**ա**

2. **ա**-ն ավանդաբար պահպանվում է որոշ եզրույթներ տառադարձելիս՝

diaet**a** - диет**а** - դիետ**ա**

traum**a** – травм**а** - տրավմ**ա**

[8]Նույն տեղում, էջ 195-199:

3. **ա**-ն մնացած դեպքերում հայերենում չի պահպանվում (մանավանդ այն եզրույթներում, որոնցում **ա**-ն ավելացել է ռուսերենում), օրինակ՝

aneurysm**a** - аневризм**а** - անևրիզմ

membran**a** - мембран**а** - մեմբրան

Թեև պետք է նշել, որ ներկայումս հայերենում վերոհիշյալ տառադարձումը (3) նույն միօրինականությամբ չի պահպանվում, շատ եզրույթներում պահպանվում է **ա**-ն՝ շրջանցելով ամրագրված կանոնը՝

ампула - ամպուլ(ա)	уретра - ուրեթր(ա) θ
сперма - սպերմ(ա)	скарлатина - սկառլատին(ա)
спора -սպոր(ա)	формула - ֆորմուլ(ա)

Ռուսերենում -**ля, лю, лё** ունեցող հունա-լատինական ծագման բառերը թեև սովորաբար տառադարձվել են **լյա, լյու, լյո**-ով, սակայն ներկայումս մեծ մասամբ նախընտրելի է **լա, լու, լո**-ով տառադարձումը, օրինակ.

-**ля – լա**

артику**ля**ция – արտիկուլ(յ)ացիա

декапсу**ля**ция – դեկապսուլացիա

-**лю – լու**

це**лю**лит – ցելուլիտ

ок**лю**зия – օկլուզիա

-**лё -ո**

бруце**лё**з – բրուցելոզ

туберку**лё**з - տուբերկուլոզ

Հունարեն և լատիներեն եզրույթները տառադարձելիս պետք է իմանալ նաև հունա-լատինական բառակազմական միավորները՝ եզրույթատարրերը՝ նախածանցները և վերջածանցները, և ըստ հայերենի ուղղագրության կանոնների՝ դրանց տառադարձումը:

Հունա-լատինական նախածանցներից են[9]՝

a-, an – **ա-, ան-**

anophthalmia - **ան**օֆթալմիա

aphasia - **ա**ֆազիա

anti – **անտի-**

antibiotic - **անտի**բիոտիկ

antiseptika - **անտի**սեպտիկա

en-, endo – **էն-, էնդո-**

endolimpha - **էնդո**լիմֆա

enostosis -**էն**օստոզ

ex-, exo – **էկզ-, էքս-**

exophthalmus - **էկզ**օֆթալմ

exhumatio - **էքս**հումացիա

hyp-, hipo – **հիպ-, հիպո-**

hypesthesia - **հիպ**էսթեզիա

hypoglykaemia - **հիպո**գլիկեմիա

hyper – **հիպեր-**

hyperglycaemia - **հիպեր**գլիկեմիա

hyperaemia - **հիպեր**եմիա

inter – **ինտեր-**

interventio - **ինտեր**վենցիա

interposition - **ինտեր**պոզիցիա

pan – **պան-**

panarthrosis -**պան**արթրիտ

panhidrosis -**պան**հիդրոզ

pro – **պրո-** **pro**genia- **պրո**գենիա

prolapsus - **պրո**լապս

re – **ռե-**

rehabilitation - **ռե**աբիլիտացիա

revaccinatio - **ռե**վակցինացիա

---

[9] *Հայոց լեզու, ուսումնական ձեռնարկ,* Երևան, ԵՊԲՀ հրատ., 2009, էջ 223-226:

retro – **ռետրո-**

retrofixatio - **ռետրո**ֆիքսացիա

retroversion - **ռետրո**վերսիա

super – **սուպեր-**

superinfectio - **սուպեր**ինֆեկցիա

superfetatio - **սուպեր**ֆետացիա

sym-, syn – **սիմ-, սին-**

symbisis - **սիմ**բիոզ

synergismus - **սին**երգիզմ

trans- - **տրանս-**

transsudatio - **տրանս**ուդացիա

transsudatum - **տրանս**ուդատ

Հունա-լատինական վերջածանցները տառադարձելիս ևս գործում են հայերենի ուղղագրական կանոնները: Սակայն առկա է մի սկզբունք ևս. հունա-լատինական որոշ ածանցների վերջին տառակապակցությունները հայերեն տառադարձելիս ընկնում են, օրինակ՝ **-իտիս՝ -իտ, -ոզիս՝ -ոզ, -իզմուս՝ -իզմ** և այլն[10]:

-ismus – **իզմ**

gigant**ismus** - գիգանտ**իզմ**

dalton**ismus** - դալթոն**իզմ**

-itis – **իտիս**

aden**itis** - ադեն**իտ**

arteri**itis** - արտերի**իտ**

-oma – **ոմա**

aden**oma** - ադեն**ոմա**

my**oma** - մի**ոմա**

-osis – **ոզ**

arthr**osis** - արթր**ոզ**

dermat**osis** - դերմատ**ոզ**

[10] Նույն տեղում, էջ 226-232:

-pathia – **պաթիա**

cardio**pathia** - կարդիո**պաթիա**

dermato**pathia** – դերմատո**պաթիա**

Եզրույթատարրերը բառային իմաստակիր միավորներ են, սակայն չունեն ինքնուրույն գործածություն[11]: Դրանք հայերեն տառադարձելիս ևս ենթարկվում են հայերենի ուղղագրական կանոններին.

acro – **ակրո-** , բարդ բառերում նշանակում է *վերջույթ, արտաքին ծայրին առկա.*

acromegalia - **ակրո**մեգալիա

acroneurosis - **ակրո**նևրոզ

-algesia – **ալգեզիա**, բարդ բառերում նշանակում է *ցավազգայություն.*

an**algesia**- ան**ալգեզիա**

hyper**algesia**- հիպեր**ալգեզիա**

-algia – **ալգիա**, բարդ բառերում նշանակում է *առանց օրգանական պատճառականության ցավ.*

arthr**algia** - արթր**ալգիա**

gloss**algia** - գլոս**ալգիա**

auto – **ավտո-, աուտո-**, բարդ բառերում նշանակում է *ինքն, ինքնիրեն.*

autogenes - **ավտո**գեն

autoinfection - **աուտո**ինֆեկցիա

-ectasia – **էկտազիա**, բարդ բառերում նշանակում է *խոռոչավոր կամ խողովակավոր օրգանի, պատի կամ սահմանափակ հատվածաշերտի լայնացում, արտացցում.*

bronch**oectasia** – բրոնխ**էկտազիա**

phleb**ectasia** - ֆլեբ**էկտազիա**

-ectomia – **եկտոմիա**, բարդ բառերում նշանակում է *ամբողջ օրգանի կտրում, հեռացում.*

---

[11] Նույն տեղում, էջ 232-240:

nephr**ectomia**- նեֆրեկտոմիա
neur**ectomia**- նևրեկտոմիա

-genes – **գեն**, բարդ բառերում նշանակում է *ծնող, սերող, առաջացնող, գոյացնող, կազմող.*

spasmo**genes** - սպազմո**գեն**
odonto**genes** – օդոնտո**գեն**

Եզրույթաբանության՝ որպես գիտաճյուղի նպատակներից մեկը եզրույթների մշակումն ու միօրինականացումն է: Եզրույթները՝ որպես նեղ մասնագիտական բառեր, գործածվում են գիտության, տեխնիկայի, արվեստի բոլոր բնագավառներում, որոնց զարգացման և ընդլայնման դեպքում առաջանում են նոր եզրույթներ: Դա նշանակում է, որ հնարավորինս պետք է հասնել եզրույթների միօրինականացման՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով դրանց տառադարձման կանոնները, ապահովելով մասնագիտական գրավոր խոսքի անաղարտությունը:

Сукиасян Г. В., Торунян Н. А. - Транслитерация медицинских терминов на армянский язык. – Транслитерация в научном термианалогии в целом занимает определенное место, для которой необходимо четкие нормавированные правилы транслитерации и по необходимости для применения этих правил - осведомленность.

Транслитерация - это написание слов с одного языка с символами из алфавита другого.В идеале это индивидуальная замена по-символу. Сохранение и регулирование правил транслитерации для медицинских терминов является актуальной проблемой современного армянского языка. Транслитерированные термины подчиняются правилам орфографии транслитерированного языка. При транслитерировании иностранных (заимствованных) терминов необходимо руководствоваться орфографическими правилами армянского языка.Знание правил транскрипции необходимо для каждого специалиста в области здравоохранения.

Sukiasyan H.V., Torunyan N.A. - Transliteration of Foreign Medical Terms into Armenian.– Transliteration has its special place in the whole of the scientific terminology, and for transliteration a set of clear rules and profound knowledge on using these rules accurately are necessary. Transliteration is the spelling of words from one language with characters from the alphabet of another. Ideally, it is a one-for-one character-by-character replacement. The preservation and regulation of the transliterating rules for medical terms is a current issue in the modern Armenian language. Transliterated terms obey the spelling rules of the transliterated language. While transliterating foreign (borrowed) terms, it is necessary to be guided by orthographic rules of the Armenian language.

Knowledge on transliteration rules is necessary for every health care professional.

Վարդանյան Արտակ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

«ՆԱԽԻՋԵՎԱՆ» ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Նախիջևան տեղանվան հայերեն գրավոր հնագույն հիշատակություններն առկա են պատմահայր Մովսես Խորենացու[1] և Փավստոս Բուզանդի[2] երկերում, երկու պատմիչներն էլ հիշատակել են **Նախճաւան** ձևով:

Հայ իրականության մեջ **Նախիջևան** քաղաքի անունը կապվում է Աստվածաշնչում հիշատակված համաշխարհային ջրհեղեղի հետ[3] և համարվում է Հայաստանի հնագույն բնակավայրը, որը Ք.ա. 3669 թվականին հիմնադրել է Նոյ նահապետը[4]: Ըստ ավանդության՝ Նոյը, Աստծու կամքով փրկվելով ջրհեղեղից, Արարատ լեռան գագաթից իջել է փոքր Մասիսին մերձակա հարթավայրը և իջևանել մի վայրում, որը հետագայում կոչվել է **Նախիջևան** («առաջին՝ նախնական իջևան»): Այս ավանդությունը գոյություն է ունեցել ոչ միայն հայերիս, այլև մեր հարևան ժողովուրդների մեջ, օրինակ՝ ազգությամբ հրեահունահռոմեական պատմիչ **Հովսեպոս Փլավիոսը** (Հովսեփ Բեն Մաթաֆիա) դեռևս Ք. հ. 1-ին դարում իր «Հրեական հնախոսություն» երկում[5] հիշատակել է ոչ միայն ավանդությունը, այլև Նախիջևան տեղանվան հու-

---

[1] **Խորենացի Մ.,** *Պատմութիւն հայոց,* Ե., 1981, էջ 98:
[2] **Բուզանդ Փ.,** *Պատմութիւն հայոց,* Ե.,1987, էջ 267:
[3] Աստուածաշունչ - *Ծննդոց,* Զ.1-Ժ.32:
[4] **Չամչյան Մ.**, *Պատմութիւն հայոց*, Վենետիկ, 1784, էջ 52-60:
[5] **Josephus F.,** *Antiquitates Judaicae,* I.92.

նարեն ձևը՝ **Αποβατήριον** (**Ապովատերիոն**)[6] (բառացի՝ «իջևան»):

Օտար պատմագիրներն իրենց երկերում Նախիջևանը հիշատակել են հայերեն անվանումից ածանցյալ տարբերակներով՝ հույները նա **Ναξουάνα** (**Նաքսուանա**), արաբները՝ نشى (**Նեշևի**), ىىشى (**Նեշուի**), պարսիկները՝ نخو (**Նախուա**), اوشى (**Նաշուա**), نوجخى (**Նախջևան**), ناەجشقى (**Նաղշիջահան**): Բոլոր անվանումների հիմքում, անշուշտ, հայերեն **Նախճավան** կամ **Նախիջևան** ձևերն են: Թուրք-ադրբեջանցիներն էլ, հիմք ընդունելով պարսկական մի հայտնի կատակ-ասացվածք, հնագույն այս քաղաքի անվան իրենց տարբերակը՝ **Naxçıvan**-ը (**Նախչրվան**), պարզունակորեն «բխեցնում են» պարսկերենի **Նաղշիջահան** («աշխարհի զարդ») ձևից՝ չպատկերացնելով, որ նույն «տրամաբանությամբ» կարելի է **Սպահանն** էլ ստուգաբանել որպես «կեսն աշխարհի», **Թավրիզը**՝ «կեսից մի բան էլ ավելի», չպատկերացնելով նաև, որ պարսկական կատակ-բառախաղը թուրքերեն ստուգաբանության համար հիմք լինել չի կարող:

Ահա պարսկական այդ ասացվածքը.

اصفهان نصف جهان
نخجوان نقش جهان،
اگر تبریز نباشد.

[Էսֆանահան՝ նեսֆ-է ջահան,

Նախջևան՝ նաղշ-է ջահան,

Ա՛գար Թաբրիզ նա՛ բաշադ։]

Թարգմանաբար՝
Սպահանն է կեսն աշխարհի,
Նախճավանը՝ զարդն աշխարհի,
Թե չլիներ Թավրիզը շեն:

---

[6] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3,* էջ 951-953:

Որ Նախիջևանը մարդկային քաղաքակրթության հնագույն բնակավայրերից մեկն է եղել, վկայում են նոր քարի դարաշրջանից մինչև այսօր նրա մերձակայքում գործող աղի հանքը, քաղաքից ոչ հեռու գտնվող Մոխրաբլուր (Քյուլթափա) և Շորբլուր (Շորթափա) բազմաշերտ բնակատեղիները և այլ հնավայրեր: Դրանք վկայում են, որ հինավուրց այս քաղաքի տարածքում մարդը բնակվել և մշակույթ է ստեղծել վաղնջական ժամանակներից:

Նոյ նահապետի՝ ջրհեղեղից հետո Նախիջևանում իջևանելու և այնտեղ թաղված լինելու մասին են վկայում ինչպես հայ, այնպես էլ այլազգի պատմիչների ու մատենագիրների վավերագրերը[7]: Սակավ հետաքրքրական չեն նաև մեզ հասած ազգագրական-բանահյուսական նյութերը, ավանդությունները, մասնավորապես՝ նախիջևանյան ավանդազրույցները, որոնք հաստատում են աստվածաշնչյան հնավանդ պատմությունը: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Նոյի գերեզման-ուխտավայրը Նախիջևանի՝ իր հիմնադրած քաղաքի հին գերեզմանատանն է եղել՝ միջնաբերդի պարիսպների մոտ: Պահպանվել են 19-րդ դարի ռուսական փոստային բացիկներ[8], որոնցում պատկերված է գերեզմանի վրա կառուցված մատուռը: Այստեղ է թաղված եղել նաև Նոյեմզարը՝ Նոյի քույրը կամ դուստրը: Մատուռն ավերվել է 1930-ական թվականներին, հետագայում քարակույտերի վերածված գերեզմանի տարածքում Նախիջևանի այսօրվա «տերերը» իրենց պատկերացումներով և ճաշակով նոր դամբարան են կառուցել, որն արտաքնապես սելջուկյան շրջանի մահմեդական շինություն հիշեցնում:

Նոյի պատմության արժանահավատությունն է հավաստում նաև Նախիջևանի հնաբնակ գյուղերից մեկում՝ Ազնա-

---

[7] **Ալիշան Ղ.**, *Միսական,* Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 496-497:

[8] **Варданян А.,** *Зов Вишапасара. статьи, эссе, рассказы*, Е., 2010, էջ 65-68.

բերդում (պատմական Նախճավան գավառի տարածք) պահպանված մի ավանդազրույց, ըստ որի՝ գյուղի արևելյան բլուրներից դեպի հարևան Ղարաբաղլար գյուղը տանող ճանապարհի մոտ գտնվող հինավուրց, հորդառատ աղբյուրը կառուցել է Նոյի ավագ որդի Սեմը՝ ջուրը տեղ հասցնելով լեռներից, քարաշեն խողովակներով: Այս աղբյուրի ջրով էլ Նոյը ջրել է իր տնկած որթատունկերը և մշակել հետջրհեղեղյան առաջին խաղողի այգին: Ի դեպ, անհիշելի ժամանակներից այդ գյուղը կոչվել է **Ագարակ** (ինչպես հայտնի է, հայերենում **ագարակ** բառն առաջին հերթին ունի «մշակվող հող, կալվածք» նշանակությունը): Գյուղը հետագայում դարձել է ադրբեջանաբնակ և ոչ պատահաբար կրել **Ղարաբաղլար** անունը (բառացի՝ «սև այգիներ»): Ամենահետաքրքրականն այն է, որ Ազնաբերդի խոսվածքում պահպանվել է նաև աղբյուրի անվան բարբառային ձևը՝ **Ասմռ ախպուրը**, որն ամենայն հավանականությամբ գրաբարյան **Սեմայ աղբիւր**[9] ձևի հնչյունափոխված տարբերակն է: Ուշագրավ է, որ վերջին տարիներին պատմական Ագարակ գյուղի տարածքում գտնվող հնագույն բնակատեղիում պեղումներ են իրականացվում, և հայտնաբերվել են ընդարձակ դամբարանադաշտեր ու հնագույն քաղաքակրթության հետքեր:

Նոյնահապետի և ջրհեղեղյան պատմության լուռ վկան է նաև **Օձասարը** կամ **Վիշապասարը**՝ նախիջևանցիների կարոտի լեռ-խորհրդանիշը, որ գտնվում է Գողթն գավառի մատույցներում, և որի մասին բազմաթիվ ավանդազրույցներ են մեզ հասել: Զրույցներից մեկի համաձայն՝ Նոյ նահապետի տապանը գիշերով անցել է այս լեռան վրայով և, բախվելով նրա կատարի սուրսայր ժայռերին, վնասվել: Նահապետը սաստիկ զայրացել և անիծել է լեռը, որի կատարը անեծքից երկփեղկ է դարձել, և այնտեղ բազմաթիվ օձեր են բնա-

[9] **Ալիշան Ղ. ,** նշվ. աշխ., էջ 505:

կություն հաստատել: Այդ օրերից էլ լեռը կոչվել է Օձասար[10]: Ջրիեղեղի հետ են կապվում նաև տարածքի մի շարք այլ աշխարհագրական անուններ, որոնցից են **Տապանասարը** կամ **Նավասարը** (լեռ Գողթն գավառի հյուսիսում), **Մարանդը** (քաղաք և գավառ պատմական Վասպուրական աշխարհի հյուսիսում, Նախիջևան քաղաքից ոչ հեռու, որտեղ գտնվում է Նոյի կնոջ գերեզմանը՝ «Մար անդ» («այնտեղ է մայրը») սրբավայրը) և այլն:

Ուսումնասիրողները Նախիջևան տեղանվան ստուգաբանության տարբեր վարկածներ են առաջարկում: Ոմանք կապում են հայերեն **նախճիր** («որս, կոտորած») և **ավան** բառերի հետ[11], այսինքն՝ բառացի ստուգաբանվում է որպես «որսատեղի, որսավան», մանավանդ որ քաղաքը գտնվում է Արաքսի հովտում, և նրա մերձակայքը պատմականորեն հայտնի է եղել որպես նշանավոր որսատեղի: Շումերագետ Արմեն Դավթյանը տեղանվան առաջին արմատը համարում է գրաբարի **նախիճ** («որովայն, փոր») բառը[12], որը նույնպես հնարավոր տարբերակ կարող է համարվել՝ հաշվի առնելով տարածքի՝ Արաքս գետի գոգավոր հովտում տեղադրված լինելու հանգամանքը, ինչպես նաև պատմականորեն **փոր**, **փոս**, **ձոր** և նման արմատներով աշխարհագրական անունների առատությունը Հայկական լեռնաշխարհում (Փոր, Փորակ, Փորակուտ, Փորադաշտ, Ջորափոր, Փոս, Փոսա, Փոսիկ, Այգեձոր, Ջորագյուղ, Ջորագավառ և այլն): **Նախիջևան** բնականվան ստուգաբանությանը անդրադարձել է նաև Գևորգ Ջահուկյանը՝ կապելով հյուսիսկովկասյան նախյան ցեղերի նախնի **նախճ** ցեղանվան հետ («նախճերի ավան»)[13], որը հա-

---

[10] **Ղանալանյան Ա.**, *Ավանդապատում,* Ե., 1969, էջ 11-12:

[11] **Աճառեան Հ.,** *Հայերէն արմատական բառարան,* Ե., 1926, էջ 422:

[12] **Աճառեան Հ.,** նշվ.աշխ., էջ 422:

[13] **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 443:

մեմատելի է չեչենների **նոխճ** ինքնանվանման հետ: Վլադիմիր Մինորսկին նույնպես **Նախիջևանը** դիտում է որպես **Գուրջիվան** («վրացիների ավան, վայր»), **Քուրդիվան** («քրդերի ավան, վայր») և նման այլ տեղանունների համաբանությամբ անհայտ ցեղանուն և հայ-իրանական **ավան (վան)** արմատը կրող կազմություն[14]: Հայնրիխ Հյուբշմանն էլ հակված է եղել տեղանունը դիտել որպես հայերեն **ավան** բառից և հարցականով **Նախիճ** կամ **Նախուճ** հատուկ անունից կազմված բարդություն («Նախիճի կամ Նախուճի ավան»)[15]:

Հայագիտության մեջ գրեթե անվերապահորեն ընդունված է այս տեղանվան նախնական ձև համարել **Նախճավանը** (**Նախճաւան**), իսկ **Նախիջևանը՝** ժողովրդական ստուգաբանությամբ նրանից ածանցյալ տարբերակ: Սակայն, բնականաբար, հարց է առաջանում. եթե առկա են համաշխարհային ջրհեղեղը իրողություն համարելու որոշակի հիմքեր, ինչպես նաև Հովսեպոս Փլավիոսի հիշատակած **Ապովատերիոն-Իջևան** ձևը, մի՞թե հնարավոր չէ տեղանվան նախնական ձև համարել **Նախիջևանը**, իսկ **Նախճավանն** ընդունել որպես վերջինիս հնչյունափոխված ձև:

Պարզվում է, որ տարածքի տեղաբնիկ բարբառների ընձեռած նյութը հնարավորություն է տալիս չբացառելու նաև այս վարկածը: Այսպես, պատմական Նախճավան գավառի և մերձակա տարածքի մի շարք տեղաբնիկ բնակավայրերի խոսվածքներում (Աստապատ, Այլապատ, Կարմիր վանք, Ազնաբերդ, Օձոփ և այլն) առկա է բնականվան **Նախճրվան** ձևը, որտեղ, ըստ երևույթին, տեղի է ունեցել կից բաղաձայնների փոխազդեցական հնչյունափոխություն, և արդյունքում շփականից և հպականից կազմված զույգը բառամիջում վերածվել է խուլ շփականից և խուլ հպականից կազմված զույգի:

---

[14]**Минорский В.,** *Истоия Ширвана и Дербенда IX-XI веков,* М., 1963, էջ 33-34.

[15]**Հյուբշման Հ.,** *Հին հայոց տեղւոյ անունները,* Վիեննա, 1907, էջ 385:

Ազնաբերդի, ինչպես նաև կենտրոնական և հյուսիսային Նախիջևանի տարածքն ընդգրկող մյուս գյուղերի տեղաբնիկ խոսվածքներում առկա են հիշյալ հնչյունափոխության բազմաթիվ օրինակներ՝ աղջիկ>**ախճիկ**||**ախճիգ**, աղցան>**ախծան**, աղքատ>**ախկադ**, դաղձ>**տախծ(ը)**||**տանխծ(ը)**, աղբիւր>**ախպուր**, եղբայր> **ախպէր**, ազբն>**ասպը**, բողկ>**պօխկ(ը)**, շաղգամ>**շախկամ**, գաղթական>**կախտագան**, թուղբ>**թուխպ(ը)**, ազգ>**ասկ(ը)**, մաղձ>**մախծ(ը)**, ծաղկել>**ծախկիլ**, պժգալ>**փըշկըվիլ**, քաղցր>**քախծըր**, ժաժք>**ժաշկ(ը)**, յաղթել>**ախտիլ**, դժոխք>**տրժոխկը**, Ասքանազ>**Ասկանազ**, մեղք>**մէխկ(ը),** աստառ>**աստառ**, տախտակ>**տախտագ**, ապսպարել>**պրսպարիլ**, աստղ>**աստրդ,** տաշտ>**տաշտ**, պաշտել>**պաշտիլ** և այլն[16]: Համանման երևույթ է առկա նաև Ջուղայի բարբառում՝ շփականից և հպականից կազմված զույգը բառամիջում և բառավերջում վերածվում է խուլ շփականից և շնչեղ խուլ կամ խուլ հպականից կազմված զույգի՝ աղջիկ>**ախչիկ**, աղցան >**ախցան**, աղքատ>**ախկատ**, դժոխք>**դ՛ըժոխկ**, աղտ +կեղտ>**յեխտ**, շաղգամ>**շախկամ**, ճեղք>**ճեխկ**, ազգ>**ասկ**, մաղձ>**մախց**, ծաղկել>**ծախկել**, հաղթել>**խախտել**, քաղցր>**քոխցըր**, աստառ>**աստառ**, պղպջել>**պըրպճել,** աստղ>**աստրխ**, տախտակ>**տախտակ**, ճոճք>**ճոճկ**, տաշտ>**տաշտ** և այլն[17]: Անգամ Ագուլիսի բարբառում, որի հնչյունական համակարգը մոտ է գրաբարի հնչյունական համակարգին, և բառամիջի բաղաձայնները գրեթե անփոփոխ են մնացել (արջ>**օռջ**, բրդոտ >**բըռդօտ**, գդալ >**դըգանլ**, գոգ >**գանգ՚** , դաղձ >**դաղձ**, զարդարել >**զըռդանրիլ**, թրջել >**թըռջիլ**, աւձ >**աղձ** և այլն), նույնպես առկա են կից բաղաձայնների վերոհիշյալ հնչյունափոխության

[16] **Վարդանյան Ա.,** *Վայոց ձորի միջբարբառը,* Ե., 2004, էջ 29:

[17] **Աճառեան Հ.**, *Քննութիւն Նոր Ջուղայի բարբառի*, Ե., 1940 (ապակետիպ), էջ 103, 119:

երևույթներ՝ աղջիկ >**ախչիկ**, ճեղք >**ճէխկ**, աղցան >**ախցան**, աղքատ >**ախկաթ**, դժոխք >**դըժօխկ**, ծաղկել >**ծախկիլ** և այլն:

Ընդհանրացնելով հայկական հնագույն այս տեղանվան ստուգաբանության տարբերակները՝ կարծում ենք, որ չպետք է բացառել նաև ներկա վարկածը, քանզի ոչ շեշտակիր վանկում **ի** հնչյունի անկման հետևանքով **Նախիջևանը** կարող էր դառնալ **Նախջևան**, ապա կից բաղաձայնների փոխազդեցական հնչյունափոխությամբ՝ **Նախճևան**, այնուհետև՝ ձայնավորների ներդաշնակությամբ՝ **Նախճավան (Նախիջևան> Նախջևան> Նախճևան> Նախճավան)**: Այս վարկածի օգտին է խոսում նաև պարսկերենի نخجوان **(Նախջևան)** ձևը, որտեղ նույնպես պահպանվել է հայերենի **ջ** հնչյունը, այլապես **ճ**-ի դիմաց պարսկերենը կունենար **չ**, ինչպես տեղի է ունեցել, օրինակ, **ճահուկ (ճահկա, ճահկան) բերդ** – **Չալխան ղալե** դեպքում:

Vardanyan Artak - About the etymology of toponym "Nakhijevan". – In Armenian the ancient written form of the toponym **Nakhijevan** is **Նախճաւան** (Nakhtchavan), according to traditional etymology the variant **Նախիջևան** (Noah's "first place of descent") came into existence by the folk etymology. However, the resources of the local dialects make it possible not to reject the hypothesis to consider **Նախիջևան** to be the initial form, and **Նախճաւան** – its shifted form (e.g. աղջիկ>**ախճիգ**, աղցան >**ախծան,** etc.).

Варданян Артак - Вокруг этимологии топонима "Нахиджеван".– Древняя письменная форма армянского топонима **Нахиджеван**–**Նախճաւան** (Нахчаван), от которой, согласно традиционной этимологии, произошла форма **Նախիջևան** («первое пристанище» Ноя). Однако материалы местных диалектов не исключают гипотезу, что первоначальной является форма **Նախիջևան,** а **Նախճաւան** – ее видоизмененная форма (как աղջիկ>**ախճիգ**, աղցան>**ախծան** и т.д.).

Վելյան Կարեն
(Հայաստան, Վ.Բրյուսովի անվ. ԵՊԼՀ)

ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ինչպես հայտնի է, նախադասությունը՝ որպես լեզվի և հաղորդակցման միավոր սահմանելիս ավանդաբար նշում են ստորոգումը, հնչերանգային և իմաստային ավարտվածությունը, ինչպես նաև դադարը: «Եթե ստորոգումը հատկանիշը վերագրում է առարկային, ապա նախադասության հնչերանգը ձևավորում է մտքի ավարտվածությունը», - նշված է «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ[1]:

Խոսքը պատմողական նախադասության իջնող հնչերանգի մասին է: Պատմողական նախադասության բարձրացող հնչերանգի դեպքում, ինչպես նշում են նույն աշխատության հեղինակները, «նախադասությունն ավարտված չէ, այն մտքի ինքնուրույն միավոր չէ»[2]:

Ըստ Ս. Աբրահամյանի սահմանման՝ «նախադասությունը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված լեզվական հաղորդակցման հիմնական նվազագույն միավոր է»[3]:

---

[1] **Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.Գ.,** *Ժամանակակից հայոց լեզու, հ. 3. Շարահյուսություն*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 125:

[2] Նույն տեղում:

[3] **Աղայան Է.Բ.,** *Գրաբարի քերականություն,* հ.1, գիրք Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 420:

Նախադասության հնչերանգային ավարտվածությանը անդրադառնում է նաև Ս.Գյուլբուդաղյանը: Նշելով, որ յուրաքանչյուր նախադասություն ունի բովանդակային ավարտվածություն, Գյուլբուդաղյանը հավելում է, որ «…այդ ավարտվածությունն ու անկախությունը բանավոր խոսքում արտահայտվում են ավարտուն հնչերանգով, որին հաջորդում է դադարը, գրավոր խոսքում դա արտահայտվում է վերջակետով»[4]: «Եթե կապակցությունը չունի հնչերանգային ավարտվածություն, ուրեմն բովանդակությունը, հաղորդումն էլ թերի է, ավարտուն չէ, ուստի և նախադասություն չէ, թեկուզ և ունենա ենթակա ու ստորոգյալ», - շարունակում է Գյուլբուդաղյանը:

Վերը ասվածը վերաբերում է նաև բարդ նախադասություններ կազմող բաղադրիչ նախադասություններին, որոնք ինքնուրույնաբար չունեն հնչերանգային ավարտվածություն, «…ուստի և՝ մտքի ավարտվածություն, ամբողջականություն...»[5]: Սակայն կցանկանայինք նշել, որ ասվածը վերաբերում է բարդ ստորադասական նախադասությանը, որտեղ, բնականաբար, բաղադրիչ նախադասությունները առանձին վերցրած թերի բովանդակություն են հաղորդում:

Ավարտուն նախադասությունների ձևավորման մեջ կարևոր դեր է կատարում նաև *դադարը*՝ հնչերանգի միավորը: Դադարներին՝ որպես ավարտուն նախադասությունների հնչերանգի անբաժանելի հատկանիշների, մանրամասնորեն անդրադառնում է Ռ. Թոխմախյանը իր «Հայերենի հնչաշղթան» աշխատության մեջ: Մասնավորապես, խոսելով դադարների տեսակների մասին՝ *կարճ, միջին* և *երկար*, նա նշում է, որ երկար դադարները հանդիպում են «…ամբողջական ավարտուն նախադասությունների և ավելի հաճախ

[4] **Գյուլբուդաղյան Ս.Վ.,** *Ժամանակակից հայերենի շարահյուսություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 1988, էջ 61:
[5] Նույն տեղում, էջ 62:

պարբերությունների սահմանային ընդգրկումներում»[6]: Այնուհետև Ռ. Թոխմախյանը հավելում է, որ նման դասակարգումը «...առանձին դեպքերում կարող է ունենալ շեղումներ»[7]: Մասնավորապես, տրոհված անդամների միջև սովորաբար կարճ դադարները կարող են «գերազանցել դադարների նույն տեսակների միջին տևողության արժեքները»[8]: Ավելին՝ «...իմաստային բեռնվածության հետևանքով դադարը ընդգծելու համար խոսքում հնչման ընդհատումները բավականին մեծ տատանումներ են տալիս»[9]:

Դադարների տեսակների հարցին է անդրադառնում Է. Աղայանը իր «Գրաբարի քերականությունը» աշխատությունում: Նա առանձնացնում է դադարների չորս տեսակ. բառային դադար, նախադասության դադարները, բարդ նախադասության մեջ մտնող բաղադրիչ-նախադասությունների սահմանը ցույց տվող դադարը, համատեքստում ավարտված նախադասությունների միջև ընկած դադարը, որը նա անվանում է ավարտային դադար[10]:

Դադարների և դրանց հետ կապված նախադասությունների ավարտվածության և հետևաբար դրանց սահմանազատման առումով որոշակի կարևորություն ունի խոսքի տեմպը: Ինչպես նշում է Ռ.Թոխմախյանը, «...դանդաղ խոսքում սրանց (շարույթների և նախադասությունների) սահմանաբաժանը առավել հստակ է ու որոշակի, դադարները համե

---

[6] **Թոխմախյան Ռ.Մ.,** *Հայերենի հնչաշղթան,* Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009, էջ 48:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

[10] **Աղայան Է.Բ.,** նշվ. աշխ., էջ 285-289:

մատաբար մեծ տնողություն ունեն»[11]: Վերջին հանգամանքը կարևոր է հատկապես հանպատրաստից խոսքի համար, «երբ խոսքում դադարների բաշխումը հաճախ լինում է անսովոր»[12]:

Այս և մի շարք այլ հանգամանքներ օբյեկտիվորեն խնդիրներ են առաջացնում հայերեն *հանպատրաստից* բանավոր խոսքում նախադասությունները սահմանազատելիս: Ինչպես գիտենք, հանպատրաստից բանավոր խոսքին հատուկ է անկայուն շարահյուսություն, բազմաթիվ և բազմապիսի շարահյուսական «վթարներ», շարահյուսական հատույթներ, ինչպես նաև լեզվանցումներ, որոնց հետևանքով տեղի է ունենում նախադասության՝ որպես լեզվի միավորի և նախադասության՝ որպես բանավոր խոսքի միավորի հատկանիշների բախում: Բնականաբար հարց է առաջանում. ինչպե՞ս և ի՞նչ չափանիշներով են որոշվում հանպատրաստից բանավոր խոսքի նախադասությունների սահմանները: Չէ՞ որ բանավոր խոսքում, նույնիսկ վավերացված տեքստերի տեսքով, բացակայում են նախադասության ավարտը ցույց տվող տառագրական միավորները, ինչպիսիք են նախադասության առաջին բառի մեծատառը և վերջակետը: Խնդիրը առավել ևս բարդանում է այն դեպքում, երբ հանպատրաստից բանավոր խոսքը ոչ թե երկխոսություն է, որտեղ մի զրուցակցի նախադասության ավարտը որպես կանոն նախանշվում է մյուս զրուցակցի նախադասության սկզբով, այլ հիմնականում պատմողական բնույթի շարադրանք, որի դեպքում զրուցակցին տրված է հարց, որին նա պատասխանում է՝ մեկ լրջորեն, մեկ մտափոխվելով, որն, իր հերթին, ընդարձակում և այսպես ասած «ձգում» է պատասխան կազմող նախադասությունները: Այս դեպքում հաճախ օբյեկտիվորեն բարդություն

[11] **Թոխմախյան Ռ.Մ.,** նշվ. աշխ., էջ 49:
[12] Նույն տեղում:

է առաջանում նախադասությունների մեկը մյուսից սահմանազատման մեջ հետևյալ պատճառներով.

1. Ավարտուն՝ իջնող հնչերանգը հատուկ է գրավոր պատմողական նախադասություններին, սակայն *հանպատրաստից խոսքում* պատմողական նախադասությունները հաճախ ավարտվում են *բարձրացող հնչերանգով*: Ի դեպ, բարձրացող հնչերանգը, ըստ մեզ, կարելի համարել *անավարտ* միայն այն դեպքում, երբ պատմողական նախադասությունը պարունակում է «ենթակա + ստորոգյալ» ստորոգական միավոր, բայց միևնույն ժամանակ ավարտուն միտք, բովանդակային ավարտվածություն չի արտահայտում: Սակայն *ավարտուն* մտքի դեպքում, որը շատ հաճախ է հանդիպում առօրյա հայերենում, հատկապես իգական սեռի ներկայացուցիչների խոսքում, բարձրացող հնչերանգը թերևս չի կարելի համարել անավարտ:

2. Նախադասությանը սովորաբար հաջորդում է դադար, բայց *հանպատրաստից* բանավոր խոսքում հաճախ ոչ մի տեսակի դադար՝ կարճ, միջին, երկար, *չի հաջորդում*:

3. Ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Թոխմախյանը, «դադարները ավելի հեշտ է առանձնացնել դանդաղ տեմպի խոսքում»[13], սակայն հանպատրաստից խոսքում դադարների բաշխումը լինում է *անսովոր*: Մասնավորապես՝

ա. հաճախ միևնույն նախադասության անդամների միջև դադարը *ավելի տնողական է*, քան առանձին պարզ նախադասությունների,

բ. հաճախ բարդ նախադասություններ կազմող բաղադրիչ նախադասությունների միջև դադարները կարող են լինել ավելի *տնողական*, քան առանձին պարզ նախադասությունների: (Այս առումով նշենք, որ նախադասությունների սահմանազատումը բարդանում է հատկապես այն դեպքում,

[13] Նույն տեղում, էջ 48:

երբ հաջորդող նախադասությունը սկսվում է *համադասական* շաղկապով):

4. Հանպատրաստից խոսքում նախադասությունը կարող է ունենալ նախադասությանը հատուկ կառուցվածք, այն է՝ պարունակել ստորոգմանը անհրաժեշտ տարրեր, առնվազն ենթակայի և ստորոգյալի մակարդակով, սակայն միևնույն ժամանակ լինել անավարտ *մտքի, բովանդակության* տեսակետից:

5. Հաճախ նախադասությունն արտասանելիս միտքն անավարտ է մնում, դրան հաջորդում է դադար, որովհետև հաղորդակցվողը չի ավարտում միտքը, քանի որ այդ պահին մեկ այլ միտք է առաջանում և նախադասության մակերեսային մակարդակում տեղի է ունենում *շարահյուսական «վթար»* խոսողի՝ նոր մտքի երևան գալով, և, որպես հետևանք, նախորդ միտքը մնում է անավարտ:

Նշենք, որ հանպատրաստից խոսքում նախադասությունների սահմանազատման հարցը արծարծվել է նաև արևմտյան լեզվաբանական գրականությունում, քանզի նախադասությունների սահմանազատման բարդությունը առկա է նաև այլ լեզուների հանպատրաստից բանավոր խոսքում: Հիմնական հարցերից մեկը եղել է այն, թե արդյոք հանպատրաստից բանավոր խոսքի շարահյուսության վերլուծության միավորը պետք է լինի նախադասությունը և մասնավորապես *բարդ նախադասությունը*: Բանն այն է, որ հաճախ բանավոր խոսքի *ասույթները* զուրկ են *նախադասությանը* ՝որպես *լեզվի* միավորին հատուկ կառուցվածքից և ոչ այլ ինչ են, քան շարահյուսական առանձին հատվածներ, որոնք միմյանց հետ կապված չեն շարակարգային որևէ տիպի կապով, և ասույթների իմաստը հաճախ բնորոշվում է զուտ համատեքստային կամ արտալեզվական գործոններով: Մյուս կողմից՝ հաճախ ընդարձակ, երբեմն մի ամբողջ պարբերություն կարելի է դիտարկել որպես մեկ նախադասություն՝ տարբեր

տեսակի կապերով կապակցված մի քանի պարզ նախադասություններ: Թերևս սա է պատճառը, որ արևմտյան լեզվաբաններից շատերը (Միլեր, Ուայներթ, Քրիսթել, Հելիդեյ, Հելֆորդ և ուրիշներ) հրաժարվում են հանպատրաստից խոսքում որպես վերլուծության միավոր դիտարկել բարդ նախադասությունը՝ պատճառաբանելով նրանով, որ նախադասությունները, մասնավորապես բարդ նախադասությունները, հեշտ է առանձնացնել միայն գրավոր խոսքում և որ բանավոր խոսքի նախադասությունները անկայուն են իրենց կառուցվածքով[14]: Հանպատրաստից խոսքում բարդ նախադասությունից հրաժարվելու պատճառներից մեկն այն է, որ, ինչպես նշում է Դ. Քրիսթելը, «հեշտ չէ որոշել՝ արդյոք դադարները նախանշում են սահմաններ առանձին նախադասությունների միջև, թե այդ դադարները մեկ նախադասության շրջանակներում են, կամ նույնիսկ ամբողջ տեքստը որոշակի ընդարձակությամբ՝ դադարներով և շարահյուսական վթարումներով մեկ նախադասություն է»[15]:

Ինչպես արդեն նշել ենք, նախադասությունների սահմանազատման բարդությունը առկա է նաև հայերենի հանպատրաստից խոսքում (ի դեպ, հայերենում ավելի բարդ է, քան այլ հնդեվրոպական լեզուներում, օրինակ անգլերենում): Երևույթը ապացուցելու համար ներկայացնենք մի քանի օրինակներ մեր վերլուծության նյութերից: Նշենք, որ վերլուծության նյութերը՝ հարցազրույցների հանպատրաստից բանավոր պատասխանները, հիմնականում պատմողական բնույթի խոսքաշարեր են, որտեղ նախադասությունների սահմանները որոշելու հնարավորությունները իրոք սահմանափակ

---

[14] **Miller J., Weinert R.,** *Spontaneous Spoken Language. Syntax and Discourse*, Oxford University Press, 2009, էջ 31:

[15] **Crystal D.,** *The Cambridge Encyclopedia of Language*, Cambridge: Cambridge University Press, 1987, էջ 84:

են: Նշենք նաև, որ հաղորդակցական հավասարությունը ապահովելու նպատակով հարցազրույցների ընթացքում բոլոր լեզվակիրներին տրվել են միևնույն հարցերը, որոնք բացարձակապես չեն առնչվում լեզվաբանական խնդիրներին, մասնավորապես. «Արդյո՞ք տեսնում եք ձեր քաղաքում գենդերային ֆունկցիաների, դերերի փոխակերպում կամ փոփոխություն վերջին 15-20 տարիների ընթացքում, և ինչպես է այն դրսևորվում», «Ինչպե՞ս եք գտնում հասարակական կյանքը Երևանում, հասարակական՝ տարբեր իմաստներով՝ մշակութային, զվարճանքի, շփման»: Նշենք, որ հարցազրույցների մասնակիցների պատասխանները թողել ենք անփոփոխ:

Այժմ ներկայացնենք հայերենի հանպատրաստից բանավոր խոսքում նախադասությունների սահմանազատման մեր մոտեցումները և սկզբունքները: Հանպատրաստից խոսքում նախադասությունների սահմանները որոշելիս մենք առաջնորդվում ենք նախադասության բովանդակային, մտքի ավարտվածությամբ և հատկապես հնչերանգային ավարտվածությամբ: Նախադասությունների սահմանազատման բարդությունը մեծ է հատկապես *բարձրացող հնչերանգով* պատմողական նախադասություններում: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ նախադասությունները սահմանազատելիս կարևոր ենք համարում հետևյալ գործոնները.

1. Եթե կապակցությունը կառուցվածքով ավարտուն է, այսինքն՝ ունի «ենթակա+ստորոգյալ» կառուցվածք, թեպետ բովանդակությամբ անավարտ և, հետևաբար, թերի, հնչերանգն էլ բարձրանում է, և հաջորդում է այլ ավարտուն միտք առանց շաղկապի, ապա դրանք համարում ենք երկու պարզ նախադասություններ՝ մեկ ասույթի սահմաններում:

Օրինակ՝

Հիմնականում դրական փոփոխություն է..: Կոնկրետ Գավառ քաղաքում, ես մյուսների մասին չեմ կարող ասել, կոնկրետ Գավառ քաղաքում դրական փոփոխություն է:

Պարզ նախադասությունները անշաղկապ և շաղկապավոր բարդ համադասական նախադասություններից տարբերակելու համար մենք հիմնական ցուցիչներ ենք համարում *հինչերանգային տարբերակը* և *դադարը*, ինչպես նաև *իմաստային կապի սերտությունը* և վերջապես *համադասական շաղկապի* առկայությունը կամ բացակայությունը: Հետևյալ դրույթներում կարևորը հնչերանգային հարացույցն է. *բարձրացող, հավասար, իջնող:*

2. Եթե միտքը ավարտուն է, բայց հնչերանգը բարձրանում է, և հաջորդում է առանց շաղկապի այլ ավարտուն միտք, ապա դա անշաղկապ բարդ համադասական նախադասություն է: Օրինակ՝

1. Բայց ընդհանուր առմամբ ինքը իրեն չի ուզում նսեմացնել, նսեմացած չի համարվում կինը այժմ Գավառ քաղաքում:
2. Հասարակական կյանքը բավականին փոխվել է, ը.. մեծ աշխուժություն կա ը.. հասարակության մեջ .. կյանքի տարբեր ոլորտներում:

3. Եթե միտքը ավարտուն է, բայց հնչերանգը բարձրանում է, և հաջորդում է որոշակի դադար, այնուհետև՝ ավարտուն միտք առանց շաղկապի, ապա դրանք առանձին պարզ նախադասություններ են: Օրինակ՝

Կարծում եմ՝ վերջին տարիներին ավելի է բարձրացել կնոջ դերը թե՝ընտանիքում, թե՝հասարակության մեջ…: Դա, չգիտեմ, կենցաղից էր .. կապված կենցաղի հետ, թե ընտանիքի պայմաններից:

4.1.Համադասական շաղկապներով սկսվող պարզ նախադասությունները շաղկապավոր բարդ համադասական նախադասություններից տարբերակելու հիմնական միջոցը ընդունում ենք նախորդող նախադասության հնչերանգային *ավարտությունը* և *դադարը*: Եթե միտքը ավարտուն է, բայց հնչերանգը բարձրանում է, իսկ հաջորդող միտքը ավարտուն

միտք է, որը սկսվում է համադասական շաղկապով, ապա նախադասությունները կազմում են բարդ համադասական շաղկապավոր նախադասություն: Օրինակ՝

1. Քաղաքում տեսքը փոխվելա.., բայց ինչպես ուրիշ քաղաքների համեմատ մեր քաղաքում այդ աշխուժությունը չի նկատվում:

2. Էլի այն ժամանակ աշխատում էին բոլոր գործարանները, հասարակական կյանքը եռուն էր, իսկ հիմա շատ քիչ տեղերում են աշխատում, շատ քիչ գործարաններ և չկան գործարաններ .. Գավառ քաղաքում:

4.2. Եթե միտքը ավարտուն է, բայց հնչերանգը բարձրանում է, և հաջորդում է որոշակի դադար, իսկ հաջորդող միտքը ինքնուրույն է և սկսվում է համադասական շաղկապով, ապա դրանք առանձին պարզ նախադասություններ են: Օրինակ՝

Դա, չգիտեմ, կենցաղից էր .. կապված կենցաղի հետ, թե ընտանիքի պայմաններից...: Եվ վերջին տարիներին կանայք ավելի շատ են ընտանիքում դեր խաղում, ընտանիքի:

Հետևյալ մոտեցումներում կարևոր ենք համարում երկու հարակից ստորոգական միավորների միջև *հավասար հնչերանգը*:

5.1. Եթե միտքը ավարտուն է, և հնչերանգը հավասար է, իսկ հաջորդող *միտքը* սկսվում է առանց դադարի և առանց շաղկապի, ապա դա մեկ անշաղկապ բարդ նախադասություն է:

5.2. Եթե միտքը ավարտուն է, և հնչերանգը հավասար է, իսկ հաջորդող միտքը սկսվում է առանց դադարի և առանց շաղկապի, սակայն իմաստային կապը թույլ է նախորդ մտքի հետ, ապա դրանք առանձին պարզ նախադասություններ են: Օրինակ՝

Էն հասարակությունում, երբ կինը ակտիվ էր, էլի իրենց ակտիվացնում էին որոշ կուսակցություններ, կազմակերպություններ: Կարծես, իր միջից չէր:

5.3. Եթե միտքը ավարտուն է և ունի հավասար հնչերանգ, իսկ հաջորդ միտքը սկսվում է առանց դադարի, բայց շաղկապով, ապա դա մեկ բարդ շաղկապավոր նախադասություն է: Օրինակ՝ 1. Այն ժամանակ աշխատում էին բոլոր գործարանները, հասարակական կյանքը եռուն էր, իսկ հիմա շատ քիչ տեղերում են աշխատում:

2. Այն հասարակարգը՝ հավասարության նշան դնելով կընոջ և տղամարդու սոցիալական դերի միջև, ուղղակի նրանց ապահովում էր աշխատանքով, և էդ ժամանակ կարծես այդ տեսանկյունից տղամարդկանց և կանանց միջև այդպիսի խիստ .. ուրեմն բևեռացում, մեկ տարբերակում չէր լինում:

Հետևյալ դրույթներում առաջնային ենք համարում երկու հարակից ստորոգական միավորների միջև *իջնող հնչերանգը*:

6. Եթե միտքը ավարտուն է բովանդակությամբ, և հնչերանգը իջնում է, ապա խոսքաշարի տվյալ հատվածը առանձին պարզ հաստատական նախադասություն է: Օրինակ՝

Իմ կարծիքով, դա չի խարխլում այդ հիմքերը: Այդ հիմքերը շատ լավն են:

7. Եթե միտքը ավարտուն է, և հնչերանգը իջնում է, սակայն մյուս ավարտուն միտքը առանց դադարի, անմիջապես սկսվում է համադասական շաղկապով, ապա դրանք առանձին պարզ նախադասություններ են: Օրինակ՝

1. Ընդհանուր առմամբ, եթե մտածենք, ապա վերջին տարիների ընթացքում այդ ընտանիքներում կյանքը փոխվել է: Բայց որ ֆինանսական պայմանները քանի գնում, վատանում ա, էդ իմաստով, կարելի է ասել, գնում ենք հետ, ոչ թե առաջ:

2. Էս տրտնջոցը պարզապես սովորական մարդուն բնորոշ տրտնջոց է, որովհետև էդ տրտնջոցը գալիս է հոգսից, ցավից,

լարվածությունից: Իսկ եթե իսկապես վերջին հաշվով ասես՝ վերջին հաշվով դու ինչպիսին ես՝ գոհ ես, թե գոհ չես, իրենք գոհ են:

Նշենք, որ երկու գործոնների պարագայում՝ *իջնող հնչերանգի առկայության* և միևնույն ժամանակ որևէ *դադարի բացակայության* դեպքում, գերակշռող հատկանիշը, ըստ մեզ, *իջնող հնչերանգն է*:

Ստորադասական կապի պարագայում նախադասությունների սահմանազատումը հեշտանում է, քանզի շարահյուսական կապը վերջիններիս դեպքում ավելի սերտ է, քան բարդ համադասական նախադասություններում, հատկապես երբ ստորադաս նախադասությունը որոշիչ երկրորդական նախադասություն է: Պետք է, այնուամենայնիվ, նշել, որ լինում են դեպքեր, երբ ստորադասական շաղկապով սկսվող նախադասությունը հանդես է գալիս ինքնուրույն: Այս դեպքում հետադաս երկրորդական նախադասության ինքնուրույն գործածումը որոշվում է նախորդող՝ գլխավոր, նախադասության *հնչերանգային ավարտվածությամբ՝ իջնող հնչերանգով* և *համեմատաբար երկար դադարով*: Ուստի.

8. Եթե միտքը ավարտուն է, և հնչերանգը իջնում է, սակայն հաջորդում է նոր ավարտուն միտք՝ կապակցված ստորադասական շաղկապով, ապա այդ նոր միտքը հանդես է գալիս որպես առանձին շարահյուսական միավոր՝ տարանջատված (մանրաբաժանված) կառույց: Օրինակ՝

1. ... նա ձգտում է, որ ինչ-որ չափով աշխատանք ճարի նաև.. ընտանիքի սոցիալական վիճակը . ավելի բարելավելու համար: Քանի որ կարող է ամուսինը . չունի որևէ աշխատանք, բայց կինը ավելի . գիտակ է, ավելի, էսպես ասեմ, ճարպիկ է կամ հասու է, և նա ունի այդ ունակությունները և ձգտում է գումար աշխատել ընտանիքը պահելու և խնամելու համար:

2. Կնոջ տեսակ, որը հարմարվեց այս հասարակությանը, և նույնիսկ իրենք այս հասարակության ազատությունը .. գնահատեցին: Որովհետև նրանք էն հասարակությունում էլ նրանց աշխատանքը ունեին, բայց իրենք սիրեցին նախաձեռնել, չարչարվել, ստեղծել, նույնիսկ ֆիրմաներ, փոքր բիզնես և այլ ընտրեցին..:

Իրավիճակը էլ ավելի է բարդանում, երբ առնչվում ենք բարդ համադասական և ստորադասական այնպիսի նախադասությունների, որոնք պարունակում են մեկից ավելի բաղադրիչ նախադասություններ, երբ նույնիսկ հնչերանգային ավարտի դերը նվազում է: Այս դեպքում թերևս միակ որոշիչ գործոնը *դադարն է*, որի բացակայության դեպքում միայն իրար հաջորդող նախադասությունները հանդես են գալիս որպես մեկ բարդ նախադասություն կազմող բաղադրիչ նախադասություններ: Օրինակ՝

Դա, ինձ թվում է, հիմնական պատճառն այն է, որ վերջին այս տարիների ընթացքում, կարծես թե, սահմանները բացվեցին, և շփումը արտաքին աշխարհի՝ եվրոպական և տարբեր այլ երկրների հետ, ավելի մեծացավ, մարդիկ ավելի, էսպես, գրագետ դարձան՝ իմանալով ուրիշ երկրների ապրելակերպը, կյանքը, տրադիցիաները, սովորույթները և այլն, և այդ ժամանակ իրենք էլ փորձեցին մտնել այդ ոլորտ, որը մինչև այդ իրենք, կարծես թե, ելնելով հայկական տրադիցիոն սովորույթներից, կարծես թե, ամաչում էին, քաշվում էին կամ ընտանիքի ը.. տղամարդը թույլ չէր տալիս, որ ինքը այդպիսի աշխատանք կատարեր:

Այսպիսով, հայերեն հանպատրաստից բանավոր խոսքում նախադասությունների սահմանազատումը տարբերվում է վավերացված տեքստերում նախադասությունների սահմանազատումից: Մեր փաստական նյութը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ հանպատրաստից բանավոր խոսքաշարում նախադասությունները սահմանազատելիս ավան-

դական սկզբունքները և մոտեցումները որոշ դեպքերում կիրառելի չեն, ուստի և հարկ է հաշվի առնել մի շարք լեզվական միջոցներ՝ հնչերանգի և դադարների տարբերակայնությունը, շաղկապների առկայությունը, ինչպես նաև նախադասությունների միջև իմաստային կապի սերտությունը մի ամբողջության մեջ:

Velyan Karen – The problem of the demarcation of sentence boundaries in spontaneous spoken Armenian. The article discusses the problem of boundary lines between sentences in spontaneous spoken Armenian. Based on the real data – multiple interviews with native speakers of Armenian, the author of the article argues that sentences in spontaneous speech cannot be singled out in accord to the principles valid for written language and widely adopted in Armenian linguistics. The author puts forward a number of principles that would work for the delimination of sentences in spontaneous Armenian. Those principles take into account a wide range of suprasegmental, syntactic, and pragmatic factors that should be considered in one unity.

Велян Карен – Проблема определения границ между предложениями в спонтанной армянской речи. В настоящей статье обсуждается проблема определения границ между предложениями в спонтанной армянской речи. Принимая за основу данные своих полевых работ, а именно, многочисленные интервью с носителями армянского языка, автор статьи выдвигает положение, что границы предложений (высказываний) в спонтанной речи не могут определяться теми общеизвестными принципами, которые валидны для предложений в письменной речи. В статье предлагается ряд принципов, которыми можно руководствоваться при определении границ между предложениями в устной спонтанной речи. Данные принципы предусматривают целый комплекс супрасегментных, синтаксических, а также прагматических факторов, которые следует учитывать в одном единстве.

Քամալյան Արևիկ
(Հայաստան, ԵՊՀ)

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համացանցը դարձել է մարդկանց հաղորդակցման ամենատարածված միջոցը: Այստեղ ձևավորվում է նոր լեզու, որը տարբերվում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքից. այն լեզվի նոր որակ է՝ իր առանձնահատկություններով, որը լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Համացանցի լեզվի մասին բազմաթիվ ուսումնասիրություններ կան այլ լեզուներով. գրվել ու գրվում են հոդվածներ, ատենախոսություններ, մենագրություններ[1]:

Հիմնականում ուսումնասիրել ենք Facebook սոցիալական ցանցի (https:// web. facebook.com/) նյութերը, նաև որոշ ժամանցային ու լրատվական կայքերի մեկնաբանությունների բաժինն ու դրանց ֆեյսբուքյան էջերը (http:/blognews.am-/arm/, http:/ news. am/arm/, http:/www.azatutyun.am/p/3148.html ևն): Այլ սոցցանցերին (օրինակ՝ ВКонтакте-ին (https://vk.com/, Twitter-ի ն (https://twitter.com/), Одноклассники-ին (https://ok.

---

[1] Տե՛ս, օրինակ, **David**. *Language Development Via The Internet.*" ScienceDaily, 28 February 2005. **Crystal, D**. *Language and the Internet* (2nd Ed.). Cambridge: Cambridge University Press , 2006. **Trevor J. Blank**, *Folklore and the Internet: Vernacular Expression in a Digital World*. Utah State University Press, 2009 **Сидорова М**. *Интернет-лингвистика: Русский язык. Межличностное общение*. М. 2006. **Виноградова Т.Ю.** *Специфика общения в интернете / Русская и сопоставительная филология: Лингвокультурологический аспект.* - Казань, 2004, **Трофимова, Г. Н**. *Функционирование русского языка в Интернете: концептуально-сущностные доминанты*. Докторская диссертация, 2004 ևն:

ru/) չենք անդրադարձել երկու պատճառով. դրանք հիմնականում հայալեզու չեն կամ այնտեղ գերիշխում է այլատառ (լատինատառ կամ կիրիլիցայով) հայերենը, կամ էլ այդ կայքերում հայաստանցիներն առանձնապես ակտիվ չեն։ Ըստ 2016 թ. տվյալների՝ Հայաստանից «Ֆեյսբուքի» ակտիվ օգտատերերի թիվն ամսական կտրվածքով հասել է 1 մլն-ի, օրական լսարանը՝ մոտ 650 000-ի։ «Թվիթերի» հայաստանյան լսարանը մոտավորապես 15-20 000 է։ «Վկոնտակտե» սոցցանցում գրանցված է մոտ 1 մլն 146 000 հայաստանցի, սակայն նրանց ակտիվությունը քննարկումներում շատ ցածր է[2]։ 2017-ի տվյալները մի քիչ այլ են. «Օդնոկլասսնիկի»-ի այցելուների թիվը նվազել է, իսկ «Ֆեյսբուքի» հայաստանյան օգտատերերի թիվն ամսական կտրվածքով արդեն հասում է 1 մլն 100 000-ի, օրական հարթակ այցելում է մոտ 690 000 օգտատեր»[3]։

Մինչև վերջերս բավականին տարածված էր այն տեսակետը, թե գրավոր խոսքը ենթադրում է գրական, ստանդարտ, նորմավորված լեզու. թերևս որոշակի ազատություն ուներ գեղարվեստական գրականությունը։ Սակայն համացանցի տարածման հետ շատ բան է փոխվել։ Թեև համացանցում, մասնավորապես սոցցանցերում, հաղորդակցումը գրավոր է, այն շատ ավելի մոտ է բանավոր խոսքին. հիմնական լեզուն խոսակցականն է, ոչ թե գրականը։ Այս լեզուն անվանում են նաև գրավոր-խոսակցական (письменно-

---

[2] Տվյալները վերցրել ենք **Սամվել Մարտիրոսյանի** «Սոցիալական ցանցերը Հայաստանում (2016թ. աշնան տվյալներ)» հոդվածից (http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=15161)։

[3] Տվյալները վերցրել ենք **Սամվել Մարտիրոսյանի** *«Սոցիալական ցանցերը Հայաստանում. 2017-ի աշուն»* հոդվածից (https://media.am-/social-media-in-armenia-2017)։

разговорный)[4]: Սոցցանցերը ոչ ֆորմալ շփման վայր են, ինչպես ցանկացած այլ հասարակական վայր, և այստեղ չեն գործում գրական լեզվի խիստ կանոնները: Մարդկանց մեծ մասը նախընտրում է համացանցում շփվել խոսակցական լեզվով, ինչպես բանավոր խոսելիս:

Մենք առանձնապես չենք անդրադարձել ուղղագրական, կետադրական, քերականական, ոճական այն սխալներին, որոնք անմիջական կապ չունեն համացանցի հետ. մարդիկ այդ սխալներն անում են նաև համացանցից դուրս՝ ձեռագիր գրելիս, բանավոր խոսքում: Եթե մինչ համացանցային դարը ոչ գրագետ մարդիկ ուղղակի չէին հայտնվում եթերում, չէին գրում ու տպագրվում մամուլում, ապա այսօր նրանք ամենուր են՝ հեռուստատեսություն, էլեկտրոնային ու տպագիր մամուլ, համացանց: Թերևս այս է պատճառը, որ շատերին, հատկապես միջին ու ավագ սերնդին թվում է, թե մարդիկ անգրագետ են դարձել համացանցի «շնորհիվ». իրականում համացանցը պարզապես երևան հանեց այս խնդիրը:

Համացանցում հաղորդակցման լեզվի ընտրությունը կախված է մարդու կրթությունից, մասնագիտությունից, սոցիալական ու հասարակական դիրքից, տարիքից ու սեռից, նաև նյութից, թեմայից, խոսքի նպատակից, այն լսարանից, ում ուղղված է, վիրտուալ խոսակիցների փոխհարաբերություններից են: Եթե շփումն անձնական նամակագրության միջոցով է, իրար մոտիկից ճանաչողներն անհամեմատ ազատ են, և արագ գրելիս առանձնապես խիստ ուշադրու-

---

[4] Այս մասին տե՛ս **Кузнецов А.В.** *Письменная разговорная речь в онлайн-коммуникации. Молодой ученый.* 2011, №3. հ. 2, էջ 24-26: **Валиахметова Д.Р**. *Письменная разговорная речь в контексте особенностей Интернет-дискурса. Бодуэновские чтения: Бодуэн де Куртенэ и современная лингвистика*: Междунар. науч. конф.Труды и материалы. Казань, 2001, էջ 7-9 ևն:

թյուն չեն դարձնում ուղղագրությանն ու կետադրությանը, քերականական, տրամաբանական ևն սխալներին, հնարավոր են բազմաթիվ վրիպակներ: Զանազան թեմատիկ խմբերում, որտեղ սովորաբար հավաքվում են հիմնականում նույն կրթական մակարդակ, ընդհանուր հետաքրքրություններ ունեցող, հաճախ նաև նույն սերնդի մարդիկ, գործում են որոշակի ներքին կանոններ, գրված ու չգրված օրենքներ. կախված խմբի բնույթից՝ շփումը կարող է լինել թե՛ գրական հայերենով (որը կարող է ներառել խոսակցականի որոշ տարրեր), թե՛ խոսակցականով, թե՛ ժարգոնով ու անգամ բարբառով: Եթե գրածը նախատեսված է ոչ միայն ընկերների ու սահմանափակ թվով մարդկանց, այլև շատ ավելի մեծ լսարանի համար, մարդիկ, հատկապես հանրային դեմքերը (քաղաքական, հասարակական գործիչներ, գիտության բնագավառի ներկայացուցիչներ, լրագրողներ, արվեստի, մշակույթի մարդիկ ևն) սովորաբար ավելի ուշադիր են սեփական սխալների նկատմամբ, խոսքն ավելի մոտ է գրականին, գրելուց հետո հնարավորություն ունեն խմբագրելու, ուղղելու, փոփոխություններ անելու:

Բազմազանությամբ հանդերձ՝ այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ այսօր համացանցում շփման հիմնական լեզուն խոսակցականն է: Իհարկե, կան նաև բացառապես գրականով գրողներ, սակայն նրանց թիվն ընդհանուր ֆոնին մեծ չէ: Խոսակցականի ազդեցությունն ակնհայտ է համացանցային լեզվի բոլոր մակարդակների վրա՝ հնչյունական, բառապաշարային, քերականական:

Բանավոր խոսքին, խոսակցականին հատուկ **հնչյունափոխությունը,** հատկապես հնչյունների անկումը, ապաձայնեղացումը, խուլերի ձայնեղացումը, արտակարգ հնչյունափոխությունը ևն արտահայտվում է նաև գրավոր խոսքում: Ընդ որում՝ գրավոր խոսքում հայտնվում են ոչ միայն գրական ստանդարտ լեզվում քիչ թե շատ գոյության

իրավունք ստացած դեպքերը (օրինակ՝ էս, էդ, էն), այլև հնչյունափոխության այն դեպքերը, որոնք գրական լեզուն կոպիտ սխալ է համարում. *սենց/տենց/նենց, ստեղ/ստե, ըստեղ/ըստե, ընդեղ/ընդե, ապե, որտև, ջոգել, ընգեր, քցել, էթալ, ըլնել, դուս, վեկալել, պտի, էլ*-ի փոխարեն՝ *է* (*մեկ է տեսա*), վաղակատար դերբայի վերջին *լ*-ի անկում (*բան չի եղե, լավ եմ արե, դուս ա եկե*), համակատարի *ա*-ի անկում (*չի գալի, չի տալի*), հրամայականի *-իր* վերջավորության վերջին *ր*-ն գրեթե ոչ ոք չի գրում՝ *գրի, մի գրի* ևն։


- դե ցույց տվեք էդ դիվերսիայի ապացույցները:
- արա էս դիակի ֆոտոները խի՞ եք դրե, չեք ամաչում՞:


Դժվար թե էսի Խոյամը գրած ըլնի, որտեվ Խոյամը հզոր բժիշկ էր, հզոր մաթեմատիկոս ու հզոր աստղագետ-ֆիզիկոս: Համ էլ ասում են, որ ինքը շատ ժուժկալ մարդ էր, ու վախշե չէր խմում: Բայց մեկ ա, ով է՛լ գրած ըլնի, սիրուն ա գրե:

Է օժանդակ բայի փոխարեն գրեթե համատարած գործածվում է խոսակցական *ա*-ն, *չէ*-ի փոխարեն՝ *չի*-ն (*լավ չի, կարևոր չի)*: Ընդ որում՝ բավականին շատ են *ա* օժ. բայը նախորդ բառին կից գրողները, մի բան, որ գրեթե չի հանդիպում *է* օժ. բայի դեպքում՝ *գրումա՝ գրում ա*-ի փխրն., *մեկա՝մեկ ա*-ի փխրն.։

Գրավոր խոսքում հայտնվում են նաև բանավոր խոսքում տարածված *համաձայն-հմո, մանկապարտեզ-մնզո, հեծանիվ-հեծո*, նաև խոսակցականում փոխառված (ռուսերենից և անգլերենից) *ձյա* (дядя), *ծյա-* (тетя), *ֆեյս (Facebook-ից), կոմպ* (computer-ից), *օդնո* (*Одноклассники* կայքի անունից), *ինետ* (Internet-ից) ևն հնչյունափոխված ձևերը։ Սա մասամբ կապված է նաև համացանցային լեզվին

բնորոշ արագագրության հետ. կարճ ձևերը նախընտրելի են, քանի որ գրելիս ժամանակ են խնայում։

Որքան էլ համացանցում շփումը հիմնականում խոսակցական լեզվով է, գրավոր խոսքը որոշակի կանոններ է թելադրում. ուղղագրության կանոնները հիմնականում պահպանվում են (պայմանով, որ գրողը դրանք գիտի), և հնչյունափոխության ամեն դեպք չէ, որ հայտնվում է գրավոր խոսքում։ Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրավոր խոսքում հաճախ հայտնվում են բանավորին հատուկ հնչյունափոխության այն դեպքերը, որոնք կամ իմաստատարբերակիչ են, կամ այդ հնչյունափոխությունը սոցիալական այն կամ այն խավին, շերտին, տարիքային խմբին բնորոշ երևույթ է, ցուցիչ։ Օրինակ՝ բանավոր խոսքում, խոսակցականում իմաստային որոշակի տարբերություններ ունեն ընկեր և ընգեր, գցել և քցել, ջոկել և ջոգել ևն բառերը, և նույն մարդը տարբեր իրավիճակներում կարող է գործածել նույն բառի հնչյունափոխված տարբերակները (ջոկելը տարբերել, տարբերակելն է, իսկ ջոգելը՝ հասկանալը, գլխի ընկնելը)։ Իսկ, օրինակ, գորձ, երգիր, աբրանք, աբրել, դբրոց, աշք, մեշք ևն արտասանությունը հիմնականում բնորոշ է բարբառախոս կամ կրթական ավելի ցածր մակարդակ ունեցող մարդկանց, և հաճախ համացանցում գործածվում է հեգնական նպատակներով (նկատի ունենք բառի ճիշտ գրությունն իմացողներին)։ Դիտավորյալ արված «տառասխալը» կարող է գրվել մեծատառով, որ նշանակում է, թե գրողը գիտի բառի ուղղագրությունը.



Նույն կերպ հիմնականում կատակի, հեգնանքի նպատակով են գործածվում ռուսական արտասանություն

կեղծող ձևերը՝ իձեա, կրեաձիվ, ակձիվիստ, ձյունինգ, ինձիլիգենտ ևն։



Հետաքրքիր է նաև, որ համացանցային լեզվում ռուսերեն բառերը հայատառ գրելիս հաճախ ոչ թե գրադարձվում են, ինչպես ընդունված է գրական լեզվում, այլ տառադարձվում. պահպանվում է բառի արտասանությունը, որ բնորոշ է բանավոր խոսքին. *ձետկա (детка), կստաձի (кстати), պադումայեշ (подумаешь), յա ձիկը իզվինյայուս (я дико извиняюсь), ֆայո-տակի (все-таки)* ևն.



Բառերի դիտավորյալ աղավաղված գրությունը համացանցի լեզվի կարևոր առանձնահատկություններից է. այն հատուկ է ոչ միայն հայալեզու համացանցին[5]։

Հաճախ են աղավաղված գրվում քաղաքական, հասարակական գործիչների, հայտնի մարդկանց անունները. այս միջոցով հիմնականում արտահայտվում է արհամարհանք,

[5] Օրինակ՝ Ռունետում բառերի դիտավորյալ աղավաղված գրության մասին տե՛ս **Жаргон падонков** հոդվածը (https://goo.gl/DDX1Sq, նաև https:/lurkmore.to/ կայքում՝ **Язык падонков** հոդվածը (https://goo.gl/VFSBn8) ևն։

հեգնանք, ծաղր. *Աշոծյան, Պուծին, Ծայրիկյան/Մայրիկյան, Վախտին Մարդազարյան, Աղետ Բարսեղյան, Ահավոր Աղիբեկյան* են։ Կարող են աղավաղված գրվել նաև հասարակ անուններ՝ *բոզտիկան (ոստիկան), իքսպերդ (expert, эксперт), անվոռուկ (անմոռուկ), վթարանդի (վտարանդի)* են։

Այս բառերի մի մասը դուրս է գալիս համացանցի սահմաններից, հայտնվում նաև բանավոր խոսքում՝ համալրելով խոսակցական լեզվի բառապաշարը։

Համացանցում հաղորդակցումը շատ արագ է տեղի ունենում, և ժամանակ խնայելու, արագ գրելու նպատակով շատ են գործածվում զանազան **հապավումներ**, հաճախ հենց անգլերեն (քանի որ դա ավելի կարճ է). օրինակ՝ *OMG* (Oh my god!՝ աստվա՛ծ իմ), *LOL* (laugh(ing) out loud կամ lots of laughs՝ բարձրաձայն ծիծաղ), *R.I.P.* (requiescat in pace (լ ատ. -ի ց)/rest in peace (անգլ .). համապատասխանում է հայերենի «Աստված հոգին լուսավորի» արտահայտությանը), *IMHO* (In my humble opinion՝ իմ համեստ կարծիքով), *WTF* (what the fuck (գռեհկաբանություն է), *WOW!* (արտահայտում է հիացմունք, զարմանք են), *sms* (Short Message Service՝ կարճ հաղորդագրություն), *pm* (personal/private message՝ անձնական նամակ /հաղորդագրություն) են։ Երբեմն հապավումները գրվում են հայատառ, ավելի հաճախ փոքրատառերով՝ *իմհо, լոլ/լոլ, ֆբ, սմս, պմ* են։ Հայերեն գրված տեքստում ռուսերեն հապավումներն անհամեմատ քիչ են հանդիպում՝ սովորաբար ռուսախոսների մեջ՝ *ХЗ* (х*ен его знает), *ЕМНИП* (если мне не изменяет память՝ եթե հիշողությունս ինձ չի դավաճանում), *ЗЫ* (տառերի տեղը համապատասխանում է լատինական ստեղնաշարի P.S.-ին) են։

Մեծ թիվ են կազմում հենց համացանցային լեզվում ստեղծված կամ փոխառված **նորաբանությունները, դիպվածային բառերն ու դարձվածքները։** Անշուշտ, նոր բառերի մի մասը տարածվում է նաև համացանցից դուրս, հայտնվում

տպագիր մամուլում, մտնում բանավոր խոսք: Սակայն բազմաթիվ նորաբանություններ գործածվում են միայն համացանցային հարթակներում:

Բազմաթիվ դիպվածային բառեր են ամեն օր ստեղծվում ու անհետանում՝ ընդամենը մեկ-երկու անգամ գործածվելուց հետո. այս բառերը գտնելն անհամեմատ դժվար է համացանցային սարդոստայնի մեջ: Այդ տեսանկյունից ուշագրավ է Լեզվի ինստիտուտի աշխատակիցների կազմած բառարանը, որի երկու պրակներն արդեն լույս են տեսել. այնտեղ ընդգրկված են վերջին տարիներին գեղարվեստական գրականության մեջ, մամուլում կիրառված և մինչ այդ բառարաններում չգրանցված բազմաթիվ նորաբանություններ ու դիպվածային բառեր[6]: Սակայն որքան որ հասցրինք ծանոթանալ, այդ բառարաններում գրեթե չկան սոցցանցերում ստեղծված բառեր: Համացանցային դիպվածային բառերի մի փոքրիկ բառարան կա «Գրանիշ» կայքում[7]:

Նոր բառերի մեծ մասը կազմվում է հայերենի բառակազմական գործուն կաղապարներով և համաբանությամբ: Մեր դիտարկումներով՝ համացանցային լեզվում ամենագործուն կաղապարներից մեկը գոյ.+հայ/-ուհի կաղապարն է՝ *ֆեյսբուքահայ/-ուհի, ողբահայ/-ուհի, մուննաթահայ/-ուհի, պաթոսահայ/-ուհի, տրանսլիտահայ/-ուհի, քյառթահայ/-ուհի, թվիտերահայ/-ուհի, բուծիկահայուհի* ևն:

Սրանցից կազմվում են նաև *-ություն* ածանցով բառեր՝ *ֆեյսբուքահայություն, տրանսլիտահայություն,* -երեն ածանցով բառեր՝ *պաթոսահայերեն, տրասնլիտահայերեն, քյառթերեն/քյառթահայերեն* ևն:

---

[6] Տե՛ս **Նոր բառեր**: Պրակ Ա, Բ: Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2016:

[7] http://bar.granish.org

Համաբանությամբ և հայերենի գործուն կաղապարներով կազմված բառերից են.

լայքմեջ անել (*ք*քմեջ անել*-ի համաբանությամբ), *արտագաղջ* (*արտագաղթ*-ի համաբանությամբ), *գաղջամուղջ* (*աղջամուղջ*-ի համաբանությամբ), *լայքակից* (հմմտ. *Աշխատակից, բախտակից*), *վայրենակից* (*հայրենակից*-ի համաբանությամբ), *պայքարիստ* (*ակտիվիստ*-ի համաբանությամբ), *ահավորիզմ* (*աֆորիզմ*-ի համաբանությամբ), *ֆեյսբուքաբնակ*, *ցանցաբնակ* (հմմտ. *երևանաբնակ, տեղաբնակ*), *մեմառատ* (հմմտ. *բերքառատ, ջրառատ*), *մեմաստեղծ* (հմմտ. *բանաստեղծ*), *-չի* ածանցով արհամարհական բառեր՝ *քոմենթչի, ֆեյսբուքչի, ստատուսչի* են: Քիչ չեն նաև փոխառյալ արմատ+բայական *ել/ալ* վերջավորությամբ բառերը՝ *լայքլայքել, շեյր-շեյրել, ֆրենդ-ֆրենդվել, չատ-չատվել, գուգլ-գուգլել, քոմենթ-քոմենթել* են: Ինչպես հաճախ է հանդիպում բանավոր խոսակցականում, փոխառած բառերը «հայացնում ենք»՝ դրանց ավելացնելով *անել/լինել* բայերը՝ *ան-ֆրենդ/ռազդռենդ անել, (ան)ֆոլլոու անել, բլոկ անել, շեյր անել, դիսլայք անել են:*

Հետաքրքիր է հատկապես բաղարկությամբ՝ կոնտամինացիայով կազմված բառերի առատությունը: Թեև բաղարկությունը խիստ պասիվ բառակազմական միջոց է հայերենում, սակայն համացանցային լեզվում այս եղանակով բավականին բառեր են կազմվում.

ռուսուլման (ռուս+մուսուլման)
հանրապետականք (հանրապետական+տականք)
ծրագրամիստ – (ծրագրավորող+программист)
շպարազինություն (շպար+սպառազինություն)
Լիսկաբոն (Լիսկա+Լիսաբոն)
տարոնայք (Տարոն + պարոնայք)
սելֆիդայի (սելֆի+ֆիդայի)
խզմայլվել (Խզմալյան + զմայլվել)
թույնզգույն (թույն+գույնզգույն)

մտաճաղանջ (միտք+խառնիճաղանջ)
ստեղնամարտիկ (ստեղնաշար+(մենա)մարտիկ)
մատուցանտ (մատուցող + օփիցիանտ)

Բաղարկությամբ կազմված բառերի մի մասը փոխառություն է.

Պուտլեր – Պուտին+Հիտլեր *գեյրոպա – գեյ+Եվրոպա(որից՝ գեյրոպացի)*	*լիբեռաստ – լիբերալ+պեդեռաստ* *դեգեներալ – դեգեներատ+գենեռալ*

Կան նաև իմաստային նորաբանություններ, որոնց մի մասը դարձել է գործածական նաև համացանցից դուրս, մի մասը նոր իմաստով գործածվում է միայն համացանցային հարթակներում: Օրինակ՝ *հոռի* (մեղմասություն է, գործածվում է n*ի բառի փոխարեն), *ջրցան (գռեհիկ իմաստ ստացավ էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ցույցերի օրերին), արտագաղթ («Օդնոկլասսնիկից Ֆեյսբուք արտագաղթածներ»)* ևն: Իսկ *գաղջ* ածականը գործածվում է նաև իբրև գոյական, բազմաթիվ իմաստներ է ձեռք բերել՝ կախված համատեքստից.



Նոր՝ հիմնականում հեգնական-ծաղրական իմաստով են գործածվում մի շարք բառեր, բառակապակցություններ՝ *հայեցի, ոսկեղենիկ հայերեն, օջախ, օջախի աղջիկ, բրիտանացի գիտնականները* ևն: Հիմնական պատճառը այս բառերի

անհարկի գործածումն է, չարաշահումը: Օրինակ՝ գիտության, բժշկության բնագավառի գրեթե ցանկացած անհեթեթ լուր, տեղեկություն զանազան լրատվամիջոցներ հաճախ են ներկայացնում իբրև «բրիտանացի գիտնականների հայտնագործություն»: Եվ *բրիտանացի գիտնական* արտահայտությունը ստացել հեգնական իմաստ տարբեր լեզուներում, այդ թվում և հայերենում.


11 октября 2013 г. · Ереван ·

օրվա լուր՝ Հայ գիտնականները լաբորատոր պայմաններում ստեղծել են բրիտանացի գիտնական

Թերևս ամենաշատը հեգնական իմաստ է ձեռք բերել *հայեցի* բառը: Պատճառն այն է, որ ամեն պատեհ ու անպատեհ առիթով այս չարչրկված բառը գործածում են, իսկ դա որևէ բառ արժեզրկելու ամենակարճ ճանապարհն է:


Ու հայրենիքի հանդեպ պարտքս կատարած՝ հայեցի քայլքով գնում եմ քնելու, որ առավոտյան արթնանամ ու շարունակեմ սիրել իմ կապուտաչյա հայրենիքը:
Բարի գիշեր:

Նորակազմությունների, դիպվածային կազմությունների մի մեծ խումբ, ինչպես արդեն երևաց նախորդ օրինակներից, կապված է կոնկրետ իրադարձությունների հետ: Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ցույցերի ժամանակ (2015 թ.) ստեղծվեցին նոր բառեր, դարձվածքներ, արդեն եղած բառերը նոր իմաստ ստացան (իմաստային նորաբանություններ), որոնք մի քանի ամիս գործածվելուց հետո գրեթե դուրս եկան գործածությունից՝ *բիբինին դնել/չդնել* («Հայաստանի էլցանցեր» ՓԲԸ-ի այն ժամանակվա տնօրեն Եվգենի

Բիբինի անունից), *բիբինն ուտել, բիբին լինել/ըլնել, բիբինդ լույս, ջրցանին դնել/չդնել* են:

Նույն իրադարձությունների ընթացքում ստեղծվեց նաև *աշոտ(ծ)յան անել/ լինել* դարձվածքը, *աշոտյանվել նորակազմությունը*՝ այն ժամանակվա ԿԳ նախարարի անունից: *Աշոտյան լինել/անել դարձվածքը*, որ նաև որոշ իմաստով մեղմասություն է՝ փոխարինում է ավելի գռեհիկ տարբերակին, բավականին երկար ժամանակ է՝ շարունակում է գործածվել, ի տարբերություն վերը բերված օրինակների: Այն հանդիպում է ոչ միայն քաղաքական կոնտեքստում.



Ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին, որի խորհրդանիշն անմոռուկ ծաղիկն էր, ստեղծվեցին *անվոռուկ, չվոռուկ, անմոռուկացավ, անվոռուկազգի են դիպվածային բառերը*: 2016թ. ապրիլյան դժվարին օրերին ստեղծվեց արդեն հիշատակված *սելֆիդայի* բառը: *Եհովայի վկաներ* բառակապակցության համաբանությամբ կազմվել են *Լևոնի վկաներ* (Լևոն Տեր-Պետրոսյանի անունից), իսկ 2016 թ. ամռանը՝ ՊՊԾ գնդի գրավման օրերին՝ նաև *Պավլիկի վկաներ* (Պավլիկ Մանուկյանի անունից) բառակապակցությունները:

«Միանգամյա օգտագործման» բառերն անհամեմատ շատ են. մեկ-երկու անգամ գործածվելուց հետո դրանք արագ մոռացվում են, և բավականին դժվար է գտնելը, եթե անընդհատ չես հետևում լրահոսին ու գրանցում: Նշենք, որ երբեմն այս բառերը հնարավոր է լինում փնտրել զանազան հեշթեգերի, բառերի միջոցով (օրինակ՝ *#նորհայերեն, #լիկբեզ, այլերեն* են): Իհարկե, չի բացառվում, որ ստորև

բերված բառերից մի քանիսը կարող են երկար գործածվելու շնորհիվ մտնել բառապաշարի մեջ։ Դիպվածային շատ բառեր սովորաբար ստեղծվում են՝ արձագանքելով այս կամ այն դեպքին, իրադարձությանը, երևույթին, այդ բառերի մեծ մասը կատակային է։ Բերենք ընդամենը մի քանի օրինակ.

ընտրաշաշ, ընտրավկա, ընտրագոմբի, թեկնածուռ, սառցախողխող, սատկուփշուր, ձնարբուք, բդապատում, ճիղասպինձ, եզաճկուն, գաղջընտիր, երիտգաղջ, ծռուլ, շշմելուկ են։

Համացանցային լեզվում հսկայական թիվ են կազմում նորագույն **փոխառությունները**։ Խոսքը ոչ թե վերջին տարիներին առհասարակ փոխառած բառերի մասին է, այլ հենց համացանցային փոխառությունների։ Շատ են անգլերեն կամ ռուսերեն համացանցային լեզվից փոխառած **սլենգային, ժարգոնային** բառերը։ Այս բառերի մեծ մասը թերևս հասկանալի չէ համացանցից դուրս «ապրող» մարդկանց.


28 сентября 2014 г.

Ժողովուրդ, պարզվում ա, որ ես էս խմբում «օֆտոպ, ֆլուդ ու տրոլինգ» եմ անում։ Անկեղծ, ես ինքս չգիդեի, որ ըսենց տարօրինակ ու արտառոց բաներ եմ անում։ Ընձի ո՞վ կբացատրի, թե սրանք ի՛նչ են, որ գոնե իմանամ, թե ինչ եմ անում։

Բերենք որոշ օրինակներ.

Տրոլլ(թրոլլ), տ/թրոլլինգ	trolling
ֆոլլոու/անֆոլլոու	follow/unfollow
լայք/դիսլայք	like-dislike
շեյր (որից՝ շեյրել)	share
քոմենթ (որից՝ քոմենթել)	comment
ֆեյք	fake
քոփի/փեսթ	copy/paste

լուզեր (սլենգ)	loser
մեմ	meme
քլիք	click
չատ/չաթ	chat
գլլուկ (սլենգ)	глюк, глючить
պիպլ (սլենգ)	people-ից, հիմնականում գործածում են «հնաբնակները»)
իգնոռ (անել)	ignore
սպամ/սպամեր	spam/spammer
խոմյաչոկ	хомячок
ֆլուդ	flood
սփոյլեր	spoiler
բլոկ (որից՝ բլոկել/բլոկ անել)	block
կամրադ (գործածում են հիմն. «հնաբնակները»)	comrade
ֆռենդ/անֆռենդ	friend/unfriend
ֆռենդլիստ	friend list
սռաչ (սլենգ)	срач
բան	ban

Ցանցում ստեղծված կամ փոխառած ժարգոնային բառերը, բառերի նոր իմաստները գրանցվում են ամենահեղինակավոր բառարաններում, ստեղծվում են առցանց, արագ համալրվող բառարաններ,[8] գրվում են ուսումնասիրու-

[8] Օրինակ՝ **Oxford English dictionary** (https://en.oxforddictionaries.com), **Cambridge Dictionary** (http://dictionary.cambridge.org), **Иллюстр-**

թյուններ։ Այնինչ հայերեն նմանօրինակ բառարաններ կամ ուսումնասիրություններ գրեթե չունենք։ Իհարկե, սա մասամբ նաև ֆինանսական խնդիր է, սակայն ակնհայտ է, որ նման առցանց բառարաններ չունենալը բացասաբար է ազդում հայերենի ուսումնասիրության վրա, խնդիրներ են ծագում նաև թարգմանիչների, հայերեն սովորող օտարերկրացիների համար։

Խոսակցական լեզվի բառապաշարի մեջ առանձին շերտ են կազմում **հասարակաբանությունները, գռեհկաբանություններն ու հայհոյական բառերը**։ Սակայն դրանք ժամանակակից հայերենում գրեթե ուսումնասիրված չեն. խորհրդային ու հետխորհրդային հայ լեզվաբանությունը այս բառաշերտին մի տեսակ քամահրանքով թե ամոթխածությամբ է վերաբերվում և համարում ուսումնասիրության ոչ արժանի թեմա։ Ստ. Մալխասյանցի բառարանից հետո (1944 թ.) տպագրված բառարաններից, անգամ հետխորհրդային շրջանի, դուրս են մնացել բազմաթիվ գռեհիկ, հայհոյական բառեր։ Այնինչ այլ երկրներում սրանք ուսումնասիրվում են գիտական մակարդակով, գրվում են ատենախոսություններ, մենագրություններ, գիտական հոդվածներ[9]։

Մեր հասարակության մեջ, հատկապես Երևանում, մեծ քաղաքներում, ընդունված չէ հայհոյել կանանց, աղջիկ-

---

ированный компьютерный словарь для «чайников», М., 2005, **Большой словарь русского жаргона**. С-Пб., 2001, անգլերեն սլենգի առցանց բառարաններ՝ http://www.urbandictionary.com, http://online slangdictionary.com են։

[9] Տե՛ս, օրինակ, **Christopher M. Fairman.** *Fuck: Word Taboo and Protecting Our First Amendment Liberties.* US, 2009, **Richard A. Spears**. *Forbidden American English,* 1990 **Левин Ю. И.** *Об обсценных выражениях русского языка. Поэтика. Семиотика.* - М., 1998, **Ахметова Т.В**. *Русский мат. Толковый словарь*. 1996, **Жельвис В.И**. *Поле брани: Сквернословие как социальная проблема в языках и культурах мира.* М., 2001 (2-е изд.) են։

ների, տարիքով մեծերի ներկայությամբ*: Նման խիստ տաբու չկա, օրինակ, ռուսերենում, անգլերենում, որտեղ հայհոյական բառերն այնքան հաճախ են գործածվում բանավոր խոսքում, որ դարձել են մի տեսակ սովորական ընկալվող, կորցրել խիստ գռեհիկ ընկալումը, հաճախ են հանդիպում ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում (գեղարվեստական գրականություն, համացանց), հնչում են էկրանից՝ ֆիլմերում, երգերում նաև: Սակայն վերջին երկու-երեք տարին նոր միտում է նկատվում նաև հայալեզու համացանցում. Հայհոյական բառերը, հայհոյանքով գրառումները ավելի հաճախ են հանդիպում.



(սքրինշոթի վրա ջնջել ենք գռեհիկ բառերի մեջ որոշ տառեր, իսկ բնօրինակում դրանք գրված են ամբողջությամբ –Ա.Ք.):

Պատճառները մի քանիսն են: Նախ՝ համացանցում, սոցցանցերում կարելի է գրանցվել անանուն՝ առանց սեփական լուսանկարի, անձնական ճիշտ տվյալների, որը որոշակի ազատություն է տալիս մարդկանց, հնարավորություն ընձեռում անտեսելու հասարակական կարծիքը: Բայց երբեմն հայհոյական, գռեհիկ բառերով գրառումներ են նաև ճիշտ անձնական տվյալներով, սեփական լուսանկարով մարդիկ: Վիրտուալ տարածքը, այն փաստը, որ դիմացդ համակարգչի/սմարթֆոնի մոնիտորն է, ոչ թե կոնկրետ մարդ, որ խոսակիցներն իրար չեն տեսնում, թերևս պատրանք է

* Ի դեպ, գյուղերում, փոքր քաղաքներում անհամեմատ ազատ է այս առումով. հայհոյանքը, գռեհկախոսությունը առօրյա բառապաշարի մասն են կազմում:

ստեղծում անանունության, կոտրում որոշակի տաբուներ: Պատճառը ոչ այնքան լեզվական է, որքան արտալեզվական. այս երևույթն ուսումնասիրում են հոգեբանությունը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, հարակից գիտությունները: «Համացանցային հաղորդակցման առանձնահատկություններից է (…) ոչ բնորոշ, ոչ նորմատիվ վարքը: Հաճախ սոցցանցերում օգտատերերն իրենց այլ կողմից են ներկայացնում, քան իրական կյանքում»[10]: Ի դեպ, թեև մենք չենք անդրադարձել ծանոթությունների կայքերին, սակայն նշենք, որ հատկապես այդ կայքերում են մարդիկ հաճախ իրենց պահում ոչ այնպես, ինչպես իրական կյանքում: Անանունությունը ինչ-որ չափով ազատություն է տալիս մարդկանց. այն, ինչ նրանք չեն կարող անել կամ ասել իրական կյանքում, քանի որ հասարակական կարծիքը, ընդունված նորմերը, չգրված օրենքները ճնշում են, ազդում նրանց վարքի վրա, անում/ասում են վիրտուալ տարածքում: Որքան շատ են տաբուները, արգելքները տվյալ հասարակության մեջ, այնքան մեծ է այդ տաբուները կոտրելու, դրանցից ազատվելու ձգտումը: Ու եթե իրական կյանքում դա ավելի դժվար է հաղթահարել, վիրտուալ իրականությունն այդ հնարավորությունը տալիս է:

Բավականին հաճախ գռեհիկ, հայհոյական կամ անպարկեշտ համարվող բառերը գրվում են աղավաղված, որոշ տառեր փոխարինվում են այլ այբուբենի տառերով կամ տարբեր պայմանական նշաններով. սա մեղմասության ձև է դարձել համացանցի լեզվում. *ք*քմեջ անել, գ7, &հ&իկ, սեx, սհ#%իր, ո*հ* են:

Հետաքրքիր է, որ հայալեզու տիրույթում հայհոյական բառերը հաճախ ոչ թե հայերեն բառեր են, այլ ռուսերեն, եր-

---

[10] Տե՛ս **Виноградова Т.Ю**. *Специфика общения в интернете. Русская и сопоставительная филология: Лингвокультурологический аспект.* - Казань, 2004, էջ 63-64:

բեմն նաև անգլերեն: Սա թերևս բացատրվում է նրանով, որ դրանք մեզ այնքան գռեհիկ չեն թվում, որքան հայերեն հայհոյանքները. մի տեսակ ավելի հանգիստ ենք վերաբերվում՝ հենց հաճախ գործածվելու շնորհիվ: Փաստորեն ռուսերեն կամ անգլերեն հայհոյական բառերը, գռեհկաբանությունները մի տեսակ մեղմասության ձև են դարձել հայերենում:

Հաճախ այս հայհոյաբանությունները գրվում են հենց հայատառ, երբեմն որոշ տառերի փոխարեն զանազան սիմվոլներ գործածելով կամ բառը դիտավորյալ աղավաղելով.


1 марта 2016 г. · Ереван ·

իսկ սա, կներեք ինձ իմ ֆրանսերենի համար, պի*դեց է, մաքուր, հալալ, զուլալ ու անթաքույց պի*դեց:

Վերջին տարիներին հանդիպում են նաև **բարբառով** գրված տեքստեր. մարդիկ սոցցանցերում շփվում են այն լեզվով, որով խոսում են առօրյայում: Սա նույնպես համացանցում գրավոր և բանավոր խոսքի միջև տարբերությունները ջնջելու դրսևորում է, երբեմն երգիծանքի միջոց, կատակի ձև, թերևս նաև որոշ իմաստով կեսկատակ-կեսլուրջ պայքար Երևանի խոսվածքի դեմ, որ դարձել է արևելահայերի շփման ընդհանուր լեզու.


16 марта 2013 г. · Ереван

թեռև տեղեգացումնմ

մարդ կա առաճին անգամ գուկա գեղամեճ, չիդե օրա ըստեղ ալաֆռբանգա տատերով չեն գրե: մեննագ հայերեն: մե անգամնմ ըդման գրելը հըլը հեչ , բայց կրգնվելը հեչ սիրուն չէ, ինձ կըսե քաղքըցի մեգըմ:

մե խոսքովնմ , կռիվ էնող չեղնի, դնենք գեղեն լարենքգը , ուր գուզե թող էրթա, հասկըցա՞նք իրար

Նկատել ենք, որ բարբառով ամենաշատը գրում են գյումրեցիները, լոռեցիներն ու ղարաբաղցիները. անգամ ֆեյսբուքյան խմբեր կան, որտեղ հիմնական շփումը հենց

բարբառով է (օրինակ՝ «Գյուղամեջ», «Լոռվա հումոր», «Կատակում են գյումրեցիները» ևն)։

Միայն հայալեզու սոցցանցերին հատուկ երևույթ է **արևմտահայերենի** գործածությունը կատակի, երգիծանքի, հեգնանքի նպատակով։ Այս միջոցն օգտագործում են արևելահայերը։ Այն համացանցում հատկապես սկսեց տարածվել Ռաֆֆի Հովհաննիսյանի «Բարևի հեղափոխություն»-ից հետո, իսկ մինչև այդ հիմնականում հանդիպում էր ավանդական ուղղագրությանը վերադառնալու մասին քննարկումներում։ Արևելահայերեն գրված տեքստում հայտնվում են արևմտահայերենին բնորոշ բառեր, արտահայտություններ՝ *մը* անորոշ հոդը (*հեղափոխական մը, կով մը*), *հոս/հոն, իշտե ատանկ բաներ* ևն։ Առանձնահատկությունն այն է, որ հաճախ գրության մեջ պահպանվում է արևմտահայերենի արտասանությունը՝ *բադասխան եք դալու, քիդենք, շատ սիրեցինք Հայաստանը* ևն.



Մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ համացանցի լեզվի բառապաշարի բոլոր առանձնահատկություններին։ Ուզում ենք ընդգծել, որ համացանցային հաղորդակցման լեզուն ուսումնասիրության հետաքրքիր ու ծավալուն թեմա է, և այստեղ միայն թերություններ ու սխալներ փնտրել-գտնելը մեղմ ասած գիտական մոտեցում չէ։ Համացանցում նոր լեզու է ձևավորվում, որ բավականին տարբերվում է թե՛ գրավոր-գրական, թե՛ բանավոր խոսքից. սա լեզվի նոր որակ է՝ իր առանձնահատկություններով։

Камалян Аревик - Лексические особенности языка интернет-общения.- Данная статья посвящена некоторым лексическим особенностям Армнета. В интернете формируется новый язык, который отличается как от письменного, так и от устного языка. Этот язык называют также письменно-разговорный: хотя в сети мы общаемся письменно, но этот язык более близок к разговорному, неформальному языку.

В статье уделено внимание таким особенностям, как намеренное искажение слов, словообразованию путем контаминации, что не характерна для армянского языка, неологизмам и окказиональным словам, которые создаются в сети. Много заимствований, особенно жаргонных, сленговых слов и аббревиатуры из английского и русского языков. Также мы обратили внимание на использование ненормативной, обсценной лексики, что в общем-то была несвойственна армянскому обществу до последнего времени.

Kamalyan Arevik - Lexical features of the Internet communications. In the article, some traits and peculiarities of the language in the Armnet are discussed. A new language is being created in the Internet, which differs notably both from the spoken and written languages. This language is also called written-spoken: although we communicate in writing in the Internet, the written texts are much closer to the spoken language. People generally prefer to communicate in this spoken, informal language; instead, they put into practice their spoken language.

In the article, we have covered the intentional distorted spelling of words that is specific to the Internet, have examined the words consisting of contaminations (this method of word-formation is not specific to Armenian), a large number of neologisms and occasional words, borrowings, as well as slang words and abbreviations lately adopted from English and Russian. We have also touched upon the use of non-standard, vulgar vocabulary in the Internet.

Քարտաշյան Անահիտ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՐԱԿԱ՞Ն, ԹԵ՞ ԻԳԱԿԱՆ)

Բառերը ժամանակի ընթացքում ենթարկվում են ձևային և իմաստային փոփոխության: Այս երևույթը նկատելի է նաև հատուկ անունների համակարգում: Հոդվածում փորձել ենք դասդասել հատուկ անունների գործառությունը ըստ սեռային հատկանիշի: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատուկ անունների սեռային հատկանիշը՝ արական կամ իգական, ոչ միշտ է զանազանվում գրական հայերենի երկու տարբերակներում: Երբեմն նույն անունը կարող է կիրառվել հայերենի տարբերակներից մեկում արական գործածությամբ, մյուս տարբերակում՝ իգական (Նայիրի, Նուէր, Արծուիկ, Երջանիկ, Լալիկ): Կան դեպքեր, երբ նույն հատուկ անունը ունի սեռային երկակի գործածություն (ինչպես՝ Արշալոյս, Նուպար): Միաժամանակ պետք է նշել, որ կան անուններ, որոնց սեռային պատկանելությունը հստակորեն առանձնանում է, ինչպես իմաստային, այնպես էլ ձևային մակարդակում (օրինակ՝ Քաջիկ, Մաքրուհի):

Սովորաբար անձնանունները տրվում են տվյալ սեռին բնորոշ հատկանիշներով: Կարևոր է, թե ինչ հատկանիշներով են բնութագրվում արական և իգական սեռերը: Կան հատկանիշներ, որոնք միայն իգական սեռին են վերաբերում, և հակառակը՝ միայն արականին են վերաբերում:

Իգական սեռը բնորոշող հատկանիշներից են՝

1. համեստ, հնազանդ, խոնարհ, գեղեցիկ (*Համեստ, Հնազանդ, Խոնարհ, Գեղեցիկ, Գեղանի, Գեղանոյշ, Գեղուշ, Գեղուհի, Գեղունի*).

2. մաքուր *(Մաքրուհի, Մաքրինէ*).

3. նազանի (*Նազ* (պրս. nāz «նազանք» կամ հյ. *նազ* բառից[1]), *Նազելի* (հյ. Նազելի ածականից), *Նազենիկ, Նազիկ, Նազլու* (թրք. nazlu, nazlə «նազելի» բառից[2]).

4. քաղցր (*Քաղցրուհի, Անոյշ).*

5. ուրախ, պայծառ, լուսավոր (*Զուարթ, Յարգուարթ, Պայծառ, Պայծիկ, Լուսաբեր, Լուսածին, Լուսանոյշ, Լուսարփի, Լուսերես, Լուսիա, Լուսիկ, Լուսին(է), Լուսնթագ, Լուսվարդ*).

6. թանկարժեք քարերի, ծաղիկների անվանումներով են նշում հիմնականում իգական սեռը: Ինչպես՝ *Ակաթ, Զմրուխտ, Էլմաս, Ալմաս* (թրք. almas «ադամանդ» բառից)[3] , *Էլմաստ, Մարգարիտ, Մարգրիտ, Մարկարէթ, Մարկրիթ, Փերուզ* (պրս. pīrūza (արաբ fīrūza) անունից, որ բուն նշ. «Փիրուզակ», երկնագույն պատվական մի քար է) [4], *Մանուշ(ակ), Յասմիկ, Բրաբիոն, Ժասմին, Խնկենի (հայ. Խնկի ծառ), Ծաղիկ, Ծաղկանոյշ, Նռճիկ, Նունուֆար, Շուշանիկ, Շուշիկ, Ռեհան, Սօսէ. Սօսի, Վարդայտ, Վարդանոյշ, Վարդենի, Վարդերես, Վարդիկ, Վարդիթեռ, Վարդինէ, Վարդոյշ, Վարդուկ, Վարդուհի):*

Արական սեռը բնորոշող հատկանիշներից են՝

1. քաջ, արի, վեհ, կտրիճ՝ (*Կայծակ, Արի, Քաջազուն, Քաջայր, Քաջազ, Քաջբերունի, Պարթև, Փայլակ, Սուր, Կտրիճ*).

---

[1] **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան,* հ. 4, ԵՊՀ հրատ., Ե., 1942, էջ 8 (այսուհետ՝ ԱՀԱԲ)

[2] **ԱՀԱԲ**, հ. 2, էջ 10:

[3] **ԱՀԱԲ**, հ. 1, էջ 83:

[4] **ԱՀԱԲ**, հ. 5, էջ 199:

2. տարիք, դիրք, հասակ նշող (*Մանուկ, Իշխան, Տերրուն, Թոռնիկ*).

Որոշ մասնիկներ հստակեցնում են սեռային պատկանելությունը, որոնց գործածությունը, հնարավորություն է տալիս որոշել սեռը, նկատի ունենալով այն, որ հայերենը չունի սեռի (արական, իգական) քերականական կարգ: Իհարկե, հայերենում կան իգականությունը ընդգծող մասնիկներ՝ *-ուհի, -դուխտ,* որոնցով կազմված անձունների սեռային պատկանելությունը կասկած չի հարուցում:

Արևմտահայերի իգական անունների մեծ մասը կազմվում է արական անուններին *-ուհի* ավելացնելով, որոնց մի մասը արևելահայերին փոքր-ինչ խորթ է, *ինչպես՝ Արշակուհի, Բագրատուհի, Բիւզանդուհի, Դարուհի, Դերենկուհի, Երջանկուհի. Եփրատուհի, Իշխանուհի, Հրանդուհի, Ռազմուհի, Սէյրանուհի. Սմբատուհի, Տրդատուհի Վրէժուհի, Վանուհի, Վահանուհի, Վրամուհի*: *Ուհի*-ով կազմված անունների, նաև շատ այլ իգական անունների փաղաքշական ձևը ուշ ածանցով է կազմվում, ինչպես՝ Մաքրուհի-Մաքքուշ, Թագուհի-Թագուշ, Արմենուհի-Արմենոյշ, Լիլիթ-Լիլուշ, Մեղրիկ-Մեղոյշ: *Դուխտ* մասնիկով իգական անուններ՝ *Գեղանդուխտ, Զարմանդուխտ, Խոսրովիդուխտ, Շահանդուխտ, Սանդուխտ: Ոյշ/ուշ* ածանցով կազմվող անձնանուններ, նաև դրանց փաղաքշական ձևերը, *ինչպես՝ Ազգանոյշ-Ազգուշ, Գեղանոյշ-Գեղոյշ,, Եղսանոյշ, Եվանոյշ, Ղազանոյշ, Լուսանոյշ, Խոսրովանոյշ, Ծաղկանոյշ, Ծառանոյշ, Հերանոյշ, Հրանոյշ, Հայկանոյշ-Հայկուշ, Մելանոյշ, Միհրանոյշ, Պերճանոյշ, Սիրանոյշ-Սիրուշ,Վեհանոյշ, Քրմանոյշ: -Ուշ ա*ծանցը իգական անուններից անցել է նաև արական անուններին, ինչպես՝ Աբրահամ-Աբբուշ, Կարապետ-Կարուշ, Յովհաննէս-Հաննուշ, Յարութիւն-Արուշ, Գեղամ-Գեղուշ, Արտաշէս-Արտուշ և այլն:

Անձնանունների սեռային պատկանելության հարցը կարելի է դիտարկել համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքով:

Այսպես, դժվար է որոշել, օրինակ *Արեւ* կամ *Արեգ* անձնանվան սեռային պատկանելությունը նշող ժամանակահատվածը. արեգակը կարող են դիտել և' արական, և' իգական: Այն, որ որոշ կարգի հատկանիշներ կարող են ընդհանրական լինել երկու սեռերի համար, և թե ժողովրդի մտածողությունը ինչպիսին է, ենթադրում է, որ այդ հատկանիշը կարող է տրվել և' աղջկա, և' տղայի: *Արեւ* անունը (*Արեւ*, ար. <հայ. արև «արեգակ» բառից[5]) հիշվում է որպես արական անուն (Արեւ Սիւնի նախարար(Ե դար), անդրանիկ որդի Դաւիթ Սեբաստացու(1156թ.), հայր Մահտեսի Մսրրի(1641թ.), *Արևիկ,* (*Արեւիկ,* ար. և իգ. Արև անվան փաղաքշականն է), կանգնեցրել է մի խաչքար(1274թ.), Արևիկ, կին Սոճոնի և մայր Առաքել եպիսկոպոս գրչի (1612թ.)[6]:

Պատմական ժամանակաշրջանում տեղի է ունենում որոշ կարգի անունների բաշխվածություն, հստակություն է մտցվում, օրինակ՝ *Արեգ* անունը այժմ հիմնականում միայն արական է, *Արեւ*-ը, *Արեւիկ*-ը տրվում է միայն աղջկա:

Բազմաթիվ անուններ ընդհանրական են և' արևելահայերի, և' արևմտահայերի համար, սակայն շատ անունների սեռը որոշելիս դժվարություններ են առաջանում:

Ստորև տրվում են գրական երկու ճյուղերում առկա այն անունները, որոնք իմաստային դաշտում (թեմատիկ խմբավորման մեջ) ներկայացնում են որոշակի դժվարություն:

1.Երբեմն, անունը լսելիս, իսկապես հնարավոր չէ հասկանալ, աղջկա անուն է հնչում, թե տղայի: Օրինակ՝ «Սեւան անունով պզտիկ մը ունիմ»: «Ուսուցիչէն վերջ Նայիրին դուրս ելաւ»:

---

[5] **ԱՀԱԲ**, հ. 1, էջ 272:

[6] **ԱՀԱԲ**, հ. 1, էջ 272,273:

Երբ փորձ է արվում ճշտել բառարանով, օրինակ՝ *Սեւան* անունը և՝ արական է նշված, և՝ իգական, *Նայիրի* անունը Ա.Կոանեանի բառարանում և՝ արական է, և՝ իգական, Արտաշէս Տէր Խաչատուրեանի «Հայոց լեզուի նոր բառարանում»՝ իգական: Տվյալ դեպքում հոգեբանական դժվարության հաղթահարման հարց է առաջանում, այսպես՝ տվյալ միջավայրում (մանկապարտեզ, դպրոց, հիմնարկություն) իգական սեռին տրվող անունը հենց այսպես էլ հասկացվում է: Օրինակ՝ եթե *Ընծայ* անունը տրված է արական սեռի անձի համար, ապա այդ միջավայրը այդպես էլ ընդունում է, իսկ եթե նույն միջավայրում նույն անունը և՝ արական, և՝ իգական սեռին է տրված (օրինակ՝ նույն դասարանում երկու *Ընծայ* կա՝ տղա, աղջիկ) ապա ոչ թե միջավայրից միջավայր է ընդունվում, այլ ըստ անհատի, և առաջանում է լրացուցիչ հատկանիշ կիրառելու անհրաժեշտություն:

Ստորև տրվում է հատկապես արևմտահայերենում լայն տարածում ունեցող անձնանունների ցանկը, որում ընդգրկված անունների սեռը հնարավոր չէ տարբերակել: Սովորաբար այն անունները, որոնք ունեն և՝ արական, և՝ իգական սեռի նշանակում համեմատաբար չունեն լայն տարածում, արևելահայ տարբերակում անունները հստակեցված են ըստ սեռի, արևմտահայ տարբերակում կան մեծ թվով չհստակեցված անուններ:

Գրական լեզվի երկու տարբերակներում և՝ արական, և՝ իգական անուններ են՝ Արշալոյս, Երջանիկ, Նուպար: Սակայն բառարաններում[7] մի շարք անուններ տարբեր կերպ են նշված:

Գեղօն - ԲՀԼ-ում՝ ար., իգ., (էջ 511,519), ՀԼԲ-ում՝ իգ. (էջ1180):

---

[7] ***Անդրանիկ Վրդ. Կոանեան,*** *Բառգիրք հայերեն լեզուի,* Պէյրութ, 1998թ. (այսուհետ՝ ԲՀԼ): **Արտաշէս Տէր Խաչատուրեան,** *Հայոց լեզուի նոր բառարան,* հ. 2, Պէյրութ, 1992թ. (այսուհետ՝ ՀԼԲ):

Ընծայ - ԲՀԼ-ում՝ ար., իգ. (էջ 512,519) ՀԼԲ-ում՝ իգ. (էջ 1181), (իգ.< հյ. ընծայ «նվեր» բառից, ԱՀԱԲ, հ. 2, էջ 897):

Լորիկ - ԲՀԼ-ում՝ ար. (էջ 520), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1173,1182), (իգ.< հյ, լոր թռչունի անունից, ԱՀԱԲ, հ. 2, էջ 437):

Ծովակ - ԲՀԼ-ում՝ իգ. (էջ 513,), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1173), (իգ.< հյ. ծով բառի փաղաքշականից, ԱՀԱԲ, հ. 2, էջ 573):

Մարուքէ - ԲՀԼ-ում՝ ար. (էջ 521), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1175,1183):

Նայիրի - ԲՀԼ-ում՝ ար., իգ. (էջ 514,522), ՀԼԲ-ում՝ իգ. (էջ 1184):

Նուէր - ԲՀԼ-ում՝ իգ. (էջ 514), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1176,1184), (ար.< հյ. նուէր բառից, ԱՀԱԲ, հ. 4, էջ 89):

Նուրհան - ԲՀԼ-ում՝ ար., իգ. (էջ 514,522), ՀԼԲ-ում՝ ար. (էջ 1176):

Նուպար - ԲՀԼ-ում՝ ար. (էջ522), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1176,1184), (Նուբար, ար. և իգ. < պրս. navbar, nÖbar, nubar «նորահաս պտուղ, առաջին պտուղ» ձևից, ԱՀԱԲ, հ. 4, էջ 88):

Շահնազար - ԲՀԼ-ում՝ ար. (էջ 522), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1176,1184), (ար.< պրս. «թագավոր» + արաբ. «հայացք» բառերից. իբր «նա, որի վրա թագավորի հայացքն է ընկել», ԱՀԱԲ, հ. 4, էջ 125):

Սիրուն - ԲՀԼ-ում՝ իգ. (էջ 515), ՀԼԲ-ում՝ ար., իգ. (էջ 1177, 1185), (ար.< հյ. սիրուն բառից, ԱՀԱԲ, հ. 4, էջ 533):

Սեւան - ԲՀԼ-ում՝ ար., իգ. (էջ 515,523), ՀԼԲ-ում՝ ար. (էջ 1177):

Վարդերես - ԲՀԼ-ում՝ ար., իգ. (էջ 515,524), ՀԼԲ-ում՝ ար. (էջ 1178), (ար.< վարդ+երես բառերից, իբր վարդագույն, վարդանման երեսներ ունեցող, ԱՀԱԲ, հ. 5, էջ 111):

Իրապես շփոթ է առաջանում: Իրականում *Շահնազար* անունը տղայի անուն է, *Սիրուն, Ընծայ, Նուէր, Նայիրի* անունները՝ աղջկա: *Նուէր, Ընծայ* իգական անուններ են, սակայն *Պարգեւ-ը* արական:

Որոշ անուններ՝ *Արեգ, Արեւիկ, Արմաւիր, Դուին, Լուսերես Լօրիս, Եղիս(է), Մեղրի(կ), Ոսկի* և այլն, հիշյալ բառարաններում և՝ արական են, և՝ իգական: *Արմաւիր, Դուին, Եղիսէ, Ոսկի* անունները այժմ աղջկա անուններ են:

2. Անուններ, որոնք *արևմտահայ* միջավայրում իգական անուններ են, արևելահայերի մեջ տարածված է որպես արական. ինչպես՝ *Արազ, Արեգ, Երջանիկ, Լալիկ, Լօրիս, Ծովակ, Նայիրի, Քարեն (արական-Կարէն), Գարուն, Նուէր, Վալանթին, Արծուիկ:* Հարցն այն է, որ այս կարգի ուսումնասիրությունը պետք է ընդգրկի անունների վիճակագրական տվյալներ, որոնք կարող էին լույս սփռել անունների գործածության վրա, օրինակ՝ հարյուր *Նուէր* աղջիկ կարող է լինել և մեկ *Նուէր* տղա: Որոշ անուններ տարածքային սահմանափակություն ունեն, օրինակ՝ *Արազ* անունը Լիբանանի, Սիրիայի հայերի միջավայրում իգական սեռի է, Իրաքի հայերի մեջ *Արազ*-ը նաև արական սեռի անուն է, Լիբանանում և Սիրիայում *Մեւան*-ը իգական անուն է, Պոլսում՝ արական:

Շատ կարևոր են վիճակագրական տվյալները, որպեսզի հասկանանք, թե տվյալ անունը արակա՞ն, թե՞ իգական անուն դառնալու միտում ունի:

Ա.Կռանեանի բառարանում իգական անունների շարքում է նշված նաև *Մէյրան* անունը (ԲՀԼ, էջ 515): Արևմտահայերի շրջանում ընդունված չէ *Մէյրան* անունը, հատկապես որպես աղջկա անուն: Ամեն դեպքում մեր ունեցած տվյալներով *Մէյրան* անունով աղջիկ չկա:

3. Անուններ, որոնք արևմտահայերի միջավայրում նշվում են արական, բայց արևելահայերի մեջ իգական անուն է, ինչպես՝ *Տաթեւ:*

Արդի փուլում արևմտահայ միջավայրում մեծ տարածում ունեն օտար անունները: Մինչև անցյալ դարի կեսերը միայն հայկական անուններ էին դնում, այժմ ոչ միայն օտար անուններ են դնում, այլև հայերի մեջ տարածում գտած

անունները ձևափոխում են այն տարածքին հատուկ ձևով, որտեղ ապրում են, ինչպես՝ *Հովհաննէսը դառնում է Ջոն (Ճոն՝ Յովհաննէս անվան անգլերեն. ձևը), ասում են Ջան, Ժան (Յովհաննէս անվան ֆրանսերեն ձևը), Ալինը դառնում է Էյլին, Գէորգ - Ժորժ (Գէորգ անվան ֆրանսերեն ձև), Հովսէփ-Ժոզէֆ, Դավիթ-Դեյվ, Հասմիկ-Ժասմին, Պողոս-Բօլ, Պետրոս-Փիթըր և այլն:*

Հայկական անուններում շատ են տեղանուններով կազմված անունները, հատկապես արևմտահայ միջավայրում, դրանք մեծ մասամբ հայրենիքին առնչվող տեղանուններ են, ինչպես՝

իգական անուններ - *Արփա, Արենի, Դուին, Անի, Արաքս(ի), Արմաւիր, Բերկրի, Գառնի, Եփրատուհի, Թալին, Լորի, Հրազդան, Սանահին, Վանա, Վանիա, Վանանէ, Վանենի, Վանէ, Վանուհի, Տիգրիս,*

արական անուններ - *Ամասիա, Արարատ, Արմաւիր, Գեղարդ, Գրգուռ(լեռ), Դուին, Եփրատ, Եղիվարդ, Կարս, Կիլիկիա, Կարին, Հայկաշէն(ական Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Հարք գավառում), Հրազդան, Մասիս, Մուշ, Շիրակ, Սիս, Վան, Օշական:*

Այսպիսով, անվանադրության հարցը բավականին նուրբ է և արժանի է ոչ միայն լեզվաբանական քննության, այլև պահանջում է սոցիալական անհրաժեշտ ուշադրություն:

Kartashyan Anahit - Functional peculiarities of the Western Armenian personal names (male or female?) - In this article we have tried to classify the changes of personal names by both the period and the source of borrowings, and by their functioning according to their gender. The gender of personal names (male or female) does not always differ in two variants of literary Armenian. The same name in one variant of language can be sometimes used as a male name, and in other variant as a female name. There are cases when the same name has dual usage. At the same time it should be

mentioned that there are names which are clearly differentiated both in semantic and formal levels.

Карташян Анаит - Функциональные особенности западно-армянских имен (мужских или женских?) - В данной статье мы попытались классифицировать изменения имен по периоду и источнику заимствований, а также представить их функционирование согласно по признаку рода. В двух версиях литературного армянского языка признак рода собственных имен (мужских или женских) не всегда различается. Иногда то же самое имя в одной версии языка может употребляться как мужское, а в другой версии как женское имя. Есть случаи, когда одно и то же имя имеет двойное применение. Одновременно следует отметить, что есть имена, чья родовая принадлежность имеет четкое различение, как в смысловом, так и в формальном уровне.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասոյան Թաթուլ, Գրապայքարը և լեզվական հարցերը «Բազմավէպի» էջերում 3
Աւետիսեան Լուսինէ, Երբ յայտածուում է մաշտոցեան տրամաբանութիւնը 24
Բառնասյան Ջեմմա, Բառակազմական որոշ իրողություններ Կարնո բարբառի խոսվածքներում 49
Գյուրջինյան Դավիթ, *Հայ* առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունները 57
Գրիգորյան Գայանե, Բերդի և Գյումրու ենթախոսվածքների տեմպի համեմատություն 73
Գրիգորյան Սուսաննա, Գրիգոր Տաթեվացու «Գիրք քարոզութեան» Ջմերան հատորի անվանական դարձվածքների իմաստաբանական քննություն 81
Գևորգյան Գայանե, Ադափազարի խոսվածքի բարբառային յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը 88
Դալալեան Տորք, Գրիգոր Ղափանցեանը եւ Մառի «Յաբեթական» տեսութիւնը. հայ-քարթուելական լեզուական առընչութիւնների մեկնաբանումը 109
Զաքարյան Հովհաննես, Անձ մատնանշող *ով* և *որ* շաղկապական բառերի բաշխումը հայերենում 128
Թադևոսյան Հասմիկ, Կազմախոսական բաղադրիչով նոր դարձվածքներ XII դարի բժշկարաններում (Մ. Հերացի, Արուսայիդ) 144
Թոխմախյան Ռոբերտ, Հնչյունաբանական դիտարկումներ 156
Խաչատրյան Հասմիկ, *Մենյակ* հասկացության բառանունները բարբառային հայերենում 164
Խաչատրյան Վալենտին, Փոխառյալ բառերի գործածությունը ձեռագրերի 17-րդ դարի հիշատակարաններում (1601-1640 թթ.) 174
Խաչատրյան Օֆելյա, Վարդան Արևելցի՞, թե՞ Վարդան պատմիչ 191
Կատվալյան Վիկտոր, Բարբառային հայերենի դրսևորումները ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում 202

Հակոբյան Ֆրիդա, Հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգի ստեղծման նպատակը և խնդիրները 220
Հեքեքյան Նարինե, *Գիշեր* և *ցերեկ* բառերի իմաստային վերլուծություն (լեզվամշակութաբանական հայացք) 229
Միքայելյան Ժաննա, Կոտայքի մարզի մի քանի գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերը 247
Մխիթարյան Գայանե, Հայերեն-շումերերեն լեզվական առնչությունների հարցի շուրջ 261
Մկրյան Արամ, Իտալերենի բազմիմաստ կազմախոսական դարձվածքների և դրանց հայերեն համարժեքների իմաստաբանական առանձնահատկությունները 270
Մկրտչյան Գարիկ, Հայերենի ծագման ղափանցյանական տեսությունը 284
Պետրոսյան Արմեն, Էթիունին հայոց օրրան 299
Սարգսյան Նվեր, Թարգմանական գրականության մերօրյա հարցեր 331
Սիմոնյան Գևորգ, Ժամանակակից ադրբեջաներենի ռազմական եզրաբանության մեջ կիրառվող ռուսական փոխառությունների շուրջ 343
Սուքիասյան Հենրիետա, Թոռունյան Նաիրա, Բժշկագիտական օտար եզրույթների հայերեն տառադարձությունը 354
Վարդանյան Արտակ, «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ 367
Վելյան Կարեն, Հայերեն հանպատրաստից բանավոր խոսքում նախադասությունների սահմանազատման խնդիրը 375
Քամալյան Արևիկ, Համացանցային հաղորդակցման լեզվի բառապաշարի առանձնահատկությունները 389
Քարտաշյան Անահիտ, Արևմտահայերեն անձնանունների գործառական առանձնահատկությունները (արակա՞ն, թե՞ իգական) 410

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am